ընդհանուր թվի մի չնչին մասն են կազմում և ավելի շատ բացառություն են, քան օրինաչափություն: «Համաձայն կյանքի» բոլոր արձանները ներկայացնում են մասնավոր անձանց, գտնվել են դամբարաններում, ստեղծվել են հիմնականում 4, 5, 6-րդ դինաստիաների օրոք (Ք.ա. XXVII- XXIII դդ.): Հայտնաբերման օրվանից սրանք համարվում են դիմապատկերներ, կամ գոնե դիմապատկերային հատկանիշներ կրող արձաններ: Սակայն ովքեր անվերապահորեն ընդգծում են այս գործերի «պորտրետային» լինելը, գրեթե երբեք չեն սահմանում հնագույն դիմապատկերների յուրահատկությունները: Արդյունքում մեզ քաջ հայտնի է քանդակում անհատականացման օբյեկտիվ պատմությունը, բայց դրա առաջացման սուբյեկտիվ ասպեկտը դեռևս լրիվ ուսումնասիրված չէ: Շատերն ընդհանրապես հրաժարվում են այս քանդակները դիմապատկեր համարելուց, ինչպես հայտնի արվեստաբան Բոթմերը: Վերջինս համարում է, որ որևէ ստեղծագործություն դիմապատկեր անվանվելու համար պետք է, բացի դեմքի արտաքին նմանությունից, փոխանցի նաև անձի ողջ անհատականությունը և ներքին որակները[4]:

Այսպիսի տեսակետը իրոք հարցականի տակ է դնում Հին Արևելքում ստեղծված գրեթե բոլոր դիմաքանդակների դիմապատկեր լինելը: Այո, անվիճելի է, որ ցանկացած պորտրետ իր սեփական պատկերային բովանդակությամբ կապված է նախատիպի հետ, որի գոյությունը դրված է ստեղծագործության հիմքում: Սակայն, ինչպես ասում է Հանս-Գեորգ Գադամերը. «Դիմապատկերը դիմապատկեր է ոչ միայն այն պատճառով, որ ճանաչելի է պատկերված անձը: Պորտրետը չի ասում, թե ով է պատկերված, այլ խոսում է այն մասին, որ պատկերվածը կոնկրետ անհատ է, ոչ թե մարդկային տիպ»[5]:

Օրինակ Անխհավի ու Հեմիունի արձանները այս առումով իսկական դիմապատկերներ են: Սակայն նրանց հատուկ է նաև մեկ այլ կարևոր գիծ, որն ընկալելու համար պետք է ընդունել, որ դիմապատկերի՝ բնորդի հետ նմանությունը ոչ ներքին է, ոչ արտաքին. այն զուտ դիմապատկերային է, ինչը կապված չէ իդեալականացման կամ

---

[4] Bothmer B., On Realism in Egyptian Funerary Sculpture of the Old Kingdom, Egyptian Art, Oxford University Press, 2004, p. 373.

[5] Гадамер Х.-Г., Истина и метод: Основы филос. Герменевтики, М., 1988, с. 194.

նատուրալիզմի հետ, քանի որ կախված չէ պատկերվողի ու պատկերվածի արտաքին համեմատությունից, այլ, կարելի է ասել, բուն դիմապատկերի «անհատական» գծերից: Այդ իմաստով դիմապատկերը ոչ միայն փաստաթուղթ է, որ ներկայացնում է կոնկրետ անձի արտաքինը. այն նաև շեշտում է այն գծերը, որոնց վերագրվում է իմաստային դոմինանտ:

Դա հասկանալու համար դիտարկենք հնագույն դիմաքանդակների ամենահետաքրքրաշարժ նմուշները՝ այսպես կոչված «ռեզերվային գլուխները», որոց մեծ մասը (32 հատ) պեղվել է Գիզայում, Արևմտյան դամբարանադաշտի մաստաբաներում, 1913-1914 թվականներին (նկ. 2): Դրանցից մի քանիսը հայտնաբերող հնագետը՝ Հերման Յունկերը, դիմաքանդակները համարեց հանգուցյալի մումիֆիկացված գլխի «պահուստային» տարբերակներ[6], այստեղից էլ նրանց պայմանական անունը՝ «ռեզերվային գլուխներ»: Գլխաքանդակների մեծ մասը թվագրվում են Խուֆուի գահակալության տարիներով (մ.թ.ա. 2551-2528): Սրանք եզակի նմուշներ են, քանի որ պատրաստվել են ոչ որպես ամբողջական արձանի մաս, այլ՝ զուտ ավարտուն դիմապատկերներ: Ունեն 25-30 սմ բարձրություն, զուրկ են պատվանդանից և կանգնում են հարթ հատակ ունեցող պարանոցների վրա: Գլուխների մեծ մասը սպիտակ կրաքարից են (միայն երկուսը ծեփված են Նեղոսի տիղմից): Որոշ նմուշներ տեղ-տեղ ծածկված են գիպսի շերտով, բայց հավանաբար երբեք գունավորված չեն եղել: Բոլորի հայացքը բարձր է հորիզոնի գծից, որ նույնպես յուրահատուկ հանգամանք է: Հնագետների համար, գլխաքանդակների թերևս ամենակարևոր առանձնահատկությունը մասնակի թերություններն են, որ մասնագետները բնութագրել են որպես «միտումնավոր հասցված վնասվածքներ»[7]: Այսպես, գրեթե բոլոր գլուխների ականջները կոտրված են, գանգի գագաթից մինչև ծոծրակ իջնում է ակոս, որ մեկ հայտնվում է բարակ գծով, մեկ՝ կոպիտ ու խորը կտրվածքով:

---

[6] Junker H., Vorbericht über die zweite Grabung bei den Pyramiden von Gizeh vom 16. Dezember 1912 bis 24, März 1913, Vienna, Akademie der Wissenschaft, 1913, S. 32-35.

[7] Smith S., A History of Egyptian Sculpture and Painting in the Old Kingdom, London, 1949, p. 23-27.

Միատիպ, անշուշտ ոչ պատահական կոտրվածքներ ունեն նաև քթերի ծայրերը: Տվյալ վնասվածքների գոյության պատճառները ավելի մանրամասն կքննարկվեն մի փոքր ուշ:

«Ռեզերվային գլուխների» դեմքերը տարբերվում են իրարից հստակ արտահայտված ուրույն դիմագծերով: Ջորջ Ռեյսները[8], որ հայտնաբերել է այս գլխաքանդակների մեծ մասը, նույնիսկ փորձում էր ըստ դիմագծերի որոշել դամբարանների տերերի ազգակցական կապերը: Օրինակ՝ G4240 և G4440 մաստաբաների տերերին նա եղբայրներ էր համարում: Սակայն այս քանդակների դիմապատկերայնությունը միայն ֆիզիոգնոմիկ առանձնահատկություններով չի սահմանափակվում: Մենք երբեք չենք կարող ասել, թե որքանով են տվյալ դիմապատկերները նման բնօրինակներին, բայց մեզ համար դրանք դիմապատկերներ են, քանի որ անհատականացված են դրանց կառուցման ձևերը: Չէ որ դիմաքանդակը նախ եւ առաջ անհատականության տեսանելի կառուցվածքի խնդիր է: Բոլոր այս նմուշները քանդակված են արտահայտչամիջոցների նվազագույն օգտագործմամբ: Լուսաստվերային խաղը, դեմքի գոգավորությունների շեշտադրումը, աչքի ձևի յուրահատկության ընդգծումը՝ հասցված են նվազագույնի: Այսպիսի ընդհանրացման արդյունքում պատկերային էքսպրեսիվությունն ամբողջությամբ ենթարկված է կառուցվածքային ճիշտ հավասարակշռմանը: Այստեղ էլ, ինչպես Հեմիունի արձանի դեպքում, իրեղեն ձևերը ամփոփված են նյութական ծավալներում և հասցված են ներքին բևեռացման: Նույնիսկ ճակատի վրա մազերի սահմանը նշող գծի սխեմատիկությունը յուրատիպ շրջանակ, տեսողական սահման է գծում դեմքի շուրջը, շեշտում է դրա քառակողությունը և ներփակությունը: Արտաքին պլաստիկ տարրերի մակերեսային վերարտադրումը թույլ չի տալիս, որ դիմագծերի անհատական որակները գերիշխեն ձևի ընդհանրացման վրա, իսկ վերջինն էլ իր հերթին թույլ չի տալիս, որ դիմագծերի առանձնահատկությունները տեսողականորեն փոշիանան: Սրա շնորհիվ անհատականացումը ստանում է լատենտ կեցություն,

---

[8] Գիզայի G 4000 դամբարանադաշտը պեղող «Հարվորդ-Բոստոն» արշավախմբի ղեկավարը:

կինետիկ ուժի կենտրոնացում, որտեղ իրականանում է «Ես»-ի մոգական պահպանումը: Կառուցողական ձևերը մաքուր ամփոփ վիճակում արդեն տալիս են անհատական դեմքի իրական բնորոշ գծերը: Սակայն այս դեպքում բացակայում է էքսպրեսիվ ֆորման՝ «մտքի, սրտի, հոգու» դրսևորումը ձևի մեջ: Մեր պատկերացումներում անհատը միշտ զգացմունքային է, նրանից ակնկալվում է ժեստ՝ շարժում, դիրքորոշում, «ներքին աշխարհի» արտաքինացման պայմանական որևէ նշան: Սակայն «ռեզերվային գլուխների» անհատականացումը զուտ մարմնական է և ոչ նշանային: Էքսպրեսիվությունը, դրամատիկ շարժումը այս առումով խանգարում են անձի բացարձակ անհատականության երևակմանը և առաջին պլան են մղում սյուժեն, ինչը բացարձակապես անհամատեղելի է «Ես»-ի պահպանման նպատակի հետ: Կոնկրետ անձի դեմքը մաքուր առարկայական ամբողջականության շեշտմամբ վերածվել է դեմք-իրի՝ դիմապատկերի, որ դադարել է լինել իրական անհատ, և դարձել է մոգական կրկնորդ, ինչը սակայն բոլորովին չի խանգարում այն ընկալել որպես դիմապատկեր:

«Ռեզերվային գլուխների» հաջորդ առանձնահատկությունը կապված է դրանց հայտնաբերման վայրի հետ: Դամբարանները, որտեղից գլուխները պեղվել են, թալանված են եղել դեռևս վաղ անցյալում, ուստի դրանց նախնական կոնտեքստը խաթարված է: Բոլոր գլխաքանդակները գտնվել են դամբախցում կամ դեպի խուց տանող հորանում: Սա նշանակում է, որ դիմաքանդակները չեն առնչվել մաստաբայի վերնաշենքի հետ և տեղադրված չեն եղել վերգետնյա «մատուռում»:

Այս վարկածը վերջնականապես հաստատվեց, երբ 1930-ականներին հնագետ Սելիմ Հասանը պեղեց չթալանված դամբարան: «Ռեզերվային գլուխը» հայտնաբերվել է դամբարանախցում՝ սարկոֆագի կողքին՝ հնում խուցը ողողած ցեխի շերտի մեջ թաղված: Սա թույլ է տալիս հաստատել, որ նախկինում հայտնաբերված բոլոր գլուխները սկզբում տեղադրված են եղել խցում, հանգուցյալի կողքին, իսկ հորանում են հայտնվել դամբարան «այցելած» կողոպտիչների

ձեռքով[9]: Այս փաստը «ռեզերվային գլուխներին» շնորհում է այլ կարգավիճակ, քան մյուս եգիպտական արձաններին, որ տեղադրված էին դամբարանի վերգետնյա «մաստուռում» կամ դրան կից փակ սերդաբում և սերտորեն կապված էին հանգուցյալի պաշտամունքի և մատուցվող նվիրատվական ծեսերի հետ: Պարզվում է՝ գլուխները «եսի» պահպանման թեմայի սահմաններում չունեն հիշատակային կամ հաղորդակցական նշանակություն: Նրանք հղում են իրենք իրենց, սեփական մարմնականությանը: Այսպիսով, մենք կրկին համոզվում ենք, որ Գիզայի գլուխները չեն կարող ընթերցվել որպես անհատի «նշան» և ստեղծված են որպես «մարմին»: Այս դեպքում մարմնի (soma) և նշանի (sema) հասկացությունները ներգրավված են դամբարանի երկկենտրոն կառուցվածքի տրամաբանության մեջ: Չէ որ դամբարանը իրականացնում է երկակի ֆունկցիա. մի կողմից նա թաքցնում է հանգուցյալի մարմինը, իսկ մյուս կողմից նշում է հանգուցյալի տեղը կենդանի մարդկանց աշխարհում: Այս երկկենտրոնությունը առավել ցայտուն է երևում Հին Թագավորության մաստաբաների մշակված համակարգում:

Մարմինը որպես ինքնության կոնցեպտ նյութական արտահայտում է գտել դիազմոսման (մումիֆիկացիայի), մահադիմակի, ավելի ուշ՝ մարդակերպ սարկոֆագի մեջ: Մարդու նշանը որպես ինքնուրույն կոնցեպտ նյութականացված է դամբարանի մոնումենտալ ճարտարապետության, որմնանկարչության և բարձրաքանդակի մեջ: Այս համակարգում մասնավոր անձանց ծիսական արձանները գտնվում են սոմատիկ և սեմիոտիկ հասկացությունների մեջտեղում: Արձանը և հատկապես «համաձայն կյանքի» արձանը իր մեջ կրում է «մարմնի» և «նշանի» գործառույթների իրականացման ներուժը: Արդեն վերը նշված Հեմիունի արձանը սրա լավագույն օրինակն է: Այն ձևով ու կառուցվածքով հղում է մարմնին, իսկ սերդաբում տեղադրված լինելու փաստով և պատվանդանի արձանագրությամբ՝ նշանին:

Սերդաբը խորանարդաձև կառուցվածքի մեջ ամփոփում էր արձանի «մարմինը», ինչպես սարկոֆագը ամփոփում էր անհատի աճյունը:

---

[9] Hassan S., Excavations at Giza VII, (1935-1936). The Mastabas of the Seventh Season and Their Description, Excavations of the Faculty of Arts, Cairo University, Cairo, 1953.

Մյուս կողմից, չնայած արձանը անտեսանելի էր այցելուների համար որպես մարմին, բայց «կարող էր տեսնել և լսել» սերդաբի պատին արված անցքի միջոցով, ենթադրյալ մասնակցություն ունենալ մատուցվող ծեսերին և լինել հանգուցյալի նշանը կենդանի մարդկանց աշխարհում: Սակայն «ռեզերվային գլուխները» չեն գտնվել այս երկկենտրոն համակարգի կիզակետում, այլ տառացիորեն հարել են «մարմին»-soma-ի աշխարհին: Դիմապատկերի զարգացման այս վաղ փուլում դեմքի իրապաշտական պատկերումը անհատի առատիկ պահպանման մասն է, իսկ «մոգական ռեալիզմը» ոչ թե լեզու է կամ ոճ, այլ տեխնիկա, ինչպես օրինակ մումիայի դեռևս շատ պրիմիտիվ եղանակով պատրաստումը, կամ գիպսե մահադիմակի ստեղծումը: Այստեղ կարևոր է ոչ թե արտահայտչականությունը, այլ ձևի առավել նպատակահարմար մշակումը:

Պատահական չէ, որ Միլիցա Մատյեն և Սթիվենսոն Սմիթը շեշտում են «ռեզերվային գլուխների» կապը դիազմոսման և մահադիմակի հետ[10]: Խուֆուի ժամանակաշրջանում դիազմոսման տեխնիկան դեռ գոյություն չուներ, չնայած փաստված են հանգուցյալի մարմինը պահպանելու պարզագույն փորձեր[11]: Դիակի ներքին օրգանները հեռացվում էին և փոխարինվում վուշե գործվածքի փաթաթաններով: Դիակը արտաքինից փաթաթվում էր նույն գործվածքի ժապավեններով և ծածկվում գիպսի (երբեմն ձյութի) բարակ շերտով (նկ. 3): Դեմքին փոում էին խոնավացած բարակ բանվածք, որ կրկին գիպսապատվում էր: Գիպսի շերտի չորանալուն պես, դեմքի վրա նկարվում էին բաց աչքեր, հոնքեր և բերան: Բոլոր պահպանված դիմակների դիմագծերը տարբեր են իրարից և ունեն լոկ իրենց հատուկ մանրամասներ, միշտ այնպես, ինչպես «ռեզերվային գլուխները» և դա թույլ է տալիս ավելի վստահորեն պնդել, որ դիմակը պատրաստող վարպետը ելակետային է համարել կոնկրետ հանգուցյալ անձի դիմագծերը, և չի օգտվել ստանդարտացված որևէ կաղապարային օրինակից: Կարևոր է նաև այն

---

[10] Матье М., Искусство Древнего Египта, М., 1970, с. 90; Smith S., նշվ. աշխ., էջ 27:

[11] Այս տեսակ մշակում ունեցող աճյուններ են հայտնաբերվել Ջոսերի բուրգի դամբարանախցի գրանիտե սարկոֆագում, Սաքարայի արխաիկ դամբարանադաշտում, Սնոֆրույի գահակալության տարիներին կառուցված Մեդումի N17 հսկա մաստաբայում:

փաստը, որ և գլուխների, և Անհիտավի կիսանդրու դեմքերը ծածկված են եղել գիպսե շերտով, որի միջոցով քանդակագործը ստացել է առավել անհատականացված պատկեր: Այս դեպքում դարձյալ դիմապատկերը կառուցվում է, բայց անհատի բուն (գանգ) և մշակութային միջոցներով արված միջամտության (դիմակ) օգնությամբ:

Գլուխը հին մշակույթներում սերտ կապ ունի «եսի» սոմատիկ պահպանման սկզբունքի հետ: Վաղ ավանդույթներում առանձնապես էական է գլխի ծիսական անջատումը մարմնից: Գլուխը նախնադարյան մտածողության մեջ կարող է ծառայել ամբողջական մարմնի նշան: Pars pro toto[12] սկզբունքը, ըստ Լեվի-Բրյուլի, առանձնապես էական է նախնադարյան տրամաբանության համար: Հանգուցյալի գլխի անջատումը և դրա վերափոխման ձևերը կարելի է համարել մարդու մարմնի վերստեղծման առաջին փորձերից մեկը: Աշխարհում առանձնապես հայտնի են Երիքովի, Կֆար Հա-Հորեշի, Բեյսամոնի, Թել Ռամադի, Թել Ասվադի հնավայրերից գտնված գիպսապատ գանգերը: Կոնկրետ անձանց դեմքի վերստեղծման այս հին նախատիպերը *որպես «նատուրալ մակետներ»* կարելի է համարել[13]: Հնագետ ու արվեստաբան Աբրամ Ստոլյարի առաջարկած այս տերմինը, ճիշտ է, վերաբերում է պալեոլիթյան մարդու գործունեությանը և վայրի գազանի գանգի հետ կատարվող արարողություններին, սակայն լիովին կիրառելի է նաև մարդկային գլխի վերամշակման համատեքստում:

Հնանտի և Անատոլիայի տարածաշրջաններում տարածված այս պրակտիկան երկար ավանդույթ ունի: Մարդկային գանգերի հիմքի վրա դիմակի պատրաստման սովորույթը, ըստ հնագիտական տվյալների, սկսվել է մ.թ.ա. XI-XII հազարամյակներում՝ Նաթուֆյան շրջանում և շարունակվել է միջխեցեգործական A և B հնագիտական շրջանները՝ մ.թ.ա. IX հազարամյակը ներառյալ: Ակնհայտ է, որ գանգի հիմքի վրա դիմակ ստանալը նպատակ է ունեցել վերարտադրել մարդկային դեմքը և նրան հնարավորինս «ողջի» տպավորություն հաղորդել: Գանգերից շատերի վրա պահպանվել են քթի, ռունգերի, փակ կամ բաց աչքերի, կոպերի, շրթունքների հնարավորինս մանրամասն վերականգնումներ: Շատ դեպքերում դա արված է մեծ

---

[12] Մասն ամբողջի փոխարեն (լատ):

[13] Столяр А., Происхождение изобразительного искусства, М., 1985, с. 176-210.

ճշգրտությամբ: Երբեմն կրի, մոխրի, կրածնաքարի կոլագենի խառնուրդը քսված է մի քանի շերտով: Գրեթե միշտ ստացված դիմակը փայլեցված է, որպեսզի կրածնաքարի փշուրները ավելի պայծառ շողան, իսկ վերջում ներկված է կավահողով: Թել Ռամադից գտնված գլուխները օժտված են պարանոցներով, որպեզի դրվեին քիչ հեռու հայտնաբերված անգլուխ գիպսե արձանների վրա:

Գիտնականները տարբեր կարծիքներ ունեն գանգերի վրա վերստեղծված դեմքերի անհատականացման վերաբերյալ: Ոմանք կարծում են, որ սրանք իդեալականացված վերաներկայացումներ են, մինչդեռ մյուսները պաշտպանում են դիմագծերի կոնկրետության վարկածը: Վերջինը անհավանական չի թվում, քանի որ դեմքերը տարբերվում են իրարից, իսկ որոշ գլուխներ նույնիսկ ակնհայտ յուրօրինակություն ունեն, ինչպես օրինակ Կֆար Հա Հորեշից 1995 թվականին հայտնաբերված KNH-homo անունը կրող գանգն է (նկ. 4):

Դիմապատկերը դարձյալ կառուցվում է, բայց այս անգամ անհատի բուն (գանգ) և մշակութային միջոցներով արված միջամտության (դիմակ) օգնությամբ: Սակայն նեոլիթյան Լևանտի և Անատոլիայի գիպսապատ գլուխները ունեն ևս մեկ առանձնահատկություն: Հնագիտական նյութը վկայում է, որ սրանք միայն «ես»-ի սոմատիկ պահպանման համար չէ, որ ստեղծվել են: Որոշ դեպքերում ակնհայտ է դրանց հասարակական նշանակությունը ողջ համայնքի համար: Հայտնաբերման պայմանները և կոնտեքստը հուշում են, որ գանգերը «կյանքի» տարբեր փուլեր են անցել: Դրանք եղել են պաշտամունքի առարկա ողջ համայնքի համար և պահվել են սրբավայրերում, իսկ հետո անհայտ պատճառով դեն են նետվել կամ ավելի հաճախ թաղվել են՝ բնակելի տների հատակի տակ:

Ինչ սկզբունքով են ընտրվել գանգերը՝ հայտնի չէ: Պարզ է, որ ընտրությունը կախված չի եղել հանգուցյալի սեռից կամ տարիքից: Գտնված գանգերից 19-ը տղամարդու են, 17-ը՝ կնոջ, 2-ը՝ երեխայի: Հասուն կանանց ու տղամարդկանց տարիքը տատանվում է 20-50-ի սահմաններում: Նեոլիթյան մշակույթներն ուսումնասիրող գիտնական Գյորինգ-Մորիսը գտնում է, որ գիպսե դիմակներով գանգերը հասարակական կազմակերպվածության խորհրդանիշեր են և պատկանում են համայնքի համար կարևոր կամ նշանակալի դեր

խաղացած անդամներին[14]: Եթե ընդունենք այս վարկածը, ապա գիպսե դիմակով գանգը, բացի «ես»-ի սոմատիկ պահպանման առաջնային ֆունկցիայից, իրականացրել է նաև կոլեկտիվ հիշողության պահպանման նշանի գործառույթ: Այսպիսով, սոցիալական, տնտեսական, կրոնական փոփոխությունների պայմաններում, նեոլիթյան մարդը սկսում է դիտարկել ու նկարագրել սեփական «ես»-ը կողքից: Նրա արտաքին առարկայացված նկարագիրը՝ օբյեկտիվորեն քանդակային և մեկընդմիշտ ամրագրված, դառնում է անձի՝ հասարակության մեջ զբաղեցրած դիրքի նշանը, նրա սոցիալալական կայացման վկան և անհատականացման գրավականը:

Գիզայում, հսկայական բուրգերի ստվերում փռված դամբարանադաշտերում թաղված եգիպտացի ազնվականների ու պաշտոնյաների առեղծվածային «ռեզերվային գլուխները» նույնպես անհատի գաղափարի գիտակցման տեսանելի պատկերներ են: Սակայն այս դիմապատկերներն ու դրանց տերերն ամփոփված են յուրահատուկ տրամաբանությամբ կառուցված դամբարաններում:

«Ռեզերվային գլուխների» հիմնական մասը պեղվել է Գիզայի երեք խոշոր դամբարանադաշտերում (N1200, N 2110, N 4000): Սրանք միասին պայմանականորեն կոչվում են Արևմտյան գերեզմանոց (Western Cementery): N4000 դամբարանադաշտը, ուր հայտնաբերվել են ամենաշատ դիմապատկերներ՝ 18 հատ, կազմված է յոթական մաստաբա ընդգրկող կանոնավոր շարքերից: Բոլոր մաստաբաների չափերը և կառուցվածքը ստանդարտացված են, իսկ ձևավորումը հասցված է մինիմումի: Եռաչափ, ազատ կանգնած արձանի փոխարեն՝ «ռեզերվային գլուխներն» են (ընդ որում՝ ոչ մատուռում), իսկ ռելիեֆապատ պատերի և կեղծ դռների փոխարեն՝ փոքրիկ սալաքար-կոթողը (մոտ 38 սմ x 53 սմ), որի վրա պատկերված է դամբարանի տերը՝ զոհաբերության սեղանի առջև: Սալաքարի վրա գրված է նրա անունը, զբաղեցրած պաշտոնը և հանգուցյալին մատուցվող զոհաբերությունների ցուցակը: Սալաքար-կոթողի ձևավորման լեզուն

---

[14] Goring-Morris N., Life, Death and the Emergence of Differential Status in the Near Eastern Neolithic: Evidence from Kfar HaHoresh, Lower Galilee, Israel, Archaeological Perspectives on Thetransmission and Transformation of Culture in the Eastern Mediterranean, 2005, p. 165.

նույնքան զուսպ ու լակոնիկ է, որքան գլուխներինը: Այստեղ էլ արտահայտչամիջոցների խնայողությունը հանգեցրել է պատկերի արտակարգ զտված ու ամբողջական տպավորության: Այսպիսով, ողջ դամբարանը իր բաղկացուցիչ մասերով՝ ճարտարապետական լուծումով, դիմաքանդակով, սալաքար-կոթողով կազմում է փակ համակարգ, որը ծառայում է անհատի «ես»-ի պահպանմանը: Սակայն դամբարանի ներքին համակարգը ընգրկված է ավելի մեծ և նույնքան կանոնակարգված ու խստաշունչ դամբարանադաշտի կառուցվածքում, իսկ վերջինն իր հերթին ներգրավված է Գիզայի հովտի վիթխարի կառուցապատման ծրագրի մեջ, որտեղ Խուֆուի հսկա բուրգը իր լակոնիկ ծավալով հաստատում է անվիճելի գերակշիռ դիրքը: Այսպիսով, Խուֆուի ժամանակաշրջանի հասարակական հիերարխիայի կառուցվածքը տեսողական մեկնաբանություն է ստանում դամբարանների կառուցապատման խիստ կանոնակարգված հորինվածքում[15]: Եվ այս հսկա համակարգում անհատը իր անունով, դիմապատկերով, դամբարանով և հավերժական կյանքի խոստումով ներգրավված է հասարակական կարգի, պետական հիերարխիայի սեմիոտիկ համակարգի մեջ: Գուցե այս տեսակետից է պետք դիտել նաև «ռեզերվային գլուխների» առեղծվածային վնասվածքների հարցը: Արդեն նշվեց, որ գլուխները կապված չեն եղել դամբարանի վերգետնյա կառուցվածքի հետ և ընդգրկված չեն նվիրատվությունների ծեսի համակարգում: Ամենայն հավանականությամբ դիմաքանդակները չեն անցել նաև «շուրթերի բացման» արարողությունը, քանի որ տվյալ ծեսը իր մեջ կրում է վերստեղծման ու մոգական կենդանացման սկզբունքորեն կառուցողական լիցք: Իհարկե գլուխների նկատմամբ նույնպես ծիսական գործողություններ են կատարվել, որի հիմքում, սակայն, ընկած է «կենդանի իրը» միտումնավոր վնասելու, այն սպանելու նպատակը[16]: Եգիպտագետ Մասիմիլիանո Նուզոլոն

---

[15] Այս առումով ուշագրավ են, Alexanian N., Tomb and Social Status. The Textual Evidence, The Old Kingdom Art and Archaeology Charles University in Prague, 2006; Der Manuelian P., *Slab Stelae of Giza Necropolis*, New Haven and Philadelphia, 2003; Roth A., Social Change in the Fourth Dynasty: The Spatial Organization of Pyramids, Tombs, and Cemeteries, JARCE 30, 1993.

[16] Nuzzolo M., "Reserve Heads": Some Remarks on Their Function and Meaning, Oxford, 2011, p. 200-215.

համոզված է, որ գլուխները հանգուցյալի հետմահու պաշտամունքի ծիսական համակարգում պոզիտիվ միավորներ չեն, և սխալ է դրանց հանգուցյալ անձի «անցավոր» գլխի փոխարինող համարել: Ընդհակառակը. դիմաքանդակներին հասցված վնասվածքները միտում ունեն անհատից «խլել» հավերժական կյանքին հասնելու սեփական ունակությունը և կախվածության մեջ դնել մեկ այլ գործոնից, այն է՝ Խուֆույի՝ աստված-արքայի, վերածնման կարողությունից[17]:

Չորրորդ դինաստիայի օրոք, փարավոնների բացարձակ իշխանությունը տարածվել էր ոչ միայն հպատակների կյանքի, այլև՝ մահվան վրա: Գիզայի նեկրոպոլը պետության հիերարխիկ կարգի ճարտարապետական վերակերտումն է: Ակնհայտ է, որ Գիզայի հովտի դամբարանների մեծ մասը կառուցվել են փարավոնի պատվերով: Հավանական է, որ դրանք հիմնվել են որպես «առանց տերերի» մաստաբաներ, և միայն հետո, արքայի հատուկ հրամանով շնորհվել են մասնավոր անձին: Այստեղից էլ բխում է Խուֆույի պալատականների դամբարանների ասկետիզմը ու ստանդարտ տեսքը: Պատկերային միջոցների խնայողությունը, դրանց մինիմալիզմը շեշտում են միապետության աննախադեպ կազմակերպվածությունը, որտեղ միայն ինքը՝ Խուֆուն, արև-արքան, հառնելով իր բուրգից՝ «Արեգակի Հորիզոնից», կարող էր հարություն տալ իր պալատականներին, որոնց զատված ու խոշտանգված գլուխները պիտի սերտաճեին մարմինների հետ: Միայն և միայն այդ դեպքում գլխի տերը կկարողանար ֆիզիկապես ինտեգրվել անդրշիրիմյան կյանքին: Իսկ մինչ այդ, նրա ձեռակերտ, բայց «կենդանի» լինելու ներուժով տոգորված գլուխը հայացքը պիտի հառեր հորիզոնից վեր՝ սպասելով վերակենդանացման բաղձալի պահին:

Այսպիսով, մ. թ. ա. 3-րդ հազարամյակից սկսած՝ Հին Եգիպտոսում մասնավոր անձանց պատկերները ստեղծվում էին համաձայն այնպիսի սկզբունքների, որոնք կենսունակ են մինչև այսօր: *Նկարագրողական նատուրալիզմի* միջոցով անձնավորությունը վերարտադրվում է, որպես *կենդանի իր*՝ յուրահատուկ դիմակ-կրկնորդ: Անշարժ ու հստակ, հանգամանորեն նկարագրված դիմապատկերը կենդանի մարդու երբեք մինչև վերջ չբացահայտվող դեմքի իմաստային զտման ու

---

[17] Նույն տեղում:

հղկման վերջնական արգասիքն է: Մյուս կողմից, կարևոր է դառնում պատկերի ու պատկերագրական առանձնահատկությունների «իրավական» ընդունման ու ամրագրման փաստը: Անհատականը անբաժանելի է դառնում մարմնականից ու իրավականից, և դիմապատկերները ներգրավվում են հասարակական ու քաղաքական կյանքի ոլորտ:

GALSTYAN ARMINE
(YSAFA)


EGYPTIAN PORTRAIT OF THE OLD KINGDOM

Portraiture is the most important and productive genre of Egyptian art. Private portraiture of Old Kingdom is self-thematization of an individual subject. But, surely, the ancient portraits are not self-portraits in our sense of the term. Representation of human face is closely linked to Egyptian ideas of immortality, self-eternalization and self-monumentalization. These are notions of self which seems to determine ancient portraiture's functional contexts to the greatest extent.


The current study investigates how this notions are linked to conceptions of the self and how these conceptions are translated into forms of artistic expression in private portraiture. Here is clarified and talked over the problems of individualization, canon, symbol, form and image.




Նկ.1 Անխիավի կիսանդրի, կրաքար, 4-րդ դինաստիա,
Արվեստի թանգարան, Բոստոն



Նկ.2 ա) Ռեզերվային գլուխ, կրաքար, 4-րդ դինաստիա,
Արվեստի թանգարան, Բոստոն



Նկ.2 բ) Ռեզերվային գլուխ, կրաքար, 4-րդ դինաստիա,
Արվեստի Պատմության թանգարան, Վիեննա



Նկ.3 Գիպսապատ մումիա, 5-րդ դինաստիա,
Արվեստի թանգարան, Բոստոն



Նկ.4 KNH-homo գիպսապատ գանգ Կֆար Հա Հորեշի հնավայրից,
Իսրաելի թանգարան, Երուսաղեմ

GRIGORYAN GRIGOR
(MLU, GERMANY)

AN ANALYSIS OF THE SECOND SESSION OF THE COUNCIL OF CHALCEDON

The second session of the Council of Chalcedon was held on 10 October 451[1]. The main question which was to "be investigated, judged and studied" at that session was "how to confirm the true faith", because it was "particularly because of the faith that the council" had been convened, as the chief representative of Emperor Marcian, the patrician Anatolius, who presided over

---

[1] R. Price and M. Gaddis, The Acts of the Council of Chalcedon, (Translated Texts for Historians, vol. 45), vol. 2, Liverpool, 2005, p. 1-2, note concerning the second session of the Council of Chalcedon: "The second or 'corrected' edition of the Latin text of the Acts, as well as that of Rusticus, gives the session of 10 October (on the faith) as the second act of the council and that of 13 October (the trial of Dioscorus) as the third. The Greek version, however, and also the first edition of the Latin (versioantiqua), reverse the order though not the dates; the purpose of this was to achieve a logical sequence, with the acts that dealt with Dioscorus [I and III...] coming before the acts of the sessions (II, IV, V, VI) that dealt with the faith. We follow the chronological order given in the most of the Latin witnesses, with the session on the faith of 10 October as the second session. It has occasionally been suggested that the order in the Greek Acts is in fact chronologically correct, with the trial of Dioscorus preceding the first of the sessions on the faith, and that it is the dates of the sessions that are in error. However, though it might seem more logical to us if the council had disposed of Dioscorus first, the words of the chairman at the end of the first session [cf. ACO 2, 1, 1, § 1068, p. 195, 11-24] were quite explicit that the next session, to be held almost immediately, was to attend to the faith, while the need for a full trial of Dioscorus was not immediately apparent. Secondly and most decisively, the acclamations in the second session demanding the reinstatement of Dioscorus [...] were a natural response to his suspension at the end of the first session [cf. ACO 2, 1, 1, § 1068, p. 195, 11-24] but would have been inconceivable after his formal trial and deposition in the third. In all, we may with confidence continue to date the first session on the faith to 10 October and to number it accordingly as the second session." For the second session of the Council of Chalcedon see also P.-Th. Camelot, Ephesus and Chalcedon, Mainz, 1963, p. 141-143.

this and most of the sessions of the Council of Chalcedon, reminded the reassembled bishops[2]. The heads of the Second Council of Ephesus who were deposed at the end of the first session were not present in the second session[3]. Already the letters of Emperor Marcian sent to the assembled bishops before the opening of the new ecumenical council at Chalcedon had indicated that the chief reason of its convening was the necessity to confirm the orthodox faith in order to establish peace and doctrinal harmony in Eastern Christendom[4]. By the time of the Council of Chalcedon the creed of the Council of Nicaea (325) had become an irreplaceable document of the orthodox faith. This had been already confirmed by the First Council of Ephesus which had explicitly forbidden in its Canon 7 the production of any new creed in addition to the Creed of Nicaea[5].

---

[2] Cf. ACO 2, 1, 2, § 2, p. 78 [274], 5-6; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 2, p. 10. Cf. alsoR. V. Sellers, The Council of Chalcedon: A Historical and Doctrinal Survey, London, 1953, p. 109; n. 5.

[3] Cf. R. V. Sellers, op. cit., p. 109; R. Price, The Council of Chalcedon: A Narrative (451), inChalcedon in Context: Church Councils 400-700, (Translated Texts for Historians, Contexts 1), ed. R. Price and M. Whitby, Liverpool, 2009, p. 76.

[4] Cf. ACO 2, 3, 1, p. 20, 30-21,7 (ep. 32; the Greek text is lost); ACO 2, 1, 1, § 14, p. 28-29 (ep. 14); ACO 2, 1, 1, § 16, p. 30 (ep. 16); for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts,vol. 1, Documents 12, 14 and 15, p. 107 and p. 108-110; vol. 2, p. 2, n. 3.

[5] For the so-called Canon 7 of the First Council of Ephesus (431), which was much cited at the Second Council of Ephesus (449) and at the Council of Chalcedon (451) as forbidding the imposition of additional doctrinal texts and the composition of new definitions, seeACO 3, 1, 1, § 943, p. 221, 23-222, 4, for an English translation of the text of Canon 7 of Ephesus from the full Latin version of the Acts of the Council of Chalcedon, see R. Price and M. Gaddis, The Acts,vol. 1, § 943, p. 323.According to their translation that canon is as follows: "When this had accordingly been read, the holy council laid down that no one is allowed to produce or write or compose another creed beside the one laid down with the aid of the Holy Spirit by the holy fathers who assembled at Nicaea; and that as regards those who dare to compose another creed, or produce or present it to those who wish to turn to the knowledge of the truth whether from paganism or Judaism or any form of heresy, they, if they are bishops or clerics, are to be expelled, the bishops from episcopacy and the clerics from the clergy, while if they are laymen they are to be anathematized. In the same way, if any are found, whether bishops or clerics or laymen, either holding or teaching the things contained in the exposition of the incarnation of the only-begotten Son of God presented by the presbyter Charisius,

Therefore, the two Ephesine Councils of 431 and 449 had sought to settle the doctrinal matters and to confirm the faith by approving certain documents that already existed as orthodox explanations of the Nicene Creed and by condemning and deposing certain persons who in their point of view contradicted or opposed the Nicene Creed. This was also the expectation of the bishops reassembled at the second session of the Council of Chalcedon. They also expected to settle the doctrinal controversy by a formal ratification of *TomusLeonis*, which Marcian and Pulcheria considered to be the most important document in the present doctrinal issue, and by punishing the patriarch of Alexandria and other adversaries of Pope Leo. Also the Roman representatives of the Apostolic see expected the Tome of Leo to be approved by the council as the definitive Christological statement in the settlement of the doctrinal controversy[6]. Therefore the reaction of the bishops was that of a shock and great amazement, when at the very outset of the second session the patrician Anatolius, who chaired the second session as spokesman for all the imperial representatives present, told the assembled bishops to "produce a pure exposition of the faith", that is a new definition of the faith or a new creed[7]. But the assembly of the bishops present protested most strongly against the suggestion of the patrician Anatolius. They said that it was in no way permissible for them to produce any new exposition of the faith apart from what had been taught by the Fathers and set down in writing, and that the approval of Leo's Tome alone is quite enough for the protection and confirmation of the orthodox faith[8]. Against the protests of the bishops the patrician Anatolius proposed that a select committee should be set up to "deliberate in common about the faith". He

---

or the abominable and perverted doctrines of Nestorius, which are also attached, they are to be subjected to the verdict of this holy and ecumenical council, with the result, clearly, that a bishop is to be stripped of episcopacy and deposed, a cleric is likewise to lose his rank, while if he is a layman, he too is to be anathematized as has been stated above." The canon actually applied only to the formula to be used in the reception of converts, as also Price and Gaddis note; cf.R. Price and M. Gaddis, The Acts, vol. 1, p. 323, n. 423.

6 Cf. R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, p. 2-3; R. Price, The Council of Chalcedon, p. 74-75.

7 Cf. ACO 2, 1, 2, § 2, p. 78 [274], 6-12; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 2, p. 10. Cf. also Ibid. vol. 2, p. 3, n. 5; R. Price, The Council of Chalcedon, p. 75; R. V. Sellers, op. cit., p. 109.

8 Cf. ACO 2, 1, 2, §§ 3-5, p. 78 [274], 17-24; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, §§ 3-5, p. 10-11. Cf. also Ibid. vol. 2, p. 3, R. Price, The Council of Chalcedon, p. 75; R. V. Sellers, op. cit., p. 109.

proposed that the chief metropolitans and a few of their bishops should come together and think in common about the faith, in order that every dispute concerning the orthodox faith might be removed. The chairman said also that even those bishops who would appear to be of a contrary opinion may reveal their opinions too[9]. The bishops protested again and appealed to above-mentioned Canon 7 of the First Council of Ephesus (431), crying: "We will not produce a written exposition. There is a canon which declares that what has already been expounded is sufficient. The canon forbids the making of another exposition. Let the [will] of the fathers prevail"[10]. One of the assembled bishops, Florentius of Sardis, in order to reconcile the bishops, suggested that postponement should be granted to them for reflection, because it was impossible for them who had been taught to follow the holy Council of Nicaea and the council convened at Ephesus in accordance with the faith of the holy fathers Cyril and Celestine, and had accepted Leo's Tome, to consider the question of the faith on the spur of the moment[11]. Florentius also added: "Although indeed as regards ourselves, who have signed the letter of the most sacred Leo, we stand in no need of correction"[12]. Both Florentius and, following him, the bishop of Sebastopolis, Cecropius, considered the doctrinal issue "well defined by the 318 holy fathers" to have been confirmed by the Tome of Leo which corresponded both to the Nicene Creed and to the teaching of the holy fathers and the First Council of Ephesus presided by Cyril, and therefore they saw no more necessity to produce any other definition of the faith. Cecropius asked the chairman that the Creed of Nicaea, which also Athanasius, Cyril, Celestine, Hilary, Basil, Gregory and now Pope Leo had confirmed, together with Leo's Tome be read out[13]. The chairman Anatolius agreed to Cecropius' request and the Nicene Creed was read out by Eunomius, the bishop of Nicomedia (which was the metropolitan see of Bithynia, in which Nicaea lay,

---

[9] Cf. ACO 2, 1, 2, § 6, p. 78 [274], 25-31; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 6, p. 11, n. 20. Cf. also Ibid. vol. 2, p. 3; R. V. Sellers, op. cit., p. 109.

[10] The English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 7, p. 11; for the Greek text, cf. ACO 2, 1, 2, § 7, p. 78 [274], 32-34. Cf. also R. V. Sellers, op. cit, p. 110, n. 2.

[11] Cf. ACO 2, 1, 2, § 8, p. 78 [274], 35-79 [275], 2; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 8, p. 11. Cf. also R. V. Sellers, op. cit., p. 110.

[12] The English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 8, p. 11; for the Greek text, cf. ACO 2, 1, 2, § 8, p. 79 [275], 1-2.

[13] Cf. ACO 2, 1, 2, § 9, p. 79 [275], p. 3-7; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 9, p. 11.

and therefore, the bishop of Nicomedia could possess the most genuine text of the creed of the Council of Nicaea)[14]. After the Nicene Creed had been read, the assembled bishops exclaimed that it was the orthodox faith in which they were baptized and in which they themselves baptized and according to which both Cyril and Pole Leo taught and believed[15]. The bishops present in the second session of the Council of Chalcedon stressed all the time that Leo's Tome is a valid confirmation and explanation of the Nicene faith and of the faith of the orthodox church fathers, and especially of Cyril, in order to limit themselves only to its proclamation and confirmation as an orthodox document expounding the Nicene Creed and avoid any further necessity to produce any other definition of the faith which for themthe so-called Canon 7 of the First Council of Ephesus (431) explicitly prohibited. After the Creed of Nicaea had been read out, the patrician Anatolius himself ordered that now also "the exposition of the 150 holy fathers" should be read[16], that is the Creed of the Council of Constantinople (381)[17] which had been first referred to in the first session[18]. Before its being mentioned at the first session of the Council of Chalcedon[19] the Constantinopolitan Creed (which was a free version of the Nicene Creed) is not mentioned in any other document that predates Chalcedon[20]. As Price and Gaddis note with respect to the creed attributed to the Council of Constantinople of 381 and read out at Chalcedon, even though the council held at Constantinople in 381 had approved the mentioned creed (which is not sure either), it had certainly not presented it to be as authoritative as that of Nicaea itself, and probably very few of the bishops present at Chalcedon had even heard

---

[14] Cf. ACO 2, 1, 2 §§ 10-11, p. 79 [275], 8-26; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 10-11, p. 11-12, nn. 21-22.

[15] Cf. ACO 2, 1, 2, § 12, p. 79 [275], 27-32; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 12, p. 12.

[16] Cf. ACO 2; 1, 2, § 13, p. 79 [275], 33-35; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 13, p. 12.

[17] Cf. ACO 2, 1, 2, § 14, p. 80 [276], 3-16; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 14, p. 12-13, n. 23.

[18] Cf. ACO 2, 1, 1, § 1072, p. 195, 34-196, 6; for an English translation with an important comment, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 1, § 1072, p. 364-365, n. 520.

[19] Cf. ACO 2, 1, 1, § 160, p. 91, 28-30; for an English translation with a useful comment, cf. Price and Gaddis, vol. 1, p. 158, n. 113.

[20] Cf. R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, p. 3.

of it[21]. The reference to this creed at the second session of the Council of Chalcedon and the instruction of the chairman that it should be read out after the Nicene Creed were probably intended to provide a precedent for supplementing the Nicene Creed and thereby for producing new confessions of faith apart from that of Nicaea[22]. The imperial commissioners intended thereby to get round the prohibition against production of new confessions of faith in Canon 7 of the First Council of Ephesus[23]. They, of course, did not tell this to the assembled bishops who were ready to approve every orthodox document in support of defining the orthodox faith but not to produce a new definition of the faith by themselves[24]. Also the reading of the Constantinopolitan Creed was accompanied by shouts of approval: "This is the faith of all. This is the faith of the orthodox. We all believe accordingly"[25]. After the reading of the Creed attributed to the Council of Constantinople, the archdeacon Aetius proposed the reading of Cyril's doctrinal letters to Nestorius (*Obloquuntur*) and John of Antioch (*Laetenturcaeli*)[26] which he himself read out[27]. Both letters of Cyril were received by the bishops with shouts of acclamation: "We all believe accordingly. Pope Leo believes accordingly. Anathema to him who divides and him who confuses! This is the faith of Archbishop Leo. Leo believes accordingly. Leo and Anatolius believe accordingly. We all believe accordingly. As Cyril so we believe. Eternal is the

---

21 Cf. R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, p. 3, n. 6 and p. 191-194; R. Price, The Council of Chalcedon, p. 75, n. 25; for the origin of the creed attributed to the Council of Constantinople, see esp. J. N. D. Kelly, Early Christian Creeds, London, 1972, p. 296-331.

22 Cf. R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, p. 3; see also Ibid. vol. 1, p. 365, n. 520. See also R. Price, The Council of Chalcedon, p. 75.

23 Cf. R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, p. 3.

24 Cf. R. Price, The Council of Chalcedon, p. 75.

25 ACO, 2, 1, 2, § 15, p. 80 [276], 17-18; the English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 15, p. 13.

26 Cf. ACO 2, 1, 2, § 16, p. 80 [276], 19-25; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, p. 13. Both letters of Cyril had been already read out at the first session of the Council of Chalcedon (cf. ACO 2, 1, 1, § 240, p. 104, 15-106, 29 and § 246, p. 107, 22-111, 8) and were already contained in the minutes of the Home Synod of 448 at Constantinople; for an English translation of these letters see R. Price and M. Gaddis, The Acts,vol. 1, § 240, p. 173-177 and § 246, p. 178-183; see also Ibid. vol. 2, p. 3;R. Price, The Council of Chalcedon, p. 75.

27 Cf. ACO 2, 1, 2, §§ 18-19, p. 80 [276], 28-81 [277], 6; for an English translation, see R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, §§ 18-19, p. 13-14, nn. 24-25.

memory of Cyril. As is contained in the letters of Cyril, so we hold. We have believed accordingly, and we believe accordingly. Archbishop Leo thinks, believes and wrote accordingly"[28]. After the bishops have declared that Pope Leo thought and believed in accordance with the mentioned letters of Cyril of Alexandria, the chairman proposed that "the letter of the most religious Leo, archbishop of the imperial and senior Rome be read"[29]. Veronicianus, "the hallowed secretary of the divine consistory" read out Leo's *TomusadFlavianum*[30]. Also Leo's Tome was received with shouts of bishops' approval: "This is the faith of the fathers. This is the faith of the apostles. We all believe accordingly. We orthodox believe accordingly. Anathema to him who does not believe accordingly! Peter has uttered this through Leo. The apostles taught accordingly. Leo taught piously and truly. Cyril taught accordingly. Eternal is the memory of Cyril. Leo and Cyril taught the same. Leo and Cyril taught accordingly. Anathema to him who does not believe accordingly! This is the true faith. We orthodox think accordingly. This is the faith of the fathers. Why was it not read out at Ephesus? Dioscorus concealed it"[31]. Despite the bishops'statement that "Leo and Cyril taught the same", the approval of Leo's Tome in the second session of the Council of Chalcedon was not unanimous, not all of them shared that opinion: the bishops of Illyricum and Palestine interrupted the reading of the document by pointing to three passages in Leo's *TomusadFlavianum*[32] which seemed to them to imply Nestorius' heresy of dividing the natures and teaching in Christ two separate persons (*prosopa*)[33]. It is possible that the objections raised by the Illyrian and Palestinian bishops to several passages of Leo's Tome had led to detailed discussions during the second session which were reduced in the record of the proceedings of the second session to three citations from Cyril of Alexandria which were quoted by

---

[28] ACO 2, 1, 2, § 20, p. 81 [277], 7-13; the English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 20, p. 14. Cf. also R. V. Sellers, op. cit., p. 110.

[29] ACO 2, 1, 2, § 21, p. 81 [277], 14-16; the English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 21, p. 14.

[30] Cf. ACO 2, 1, 2, § 22, p. 81 [277], 20-22; for the full Greek text of Leo's Tome, see ACO 2, 1, 1, § 11, p. 10, 19-20, 5;for an English translation of the Greek version of the Tome (given in full at ACO 2, 1, 1, § 11, p. 10, 19-20, 5), see R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, § 22, p. 14-24. Cf. also R. V. Sellers, op. cit., p. 110, n. 5.

[31] ACO 2, 1, 2, § 23, p. 81 [277], 23-31; the English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 23, p. 24-25. R. V. Sellers, op. cit., p. 110, n. 6.

[32] Cf. R. V. Sellers, op. cit., p. 110; R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, p. 4. Cf. also R. Price, The Council of Chalcedon, p. 75.

[33] Cf. R. V. Sellers, op. cit., p. 110, n. 7.

archdeacon Aetius and Theodoret with the intention to demonstrate that Leo and Cyril were "really" in agreement as to the disputable Christological passages of Leo's Tome[34].

The first passage of Leo's Tome to which the Illyrian and Palestinian bishops took exception reads as follows: "For the payment of the debt owed by our nature divine nature was united to the passible nature, so that – this fitting our cure – one and the same, being the mediator between God and men, the man Christ Jesus, would be able to die in respect of the one and would not be able to expire in respect of the other"[35]. It was especially the concluding sentence of the quoted passage of Leo's Tome[36] that raised suspicion of the Illyrian and Palestinian bishops[37]. In order to remove their suspicion Aetius, archdeacon of Constantinople read a passage from Cyril of Alexandria's *Obloquuntur* letter in order to demonstrate that there is no doctrinal disagreement between Leo and Cyril. He read the following passage from Cyril's Second Letter to Nestorius: "Since again his own body by the grace of God tasted death on our behalf, not as though he entered into the experience of death in regard to his own nature (for to say or think that would be lunacy) but, because, as I have just said, his own flesh tasted death"[38]. Archdeacon Aetius wanted to show thereby that like Leo in his Tome, so also Cyril of Alexandria himself had clearly warned that the suffering should never be attributed to the divine nature of the Logos and that it was this very teaching of Cyril which Leo wanted to stress and defend by pointing, like

---

[34] Cf. R. Price and M. Gaddis, The Acts, vol. 2, p. 4 and §§ 24-26, p. 25-26; for the Greek text, see ACO 2, 1, 2, §§ 24-26, p. 81 [277], 32-82 [278], 33.

[35] ACO 2, 1, 2, § 24, p. 81 [277], 33-82 [278], 3; the English translation is by R- Price and M. Gaddis, The Acts, vol. 2, § 24, p. 25. For the Greek text, see also ACO 2, 1, 1, p. 13, 13-16; for the Latin text, see S. LeonisMagniTomusadFlavianum Episc. Constantinopolitanum (Epistula XXVIII) AdditisTestimoniisPatrum et Eiusdem S. Leonis M. EpistulaadLeonem I Imp. (Epistula CLXV), ed. C. Silva-Tarouca, TextusetDocumenta, Series Theologica 9, Rome, 1959, p. 24, vv. 57-60. Cf. also R. V. Sellers, op. cit., p. 246.

[36] Etmori posset ex uno et mori non posset ex altero, in Silva-Tarouca, TD 9 (1959), p. 24, v. 60 = καὶἀποθνήισκεινἑκτοῦἑνὸςδυνηθῆικαὶτελευτᾶνἑκτοῦἑτέρουμὴδυνηθῆι in ACO 2, 1, 1, p. 13, 16. Cf. also R. V. Sellers, op. cit., p. 246, n. 2.

[37] Cf. R. V. Sellers, op. cit., p. 246.

[38] ACO 2, 1, 2, § 24, p. 82 [278], 8-11 (= Cyril of Alexandria, Second Letter To Nestorius, in Cyril of Alexandria, Select Letters, ed. and trans. by L. R. Wickham, Oxford, 1983, p. 8, 2-7); the English translation is by R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, § 24, p. 25. Cf. also R. V. Sellers, op. cit., p. 246.

the orthodox patriarch of Alexandria, to the difference of the divine and human realities in Jesus Christ[39]. The Illyrian and Palestinian bishops were not the only ones who took exception at the above-quoted passage of *TomusLeonis*. Later, Timothy Aelurus, who was a staunch adherent of the Cyrillian one-nature Christology and the successor of Dioscorus of Alexandria on the See of Saint Mark, attacked in his refutation of Leo's Tome, which is today extant only in a Syriac translation (*CPG* 5482: *RefutatiosynodiChalcedonensis et tomiLeonis*[40]), the same passage, which had offended the Illyrian and Palestinian bishops at Chalcedon, writing: "Notice how again he teaches similar things to Nestorius when he says he can die in one person and not expire in one, calling the mortal and the immortal two different things. But if (as he said before) he who was incarnate of Mary the Mother of God is the Father's eternal Word and he who was born of her is God and there is one person of God the Word incarnate, the incarnate died in the flesh for the salvation of the world"[41]. Timothy saw in Leo's two-nature doctrine a Nestorian division of one and the same God the Word into two different, mortal and immortal, persons, what had already been the fear of the Illyrian and Palestinian bishops prior to Timothy at Chalcedon. In his petition to the emperor Leo Timothy Aelurus (*CPG* 5485), denouncing the Christological doctrine of the Council of Chalcedon, writes that "natures and persons and properties" were not mentioned by the Fathers of the Council of Nicaea, who never divided the one Christ but confessed that both divine and human realities in the economy belonged to the one person of Jesus Christ[42].

The second passage of *TomusLeonis* which raised the objection of the mentioned bishops is as follows: "For each form performs what is proper to it in association with the other, the Word achieving what is the Word's, while the body accomplishes what is the body's; the one shines with miracles while the

---

[39] Cf. R. V. Sellers, op. cit., p. 246.

[40] The refutation of TomusLeonis is edited and translated into English by R. Y. Ebied and L. R. Wickham in After Chalcedon: Studies in Theology and Church History Offered to Professor Albert Van Roey for His Seventieth Birthday, ed. C. Laga, J. A. Munitiz and L. Van Rompay, OLA 18 (1985), p. 115-166.

[41] Ebied and Wickham, OLA 18 (1985), p. 147; cf. also R. Price and M. Gaddis, The Acts,vol. 2, p. 25, n. 76.

[42] Cf. The Chronicle of Pseudo-Zachariah Rhetor: Church and War in Late Antiquity, ed. G. Greatrex, R. R. Phenix, C. B. Horn, S. P. Brock and W. Witakowski, (Translated Texts for Historians, vol. 55), Liverpool, 2011, p. 143-144; see also R. V. Sellers, op. cit., p. 266.

other has succumbed to outrages"[43]. This sentence was to be attacked constantly by the miaphysite adversaries of the Council of Chalcedon and Tome of Leo and criticized as an evidence of blatant Nestorianism in Leo's Tome[44]. For them Leo was teaching thereby merely a transitory conjunction (συνάφεια) and no real (hypostatic) union of the Logos and a human being in Jesus Christ, but rather two Sons and two Persons[45]. This was particularly the case of Timothy Aelurus who in his major anti-Chalcedonian work *Contra eos qui dicuntduasnaturas* (*CPG* 5475), which is preserved only in an old Armenian translation[46], attacked

---

[43] ACO 2, 1, 2, § 25, p. 82 [278], 13-16; the English translation is by R. Price and M. Gaddis, The Acts, vol 2, § 25, p. 25, n. 79. For the Greek text, see also ACO 2, 1, 1, p. 14, 27-15, 1; for the Latin text, see S. LeonisMagniTomusadFlavianum Episc. Constantinopolitanum (Epistula XXVIII), ed. C. Silva-Tarouca, p. 26, vv. 94-95. FortheoldArmeniantextofthefragment, seeTimotheus Aelurus, des Patriarchen von Alexandrien Widerlegung der auf der Synode zu Chalcedon festgesetzter Lehre, ed. K. Ter-Mekertsschian and E. Ter-Minassiantz, Etschmiadzin-Leipzig, 1908, p. 78, 29-34 = MatenadaranManuscript No. 1958, fol. 72v = ACO 2, 1, 1, p. 14, 27-15, 1. See also R. V. Sellers, op. cit., p. 247.

[44] Cf.R. V. Sellers, op. cit., p. 265-266ff.

Zeitschrift für Assyrologie (այսուհետ՝ ZA) 75, 1985, p. 105-107. Սակայն, ըստ Մ. Սալվինիի և Յա. Լ. Միլլերի, այս նույնացումները հնարավոր չեն, քանի որ նրանք հանդես են գալիս միևնույն աղբյուրում (Salvini M., Nairi, Na'iri, in Reallexikon der Assyirologie und Vorderasiatische Archäologie, (այսուհետ՝ RLA), IX, 1./2., Walter de Gruyter-Berlin-New York, 1998, S. 87) և ասացվածքը մնում է հիմնականում հնչյունաբանական ենթադրության վրա: Jared L. Miller, The Location of Niḫriya and its Disassociation from Na'iri, Stories of Long Ago, Festschrift Für Michael D. Roaf, (Hrsg. von Heather D. Baker, Kai Kaniuth und Adelheid Otto), Ugarit-Verlag-Münster, 2012, S. 366.

[3] Grayson A., RIMA II, A.O.99.2: p. 25 (Ադադ-նիրարի II); A.O.101.2: 13; A.O.101.24: p. 9; (Աշշուր-նաձիր-ապալ II).

[4] Grayson A., Assyrian Rulers of the Third and Second Millenium BC (to 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia (այսուհետև՝ RIMA), Assyrian Periods, vol. I, Toronto, 1987, A.0.77.1, ll., p. 22-28.

[5] Նույն տեղում, vol. I, A.0.77.1, ll., p. 22-28.

կատարում դեպի Հայկական լեռնաշխարհ, որի ընթացքում ասորեստանյան ուժերին դիմակայում են արդեն Նաիրյան 60 արքա[6]: Իսկ Ուրուատրիի վերաբերյալ հաջորդ հիշատակությունը վերաբերում է արդեն Աշշուր-բել-կալայի (Ք.ա. 1073-1056 թթ.) կառավարման շրջանին[7]: Աշշուր-բել-կալան դեպի Ուրուատրի արշավում է իր կառավարման առաջին և երրորդ տարում, այսինքն՝ մոտ Ք.ա. 1073-1072 թթ.-ին և Ք.ա. 1071–1070 թթ.-ին: Այս շրջանից հետո ասորեստանյան աղբյուրներում Ուրուատրի-Ուրարտուն սկսում է արդեն ավելի հաճախ հանդես գալ[8]: Այն որպես ձևավորված պետական կազմավորում, թերևս գոյություն ուներ արդեն Աշշուր-նածիր-ապալ II-ի (883-859 թթ.) իշխանության ժամանակ, եթե ոչ ավելի վաղ[9]:

Ուրարտական պետության կազմավորման սկզբնական տարածքի խնդրի վերաբերյալ գիտական քննարկումները շարունակվում են, դեռևս ուրարտագիտության ծագման պահից ի վեր: Սակայն հանուն ճշմարտության պետք է նշվի, որ այդ տեղորոշումների մեջ գերակշռում են այն կարծիքները, թե Ուրարտուն գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում՝ պատմական Հայաստանի Կորդուք նահանգի և հարակից տարածքներում, իսկ ավելի ընդլայնված ձևով՝ ընդգրկում էր նշված տարածքը, ներառյալ՝ Ուրմիա և Վանա լճերի միջակայքը:

---

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, vol. I, A.0.77.1, ll., p. 22-28.

[8] Меликишвили Г., Древневосточные материалы по истории народов Закавказья: I. Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 188 и сл.; Salvini M., Nairi, Na'iri, S. 79; Дьяконов И., Предыстория армянского народа (այսուհետև՝ ПАН), Е., 1968, с. 140, прим. 154; Taner Tarhan M., Urartu devleti'nin "kuruluş" evresi ve kurucu krallardan "Lutipri=Labturi" hakkinda yeni görüşler, AA, VIII, 1980, İstanbul, 1982, s. 87.

[9] Liverani M., Studies on the Annals of Ashurnasirapal II. 2: Topographical Analysis, Quaderni di Geografica Storica, 4, Roma, 1992, 107f; Zimansky P., Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire, BASOR, 299-300, 1995, p. 104, nt. 6; Smith A., The Making of an Urartian Landscape in Southern Transcaucasia: A Study of Political Architectonics, American Journal of Archaeology (այսուհետև՝ AJA), 103, 1999, p. 48, nt. 15..

Նմանատիպ տեղորոշման կողմնակից է նաև ակադեմիկոս Գ. Ղափանցյանը: Նա համակողմանի աղբյուրների համադրման ու հակադրման բնատուր ձիրքի շնորհիվ հանգել է այնպիսի եզրակացությունների, որոնք արդիական են մինչ օրս: Գ. Ղափանցյանն իր աշխատություններում ոչ միայն ցույց է տվել ուրարտացիների սկզբնավորման արեալը, այլև փորձել է նկարագրել, նրանց կողմից ամբողջ Հայկական լեռնաշխարհի նվաճման ուղղությունն իրենց բնօրրանից:

Անվանի ուրարտագետը ուրարտացիների տեղաշարժը նշում է հարավ-արևելքից Խուբուշկիայի[10] տարածքից դեպի արևմուտք, հետո Վանա լճի արևմտյան ափամերձ տարածքներով հյուսիս՝ դեպի Տարոն-Հարք՝ հետագայում՝ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգ, ապա և Վանա լճի արևելյան ավազան[11]: Այստեղ մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Ղափանցյանն ուրարտացիների մուտքը Վանա լճի արևելյան ավազան թվագրում է Ք.ա. IX դարի առաջին կեսով, և նշում, որ այն, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Արամեի և Սարդուրի I-ի ժամանակներում[12]:

Այժմ փորձենք կոնկրետացնել Գ. Ղափանցյանի կարծիքը ուրարտացիների տեղաշարժի մասին՝ կազմավորման տարածքից մինչև Վանա լճի արևելյան ափամերձ շրջանները, որտեղ էլ տեղի է ունեցել նրանց վերջնական տեղակայումը: Այսպիսով, ինչպես արդեն նշեցինք, Գ. Ղափանցյանի մոտ տեղաշարժը ցույց է տված հարավից հյուսիս, ինչի արդյունքում ուրարտացիները հարավից՝ Տիգրիսի հոսանքին հակառակ դեպի հյուսիս տեղաշարժվելով՝ Բիթլիսով մուտք են գործել Տարոնի շրջան, որից հետո շարժվել Արբերանիի շրջան, ապա շարժվելով դեպի հյուսիս-արևելք և հարավ՝ հաստատվել Վանա լճի արևելյան ափերին[13]:

Ակադեմիկոս Գ. Ղափանցյանը, ըստ սեպագիր աղբյուրների՝ փորձել է ցույց տալ նաև այսպես կոչված Ուրարտուի նախնական

---

[10] Խուբուշկիայի տեղորոշման ղափանցյանական մոտեցումը տե՛ս ստորև:

[11] Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմությունը (այսուհետ՝ ՈՒՊ), Ե., 1949, էջ 14, 19, 133:

[12] Ղափանցյան Գ., ՈՒՊ, էջ 133:

[13] Նույն տեղում:

պատմությունը, ըստ որի վերջինիս նախնական ձևը եղել է Ուրուատրին, որը սկզբնապես մտել է «նաիրյան երկրների» մեջ[14], իսկ վերջիններս էլ իրենց հերթին զբաղեցրած են եղել այժմյան Սղերդի և Խարզանի շրջանից դեպի արևելք՝ ներառյալ Բոհտան գետի հովիտը[15]: Այս հարցի առնչությամբ հեղինակը նշում է. «Այս երկիրը տեղական լեզվով կոչվել է մեր կարծիքով «Խուբուշկիա», որը ասուրական թագավորները կոչում էին «նաիրյան երկրներ», ինչպես և դրանցից հյուսիս ընկած Վանա լիճը»[16]: Ըստ այդմ, դժվար չէ կռահել, որ հեղինակը ուրարտական ցեղերին տեսնում է նաիրյան հավաքական ցեղերի կամ դաշնության շարքում և ներառում նրանց ընդհանուր հավաքական անվան տակ:

Այստեղ անհրաժեշտություն է առաջանում առանձին-առանձին անդրադառնալ նաև Խուբուշկիայի և Նաիրիի տեղորոշման խնդիրներին, որոնք կամբողջացնեն ուրարտական ցեղերի բնօրրանի պատկերը: Սակայն, մինչև անցնելը այս և այլ խնդիրներին, նշենք նրա մեկ այլ դիտարկում ևս, որը մեջ բերում ենք ամբողջությամբ. «Սալմանասար I այս Ուրուատրին կոչում է այն լեռնոտ երկիրը, որը ապստամբել էր նրա դեմ Կադմուխի երկրի հետ: Վերջինս զետեղում են այժմյան Նիզիբինի և Տիգրիսի միջև: Է. Ֆոռերը զետեղում է այդ Ուրուատրին արևելյան Խաբուրի գետահովտում: Ավելի ճիշտ կլիներ Ուրուատրին զետեղել այդ Խաբուր-ռուի վերին հոսանքի և Զավի վերին հոսանքի միջև, այսինքն այն շրջանում, որի կենտրոնն է այժմյան Ջուլամերկը: Այստեղ է գտնվել ուրարտացիների հնագույն սրբավայր Արդինի «քաղաքը» կամ ասուրական հորջորջումով՝ Մուսասիրը»[17]:

Գ. Ղափանցյանն իր փաստարկները ամրապնդելու համար, վկայակոչում է նաև Ջուդի – Արարատ լեռը Կորդվաց լեռներում և վերջինիս համադրությունը Արարատին, որից հետո նա ներկայացնում է իր տեղորոշումը, որն ըստ իրեն, ամենայն հավանականությամբ համապատասխանում է հետագա Մեծ Հայքի Կորդուք նահանգին[18]:

---

[14] Նույն տեղում, էջ 13:
[15] Նույն տեղում, էջ 13-14:
[16] Նույն տեղում, էջ 13, 124:
[17] Նույն տեղում, էջ 13:
[18] Նույն տեղում, էջ 124:

Այսպիսով, եթե փորձենք ընդհանրացնել Ուրուատրի–Ուրարտուի Գ. Ղափանցյանի տեղորոշումը՝ կստանանք հետևյալ պատկերը, ըստ որի այն գտնվել է Խաբուր-սուի վերին հոսանքի և Մեծ Զաբի վերին հոսանքի շրջաններում, ներկայիս Ջուլամերկի տարածքում[19]:

Արդ, իսկ որտե՞ղ է գտնվել սկզբնական Ուրուատրին և ինչպիսի՞ն է մասնագիտական գրականության մեջ նրա տեղորոշման խնդիրները:

Ժամանակին Է. Ֆոռերը Ուրուատրին տեղադրում էր Խաբուրի վերին հոսանքի շրջանում[20]: Գ. Ղափանցյանը մերժում է Է. Ֆոռերի տեսակետը, սակայն առաջ քաշած իր տեսակետով, տարածքային առումով ներկայացնում է գրեթե նույն տարածքը, միայն թե ավելի ընդարձակ: Վ. Բելքն էլ իր հերթին Ուրարտուն տեղադրում է ներկայիս Ջեզիրեից և Տիգրիսից արևելք՝ Ջուդի դաղ լեռան մոտ[21]: Տիգրիս գետի ավազանում և Ջուդի դաղ լեռան շրջակայքում է Ուրուատրին տեղադրում նաև Ն. Հարությունյանը[22]: Ն. Ադոնցը Ուրուատրին տեղադրում է Արևելյան Տիգրիսի՝ Բոհտան-սուի շրջանում[23]: Ի. Դյակոնովի տեղորոշումը քիչ ավելի ընդարձակ է, նա տեղադրում է Վանա լճից հարավ ընկած մինչև Ուրմիա լճի արևմտյան տարածքներում[24]: Վ. Խաչատրյանն էլ այն տեղորոշում է Տիգրիս գետի և

---

[19] Նույն տեղում, էջ 13-14:

[20] Forrer E, RLA, I, (Hrsg. von E. Ebeling, B. Meissner), Walter de Gruyter-Berlin-New York, 1928, S. 265. Վերջինս անդրադառնալով նաև Նաիրիի տեղորոշման խնդիրներին, այն տեղադրում է Արածանիի հովտից մինչև Իշուվա ընկած ընդարձակ տարածքներում: Նույն տեղում, S. 269.

[21] Belck W., Beiträge zur Urgeschichte Armeniens, Հանդես Ամսօրեայ, 1927, 11/12, էջ 808-810:

[22] Арутюнян Н., Биайнили (Урарту), С.–П., 2006, с. 14-20.

[23] Ադոնց . Ն., Հայաստանի Պատմություն. Ակունքները X-VI դդ. մ.թ.ա., (այսուհետ՝ ՀՊ), թարգ. Վ. Սեղբոսյանի և խմբ. Գ. Սարգսյանի, Ե., 1972, էջ 67, 215 և այլուր:

[24] Дьяконов И., Урарту, Фригия и Лидия, в книге История Древнего Мира, том II, М., 1989, с. 53. Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Նաիրիի առումով Ի. Դյակոնովը նույնպես տալիս է մի ընդարձակ տարածաշրջան, որը գրեթե համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան կեսին, այն է՝ Փոքր Ասիա թերակղզու սահմաններից մինչև Արևմտյան Իրանի լեռնային համակարգը ընկած տարածքը:

նրա աջ թև Խաբուրի միախառնման անկյունում՝ Ջուդի լեռան հարակից շրջաններում[25]:

Անվանի ուրարտագետ Գ. Մելիքիշվիլին կարծում է, որ Ուրարտուի կենտրոնը Ք.ա. IX դարի կեսին գտնվել է Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք (Սանգիբուտուի շրջանում՞), որից հետո այն տարածվել է Վանա լճի հարավարևելյան շրջաններ[26]: Նա նշում է նաև, որ Սալմանասարի I (Ք.ա. 1273-1244 թթ.) և Աշշուր-բել-կալայի (Ք.ա. 1073-1056 թթ.) Ուրուատրի քաղաքական միավորը, ամենայն հավանականությամբ, գտնվել է Վերին Զաբ գետի վերին կամ միջին հոսանքի շրջանում[27]:

Մի շարք մասնագետներ, այդ թվում նաև Գ. Մելիքիշվիլին գտնում են, որ այն ամենայն հավանականությամբ գտնվել է Զագրոսյան լեռների շրջակայքում, Վերին Զաբ գետի վերին և միջին շրջաններում, և Ռևանդուզի շրջանում, որտեղ էլ, որ ամենայն հավանականությամբ գտնվել է Մուծածիրը[28]:

Ուրարտական պետության միջուկի տեղորոշման առումով շատ հետաքրքիր ու ուշագրավ հետևության է եկել նաև Ա. Մովսիսյանը: Նրա տեսակետը մեջ բերում ենք ամբողջությամբ. «Բիայնական առաջին արքաների տիտղոսաշարում այն (իմա՞ Շուրիլին – Ս.Գ.) հանդես է գալիս Բիայնիլիից առաջ («արքա Շուրիլի երկրի, արքա Բիայնիլի երկրի ....»), ինչը ցույց է տալիս վերջինիս նկատմամբ Շուրիլի երկրի ունեցած առաջնությունը:

Բիայնական և ասսուրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև լրացուցիչ այլ տվյալների համակողմանի քննությունը մեզ բերում է այն եզրահանգմանը, որ բիայնական տերության սկզբնատարածք Շուրիլի երկիրը գտնվել է Վանա լճից հարավ-արևմուտք, Կաշիարի լեռների շրջանում և համապատասխանում է ասսուրական

---

[25] Խաչատրյան Վ., Հայոց հին պատմության հարցեր (Ակնարկներ հայոց հին պատմության), Ե., 2010, էջ 10-11, 17:

[26] Меликишвили Г., Наири-Урарту, с. 32.

[27] Նույն տեղում, էջ 153, 155, 167-168, 178:

[28] Barnett R., Urartu, in CAH III/1, Cambridge, 1982, p. 314-371; Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995, S. 19-27 և Գ.Մելիքիշվիլին՝ Меликишвили Г., Мусасир и вопрос о дренейшем очаге урартских племен, ВДИ, 1948, № 2, с. 37-48.

արձանագրությունների Շուր(ի)ա /Սուրա/ Սուրինա քաղաքին/ երկրին»[29]:

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել նաև անվանի հայագետ Հ. Մանանդյանի կարծիքը: Նա, չլինելով սեպագրագետ, քննության է առնում Գ. Ղափանցյանի, Վ. Բելքի ու Է. Ֆոռերի կողմից Ուրարտուի վերոհիշյալ տեղորոշումները, մերժում է Գ. Ղափանցյանի վերոշարադրյալ կարծիքը, ավելի հավանական համարում հենց Վ. Բելքի ու Է. Ֆոռերի տեսակետները[30]: Հ. Մանանդյանը նշում է, որ Ք.ա. IX դարի սկզբներին Ուրուատրին, ինչպես նաև Նաիրին եղել են խոշոր ցեղային միություններ՝ պատմական Հայաստանի տարածքում՝ իրարից առանձին շրջաններում, և Ուրուատրին տեղադրում է Կորդվաց լեռներում[31], իսկ Նաիրին՝ Վանա լճից հյուսիս և Արածանի գետի ավազանում ու նրա հարակից շրջաններում[32]:

Հայագետն անդրադառնում է նաև ուրարտացիների աշխարհագրական տեղաշարժին և, չհամաձայնվելով Գ. Ղափանցյանի վերոհիշյալ տեսակետին, անհավանական է համարում այն: Նա նշում է, որ Տարոնում և հարակից շրջաններում բնակվելիս են եղել նաիրյան ցեղեր, ոչ թե՝ ուրարտական[33]: Իսկ ուրարտացիների տեղաշարժը դեպի Վանա լճի արևելյան ավազան Հ. Մանանդյանը ներկայացնում է ղափանցյանականի ճիշտ զուգահեռ ուղղությամբ, այն է՝ ուրարտական ցեղերը տեղաշարժվել են ոչ թե դեպի Տիգրիսի հոսանքին հակառակ դեպի արևմուտք, ապա և հյուսիս, այլ անմիջականորեն շարժվել են հյուսիս՝ Վանի վիլայեթի տարածքով՝ Վանա լճի արևելյան ափերով և կանգ առել ներկայիս Վան քաղաքի տարածքում[34]:

---

[29] Մովսիսյան Ա., Բիայնիլի թագավորության սկզբնական տարածքի խնդրի շուրջ, Երիտասարդ արևելագետների հանրապետական 19–րդ գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր, Ե., 1998, էջ 30:

[30] Մանանդյան Հ., Երկեր, Հատոր Ե, Ե., 1984, էջ 440:

[31] Նույն տեղում, էջ 443, տե՛ս նաև էջ 440–ի քարտեզը:

[32] Նույն տեղում, էջ 443, 449, 454:

[33] Նույն տեղում, էջ 445:

[34] Նույն տեղում:

Բ. Հարությունյանը Հայաստանի պատմության իր ատլասում Կորդվաց լեռներում է տեղադրում Ուրուատրին, որից հյուսիս նա գետեղում է նաև Խուբուշկիան[35]:

Անդրադառնալով Ուրարտուի սկզբնական տեղորոշման խնդիրներին՝ Ա. Քոսյանը նշում է. «Սալմանասար I-ի հիշատակած Ուրուատրիի ութ երկրներից թեև ոչ բոլորի համար են առաջարկվել տեղադրություններ, այնուամենայնիվ «երկրների» այս միության մոտավոր տեղը մասնագետների մոտ առանձնապես մեծ կասկածներ առաջ չի բերել: Է. Վայդների կարծիքով Ուրուատրին պետք է գտնվեր Խարբերդից մինչև Վանա լիճ ընկած շրջանում, Ն. Հարությունյանը այն տեղադրում է Տիգրիսի վերին հոսանքների շրջանից մինչև Վանա լճի հյուսիսային առափնյակն ընկած հատվածում: Վերոհիշյալ տեղադրություններից որոշակիորեն տարբերվում է Գ. Մելիքիշվիլու և Ֆ. Հաազի կարծիքը, այն է՝ Մուծածիրի և Ռովանդուզի շրջանը: Կան այլ տարբերակներ ևս, սակայն դրանք բոլորը այս կամ այն կերպ էականորեն չեն տարբերվում վերոնշյալ հեղինակների կարծիքներից»[36]:

Ըստ հնագիտական պեղումների արդյունքների՝ մի շարք հետաքրքիր հետևությունների է հանգել նաև Վ. Սևինը: 1991-1992 թվականներին, Վանից 35 կմ հյուսիս-արևելք գտնվող Կարագյունդուզ գյուղի մոտակայքում՝ 1,5 կմ արևելք, պեղումների ընթացքում հայտնաբերվել է Երկաթի դարաշրջանի սկզբով թվագրվող մի գերեզմանոց: Իսկ 1993-1996 թվականների ընթացքում այդ գերեզմանոցից պեղվել են 9 դամբարան[37]: Եվ ահա իմի բերելով այդ ամբողջ նյութը՝ Վ. Սևինը, մինչև նոր եզրակացությունների հանգելը, նշում է նաև, որ ժամանակին, նկատի

---

[35] Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, հեղինակ՝ Հարությունյան Բ., Ե., 2004, 14-1, 2Դ:

[36] Քոսյան Ա., Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում), Հայկազունիներ, առասպել և պատմություն, Միջազգային գիտաժողովի (2012 թ. հունիսի 5-6, Ե., ՀՀ ԳԱԱ) հոդվածների ժողովածու, Ե., 2013, էջ 58-59:

[37] Sevin V., The Origins of the Urartians in the light of the Van/Karagünduz Excavations, Anatolian Iron Ages 4 Proceedings of the Fourth Anatolian Iron Ages Colloquium, Mersin, 19 to 23 May 1997, Anatolian Studies (այսուհետ՝ An.St.) 49, ed. A. Çilingiroğlu, R. Matthews, Ankara, British Institute of Archaeology, 1999, p. 160.

ունենալով ասսուրական աղբյուրների տեղեկությունները, եզրակացվում էր, որ Նաիրին տարածվել է հարավում մինչև Տուր-Աբդինի լեռները, իսկ հյուսիսում՝ մինչև Վանա լճի հարավարևմտյան լեռնային տարածքը: Իսկ ինչ վերաբերում է Ուրուատրիին, ապա ենթադրվում է, որ այն ընկած է եղել Վանա լճից ավելի հյուսիս և արևելք[38]: Գիտնականը փորձում է նաև համեմատել Ուրմիա լճի արևմտյան ափերն ընդգրկող տարածաշրջանի ու Վանա լճի արևելյան շրջանների հնագիտական արդյունքները, և նշում է, որ Վանա լճի տարածաշրջանը խիստ տարբերվել է Ուրմիա լճից հարավ և հարավ-արևելք ընկածների հնագիտական նյութերից, դեռ ավելին՝ այն ավելի խիտ բնակեցված է եղել: Դրա վկայությունն էլ, Վ. Սևինի, հենց վերոհիշյալ դամբարանադաշտն ու նմանատիպ գերեզմանոցների առկայությունն է[39]:

Հեղինակի վերջնական եզրահանգումն այն է, որ ըստ Կարագյունդյուզի, ինչպես նաև Էրնիսի գերեզմանների հնագիտական նյութերի թե՛ նյութական և թե՛ հոգևոր մշակույթի բնագավառներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ դրանք բավականին շատ աղերսներ ունեն ուրարտական մշակույթի հետ, դեռ ավելին՝ Էրնիսի և Կարագյունդյուզի մշակույթը հանդիսացել է ուրարտականի նախահայրը: Ջարգացնելով իր միտքը՝ Վ. Սևինը եզրակացնում է նաև, որ վաղ երկաթի դարից միջին երկաթի դար անցման ընթացքում էլ սկսում է ձևավորվել հետագա Ուրարտական պետությունը: Այսպիսով՝ ըստ Վ. Սևինի՝ ուրարտական քաղաքակրթության արմատները պետք է փնտրել Վանա լճի տարածաշրջանում[40]:

Խիստ արժեքավոր է նաև Ա. Քոսյանի մեկ այլ դիտարկումը, որը վերաբերում է ընդհանրական Նաիրի-Ուրարտու տեղորոշմանը և որը մեջ բերում ենք ամբողջությամբ. «... Վանա լճի հյուսիսային առափնյա գոտում է վկայված Սալմանասար III կողմից հիշատակվող Ուրարտուն իր արքա Արամուի և մայրաքաղաք Արծաշքուի (հետագայի Արճեշ[41])

---

[38] Նույն տեղում, էջ 159:

[39] Նույն տեղում, էջ 162-163:

[40] Նույն տեղում, էջ 163:

[41] Գիտության մեջ վիճելի հարցերից է Արզաշկուի տեղադրությունը, ինչի վերաբերյալ առկա է մեծաթիվ գրականություն: Գ. Ղափանցյանը Արզաշկու(ն) նույնացրել է Արծկե-Արճեշին (Ղափանցյան Գ., ՈւՊ, էջ 134); Հ.

հետ միասին: Ք.ա. XIII-XII դդ. ասորեստանյան արքաների արշավանքները դեպի Նաիրի և Ուրուատրի գերազանցապես առնչվում են Արածանիի ստորին ավազանի հետ, այն է՝ Վանա լճի հյուսիսային առափնյա գոտու և լճից արևմուտք՝ ընդհուպ մինչև Եփրատ ընկած տարածքներին»[42]:

Այժմ անդրադառնանք Նաիրի և Խուբուշկիա երկրների տեղադրության խնդիրներին՝ սկսելով այն պատմական-աշխարհագրության բնագավառում մեծ վաստակ ունեցած Հ. Մանանդյանի տեսակետով: Ընդհանրական առումով Հ. Մանանդյանը Նաիրի տերմինի տակ առաջարկում է տեսնել ոչ միայն ամբողջ Արածանիի ավազանը, այլ նաև մի շարք այլ տարածքներ Վանա լճի

Կարագյոզյանը՝ Արճեշին (Карагезян О., Локализация урартского царского города Арзашку, ԼՀԳ, 1976, № 5, էջ 67-98); Ն . Հարությունյանը՝ Արծկեին (Арутюнян Н., ТУ, с. 34-35); Ն. Ադոնցն այն տեղորոշել է Մանազկերտի մոտ (Adontz N., Histoire d'Arménie. Les origins du X siècle au VI (Av. J. C.), Paris, 1946, (այսուհետ՝ HA), p. 81; Գ. Մելիքիշվիլին՝ Ուրմիայի լճից հյուսիս-արևմուտք (Меликишвили Г., Наири-Урарту, с. 31-32); Չ. Բըրնելը՝ Վանա լճից հյուսիս-արևմուտք (Ch. Burney, Urartian Fortresses and Towns in the Van Region, An.St., vol. 7, 1957, p. 39; նույնի՝ The Kingdom of Urartu (Van): Investigations into Archaeology of the Early First Millennium BC within Eastern Anatolia (1956-1965), in R. Matthews (ed.), Ancient Anatolia. Fifty Years' Work by the British Institute of Archaeology at Ankara, 1998, p. 155); Ջ. Կիններ-Վիլսոնը՝ Վանա լճից արևելք (Kinnier-Wilson J., The Kurba'il Statue of Salmaneser III, Iraq, vol. XXIV, pt. 2, 1962, 102ff.); Մ. Լիվերանին՝ (Liverani M., Studies on the Annals of Ashurnasirapal II. 2: Topographical Analysis, Quaderni di Geografica Storica, 4, Roma, 1992, p. 20, nt. 37, 23, 52); Ա. Չիլինգիրօղլուն՝ Բյուրակնի շրջանում կամ Վանա լճից արևմուտք (Çilingiroğlu A., Urartu kralliği, Tarihi ve Sanati, Izmir, 1997, s. 21-23); Ք. Փիլլերը՝ Ուրմիա լճից արևմուտք կամ հարավ-արևմուտք (Piller Ch., Bewaffung und Tracht urartäischer und nordwestiranischer Krieger des 9. Jahrhunderts v. Chr.: Ein Beitrag zur historischen Geographie des frühen Urartu, in Biainili-Urartu, ActIr., The Proceedings of the Symposium Held in Münich 12-14 October 2007, Tagungsbericht des Münchner Symposiums 12.-14. October 2007, ed. by S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf, P. Zimansky, Festschrift für S. Kroll, Peeters, 2012, S. 379-390):

[42] Քոսյան Ա, Վանից մինչև Եփրատ..., էջ 52:

ավազանի մոտ, ինչպես նաև Հայկական Տավրոսից հարավ Խուբուշկիան, իսկ վերջինս էլ տեղորոշում է Բոհտան գետի հովտում[43]:

Այստեղ հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Վ. Խաչատրյանը Հայկական Տավրոսը համարում է Նաիրիի հարավային սահմանը[44]: Ինչևէ, անդրադառնալով խնդրին՝ Հ. Մանանդյանի ուշադրությունը է գրավում այն հանգամանքը, որ Սարգոն II (Ք.ա. 722-705 թթ.) Ուրարտու կատարած հայտնի VIII տարվա արշավանքի ժամանակ կարծես թե նույնացվում են Խուբուշկիան և Նաիրին[45]: Այս առումով գիտնականը նշում է, որ Խուբուշկիա-Նաիրի անվանումը գալիս է ոչ թե նրանից, որ Խուբուշկիան անպայմանորեն պետք է տեղադրվի Նաիրիի մոտակայքում, այլ միայն այն պատճառով, որ գտնվել է Բոհտան-սուի ավազանում, այսինքն՝ գետային է[46]:

Անդրադառնալով Նաիրիի տեղորոշման խնդրին՝ Ն. Հարությունյանը սկզբնապես նշում էր, որ այն ամենայն հավանականությամբ գտնվել է Դիարբեքիրի և Վերին ծովի միջև[47]:

---

[43] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 488-489, տե՛ս նաև էջ 481 քարտեզը:

[44] Խաչատրյան Վ., Հայոց հին պատմության հարցեր, էջ 9-10: Վերջինս իր մեկ այլ աշխատանքում նշում է, որ Նաիրին և Հայասան նունական են թե՛ էթնիկական և թե՛ աշարհագրական որոշ առումներով: Տե՛ս Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 82-83: Այստեղ հետաքրքիր է նաև այն, որ նույն տարածաշրջանում, որն իր մեջ ներառում է պատմական Հայաստանի գրեթե ողջ Տուրուբերան նահանգը, միտում կա տեղադրելու ոչ միայն Հայասան, այլև՝ Նաիրիին նկատի ունենալով այն հանգամանքը, որ սրանք կարծես թե նույնանում են: Տե՛ս Քոսյան Ա., Վանից մինչև Եփրատ..., էջ 48-63; Ղազարյան Ռ., Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ, Հայկազուններ, էջ 113-117:

[45] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 485:

[46] Նույն տեղում, էջ 488:

[47] Հեղինակը Վերին ծով անվան տակ հակված է տեսնելու Սև ծովը: Տե՛ս Арутюнян Н., ТУ, с. 148-149: Ասորեստանյան աղբյուրների «Վերին ծով» (Tâmtu elenitu) (տերմինի տակ հետազոտողներից շատերը ավանդաբար տեսնում են Սև ծովը՝ երբեմն այն նույնացնելով «Նաիրի երկրներ ծով»-ի (Tâmtu ša KUR/KUR.KUR Nairi) հետ: Տե՛ս Lehmann-Haupt C., Armenien Einst und Jetzt, Bd. I, Berlin, 1910, S. 433; И. Дьяконов, АВИИУ, 1951, № 10, прим. 45; Меликишвили Г., Наири-Урарту, с. 25 и сл. Սակայն ըստ Ա. Քոսյանի՝ Միջին ասորեստանյան արքաների հյուսիսային արշավանքների այդչափ

Սակայն իր «Բիայնիլի-Ուրարտու» աշխատության վերահրատարակությունում տալիս է այլ տեղորոշում. Նաիրին տեղադրում է Վանա և Ուրմիա լճերի ավազանների միջև ընկած տարածքում[48]: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Ն. Հարությունյանը հավասարության նշան է դնում Նաիրի և Ուրարտու տերմինների միջև: Նա նշում է. «Նաիրի երկիրը, բառիս լայն իմաստով՝ նույնն է, ինչ որ Ուրարտուն ասորեստանյան և Բիայնիլին ուրարտական աղբյուրների»[49]:

Ըստ մեկ այլ անվանի ուրարտագետ Մ. Սալվինիի՝ Նաիրի աշխարհագրական անվան տակ պետք է նկատի ունենալ մի ընդարձակ տարածք, որն ընգրկում էր Եփրատից այն կողմ ընկած գրեթե ողջ անատոլիական արևելքը, և որի մոտավոր սահմանները պետք է որ տարածվեին հարավ-արևմուտքում մինչև Արևելյան Տավրոս, արևելքում՝ Մեծ Զաբի վերին հոսանք, հյուսիսում՝ Էրզրումի տարածք: Գիտնականը Նաիրի տերմինը մասնավորեցնում է, փորձում այդ անվան տակ տեսնել կոնկրետ առանձին քաղաքական միավոր, որը պետք է գտնվեր Զագրոսի հովտում և նույնանար հետագայի Խուբուշկիա երկրի հետ: Դեռ ավելին, Սալվինին նշում է, որ թեև աշխարհագրականորեն Նաիրին և Ուրարտուն կարող էին տարբեր

ընդլայնումը մինչև հարավ մերձևնծովյան ավազան հնարավոր չէ որևէ կերպ հիմնավորել: Քոսյան Ա., Վանից մինչև Եփրատ..., էջ 52, հղ. 19: Վերջին տասնամյակներում մի շարք հետազոտողներ, այդ թվում նաև Գ. Ղափանցյանը «Վերին ծովը» նույնացնում են Վանա լճի հետ: Տե՛ս Ղափանցյան Գ., ՈւՊ, էջ 125բ-126; Пиотровский Б., История и культура Урарту, Е., 1944, с. 29; Манандяан Я., О некоторыь спорных проблемах геогрфии древней Армении, Е., 1956, с. 17; Russel H., Shalmaneser's Campaign to Urartu in 856 B.C. and the Historical Geography of Eastern Anatolia According to Assyrian Sources, An.St., 1984, № 34, p. 192; Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, S. 21; նույնի՝ Nairi, Na'iri, S. 89; Քոսյան Ա., Վանից մինչև Եփրատ..., էջ 52; Sagona A., Zimansky P., Ancient Turkey, Routledge Taylor and Francis Group, London and New York, 2009, p. 318; Parpola S., Porter M. (eds.), Helsinki Atlas of the Near East in the Neo Assyrian Period (այսուհետ՝ HA), Helsinki, 2001, 4, B-C3, (Tâmtu (Elītu)ša Na'iri).

[48] Арутюнян Н., Биайнили (Урарту), с. 21.

[49] Арутюнян Н., ТУ, с. 149; նույնի՝ КУКН, с. 516.

ժամանակահատվածներում համընկնել, սակայն քաղաքական առումով երկու տարբեր միավորներ են[50]: Շարունակելով զարգացնել իր տեսակետը՝ նա նշում է, որ ոչ Ուր(ու)ատրի-Ուրարտուն և ոչ էլ նրան պատկանող տարածաշրջանից որևէ մեկը երբեք որպես Նաիրին պատկանող երկիր չի հասկացվում[51]:

Նաիրիի տեղադրության իր տեսակետն է առաջ քաշում նաև Ա. Կարագյոզյանը, ըստ որի՝ այն գտնվել է Ասորեստանից արևելք և Կաշիարի (Մասիուս) լեռներից հյուսիս ընկած տարածքներում[52]:

Խուբուշկիան գրեթե նույն՝ Բոհտան գետի հարավային ավազանում է տեղադրում նաև Վ. Խաչատրյանը[53]: Այստեղ հարկ ենք համարում մեջ բերել Ն. Ադոնցի մի շատ հետաքրքիր մեկնաբանություն, ըստ որի Նաիրին, անունը զիջելով Ուրարտուին, Հայկական լեռնաշխարհի երկու կողմերում իրեն է պահում երկու տարածաշրջան՝ Ամիդի շրջանը

---

[50] Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, S. 22. Մ. Սալվինին գրում է նաև, որ տարբեր դարաշրջաններում և առանձին աղբյուրներում Նաիրիի անվամբ լրիվ տարբեր տարածքային և քաղաքական միավորումներ են հիշատակվում: Միջին ասորեստանյան ժամանակաշրջանում, հատկապես Թուկուլտի-Նինուրտա I (Ք.ա. 1243-1207 թթ.) և Թիգլաթպալասար I (Ք.ա. 1114-1076 թթ.) մոտ Նաիրյան երկրները հիշատակվում են որպես թույլ դաշնության մեջ գտնվող կազմավորումներ, որոնց վրա իշխում են «թագավորները» (23, 60 կամ 30 šarranu), և որի տակ պետք է հասկանալ ցեղերի առաջնորդների: Ըստ նրա՝ նշված շրջանում դեռ չի կարելի խոսել մի կազմակերպված պետականության մասին: Նոր ասորեստանյան ժամանակաշրջանում Նաիրին ունի երկու քաղաքական նշանակություն՝ ըստ ասորեստանյան աղբյուրների այն հանդիսանում էր Խուբուշկիա երկրի համանիշը (Սալմանասար III՝ Ք.ա. 858-824 թթ., Սարգոն II՝ Ք.ա. 722-705 թթ.), ուրարտական երկու աղբյուրներում այն բնորոշվում է որպես Ուրարտու երկրի անվանում (Սարդուրի I՝ Ք.ա. 840-830 թթ.), կամ այն հանդիսանում է Քելիշինի երկլեզվյան արձանագրության՝ (Իշպուինի և Մենուա՝ Ք.ա. 820-810 թթ.) ասորեստանյան տարբերակում հիշատակված Բիայնիլի երկրի տեղական անվանումը: Salvini M., Nairi, Na'iri, S. 90; նույնի՝ Das Corpus der Urartäischen Inschriften, in Biainili-Urartu, ActIr., S. 133.

[51] Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, S. 23.

[52] Կարագյոզյան Ա., Նաիրի, Բիայնա, Ուրարտու և Հայք երկրանունների ստուգաբանության շուրջ, ԼՀԳ, 2012, № 2/3, էջ 51:

[53] Խաչատրյան Վ., Հայոց հին պատմության հարցեր, էջ 10:

մինչև Անզիտենե և Խուբուշկիա երկիրը Զաբի հովտում և նույնիսկ Դադդիրայի շրջանը Մուսասիրի հարավում: Այդ տարածքները Նաիրի անունը վերագրում են իրենց այն պատճառով, որ երբեմն կազմել են Նաիրիի մաս, երբ վերջինս ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը[54]:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ այստեղ՝ Զուլամերիկի շրջանում՝ Ն. Ադոնցը տեղորոշում է ոչ թե Ուրուատրին, այլ Խուբուշկիան[55]:

Անհրաժեշտ է նշել, որ գիտության մեջ վիճելի հարցերից է Խուբուշկիայի տեղադրությունը, և մասնագետները այս հարցում գրեթե միակարծիք չեն: Ն. Հարությունյանը, Բ. Պիոտրովսկին և Գ. Մելիքիշվիլին Խուբուշկիան տեղադրում են Բոհտան-սու գետի հովտում[56]: Սակայն վերջին տասնամյակներում այս տեսակետները վերանայվել են Վ. Կլայսի, Զ. Լաֆրանկիի, Ի. Մեդվեդսկայայի կողմից՝ տեղորոշելով այս երկիրը մերձուրմյան տարածքներում[57]:

Անդրադառնալով Խուբուշկիայի խնդրին՝ Մ. Սալվինին նշում է, որ այն երբեմն տեղայնացվում է Մեծ Զաբի վերին հոսանքում, երբեմն էլ դրանից արևելք: Այն նույնացվում է նաև Վանա լճից հարավ ընկած լայնածավալ լեռնային մետաղներով հարուստ տարածքի հետ՝ Բոհտան-սուի ակունքի և Մեզ Զաբի վերին հոսանքի միջև, և որտեղ հայտնաբերվել են ակտիվ մետաղագործության հետքեր[58]:

---

[54] Ադոնց Ն., ՀՊ, էջ 68:

[55] Նույն տեղում, էջ 72, 90, 92, 113: հմմտ. նաև Medvedskaya I., The Localization of Hubuškia, in S. Parpola, R. M. Whiting (eds.), "Assyria 1995", Helsinki, 1997, p. 197-206; Parpola S., Porter M. (eds.), HA, 4, E5.

[56] Арутюнян Н., Биайнили (Урарту), с. 56; նույնի՝ ТУ, с. 231-231; Пиотровский Б., ВЦ, с. 42; Меликишвили Г., Наири-Урарту, с. 17-18.

[57] Այստեղ, սակայն, այլ հարց է, թե մերձուրմյան ո՞ր շրջանում, ինչի վերաբերյալ ևս առկա են տարակարծություններ: Kleiss W., Zur Ausdehnung von Hubushkia nach Osten, in "Anatolia and the Near East", Studies in Honor of Tahsin Özgüç, ed. K. Erme., M. Mellnik, B. Hrouda, N. Özgüç, Ankara, 1989, S. 258-268 (Taf. 47-48); Lanfranchi G., Assyrian and Neo-Assyrian Letters. The Location of Hubuškia Again, Neo-Assyrian Geography, Quaderni di Geografia Storica, 5, Roma, 1995, p. 127-137; Medvedskaya I., The Location oh Xubuškia, "Assyria 1995", p. 197-206.

[58] Salvini M., Kultur und Geschichte der Urartäer, S. 24, 27.

Այժմ ներկայացնենք Խուբուշկիայի տեղորոշումն ըստ Ն. Ադոնցի: Ադոնցը նշում է, որ Խուբուշկիան Գիլզանի մոտ էր, Սալմանասար III (Ք.ա. 858-824 թթ.) Գիլզանից Խուբուշկիա գնաց իր մայրաքաղաքը վերադառնալիս[59]: Նա նաև նշում է. «Խուբուշկիան այն երկրի կենտրոնն է, որը կոչվում է Նաիրի: Այդ երկիրը, ուրեմն, պահպանել է Ուրարտուի հին անունը անշուշտ այն պատճառով, որ նրա մասն էր կազմում, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ երկրներից էր և հետագայում կոչվելու էր մայրաքաղաքի անունով՝ Խուբուշկիա կամ Խուբուշկա: Այս երկիրը ընկած էր Մեծ Զաբի վրա, այսօրվա Ջուլամերիկի շրջանում: Հայերն այդ մարզը կոչում են Փոքր Աղբակ ...»[60]:

Մեկ այլ տեղ Ն. Ադոնցը նշում է. «Խոշաբի հովիտը կազմում էր Ուրարտուի սահմանը, որից այն կողմ տարածվում էր Խուբուշկիա երկիրը, այլ կերպ ասած՝ Նաիրին»[61]:

Իր վերջերս հրատարակած մի հոդվածներից մեկի ամփոփման մեջ Ա. Քոսյանը նշում է. «Հայասայի և Ազզիի համար առաջարկված տեղադրությունը Ծովիքից դեպի Վանա լիճ ընկած շրջանում անվերապահորեն ենթադրում է մի կողմից այդ երկու քաղաքական միավորների, մյուս կողմից ասորեստանյան աղբյուրների կողմից հիշատակվող Ուրուատրի (հետագա Ուրարտուի միջուկը) և Նաիրի անվանումը կրող խոշոր ցեղային միությունների միջև առնվազն մասնակի տարածքային հատվածում»[62]: Հեղինակը նշում է նաև, որ հնարավոր կլինի ենթադրել, թե Հայասան և Ազզին էին այն նախնական միջուկը, որի հիմքի վրա Ք.ա. XII դ. առաջավորասիական ճգնաժամի ավարտին ձևավորվեց Ուրարտուն կամ Վանի թագավորությունը[63]:

Ընդհանրացնելով Ուրարտուի կազմավորման սկզբնական տարածքի խնդրի շուրջ վերոշարադրյալ տեսակետները՝ կարելի է միանշանակորեն ասել, որ ուրարտագետների ճնշող մեծամասնությունն այն կարծիքին են, որ Ուրարտուի կենտրոնը, կամ նրա պատմության արշալույսին զբաղեցրած սկզբնական տարածքը

---

[59] Ադոնց Ն., ՀՊ, էջ 361:
[60] Նույն տեղում, էջ 79, 90:
[61] Նույն տեղում, էջ 361:
[62] Քոսյան Ա., Վանից մինչև Եփրատ..., էջ 60:
[63] Նույն տեղում, էջ 60:

գտնվել է Վանա լճից հարավ և հարավ-արևելք, իսկ ավելի ընդարձակ՝ Վան և Ուրմիա լճերի միջակայքում: Այժմ ըստ մեր հիշատակած հեղինակների առանձնացնենք կոնկրետ տեղորոշումները. Է. Ֆոռերը զետեղում է Ուրուատրին արևելյան Խաբուրի գետահովտում, Գ. Ղափանցյանը՝ Խաբուր-սուի վերին հոսանքի և Զավի վերին հոսանքի միջին հատվածում, Վ. Բելքը, Վ. Խաչատրյանը՝ Տիգրիս գետի և նրա աջ թև Խաբուրի միախառնման անկյունում՝ Ջուդի լեռան հարակից շրջաններում, Ն. Հարությունյանը՝ Տիգրիս գետի ավազանում և Ջուդի դաղ լեռան շրջակայքում, ինչպես նաև Տիգրիսի վերին հոսանքից մինչև Վանա լճի հյուսիսային առափնյակն ընկած հատվածում, Ի. Դյակոնովը՝ Վանա լճից հարավ ընկած մինչև Ուրմիա լճի արևմտյան ափամերձ տարածքներում, Ն. Ադոնցը՝ Արևելյան Տիգրիսի՝ Բոհտան-սուի շրջանում, Գ. Մելիքիշվիլին, Ռ. Բարնեթը, Փ. Ջիմանսկին, Մ. Սալվինին, Ֆ. Հասազ՝ Զագրոսյան լեռների շրջակայքում, Վերին Զաբ գետի վերին և միջին հոսանքներում, և Ռևանդուզի շրջանում, որտեղ էլ, որ ամենայն հավանականությամբ գտնվել է Մուծածիրը, Ա. Մովսիսյանը՝ Վանա լճից հարավ-արևմուտք, Կաշիարի լեռների շրջանում, Հ. Մանանդյանը՝ Կորդվաց լեռներում, Է. Վայդները՝ Խարբերդից մինչև Վանա լիճ ընկած շրջանում, Վ. Սևվինը՝ Վանա լճից հյուսիս և արևելք:

Ուրարտուի կազմավորման սկզբնական տարածքի խնդրի շուրջ եղած տարարծությունները իրավացիորն դասակարգել է Ա. Մովսիսյանը հետևյալ կերպ.

ա) Բիայնական պետության կազմավորման տարածքի վերաբերյալ գիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները կարելի է բաժանել երեք խմբի: Ըստ առաջինի, այն գտնվել է Վանա լճի հարավ-արևելյան շրջաններում (երեք գերագույն աստվածների պաշտամունքային գլխավոր կենտրոնների, մայրաքաղաքի և Արա լեռան տարածաշրջանում): Կարծիքների երկրորդ խումբը կապվում է Արամու արքայի «թագավորական քաղաք» Արծաշքուի տեղադրության հետ (Եփրատի վերին հոսանքի շրջան, Արճեշ կամ Արծկե քաղաք): Երրորդ կարծիքի համաձայն, այդ տարածքը եղել է Արարատյան դաշտը (կամ Այրարատ նահանգը), որի անվան ասուրական տարբերակն է «Ուրարտու» երկրանունը: Նշված տեսակետներից ոչ մեկը, սակայն, առկա հարցերին չի տալիս սպառիչ պատասխաններ:

բ) Խնդրի լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Շուրիլի երկրի տեղորոշումը:

գ) Համաձայն նման տեղորոշման՝ կարելի է անել մի ենթադրություն, որը հետագա ուսումնասիրությունների ընթացքում կարող է հաստատվել կամ մերժվել: Նույն Կաշիարի լեռներում ասուրական աղբյուրները Ք.ա. 882 թ., 879 թ. համընկման, Լապթուրու և Լութիպրի անունների հնարավոր նույնության (թ և պ բաղաձայնների դրափոխության դեպքում) հանգամանքները հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ Սարդուրի Ա-ի հայր Լութիպրին և Կաշիարի լեռներում իշխած Լապթուրուն նույն անձն են: Եթե այս ենթադրությունը հաստատվի, բիայնական արքայացանկի առաջին մասը կունենա հետևյալ պատկերը. Թուբուսու (մինչև Ք.ա. մոտ 885 թ.), Լութիպրի/Լապթուրու (Ք.ա. մոտ Ք.ա. 885-860/850 թթ.), Սարդուրի I (Ք.ա. 860/850-830/825 թթ.), Իշպուինի/Ուշպինա (Ք.ա. մոտ 830/825-810 թթ.) և այլն:

դ) Ասուրական աղբյուրներում Ք.ա. 859, 856 և 845 թթ. հիշվող Արամու արքան, որն իրավամբ համադրվում է Հայկյան Արամի հետ, իշխել է Արարատ/դի թագավորությունում՝ իր տիրակալության տակ միավորելով Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը, ինչի շնորհիվ էլ Ք.ա. XI դարից սկսած Արարատ անվան ասուրական՝ Ուրարտու տարբերակը դառնում է լեռնաշխարհի ընդհանրական անվանումներից մեկը: Հետագայում Արարատի/Ուրարտու թագավորության տարածքը նվաճվում է Շուրիլի-Բիայնիլիի արքաների կողմից, որոնք հասկանալիորեն, իրենց չեն վերագրում նվաճված տերության անվանումը (թեպետ միջագետքյան աղբյուրները նրանց ճանաչում էին իբրև Ուրարտուի տիրակալներ)[64]:

Բիայնական տերության կազմավորման սկզբնատարածքի պարզաբանումն օգնում է հասկանալու ոչ միայն պետությանը տրված անվանումները, այլև մշակութային ժառանգության և փոխազդեցության մի շարք հարցեր՝ կապված, հատկապես, խեթա-միտանիական աշխարհի հետ: Այն նպաստում է նաև Հայաստանի հնագույն պատմության բազմաթիվ այլ հարցերի լուսաբանմանը:

---

[64] Մովսիսյան Ա., Բիայնիլի թագավորության կազմավորման..., էջ 30-31:

Այսպիսով, ակնհայտ է այն հանգամանքն, որ առ այսօր Ուրարտուի բնօրրանի տեղորոշման հարցերը խիստ հիմնախնդրային են, սակայն ելնելով ասորեստանյան արքաների՝ Սալմանասար I-ի և Աշշուր-բել-կալայի ռազմուղիների ընթացքից՝ մենք այն տեղորոշում ենք Բոհտանսուի և Զագրոսյան լեռների միջակայքն ընկած տարածքներում:

GRIGORYAN SONA
(IOS)

THE PROBLEM OF THE LOCALIZATION OF THE TOPOI BIAJNILI – URARTU ACCORDING TO G. KAPANTSYAN

The Assyrian sources dating from the 13th century B.C. bear a testimony concerning a country which bordered Assyria from its south part and was known as Uruatri or Urartu and was located in the estuary of the Eastern and Western arms of the river Tigris. In the East it was bordered by Kumani and in the North and in the West it was bordered by the Hurrian provinces Khabkhi and Kadmukhi. At the beginning of the new-Assyrian era the state formations of the Armenian Highland are beginning to be mentioned in the Assyrian sources again by general names. The inscriptions of the Assyrian kings Adad-Nirar II and Tukulti-Ninurta use very often the expression "Countries of Nairi", though we have in its contents some changes. The Assyrian scribes mention again the name Urartu (Uru(a)tru/i). We find the first mention of the country or tribal formation Uruatri in the description of the campaign of the Assyrian King Salmanasar I (1263-1234 B. C.) to the Armenian Highland. In that description Uruatri is mentioned as a country which has rebelled against Assyria. The scientific discussions concerning the original area of formation of the Urartian state still continue. They have begun since the emergence of the Urartology as such. In varoius opinions concerning the original location of Urartu those views are dominant according to which Urartu was originally situated in the southern-eastern part of the Armenian Highland, in the province of Korduk' of historical Armenia and in its neighbouring territories. In more general terms it comprised the mentioned area including the area between the lakes Van and Urmia. This view concerning the original location of Urartu was shared also

by G. Khapantsyan. According to the famous Urartalogian the Urartians migrated from the south-est, from the territory of Hubuškia to the west, then along the western territories close to the shores of the lake Van they migrated to the north, to Taron-Harkh, later they came to the province of Turuberan of Grand Armenia, and finally they reached the eastern basin of the lake Van. The most interesting aspect in this respect is that G. Khapantsyan traces the arrival of the Urartians in the easten basin of the lake Van back to the first half of the ninth century B.C. and he notes that this happened in all probability in the reign of Aramu (Arame) and Sarduri I.

ԴԱՆԻԵԼՑԱՆ ՀԵՆՐԻԿ
(ՀԱՒ)

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախաբան

Սույն հաղորդումը նպատակ ունի քննարկել բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի ամրոցաշինությանն առնչվող մի քանի խնդիրներ՝ հենվելով վերջին տարիներին պեղվող երեք բնակավայրերի, մասնավորապես Սոթք 2-ի, Նորաբակ 1-ի և Մարգահովիտի նյութերի վրա*:

Հայկական լեռնաշխարհի հնագույն պաշտպանական համակարգերը (ամրոցներ, ամրոց-բնակատաղիներ և դիտակետ-ամրոցները) պատկանում են համեմատաբար քիչ ուսումնասիրված հուշարձանների թվին: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այս հուշարձաններն անվանել «կիկլոպյան ամրոցներ»[1] (հայկական միջավայրում՝ «աչքադարյան ամրոցներ»[2]):

Պաշտպանական համակարգերին նվիրված ուսումնասիրությունները հիմնականում հնագիտական հետախուզական աշխատանքների նախնական արդյունքներ են, որոնց առաջին օրինակները գալիս են 19-րդ դ. վերջերից: Այսպես, 1884 թվականին Ատրպետի կողմից ուսումնասիրվեցին Շիրակի պաշտպանական համակարգերը[2]: Արդեն

---

* Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մարգահովիտի արշավախմբի ղեկավար Ա. Գևորգյանին և Սոթքի/Նորաբակի արշավախմբի ղեկավար Ա. Բոբոխյանին արշավախմբերի մեջ ընդգրկելու, նյութերը տրամադրելու և խորհուրդների համար:

Աշխատանքում օգտագործված հապավումներն են. ՊԴ-պղնձեքարեդար/խալկոլիթ, ՎԲ-վաղ բրոնզ, ՄԲ-միջին բրոնզ, ՈՒԲ-ուշ բրոնզ, ՎԵ-վաղ երկաթ, ՄԵ- միջին երկաթ:

[1] Առաջին անգամ այս տերմինը օգտագործել է Հ. Շլիմանը:

[2] Ատրպետ, Շիրակի աչկատարեան ամրոցները, Ազգագրական հանդես, № 2., Թ., 1914, էջ 165-188:

1930-ական թվականներից Ա. Հաջյանը, Լ. Գյուզալյանը, Բ. Պիոտրովսկին[3] հաշվառեցին Արագածի և Սևանի ավազանի հնագույն պաշտպանական համակարգերը: Հայաստանի պաշտպանական համակարգերի դասակարգման առաջին փորձն իրականացրեց Թ. Թորամանյանը[4]: 1960-ական թվականներին Ս. Եսայանի և Կ. Ղաֆադարյանի[5], ապա Ս. Չիլինգարյանի[6] կողմից ուսումնասիրվեցին ներկայիս Տավուշի մարզի, Գ. Միքայելյանի[7] կողմից Սևանի ավազանի մի շարք պաշտպանական համակարգեր: 1995 թ. Ա. Սմիթը և Կ. Ղաֆադարյանը թվայնացրեցին Արարատյան ու Շիրակի հարթավայրերի պաշտպանական համակարգերից մի մասի խորհրդային շրջանում կատարված տոպոհանույթները[8]: Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան պաշտպանական համակարգերի ուսումնասիրման, դրանց տիպաբանության և դասակարգման մեջ մեծ դեր ունեն Գ. Արեշյանը և Կ.

---

[3] Аджян А., Гюзалян Л., Пиотровский Б., Циклопические крепости Закавказья, Сообщение Государственной Академии Истории Материальной культуры, №1-2., Л., 1932., с. 61-64; Пиотровский Б., Гюзалян Л., Крепости Армении доурартского и урартского времени, Проблемы истории материальной культуры № 5-6., Л., 1933, с. 50-59; Пиотровский Б., Археология Закавказья, с древнейших времён до I твсячилетия до н.э., Л., 1949, с. 65.

[4] Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ե., 1942, էջ 11-30:

[5] Եսայան Ս., Ղաֆադարյան Կ., Շամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցների մասին, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, № 1., Ե., 1965, էջ 82:

[6] Չիլինգարյան Ս., Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները, - «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), № 1, Ե., 1968, էջ 221-231:

[7] Միքայելյան Գ., Եսայան Ս., Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանների կիկլոպյան ամրոցները, ՊԲՀ, № 3, Ե., 1968, էջ 289-296; Միքայելյան Գ., Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը, ՊԲՀ, №1 Ե., 1964, էջ 119-132; Միքայելյան Գ., Մարտունու շրջանի կիկլոպյան ամրոցները, ՊԲՀ, № 3 Ե., 1966, էջ 234-247; Միքայելյան Գ., Լճաշենի կիկլոպյան ամրոցի կոմպլեքսը, ՊԲՀ., № 1, Ե., 1965, էջ 284-290:

[8] Smith A., Kafadarian K., New Plans of Early Iron Age and Urartian Fortresses in Armenia, Iran, Vol. 34, London, 1996, p. 24.

Ղաֆադարյանը[9]: Պաշտպանական համակարգերի ուսումնասիրման մեջ վերջին շրջանում մեծ նշանակություն ունեցան հայ-իտալական հնագիտական արշավախմբի[10] և հայ-ամերիկյան ArAGATS նախագծի[11] աշխատանքները Սևանի ավազանում և Արագածոտնում:

2011 թ. սկսած հնագիտական նոր աշխատանքներ են ընթանում Գեղարքունիքի (հայ-գերմանական արշավախումբ) և Լոռու (հայկական արշավախումբ) մարզերում[12], որոնք նոր տվյալներ են հաղորդում հնագույն Հայաստանի ամրոցաշինական համակարգերի զարգացման մասին:

Սոթք 2

Սոթք 2 բնակավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի համանուն գյուղի տարածքում: Բլրի հարթ վերնամասը մոտ 4,5 հա է և օղակված է բլրի ռելիեֆը կրկնօրինակող պարսպաքարերով: Պարսպապատ հատվածը մոտ 0,5 հա է:

Բնակավայրի պաշտպանական համակարգը պատկանում է բլրի վրա կառուցված ամրոցների թվին, իսկ ամրոցը իր հատակագծում ունի ձվաձև/օվալաձև գծագրություն: Ընդ որում այս տիպին պատկանող

---

[9] Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը վաղ դասակարգային հասարակության և պետական առաջին կազմավորումների ճամանակաշրջանում, Հայկական ճարտարապետության պատմություն (այս. ՀՃՊ) հ., 1, Ե., 1996, էջ 68-87:

[10] Biscione R., Hmayakyan S., Parmegiani N., Sayadyan Y., Sanamyan H. The North-Estern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I. The Southern Shores, Documenta Asiana VII, Roma, 2002.

[11] Smith A., Badalyan R., Avetisyan P., Greene A. Minc L., The Foundation of Research and Regional Survey in the Tsaghkahovit plain, Armenia, The Oriental Institute, Chicago, 2009.

[12] Այս արշավախմբերի նախնական հաշվետվությունների համար հմմտ. Գևորգյան Ա., Բոբոխյան Ա., Մարգահովիտ բնակավայրի պեղումները, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը. Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2012, էջ 118-120; Kunze R., Bobokhyan A., Pernicka E., Meliksetian K., Projekt Ushkiani. Untersuchungen der Kulturlandschaft um das prähistorische Goldrevier von Sotk, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt – Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, 2013, p. 49-88.

ամրոցներն իրենց զուգահեռներն ունեն ինչպես Սևանա լճի ավազանի հարավային կողմում, այնպես էլ Շիրակի և Արագածի տարածաշրջանում՝ (Սևանի՝ Սուրադ քաջ, Քարի դուռ, Բերդի Դար[13], Շիրակի Ծիլքար/Թոփ–քար[14], Լեռնակերտի՝ Վերի բերդ, Աշտարակի՝ Ծաղկահովիտ,[15] Լոռու՝ Մարգահովիտ ամրոցները):

Ամրոցն, իր բնույթով պատկանում է դիտակետ-ամրոցների թվին, ինչը հաստատգրվում է պեղումներից ստացված արդյունքներով:

Սոթք 2-ի պաշտպանական համակարգի պեղումները նպատակ ունեին լուծելու ամրոցի թվագրության խնդիրը: Հնագիտական փոսորակներից մեկը դրվեց ամրոցի հյուսիսարևելյան մասում՝ մուտքերից մեկի պարսպաշարի երկայնքով (Պղ. Զ):

Պարզվեց, որ պարսպապատը գտնվում է նույն մակարդակի վրա, ինչ ՄԲ-ՈՒԲ մշակութային շերտը. այստեղից ստացված ռադիոածխածնային 2 տվյալներով այն թվագրվում է Ք.ա. 17-15-րդ դդ., որի տակ ի հայտ է գալիս ՎԲ շերտը՝ կավածեփ հատակով, որը թվագրվում է՝ Ք.ա. 29-27-րդ դդ. (Նկ. 1):

Սոթք 2-ը պատկանում է պարզ մուտք ունեցող ամրոցների թվին: Մուտքերից մեկը, տեղակայված է բլրի հյուսիս-արևմուտքում և ունի Պ-աձև հորինվածք, արտաքինից այն նման է աշտարականման կառույցի:

Պարիսպները շարվել են բազալտի մշակված մեծ կտորներից: Այդ մշակաման հետքերը երևում են ինչպես անխաթար մնացած պարսպաքարերի, այնպես էլ անցյալ դարի 60-ական թվականներին պարսպաքարերի տեղափոխման հետևանքով բլրի հարավ-արևելյան հատված տեղափոխված քարերի զննությունից:

Նորաբակ 1

Նորաբակ 1 ամրոց-բնակավայրը գտնվում է Սոթք 2 բնակավայրից մոտ 5 կմ հարավ-արևելք, համանուն գյուղի տարածքում:

Այն պատկանում է լեռնային հրվանդանին կառուցված ամրոցների տիպին, որոնք զուգահեռներ ունեն ինչպես Սևանա լճի հարավային ավազանի, այնպես էլ Շիրակի և Արագածի տարածաշրջանում (Սևանի՝

---

[13] Sanamyan H., նշվ. աշխ., 2002, էջ 326:

[14] Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., 1996, էջ 82:

[15] Smith A., and al., նշվ. աշխ., էջ 184:

Հերի բերդ, Բելի կյուչ, Ջաղացձոր, Այրք, Քոլ պալ[16], Շիրակի՝ Ցողամարգ 1, Փոքր բերդ և Լուսակերտ, Արագածոտնի՝ Ուիջան և Մոտկան[17] ամրոցները):

Նարաբակ 1-ը պատկանում է եռանկյունաձև/սեպաձև ամրոցների տիպին՝ կրկնօրինակելով հրվանդանի եզրագծերը:

Այս ամրոցի և դամբարանադաշտի մասին առաջինն անդրադարձել են Սևանի ավազանի հայ-իտալական հնագիտական հետախուզական արշավախմբը[18]: 2012-2013 թթ. հայ-գերմանական արշավախումբը պեղումներ կատարեց հիշյալ դամբարանադաշտում և ամրոցի պահակակետ/դիտակետի մուտքերից մեկի մոտ:

Նորաբակ 1-ը բնակեցված է եղել դեռևս ՎԲ-ից, իսկ պաշտպանական համակարգը հավանաբար կառուցվել է ՈւԲ ուշ փուլում և լայնորեն կիրառվել ՎԵ-ՄԵ-ում:

Նարաբակ 1-ի ամրոց-բնակավայրը քաղաքային տիպի բնակավայր է, որը կարող է պատկանել ուրարտական աղբյուրների É.GAL-ներին, ինչի մասին վկայում են բնակավայրի հսկայական չափսերը, և մոտակա համաժամանակյա դամբանաթմբերը:

Խորհրդային տարիներին ամրոց-բնակավայրը մեծ վնաս է կրել կառուցապատումների հետևանքով, իսկ 1990-ական թթ. պարսպաքարերի մի մասը օգտագործվել է պաշտպանական նկատառումներով հայ ազատամարտիկների կողմից:

Նորաբակ 1-ի պաշտպանական համակարգը առանձնանում է դեպի ամրոց տանող մուտքերի ձևերով և քանակով (5 մուտք): Մուտքերից չորսը տեղակայված է հարավային, հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան հատվածներում, իսկ 5-րդ մուտքը՝ հյուսիս-արևմտյան մասում, դիտակետից դեպի բուն ամրոցի ներս տանող ճանապարհին: Այն իր հատակագծով և հատկապես բազմաֆունկցիոնալ բնույթով նմանվում է ուրարտական շրջանի ամրոցներին: Հյուսիս-արևելյան մուտքերի միջնատարածքում նկատելի է կիսակլոր աշտարականման որմնահեց հիշեցնող պարսպաշարը, ինչը ճարտարապետական տեսանկյունից հավելյալ ամրություն է հաղորդել:

---

[16] Sanamyan H., նշվ. աշխ., 2002, էջ 326:

[17] Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 86:

[18] Biscione R., նշվ. աշխ., էջ 72:

Պղ. Բ-ում իրականացված հնագիտական աշխատանքները ցույց տվեցին, որ ամրոցի մուտքն ունի ճարտարապետական հետևյալ լուծումները. 1) նախ մուտքի հատվածն իր շրջակայքով մշակել են, 2) այնուհետև տեղակայել ամրոցի պարսպաքարերը, 3) որից հետո միջին մեծության քարաբեկորները տեղակայել են կավածեփ հատակին (ամրության նպատակով), 4) որից հետո լցրել են երկշարք խճաքարեր՝ ստեղծելով դարավանդաձև հարթակ (Նկ. 2):

Պահպանված պարիսպները ամենախոցելի հատվածներում երկշերտ են, տեղ-տեղ եռաշար շարվածքով. ընդ որում քարերի մշակման եղանակը այստեղ համեմատաբար լավ է երևում, մասնավորապես որոշ քարերի վրա նկատվում են կլորավուն ակոսներ:

Մարգահովիտ

Մարգահովիտ ամրոցը գտնվում է համանուն գյուղում, Լոռու մարզ: Պաշտպանական համակարգը թվագրելու համար՝ հուշարձանի հարավ-արևմուտքում, պարսպին կից և նրա վրա դրվեց փոսորակ (Պղ. Գ), ուր ենթադրվում էր բնակավայրի մուտքերից մեկը:

Մարգահովիտ ամրոցը պատկանում է բլրի վրա կառուցված ամրոցների տիպին, իսկ պարսպաքարերը կրկնօրինակում են բլրի ռելեֆը՝ հատակագծում ունենալով ձվաձև գծագրություն:

Եվ առկա նյութը, և ճարտարապետական լուծումները վկայում են, որ քննարկվող ամրոցը թվագրվում է ՎԵ-ՄԵ-ով. այս մասին է վկայում հատկապես հստակ թվագրվող «սևանյան» տիպի դաշույնի հայտնաբերումը պարսպի համատեքստում:

Մարգահովտի պաշտպանական համակարգի մուտքը տեղակայված է հարավ-արևմուտքում՝ թեք գծագրությամբ (40°), իսկ մուտքի դիմաց առկա է L-ձևի ուղղանկյուն աշտարականման որմնահեց հիշեցնող դիտակետը (Նկ. 3/2): Այս համակարգը բնորոշ է ինչպես խեթական, այնպես էլ և նորասորեստանյան[19] և ուրարտական ամրոցաշինությանը[20]:

---

[19] Титов В., Архитектура хеттов и сиро-хеттов. Архетектура стран Передней Азии, Всеобщая история архитектуры, Т. 1., М., 1970, с. 242-247.

[20] Ղաֆադարյան Կ., Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ, ՊԲՀ, 1972, № 2, էջ 153-154:

Մարգահովիտ ամրոցը պատկանում է մուտքի մոտ մեկ աշտարակ ունեցող ամրոցների տիպին:

Ամրոցի պարսպաքարերը համեմատաբար լավ են պահպանվել: Նախ պարզվեց, որ պարսպաքարերի շուրջ ամենուրեք առկա են ստորին հատվածներից դեպի պարսպաքարերը տարածվող խճաքարեր, որոնք որոշակիորեն հանդիսանում են ամրաշինական համակարգի բաղկացուցիչը և ունեցել են ամրոցի անմիջական շրջակայքը խճապատելով հարթեցնելու և դրանով իսկ ամրացնելու կամ էսթետիկական միջավայր ստեղծելու նշանակություն: Պեղումների արդյունքում բացվեց պահակակետ/դիտակետ, և պարզ դարձավ որ ամրոցի կառուցման ժամանակ կիրառվել են հետևյալ ճարտարապետական լուծումները, որոնք առկա են նաև Նորաբակ 1-ում. 1) նախ մուտքի հատվածը իր շրջակայքով մշակել են, 2) այնուհետև կավաշերտի վրա տեղակայվել են մանր խճաքարեր, 3) որից հետո հսկայական պարսպաքարերը դրվել են անմիջապես խճաքարերի վրա, 4) այսպիսով ստանալով դարավանդաձև հարթակ (Նկ. 3/1):

Եզրակացություն

Պաշտպանական համակարգերի գործառույթի մասին նախկինում եղել են մի շարք վարկածներ: Սակայն մի բան է ընդհանուր բոլորի համար, և մասնավորապես, որ այդ համակարգերի ստեղծումը կապված էր կոմպլեքս հասարակական գործընթացների հետ[21]:

Ուսումնասիրողները Հայաստանի պաշտպանական համակարգերի առաջացման համար առաջարկում են տարբեր ժամանակագրություններ, սկսած ուշ ՊԴ–ից: Սակայն, պաշտպանական համակարգերի ուսումնասիրության և թվագրության խնդիրը հայ հնագիտության մեջ մնում է դեռևս չլուծված: Այս տեսանկյունից մեր կողմից հետազոտված վերոհիշյալ երեք օրինակները կարող են

---

[21] S. Ռ. Ալիևը, ով ուսումնասիրել է ներկայիս Ադրբեջանի արևմտյան շրջանների (Ուտիք) պաշտպանական համակարգերը, գտնում է, որ այդ համակարգերը կառուցվում էին հարևան ցեղերից՝ հարստության հիմնական աղբյուր հանդիսացող մանր և խոշոր եղջերավոր անասուններին պաշտպանելու համար: Տե՛ս Алиев Р., Циклопические крепости Азербайджана, Археологические и этнографические изыскания в Азербайджане 1979 г., Баку 1984, с. 27:

մասնակի ճշգրտումներ մտցել քննարկվող հարցում: Մասնավորապես, ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարող ենք խոսել երկու ժամանակագրական փուլերին վերաբերող ամրոցների մասին.

1. Վաղ - ի դեմս Սոթք 2-ի գործ ունենք ՄԲ-ՈՒԲ անցման փուլի (մոտ. Ք.ա. 1500 թ.) ամրոցի հետ, որն առանձնանում է իր պարզությամբ, որմնահեցերի և խճաքարերի դարավանդաձև հարթակի բացակայությամբ:

2. Ուշ - ի դեմս Նորաբակ 1-ի և Մարգահովտի ամրոցների գործ ունենք ամրաշինական համակարգի զարգացած տեսակի հետ, որին բնորոշ են աշտարականման որմնահեցեր, մուտքերի մոտ դիտակետերի և խճաքարերով դարավանդաձև հարթակի առկայություն, ինչն, ըստ մեր նախնական տվյալների, բնորոշ է ՎԵ-ՄԵ-ին (Ք.ա. մոտ 1000-700 թթ.). այս տիպի լավագույն զուգահեռներից է Ծովինարի ամրոցը (Նկ. 4):

Ուշ փուլի ամրոցներն իրենց աշտարակներով և որմնահեցերով զուգահեռներ ունեն փոքրասիական՝ մասնավորապես խեթական աշխարհի ամրոցների հետ: Օրինակ՝ Ք.ա. 15-13-րդ դարերում խեթական պետության մայրաքաղաք Խաթուշան պարսպապատված էր նմանատիպ համակարգով, սակայն համեմատաբար ավելի հսկայական ծավալներ ուներ: Ինչ վերաբերում է խեթական ամրոցաշինական ավանդույթի ազդեցություններին, ապա նույնիսկ ուրարտական ճարտարապետությունը, ինչպես գտնում է Կ. Ղաֆադարյանը, կրում է խեթականի որոշակի ազդեցությունը[22]:

DANIELYAN HENRIK
(IAE)

NEW DATA ON DEFENSE SYSTEMS OF ANCIENT ARMENIA


The aim of this article is to discuss a number of issues connected with fortress building practices of Bronze and Iron Age Armenia based on the material gained by recent excavations of three settlements - Sotk 2, Norabak 1 and Margahovit. According to the data obtained during the archaeological

---


[22] Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., 1972, էջ 154:

study, the mentioned fortresses can be divided into two chronological phases:
1. Early phase – the Sotk 2 fortress represents a construction of the Middle to Late Bronze Age transitional period (ca. 1500 BC) which is characterized by its simple structures, absence of buttresses, pavements and terrace platforms;
2. Late phase .- Norabak 1 and Margahovit fortresses represent a more developed building system with typical tower like buttresses, guarding posts at the entrances, pavements and terrace platforms, which should be typical to the Early and Middle Iron Ages (1000-700 B.C). The later phase fortresses with their towers and buttresses find parallels to fortification systems of Asia Minor and especially that of the Hittite world.

Նկ. 1



Նոյեմբեր 1, 2013
Պղ. Բ, U-3
Հարավային պարապաշարի արևելյան պրոֆիլ




– պղպեղապատրեզ

– ճիմաշերտ (մուգ շագանակագույն) և խճաքարեր

– կավաշերտ (մուգ դեղնավուն) և խճաքարեր

Նոյեմբեր 1, 2013
Պղ. Բ, U-3
Հարավային պարապաշարի հարավային պրոֆիլ







Նկ. 2

Նկ. 3

Մարզահոլիտ 2013
Պդ. 9
Արևմտյան պրոֆիլ



1



2

1



2



3



TIEDEMANN ALEXANDR
(MLU, GERMANY)

CANONISATION IN ISLAM AND IN CHRISTIANITY

Introduction

Judaism, Christianity, Islam – all these religions have in common that they are called "book religions". The Scripture is said to be inspired or to contain the word of God or even to be the word of God. Therefore, it is important to fix a canon for which this criterion is valid. Judaism was the initiator for such a process if we only consider the European religions which still exist now. Christianity, having its roots in the Jewish religion, became the next book-religion in the first century C.E.; Islam finally arose about 600 years later. Thus, I want to give a chronological view on the process of canonization in Christianity and Islam. The inner reasons for forming a canon will be analysed and and also the role of pressure from the outside. How important was the practical use? Why was it important to have a canon in a written form? Were there different canons? Are there criteria for holiness or inspiration? It seems to be necessary to define what a canon is and what is its function. At the end there will be a comparison between the two processes of canonisation.

What is a written canon?

A canon is a fixed collection of selected writings which are normative for the faith and the life of the community to which it belongs. It is a result of a process in history which is not easy to reconstruct. When certain books were given the account of being parts of a canon, the next step was to fix their wording in order to allow an exegesis for experts[1]. Thus, one can say that with the building of a canon the time of prophecy has ended and the time of exegesis has started[2].

The word canon as a term for describing a collection of holy writings came up in the second half of the fourth century in the Christian discourse.

---

[1] Cf. Pezzoli-Olgiati 2001, 767.

[2] Cf. Theissen 1999, 251.

Before this time it was used for ideal, and therefore normative, classic literature which defined the limits for writings and also for social living[3]. The classical/canonical works are the norm for all the literature after this time too. A canon must have the most possible *akribeia* so that no uncertainty remains[4]. "Let no men add to these, neither let him take ought from these"[5]: with these words Athanasius (298-373) illustrates that if a canon is fixed at one time, there should be no flexibility left for adding and removing books to and from it. One also finds this claim in the Old Testament (Dtn 13:1, Qoh 3:14, Jer 26:2 and Prov 30:6).

Two requirements have to be fulfilled so that a canonization of a text corpus is possible. On the one hand, the "texts in question must already have a special status"[6]. Texts which are out of interest and usage have no chance to get a special status by adding them to a canon. On the other hand, it "requires an external impetus to set it off"[7]. When there are no attacks from the outside which generate inner discussions, there is no need to canonize texts and attribute them a status of protection so that there existence is secured.

Inspiration and historicity

A central problem is that of inspiration. Johann David Michaelis (1717-1791) assumed that only an apostle could be an adequate inspired person. But with this criterion there would arise a problem about how to treat the Gospels of Mark and Luke (or the pseudepigraphies) because they were neither Apostles nor eyewitnesses: apostilicity, inspiration and affiliation to the canon belong together for Michaelis[8].

Johann Salomo Semler (1725-1791) distinguished "word of God" from "Holy Scripture". He postulated that there are passages in the Scripture which are not inspired and therefore have no use for the "moralische Aufbesserung" (here one can find the use of the antique understanding of canon as norm for a moral life). Considering the canon (the Holy Scripture) as a historical

---

[3] Cf. Schindler 2001, 767f. and Assmann 1992, 110.

[4] Cf. Assmann 1992, 109.

[5] Athanasius. Letter 39.6.

[6] Radscheit 2006, 93.

[7] Radscheit 2006, 93.

[8] Cf. Schnelle 2007, 18.

developed entity, it can be studied under a historical perspective. If one supposes a verbal inspiration, this sort of examination is not possible[9].

Christianity

Criteria for a canon

Christianity is based on the person, words and deeds of Jesus of Nazareth. Therefore, he has the crucial role in the writings of the New Testament. However, there is also the Hebrew Testament which remained in the canon in spite of efforts to remove it in order to cut off the connection with Judaism. Furthermore, one should not forget that the Old Testament as Holy Scripture was taken for granted by every New Testament author and certainly by Jesus himself, although the Jewish canon had not been fixed in the first century C.E. Therefore, the problem of a New Testament canon was not discussed in early times, although central sayings of Jesus, the passion and the collected letters of Paul became central writings through their frequent usage by the Christian communities ("Selbstkanonisierung")[10]. Paul never thought that his letters would one day become a part of a Christian canon called "novum testamentum" or "instrumentum novum" (Tertullian) later[11]. When Paul wrote: "For I am not ashamed of the gospel"[12], he refers to the oral tradition, not to a written manuscript.

Origen was the first to make a distinction between accepted (*homologoúmena*), controversial (*amphiballómena*) and mendacious writings[13]. About 100 years later, Eusebius also divided the books in three categories: "first place", "disputed" and "not genuine according to the tradition of the Church"[14]. What were the criteria for adding a book to the canon?

If one takes a look at the 39th letter of Athanasius, a main source for the process of canonization, the already mentioned criterion "godly inspired Scripture"[15] can be recognized. Athanasius gives a simple definition for what

---

[9] Cf. Schnelle 2007, 19.

[10] Cf. Schindler 2001, 768.

[11] Cf. Gamble 1992, 853: „none of them was composed as scripture".

[12] Romans 1:16.

[13] Cf. Schindler 2001, 768.

[14] Cf. Origen, Ecclesiastical History, III, 25.

[15] Athanasius. Letter 39, 3.

can be called inspired: the authors had to be eyewitnesses from the beginning and ministers of the word[16]. As one could see above, this definition contains some problems.

That is why Harry Y. Gamble supposes four criteria which a canonical book has to fulfil: it has to be apostolic ("from the beginning"), catholic (relevant), orthodox ("genuine according to the tradition") and in traditional/customary use. According to him, inspiration was not a criterion because inspiration "characterizes the church as whole"[17].

Nevertheless, in the fourth century, diverse synods formed the canon through listing of the books which a Christian canon should contain[18].

Inner-Christian reasons for a canon

The canon is "normative for the faith and the life of the Christian community"[19]. However, that had not been the case from the beginning. Since the Christians lived in expectation of an imminent return of the Messiah, it did not seem necessary to write down the words and deeds of Jesus. Rather, preaching, oral traditions and charismatic experiences form the core of Earliest Christianity. With the absence of Jesus' return it became necessary to write down words to keep alive the memory and authority of Jesus[20]. Thus, "the gospels were valued first as historical records, not as scripture"[21].

The canon had to ensure the praxis of the communities' worship, teaching and living; the fundamental axioms are the belief in one God and in a redeemer[22]. To guarantee its accuracy, an adequate text testimony which goes back to the very beginning of the life of the Lord Jesus had to be the basis. Although Jesus' person, deeds and words are the centre of the New Testament, it is open to different exegetical approaches. The content is not coherent; quite opposing stories of Jesus can be found as well as different opinions about christological, eschatological etc. issues. Thus, a vivid life of

---

16 Cf. Athanasius. Letter 39, 3.

17 Cf. Gamble 1992, 858.

18 Cf. Schindler 2001, 769 and Gamble 1992, 853.

19 Gamble 1992, 852.

20 Cf. Gamble 1992, 853f.

21 Gamble 1992, 854.

22 Cf. Theissen 1999, 271.

the community is facilitated. Not the one theological norm can be found in the New Testament, it is open to exegesis. The plurality of Early Christianity can be found in its books included[23]. "The canon includes writings of almost all representative currents"[24] for which a consensus could be found.

The judgements of respected Christian theologians and the collections of famous communities had influenced the choice of books which formed the canon[25]. According to Gamble, another factor was the codex form in which the New Testament was collected. It only allowed a limited number of writings to be fixed in one codex in contrast to the Jewish tradition where every single book is written on one roll[26].

The new writings in addition to the Old Testament (which was still in use as Holy Scripture) were spread within the communities and frequently used in the 2nd and 3rd century with the consequence that a core of writings emerged which later became the so-called New Testament.

Every religious group has its ceremonies and rituals. In oral cultures, permanent performances are necessary to conserve ritual coherence. Since the canonical texts are important for the correct performances, there is a high responsibility for the copier of the texts because some texts contain the oral traditions in a written form. Thus, Jan Assmann defines canon as "die Fortsetzung ritueller Kohärenz im Medium schriftlicher Überlieferung"[27].

Gamble concludes: "the canon is very much a product of the church, but much of the contents of the canon rose to authority by virtue of their self-evident value"[28].

Disputes with "heretics"

There is also a tendency in research to see the main factors for the forming of a canon through the pressure from heterodox doctrines. A consensus among the different currents of the so-called orthodox Christianity is the premise. If the group became too small, a worldwide mission would not be possible, but if the consensus was too wide, there would not remain a clear

---

[23] Theissen 1999, 261.
[24] Theissen 1999, 250.
[25] Cf. Gamble 1992, 857.
[26] Cf. Gamble 1992, 857.
[27] Assmann 1992, 105.
[28] Gamble 1992, 858.

profile. That is why Gerd Theissen stresses the importance of separation of "orthodox" Christianity (including Pauline, Jewish, Synoptic and Johannine Christianity) from other groups[29]: "the canon is the great answer to the identity crisis of the church at the end of [Early] Christianity"[30].

Pressure first came from the outside when Marcion (85-160) "purified" the holy writings from Jewish passages which he saw as corruptions of the true doctrine according to the scheme *lex* and *evangelium*.[31] He wanted to give a clear *evangelium* which does not allows a wide spectrum of interpretation. That is the reason why he was seen as a big danger: systems with a clear message are always attractive. However, "the four-Gospel canon is the 'revolutionary innovation' in the second century, and not Marcion's one-Gospel canon"[32].

The main hostile movement were the Gnostics so Theissen postulates: "There are no Gnostic writings [in the New Testament]"[33]. There can only be an internal consensus of a sign system for different Christian groups when there is a clear outside world (Judaism, Paganism, Gnosticism, prophetic renewal movements)[34].

Islam

A canon in Islam?

In Muslim culture, the loanword Qānūn, which comes from Greek, is not used in the context of Holy Scripture but in the judiciary and the political system[35]. If inspiration is the criterion for canonicity, the Qur'ān can be regarded as the canonical text of Islam. In the traditional view it is seen as book of divine revelation; it is even said to be the pure word of God. With regard to this, one can treat the Qur'ān in the same manner as the Jewish and Christian canon is understood in the tradition. A difference between the Qur'ān and the Holy Scriptures of Judaism and Christianity is its unity: it is

---

[29] Theissen 1999, 251.

[30] Theissen 1999, 259.

[31] Cf. Markschies 2010, 88 and Schindler 2001, 768.

[32] Theisssen 1999, 267.

[33] Theissen 1999, 250.

[34] For a discussion of this topic cf. Theissen 1999, 274-282.

[35] Graham 2001, 772.

not a collection of different books written by different authors who were at different places at different times and wrote in different forms. So the meaning "list" of the term canon can not be used here.

The ḥadīths could also be seen as a second part of the Muslim "canon" because they were and are used to define the customs and practice of the Muslim society, they contain the norm in addition to the Qur'ān.

A short history of the canonisation of the Qur'ān

It is difficult to fix a starting point for the development of the Qur'ān. The earliest complete Qur'ān is dated in the 9th century[36]. One can not know if the followers of Muḥammad wrote the first *sūras* or even Muḥammad himself.

According to Angelika Neuwirth the Qur'ān reflects the "wording of communications that were actually pronounced by Muḥammad"[37]. In the beginning there was the oral tradition. But after the death of Muḥammad it became urgent to get a fixed text of the revelation – the *muṣḥaf,* the physical bound volume, arose in the 650s C.E.[38]. With the *muṣḥaf* there now existed a *textus receptus* which is said to be the "definite corpus of the Prophet's recitations"[39]. The *rasm* of the Qur'ān is claimed to go back to the 'Uthmānic redaction. For the *rasm* of every text passage the third caliph 'Uthmān (574-656) needed two witnesses as validation to get an identical and thus authoritative text. When the *rasm* had been fixed, the vocalization strokes and points for consonants followed. At the end of the development additional signs were added. In the 8th century a fixed form existed through an orthographic reform. "[T]he redaction of the text is viewed as identical with canonisation"[40]. The governors of the empire were very eager to spread the standardised Qur'ān in their territory about the year 700 C.E. For this

---

[36] Cf. Radscheit 2006, 96.

[37] Neuwirth 2006, 141.

[38] Lynch 2010, 248.

[39] Neuwirth 2003, 2.

[40] Neuwirth 2003, 2.

undertaking they had the help of the *qurrā'* (paid experts for Qur'ān recitation)[41].

The canonisation seemed to happen in a hurry because the *sūras* are not arranged in a theological order. Rather, this arrangement can be seen as "a conservative and theological disinterested arrangement"[42]. As a consequence it is very difficult to reconstruct the communicative situation lying behind the arbitrarily arranged *sūras*[43]. Although there were attempts to destroy divergent text traditions (*riwayat*), they still exist. However, it is nearly impossible to get knowledge about pre-canonical texts. A method to find traces of the pre-canonical time is to analyse the Qur'ānic passages for "Self-Referentiality"[44]. Thus, Gerhard Endress has to admit: "If a relative or absolute chronology can be constructed at all this is only at the basis of allusions in the text"[45].

The Al-Azhar university published the most influential *rasm* for today in 1923/24. This is the standard text for today's Islam[46].

Besides this standard explanation, there are also differing theories of the origin of the Qur'ān:

Allama Tamanna Imadi assumes that Muḥammad himself wrote the oldest texts of the Qur'ān. The parts, which treat the revelation, were later additions.

According to Günter Lüling, a collection of non-trinitarian Christian hymns were the basic content of the Qur'ān. The idea of monotheism was spread in the Greek, Hebrew and Syriac language and there are traces of Syriac loanwords in the Qur'ān. Therefore, Lüling assumes that the core of the Qur'ān was not written in Arabic but later normalized "to fit the rules of

---

[41] Cf. Radscheit 2006, 98.

[42] Neuwirth 2003, 11.

[43] Cf. Neuwirth 2003, 11.

[44] Cf. the title of the book "Self-Referentiality in the Qur'ān".

[45] Endress 2002, 23.

[46] Halm 2007, 15.

'arabiyya"[47]. Karl Vollers and Christoph Luxemburg assume that vernacular traditions had been transmitted before Arab grammarians transformed it into classical Arabic – a view also opposed to the traditional Islamic tradition[48].

The sceptic John Wansbrough sees the origin of the Qur'ān in the agitation of a Judeo-Christian sect which spread in the space of the later Muslim empire. The Qur'ān as an original collection from the beginning was a myth, a projection back into history[49]. Only some texts could have had an origin in "Qur'ānic times". But there was evidence in the Dome of the Rock, where one could discover older inscriptions.

These inscription and coins of the caliph 'Abd al-Malik are the starting point for the outsider theory of Karl-Heinz Ohlig, who tries to identify the depicted word "Muḥammadun" as a title for Jesus Christ. The Qur'ān emerged in an anti-trinitarian Arabic Christian sect. The title "Muḥammadun" was reinterpreted as a person on its own, Muḥammad, 150 or 200 years later.

All in all, there is not much evidence for the research about the canonization process of the Qur'ān. "Many questions remain unanswered"[50]. That is why the traditional explanation is still the most plausible.

The function of the Qur'ān

The *umma* (the religious community of all Muslims) came up in a time of change and crisis. Angelika Neuwirth writes: the *muṣḥaf* is "a codex endowed with the symbolic power of creating social coherence and the identity of its community"[51]. The place of the different nomadic tribes was the frontier between two powerful empires which started to lose power when the Muslim movement started. There were also tendencies towards an urban society. If there was only one God, what the Qur'ān postulates, there should be only one community. With the end of polytheism, the end of solidarity only with one's

---

[47] Neuwirth 2003, 7.
[48] Cf. Neuwirth 2003, 7f.
[49] Endress 2002, 23.
[50] Endress 2002, 24.
[51] Neuwirth 2006, 143.

own tribe ended in favour of a high religion, and a community exceeding geographical and ethnic differences with solidarity for the whole *umma*. On the other hand, if someone did not accept the monotheism, it was a case of treason with the death penalty as consequence. We still have this problem today in some Islamic countries.

The "Qur'ān is not meant as a book to study but as a text to recite"[52]. Music, rhythm and rhyme are important components of the assertions which are pronounced. Kristina Nelson stresses that the "significance of the revelation is carried as much by the sound as by its semantic information"[53]. It is interesting to note that reading the Qur'ān is not one of the so-called "five pillars of Islam". The performance of the ritual duties play a more central role for the Muslim's identity than reference to the Qur'ān. Of course, the central role of the Qur'ān for preaching cannot be denied; its *sūras* play a crucial role in the daily *ṣalāt*. But it is striking that a clear rule for using the *sūras* in the prayer is not given. "Obviously, there exists nò established liturgy for praying and preaching in Islam"[54]. Only the *fātiḥa* ("The Opening"), the first *sūra*, has its fixed role at the beginning of prayer. Traditionally, the *sunna* gives some examples of in which situation Muḥammad chose which *sūra*. Thus, the Muslims have some orientation, but it is not a duty (*farḍ*) to follow him. There are two arguments which underline the liturgical origin of the *muṣḥaf*: First, the opening *sūra*, the *fātiḥa*, clearly points to the liturgical character. Secondly, the proper name of the codex itself, *al-qur'ān* ("the recitation"), shows this connection[55]. Matthias Radscheit concludes: "all the collected revelation texts are given a stable connection to Islamic ritual"[56]. Hence, one can conclude that there had been liturgical traditions before the formation of the *muṣḥaf*. When the *muṣḥaf* came into being, it had a strong unifying

---

[52] Neuwirth 2003, 12.
[53] Neuwirth 2003, 12.
[54] Radscheit 2006, 94.
[55] Cf. Radscheit 2006, 95.
[56] Radscheit 2006, 95.

power among the different Muslim communities[57]. Nevertheless, the sequence is "From Ritual to Textual Coherence"[58].

The texts of the Qur'ān are not understood as historical documents of past events like the narratives in the Bible where they are integrated in the history of salvation. Rather they stand for a process of communication in the present between "the human and the super-human"[59] always with a view to Judgement Day.

Ḥadīth

Fred Donner has demonstrated that the literature of *ḥadīth* and *sīra* was not produced in the same milieu as the Qur'ān[60]. The genesis of *ḥadīths* is very complex and would exceed this assignment. Nevertheless, one can say that eye witnesses are central for the evaluation of every *ḥadīth*. The most important instrument for this method is the *isnād*, that is, the complete listing of the transmitters which should go back to one of Muḥammad's companions or to his wife 'A'ischa[61]. The most famous collection of *ḥadīths* is that of Al-Buḫārī.

Similarities and differences – a conclusion

The criterion "from the beginning" is a very central one to the Christian (Athanasius) and the Muslim exegetes for calling a writing inspired and therefore canonical. Both text corpora have their origin in an oral transmission which goes back to eye witnesses of the events around Jesus and Muḥammad.

The central message of the canon is also clear: monotheism. But the belief in a redeemer distinguishes the Christian from the Muslim religion.

Christianity and Islam are both "book religions" as it was mentioned in the beginning. Both are associated with their Holy Scripture which for each community is a unifying factor. For Muslims and Christians the belief in one

---

[57] Radscheit 2006, 96.
[58] Neuwirth 2006, 153.
[59] Neuwirth 2003, 16.
[60] Cf. Neuwirth 2003, 5.
[61] Cf. Halm 2007, 39.

God is the crucial element. But the relation between this God and the Holy Scripture is quite different.

The relationship to the written form has been quite different in Christianity and Islam from the very beginning. The Christians lived in expectation of the present return of Jesus; for the Muslim community the Qur'ān was seen from beginning on as basis for the liturgical praxis. In the Bible only some passages were used for ritual performances, in the Qur'ān every *sūra* is a potential liturgic text. That is why it became closed and authoritative in quite a short time in comparison with the process of canonization in Christianity.

The role of politics is also quite different for the emergence of the canon. Christianity appeared in a mostly peaceful time. Thus, a close contact between the different communities was possible, supported by the excellent Roman infrastructure. Nevertheless, the canonization was an inner-Christian process independent from political decisions. When Christianity became the state religion in the 4th century, the process of canonization was nearly completed. The Qur'ān in contrast was claimed by the rulers from the beginning. It is no wonder that the first three caliphs had a big importance for the formation of the Muslim canon: Abū Bakr collected the revealed words, 'Umar wrote them down and under 'Uthmān the redaction took place.[62] The subsequent governors tried to exceed each other in spreading the canonised text.

The relationship to history is also different. In biblical view God reveals himself in his historical intervention for His people's sake. But in the Qur'ān not a history of salvation is important but God's presence in the present[63]. The Scripture is not understood as historical record but as current communication.

The short transmission history is another reason why there are not many different versions of the Qur'ānic texts, but there still exist some. But one

---

[62] Cf. Wimmer/Leimgruber 2007, 42.

[63] Cf. Neuwirth 2011, 504.

cannot find a serious effort on the Muslim side for editing a historical-critical version of the Qur'ān as in the case for the Bible.

The reason lies in the importance of an exact spelling of the Qur'ān from the beginning. For Christianity the content had a more central meaning from the beginning. The "Qur'ān is not meant as a book to study but as a text to recite"[64]. Nevertheless, after some time, in Christianity also the exact words became more and more important in order to practice an exact exegesis and worship. But the Scripture as a whole does not have such a high status as the Qur'ān in Islam where every word is said to be word of God. Although there have existed and still exist some Christians who are adherents of the verbal inspiration of the Bible, these are a clear minority.

Therefore, the form of exegesis is quite different today. But with regard to early Christianity, one can find similarities. If one takes a look at Augustine's method of exegesis, one can detect that he treated every passage equally for interpreting a text or solving a problem. It was also not important whether that passage belonged to the Old or to the New Testament. The Muslim exegesis also uses this method for the Qur'ān interpretation[65]. But the difference can be found in the assumption that the Qur'ān is self-explanatory. The early Christian theologians were more influenced by philosophy (middle-Platonism), and used the method of allegory to find a final meaning for a passage of text. The Muslim canon is not dependent on such speculations according to the Muslim tradition. Angelika Neuwirth even formulates: "It is not an exaggeration, then, to classify the Qur'ān – in addition to its being prophecy – as 'exegesis'"[66] of "well-known biblical and post-biblical traditions"[67]. Thus, it would be more adequate to compare it with the writings of the Talmudim or the Church Fathers. According to Neuwirth the literary genre of the Qur'ān is a "transcript of an orally performed, open ended drama"[68].

---

[64] Neuwirth 2003, 12.
[65] Cf. Wimmer/Leimgruber 2007, 42.
[66] Neuwirth 2011, 496.
[67] Neuwirth 2011, 496.
[68] Neuwirth 2011, 497.

There are still problems with examining the Qur'ān with a historical method when it is still regarded as totally inspired. In the traditional Islamic view the Qur'ān "appears as a meta-historical text constructed and preserved by tradition"[69] This awareness of Scripture was also common in pre-modern Judaism and Christianity[70]. But with this presupposition a critic of the text would be identical with critic of God himself which in the end would be blasphemous; a historical-critical analysis is thus not possible although especially an examination of the Qur'ān by scholars of a Muslim background would be very fruitful.

ԹԻԴԵՄԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ
(ՄԼՀ, ԳԵՐՄԱՆԻԱ)

ՍՐԲԱԳՈՒՄԸ ԻՍԼԱՄՈՒՄ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՑՈՒՆՈՒՄ

Հուդաիզմ, քրիստոնեություն, իսլամ. բոլոր այս կրոնները ունեն այն ընդհանրությունը, որոնք կոչվում են «գրքի կրոններ»: Ասվում է, որ Աստվածաշունչը ոգեշնչված է Աստծո խոսքով կամ պարունակում է այն, կամ նույնիսկ հենց Աստծո խոսքն է: Կարևոր է հասկանալ այն սուրբ օրենքը, որի համար այդ չափանիշը գործում է: Այդ օրենքի կենտրոնական ուղերձը նույնպես պարզ է՝ միաստվածությունը. Բայց Փրկչի հանդեպ հավատը տարբերակում է քրիստոնյային մահմեդականից: Քրիստոնյաների ու մահմեդականների համար հավատը մեկ Աստծուն առանցքային է: Բայց այդ Աստծո և Սուրբ Գրքի միջև հարաբերությունները բոլորովին տարբեր են:

Քրիստոնեությունում և Իսլամում սուրբ օրենքների ժամանակագրական գործընթացները քննարկված են հոդվածում, ինչպես նաև վերլուծվում են այդ օրենքների ստեղծման ներքին պատճառները, ինչպես նա դրսի ճնշման դերը, թե որքան կարևոր էր դրանց գործնական կիրառումը, ինչու էր կարևոր օրենքը գրավոր ձևով

---

[69] Neuwirth 2003, 1.

[70] Neuwirth 2011, 498.

ունենալը, արդյոք տարբեր սուրբ օրենքներ կային, կան արդյոք չափանիշներ սրբության կամ ոգեշնչման համար:

BIBLIOGRAPHY

Sources

Athanasius. From the *39th Festal Letter* (Course material, edition not mentioned).

Eusebius. *Hist. Ecl.* 3.24-25 (Course material, edition not mentioned).

Secondary Literature

1. Assmann Jan. Das kulturelle Gedächtnis. München: C. H. Beck, 1992.
2. Barton John. The Spirit and the Letter. Studies in the Biblical Canon. London: SPCK, 1997.
3. Coogan Michael D. The New Oxford Annotated Bible. New York: Oxford University Press, 2010.
4. Endress Gerhard. Islam. An Historical Introduction. Edinburgh: Edinburgh University Press, 2002.
5. H.Y. Gamble, "Canon, New Testament", in D.N. Freedman (ed.). The Anchor Bible Dictionary 1, New York: Doubleday 1992, 852-861.
6. Graham William A., Art. Kanon VI. Islam in Religion in Geschichte und Gegenwart. Tübingen: Mohr Siebeck, 2001⁴, Vol. 4, 772.
7. Halm Heinz, Der Islam. Geschichte und Gegenwart. München: C. H. Beck, 2007.
8. Lynch Joseph H., Early Christianity. A Brief History. New York, Oxford: Oxford University Press, 2010.
9. Markschies Christoph, Die Gnosis. München: C. H. Beck, 2010.
10. Neuwirth Angelika, "Qur'ān and History – a Disputed Relationship. Some Reflections on Qur'ānic History and History in the Qur'ān" in Journal of Qur'ānic Studies 5:1 (2003): 1-18.
11. Neuwirth Angelika, "Structure and the Emergence of Community" in Rippin, Andrew (ed.). The Blackwell Companion to the Qur'ân. Hoboken (New Jersey): John Wiley & Sons, 2008, 140-158.

12. Neuwirth Angelika, "The Qur'ān as a late antique text" in Orfali, Bilal (ed.). In the Shadow of Arabic: The Centrality of Language to Arabic Culture. Leiden, Boston: Brill, 2011, 495-509.

13. Pezzoli-Olgiati Daria, "Art. Kanon I. Religionsgeschichtlich" in Religion in Geschichte undGegenwart, Tübingen: Mohr Siebeck, 2001⁴, Vol. 4, 767.

14. Radscheit Matthias, "The Qur'ān – codification and canonization" in Wild, Stefan (ed.). Self-Referentiality in the Qur'ān, 2006, 93-101.

15. Schindler Alfred, Art. Kanon II. Kirchengeschichtlich" in Religion in Geschichte undGegenwart. Tübingen: Mohr Siebeck, 2001⁴, Vol. 4, 767-770.

16. Theissen Gerd, "Plurality and Unity in Primitive Christianity and the Origin of the Canon" in: The Religion of the Earliest Churches. Creating a Symbolic World. Minneapolis: Fortress, 1999, 249-285.

17. Wimmer Stefan Jakob and Stephan Leimgruber, Von Adam bis Muhammad. Bibel und Koran im Vergleich. Stuttgart: Katholisches Bibelwerk, 2007.

ԹՈՎՄԱՍՑԱՆ ԱՆԱՀԻՏ
(«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀՋԳՀԻ)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՏՐԿԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹԸ (XVI-XIX ԴԴ.)

Թուրքերը, նվաճելով Բյուզանդական կայսրությունը, ժառանգեցին կայացած ստրկավաճառության ինստիտուտը՝ մատակարարման հաստատված կենտրոններով (Սև ծովի և Բալկանների արևելյան ափ), ստրկավաճառության քաղաքային շուկաներով (Կոստանդնուպոլսում, Քեֆեում[1], Թանայում[2], Սև ծովի հյուսիս-արևելյան հատվածում, XVI դարում նաև Ալեքսանդրիայում և Կահիրեում), գյուղատնտեսական համակարգերով, որոնցում օգտագործվում էին ստրուկների աշխատանքը:

Նորաստեղծ օսմանյան պետությունը, որն իր հիմնադրման հենց սկզբից որդեգրել էր ագրեսիվ նվաճողական քաղաքականություն, հիմնադրման առաջին դարերում մարդկային ռեսուրսների իր պահանջը լրացնելու երկու հիմնական աղբյուր ուներ՝ ռազմագերիներ և դեվշիրմեի մեխանիզմով հավաքվածներ: XVII-XVIII դդ. կայսրության մեջ նվազում են նախորդ դարերում հաճախակի հանդիպող տեղահանումները, բռնագաղթերը և գերիների համախումբ վերաբնակեցման երևույթները: Այս պայմաններում ստրկավաճառությունը դառնում էր գերիների իրացման գրեթե միակ միջոցը:

Օսմանյան ստրկավաճառության մասին առավել ընդգրկուն տեղեկությունները, որ գիտնականները կարողացել են գտնել ու կանոնակարգել, կապված է ստրկավաճառության շուկաների՝ հատկապես Կոստանդնուպոլսի ստրկավաճառության շուկային վերաբերող սկզբնաղբյուրների հետ:

---

[1] Թեոդոսիա:

[2] Tana կամ La Tana - միջնադարում ջենովացիների կողմից հիմնադրված փոքրիկ գաղութ-բնակավայր՝ ներկայիս Ազով քաղաքից ոչ հեռու:

Սույն հոդվածում փորձ է արվում Օսմանյան կայսրություն այցելած մի շարք օտարերկրյա ճանապարհորդների, պետական պաշտոնյաների հաղորդած տվյալների հիման վրա կազմել Կոստանդնուպոլսի ստրկավաճառության շուկայի ընդհանուր բնութագիրը, և ներկայացնել նրա սոցիալ-տնտեսական կարևոր նշանակությունը:

Ստրուկները գտնվում և վաճառվում էին կայսրության ողջ տարածքում սկսած XVI դարից: Ստրուկներ կարելի էր գնել ամենուրեք: Խոշոր քաղաքներում, ինչպես նաև փոքր գաղութային քաղաքներում՝ Քաֆայից մինչև սերբական, փոքրասիական և արաբական քաղաքներ, գոյություն ունեին հատուկ շուկաներ, այսպես կոչված «esir pazarı» (գերիների շուկա) կամ «avrat pazarı» (կանանց շուկա, կանանց վաճառքն առաջնակարգ տեղ էր գրավում)[3]: Այս շուկաները հիմնականում միավորված էին լինում քաղաքային մեծ շուկաների հետ՝ հաճախ ընդգրկելով մի բաժին, իսկ երբեմն էլ զբաղեցնում էին իրենց հիմնական շենքը՝ esir ham-ը, որը գտնվում էր շուկայի մոտ: Միայն Ստամբուլում և Քաֆայում կային շուկաների մեկուսացված բաժանմունքներ, որոնք գտնվում էին որոշ հեռավորության վրա քաղաքային մյուս շուկաներից[4]:

Օսմանյան պետության առաջին մայրաքաղաքներում՝ Բուրսայում և Էդիրնեում կային հատուկ «գերիների շուկաներ», որտեղ վաճառվում էին պատերազմական գործողությունների ժամանակ գերեվարվածները[5]:

Օսմանյան մայրաքաղաքը միջինարևելյան տարածաշրջանի ստրկավաճառ խոշոր կենտրոններից մեկն էր, և պատահական չէ, որ Կոստանդնուպոլսի ստրկավաճառության շուկայի մասին տվյալները ու բնութագրումները շատ ավելի են, քան կայսրության մյուս շրջաններում տեղակայվածների: Սակայն պետք է ենթադրել, որ այլ քաղաքների շուկաները պետք է նման լինեն այս մեկին: Մի շարք օտարերկրյա

---

[3] Fisher Alan W., The Sale of Slaves in the Ottoman Empire: Markets and State Taxes on Slave Sales, Some Preliminary Considerations, Boğaziçi üniversitesi dergisi, Beşeri Bilimler - Humanities Vol. 6, 1978, p. 150.

[4] Նույն տեղում:

[5] Kanbolat H., Kafkaz-Osmanlı ilişkileri ve köle ticareti, Tarih ve toplum, c. 14, temnuz, 1990, s. 39.

ճանապարհորդների, քաղաքական ներկայացուցիչների հաղորդումների հիման վրա կարելի է կազմել Կոստանդնուպոլսի շուկայի ընդհանուր բնութագիրը: Ալան Ֆիշերը այսպես է բնորոշում օտարերկրացիների հետաքրքրությունը Կոստանդնուպոլսի ստրուկների շուկայի նկատմամբ. «Թվում է՝ կար կոնկրետ «տուրիստական ձգողություն», եթե այսօր բոլորը գնում են տեսնելու սբ. Սոֆիայի թանգարանը և Կապույտ մզկիթը, ապա օսմանյան շրջանում դա Ստամբուլի ստրուկների շուկան էր»[6]:

Օտարերկրյա ճանապարհորդները, այցելելով Կոստանդնուպոլսի ստրկավաճառության շուկա մեծապես ազդվում էին այնտեղի անմարդկային տեսարաններից, որտեղ մարդիկ վաճառվում էին ինչպես «ձիեր և այլ կենդանիներ»[7]:

Ստամբուլի ստրուկների շուկայի մասին ամենավաղ բնութագրումը տվել է Նիկոլաս դե Նիկոլայը, որը վերաբերվում է 1526 թ.[8]: Հատկանշական է նրա այն հաղորդումը, որ ստրուկները վաճառվում էին ամբողջովին մերկ, որպեսզի գնորդը հեշտությամբ կարողանար ուսումնասիրել և նկատել «ապրանքի» թերությունները[9]: Այս տեղեկությունները հաստատում է նաև 1573 թ. Ստամբուլ այցելած Ֆիլիպ դե Ֆրենս-Քանայը, որը գրում է, որ վաճառվող ստրուկները չպետք է ծածկված լինեին որևէ հագուստով, իսկ նրանց դեմքերը չպետք է շպարված լինեին[10]: Սակայն նրանք տեղեկություն չեն հաղորդում ո՛չ շուկայի տեղանքի, ո՛չ էլ նրա տնտեսական գործունեության մասին:

XVII դ. սկզբներին Օսմանյան կայսրություն այցելած Սիմեոն Լեհացին ականատեսի աչքով է նկարագրում Կոստանդնուպոլսի էսիր բազարը. «բազում քրիստոնէայք գերիք ազգ և ազգ: Որք ծերք են և պառաւք նստել են: Իսկ զաղջունս և զմանունս, զտղայս և զաղվորերես կանայս տէլալնին առեալ ի ձեռս զնոսա՝ շուրջ աճէին և ծախէին որպես զձի և զջորի. և զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօյտանի՝ իբրևզոչխարս ի փարախի: Իսկ գնօղքն եկեալ բանային

---

[6] Fisher Alan W., նշվ. աշխ., էջ 150:

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում, էջ 151:

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում:

զերեսս և զծոցս աղջկանց և զամենայն մարմինս նոցա շօշափէին յոտից մինչև ի գլուխ, զի մի փոս, խոց կամ այլ ինչ սպի վեր ունիցին: Եվ նոքա լուռ և անմռունչ կային, և զորս հաճէին՝ գնէին, և որոշեալ ի հօրէ, ի մորէ կամ ի քվերաց և յեղբարաց բաժանեալ առեալ տանէին ի տուն»[11]:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր օտարերկրյա այցելուներն էին ազդվում Ստամբուլի ստրուկների շուկայի դաժան տեսարաններից: Միսս Պարդոն 1836թ. իր ճանապարհորդությունից գրի է առել. «Կոստանդնուպոլսի ստրուկների շուկայում չկա ոչինչ, ինչը ցավ կամ տհաճություն պատճառեր, չկար անտեղի դաժանություն. ստրուկները հաճախ իրենք էին ընտրում իրենց գնորդին[12]»:

Ենթադրվում է, որ Կոստանդնուպոլսում առաջին ստրկավաճառության շուկաները տեղակայված են եղել Մեծ Բեդեստանի կողքին, որը զբաղեցրել է նախկին բյուզանդական ստրուկների շուկայի տարածքը[13]: Սակայն Չարլի Ուայթը, որը XIX դարի սկզբին եղել է Կոստանդնուպոլսում ժխտում է այս ենթադրությունները, պնդելով, որ «բյուզանդական կայսրերի «արցունքների հովիտը» (ստրուկների շուկան - Ա.Թ.) գտնվում էր մի փողոց ներքև»[14]: Գոյություն ունեցող ստրկության շուկան հիմնադրվել է Մեհմեդ II-ի կողմից՝ Կոստանդնուպոլիսը գրավելուց մի քանի տարի հետո: Հիմնվելով ավանդությունների վրա՝ Ուայթը այսպես է նկարագրել Մեհմեդ II-ի շինությունը. «Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո առաջին տասնամյակի ընթացքում ստրուկները վաճառվում էին փողոցում: Մեհմեդ II-ը Աթ Մեյդանի ճանապարհին անցնում էր այդ վայրով, որը բոլոր կողմերից լցված էր ստրուկներով և վաճառողներով: Նրա ձին, վախենալով ստրուկների շղթաների ձայնից, ոտնատակ արեց քրիստոնյա մի ստրկուհու՝ երեխան ձեռքին: Նման դեպքերից խուսափելու համար սուլթանը հրամայեց կառուցել

---

[11] Սիմէոն դպիր Լեհացւոյ ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 18-19:

[12] (Miss) Pardoe, The City of the Sultan and Domestic Manners of the Turks in 1836, London, 1837, Vol. II, p. 299 – 300.

[13] Fisher Alan W., նշվ. աշխ., էջ 150:

[14] White Ch., Three Years in Constantinople; or Domestic Manners of the Turks in 1844, London, 1845, Vol. II, p. 279.

կանոնավոր շուկա»[15]: Շենքը սկզբնապես նախատեսված էր միայն ռազմագերիների համար:

Ավելի ուշ՝ 1609 թվականի օգոստոսին, նոր Բեդեստանի մոտակայքում Ահմեթ Առաջինի հրամանով Նուրօսմանիյե և Աթիկ Ալի փաշա մզկիթների միջև գտնվող Tavuk Pazar-ı (թռչունների շուկա), թաղամասում տեղակայվեց գերիների շուկան: Այդ տարածքում ստեղծվեց շուրջ 300 սենյակ ունեցող հյուրանոցատիպ մի շինություն, և գերիների վաճառքը տեղափոխվեց այդտեղ: Սևամորթ ստրուկները ցուցադրվում էին շինության կենտրոնում գտնվող ընդհանուր մի սրահում, իսկ սպիտակամորթերն՝ առանձին սենյակներում[16]:

Ստրուկների վաճառքն օրենքով թույլատրվում էր անել միայն այս վայրում, իսկ մյուս վայրերում արգելված էր[17]:

Էվլիա Չելեբին այսպես է նկարագրում Կոստանդնուպոլսի գերիների շուկան. «Ստամբուլում, Թավուք բազար թաղամասում Էսիր բազարը անունով մի հայտնի տեղ կա, որի ներքնի ու վերնի հարկերում կան 300 խցիկներ: Երկաթյա փականքով դռան առաջ նստած կառավարիչը տասնորդ է առնում վաճառված ստրուկների և ստրկուհիների համար[18]»:

Ստամբուլի ստրկավաճառության շուկան մի քառանկյունի շենք էր, որը կազմում էր շուրջ 30 քառակուսի սաժեն (մեկ սաժենը՝2,1 մ): Առջևում կառուցված էր մի բարձրահարթակ, գետնից 4-5 ոտնաչափ բարձրության վրա, որն առջևից նմանվում էր սյունաշարքի, նրա հետևում . գտնվում էին ցանցապատ պատուհաններ: Այդ բարձրահարթակի վրա վաճառքի համար տեղավորվում էին սևամորթ ստրկուհիներ և այնպիսի ստրկուհիներ, որոնք առանձնապես գեղեցիկ չէին, իսկ առավել գեղեցիկներին պահում էին ցանկապատ պատուհանների ներսում՝ շենքի մեջ, կողմնակի աչքերից հեռու[19]: Շուկայի կենտրոնում գտնվում էր հասարակական հսկողի՝ վերակացու

---

[15] Նույն տեղում:

[16] Kanbolat H., նշվ. աշխ., էջ 39:

[17] Նույն տեղում:

[18] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 4, Էվլիյա Չելեբի (թարգմ., առաջաբանը և ծանոթ. Ա. Խ. Սաֆրաստյանի), Ե., 1967, էջ 36:

[19] Ղևոյան Վ., Ստրկատիրությունը Օսմանյան կայսրությունում XIX դ., Արևելագիտության հարցեր, պրակ 3-4, ԵՊՀ, Ե., 1987, էջ 110:

ավագի տունը (kâhya): Հետաքրքրական է, որ մինչ 1712 թ. Կոստանդնուպոլսի շուկայի քյահյայի պաշտոնը զբաղեցնում էր հայտնի օսմանյան կոմպոզիտոր, երաժիշտ և պոետ Բուհուրիզադե Իթրի Մուստաֆա Էֆենդին[20]: Քյահյան հարթում էր բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող էին առաջանալ ստրկավաճառների և գնորդների միջև, ղեկավարում էր շուկայի աշխատանքը: Ստրուկների վաճառքը կատարվում էր ամեն օր, բացառությամբ ուրբաթ օրվա, իսկ ամենից աշխույժ առևտուրը լինում էր շաբաթ օրերին[21]: Շուկայի մուտքի մոտ սովորաբար վաճառում էին զանազան վայրի թռչուններ: Թուրքերը սովորություն ունեին ստրուկներ գնելուց առաջ գնել և ազատ արձակել որևէ թռչուն: Օսմանահպատակ քրիստոնյաներին, ինչպես նաև եվրոպացիներին, իրավական տեսակետից արգելված էր մտնել այդ շուկան և ստրուկներ գնել, սակայն դրամի օգնությամբ դա հնարավոր էր անել[22]: Թեև XIX դարում քրիստոնյաները արդեն կարող էին մուտք գործել ստրուկների շուկա, սակայն ստրուկ ձեռք բերելու իրավունք ունեին միայն մուսուլմանները[23]:

Սակայն հարկ է նշել, որ այս դրույթը միշտ չէ որ պահպանվել է: Այդ մասին է վկայում 1604 թ. Ստամբուլի քադիի կողմից հրապարակված ֆերմանը, որտեղ ասվում է. «Պարզվում է, որ սուլթանական մայրաքաղաք են եկել ստրկավաճառներ, որոնք Բեդեստանում ստրուկներ են վաճառում հրեաներին ու քրիստոնյաներին, ինչպես նաև Իրանի շահի դեսպաններին: Այս վաճառականներից ոմանք կանայք են, կան նաև սիպահիների և ենիչերիների ներկայացուցիչներ: Հարկավոր է վերջ տալ այս իրողությանը և դուրս քշել այդ անարժան անձանց ստրուկների շուկայից: Արգելվում է և՛ սիպահիներին, և՛ ենիչերիներին, և այլ անօրինական վաճառականներին շուկայում ստրուկ վաճառել: Բացի այդ, արգելվում է ստրուկ վաճառել հրեաներին, քրիստոնյաներին և ղզլբաշներին: Կեթհուդային հրամայվում էր քայլեր ձեռնարկել և շտկել իրավիճակը[24]: Սակայն XVIII-XIX դդ. ընթացքում

---

[20] NIKI GAMM, Slavery among the Ottomans, http://www.hurriyetdailynews.com/slavery-among-the-ottomans.aspx?pageID=238&nID=19450&NewsCatID=438

[21] Базили Константин, Очерки Константинополя, СПб., 1835, с. 49.

[22] Ղևոյան Վ., նշվ. աշխ., էջ 110:

[23] Базили Константин, նշվ. աշխ., էջ 49:

[24] Fisher Alan W., նշվ. աշխ., էջ 159:

(մինչև շուկայի փակումը 1849 թ.) կառավարությունը պարբերաբար հրապարակում էր նման օրենքներ, ինչը վկայում է, որ այդ երևույթը շարունակում էր գոյություն ունենալ:

Շուկա կարելի էր մտնել փայտե դռներով, որոնք բաց էին առավոտյան ժամը 8-ից մինչև կեսօր: Դրանց մոտ կանգնած էր դռնապանը՝ kapıcı-ն, որը հսկում էր դարպասները և հետևում, որպեսզի ստրուկները չփախչեն: Սակայն դա գրեթե անհնար էր, քանի որ խցերը փակվում էին կեսօրից անմիջապես հետո, բացի այդ, օրենքի համաձայն, փախստական ստրուկներին թաքցնողները պատժվում էին[25]:

Շուկայի կենտրոնում գտնվում էր առանձին շենք, որի վերին հատվածը հանդիսանում էր ստրկավաճառների կացարան (esirci), իսկ դրա տակ acemi-ների (նոր ներմուծված ստրուկների) վանդակներն էին[26]:

Esir pazarı-ը բաղկացած էր մի շարք խցերից: Հենց այս խցերում էլ պահվում էին վաճառվող ստրուկները: Հանի կենտրոնում նախապես եղել է մզկիթ և աղբյուր: Մզկիթի կողքին մեծ հարթակ էր՝ վաճառքի հանված ստրուկներին ցուցադրելու համար: Հան մտնում էին մի դարպասով, որը միայն առավոտյան ժամերին էր բաց: Դարպասի մոտ գտնվում էր Pazar emini (շուկայի կառավարչի) պահակակետը[27]:

Շուկայի ճակատային մասում վաճառվում էին սև, իսկ հետնամասում՝ սպիտակ ստրուկները: Վաճառվողները գերազանցապես կանայք էին: Դեպի հյուսիս և արևմուտք տեղակայված խցերը նախատեսված էին սևամորթ և սպիտակամորթ կանանց համար, որոնք վերավաճառվում էին երկրորդ և նույնիսկ, երրորդ անգամ: Վերավաճառվելու դեպքում սև ստրուկ կնոջ գինը հաճախ աճում էր, քանի որ արդեն հմտացած էր այն տնային աշխատանքներում, որոնց համար նրան գնում էին: Դեպի արևելք գտնվող սարայը նախատեսված էր նոր բերված սևամորթ ստրկուհիների կամ էժանագին սև և սպիտակ կանանց համար: Կենտրոնական և արևելյան խցերում նոր ներմուծված տղամարդ ստրուկներն էին[28]:

---

[25] White Ch., նշվ. աշխ., էջ 280:

[26] Նույն տեղում, էջ 281:

[27] Fisher Alan W., նշվ. աշխ., էջ 155:

[28] White Ch., նշվ. աշխ., էջ 279-282:

Լինում էին դեպքեր, երբ հարեմի աղախինները տարվա մեջ մի քանի անգամ ստիպված էին լինել այս շուկայում: Նրանց վաճառքի էին հանում մահացած տիրոջ ժառանգները, աղքատացած կամ նրանցից հոգնած տերերը[29]:

Ստրուկները, հատկապես կանայք, ուղարկվում էին տիրոջ մոտ լավ հագնված: Տերը պարտավոր էր վերադարձնել ամբողջ հագուստը, բացառությամբ քողի: Ըստ օսմանյան օրենքի «տերը պետք է ստանա իր գնումը լավ փաթեթավորված»[30]:

Հաճախ ստրուկներին, հատկապես գեղեցիկ չերքեզուհիներին, գնում էին որևէ բարձրաստիճան պաշտոնյային նվիրելու համար[31]: Թուրքիայում ռուս դեսպան Պյոտր Անդրեյեվիչ Տոլստոյը 1706 թ. Պետրոս I-ին Կոստանդնուպոլսի ստրուկների շուկայից գնված 10-ամյա սևամորթ մի տղա նվիրեց: Նվիրված արաբ ստրուկը Հաննիբալն էր՝ Ա. Ս.Պուշկինի նախապապը[32]:

XV-XVIII դդ. ստրկավաճառությունը մեծապես ազդել է կայսրության սոցիալ-տնտեսական զարգացման վրա՝ մտնելով նույնիսկ հարկային համակարգ: Պետությունը մեծ հարկեր էր ստանում ստրուկների վաճառքից: Ստրկավաճառության վրա սահմանված մի շարք հարկերի կողքին կարևոր տեղ էր զբաղեցնում շուկայական հարկը (bac-i pazar)[33]:

Շամի էյալեթի (Դամասկոսի էյալեթ) 1562-1566 թթ. մուքաթա դեվթերից պարզ է դառնում, որ շուկայական հարկը տարեկան կազմում էր 27,670 աքչե[34]: Ըստ նույն ժամանակաշրջանի Դամասկոսի Թահրիր դեվթերի մեկ ստրուկի համար վաճառողից գանձվում էր 30 աքչե[35]:

1572 թ. գրված Ադանայի լիվայի կանուննամեում ասվում է, որ ստրուկ կամ ստրկուհի վաճառելու դեպքում 2 փարա է գանձվում (և՛ վաճառողից, և՛ գնողից)»[36]:

---

[29] Базили Константин, նշվ. աշխ., էջ 51-52:

[30] White Ch.,, նշվ. աշխ., էջ 283:

[31] Базили Константин, նշվ. աշխ., էջ 84:

[32] Абрамова С., Африка: четыре столетия работорговли, М., 1992, с. 59.

[33] Fisher Alan W., նշվ. աշխ., էջ 164:

[34] Նույն տեղում, էջ 168:

[35] Նույն տեղում:

[36] Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19 դարեր), Ե., 1999, էջ 152:

Ստամբուլի ստրուկների շուկան գտնվում էր խիստ օրենքների և լուրջ հսկողության ներքո: Ինչպես նշում է Չարլի Ուայթը. «Կոստանդնուպոլիս բերված յուրաքանչյուր ստրուկի համար վճարվում էր կառավարական հարկ, ինչից հետո ստրուկները ուղարկվում էին վաճառքի»: Այս հարկը սահմանում էր 800 պիաստր յուրաքանչյուր սպիտակամորթի և 200 պիաստր յուրաքանչյուր սևամորթի համար[37]: Բացի այդ բոլոր վաճառականները պարտավորվում էին Այա Սոֆյա մզկիթին վճարել փոքր գլխահարկ յուրաքանչյուր ստրուկի համար: Ենթադրվում է, որ այն տարածքը, որտեղ սուլթան Մեհմեդ II-ը կառուցեց ստրկավաճառության շուկան հանդիսանում էր այդ մզկիթի վակուֆը[38]»:

Ստամբուլի ստրկավաճառության շուկաների գործունեության և ստրկավաճառությունից ստացված եկամուտի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Maliyeden Müddevver կոչվող օսմանյան արխիվային մատյանները: Հենց այս մատյանները տեղեկություններ են պարունակում այն մասին, որ Ստամբուլի շուկաներից ստացված եկամուտի մի մասը գնում էր Այա Սոֆյա մզկիթին[39]: 1609 թ. մատյանում գրանցված է նախորդ տարվա մզկիթի եկամուտը, որը ներառում է նաև շուկայի գործունեությունից ստացված մասը: Մզկիթի ծառայողների աշխատավարձը ևս գալիս էր այդ աղբյուրից. բոլոր 38 ծառայողների եկամուտը միասին կազմում էր 4,794 աքչե[40]:

XIX դարի սկզբներին Ամերիկայում և Եվրոպայում սկիզբ առավ մի շարժում, որը հայտնի է աբոլիցիոնիզմ անունով: Վերջինս ընդգրկել էր հասարակական ամենալայն խավերը և կոչված էր վերջ տալու

---

[37] White Ch., նշվ. աշխ., էջ 286:

[38] Վակուֆ՝ սեփականություն, որ տրվել էր սեփականատիրոջ կողմից կրոնական կամ բարեգործական կարիքների համար համայնքին, պետությանը կամ մասնավոր անձին: Վակուֆ տվողի ժառանգները կարող էին թոշակ ստանալ փոխանցված գույքի եկամուտներից: Վակուֆներն ազատվում էին հարկերից և ծառայում որպես մահմեդական հոգևորականության գոյատևման կարևոր աղբյուր:

[39] Fisher Alan W., նշվ. աշխ., էջ 169:

[40] Նույն տեղում:

ռասիզմին, ստրկությանն ու ստրկավաճառությանը[41]: Մեծ տերությունների ճնշման տակ օսմանցիները ստրկավաճառությունն արգելելու փորձերը սկսեցին 1840-ական թվականների վերջին: 1847 թվականի Աբդուլ Մեջիդի ֆերմանով փակվեցին գերիների շուկաները[42]:

Ստամբուլի ստրկավաճառության շուկան փակվել է 1849 թ.: Իր պաշտոնական փակումից հետո Ստամբուլի շուկան կամ քանդվեց կամ այրվեց քաղաքի տարբեր մասերում բռնկված հրդեհների հետևանքով[43]: Սակայն նույնիսկ փակումից հետո ստրուկների վաճառքը չդադարեց: Սևամորթ և չերքեզ ստրկուհիների վաճառքը շարունակվեց այլ վայրերում:

XIX դարի կեսերից սևամորթ ստրուկների վաճառքը կենտրոնացվեց Ֆաթիհի շրջակայքում, իսկ սպիտակամորթներինը՝ Քարաբաշ թաղամասում[44]:

Բացի այդ, 1860-ականների սկզբին, երբ ակտիվացավ Կովկասից եկող գաղթյալների հոսքը սևծովյան շրջաններ, օսմանյան կառավարությունը բացեց գերիների ժամանակավոր շուկաներ նաև Տրապիզոնում և Սամսունում: Այս շուկաներում գործում էր նույն կառավարման եղանակը: Այսպես, Մեքքայում սևամորթները վաճառվում էին բացեիբաց, իսկ չերքեզ կանայք՝ միայն փակ պայմաններում[45]:

Ստամբուլից դուրս խոշոր ստրկավաճառության շուկաներ կային Քեֆեյում: 1538-1540 թթ. Ղրիմում Լիտովյան իշխանապետության դեսպան Մ. Լիտվինը Քեֆեյի ստրկավաճառության շուկան նկարագրում է որպես «հրեշ, որը խմում է մեր արյունը»: Նա գրում է, որ դա մի վայր էր, որտեղ իր ազգակիցներին ու կրոնակիցներին

---

[41] Մեծ Բրիտանիայի խորհրդարանը ստրկավաճառությունը արգելող հուշագիրը ընդունեց 1807 թ., Ֆրանսիայում՝ 1848 թ., իսկ ԱՄՆ-ում ստրկատիրությունը շարունակվեց ընդհուպ մինչև 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմը:

[42] Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 224:

[43] Fisher Alan W., նշվ. աշխ, էջ 155:

[44] Kanbolat H., նշվ. աշխ, էջ 39:

[45] Նույն տեղում:

վաճառում էին որպես ստրուկներ: Նշում է, որ ստրկավաճառները տարբեր ազգությունների էին՝ թուրքեր, հրեաներ, հույներ և հայեր[46]:

Ղրիմի այլ քաղաքները նույնպես ունեին իրենց ստրկավաճառության շուկաները՝ Ազով, Թաման, Կերչ, Գյոզլեվե և Անապա, որոնք նավահանգիստ էին հանդիսանում ստրուկների արտահանման համար:

Կաֆիրեի և Ալեքսանդրիայի շուկաները ստրուկների վաճառքի արագ աճող վաճառքի կենտրոններ էին, որտեղ կային ինչպես սև, այնպես էլ սպիտակ ստրուկներ Ռուսաստանից և Կովկասից[47]: Ժոզեֆ Փիթը Կաֆիրեի շուկայի մասին գրել է. «Եզակի վայր, որտեղ շուկան գործում է շաբաթը 2 ամգամ՝ Թուրքիայից բերված քրիստոնյա ստրուկներին վաճառելու համար, որոնց հիմնականում բերում էին թաթարները: Ստրուկների մեծ մասը կանայք և երեխաներ էին: Վաճառքի հանված ստրուկները, գերազանցապես, Ռուսաստանից էին[48]»:

Այսպիսով, ինչպես երևում է ստրկավաճառության շուկաները տեղակայված էին կայսրության ողջ տարածքում, գործում էին իրենց սեփական կանոններով և ունեին կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն՝ հանդիսանալով գանձարանը հարստացնելու աղբյուր: Պետությունը մեծ եկամուտ էր ստանում ստրուկների վաճառքից: Կառավարությունը հարկեր էր սահմանում ստրուկների վաճառքի համար, ինչպես նաև հսկում էր ստրկավաճառների գործունեությունը: Քանի որ սուլթանը ստրկությունն ու ստրկավաճառությունը արգելող օրենքները ընդունում էր մեծ տերությունների ճնշման տակ, այդ պատճառով նրա քայլերն այդ ուղղությամբ առերևույթ բնույթ էին կրում: Եվ չնայած՝ Օսմանյան կայսրությունում ստրկատիրությունը արգելվել էր XIX դարում, սակայն այն շարունակեց գոյություն ունենալ մինչև XX դարի I կեսը:

---

[46] Fisher Alan W., նշվ. աշխ, էջ 160:

[47] Նույն տեղում:

[48] Նույն տեղում, էջ 161-162:

TOVMASYAN ANAHIT
("MATENADARAN" RIAM)

THE SLAVE MARKET OF CONSTANTINOPLE AND ITS ECONOMIC FUNCTION

Slaves were bought and sold in markets throughout the Ottoman Empire. Slaves were sold in special markets called *esir pazarı* located in the majority of the towns and cities of the state. Both large and small provincial cities, as well as Istanbul, had their *esir pazarı*-s, from Kefe in the Crimea, to Serbian, Anatolian and Arab cities. The most common form of information about the slave trade in the Ottoman Empire concerns the markets themselves, and especially the one in the capital of the Empire-Istanbul. This market was under strict regulations and severe internal scrutiny. It had its *sheikh*, *kihaya*, and *vekil*, its brokers, watchmen, and police. Probably it was a wakoof attached to the mosque of Aya Sofya and all merchants had to pay a trifling head-tax on each slave to that mosque.

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
(ԱԻ)

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XVIII ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՍԱՍՊԵՑՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Պատմահայր Հերոդոտոսը գրում է. «Մատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»[1]: Հերոդոտոսը սասպեյրներին հիշատակում է ևս մի քանի անգամ: Նա գրում է. «Պարսիկներից, մեդացիներից, սասպեյրներից և կոլխերից վերև, դեպի արևելք, գտնվում է Կարմիր ծովը (իմա՛ Պարսից ծոցը – Խ. Հ.): Դեպի հյուսիս՝ Կասպից ծովը և Արաքս գետը (հավանաբար, հայկական Արաքսն է - Խ. Հ.), որը հոսում է դեպի արևելք»[2]: Ինչպես տեսնում ենք, սասպեյրները հիշատակվում են կոլխերի և մեդացիների միջև: Այս տեղեկությանը գործնականում համապատասխանում են Հերոդոտոսի հաջորդ մի քանի տեղեկությունները: Այսպես, Հերոդոտոսը հայտնում է. «Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր (իմա՛ Պարսից ծոցը–Խ. Հ.): Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեդացիները, մեդացիներից (վերև)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերև)՝ կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը (իմա՛ Սև ծովը–Խ. Հ.), որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն (ընկած երկրում)»[3]: Պատմահայրը նաև հաղորդում է. «Մեյոտիս լճից մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհ է անխոնջ ուղևորի համար: Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ, սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա»[4]: Բերված տեղեկություններից ակնհայտ է, որ կոլխերի

---

[1] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի), Ե., 1986, III, 94 (այսուհետև՝ Հերոդոտոս):

[2] Նույն տեղում, IV, 40:

[3] Նույն տեղում, IV, 37:

[4] Նույն տեղում, I, 104:

և մեդացիների միջև գտնվող սասպեյրները եղել են խոշոր էթնիկական միավորում, որը հանդես է գալիս որպես հավաքական ամբողջություն՝ ազգ՝ հյուսիսում անմիջականորեն սահմանակցելով կոլխերին, իսկ հարավում՝ մեդացիներին: Հերոդոտոսը հաղորդում է, որ Քսերքսեսի հունական արշավանքին ալարոդները և սասպեյրներն արշավում էին կոլխերի նման զինված, որոնց առաջնորդում էր Սիրոմիտրեսի որդի Մասիստիոսը[5]: Այս տեղեկությունը ևս ցույց է տալիս, որ սասպեյրները և ալարոդները մտել են XVIII սատրապության մեջ, և ալարոդների առաջինը հիշատակվելը թույլ է տալիս սասպեյրներին տեղադրել նրանցից հյուսիս:

Գ. Ա. Մելիքիշվիլին սասպեյրներին համարում է քարթական ցեղեր, որոնք վերահսկում էին Ուրարտուի հյուսիսային գավառները և գլխավորում արևելավրացական ցեղերի հարավային միավորումը: Այս ենթադրությունը հիմնվում է հայկական Սպեր գավառի հետ սասպեյրների անվանական նմանության վրա՝ միաժամանակ սասպեյրների բնակության շրջանը Կողքիսից հասցնելով մինչև պատմական Մեդիա ընկած տարածությունը[6]: Ի. Մ. Դյակոնովը կիսում է Շպիգելի կարծիքը, համաձայն որի, Հերոդոտոսի վկայության մեջ (I, 104) խոսքը վերաբերում է մարական տերության սահմաններին և ոչ թե պատմական Մեդիայի շրջանին[7]: Սակայն սասպեյրները չեն կարող տեղադրվել Սպերի փոքրիկ շրջանում, քանի որ ընդգրկել են մեծ տարածություն՝ սահմանակցելով մարերին: Անտրամաբանական է նաև, որ հայերը չհիշատակվեին մարերի և սասպեյրների միջև, եթե ընդունենք վերջիններիս տեղադրությունը Սպերի շրջանում: Հարկ է նշել, որ եթե սասպեյրները տեղորոշվեին Սպերի տարածքում, ապա նրանք վարչականորեն կմտնեին Հայաստանի մեջ, իսկ վերջինս էլ մարական տիրապետության ժամանակ Մարաստանի կազմում էր, հետևաբար մարական տերության սահմանների մասին խոսք լինել չի կարող, քանի որ սասպեյրներն ընդգրկված կլինեին մարական

---

[5] Նույն տեղում, VII, 79:

[6] Меликишвили Г., Наири–Урарту, Тбилиси, 1954, с. 415; նույնի՝ К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 116, 232.

[7] Доватур А., Каллистов Д., Шишова И., Народы нашей страны в "Истории" Геродота, М., 1982, с. 178, прим. 24.

տերության սահմանների մեջ: Սա նշանակում է, որ սասպեյրները պետք է լինեին անկախ էթնիկական միավորում և գտնվեին մարերից հյուսիս-արևմուտք և կոլխերից արևելք: Այս ամենը նշանակում է, որ սասպեյրներին պետք է փնտրել այլ տարածաշրջանում: Մենք կիսում ենք այն տեսակետը, որ սասպեյրները զբաղեցրել են Արևելյան Վրաստանի տարածքը ու նաև հետագա Աղվանքի կամ Կուրի ձախափնյակի շրջանը[8]: Այս ենթադրությունը հաստատում են հին աղբյուրները:

Մ. թ. ա. III դարի հեղինակ Ապոլլոնիոս Հռոդոսցին «Արգոնավորդների արշավը» երկում նշում է, որ մակրոններից այն կողմ բեխիրների բազմամարդ ցեղն է, որոնցից անմիջապես այն կողմ ապրում են սասպեյրները և նրանցից հետո արդեն ռազմաշունչ կոլխերը[9]: Ապոլլոնիոսի այս տեղեկության մեջ սասպեյրները նույնանում են սասպեյրներին, որոնք գտնվել են բեխիրներից և կոլխերից արևելք: Ապոլլոնիոսն իր երկի մեկ այլ հատվածում ևս հիշում է մակրոններին, բեխիրներին, հպարտ սասպեյրներին և նրանցից այն կողմ բիզերներին[10]: Ապոլլոնիոսի երկրորդ տեղեկության մեջ սասպեյրները գտնվել են բեխիրների և բիզերների միջև, երբ, ըստ Սկիլաքս Կարիանդացու, նրանց միջև գտնվել են էկեխեյրիները[11], իսկ ըստ Հեկատեոսի՝ խոյերը[12]: Այս դեպքում սասպեյրները կարող են նույնանալ Սպերի բնակիչների՝ սասպեյրների հետ: Բեխիրները գտնվել են մակրոնների հարևանությամբ, իսկ բիզերները՝ Մոսքական լեռների հարավ-արևմտյան լանջերին[13]: Հետևաբար, սասպեյրների նույնացումը Սպերի բնակիչների հետ նրանց կտեղորոշի շատ ավելի հարավ: Սակայն, եթե Ապոլլոնիոսի առաջին տեղեկության մեջ սասպեյրներին հաջորդում են

---

8 Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ,- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1999, թիվ 1-12, էջ 81:

9 Латышев В., Известия древних писателей о Скифии и Кавказе, - «Вестник древней истории» (այսուհետև՝ «ВДИ»), 1947, № 3, с. 280 (այսուհետև՝ «ИДПСК»).

10 Նույն տեղում, էջ 282:

11 Скилак Кариандский, Перипл обитаемого моря, - «ВДИ», 1988, № 1-2, с. 261.

12 «ИДПСК», - «ВДИ», 1947, № 1, с. 301; 1948, № 3, с. 329.

13 Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, - «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, էջ 126:

կոլխերը, իսկ երկրորդ դեպքում՝ բիզերները, ապա նշանակում է, որ բիզերները կոլխական ցեղերից մեկն են: Ուրեմն, սապեյրները գտնվել են կոլխերից արևելք: Այս տեղեկությունը հաստատվում է Ամիանոս Մարկելինոսի տեղեկությամբ, որը մի առիթով հիշատակում է սապեյրներին, ընդ որում, նրանց նախորդում են բիզարները (=բիզերներ), խալյուբները, դահերը և հաջորդում են տիբարենները, մոսսինոյկները, մակրոնները և փիլիրները[14]: Դահերը շփոթված են տաոխների հետ, որոնցից հյուսիս խալյուբներն (=մոսքեր) են, և վերջիններիցս էլ ավելի հյուսիս բիզերները, որոնցից արդեն արևելք բնակվել են սապեյրները՝ Հերոդոտոսի սասպեյրները:

Ապոլլոնիոսի երկի սքոլիայում ասվում է, թե բեխիրները սկյութական ժողովուրդ են, և նրանցից հետո սապեյրներն են՝ մի սկյութական ժողովուրդ, որն, իբր, իր անունը ստացել է նրանց մոտ առատությամբ հանդիպող «սապեյրին» քարի անվանումից[15]: Այս տեղեկության մեջ կարևոր է, որ սապեյրները համարվում են սկյութական ժողովուրդ: Կեղծ–Օրփեոսը արգոնավորդների արշավի հետ կապված զրույցում հիշատակում է սապեյրների խիտ բնակեցված քաղաքները, որոնցից այն կողմ (իմա՛ արևմուտք) բիզերներն են[16]: Ստեփանոս Բյուզանդացին սապեյրներին կամ սաբեյրներին համարում է Պոնտական տարածաշրջանի ժողովուրդ[17]: Սապեյր կամ սասպեյր անունը պարզապես հիշատակում է նաև մ. թ. II դարի հեղինակ Հերոդիանոսը[18]: Փաստորեն, բերված տեղեկությունների հիմքում ընկած են Ապոլլոնիոս Հռոդոսցու տվյալները: Սապեյրների անվան կապումը «սապեյրին» քարի անվանման հետ պատահական նմանության արդյունք է: Թերևս, սապեյրների անունից է առաջացել քարի անվանումը և ոչ թե հակառակը: Սասպեյրները սկյութական ժողովուրդ են կամ ցեղախումբ, որի անունը ծագում է սկյութա-ալանական աշխարհին պատկանող «աս» ցեղախմբի անվանումից,

---

[14] «ИДПСК»,- «ВДИ», 1949, № 3, с. 286.

[15] Նույն տեղում, - «ВДИ», 1947, № 3, с. 288.

[16] Նույն տեղում, - «ВДИ», 1948, № 3, с. 268.

[17] Նույն տեղում, էջ 325:

[18] Նույն տեղում, - «ВДИ», 1948, № 2, с. 258.

որի մի մասն անհայտ պատճառներով կրել է ասպեյր անունը[19]: «Աս» ցեղի մի հատվածը հաստատվում է Ասեաց փոր կամ Արսեաց փոր գավառում, իսկ Սպերը պահպանել է ասպեյրներ ցեղանունը[20]: Ասպեյրներ էին նաև սասպեյրները, որոնք հերոդոտյան ժամանակներում հեռացել էին իրենց սպերյան ազգակիցներից և հաստատվել Վիրքում՝ բռնելով աստիճանական վրացականացման ուղին, երբ արդեն վրացերենին հատուկ սկզբունքով ասպեյրների հավաքականությունը ստանում էր սաասպեյր կամ սասպեյր տեսքը[21]: Այս տեսանկյունից հետաքրքիր է հետևյալ տեղեկությունը: Համաձայն Լեոնտի Մրովելու, հայերի և մի շարք ժողովուրդների նախահայր Թարգամոսն (Թորգոմը) իր ութ զավակների միջև է բաժանում իր տիրույթները, որոնցից Հաոսին (Հայկին) բաժին է ընկնում Հայաստանը, իսկ Քարթլոսին՝ Քարթլիի ծմակաշատ աշխարհը: Ավանդության հետագա շարադրանքից պարզվում է, որ բոլոր եղբայրներն էլ խոսում էին հայերեն (սոմխուրի), սակայն «մինչ այժմ (Երուսաղեմի գրավումը Նաբուքոդոնոսորի կողմից) Քարթլոսյանների լեզուն հայերենն (սոմխուրի) էր, որով և խոսում էին: Իսկ երբ անհամար ժողովուրդներ ժողովեցան Քարթլիում, այն ժամանակ վրացիք թողին հայերեն (սոմխուրի) լեզուն, և այս բոլոր ժողովուրդներից գոյացավ վրացերեն (քարթուլի) լեզուն»[22]: Այս ավանդությունը Բ. Հարությունյանը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Սպերում և նրա շրջակայքում՝ այլ խոսքով, Ճորոխ գետի ավազանի արևմտյան մասում հաստատված հնդեվրոպական սկյութական ցեղախմբերը, որոնք ներգրավվել էին հայագոյացման ոլորտը և հայացել էին, մի մասով դեպի հյուսիս շարժվելով, հաստատվում են Վիրքի տարածքում և, գերազանցելով ռազմական ու տնտեսական

---

19 Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 82:

20 Նույն տեղում, էջ 83:

21 Նույն տեղում:

22 Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն–ծանոթագրություններով և հավելվածներով, հ. Ա (Ե-ԺԲ դար), կազմեց պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Բեկ, Ե., 1934, էջ 143 – 149: Տե՛ս նաև Картлис Цховреба (История Грузии), глав. ред. акад. Р. Метревели, Тбилиси, 2008, с. 19.

առումով տեղաբնիկ քարթական ցեղերին, իրենց գերիշխանության տակ են գցում վերջիններիս... Այն իրողությունը, երբ քարթական ցեղերի վրա իշխանություն հաստատածների լեզուն հայերենն էր կամ հայերենի բարբառներից մեկը, հետագայում եկվորներին ուծացրած քարթական ցեղերի շրջանում պետք է այն միտքը ծներ, որ իրենք՝ վրաց ժողովուրդը մի ինչ–որ ժամանակ հայախոս է եղել»[23]: Այս տեսակետը կարելի է հաստատել նաև Ստրաբոնի տեղեկությամբ: Հույն աշխարհագետը հայտնում է. «Վրաց դաշտում բնակվող ժողովուրդը լավ երկրագործ է և խաղաղասեր. հագնվում է հայ և մարական ձևով. իսկ լեռնաբնակները, որոնք ավելի բազմաթիվ և պատերազմասեր են, ապրում են սկյութացոց և սարմատացոց կարգերով, ինչպես որ նրանց սահմանակից և ցեղակից են»[24]: Ստրաբոնի հաղորդումից հստակ երևում է, որ հնդեվրոպական տարրի հայկական ազդեցությունը պահպանվել էր իբերների ազգագրության բնագավառում (հագուստի նմանությունը):

Սասպեյրներ անվանումը կարելի է կապել իբերների հետ, սակայն այն տարբերությամբ, որ սասպեյրները բնակվել են միայն Արևելյան Վրաստանի տարածքում, և այդ միավորումը գլխավորել են հնդեվրոպական ցեղերը, բայց այդ միավորման մեջ մտած ցեղերը եղել են հիմնականում քարթական[25]: Ընդ որում, այն հանգամանքը, որ սասպեյր անունը Սպերում գործնականում փոփոխություն չի կրում, հավաստում է, որ նշված գործընթացներն ընթացել են Արևելյան Վրաստանի տարածքում, և ինչպես վրացիների համար հայերը սոմեխի էին մոսքերի հետ կապված, այնպես էլ հայերի համար վրացիներն իբեր–իվեր–վիր էին, քանի որ սասպեյրական ցեղերը բնակվում էին նրանց սահմանակցությամբ[26]: Փաստորեն, սասպեյր անունը հավաքական անվանում էր, և այդ ցեղախմբի մեջ բազմաթիվ ցեղեր և անգամ ցեղային փոքր խմբեր էին գտնվում: Ամեն

---

[23] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 2001, էջ 77:

[24] Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940, էջ 29:

[25] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 80:

[26] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 83:

ինչից դատելով՝ դրանց թվում էին մատիենները և ալարոդները: Անհրաժեշտ է նշել, որ «Անաբասիս»-ում հիշատակվող հեսպերիտները[27] ոչ մի դեպքում չեն կարող նույնանալ սասպեյրների հետ, քանի որ տեղադրվում են Սպերում, և սասպեյրների անունն այդպես է արտացոլվել հույների մոտ:

Սասպեյրների երկիրը լայն առումով ծածկում է Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության ամբողջ տարածքը, և այս առումով կարևոր է նաև Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունը. «Արոտավայրերը, որտեղ այս խաշնարածը (իմա՛ Աստյուագեսի–Խ. Հ.) արածեցնում էր նախիրը, գտնվում էին Ագբատանայից հյուսիս՝ դեպի Եվքսինյան Պոնտոս ընկած (իմա՛ նայող–Խ. Հ.) լեռների ստորոտներին: Քանզի մեդական երկիրը միայն դեպի սասպեյրներն ընկած մասում բարձադիր է, լեռնային և անտառաշատ. իսկ մնացյալ երկիրն ամբողջապես դաշտային է»[28]: Հերոդոտոսը Եվքսինյան Պոնտոս նայող լեռների տակ նկատի ունի Երասխից հարավ ընկած Հայկական, Կասպիական լեռները մինչև Կասպից ծով, այսինքն՝ ուշ ժամանակների Վասպուրական աշխարհի արևելյան մասը՝ Մարդպետականը, մարական սատրապության մեջ էր: Մյուս կողմից էլ պատմիչի տեղեկությունը ցույց է տալիս, որ մարերը և սասպեյրները եղել են անմիջական հարևաններ, ինչը հնարավոր էր միայն Կուր գետի ստորին հոսանքի շրջանում:

Սասպեյրների անվան մեջ սա-ն վրացական նախածանց է երկրանուններ կազմելիս, և Հերոդոտոսի «Սասպեյր»-ը ոչ թե ցեղանուն է, այլ երկրանուն[29]: Սասպեյրների հետ կապված նշենք, որ վերջիններս մարերի հետ սահմանակցել են Կուր գետի ստորին

---

[27] Քսենոփոն, Անաբասիս (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի), Ե., 1970, էջ 197:

[28] Հերոդոտոս, I, 104, 110: Հմմտ. Օհանյան Մ., Աքեմենյան XVIII սատրապության սահմանները, -«Իրան-Նամէ», 1999, թիվ 32-34, էջ 97:

[29] Ասպեյրների անվան ստուգաբանության հետ կապված առաջարկում ենք մի վարկած, որի վրա հրավիրում ենք իրանագետ-լեզվաբանների ուշադրությունը: Ասպեյրների անունը, մեր կարծիքով, կապված է իրան. aspabāra-, հին պարսկ. asabāra-«հեծյալ» բառի հետ (տե՛ս Brandenstein W., Mayrhofer M., Handbuch des Altpersischen, Wiesbaden, 1964, S. 106), ինչը լրիվ համադրելի է սկյութ-հեծյալների հետ: Եթե ենթադրությունը հավանական է, ապա Սասպեյր երկրանունը կնշանակի «հեծյալների երկիր»:

հոսանքի շրջանում, և Կողքիսից դեպի Մեդիա ճանապարհն անցել է Կասպից ծովի արևմտյան շրջաններով և Կուրի հովտով: Այս ճանապարհի կարևորությունն է նշում Պլինիոս Ավագը, երբ գրում է, որ հնդկական ապրանքները Կասպից ծովով և Կուր գետով հասնում են Փասիս[30]: Ընդ որում, ընդգծենք, որ Հերոդոտոսի մոտ կոլխերը տեղադրվում են Փասիսից՝ ներկայիս Ռիոն գետից և՛ հարավ, և՛ հյուսիս՝ գետի երկու ափերին[31]: Սասպեյրները չեն կարող տեղադրվել կոլխերից հարավ, քանի որ կնույնանան մոսքերի (արևելյան խալյուբների) հետ, որը սկզբնաղբյուրներով բացառվում է: Հետևաբար, սասպեյրները գտնվել են կոլխերից արևելք և տեղադրվել են արևմուտքում՝ մատիենների, հարավում՝ ալարոդների միջև՝ XIII սատրապությունից բաժանվելով Կուր գետով և Թռեղքի լեռներով:

Այսպիսով, հին աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ հերոդոտյան սասպեյրները բնակվել են Վիրքում և ծագումով եղել են, թերևս, սկյութական ցեղ: Սասպեյրների տեղադրության ցանկացած փորձ Հայկական լեռնաշխարհում մատնված է անհաջողության, քանի որ այդ ցեղը գտնվել է XVIII սատրապության կազմում, իսկ վերջինս էլ տեղադրվում է Կուր գետի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև:

KHORIKYAN HOVHANNES
(IOS)

ON THE LOCATION OF THE XVIII SATRAPY SASPEIRES OF ACHAEMENID PERSIA

The investigation of ancient sources shows that Herodotus' Saspeires have lived in Virq (Iberia, modern Eastern Georgia) and have been perhaps of the Scythian tribe. Any attempt to locate the Saspeires in the Armenian Highland is failed as that tribe has been included in the XVIII Satrapy and the latter is between the River Kur and the Great Caucasus.

---

[30] Pliny, Natural History, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, 52, p. 376.

[31] Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 124:

The name Saspeires was a collective name and there were many tribes and smaller groups included in that tribe. Judging by all these facts the Matienians and the Alarodians were included there as according to Herodotus a nation called Saspeires lived between the Colchians and the Medes.

КАСТЕЛУЧИЯ МАНУЭЛ
(БВУН, ИТАЛИЯ)

ДАН РОБЕРТО[1]
(МАИСВ, ИТАЛИЯ)

ОЧЕРКИ О КАВКАЗСКИХ И УРАРТСКИХ БРОНЗОВЫХ КОЛОКОЛЬЧИКАХ

Цель данной статьи – представить краткий анализ металлических "колокольчиков", категории металлических предметов, которые часто выявляются в контексте урартских и кавказских культур. Первоначально будут представлены колокольчики, выявленные в во время контролируемых раскопок, затем будут рассмотрены предметы, приобретенные в антикварных магазинах (рынках), а также образцы с клинописными надписями (только урартские экземпляры). После краткого обзора ближневосточных металлических колокольчиков, будут описаны образцы, найденные на территории Кавказа и Ванского Царства. Свидетельства возможных контактов и взаимодействий между двумя культурными регионами могут быть выявлены при сравнительном анализе данных артефактов. Это особенно важно, так как в последнее время появилась тенденция подчеркивания роли местной культуры в консолидации урартского господства на Закавказье[2].

Металлические колокольчики были найдены на территории Урарту и Закавказья, как в погребениях, так и в рамках поселений.

Предполагается, что эти бронзовые колокольчики были прикреплены к сбруе коней. Они изображены на некоторых неоассирийских ортостатах, где прикреплены к сбруе, под челюстью или на шее коня[3]. Тем не менее, это не было их единственным функциональным назначением, так как данные колокольчики, зачастую стандартные по своей форме, были чрезмерно распространены.

---

[1] В работе над статьей участвовали оба автора. В частности, М. Кастелучия написал часть о кавказских колокольчиках, тем временем как Р. Дан представил Урартские предметы. Введение и заключение были написаны совместно.

[2] Biscione R., in preparation, Il Regno di Urartu e le culture dell'Altopiano Armeno; Castelluccia M., Dan R., in preparation, The Urartian Bronze Belts and their Archaeological Context.

[3] Winter I., A Decorated Breastplate from Hasanlu, Iran, Philadelphia, 1980, p. 4, fig. 15.




Рис. 1. Шесть колокольчиков из Хасанлу (www.metmuseum.org.)

Металлические колокольчики могут быть разделены на две основные категории. К первой категории относятся колокольчики в виде "открытой клетки", "птичьей клетки" или бубенчики. Они маленькие и шаровидные, с многочисленными параллельными продольными отверстиями. Формы различаются, а внутри находиться маленький металлический шарик, играющий роль язычка[4]. Данный тип широко распространен и предполагается, что он возник на территории Кавказа в XI – X вв до н. э[5].

Вторая группа состоит из колокольчиков "закрытого типа". Они имеют коническую или многоугольную форму, отверстие в нижней части и железный язычок внутри. В некоторых случаях одно или два отверстия могли быть на одной стороне/грани.

Образцы обеих групп были найдены в Северном Иране и Ассирии.

---

[4] Winter I., op. cit., p. 4.

[5] Bouzek J., ''Openwork'' Bird-Cage ''Bronzes'', in Boardman J., Brown M., Powell T. G. E., The European Community in Later Prehistory. Studies in honor of C.F.C. Hawkes, London, 1971, p. 94.

В постройке с коридором в Хасанлу, наряду с удилами коней, подперсьями и другими предметами, относящимися к конской сбруе и ее принадлежностям, были найдены шесть колокольчиков эпохи железа II (уровень IV, IX век до н.э., рис. 1)[6]. Это колокольчики шаровидной формы, с перфорированными стенками[7]. Другие колокольчики различной формы, но в особенности типа "открытой клетки", были найдены в Сиалке Б[8], Марлике[9] и Луристане[10].

Металлические колокольчики были найдены в большом количестве в различных Новоассирийских памятниках, но большинство выявлены из Нимруда, особенно в Северо-западном дворце, где Лейард обнаружил котел с восьмидесятью колокольчиками[11], и в крепости Салманасара[12]. Колокольчики ассирийского стиля, в отличие от колокольчиков из иранских контекстов, относятся к "закрытому типу" с отверстием внизу и видимым язычком[13].

Металлические колокольчики Кавказа и Урарту также могут быть разделены на две вышеотмеченные категории, но вдобавок могут быть выделены некоторые характерные особенности.

Кавказские колокольчики

Огромное количество бронзовых колокольчиков было выявлено из погребальных контекстов местных культур Кавказа. Можно отметить многие типологические варианты, которые отличаются по форме и наличию отверстий. Возможное наличие язычка является определяющим

---

[6] Muscarella O., Bronze and Iron. Ancient Near Eastern Artifacts in the Metropolitan Museum of Art, New York, 1988, p. 67.

[7] Остальные колокольчики были найдены в других частях цитадели; прототипы колокольчиков подобного типа выявляются из раскопок Тепе-Гиян и датируются началом второго тысячелетия. Это самые ранние бубенчики известные в Иране (Muscarella 1988, op. cit., p. 68).

[8] Ghirshman R., Fouilles de Sialk: pres de Kashan, Paris, 1939, Vol. II, pl. 25.

[9] Negahban E., Marlik, The Complete Excavation Report, Philadelphia, 1996, Vol. II, pls. 136-137.

[10] Vanden Berghe L., La Nécropole de Khūrvīn, Istanbul, 1964, pl. 37.

[11] Engel C., The Music of the Most Ancient Nations - Particularly of the Assyrians, Egyptians and Hebrews, With Special Reference to Recent Discoveries in Western Asia and in Egypt, London, 1864, p. 64-72, fig. 20; Layard A., Discoveries among the Ruins of Nineveh and Babylon with Travels in Armenia, Kurdistan and the Desert, New York, 1853, p. 150.

[12] Данные колокольчики находятся в Британском музее (http://www.britishmuseum.org/, Access November 2012).

[13] Winter I., op. cit, p. 4, 55, fig. 14.

фактором, так как позволяет с уверенностью сказать, что предмет точно являлся колокольчиком, тогда как в случаях, когда он не сохранился, предмет просто может являться колоколообразной подвеской.

К первой самой простой группе колокольчиков относятся предметы "закрытого типа" конической формы, без отверстий на тулове и дополнительных элементов. Поверхность колокольчика ровная и гладкая. Железный язычок зачастую сохранен внутри (рис. 2). Колокольчики данного типа были найдены в погребениях на северных склонах Кавказского хребта (Сержен-юрт)[14] и различных памятниках Кобанской культуры в Чечне и Ингушетии[15], а также на Закавказье, т.е. в Тли[16] и Ванадзоре[17]. В целом данные контексты датируются VII-VI вв. до н. э.




Рис. 2. Простые конические колокольчики: A – Сержен - Юрт (Козенкова 1992, табл. 78, n. 29), B, C, D – Ванадзор (Мартиросян 1964, табл. 21, n. 21-23), E – Тли (Техов 1981, табл. 111), F, G, H – Различные памятники "Кобанской" культуры (Козенкова 1998, табл. 12).

В данной группе можно наблюдать некие вариации. Из комплекса Скифских курганов Келермеса[18] найден колокольчик в виде трапеции с квадратной основой (диам. - 5 см) (рис. 3 B) и треугольным отверстием на одной грани. Он частично похож на артефакты из Кармир блура. Из того же памятника известны как минимум два других бронзовых колокольчика

---

[14] Kozenkova V., Seržen'-Jurt, Mainz am Rhein, 1992, p. 90.


[15] Козенкова В., Материальная основа быта кобанских племен. Западный вариант, М., 1998, с. 152.

[16] Техов Б., Тлийский могильник (комплексы IX - первой половинй в. VII в. II, Тбилиси, 1981, с. 38-39.

[17] Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, с. 215-216.

[18] Galanina L., Die Kurgane von Kelermes. "Königsgräber" der frühskythischen Zeit, Moskau, 1997, pl. 17, n. 90.

той же формы, но без отверстий на гранях[19]. В районе Алаверди[20] в северо-восточной Армении был выявлен колокольчик с горизонтальными бороздками на поверхности (рис. 3а), очень похожий на предмет, найденный в Бастаме, в Погребении 4, который описан далее.



A B

Рис. 3. Тщательно обработанные конические колокольчики: А – Район Алаверди (de Morgan 1889: 125, рис. 104); Б – Келермес (Галанина 1997: табл. 17, n. 90)

К второй группе относятся предметы в виде "открытой клетки", которые схожи с колокольчиками из Хасанлу и других памятников Ирана. Они, как правило, небольшие, имеют высоту два сантиметра, округлую форму и многочисленные отверстия на тулове, тем временем как на верхней части наличествует петля, через которую должна быть продета цепочка. Этот тип представлен многочисленными предметами, выявленными во многих Закавказских памятниках, таких как погребения Лори-берда[21], Калакент[22], Тандзавер[23] (рис. 4). Данные колокольчики приблизительно датируются первыми веками эпохи железа и современны материалам из Хасанлу.

---

[19] Galanina L., op. cit., pl. 22, n. 272, 276.

[20] de Morgan J., Mission scientifique au Caucase: études archéologiques & historiques, Paris, 1889, p. 125, fig. 104.

[21] Деведжян С., Лори-берд, Е., 1981, табл. 6, nos. 3-5.

[22] Nagel W., Strommenger E., Kalakent. Frühеisenzeitliche Grabfunde aus dem Transkaukasischen Gebiet von Kirovabad/Jelisavetopol, Berlin, 1985; pl. 59, nos. 10-11.

[23] Xnkikyan O., Syunik During the Bronze and Iron Ages, Barrington, 2002, pl. 85.




Рис. 3. Колокольчики "птичья клетка": A, B,C – Лори берд (Деведжян 1981, табл. 6, nos. 3-5), D, E – Калакент (Nagel - Strommenger 1985, табл. 59, nos. 10-11), F - Тандзавер (Xnkikyan 2002, табл. 85).

Различные подтипы могут быть выделены в данной группе, которые примечательны своими сферическими формами. Некоторые имеют продолговатую, либо треугольную и ромбовидную форму (рис. 5 a).

Примечательны предметы из курганов Келермеса, где верхняя часть завершается протомой животного (рис. 5 b - c). Нижняя трубчатая часть полая, что подразумевает, что данные предметы были прикреплены к деревянной основе, вероятно к ветке или палочке.




Рис. 5. Варианты колокольчиков типа "отрытой клетки": A – Лори берд (Деведжян 1981, табл. 6, n. 11-19); B, C – Келермес (Галанина 1997: табл. 6).

Широко засвидетельствованы маленькие колоколообразные подвески конической формы, в целом без язычка, но иногда с металлическим шариком внутри. На тулове имеются треугольные отверстия, а нижняя часть может быть закрытой (рис. 6 f). Возможно, эти предметы были прикреплены друг ко другу в виде чепочки и являлись своего рода украшением для одежды.




Рис. 6. Конические колокольчики: A – Район Алаверди (de Morgan 1889, с. 125, рис. 104); B – Шикаох (Xnkikyan 2002, табл. 82, п. 20-22); C, D – Тли (Техов 1981, табл. 111), E – Муси - Эри (de Morgan 1889, с. 127, рис. 106); F – "Кобанская" культура некоторых памятников (Козенкова 1998, табл. 12); G – Хнацах (Xnkikyan 2002, табл. 90, п. 3).

Последнюю группу составляют колокольчики различных форм, которые принадлежат "закрытому типу" с отрытой нижней частью. Поверхность тулова предмета может быть украшена, либо на ней могут быть отверстия (рис. 7).




Рис. 7. Металлические колокольчики различных форм: A – Степантсминда[24] (Chantre 1886, табл. 40, п. 7); B – Самтавро (Chantre 1886, табл. 49, п. 13); C – Кобан (Chantre 1886, табл. 31, п. 31); D, E – район Алаверди (de Morgan 1889, с. 125, рис. 104); F – Калакент «Paradiesfestung» (Nagel, Strommenger 1985, табл. 19).

Дополнительное свидетельство выявлено в хорошо документированных археологических контекстах, в которых данные колокольчики были найдены.

Колокольчики или колоколообразные подвески были найдены как в мужских, так и в женских погребениях, и не обязательно связаны с конской упряжью. В некоторых случаях они были найдены около поясницы усопшего, и предполагается, что они должны были быть частью пояса. В погребениях Тли и Муси-Эри были выявлены колокольчики, прикрепленные друг ко другу маленькой металлической цепочкой. Вероятно, что они были аксессуаром одежды, а не частью конской сбруи. Несмотря на обилие подобных находок колокольчиков или колоколообразных подвесок на Кавказе, они не были изучены детально, что усложняет точную интерпретацию данных.

Урартские Колокольчики

Несколько металлических колокольчиков известны из Урартских памятников, тем временем как многие предметы приобретены из антикварных магазинов. Предыдущие исследования, посвященные данным

---

[24] В оригинальной публикации Шантр приводит данные предметы, как найденные из точно не установленных погребений на территории Гори. Фактически, как показал Талгрен несколько десятилетий спустя (Tallgren A. M., "Caucasian Monuments: the Kazbek Treasure", Eurasia Septentrionalis Antiqua, 5, 1930, p. 109-182), данные предметы были найдены на Кобанском поселении или были частью так называемого "Казбекского сокровища", клада металлических предметов, найденных в Степантсминда.

предметам, включают работу О. Мускарелла, чье исследование урартских колокольчиков является составной частью обширного труда, относящегося взаимосвязей между Урарту и Западом, особенно Грецией[25]. Сюда причисляется анализ Урсулы Зайдл[26], которая разделила урартские колокольчики на три основные категории: восьмиугольные с квадратными отверстиями на гранях, конические с вертикальными стенками и простые конические.




Рис. 8. Бронзовые колокольчики из Кармир блура
(Пиотровский 2011: 643, рис. 1058, 1059 (A-B); Пиотровский 1955: 46, рис. 35 (C); Зайдл 2004: 115, рис. 87 a-c (D-F); F и G – музей Эребуни).

В данной статье внимание сфокусировано первично на материалах из достоверных археологических контекстов и иных незафиксированных находках, ассоциируемых с существенным уровнем вероятности с определенным археологическим памятником. Некоторые предметы найдены из Алишара, Кармир блура, Еревана, Бастама, Дизгинкале и

---

[25] Muscarella O., "Urartian Bells and Samos", Journal of Ancient Near Eastern Studies, № 10, 1978, p. 61-72.

[26] Seidl U., "Horse Trappings", in Merhav R. (ed.), Urartu. A Metalworking Center in the First Millennium ECB, Jerusalem, 1991, p. 79-96; Seidl U., Bronzekunst Urartus, Mainz am Rhein, 2004, p. 115-116.

некоторых погребений в окрестностях Патноса и Вана[27]. Данные колокольчики могут быть причислены к категории "закрытого типа".

Они могут быть разделены на две субкатегории: восьмиугольной формы с квадратными отверстиями на гранях, и конической формы с маленькими отверстиями по бокам[28]. Есть также некоторые образцы, которые относятся к иной традиции, вероятно Кавказского происхождения, а другие выявляют смешанную природу.

На основе некоторых предметов с клинописными надисями, можно предположить, что урартскими являются только восьмиугольные и конические колокольчики с отверстием на тулове.

Единичные колоко́льчики с надписями, которые были найдены в определенных урартских контекстах, датируются периодом правления царей Сардури II[29] и Аргишти I[30]. Большая неопределенность касается колокольчиков с надписями Менуа, Аргишти I и Аргишти II, которые происходят из Дизгинкале и Вана. Многие из них восьмиугольные, за исключением предмета периода правления Сардури II, найденного на Кармир блуре и рассмотренного далее.

Самое большое количество колокольчиков было найдено на Кармир блуре в Армении. К сожалению, точное количество найденных здесь экземпляров неизвестно, а рисунки и детализированая информация имеются только для некоторых колокольчиков. Согласно Пиотровскому, неизвестное количество маленьких колокольчиков было найдено в Помещении 12, расположенном в северной части нижних уровней крепости, наряду с другим многочисленным разнообразным материалом. Это была вероятно большое кладовое помещение, судя по большому количеству зерен, найденных внутри[31]. Также вероятно, что данные материалы попали в основание из верхего уровня, или же были размещены здесь во время осады, которая привела к окончательному разрушению крепости.

---

[27] Невозможно дать список известных колокольчиков из-за неопределнности чилса предметов, найденных на Кармир блуре.

[28] Seidl U., op. cit., p. 80.

[29] Salvini M., Corpus dei Testi Urartei (CTU) IV, Roma, 2012, B 9-29; Seidl U., op. cit., p. 115, fig. 87b.

[30] Seidl U., op. cit., p. 115, fig. 87c; CTU IV, B 8-22. Многие колокольчики были приобретены из антикварных магазинов. См. Seidl U., op. cit.: Minua (C.49, C.50), Argišti I (E.25, E.26), Sarduri II (F.186), Rusa I (H.4).

[31] Barnett R., Watson W., "Russian Excavations in Armenia", Iraq, 1952, № 14, p. 142; Пиотровский Б., Кармир-Блур I, Результаты раскопок 1939-1949, Е., 1950, с. 53.




Рис. 9. Колокольчики из Алишара (Пиотровский 2011: 543-544, рис. 3-7).

Очередной колокольчик был найден в Помещении 25, которое являлось кладовой с тремя колоннами и полуколоннами, построенными из кирпича-сырца, которые поддерживали верхний пол. Колокольчик (высота - 7.4 см) был изготовлен из бронзы с железным язычком[32]. Он имел продольное отверстие на одной стороне и был украшен горизонтальными бороздками (вероятно, рис. 8 f). Следующие четыре колокольчика были найдены в Помещении 36, являющимся одним и самых главных помещений с шестью дверными проемами, которые выходят к двум центральным блокам крепости. Относительно этих колокольчиков, только общая высота (11 см) и наличие железного язычка были зафиксированы (вероятно, рис. 8 g). Один из них, с вертикальным отверстием и надписью Менуа был также найден вместе с частями конской сбруи[33]. Еще один колокольчик, который находиться сейчас в Эрмитаже (Эрмитаж, Инв. No. K-399), имеет более округлую форму, отверстие в верхней части и петлю для его прикрепления (рис. 8 b). Он не украшен и имеет два симметричных отверстия для прикрепления язычка, который отсутствует (высота – 8.9 см, диам. – 7.2 см)[34].

---

[32] Barnett R., "Further Russian Excavations in Armenia", Iraq, 1959, № 21, p. 3-4; Пиотровский Б., Кармир-Блур II, Результаты раскопок 1949-1950, Е., 1952, с. 21.

[33] Barnett R., op. cit., p. 14-15; Пиотровский Б., Кармир-Блур III, Результаты раскопок 1951-1953, Е., 1955, с. 17, 43; CTU IV, B 5-3.

[34] Пиотровский Б., История и культура Урарту, С.-П., 2011, с. 643.

Колокольчик с надписью Сардури II[35] был найден в Помещении 48[36]. Это типичный восьмиугольный колокольчик с восемью квадратными отверстиями на гранях и четырьмя горизонтальными выпуклыми поясками, двумя на верхней части и двумя на нижней (рис. 8 а). Высота составляет 9.5 см, а диаметр – 6.1 см. Наличие отверстий в верхней части, может быть связано с системой закрепления язычка[37]. На двух других неопубликованных колокольчика, известных по опубликованным Урсулой Зайдл рисункам, имеются короткие надписи Аргишти I и Сардури II. Первый почти идентичен предмету с надписью Сардури, описанному выше[38]; его верхняя часть сломана, вследствие чего не видны следы скрепляющей части[39]. Второй имеет коническую форму с продолговатым отверстием на тулове (рис. 8 е) и схож с образцами из антикварных магазинов[40]. Необходимо отметить, что некоторые образцы, найденные на Кармир-блуре, датированные надписью царя, предшествовавшего Руса II, основателя крепости, могли быть выявлены в близлежащей крепости Эребуни[41].

---

[35] CTU IV, B 9-29, Ermitage, Inv. № K-400

[36] Пиотровский Б., Клинообразные урартские надписи из раскопок на Кармир-блуре 1954 г., Эпиграфика Востока, 1956, № 11, с. 82; Пиотровский Б., Урартские надписи из раскопок на Кармир-блура 1939-1958, Эпиграфика Востока, 1960, № 13, с. 108.

[37] Пиотровский Б., История и культура Урарту, ук. соч., с. 643.

[38] CTU IV, B 9-29; fig. 8d.

[39] Seidl U., op. cit, p. 115, fig. 87b.

[40] Seidl U., op. cit., p. 115, fig. 87c.

[41] По этому поводу см. также: Piotrovskij B., Il regno di Van (Urartu), Roma, 1966, p. 97.




Рис. 10. Колокольчики из Ереванского колумбария
(Есаян- Биягов – Амаякян- Канецян 1995: табл. 7.14-15)

Другая группа колокольчиков была выявлена из колумбария, найденного в 1859 году несколькими курдами в Алишаре, в современной Автономной Республике Нахичевань[42]. Колокольчики были найдены вместе с другими предметами (в числе которых были несомненно урартские), но только некоторые оказались в Эрмитаже[43]. Два колокольчика имеют типично урартскую восьмиугольную форму. На одном имеется короткая надпись Аргишти I[44] и он идентичен колокольчику Сардури II из Кармир блура, описанному ранее. Он отличается только размером, более короткий (высота 9 см, диам. 5.7 см). Второй колокольчик без надписи[45] вместо обычных восьми имеет десять граней и одно четырехугольное отверстие. Голова колокольчика украшена пятью смежными горизонтальными линиями. Высота колокольчика 11.8 см, а диаметр 8.3 см[46]. Третий колокольчик (Эрмитаж, Инв. No. S-330, рис. 9 c)

---

[42] Об обстоятельствах открытия и других материалах, найденных в погребении см. Piotrovskij B., Il regno di Van (Urartu), op. cit., p. 29, 44-45, 312.
[43] Пиотровский Б., История и культура Урарту, С.-П., 2011, с. 543-544.
[44] CTU IV, B 8-22; Ermitage Inv. No. S-331, fig. fig. 9a.
[45] Ermitage, Inv. No. S-329, fig. 9b.
[46] Пиотровский Б., История и культура Урарту, ук. соч., с. 543.

подобен круглым колокольчикам с гладкой поверхностью из Кармир блура (К-399). Высота данного образца составляет 9.9 см, а диметр – 8.5 см.

В похожем контексте так называемого ереванского колумбария были выявлены два колокольчика, схожие с образцами из Алишара (рис. 10)[47]. Один из них имеет классическую восьмигранную форму с пятью горизонтальными поясками и четырьмя квадратными отверстиями между вторым и третьим поясом[48] (высота 10 см, диам. – 7 см). Второй, достаточно поврежденный, имеет более округлую форму и не орнаментирован (высота -10 см, диам. - 6 см)[49].

Четыре колокольчика были выявлены во время раскопок крепости Бастам. В отличие от вышеописанных образцов, ни один из них не может рассматриваться в качестве типичного урартского. Один образец из Обербург-Миттельбурга (рис. 10 а) датируется средневековым периодом[50]. Остальные три были найдены в Погребении 4 в Остбау, которое, наряду с группой погребений датируется периодом поздней античности[51]. Один из них имеет бронзовое тулово и железный язычок внутри[52], а также орнаментирован подобно предметам из Шикаоха и Тли (рис. 5 B и C) с треугольными отверстиями, в некоторых случаях ассиметричными (рис. 10 b).

Поверхность другого колокольчика[53] имеет горизонтальные бороздки и отверстие в верхней части для прикрепления язычка (рис. 10 c). Колокольчик потерян и идентичен образцу из Алаверди (рис. 3 a), где де Морганом были раскопаны тысячи могильников во второй половине 1800-х гг. К сожалению, как и в случае большей части могильников, французский ученый не оставил детального описания раскопок и, следовательно, датировка данного колокольчика становиться невозможной. Погребения Алаверди в целом могут быть отнесены к периоду между XI и VII вв до н.э.

---

[47] Колумбарий и другие материалы, выявленные в нем, в целом датируются VIII в. и хранятся в музее Эребуни в Ереване. См. Есаян С., Биягов Л., Амаякян С., Канецян А., Биайнская гробница в Ереване, Е., 1991; Есаян С., Биягов Л., Амаякян С., Канецян А., Биайнская гробница в Ереване (2), Е., 1995, с. 55-79; Biscione R., Urartian Recent Discoveries in Armenia: The Columbarium of Yerevan, Studi Micenei ed Egeo-Anatolici (SMEA), 1994, № 34, p. 115-135.

[48] Biscione R., op. cit., p. 124, fig. 7.14.

[49] Biscione R., ., op. cit., p. 124, fig. 7.15.

[50] Bastam 74/56; Kroll S., Die Kleinfunde, in Kleiss W. (ed.), 1979. Bastam I. Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1972-1975, Berlin, 1979, S. 156, fig. 7.1.

[51] Kroll S., "Die Kleinfunde"..., 1 op. cit., S. 168.

[52] Bastam 74/60; Kroll S., "Die Kleinfunde" ..., op. cit., S. 156, fig. 18.1a, pl. 52.7.

[53] Bastam 74/60; Kroll S., "Die Kleinfunde"..., op. cit., p. 156, fig. 18.1b, pl. 52.6.

Последний колокольчик[54] украшен двумя горизонтальными выпуклыми поясками и имеет отверстие на верхней части для язычка (рис. 10 d). Благодаря сходству с некоторыми кавказскими образцами, вероятно, что большинство колокольчиков, найденных в данных погребениях, древнее периода поздней античности, предложенного Кроллом.




Рис. 10. Колокольчики из Бастама
(Kroll 1979: 156, abb. 7.1, 18.1a-b, 18.2).

Другие колокольчики были найдены во время незаконных раскопок в Восточной Анатолии. К сожалению ничего не известно о контекстах, в которых были найдены данные предметы, но по крайней мере мы знаем, где они были найдены. Два образца были выявлены из некрополя около Дизгинкале. Один из них является восьмигранным колокольчиком, с надписью Менуа (высота - 9.8 см, ширина - 8 см, толщина - 0.5 см)[55], деформированный, с сохранившимся язычком.

На надписи выгравирована голова быка, в честь которого был сделан колокольчик, являющийся частью царского инвентаря (рис. 11 a). Второй предмет также имеет восьмигранную форму, надпись Аргишти I. Язычок

---

[54] Bastam 74/64; Kroll S., "Die Kleinfunde" ..., op. cit., p. 156, fig. 18.2, pl. 52.4.

[55] Belli O., Van Bolge Müzesindeki Çivi Yazılı Urartu Tünç Eserleri, Anadolu Araştımaları, 1976-1977, № 4-5, p. 201-202, fig. 9.

отсутствует (высота – 9 см, ширина – 6.3 см, толщ. – 0.4 см)[56]. На этом колокольчике также имеется изображение головы быка в части, где находиться надпись (рис. 11 b). В нижней части тулова колокольчика конической формы из окрестностей Вана есть надпись Аргишти II (рис. 11 c). Этот колокольчик имеет высоту 8.8 см, ширину – 4.7 см и толщину – 0.3 см. Язычок отсутствует[57]. Последний образец был найден в рамках некрополя около Патноса и имеет типичную восьмигранную форму, с металлическим язычком внутри. Он имеет прямоугольные отверстия на гранях и горизонтальный поясок, на верхней части которого выгравирована голова козла[58]. Непосредственно над прямоугольными отверстиями находятся дополнительные горизонтальные пояски, очевидно украшенные резной геометрической орнаментацией зигзагообразных линий (рис. 11 d).




Рис. 11. Урартские колокольчики из Дизгинкале, Патноса и Вана (Belli 1976-1977: 198-205, рис. 8-11)

ВЫВОДЫ

На основе данных, представленных выше, только колокольчики, которые рассматриваются как типично урартские, имеют восьмигранную форму. Они отличаются от металлических колокольчиков Закавказья,

---

[56] Belli O., 1976-1977, op. cit., p. 203, fig. 10.
[57] Belli O., 1976-1977, op. cit., p. 204-205, fig. 11.
[58] Belli O., 1976-1977, op. cit., p. 198-199, fig. 8.

Северного Ирана и Ближнего Востока, и зачастую на них имеются клинописные надписи. Как уже было отмечено выше, колокольчики конической формы с отверстием также могут быть урартскими, так как схожие единичные образцы были найдены в курганах Келермеса, где другие находки также выявляют влияния урартского искусства.

Надписи на предметах подобного рода исчезают во время Русы II, когда также возможно, что производство металлических колокольчиков в общем значительно снизилось. Фактически, большинство раскопанных урартских памятников, таких как Кармир блур, Бастам, Кеф Калеси, Айанис и Топраккале, датируются VII веком; урартские колокольчики, датирующиеся периодом до VII века найдены только на Кармир блуре, но, как уже было отмечено, могли быть найдены на крепости Эребуни. Колокольчики из Бастама, с другой стороны, кажутся более тесно связанными с традицией металлообработки эпохи раннего железа местных культур Закавказья и Северо-западного Ирана.

Около одного века урарты производили серии восьмигранных колокольчиков весьма стандартной формы, не считая некоторых различий. Это были локальные варианты более широко распространенного "закрытого типа", который, вероятно, являлся общим наследием ближневосотчных культур на среднем этапе эпохи железа, и который урарты предположительно заимствовали посредством контактов с ассирийским миром. Они могли использоваться на крупном рогатом скоте и конях, ассоциируясь с царскими принадлежностями.

Другие предметы урартских памятников, описанные выше, имеют больше схожестей с колокольчиками кавказских и североиранских регионов. Колокольчики в форме "отрытой клетки" и колоколообразные подвески были широко распространены в Иранском Азербаиджане и на Закавказье в IX в., до пришествия урартов.

Ареал распространения этих колокольчиков расширяется с первой половины VIII века, когда урарты систематически совершали нашествия на земли к северу от реки Аракс.

Данные предметы получают более широкое распространение еще в VII в. до н.э., когда начинается возможная ассимиляция кавказцев в составе Урартского государства. Археологическое свидетельство этого предоставлено, например, последними открытиями Внешнего города Айаниса[59].

---

[59] Zimansky P., As Urartu Empire. Cultural Integration in the Kingdom of Van, in Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P. (eds.), 2012. Biainili-Urartu. The

Наличие данных предметов демонстрирует (наряду с другими характерными археологическими материалами) мощное влияние культуры Армянского нагорья на урартское бытование на Закавказье.

CASTELLUCCIA MANUEL
(UNIOR UNIVERSITY, ITALY)

DAN ROBERTO
(ISMEO, ITALY)

SOME REMARKS ON CAUCASIAN AND URARTIAN BRONZE BELLS

The aim of this contribution is to present a brief analysis of metal "bells", a category of metalworks objects which often recurs in archaeological contexts of Urartian and Caucasian cultures. Firstly, we will focus on the objects coming from controlled excavations, then take into account those items coming from the antiquary market and finally those bearing cuneiform inscriptions (only Urartians). After a short review of Near Eastern items, we will present, in two separate section, metal bells coming from the Caucasus area and those recovered within the Kingdom of Urartu. An analysis of these two different tradition, allow us to compare these artifacts in order to detect any possible presence of contacts and reciprocal influences between the two cultural regions.

Proceedings of the Symposium Held in Munich 12-14 October 2007, Acta Iranica 51, Leuven, p. 107-109.

ԿԱՐԱՊԵՏՑԱՆ ՎԱՐՍԵՆ
(ԵՊՀ)

ՀԱԶԱՐԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԵՐԸ)

Կենտրոնական Աֆղանստանի *Հազարաջաթ* (هزارجات) կոչվող շրջանում բնակվող այս ժողովուրդը հանդիսանում է երկրի բնակչության մեծամասնության թվով երրորդ ժողովուրդը փաշթուներից և տաջիկներից հետո: Նրանք դավանում են շիականություն՝ հարելով տասներկուականների (իսնաշարիների) շիական մազհաբին, ինչպես նաև որոշ մասը դավանում է իսմաիլիզմ, իսկ որոշ ցեղեր՝ սուննիականություն: Հազարաները խոսում են պարսկերենին մոտ հազարագի կոչվող բառբարով, որն իր մեջ պարունակում է որոշ մոնղոլական և թյուրքական բառեր[2]: Սկսած 19-րդ դարի սկզբներից գիտական գրականության մեջ ի հայտ են եկել հազարաների ծագման, նրանց էթնոգենեզի ձևավորման, ինչպես նաև հազարաների՝ իսլամ ընդունելու և հազարագի լեզվի ձևավորման հետ կապված տարբեր տեսություններ, որոնց հիմնական պատճառը, թերևս, պատմական ապացույցների բացակայությունն է և առկա տեղեկությունների ու աղբյուրների հակիրճ ու չհամախմբված լինելը:

Էմիր Աբդուրռահիմանի կենտրոնամետ բազմազգ իշխանության ստեղծման տարիներին հազարաները մյուս ոչ փաշթուական և ոչ սուննիականության հետևորդների նման ենթարկվել են հալածանքների ու հետապնդումների /որոնք մինչ օրս շարունակվում են հարևան սունիադավան փաշթունների կողմից/, որի հետևանքով վերջիններս

---

[1] Հազարա (هزاره) էթնոնիմը ծագում է իրանա-տաջիկական هزاره «hazara» (< պրսկ. هزار "hezar"/ հոգն. թ. هزارجات"hezarajat") բառից՝ Չինգիս խանի և նրա հետնորդների զինվորական ստորաբաժանումների անվանումից. այն մոնղոլական «ming», «mingan» (հազար) թվականի տաջիկերեն թարգմանությունն է:

[2] Grant F., "The Hazaras of Centrial Afghanistan" in the "Disaapearing People? Indigenous Groups and Ethnic Minorities in South and Centrial Asia", California, 2007, p. 155-156.

արտագաղթել են երկրի տարբեր հատվածներ և այլ երկրներ, մասնավորապես Պակիստանի հյուսիսային շրջանը՝ Քվվեթա շրջկենտրոնով, Իրանի Խորասան նահանգի Մաշհեդ շրջկենտրոն, ինչպես նաև այլ քաղաքներ: Գաղթօջախներ են ստեղծվել եվրոպական երկրներում, Կանադայում, ԱՄՆ, Ավստրալիայում[3]: Երկար տարիներ ապրելով մշակութային տարբեր միջավայրում՝ հազարաները կարողացել են յուրացնել օտար տարրը՝ պահպանելով իրենց մշակույթի առանձնահատկությունները:

Հատկանշական է, որ հազարաների մոտ մեծ կրոնական հակվածություն չի նկատվում: Սակայն սոցիալական առումով մեծ հարգանք են վայելում այսպես կոչված Սուրբ Ընտանիքից սերված *սեյյեդները*, որոնք ապրում են առանձին բնակավայրերում և իրենց համարում Մեքքայից եկածներ: Ամենայն հավանականությամբ նրանք իլսամի քարոզման ժամանակաշրջանում Հազարաջաթ եկած քարոզիչների սերունդներն են: Սեյյեդները ամուսնական հարաբերություններ են հաստատում միայն իրենց կլանների ու ցեղերի ներսում և դրանով կազմում էնդոգամ խմբեր: Սեյյեդի կոչումը փոխանցվում է ժառանգաբար: Հազարաները հավատում են, որ նրանք, շնորհիվ իրենց ծագման, օժտված են գերբնական ուժերով:

Հազարաների սոցիումում հաջորդ կրոնական խավը ներկայացնում են փիրերը, որոնք կան գրեթե բոլոր գյուղերում: Փիրի տրտղոսը ևս սերնդե սերունդ է փոխանցվում[4]:

Քերբալայները և Ջավվարները հազարաների մոտ մեծ հեղինակություն են վայելում: Քերբալա կատարած ուխտագնացությունը համարվում է մեծ Աստվածապաշտություն (Քերբալայները համարվում են Քերբալա՝ շիա սրբեր Հասանի ու Հուսեյնի դաբարանները ուխտագնացություն կատարած բնակիչները): Ջավվարները համարվում են նրանք, ովքեր ուխտագնացություն են կատարել Մաշհեդում գտնվող Իմամ Ռեզայի դամբարան: Այստեղ

---

[3] Համաձայն 2012 թ. Մարդահամարի՝ Աֆղանստանի հազարաների թիվը կազմում է մոտ 1.5 մլն մարդ: Իրանի և Պակիստանի հազարաները կազմում են 2 մլն մարդ, իսկ նրանց ընդհանուր թիվը աշխարհում կազմում է մոտ 6 մլն մարդ, www.Portalostranah.ru/view.php?id=238

[4] Mousavi S., The Hazaras of Afghanistan: An Historical, Cultural, Economic and Political Study, Curzon, 1998, p. 45-50.

գնում են նաև ոչ հարուստ հազարաները, սակայն զավվարան տիտղոսը շնորհվում է հիմնականում հարուստ խավի ներկայացուցիչներին:

Քվվեթայի հազարաների մոտ բացակայում է ցեղային ու տոհմական ընկալումը, և այնտեղի հազարաները ապրում են միայն ընտանիքներով: Սակայն Աֆղանստանում դեռևս շարունակվում է սոցիալական խավերի ցեղային տարանջատումը: Հազարաների մոտ ցեղախմբերը կոչվում են *"tayfe", "aymaq"* կամ *"aghale"* տերմիններով: Ընտանիքը ապրում է գերդաստանով, որը կոչվում է *"Khanivar"* կամ *"Khanavade"*: Հատկանշական է, որ հազարաները միմյանց հանդիպելիս կամ ծանոթանալիս հարցնում են ոչ միայն տվյալ անձի անունը, այլ նաև ցեղի, ենթացեղի և ապա տոհմի անունները[5]:

Նրանց սոցիալական ավանդություններին ու արարողակարգերին անդրադարձել են միայն որոշ հետազոտողներ (հարսանեկան և ամուսնական արարողակարգերը ներկայացրել են Ա. Ս. Մուսավին, Էլ. Է. Բեքոնը, Կ. Ֆերդինանդը և այլոք), իսկ առավել մանրամասն այս խնդիրն արծածված է Մոհամմադ Օութադոլաջամի թեքնածուական աշխատության մեջ, որը հիմնականում նվիրված է Պակիստանի Բալուջիսթանի հազարաների պատմական և ազգագրական նկարագրությանը:

Այսպես, Քվվեթայի հազարաների մոտ մեծ տեղ էր հատկացվում տղա երեխային, ում ծնվելու դեպքում մորը թանկարժեք նվերներ էին նվիրում (ոսկյա, արծաթյա զարդեր, հողի կամ ժառանգության սեփականության իրավունք, թանկարժեք հագուստ, ինչպես նաև խոստանում են տանել ուխտագնացության՝ Ղոմ, Մաշհեդ կամ Քերբալա քաղաքները), իսկ աղջիկ երեխա ծնվելու պարագայում նորածնի մայրիկին միայն շնորհավորում էին բարեհաջող ծննդաբերության կապակցությամբ: Իրանի և այլ երկրիների հազարաների մոտ կանայք ունեն ժառանգության իրավունք: Շիական իրավունքների համաձայն՝ նորածնի ծնվելուց հետո, ի տարբերություն Իրանի շիաների, որոնք այն նշում են նորածնի ծնվելուց 17 օր անց, մոլլան (հազարաների մոտ ընդունված էր նաև ընտանիքի տարեց

---

[5] Bacon El. E., OBOK: A Study in Social Structure in Eurasia, New York, 1958, p. 25-27.

անդամը՝ պապիկն կամ հայրիկը) երեխայի աջ ականջին *ազան*, իսկ ձախ ականջին *իքաման* է կարդում, որոնք համեմատաբար առաջին և երկրորդ աղոթքի հրավիրող կանչերն են: Նորածնի ծնվելուց հետո երրորդ օրը նրան օրհնում են՝ Հազրաթ Իման Հոսեյնի դրոշով, որի համար երեխային տանում են *իմամբարա*, իսկ առավել կրոնասերները տանը՝ հիմնական օջախի մոտ, ունենում են սուրբ անկյուն՝ նվիրված Իման Հուսեյնի "Ալամ"-ին, որի շուրջ մշտապես ծխեցնում են խունկ և անուշաբույր ծաղիկներ:

Հազարաների մոտ տարածված է ջիններին և ոգիների նկատմամբ հավատալիքները, որոնցից պաշտպանվելու համար հազարա կանայք, հատկապես հղի կանայք, մոլլայից օրհնություն են խնդրում, իսկ վերջինս, աղոթք կարդալով, նրանց է տալիս այծի մազից պատրաստված մի հյուսք, որը պետք է կախեն կնոջ սենյակում: Համարվում է, որ այս հյուսքը պիտի պաշտպանի իր տիրոջը ջիններից չար աչքից: Հազարաների մոտ տարածված է նաև Ալ կամ Ալբասթե չար ոգու նկատմամբ ունեցած հավատալիքները: Ըստ նրանց՝ այն հանդիսանում է ամենազորեղ չար ոգիներից մեկը. այն երկար վարսերով ու մինչև ոտքերը ձգվող կրծքերով կին է, ով կարող է հմայել մարդուն՝ ստիպելով վերջինիս կատարել իր կամքը: Նրան վռնդելու համար կանչում են հատուկ մոլլայի, ով հմայված մարդու բերանում է դնում օրհնված հյուսքը և աղոթքներ կարդալով՝ դիմում Ալիին: Նրանից խնդրում են հեռանալ հմայված մարմնից՝ փոխարենը վերցնելով նախապես առանձնացված այծին[6]:

Աֆղանստանի հազարաները հավատում են նաև այլ չար ու բարի ոգիների առկայությանը, որոնցից են դեվ-է փերիները և դեվ-է ֆարանդային, ինչպես նաև մի շարք պահապան ու մոգական պաշտպանիչ առարկաների[7]:

Հազարաների մոտ բավականին տարածում ունեն շիական սրբերի անունները, որոնցով հաճախ նրանք անվանակոչում են նորածնին:

---

[6] Owtadolajam (Oftaadeh-Jam) M., A Sociological Study of Hazara Tribe in Balochistan: An Analysis of Socio-Cultural Change, University of Karachi, PhD dissertation (1976), Quetta, Hazaragi Academy, 2006, p. 243-247.

[7] Кисляков Н., Першица А., Хазары, "Народы Передней Азии", М., 1957, с. 123-124.

Այսպես, երեխային անվանակոչելու համար հիմնական ուշադրություն է դարձվում ծննդյան օրվան, ամսվան և տարեթվին, որի ընթացքում հնարավոր է նշվեր որևէ կարևոր տոնական արարողություն, ինչին նվիրված էլ ընտրվում է երեխայի անունը: Այսպես, օրինակ, եթե երեխան ծնվել է ուրբաթ օրը, նրան անվանում են *"Jum'a Ali", "Ali Jum'a"*, կամ եթե նա ծնվել է Ռամադան կամ Սաֆար ամիսներին, նրան կոչում են *"Ramazan Ali", "Safar Mohammed", "Eid Mohammed"* և այլն: Շիական սուրբ ընտանիքի հետ ունեցած հազարաների սերտ կապի շնորհիվ սրբերի անունները հաճախ են տրվում հազարա երեխաներին: Տղա երեխաների համար տարածված նման անուններից են *"Qulam Mohammed", "Qulam Hossain", "Qulam Ali"* անունները, որոնք բավականաչափ տարածված լինելու պատճառով երբեմն իրարից տարբերելու նպատակով նախքան անունը տրվում են որոշ մականուններ, օր. *"Surkh" (կարմիր), "Lang" (կաղ), "Qij" (կույր), "Xadim" (ծառա), "Faghir" (աղքատ)* և այլն: Աղջիկներին հիմնականում անվանակոչում են *"Fatima", "Zahra"*, որոնք սբ. Մուհամմեդ մարգարեի աղջիկների անուններն են, ինչպես նաև *"Zainab", "Ruqqaya"* հազրաթ Հոսեյնի աղջկա և քրոջ անուններով:

Մուսուլմանական աշխարհին յուրահատուկ մեկ բավականին կարևոր տոնակատարություն *"Aqeeqah" (عقيقة)*, ևս նշում են հազարաները: Դրա ընթացքում տեղի է ունենում նորածին երեխայի մազերի կտրումը և նրա պատվին կազմակերպված զոհաբերությունը: Սովորաբար երկու ոչխար զոհաբերում են տղա երեխայի համար, և մեկ ոչխար՝ աղջիկ երեխայի համար: Այս տոնակատարության ժամանակ երեխայի ծնողները զոհաբերվող ոչխարի մսից չեն ուտում, իսկ մյուս հրավիրվածները պարտավոր են այնպես ուտել, որպեսզի ոսկորները չդիպչեն ատամներին: Հակառակ դեպքում, ըստ ժողովրդական հավատալիքների, դրանք կջարդվեն: Իսկ տոնակատարության վերջում զոհաբերված ոչխարների ոսկորները թաղում են հողի մեջ:

"Kamar bandi" (<հազ. کمربندی "գոտի կապելը") արարողությունը հազարաները նշում են տղա երեխայի մեկ ամսականից մինչև մեկ տարեկան հասակն ընկած ժամանակահատվածում: Ընտանիքի կողմից հարգված մի տարեց մարդ, աղոթքներ կարդալով, երեխային գոտի է հագցնում՝ այդպիսով օրհնելով նրան իր ապագա ողջ կյանքի համար: Այս տարեց մարդը երեխայի համար այլևս համարվում է *"Peerzada"*

(<պրսկ. "لایز" "ծերունի", "տարեց մարդ"): Քամար-բանդիից հետո մի քանի օր անց երեխայի հագուստը հեռացնում են տնից, իսկ երեխան պարտավորվում է իր չափահաս տարիքում Փիրզադային վճարել իր Ղոմը՝ իր եկամուտի 1/5-րդ մասը: Այս սովորույթը Քվվեթայի հազարաներին անծանոթ է, սակայն այն լայնորեն տարածված է Խորասանի հազարաների շրջանում:

"Khatna" (<հազ. "ختنه" թլպատում") արարողակարգը կատարվում է ժամանակակից հիվանդանոցներում՝ բժիշկների օգնությամբ: Այն անց են կացնում տղա երեխայի 6 տարին լրանալուն պես:

Հարսանեկան արարողակարգերը:

Հազարաներն ունեն ամուսնության հետ կապված մի շարք արարողակարգեր, որոնցից ամենակարևորներից է *"Hina bandan" (<հազ. "حنا بندن" հնա կապելը/դնել")* արարողությունը, որը, ըստ ամենայնի, փոխառություն է պակիստանցիներից: Այն տեղի է ունենում հարսանիքից մեկ օր առաջ, որի ժամանակ տղան ձեռքին հինա է պահում, իսկ ընկերներն ու հարազատները, այն վերցնելով, շնորհավորում և բարեմաղթանքներ են հղում զույգին: Այս ընթացքում հարսնացուն ձեռքում հնարավորինս ամուր մի բուռ հինա է պահում, այնպես, որ տղան չկարողանա բացել: Եթե նա այնուամենայնիվ բացում է աղջկա ձեռքը, ապա ըստ Բալուչիսթանի հազարաների՝ ընտանիքում նա գերիրշխող դիրք կունենա, իսկ եթե ոչ՝ կինը կիշխի ամուսնու վրա: Համաձայնության ու պայմանգրի կնքման *(պրսկ. "عقد ازدواج" ամուսնական պայմանագիր")* արարողակարգն ու հարսանիքը նախկինում միասին էին նշում, սակայն Իրանի հազարաները այժմ աղդը ավելի շուտ են անցկացնում, որի հետ միաժամանակ տեղի է ունենում նաև "خواسته بازی" */"Khasta Bazi"* -ին՝ երկու կողմերի բարեկամների միմյանց հետ ծանոթությունը[8]:

Հարսնացուին նախքան հայրական տնից դուրս հանելը, ապագա այր ու կինն երեք անգամ պտտվում են հարսնացուի տան շուրջ, որով, ըստ հազարաների, ստանում են վերջինիս ծնողների օրհնությունն ու բարեմաղթանքները: Մինչ տնից դուրս գալը, փեսայի ընկերները

[8] Owtadolajam (Oftaadeh-Jam) M., նշվ. աշխ., էջ 249-251:

ջանում են որևէ փոքրիկ իր գողանալ հարսնացուի տնից՝ համոզված լինելով, որ հարսնացուի իմաստությունը իր հետ կգնա նոր օջախ:

Արդեն ամուսնու տանը հարսնացուին ներկայացնում են ընտանիքի բոլոր անդամներին, որոնք, առաջին անգամ տեսնելով վերջինիս դեմքը, նրան նվերներ են տալիս ու շնորհավորում: Այս կարգը կոչվում է *"Roo didani" (<պրսկ. ديدنی رو "դեմքը տեսնելը")*:

Հազարաների մոտ տարածված են "کوشایی پ"/*"Pa Kushai"* կամ *"Pawazi"*, ինչպես նաև "خانه مبارکی"/*"Khana Mubaraki"* արարողակարգերը, որոնց ընթացքում տեղի է ունենում հարսնացուի ծանոթությունը իր ամուսնու ընկերների հետ: Հարսանիքից անմիջապես հետո հաջորդ օրը նորապսակների ընկերներն ու բարեկամները գնում են նորապսակներին շնորհավորելու, որը և կոչվում է Խանա Մուբարաքին, իսկ երեք օր անց նրանց են հրավիրում պաշտոնական ընթրիքի /Փա Քուշային/, որով հարսին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալ և մտերմանալ շրջապատի հետ[9]:

Աֆղանստանում բնակվող հազարաներից "չոր այմաք" ցեղերի մոտ ամուսնությունները տեղի են ունենում հիմնականում ցեղի անդամների՝ *"toyfa" (<հազ. "ցեղ", "կլան")* միջև՝ ի տարբերություն Բալուչիսթանի հազարաների, որոնք իրենց աղջիկներին չեն ամուսնացնում իրենց ցեղի երիտասարդի հետ: "Չոր այմաքի" շրջանում տարածված բնույթ են կրում ոչ հարազատ քույրերի և եղբայրների միջամուսնական կապերը, որոնց ժամանակ ամուսնական "կալըմ"-ը քչացնում են կամ ընդհանրապես վերացնում: Մինչև բուն ամուսնական արարողակարգը, փեսայի ու հարսի հայրերը միմյանց հետ փոխանակվում են շալերով, որի ընթացքում տղայի հայրը շալի վրա դրված մի քիչ գումար է փոխանցում աղջկա հորը, որից հետո նախապես պատրաստված շաքարը բաժանում են ներկաների միջև: Այս արարողակարգը հայտնի է *"Kantyshkeni" (<հազ. "շաքարի բաժանում")* անվամբ[10]:

Հարսանիքից մոտ մեկ տարի առաջ նշում են *"Fatakhuni"*-ին *(< հազ. "ֆաթհայի կարդալը"< "fatah" "Ղուրանի առաջին գլուխը")*, որի ժամանակ տեղի է ունենում կալըմի՝ աղջկա ու նրա ընտանիքին

---

[9] Owtadolajam (Oftaadeh-Jam) M., նշվ. աշխ., էջ 251-252:

[10] Кисляков Н., Першица А., նշվ. աշխ., էջ 121:

հատկացված գումարի որոշումը: Սրանից երեք օր անց տղայի կողմի իգական սեռի բարեկամները հարսի տուն են տանում սփռոցի մեջ փաթաթած քաղցր հաց և այն ներկաներին բաժանելով և կրկին հրաժարվելով թեյասիրությունից՝ խնդրում են նվազեցնել կալըմը, որը ևս մի քիչ սակարկվում է: Այս սովորույթը կոչվում է *"Surfayi riza" (<հազ. "համաձայնության սփռոց")*: Վերջին արարողակարգը թե հազարաների և թե նրանց հարևանությամբ ապրող ջամշիդների մոտ հանդիսանում է, այսպես կոչված, կանացի տոնակատարություն: Ճատախունիի ժամանակ կանայք հավաքվում են ուշ երեկոյից սկսած, իսկ տղամարդիկ գալիս են միայն տոնակատարության բուն օրը:

Աֆղանստանի արևմտյան հատվածի հազարաների մոտ հարսանիքը, որ կոչվում է *"tuy"*, նշվում է ֆաթախունիից մեկ տարի անց: Կանայք հավաքվում են առանձին չոպպարներում և սկսում պարել թմբուկի /շամանական դափի/ ձայների ներքո, իսկ տղամարդիկ հավաքվում են գյուղի կենտրոնական հատվածում և հյուրասիրությունից հետո գրեթե ողջ գիշերվա ընթացքում պարում են, ձեռնամարտ բռնում և նայում դերասանների խաղերը: Վերջինս համարվում է հազարաների մոտ ժողովրդական թատրոնի ձևավորման վաղ օրինակներից մեկը: Հարսանիքի ընթացքում *"Luti"-ին (<հազ. لوطی "ծաղրածու")* և նրա մի քանի օգնականները, որոնք ցուցադրում են փոքր իմպրովիզային ներկայացումներ, ուր գլխավոր դերակատարությունը պատկանում է ծաղրածուին:

Հաջորդ օրվա առավոտյան տղամարդիկ կազմակերպում են ձիավարության մրցումներ: Հարուստ հարսանիքների ժամանակ հաղթողները մրցանակներ են ստանում՝ անասունների հոտ, հագուստ, գումար: Այնուհետև մեկ այլ հյուրասիրություն է կազմակերպվում, որից հետո հավաքված հյուրերը գնում են:

Հարսանիքի օրը հարսնացուին օգնում է հագնվել հարուստ, շատ երեխաներ ունեցող և "երջանիկ կին": Այդ ընթացքում մեծ յուրտայում (վրանում) հավաքվում են մոլլան, բարեկամները և հարգարժան հյուրերը: Հարսնացուից իմանալով իր *"վաքիլի"* (وکیل *"ներկայացուցիչի")* անունը՝ մոլլան երեք անգամ դիմում է նրան և փեսային՝ հարցնելով վերջիններիս համաձայնությունը: Այնուհետև աղոթք է կարդում և օրհնում փեսային: Վերջինիս տանում են հարսնացուի տան մոտ, ում առաջնորդում են համախոհներն ու

առջևում պարող կանայք: Փեսան հարսնացուին հանում է հայրական տնից, օգնում նստել ձիու կամ ուղտի վրա: Այդ ընթացքում նորապսակներին օրհնում են՝ նրանց վրա արծաթյա մետաղադրամներ, չամիչ և քաղցր թխվածքաբլիթներ նետելով:

Այրի կամ բաժանված կնոջ հետ ամուսնանալու դեպքում հարսանիք չեն կազմակերպում: Հազարաների մոտ տարածված սովորության համաձայն՝ այրին միանգամից դառնում ամուսնու փոքր եղբոյր կինը: Եթե նա երեխաներ ունի, ապա ցանկության դեպքում կարող է այլևս չամուսնանալ և շարունակել ապրել իր երեխաների հետ ամուսնու եղբոր տանը: Ընտանիքում հազարա կինը ունի բավականին ցածր դիրք, թեպետ և տղամարդուց ավելի շատ է աշխատում: Նրանց ավելի քիչ ժառանգություն է հասնում, իսկ եթե նա ամուսնու մահից հետո կամենում է ամուսնանալ օտար տղամարդու հետ, ապա կինը զրկվում է նույնիսկ այդ փոքր ժառանգությունից, իսկ երեխաները մնում են ամուսնու հարազատների տանը[11]:

Շիական օրենքներով թույլատրելի ժամանակավոր ամուսնությունը (*"Seeghah"*) գրեթե բացակայում է հազարա ժողովրդի մոտ: Եվ չնայած նրան, որ իսլամը ներառում է բազմակնության գաղափարը, նրանք բացառում են այն, և համաձայն հազարաների՝ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում իրենց կանանց ու աղջիկների նկատմամբ:

Հուղարկավորման արարողակարգերը

Հազարաների մոտ հուղարկավորումը և մահացյալի դին հողին են հանձնում շիական օրենքներին համապատասխան: Ապա գերեզմանից վերադառնալով մահացյալի տուն՝ նրանք պարտադիր անցնում են խնկի և այլ անուշաբույր խոտաբույսերի ծխի միջով, ինչով համարվում է, որ նրանք մաքրվում են գերեզմանի չար ուժերից: Եվ միայն դրանից հետո է նրանց թույլատրվում անցնել տան օջախի շեմով: Հատկանշական է, որ նման ծիսակատարություն էին անում նաև Չինգիսխանի ժամանակներում, երբ նրա դեղին վրանի երկու կողմում տեղադրված այուների վրա շամանները մշտապես վառ էին պահում կրակը, և յուրաքանչյուր ոք, մինչ վրանը մտնելը, անցնելով այուների

---

[11] Кисляков Н., Першица А., նշվ. աշխ., էջ 121-122:

միջով, մաքրվում է չար ուժերից ու մտքերից և նոր միայն հայցում Մեծն Խանի ուշադրությանը:

Հուղարկավորումից հետո տեղի է ունենում *"Sar-e gileem shishto"* *(բոց.* ՝ < ششتۀ گلیم سر *"գորգի վրա նստած")* արարողակարգը, որի ժամանակ մահացյալի ավագ որդին երեք օր շարունակ նստած է մնում հատուկ գորգի վրա, իսկ նրա հարազատներն ու բարեկամները վառված մոմերով մոտենում են նրան, հայտնում իրենց ցավակցությունները և Սուրբ Գրքից աղոթքներ արտասանում: Եթե ցավակցության են գալիս կանայք, գորգի վրա նստում է իգական սեռի ներկայացուցիչ՝ կինը, մայրը կամ աղջիկը: Ընտանիքում արական սեռի բացակայության պարագայում գորգի վրա նստում է ամենամոտ բարեկամներից որևէ այլ տղա: Երրորդ օրվա երեկոյան տոհմի կամ ցեղի մեծամեծերից մեկը մոտենում է գորգին նստածին, հայտնում իր ցավակցությունները և խորհուրդ տալիս վերադառնալ ներկայիս կյանք՝ հաշտվելով Ամենաբարձյալի կամքի հետ:

Ցավակցության եկած հյուրերին հազարաները միայն մեկ բաժակ թեյ են մատուցում՝ ի տարբերություն հնդկական և պակիստանյան սովորույթներին, որոնք մի ամբողջ ճաշկերույթ են կազմակերպում այս կապակցությամբ: Մահացյալի ընտանիքի համար այս երեք օրվա ընթացքում ուտիք են պատրաստում մոտ բարեկամներն ու հարևանները, ինչը հազարաները կոչում են نان غاقلی *"nan-e agheli"* կամ *"zarkhor"* (պրսկ.՝ <"ճիշտ, խելացի հաց"): Մահացյալի 7-րդ, 10-րդ և 40-րդ օրերին կազմակերպվում է Ղուրանի ընթեցանություն՝ ի պաշտպանություն մահացյալի հոգու անվտանգության: Յոթերորդ օրը բարեկամների ու հարևանների հետ միասին գնում են գերեզմանոց, որտեղ նրանց մատուցվում է կարագով հաց, որոշ դեպքերում նաև հալվա կամ այլ քաղցրավենիք, որոնք բաժանում են տեղի աղքատներին: Շատ դեպքերում արդեն քաղցրավենիքի, իսկ երբեմն նաև հագուստի փոխարեն գումար են տալիս[12]:

Վերը նշված հիմնական սոցիլական ինստիտուտների նկարագրությունը ցույց է տալիս, որ հազարա ժողովուրդը, դարեր շարունակ ապրելով այլ ազգի ներկայացուցիչների հարևանությամբ, վերցրել է այդ ազգերին ու բնակավայրերին բնորոշ ավանդություններն

---

[12] Owtadolajam (Oftaadeh-Jam) M., նշվ. աշխ., էջ 273-279:

ու սովորությունները: Այնուամենայնիվ, նրա սոցիալական նկարագրի մեջ դեռևս արտացոլվում են մոնղոլական որոշ արարողակարգերի ու սովորույթների տարրեր, որոնք ցույց են տալիս նրանց նախնիների հետ ունեցած սերտ կապը: Հատկանշական է, որ ներկայիս հազարաների սոցիալական ինստիտուտները կառուցված են իսլամական մշակույթին հատուկ ոգով, սակայն, թերևս դեռ չկան կատարված լուրջ ուսումնասիրություններ նրանց տարբեր ազգերից ունեցած մշակութային փոխառությունների վերաբերյալ:

KARAPETYAN VARSEN
(YSU)

THE SOCIAL CHARACTERISTIC OF HAZARA PEOPLE (THE SOCIAL STRUCTURE AND RITUALS)

Hazaras are Mongolian faces and Iranian speaking people, who live in the Central part of Afghanistan, Pakistan, Iran and other western countries.

All their culture is based on the Islamic conception of the word, which has its reflection in the formation of social institutes and social orders.

"The Social Characteristic of Hazara People" comprises the general nature of social classes and social rituals, such as marriage, birth of baby, funeral and other ceremonies connected with them, and also there is talking about same national believes and rituals.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ
(ԱԻ)

ԱՐԱԲԱ-ԽԱԶԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՂՎԱՆՔՈՒՄ 7-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Արաբական զորքերի՝ խազարների հետ բախվելու առաջին հիշատակությունը վերաբերում է 643-645 թթ.: Արաբ զորահրամանատար Աբդ ար-Ռահման իբն Ռաբիան, գրավելով Աղվանքը, ընդհուպ մոտենում էր Դերբենդին[1]: Ատ-Թաբարիի և Իբն ալ-Ասիրի վկայության համաձայն, նախքան նշված արշավանքը, Բուքայր իբն Աբդալլահ ալ-Լայսի գլխավորությամբ արաբական մեկ զորամաս արդեն հասել էր Դերբենդ (ալ-Բաբ): Սուրակա իբն Ամրուի ընդհանուր հրամանատարությամբ գործող արաբական զորքը դեպի Դերբենդ ուղևորվեց իբն Ռաբիայի գլխավորությամբ[2]: Արաբական ռազմական լրացուցիչ ուժերի՝ հարավկովկասյան տարածաշրջան կատարած արշավանքի փաստից ելնելով կարելի է ասել, որ առաջին զորաբանակը անհաջողության էր մատնվել:

Օմար խալիֆի կողմից դեպի հյուսիս շարժվող արաբական զորքերի ընդհանուր հրամանատար Սուրակային տրված գլխավոր հանձնարարականը Կովկասի և Մերձավոր Արևելքի համար ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Դերբենդի ամրություններին (ֆուրաջ ալ-բաբ) տիրանալն էր: Արաբական զորաջոկատների՝ Դերբենդին մոտենալուն պես տեղի սասանյան կայազորի հրամանատար ու նաև քաղաքացիական իշխանություն

---

[1] Տե՛ս Якуби, История, текст и перевод с арабского проф П. К. Жузе, Издание О-ва обследования и изучения Азербайджана, Баку 1927, с. 5. Հմմտ. Տեր-Ղևոնդյան Ա., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. 16, Ե., 2005, էջ 476, 478:

[2] Տե՛ս Chronique de Abou Djafar Mohammed ben Djarir ben Yezid Tabari, Chapitre LXV, p. 273. Իբն ալ-Ասիր, Թարգմանություն բնագրի, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Արաբական աղբյուրներ, Բ, Ե., 1981, էջ 48-49:

ունեցող Շահր-Վարազը (Շահրիար) ինքն է դիմում արաբներին՝ հովանավորության խնդրանքով: Պարսից աստիճանավորը խնդրում է միայն պահպանել իր իշխանությունը և չավելացնել հարկերը[3]: Ըստ Իբն ալ Ասիրի, Շահրիարը հնազանդվելով, դիմել է արաբ զորահրամանատարին, թե «Ես ընդհանուր ոչինչ չունեմ Կովկասի բնակիչների և հայերի [Հայաստանի] հետ»[4]:

Դեպի Դերբենդ արշավանքից կարճ ժամանակ անց այնտեղ մահանում է արաբական զորախմբի հրամանատար Սուրական և վերջինիս պարտականությունները փոխանցվում են Աբդ ար Ռահմանին[5]: Դերբենդի հպատակեցումով արաբները կանգ չառան: Արաբական զորքը Դերբենդից ուղևորվեց դեպի հյուսիս՝ Բալանջար, որը 7-րդ դ. երկրորդ կեսին արդեն հանդիսանում էր խազարական պետության մի մասը: Շահր-Վարազն ամեն կերպ փորձեց տարհամոզել արաբներին՝ ետ կանգնելու արշավանքը շարունակելու գաղափարից՝ պնդելով, որ ռազմական ընդհարման հետևանքով ինքը կընկնի խազարների հարվածների տակ: Դեպի Բալանջար արաբների արշավանքի վերաբերյալ ևս աղբյուրները տարբեր տեղեկություններ են հաղորդում: Մասնավորապես, Ատ-Թաբարին հիշատակում է, որ արաբներին ոչ միայն հաջողվում է գրավել Բալանջարը, այլև շարունակել արշավանքը հյուսիսային, ապա արևելյան ուղղությամբ՝ հասնելով Վոլգայի ստորին հոսանքի ավազանին[6]:

Մեկ այլ տեղեկության համաձայն՝ արաբները Բալանջարում պարտություն են կրում: Այնտեղ նույնիսկ զոհվում է Աբդ ար-Ռահմանը, իսկ կենդանի մնացած զինվորներին Բալանջարից

---

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Իբն ալ-Ասիր, էջ 49

[5] Իբն ալ-Ասիր, էջ 49-50:

[6] Տե՛ս Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari, cum aliis ed. M. J. de Goeje, prima series, Ludguni Batavorum-E. J. Brill, 1893, p. 2667. Տե՛ս Chronique de Abou Djafar Mohammed ben Djarir ben Yezid Tabari. Traduite sur la version persane d'Abou-'Ali Mo'hammed Bel'ami, d'après les manuscrits de Paris, de Londres et de Canterbury, par M. Hermann Zotenberg, tome quatrième, Nogent-le-Rotrou, Imprimerie de A. Gouverneur, 1867-1874, M DCCC LXXIV, Chapitre LXV, p. 274.

հազիվհազ կարողանում է հեռացնել վերջինիս եղբայր Սալմանը[7], որը նույնպես մասնակցում էր արշավանքին: Հստակություն գոյություն չունի դեպի Դերբենդ կատարված արաբական առաջին արշավանքի թվագրման հարցում: Մ. Արտամոնովը ենթադրում է, որ արաբական արշավանք է տեղի ունեցել 644 թ., որի արդյունքում էլ հաստատվել է արաբների տիրապետությունը Դերբենդում[8]: Ա. Նովոսելցևը կարծում է, որ «640 թ. առաջին կեսին հաջողված պատերազմներից հետո արաբները հարկադրված էին ժամանակավորապես հեռանալ Արևելյան Անդրկովկասից և հետո կրկին հնազանդեցնել այն»[9]: Այդուամենայնիվ, պետք է ասել, որ խոսքը, հնարավոր է, միևնույն արշավանքի մասին է՝ թվագրված տարբեր տարիներով:

Արաբական տիրապետությունը Կովկասյան լեռներից այն կողմ պատմական այդ ժամանակահատվածում երկար չտևեց[10], քանի որ արդեն 662 թ.-ով է թվագրվում խազարական հերթական արշավանքը դեպի Հարավային Կովկաս՝ մասնավորապես Աղվանք:

Խնդիրն այն էր, որ խալիֆայությունում ընթացող միջդինաստիական պայքարի հետևանքով նկատելիորեն թուլացել էր արաբական ներկայությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Ստեղծված վիճակից փորձեցին օգտվել ինչպես հայերը, այնպես էլ Աղվանից երկիրը: 656 թ. արաբական գերիշխանության դեմ ապստամբություն բարձրացրեց 654 թ. հայոց իշխանի պաշտոնն ստանձնած Համազասպ Մամիկոնյանը[11]: Ապստամբությունը հաջողությամբ պսակվեց, քանի որ խալիֆայությունը տեղում անհրաժեշտ ուժեր չուներ այն ճնշելու համար:

Նշված ժամանակաշրջանում Բյուզանդիայի կայսր Կոստանդ 2-րդը զբաղված էր Իտալիայում մղվող պատերազմներով: Ուստի, Բյուզանդիան ևս հարկադրված էր ժամանակավորապես հաշտվել

---

[7] Տե՛ս նույն տեղում, ИБн Ал Асир, Полный свод истории, Тарих ал камиль, книга 5, -vostlit.info/texts/rus/Athir_2/text1.phtml?id= 7966.

[8] Տե՛ս Артамонов М., История хазар, Л., 1962, с. 179.

[9] Новосельцев А., Хазарское государство и его роль в истории Восточной Европы и Кавказа, М., 1990, с. 174.

[10] Тер-Гевондян А., Армения и Арабский Халифат, Е., 1977, с. 50.

[11] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 173:

տարածաշրջանում իր դիրքերի թուլացման փաստի հետ, ինչից, անշուշտ, փորձելու էին օգտվել նախ և առաջ խազարները:

Ժամանակագրական առումով խազարական արշավանքը դեպի Հարավային Կովկաս համընկնում է արաբների՝ Կովկասյան լեռներից հյուսիս բնակվող ալանների դեմ 662-663 թթ. տեղի ունեցած կռիվների հետ[12]: Հիշատակության արժանի է նաև այն հանգամանքը, որ բյուզանդական կողմի հետ հարաբերությունները կարգավորելով հանդերձ, Աղվանից իշխան Ջուանշիրը մեկնեց խալիֆայի մոտ՝ վերահաստատելու իր հավատարմությունը խալիֆայությանը: Փաստորեն, կարելի է պնդել, որ նշված շրջանում ալանների դեմ արաբների մղած պատերազմը և խազարների՝ Աղվանք կատարած արշավանքը մեկ ընդհանուր համաձայնության հատվածներն են կազմել. այսինքն, տվյալ դեպքում գործ ունենք արաբների դեմ ուղղված խազարա-ալանական համագործակցության փաստի հետ:

Վերոգրյալ արշավանքի ձախողումով խազարների նկրտումներն այս երկրամասի նկատմամբ չդադարեցին: «Մինչ արի Ջվանշիրը խաղաղորեն գահակալում, և մյուս տարին լրանում էր ձմեռային օրահավասարը, - գրում է Կաղանկատվացին, - հոների թագավորը բազմահազար հեծյալներով եկավ Աղվանքի վրա»[13]: Այս տեղեկությունից հետո պատմիչն առանց որևէ բացատրության ներկայացնում է, թե ինչպես հոների թագավորը (իմա՝ խազարների) հանկարծ մտափոխվում է և հանդիպում խնդրում Ջուանշիրից: Այդ արշավանքը թվագրվում է 664 թ.-ով: Ջուանշիրի և խազարների առաջնորդի միջև տեղի ունեցած բանակցություններն ավարտվում են դաշինքով, որն ամրապնդվում է Աղվանից իշխանի անդրանիկ որդու և խազարական արքայադստեր ամուսնությամբ[14]: Այդ դաշինքը, որը ենթադրում էր խազարների՝ թեկուզև անվանական գերակայություն, երկուստեք ձեռնտու էր: Դրանով խազարներն առավել ամուր էին հաստատվում Հարավային Կովկասում, իսկ Աղվանից իշխանը

---

[12] Տե՛ս Chronique de Abou Djafar Mohammed ben Djarir ben Yezid Tabari, Chapitre LIXV, p. 271, ИБн Ал Асир, Полный свод истории, Тарих ал камиль, книга 5,- vostlit.info/texts/rus/Athir_2/text1.phtml?id= 7966.

[13] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969, Գլ. ԻԶ, էջ 148:

[14] Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., Գլ. ԻԶ, էջ 149:

փորձում էր ապահովագրել իր իշխանությունը արաբների և, հնարավոր է նաև, բյուզանդացիների ոտնձգություններից: Այդուհանդերձ, Ջուանշիրը հարկադրված է լինում այս համաձայնագրից հետո այցելել նաև Դամասկոս և այնտեղ նոր խալիֆ Մուավիային հավաստել իր հնազանդությունը: Ըստ ամենայնի, խազարների հետ համագործակցությունը վրդովել էր խալիֆային, սակայն վերջինս, առժամանակ չունենալով համապատասխան հնարավորություն, ստիպված էր բավականանալ Աղվանից իշխանի հնազանդության միայն պաշտոնական ձևակերպումներով: Հավանական է, որ Ջուանշիրի սպանության գործում արաբները ևս մասնակցած լինեն: Դա կարող էր առիթ տալ խազարներին՝ կրկին Աղվանք ներխուժելու համար: «Այդ նույն ժամանակ հոների զորավար ու մեծ իշխան Ալփիլիթվերը վերցրեց իր բազմաթիվ զորքերը և ....ասպատակեցին Աղվանքը Կովկաս մեծ լեռան ստորոտներով, Կապաղակի գավառի ավաններով, որպես թե Ջվանշիրի արյան դիմաց վրեժխնդիր են լինում»[15]: Աղվանքի պատմության հետազոտող Հենրիկ Սվազյանը Ջուանշիրի մահվան տարեթիվը նշում է 683 թ.[16]: Ալեքսան Հակոբյանը Ջուանշիրի մահվան թվական ճշգրիտ նշում է 680 թվականը (637-680 թթ.)[17]:

Չնայած Մ. Կաղանկատվացին կոնկրետ թվականներ չի նշում, սակայն Վարազ-Տրդատ իշխանի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունը, մեր կարծիքով ունի հստակ թվագրություն՝ 684 թ.[18]: Դրանից առաջ նշվում է Սահակ կաթողիկոսի մոտ ուղարկված պատվիրակության մասին: Ակնհայտ է, որ Ջուանշիրը վերոհիշյալ իրադարձությունից շատ ավելի վաղ էր վախճանվել:

Կաթողիկոս Եղիազարին և Աղվանից նոր իշխան Վարազ-Տրդատին հաջողվում է հաշտություն կնքել խազարների հետ: Խազարները փորձում էին ետ պահել Աղվանից իշխանությանը արաբական

---

15 Նույն տեղում, Գլ. ԼԶ, էջ 180:

16 Տե՛ս Свазян Г., История страны Алуанк, Е., 2009, с. 282.

17 Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 278; նույնի՝ Աղուանից իշխանների ժամանակագրությունը է դարի վերջին – Ը դարի սկզբին, «Հանդէս ամսօրեայ», ՃԺԸ տարի, Վիեննա, 2004, էջ 267-292:

18 Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., Գլ. ԼԹ, էջ 184:

հովանավորությունից: Աղվանից նոր իշխանն, այնուհանդերձ, չէր կարող զերծ մնալ արաբական գերիշխանությունից. «Սրանից հետո արաբների հզոր և արքայակերպ իշխանից (տվյալ դեպքում խոսքը Մուավիայի մասին է) գերագույն պատիվ է ընդունում՝ (Վարազ-Տրդատը) լինելու իշխան արևելքի վրա, կառավարելու Աղվանքի ամբողջ թագավորությունը, Ուտիքի գավառը...»[19]:

Փաստորեն ստեղծված պայմաններում Աղվանից իշխանությունն ստիպված էր ընդունել թե՛ արաբների, թե՛ խազարների գերիշխանությունը: Մուավիայի մահը (680 թ.) նոր իրադրություն ստեղծեց ողջ Մերձավոր Արևելքում: Օգտվելով խալիֆայությունում ծայր առած երկպառակություններից՝ նույն թվականին փաստացի ինքնուրույնություն ձեռք բերեցին Հայաստանն ու Աղվանքը, սակայն Մուավիայի մահից հետո ձևավորված իրավիճակը ենթադրում էր նաև խազարական գործոնի ակտիվացում: Ահա այդ ժամանակ և՛ հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի, և՛ Վարազ Տրդատի հիմնական մտահոգությունը խազարներից սպասվող վտանգն էր: 680-ական թթ. սկիզբը հարավկովկասյան գոտում նշանավորվեց խազարական արշավանքներով, որոնց փորձում էին միասնական ուժերով դիմագրավել Հայոց և Աղվանից իշխանները: Այդ առումով Աղվանից Մեծ Կողմանք գավառի Իսրայել եպիսկոպոսի այցը Վաղարշապատ հստակ քաղաքական նպատակներ է ունեցել, քանի որ դրան հաջորդել է նույն եպիսկոպոսի այցը Խազարիա 681-82 թթ.[20]: Մ. Կաղանկատվացին հստակ մատնանշում է Վարազ Տրդատի մոտ տեղի ունեցած խորհրդակցության թվականը. «...գոռոզ Մահմադի՝ հարավի թագավորության վաթսուներկուերորդ տարում»[21], որը, ըստ Հիջրի թվագրման, համապատասխանում է 681-682 թթ.:

Այնուհետև, ըստ պատմիչի, եպիսկոպոսը մեկնում է Չոր-Դերբենդ, որտեղից էլ անցնում է խազարների մայրաքաղաք Վարաչան[22]: Մ. Արտամոնովը Վարաչանը համարում Բալանջար գավառի կենտրոն և

---

[19] Նույն տեղում, Գլ. ԼԷ, էջ 182:

[20] Տե՛ս Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 50:

[21] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., Գլ. ԼԹ, էջ 184:

[22] Տե՛ս Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 50:

տեղադրում է ժամանակակից Դաղստանի Սուլակ գետի ներքին հոսանքի երկու ափերին[23]:

Ըստ Մ. Կաղանկատվացու՝ պատվիրակությունը բավական ջերմ ընդունելության է արժանացել, ինչին հաջորդել է խաքանի կողմից քրիստոնեություն ընդունելու վերաբերյալ պատումը. «Որովհետև մեծագահ բարեմիտ իշխան Ալփ-իլութվերը.....(ասում է) Արդ՝ իսկությամբ հավատում ենք, որ Տերը սրա միջոցով մեզ ուղարկեց իր շնորհների միսիթարությունը, որպեսզի մեզ ազատի խավարային գործերից»[24]: Խաքանը նաև խնդրել է հայ իշխաններին իր մոտ թողնել Իսրայել եպիսկոպոսին, որպեսզի վերջինս թեմ հիմնի Խազարիայում:

Խազարների հետ խաղաղ գոյակցություն ապահովելու Հայկական կողմի նախաձեռնությունը դրական արդյունքի չի հանգեցնում: 685 թ. խազարական բանակը ներխուժում է Հայաստան: Տեղի ունեցած ճակատամարտում հաղթանակ են տանում խազարները: Զոհվածների թվում էր նաև Հայոց իշխանը, իսկ խազարները «ասպատակ սփռելով մեր Հայոց աշխարհը՝ բազում գավառներ և ավաններ գրավեցին, ապա վերցնելով ավարը և գերյալներին՝ գնացին իրենց երկիրը»[25]:

Բացի ավարառուական նպատակից, այն նաև բյուզանդա-խազարական դաշնակցության մի հերթական, յուրօրինակ ցուցադրություն էր: Ակներևաբար, արշավանքը կատարվել է բյուզանդացիների դրդմամբ, ինչի մասին վկայում է այն, որ չանցած մեկ տարի՝ 686-687 թթ. բյուզանդական բանակը Լեոնտիոս զորավարի ղեկավարությամբ ավարառուական արշավանք կատարեց Հայաստան և բազմաթիվ գերիներով վերադարձավ Բյուզանդիա[26]:

680-ական թթ. Հայաստանը ստիպված էր պայքարել երեք խոշոր պետությունների դեմ՝ փորձելով ետ մղել նրանց հարվածները: Իրենց հերթին, այդ երեք երկրները՝ Բյուզանդիան, Արաբական խալիֆայությունը և Խազարական խաքանությունը, ի վիճակի չէին անցնելու Հայաստանի սիստեմատիկ գրավման ծրագրերին:

---

[23] Տե՛ս Артамонов М., История хазар, с. 200.

[24] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., Գլ. ԽԱ, էջ 193:

[25] Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1982, Գլ. Ե, էջ 27:

[26] Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 52:

Իրադրությունը փոխվեց 680-ական թթ. վերջերին, երբ Հուստինիանոս 2-րդը 689 թ. ներխուժեց Հայաստան, գրավեց այն և Հայոց իշխան նշանակեց Ներսեհ Կամսարականին: Բյուզանդացիները գրավեցին նաև Վրաստանն ու Աղվանքը: Բյուզանդական այս նվաճումները ծայր տվեցին արաբա-բյուզանդական նոր հակամարտությանը: 692 թ. Հուստինիանոսի արշավանքը արաբների դեմ ձախողվեց՝ կայսրության համար ունենալով ծանր հետևանքներ: Հայոց նոր իշխան Սմբատ Բագրատունին ստիպված էր ճանաչել խալիֆայության գերիշխանությունը: Բյուզանդացիները ևս այդ ժամանակամիջոցում չէին կարող լուրջ գործողություններ ձեռնարկել Հայաստանում: Միայն 698 թ. նոր կայսր Տիբերիոս 3-րդի զորքերը ներխուժեցին Հայաստան:

Այն հանգամանքը, որ Հայաստանը և Աղվանքը շարունակում էին պահպանել իրենց փաստացի անկախությունը, երևում է հայոց իշխան Սմբատ Բագրատունու՝ բյուզանդացիների դեմ համառ դիմադրությունից[27]: Բյուզանդական բանակները ստիպված էին հեռանալ Հայաստանից: Այնուհետև սկսվեց արաբների կողմից Հայաստանի վերջնական նվաճման գործընթացը:

HOVHANNISYAN LIANA
(IOS)

THE FIRST ARABIC-KHAZAR COLLISIONS AND THE POLITICAL SITUATION IN ARMENIA AND AGHUANK IN THE SECOND HALF OF VII CENTURY

This article is about the first Arabic-Khazar collisions and the political situation in Armenia and Aghuank in the second half of the VII century. Evidences about the first Arabic-Khazar collisions date them at 643-645. Though information about Arabic raids is contradictory, we can assume that Arabs have captured Derbent and Balangar cities and had established their power over them. Arabic domination on the other side of the Caucasus

---

[27] Տես Ղևոնդ, նշվ. աշխ., գլ. Զ, էջ 29:

Mountains had not lasted long in that historical period, as the next Khazar raids on Southern Caucasus, especially on Aghuank took place in 662.

The paper goes on discussing the relationships between Armenia and its neighbors' raids up until the demise of the Byzantine troops from Armenia as well as new Arabic attacks.

ՄԵՖՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ «ԹԱԶՔԻՐԱԹ ԱԼ-ՄՈԼՈՒՔ» ԵՎ «ԴԱՍԹՈՒՐ ԱԼ-ՄՈԼՈՒՔ» ԱՇԽԱՏՈՒԹՑՈՒՆՆԵՐԻ

«Թազքիրաթ-ալ-մոլուք» և «Դասթուր-ալ-մոլուք» աշխատությունները Մեֆյան Պարսկաստանի պետակառավարման կառույցը ներկայացնող ամենից կարևոր աշխատություններից են:

Մեֆյան թագավորները ղեկավարման համար մշակել էին յուրահատուկ գործելաոճ, որը գործում էր երկրի ամբողջ տարածքում: Պարսիկ հետազոտող Դանեշ Փաժուհը անդրադառնալով «Թազքիրաթ-ալ-մոլուք»ի և «Դասթուր ալ-մոլուք»ի ստեղծման պատճառներին բացատրում է, որ «նմանօրինակ գրքերի կազմումը տարածված է եղել Մեֆյան իշխանության սկզբնավորման ժամանակաշրջանից ի վեր: Ընդունված է եղել համակարգի առանձնահատկությունների նկարագրման համար կազմել նմանատիպ աշխատություններ և յուրաքանչյուր գահակալի օրոք դրանք գրվել են գահակալող շահի անունից»[1]:

Զույգ երկերում լավագույն կերպով պահպանվել է տվյալ կարևոր պատմական ժամանակաշրջանի վարչական կառուցվածքը, արքունական պաշտոնները, հասարակության մեջ եղած բաժանումները, արհեստները, ուր մատնանշումներ է կատարվել ժամանակի տնտեսական գործունեությանը, որում բացատրվում են մարզերի հաքիմների (իշխանների) պարտականությունները, խոսվում նրանց եկամուտների շուրջ, ուր նաև տեղեկություններ են պահպանվել երկրի զինվորական ուժերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ

---

[1] Դանեշփաժուհ Մոհամմադ Թաղի, Դասթուր ալ-Մոլուքէ Միրզա Ռաֆիա վա Թազքարաթ ալ-Մոլուքէ Միրզա Սամիա, Մանբա զաբան վա ադաբիատէ դանեշքադէհէ ադաբիաթ վա օլումէ էնսանի, շոմարիէ 63 վա 64 մորդադ, 1347/1968, Թեհրան, էջ 484 (պարսկերեն լեզվով):

վիճակագրություններ: Նմանօրինակ տեղեկությունների այլ աղբյուրներում չեն հանդիպում:

Սեֆյան Պարսկաստանի վարչական պատմության վերաբերյալ հետազոտության տեսանկյունից սկզբնաղբյուրների շրջանակում, կարևոր արժեք է ներկայացնում XVIII դարում աֆղան Աշրաֆի հրամանով Սեֆյան Պարսկաստանի վարչական կառույցի ծալքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամիայի միջոցով պատրաստված «Թազքիրաթ ալ-մոլուք» աշխատությունը[2]:

1930-ական թվականներին Սեֆյան Պարսկաստանի պատմության ուսումնասիրության նախակարապետները հանդիսացան Վալտեր Հենիթսը և Վլադիմիր Մինորսկին: Նրանք եղած աղբյուրների ժամանակագրության հիման վրա վերլուծության ենթարկեցին տվյալ ժամանակաշրջանի պատմությունը, որի արդյունքում 1936 թվականին Վալտեր Հենիթսը հրատարկեց իր «Պարսկաստանի ազգային պետության կազմավորում»-ը վերնագրով աշխատությունը, այնուհետև Մինորսկին հրատարակեց իր «Սեֆյան Պարսկաստանի վարչական կառույց»-ը աշխատությունը[3]:

1943 թվականին «Թազքիրաթ-ալ-մուլուք»-ի Մինորսկու կատարած ուսումնասիրությամբ դրվեց Սեֆյան Պարսկաստանի վարչական պատմության գիտական ուսումնասիրությունների հիմքը:

Սեֆյան Պարսկաստանի պետակառավարման կառույցի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Նասրոլլահ Ֆալսաֆին, որի ուսումնասիրությունները հրատարակվել են հոդվածաշարի եղանակով, ինչպես նաև արևմտաեվրոպական գիտնական Վիլեմ Ֆլորը, ով հրատարակել է «Սեֆյան Պարսկաստանի վարչական ինստիտուտները[4]» գիրքը:

---

[2] Մինորսքի Վ., Սազմանէ էդարի հոքումաթէ Սաֆավի(եա թալիղաթէ Մինորսքի բար Թազքարաթ ալ-Մոլուք), Թեհրան, 1378/1999, էջ 9-10 (պարսկերեն լեզվով):

[3] Միուրի Ռաջեր, Թահղիղաթի դար թարիխէ Իրանէ ասրէ Սաֆավի(մաջմուէ մաղալաթ), թարջոմէ: Աբասալի Ղաֆարիֆարդ/Մոհամմադ Բաղերէ Արամ, Թեհրան, 1382/2003, էջ 326 (պարսկերեն լեզվով):

[4] Willem Floor, Safvid Government Instiutions, Mazda publishers, Costa Masa, California 2001, p. IX.

«Թազքիրաթ ալ-մոլուք»-ը կարևոր աղբյուր է կրոնական կառույցների ուսումնասիրության դիտանկյունից: Կրոնական պաշտոնների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ նրա մեջ պահպանված բացատրությունները հակիրճ են, սակայն բավականաչափ լուսաբանող: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գիրքը գրվել է Սեֆյան հարստության անկման ժամանակաշրջանում, քանի որ դիվանական պաշտոնների բաժանումների մեջ նշվում է մոլլաբաշի պաշտոնը, որը ձևավորվել է միայն Սեֆյան Շահ Սուլթան Հուսեյնի[5] գահակալության վերջին տարիներին:[6]

Սեֆյան Պարսկաստանի պետակառավարման կապակցությամբ գոյություն ունի մի այլ արժեքավոր աշխատություն ևս «Դասթուր ալ-մոլուք» անունով, որը առաջին անգամ Դանեշ Փաժուհի աշխատասիրությամբ պարբերաբար հրատարակվել է Թեհրանի պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետի պարբերականի մեջ: «Դասթուր ալ-մոլուք»-ի հեղինակը եղել է Մուհամեդ Ռաֆի Անսարին կամ Միրզա Ռաֆիան, որը գիրքը պատրաստել է Շահ Սուլթան Հուսեյնի[7] ժամանակաշրջանում և նրա անունից: Միրզա Ռաֆիան ունեցել է Մուսթուֆի ալ մամալեքի[8] պաշտոն:

«Դասթուր ալ-մոլուք»ի բովանդակությունը ժամանակաշրջանի հասարակական և տնտեսական ժառանգության և քաղաքակրթության արժեքավոր տեղեկատու աղբյուր է, որում մատնանշված կարևոր խնդիրներից կարելի է թվարկել հետևյալ կետերը.

---

[5] Սեֆյան հարստության վերջին Շահը,(1694/1722) թթ:

[6] Միրզա Ռաֆիա, Դասթուր ալ-Մոլուք, բէ քուշեշ վա թասհիհէ Մոհամմադ Էսմայիլէ Մարչինքովսքի, թարջոմէ: Ալի ՔորդԱբադի բա մողադամէ Մանսուրէ Սէֆաթ Գոլ բէ սէֆարէշէ մարքազէ ասնադ վա թարիխէ դիփլոմասի, Թեհրան, Վեզարաթէ ոմուրէ խարէջէ, մարքազէ չափ վա էնթէշարաաթ, 1385/2006, մողադամէ ավալ, էջ 9 (պարսկերեն լեզվով):

[7] 1694-1722 Սեֆյան հարստության վերջին շահը:

[8] Մոսթուֆի ալ մամալեքը աշխատում էր Վազիր ազամի անմիջական հսկողության տակ, Ալիջահ Մոսթուֆի ալ մամալեք-ը համարվում էր հարկային նախարար, որ իրականում հաշվապահական վերահսկիչի աշխատանք էր կատարում, նա նաև կազմում էր երկրի բյուջեն:

ա.Աշխատությունը հանդիսանում է Սեֆյան Պարսկաստանի պետա-կառավարման կառուցվածքի համապարփակ տեղեկագիր.

բ.Աշխատությունը անդրադարձ է կատարում ղեկավարման կառույցի գործընթացների վերաբերյալ, որոնք են՝

- Երկրի անվտանգության.
- Տնտեսության և երկրագործության վիճակի բարելավման.
- Երկրի ղեկավարման և վարչական գործընթացի.
- Զինվորական կառույցի և նրա աստիճանակարգության.
- Երկրի քաղաքական աշխարհագրության նկարագրության.
- Կարևոր և օգտակար տեղեկություններ է փոխանցում ժամանակաշրջանի պաշտոնների և աշխատանքների, ինչպես նաև նրանց եկամուտների և տնտեսական իրավիճակի շուրջ.
- Ընդգրկում է օգտակար մանրամասներ այդ պաշտոնների և զանազան աշխատանքների վերաբերյալ:[9]

Հարկավոր է նշել նաև, որ վերջին շրջանում այդ երկու աշխատություններից զատ, մի այլ կարևոր գիրք ևս երևան է եկել և շրջանառության մեջ դրվել: Գիրքը հրատարակվել է Դոկտ. Եուսեֆ Ռահիմլուի ջանքերով, 1992 թվականին Թավրիզի և Մաշհադի «Ֆիրդովսու» անվան համալսարանների համատեղ ջանքերով ու հրատարակչությամբ, որը կոչվում է «Սեֆյան սուլթանների ժամանակաշրջանի պաշտոնների անվանումները և վարձատրությունները[10]»: Դոկտ. Ռահիմլուի կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն գրքի հեղինակը Միրզա Ալինաղի Նասիրին է, որը Շահի մաջլեսնեվիսն[11] է եղել: Մատնանշելի է, որ գիրքը ամբողջությամբ չի պահպանվել, ու նրա սկզբնական բաժնի էջերից որոշ հատվածներ պակասում են, որոնք դեռևս անհայտ են մնում:

---

[9] Դանեշփաժուհ Մոհամմադ Թաղի, Դասթուր ալ-Մոլուքէ Միրզա Ռաֆիա վա Թազքարաթ ալ-Մոլուքէ Միրզա Սամիա, Մանբա զաբան վա ադաբիատէ դանեշքադէհէ ադաբիաթ վա օլումէ էնսանի, շոմարհէ 63 վա 64 մորդադ, 1347/1968, Թեհրան, էջ 484, 495, 504 (պարսկերեն լեզվով):

[10] Միրզա Ալի Նաղի Նասիրի, Ալղաբ վա մավաջէբէ դորէ սալաթինէ Սաֆավի, Թասհիհէ Դոքթոր Յուսէֆէ Ռահիմլու, Էնթեշարաթէ դանեշգահէ Ֆրէդոսի Մաշհադ, 1371/1992:

[11] Մաջլէսնէվիս (պրսկ. ناوس مجلس)՝ քարտուղար:

Գրքի յուրահատկությունը մյուս երկու աշխատությունների համեմատությամբ կայանում է նրանում, որ նախապես նշված երկու աղբյուրները հիմնականում անդրադառնում են պաշտոններին և աշխատանքներին, տվյալ աշխատության մեջ կատարվում է արժեվորումներ պաշտոնը կրող անհատների և նրանց ժամանակաշրջանի ու իրավիճակի վերաբերյալ: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ հեղինակը պաշտոնի բացատրությունը սկսում է ներկայացնել այն կրողի անվան մատնանշումով: Բնականաբար այդ աշխատության մեջ ևս գոյություն ունեն կարևոր տվյալներ, որոնք «Թազքիրաթ ալ-մոլուք»-ի և «Դասթուր ալ-մոլուք»ի նյութերի հետ վերցրած կազմում է մի ամբողջություն, որը օգտակար կարող է հանդիսանալ ժամանակաշրջանի պաշտոնների կապակցությամբ առավել ճշգրիտ բացահայտումներ կատարելու համար:

Ջույգ աշխատությունների բովանդակությունը իրար հետ համեմատելով կարելի է եզրակացնել որ երկուսն էլ պատրաստվել են միևնույն հիմքը ունեցող մայր աշխատությունից, որ հավանաբար եղել է ավելի ծավալուն: Երկուսի մեջ գոյություն ունեն հատվածներ, որ նկատելի չէ մյուս աշխատության մեջ, սակայն դա պատճառ չի դառնում որպեսզի կարևորությամբ ուշադրությունից անտեսվի որևէ մեկը: Լեզվական առումով ևս կարելի է ասել, որ երկու գրքերի մեջ օգտագործվել են թե թրքական և թե մոնղոլական բառապաշարներից, նաև առկա է այն տեսակետը, որ այս երկու աշխատությունների պատրաստման հիմնական պատճառը բացի երկրի պետակառավարման համակարգի հսկման, նաև հետապնդում էր այդ կառույցների գործառույթները ավելի բարձր մակարդակի հասցնելու նպատակ:

Համեմատելով երկու գրքերի նախաբանները նկատելի են որոշ տարբերություններ: «Դասթուր ալ-մոլուք»ի հեղինակը գրքի նախաբանը նվիրում է ժամանակի Շահին և հանդես գալիս մի քանի բանաստեղծություններով, սակայն «Թազքիրաթ ալ-մոլուք»-ը սկսվում է շատ կարճ գոհաբանությամբ առ ամենակարող տիրոջ Աստծուն, իսլամի Մարգարեին ու նրա ընտանիքին, որից հետո «Թազքիրաթ ալ-մոլուք»-ի հեղինակը՝ Միրզա Սամիան, անմիջապես առանց ժամանակի իշխանավորների մասին հիշատակություն կատարելու

անցնում է գրքի բուն թեմային ուր մատնանշում է, որ իր հեղինակած գիրքը պատրաստվել է պատվերով:

«Դասթուր ալ-մոլուք»ի մեջ պակասում է վերջաբանը, որի մասին նախապես հեղինակի կողմից նշվել էր գրքի նախաբանում, գիրքը ավարտվում է միանգամից, այն ինչ «Թազքիրաթ ալ-մոլուք»-ը իր մեջ պարունակում է ծավալուն վերջաբան, ուր տվյալներ են ներկայացվում երկրի վիլայեթների եկամուտների և ծախսերի ինչպես նաև ռազմական և հասարակական կառույցների ղեկավարների եկամուտների շուրջ:

«Թազքիրաթ ալ-մոլուք»-ը կազմված է առաջաբանից, հինգ գլուխներից և վերջաբանից, այն ինչ «Դասթուր ալ-մոլուք»-ը կազմվել է առաջաբանից և վեց գլուխներից առանց վերջաբանի, որը երկու գրքերի ներքին բաժանումների գլխավոր տարբերությունը կարելի է համարել:

«Թազքիրաթ ալ-մոլուք»-ի հեղինակը գիրքը երկու գլխավոր հատվածների է բաժանել վարչական պաշտոնների բացատրության և տնտեսական թեմաների, սակայն «Դասթուր ալ-մոլուք»-ի մեջ նմանօրինակ բաժանում գոյություն չունի:

«Դասթուր ալ-մոլուք»-ում ավելի շատ մանրամասնություններ են ներառվել և տեղեկությունների մի հատվածը նվազ կարևոր կառույցների մասին է, օրինակ խոհանոցների, որոնց վերաբերյալ «Թազքիրաթ ալ-մոլուք»-ի մեջ նշումներ չենք նկատում, այդ առումով կարելի է եզրակացնել, որ «Դասթուր ալ-մոլուք»ը արժեքավոր տեղեկություններ է պարունակում ժամանակաշրջանի հասարակության ստորին խավերի վերաբերյալ:

«Դասթուր ալ-մոլուք»ի մեջ գրքի գլուխների բաժանումները թվով ավելի շատ են, սակայն «Դասթուր ալ-մոլուք»ի մեջ ևս գոյություն ունի բաժիններ, որոնք «Թազքիրաթ ալ-մոլուք»-ում առանձին գլուխներով են ներկայացվել, որը սակայն այստեղ մեկտեղվել են:

Մատնանշելի է այն փաստը, որ «Դասթուր ալ-մոլուք»-ում ևս «Թազքիրաթ ալ-մոլուք»-ի օրինակով կրոնական պաշտոնների և աստիճանակարգության մասին նյութեր են պահպանվել, սակայն «Թազքիրաթ ալ-մոլուք»-ի համեմատ «Դասթուր ալ-մոլուք»-ում պահպանված տեղեկությունները կրոնական պաշտոնների և տեղեկությունների վերաբերյալ ավելի ծավալուն են, ուր տեղեկություններ կան կրոնական կառույցների և նրանց եկամուտների

կապակցությամբ, որի մասին նյութերի չենք հանդիպում «Թազքիրաթ ալ-մոլուք»-ի մեջ:

Կրոնական պաշտոններից «Խալիֆաթ ալ-խոլաֆա[12]»-ի պաշտոնը մեկն է այն պաշտոններից, որ երկու աշխատությունների մեջ ևս նրա մասին անդրադարձ կա: «Թազքիրաթ ալ-մոլուք»-ում այս պաշտոնի մասին գոյություն ունի ընդամենը վեց տող բացատրություն, իսկ «Դասթուր ալ-մոլուք»ի մեջ չորս տող, որը հիմնականում վերաբերում է «Խալիֆաթ ալ-խոլաֆա» պաշտոնի և նրա նշանակման պատճառներին ու իրավասություններին:

«Դասթուր ալ-մոլուք» և «Թազքիրաթ ալ-մոլուք» զույգ գրքերի առաջին գլուխների պաշտոնների բաժանումների և նրանց անվանումների վերաբերյալ առավել ճշգրիտ պատկերացում կազմելու և եղած հիմնական տարբերությունները ավելի նկատելի դարձնելու համար աղյուսակի մեջ ներկայացնում ենք երկու գրքերի առաջին գլուխներում նշված պաշտոնները.

Գլուխ առաջին Կրոնական Պաշտոններ			
Համար	Պաշտոնների անվանումներ	Դասթուր ալ-մոլուք	Թազքիրաթ ալ-մոլուք
1	Մոլաբաշի	✓	✓
2	Սեդարաթէ Խասէ և Ամմէ	✓	✓
3	Մոթվալիէ արամգահէ Էմամ Ռեզա դար Մաշհադ	✓	-

[12] Ալիջահ Խալիֆաթ ալ խոլաֆայի (պրսկ. خلیفه الخلفا) աշխատանքը իրականում, մի կենտրոն կամ գրասենյակ էր, ուր զբաղվում էր սուֆիներին վերաբերող հարցերի կարգավորմամբ: «Թազքիրաթ ալ-մոլուք»-ը մի շարք կարևոր հանգամանքներ է հաղորդում, որ Խալիֆաթ ալ խոլաֆան համարվում էր Շահի ուսուցիչը և տեղակալը, քանի որ սուֆիները հիմնականում ղըզըլբաշ ցեղից էին, ուստի Խալիֆաթ ալ խոլաֆան ընտրվում էր այդ ցեղից: Նա վիլայեթներում ուներ իր ներկայացուցիչները, այսպիսով շահի համար հնարավոր էր դառնում Խալիֆաթ ալ խոլաֆայի միջոցով երկրի տարածքում վերահսկել սուֆիների գործողությունները, նույնիսկ նրանց, որոնք բնակվում էին Օսմանյան կայսրության տարածքներում: Մինորսքի Վլադիմիր, Սազմանէ էդարի հոքումաթէ Սաֆավի(եա թալիղաթէ Մինորսքի բար Թազքարաթ ալ-Մոլուք), Թեհրան, 1378/1999, էջ 103,104,105,106 (պարսկերեն լեզվով):

Գլուխ առաջին Կրոնական Պաշտոններ			
Համար	Պաշտոնների անվանումներ	Դասթուր ալ-մոլուք	Թազքիրաթ ալ-մոլուք
4	Մոթվալիէ արամգահէ Հազրաթէ Մասումէ դար Ղոմ	✓	-
5	Մոթվալիէ արամգահէ Շահէ Աբդոլազիմ դար Թեհրան	✓	-
6	Մոթէվալիաթէ մազարաթէ Սաֆավիյէ դար Արդաբիլ	✓	-
7	Շեյխոլ իսլամէ Դարոլսալթանէ Էսֆահան	✓	✓
8	Ղազիէ Դարոլսալթանէ Էսֆահան	✓	✓
9	Ղազիէ Ասաքերէ Էսֆահան	✓	✓

Ինչպես վերը գտնվող աղյուսակում է ներկայացվել, երկու գրքերի առաջին գլխի բաժինները միմյանց հետ համեմատելով նկատվում է, որ աղյուսակի 3,4,5 և 6-րդ բաժինները կրոնական այն պաշտոններն են, որոնք ուղղակիորեն առնչվում են շիա դավանանքին այդ գլուխներում նշված պաշտոնները հիմնականում վերաբերում են Մաշհադ, Ղոմ, Թեհրան և Արդաբիլ քաղաքներում գտնվող շիա դավանանքի սրբավայրերի աշխատանքները տնօրինող պաշտոնյաներին, որը բնականաբար «Թազքիրաթ ալ-մոլուք»-ում նկարագրված պաշտոնների ցանկում չեն ներգրավվել այն պարզ պատճառով, որ տվյալ գիրքը պատրաստվել է Պարսկաստան ներխուժած առնի դավանանքին հետևող աֆղանների[13] պատվերով, այսպիսով հասկանալի է դառնում երկու գրքերի առաջին գլուխների հիմնական տարբերությունների հիմնական պատճառը:

Եզրակացություն

«Թազքիրաթ ալ-մոլուք» և «Դասթուր ալ-մոլուք» աշխատությունները Սեֆյան պետականավարման կառույցի ուսումնասիրության դիտանկյունից շատ կարևոր տեղ են զբաղեցնում:

---

[13] Աշրաֆ աֆղանի հրամանով 1726 թվականին:

Նրանց բովանդակությունը ամբողջությամբ վերաբերում են երկրի պետակառավարման կառույցի պաշտոնակարգության նկարագրությանը: Թեմային վերաբերող աղբյուրները չեն սահմանափակվում միայն նշված աշխատություններով, քանի որ այդ կապակցությամբ կարելի է տեղեկություններ գտնել նաև այլ պատմական աղբյուրներում, որոնց մեջ ևս պահպանվել են արժեքավոր նյութեր:

Նշված աղբյուրների մեջ մատնանշված տեղեկությունները օգտակար են, ուր համապարփակ կերպով հնարավոր է դառնում տեղեկանալ Սեֆյան Պարսկաստանի պետական կառույցներին և նրանց ղեկավարման ներքին խոհանոցին: Այսպիսով Սեֆյան ժամանկաշրջանից պահպանված պետակառավարման աղբյուրների քանակից և նրանց բազմազանությունից, կարելի է եզրակացնել որ սեֆյան իշխանավորները ինչպիսի կարևորությամբ էին հետևում երկրի կառավարման գործընթացին:

MESHKANBARIANS JILBERT
(YSU)

THE ADMINISTRATIVE SYSTEM OF PERSIA AT SAFAVID ERA ACCORDING TO "TADKERAT AL-MOLUK" AND "DASTUR AL-MOLUK" MANUALS

"Tadkerat al-moluk" and "Dastur al-moluk" both manuals provide information on the administration, system and social conditions in Persia at Safavid era. Also both manuals have the same information with some differences. They are the only two surviving administrative manuals from the end of the Safavid period.

In fact the numbers of this kind of manuals shows the importans of control and management process for Sefavid rulers.

ԵՆԻՉԵՐԻՆԵՐ. ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՑՈՒՆՆԵՐՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Միջնադարի հզոր միապետություններից մեկի՝ Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականության հաջողությունը, թերևս ռազմական կառույցի յուրօրինակությունն էր:

Օսմանյան իշխանության գոյության սկզբնական շրջանում նրա ռազմական ուժը կազմում էր ողջ ցեղը: Նվաճողական քաղաքականության մեջ էրթողրուլը (ուջ բեյի 1231-1281 թթ.) և Օսմանը (ուջ բեյի 1281-1300 թթ., բույուք/մեծ/ ուջ բեյի 1300-1324 թթ.)[1] հաջողությունների հասան առաջին հերթին օգտագործելով իրենց ցեղի՝ օղուզական քայը[2] ցեղի ուժը:

Օսմանի որդի Օրհանի (1324-1362 թթ.) բանակը բաղկացած էր հեծելազորի երեք ինքնուրույն ստորաբաժանումներից, որոնք գլխավորապես զինված էին նետ ու աղեղով: Սակայն նոր նվաճումներ իրականացնելու համար միայն հեծելազոր ունենալը բավական չէր: Ստեղծվում են փիադե կամ յայա, այսինքն՝ հետևակային, և մյուսելլեմ[3] ու աքընջը[4] կոչվող ուժեր, որոնք ապահովել են Օրհան բեյի և Մուրադ I-ի նախնական հաջողությունները:

---

[1] Öztuna Y., Osmanlı Devleti Tarihi, İstanbul, 1986, s. 438.

[2] Օղուզական քայը ցեղը բնակություն է հաստատել ներկայիս Էսկիշեհիրի շրջանում, Հայաստանի Սովետական Հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 4, Ե., 1978, էջ 254:

[3] Օրհանի ժամանակաշրջանից սկսած մյուսելլեմ անունը տրվում է հարկերից ազատ զինվորներին: «Մյուսելլեմ» արաբերեն նշանակում է ազատ: Զուլալյան Մ., «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, - «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1959, 2-3, էջ 248:

[4] Առաջ է եկել թուրքերեն աքըն բառից, որը նշանակակում է հետախուզություն, աքընջը նշանակում է աքըն գնացող զինվոր՝ ասպատակ: Զուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 248:

Օսմանյան որոշ պատմագիրներ ենիչէրական զորաբանակի ստեղծման պարագաները նկարագրելիս, տեղեկացնում են, թե յայա զորքը աչքի էր ընկնում իր վերին աստիճանի անկարգապահությամբ, ինչը ստիպել է Մուրադ I կազմավորել նոր բանակ (ենի չերի)[5]:

Ենիչէրական զորամիավորումը ձևավորվել է Մուրադ I (1362-1389 թթ.) կառավարման առաջին տարիներին Քազասկեր Չանդարլը Քարա Հալիլի և Քոնիայի մոլլա Ռյուսթեմի առաջարկով[6]: Թուրք պատմաբան Ի. Ուզունչարշըլըն նշում է, որ փաղիշահին ուղեկցող ուժերից հետևակային զինվոր համարվող ենիչէրական զորամիավորումը հիմնադրվել է 1362 թ.[7]: Իսկ մեկ այլ թուրք պատմաբան Ե. Օզթունան զորամիավորման հիմնադրման տարեթիվը համարում է 1363 թ.[8]:

Սկզբնական շրջանում Օսմանյան բանակի շարքերը համալրվում էր փենջ-ի եքի օրենքով[9], այնուհետև բանակի հավաքագրումը սկսվում է իրականացվել դեվշիրմեի (մանկահաշվաք, մանկաժողով) համակարգով, որը ապահովում էր գրեթե անսահմանափակ մարդկային ռեսուրսներ, միևնույն ժամանակ ձուլում և ջլատում օսմանցիների կողմից գրավված տարածքների ժողովուրդներին:

Օսմանյան կայսրությունում դեվշիրմեն սկիզբ է առնում 14-րդ դարավերջից ու հասնում մինչև 18-րդ դարի սկիզբը՝ տևելով ավելի քան 3 հարյուրամյակ: Երեք դարերի ընթացքում գլխատվել է քրիստոնյաների մոտ 50 սերունդ[10]:

Դեվշիրմեի միջոցով հավաքագրված տղաները մինչ ենիչերի դառնալը կրոնափոխ էին արվում և ընդգրկվում աջեմի (անփորձ,

---

[5] Շաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում, Դեվշիրմե, Ե., 2006, էջ 26:

[6] Yurt Ansiklopedisi, İstanbul, 1984, c. 11, s. 8106.

[7] Uzunçarşılı İ., H., Osmanlı Tarihi, Ankara, 1947, c. I, s. 254.

[8] Öztuna Y., նշվ. աշխ., էջ 90:

[9] Գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կամ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կամ պիտի վճարեին 25-ական ակչե փրկագին, այսինքն իրենց արժեքի մեկ հինգերորդ մասը՝ փենջիքը: Զուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 248:

[10] Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 128:

օտար) զորամիավորումում[11], որը նույնպես մտնում էր քափըքուլու զորաբանակի մեջ, և վերջինիս ստորաբաժանումների համար զինվոր պատրաստող և սպասարկող զորամիավորում էր:

Ռազմագերիներից և դեվշիրմեի համակարգով հավաքագրված ենիչերիները ունեին ստրուկի կրագավիճակ և գտնվում էին սուլթանի ենթակայության տակ: Ենիչերի աղան ևս անմիջականորեն ենթարկվում էր սուլթանին, նա էր կատարում սպայական բոլոր նշանակումները զորամիավորումում և կարող էր բարձր սպայական կոչում տալ ցանկացած զինվորի[12]: Ենիչերի աղան Դիվան-ը Հումայունի (նախարարաների խորհուրդ) անդամ էր, ուներ բեյլերբեյի կոչում[13]:

Քափըքուլու զորամիավորումներից ամենաազդեցիկը՝ ենիչերական զորամիավորումը, պատերազմների ժամանակ սուլթանի կողքին կենտրոնական շարքում էր կանգնում[14]: Կենտրոնական մասում գտնվող ենիչերիների առջևում հրետանավորները, իսկ վերջիններիս առջևում էլ ազաբ կոչվող թեթև հետևակ զորքերն էին գտնվում: Բոլոր ենիչերիները սուլթանի հետ ռազմարշավ էին գնում, զորանոցների պաշտպանությունը թողնվում էր ծեր ենիչերիներից կազմված քորուջու կոչվող խմբին[15]:

Հիմանդրումից հետո շատ արագ, ենիչերական զորամիավորումը դարձավ կարևոր սոցիալ-քաղաքական մի կառույց, որը գրեթե հինգ (1362/63-1826 թթ.) հարյուրամյակ ուներ իր ուրույն ազդեցությունը Օսմանյան կայսրության թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Ենիչերական զորամիավորումը, ստեղծված լինելով ոչ միայն որպես սոսկ զինվորական ուժ, դարձավ օսմանյան առաջին սուլթանների քաղաքական իշխանության հենարանը՝ դառնալով հակակշիռ ավատների ռազմական և քաղաքական ուժերին:

---

[11] Առաջին աջեմի օջախ Քոնիայի մոլլա Ռյուսթեմը հիմանդրել է Գելիբոլույում, որի հրամանատարն էր ենիչերի յայաբաշիներից ընտրված Գելիբոլուի աղան: AnaBritannica, Genel Kültür Ansiklopedisi, Ankara, 1993, c. 1, s. 53.

[12] Марсильи, Военное состояние Оттоманской империи, С.-П., 1737, с. 59.

[13] Öztuna Y., նշվ. աշխ., էջ 91:

[14] Uzunçarşılı İ., H., նշվ. աշխ., էջ 254:

[15] Նույն տեղում, էջ 256:

«Ենիչերական զորախմբի օրենքների ծագման պատմություն» տրակտատի հեղինակը ենիչերիներին անվանում է Օսմանյան դինաստիայի «ձեռքերն ու թևերը»[16]:

Ենիչերական զորամիվորման ստեղծումից հետո, նրանց մարտունակությունը և կարգապահությունը բաձր պահելու համար մշակվեց ռազմական կանոնադրություն: Ըստ որի ենիչերիները պարտավոր էին.

1. Լսել, հնազնդվել սպաներին և գլխավորներին, թեկուզ և նրանք անազատներ էին:
2. Ենիչերիները պետք է կազմեին մեկ զորամիավորում և բնակվեին միասին նույն վայրում:
3. Ենիչերիները չպետք է ունենային ավելորդ ոչինչ, որը կլիներ շքեղություն:
4. Հանցանքների համար ենիչերիներին դատապարտել մահվան:
5. Կատարել բոլոր հրամանները, որ տրվում էր:
6. Ոչ ոք իրավունք չուներ անցնել նրանց շարքերը, եթե նախկինում չէր եղել աջեմի օղլան[17]:

Այս օրենքներով էր ամրապնդվում և պահպանվում ենիչերիների ուժն ու հավատարմությունը: Հետագա դարերի ընթացքում այս օրենքնիր խախտումն ու փոփոխությունը բերեց ենիչերական զորամիավորման քայքայմանն և մարտունակության անկմանը:

Ենիչերական զորամիավորման գաղտնամիտ բնույթը պահպանվեց մինչև 16-րդ դարի կեսերը՝ սուլթան Սելիմ II-ի (1566-1574 թթ.) ղեկավարման ժամանակաշրջանը: Սկսած 16-րդ դարի կեսերից ենիչերական զորամիավորման կազմում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան: Արդեն 17-րդ դարում ենիչերիներից շատերը առնչվում էին Օսմանյան կայսրության տարբեր սոցիալական շերտերի հետ և ներքաշված էին երկրի տնտեսական կյանքի ամենատարբեր ոլորտների մեջ: Զորամիավորման քայքայմանը նպաստում էր նաև

---

[16] Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов кортуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И. Петросян, М., 1987, с. 40.

[17] Марсильи, նշվ. աշխ., էջ 51:

ենիչերիների քանակական աճը, ինչը պայմանավորված էր ենիչերիների ամուսնության արգելքի վերացմամբ և նրանց շարքերում մեծ թվով ենիչերիների որդիների (քուլ օղլի/ստրուկի որդի) ներգրավմամբ:

Զորամիավորման կազմի մեջ քուլ օղլիների ընդգրկումը իր հերթին խախտում էր Մուրադ I-ի կողմից սահմանած օրենքներից ևս մեկը, որն էր նրանց՝ նախկինում աջեմի օղլան չլինելը:

Ուշագրավ է նաև ենիչերական զորամիավորման և բեկթաշիական միաբանության կապը: Վերջիններս ունեին մեծ ազդեցություն ենիչերական զորամիավորումում: Այդ հանգամանքը նպաստեց Օսմանյան կայսրությունում բեկթաշիների քաղաքական աճին: Իր հերթին, այդպիսի միաբանության հետ կապը ենիչերական զորամիավորմանը տվեց փակ կառույցի բնույթ[18]:

Բեկթաշիական միաբանության անդամ դառնալով՝ ենիչերիները միաժամանակ և՛ զինվորական, և՛ կրոնավոր էին, ինչպիսին էին, օրինակ, Եվրոպայում տաճարական ասպետներ[19]:

18-րդ դարի վերջին օսմանյան կայսրության ռազմական կառույցը լուրջ փոփոխությունների կարիք ուներ: Սելիմ III-ը (1789-1807 թթ.), ձեռնամուխ լինելով ռազմական բարեփոխումներին, որոշում ընդունեց վերակազմավորել բանակը: 1792-1793 թթ. բանակի հիմնական զորամիավորումների, մասնավորապես քափըքուլուների շրջանում բարեփուխումներ իրականցնելու մասին օրենքներ ընդունվեցին: Դրանք պայմանավորում էին բանակի ընդհանուր անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացում, կարգուկանոնի հաստատում, կազմակերպչական կառույցի բարելավում և մարտունակության աճ[20]:

Ենիչերական զորամիավրումը բացահայտ ընդդիմացավ փոփոխություններին և լուրջ փորձեր արեց դրանք ձախողելու համար:

---

[18] Ислам, Энциклопедический цловарь, М., 1991, с. 40.

[19] Անասյան Հ., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում XVIIդ., Ե., 1961, էջ 31:

[20] Запорожец В., Военные реформы в Османской империи в конце XVIII-первой половине XIX в.: строительство армии европейского типа, Осмнанский мир и османистика, Сборник статей, М., 2010, с. 387.

Նույնիսկ, դեռ մինչև Սելիմ III-ի բարեփոխումները, 1733 թ. Մահմուդ I-ի (1730-1754 թթ.) ժամանակաշրջանում հիմնադրված Օսմանյան կայսրությունում առաջին ռազմա-ինժեներական դպրոցը ենիչերիների բացասական վերաբերմունքի արդյունքում առաջին տարում փակվեց[21]:

Տվյալ ժամանակաշրջանի բարձրաստիճան պաշտոնյաներից Չելեբի Մուստաֆա էֆենդին ենիչերիների մարտունակության մասին գրում էր, որ պատերազմների ժամանակ նրանք պարզապես անկազմակերպ ամբոխ էին[22]: Ենիչերական զորամիավորումում, համապատասխան անձանց կաշառելով, ցանկացած պաշտոն կարելի էր ձեռք բերել: Պարզ է, որ նման իրավիճակում ենիչերիների մեծ մասը ուղղակի պատրաստ չէր պատերազմներին[23]:

Սելիմ III-ի ենիչերական զորամիավորումը վերակազմավորելու ցանկացած փորձ անհաջողությամբ ավարտվեց:

1793 թ. Սելիմ III-ը եվրոպական օրինակով նոր հետևակային զորք կազմավորելու և ուսուցանելու հրամանագիր ստորագրեց[24]: 1794 թ. սեպտեմբերի 18-ին օրենք ընդունվեց նոր զորք ստեղծելու մասին «նիզամ-ի ջեդիդ»[25]:

Ենիչերիների կողմից հարկադրաբար նոր զորքին զինվորներ տրամադրելու հրամանից հետո Էդիռնեում խռովություն ծագեց: Ենիչերիները կարողացան հետ մղել «նիզամ-ի ջեդիդ»-ի զորքերը և ստիպեցին սուլթանին զիջումներ անել:

1807 թ. մայիսի 25-ին Ստամբուլում ենիչերական զորամիավորման կողմից բարձրացրած ապստամբությունը կարճ ժամանակահատվածում այնպիսի մասշտաբներ ընդունեց, որ սուլթանը ստիպված եղավ ընդունել ապստամբների՝ ռազմական բարեփոխումների օրենքը չեղյալ հայտարարելու և «նիզամ-ի ջեդիդ»-ի զորքերը չեզոքացնելու մասին պահանջները[26]:

Ավելի ուշ Մահմուդ II –ը (1808-1839 թթ.) նոր զորք ստեղծելու գործին մասնակից դարձրեց նաև ենիչերական զորամիավորման

---

[21] Նույն տեղում, էջ 389:

[22] Петросян Ю., Османская Империя. Могущество и гибель, М., 1990, с. 169.

[23] Նույն տեղում, էջ 136:

[24] Նույն տեղում, էջ 169-170:

[25] Запорожец В., նշվ. աշխ., էջ 392:

[26] Նույն տեղում, էջ 394:

հրամանատարական կազմին: Ենիչերական 51 ստորաբաժանումից առանձնացվեցին զինվորներ նոր զորք ձևավորելու համար: Նոր զորամիավորումը ստացավ «իշքենջի» անունը: Նոր զորամիավորման սպայական կազմի և շարքային զինվորների ոռճիկը ենիչերական զորամիվորման ոռճիկից ավելի բարձր սահմանվեց[27]:

Ենիչերական զորամիավորումում սկսեց հասունանալ նոր խռովություն, քանզի նոր զորքին տրված այս և ուրիշ առավելություններում նրանք տեսնում էին ոտնձգություն իրենց ավանդական արտոնությունների դեմ:

1826 թ. հունիսի 15-ին, նույն ամսի 18-ին կայանալիք նոր զորքի շքերթը կանխելու համար, ենիչերիները կենտրոնացան Ստամբուլի Էթմեյդան հրապարակում և պահանջեցին «իշքենջի» զորքի լուծարումը[28]: Սուլթանը իրեն հավատարիմ հրետանային և հետևակային զորմասերով շրջափակեց հրապարակը և հրամայեց ոչնչացնել ապստամբներին:

Հետագայում հատուկ ատյանների որոշմամբ մահապատժի ենթարկվեցին մի քանի հազար ենիչերի: Նրանց զորանոցները ոչնչացվեցին, իսկ խորհրդանիշները հրապարակավ պղծվեցին:

1926 թ. հունիսի 17-ին օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների խորհուրդը պատմական որոշում ընդունեց՝ ենիչերական զորամիավորման լուծարման մասին[29]:

Ռազմական բարեփոխումների ճանապարհին գլխավոր խոչընդոտը վերացնելուց հետո, Մահմուդ II –ը 1826 թ. հուլիսի 17-ին օրենք ընդունեց նոր զորք ստեղծելու մասին, որը ստացավ «Մուհամեդյան հաղթանակող զորաբանակ» («Ասաքիր-ի Մանսուրե-իՄուհամմեդիյե») անունը[30]:

Ենիչերական զորամիավորման լուծարումը, կարծես, ամփոփեց մի ամբողջ ժամանակաշրջան, որը լեցուն էր մեծ հաղթանակներով և ծանր պարտություններով:

---

[27] Նույն տեղում, էջ 397:

[28] Նույն տեղում:

[29] Петросян Ю., նշվ. աշխ., էջ 182:

[30] Запорожец В., նշվ. աշխ., էջ 397:

VOSKANYAN ANI
(YSU)

JANNISSARIES: THEIR CREATION FEATURES AND THE LIQUIDATION REASONS

The uniquesness of the military structure was the guarantee of the success of the expantionist policy of the Ottoman Empire. Jannissarys unit along with its structure, formation and training method was one of the distinctive features of the Ottoman Empire. At the beginning Jannissary recruited war prisoners to their units and later this process was carried out through the devshirme system. Gradually the Jannissary unit became more notable turning into an essential military power.

However, being the pillar of the sultanic power was typical to the Jannissaries till the 17th and 18th centuries, then they gradually refused to fulfill their military responsibilities and became one of the strongest braking/ hindering power of the Empire.

ՅԱԿԱՆՑԱՆ ՌՈՒՍԼԱՆ
(ԱԻ)

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

«Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»
Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց, Բ, ԻԲ:

Շուրջ երկու հազարամյակ հին քաղաքակրթության խոշորագույն կենտրոններից մեկը հանդիսացող Ասորեստանի առաջացմանն ու հզորացմանը նախորդել են Միջագետքում մի շարք քաղաքական իրադարձություններ: Ա. Լ. Օպպենհեյմը ,նշում է, որ «Բաբելոն» և «Ասորեստան» տերմիններով ընդունված է անվանել երկու գլխավոր պետությունները, որոնցով հիմնականում մենք դատում ենք միջագետքյան քաղաքակրթության մասին[1]: Իսկ Ասորեստան պետությունն իր անվանումն ստացել է երկրի գլխավոր քաղաքական կենտրոն Aššur - Աշշուրից (ներկայիս Քալաթ-Շերկաթ բնակավայրն Իրաքում, Տիգրիս և Մեծ Զաբ գետերի խառնարանից հարավ՝ Տիգրիս գետի աջ ափին): Վերջինս էլ իր անվանումը ստացել է ասորեստանցիների գլխավոր, քաղաքի հովանավոր և ռազմի աստված Աշշուրի անունից:

Երկրում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող ցանկացած իրադարձություն կապվում էր Աշշուր աստծո և նրա կամքի հետ, իսկ ավելի կոնկրետ՝ ամեն մի ասորեստանցի ինչ-որ չափով ***«աշշուրոֆիլ»*** էր: Դեռ ավելին՝ նրա պաշտամունքը, մասնավորապես սկսած Ք.ա. X դարից, միտում ուներ դառնալու մոնոթեիստական[2]: Աշշուր աստծո տաճարը գտնվում էր Էպիխ լեռան վրա և կրում էր շումերական

---

[1] Оппенхейм А., Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации, М., 1990, с. 30-31.

[2] Parpola S., Monotheism in Ancient Assyria, In: B. N. Porter (ed.), One God or Many? Concepts of Divinity in the Ancient World (Transactions of the Casco Bay Assyriological Institute, 1), 2000, p. 165-209.

«É.ḪUR.SAG.(GAL).KUR.KUR.RA» - «Լեռան հողերի (մեծ) տուն» կամ «երկրների/հողերի լեռ»[3] անվանումը: Իսկ վերջինիս գլխավոր քուրմը՝ «šangu»՝ Ա22ուրի տիրակալն էր, որը սկզբնապես չէր կրում «արքա» տիտղոսը, այլ կոչվում էր «iššakkum» (համարժեք էր շումերական ÉNSI-ին[4]): Նա և՛ գլխավոր քուրմ էր (Ա22ուր աստծո տեղապահը երկրի վրա), և՛ ռազմական առաջնորդ: Փաստացի նրա իշխանությունը բացարձակ էր և ժառանգական: Նա, իսկ հետագայում արդեն արքան, միաժամանակ համայնքային կամ ավագների խորհրդի «bīt āli» («քաղաքի տուն») անդամ էին: Եվ հենց ավագների խորհրդի անդամներից էլ վիճակահանությամբ ընտրվում էր այդ տարվա անվանահայրը՝ էպոնիմը՝ «līmmu»[5], և հերթական «līmu»-ի անունով էլ կոչվում էր տվյալ տարին: Շատ հաճախ էպոնիմ էին ընտրվում նաև ասորեստանյան արքաները: Նույնիսկ Նոր-Ասորեստանյան ժամանակաշրջանում՝ Ա22ուր մարզի կառավարիչը, որը նստում էր Ա22ուրում՝ կրում էր «šakin māti» «երկրի կառավարիչ» տիտղոսը[6]:

Ասորեստանում ձևավորվում էր բացարձակապես ռազմիկ-տղամարդկանց պետությունը, որտեղ Ա. Լ. Օպպենհեյմի բնորոշմամբ

---

[3] Grayson A., The Assyrian Rulers of the Early First Millennium B. C. II (858-745 B.C.), The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods (այսուհետ՝ RIMA), Vol. III, Toronto, 1996, A.0.105.1, l. 22, p. 202.

[4] Տես օրինակ Պուզուր-Ա22ուր I-ի (Ք.ա. ?-1975? թթ.) որդու՝ Շալիմ-ախումի (Ք.ա. 1974-1963? թթ.), Էրիշում I-ի (Ք.ա. 1941-1902? թթ.) և այլոց արձանագրությունները՝ RIMA, I, T., 1987, A.0.31, A.0.34: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Շամշի-Ադադ I-ը (Ք.ա. 1813-1781 թթ.), իր արձանագրություններում կրելով «LUGAL KIŠ – տիեզերքի արքա» տիտղոսը (RIMA, I, A.0.39.1, l. 2, p. 48), միաժամանակ շարունակում էր կրել նաև «iššakkum» տիտղոսը՝ (RIMA, I, A.0.39.4, l. 3, p. 56).

[5] Պահպանվել և մեզ են հասել նաև ասորեստանյան էպոնիմների մի շարք ցուցակներ: Այսօր հստակեցված կարելի է համարել Ք.ա. 910-612 թթ.-ի էպոնիմների ցանկը՝ Millard A., The Eponyms of the Assyrian Empire 910-612 B.C., SAAS, Vol. II, Helsinki, 1994, ինչպես նաև՝ Veenhof K. R., The Old Assyrian List of Eponyms from Karum Kaniš and its Chronologocal Implications, ZA, 2004, Bd. 94, p. 304-306.

[6] Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, M. P. Streck et. all, Berlin - New-York, Band 11, 1./2., 2006-2008, S. 45-46:4.

բավականին մեծ էր *«ազգային ինքնագիտակցության»* զգացումը[7]: Բարձր ազգային ինքնագիտակցությունը, կայուն հասարակության առկայությունը, ինչպես նաև անվերապահորեն ենթարկումը կենտրոնական իշխանությանը, վերջինիս և մասնավորապես արքայական իշխանության աստվածատուր լինելու զգացումը՝ հանգեցրեց բառիս բուն իմաստով Հին աշխարհի ամենակայուն և բացառիկ ասորեստանյան պետության առաջացմանը, որը ձգտում էր իր գերիշխանությունը հաստատել ամբողջ տարածաշրջանում: Վերջինիս ամենավառ վկայությունն էր ասսուրական արքաների կրած հետևյալ տիտղոսները՝ **«šarru rabû(u) šarru dan-nu šar kiššati šar kibrat irbittim(tim)»**՝ «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, (աշխարհի) չորս կողմերի արքա», **«ri-'-um kienu migir ilâni rabûti»**՝ «օրինական կառավարիչ, աստվածների սիրելին»: Իսկ արքայական վսեմության խորհրդանիշներից են եղել թագը **(agû)**, գայլոնը **(ḫaṭṭu)**, գահը **(kussû)** և արքայական խորհրդանիշը (ստանդարտը) **(urigallû)**:

Թերևս չի բացառվում այն հանգամանքը, որ շուրջ մեկ հազարամյակ սկսած Աշշուրի տիրակալ Ադասիից (Ք.ա. XVIII? դարի վերջին քառորդ) ընդհուպ մինչև տերության անկումը Ք.ա. 607/605 թթ.-ը՝ պետության գլուխ կանգնած է եղել բացառապես միևնույն տոհմը: Այսինքն՝ արքայական իշխանությունը փոխանցվում էր ժառանգականորեն, որի հիմքում ընկած էր արյան սկզբունքը: Այս հանգամանքն ինքնին գալիս է հաստատելու ասորեստանցիների պատվախնդիր լինելը: Նույն պատվախնդրության՝ այս անգամ արդեն զուտ ասորեստանյան պատվախնդրության մասին է վկայում թեկուզև այն հանգամանքը, որ մեզ հասանելի գեթ մեկ աղբյուրում չկարողացանք գտնել ռազմի դաշտից ասորեստանյան զորքերի փախուստի դրվագներ: Ընդհանրապես քիչ են նաև նահանջի դրվագները. ասորեստանյան ծայրահեղ կարգապահ ռազմիկները կռվում էին մինչև վերջ, մինչև հաղթական ավարտը: Ասորեստանյան ռազմիկներն անվերապահորեն

---

[7] Оппенхейм А., Древняя Месопотамия..., с. 53, հմմտ. նաև՝ Lambert W. G., The Reigns of Aššurnaṣirapal II and Shalmaneser III: An Interpretation, Iraq, Vol. 36, 1974, № 1/2, p. 103-109; Parpola S., National and Ethnic Identity in the Neo-Assyrian Empire and Assyrian Identity in Post-Empire Times, Journal of Assyrian Academic Studies, 2004, 18/2, p. 5-49.

և մեծ հավատարմությամբ ենթարկվում էին գլխավոր հրամանատարությանը՝ արքային:

Բացառված չենք համարում նաև այն հանգամանքը, որ լեգենդար Տուդիայից («վրաններում բնակվող» 17 «արքաներից» առաջինը) (Ք.ա. III հազարամյակ, Ք.ա. մոտ XXIII կամ Ք.ա. մոտ XXII դդ.?) մինչև ՈՒշպիա («վրաններում բնակվող» 17 «արքաներից» վերջինը[8]) (Ք.ա. մոտ XXII? դարի կեսերը) կամ Կիկկիյա (Ք.ա. մոտ XXII դարի վերջեր կամ Ք.ա. մոտ XXI դարի սկիզբ?)[9] և ՈՒշպիայից մինչև Ադասի (Ք.ա. XVIII դարի վերջին քառորդ)[10] գահակալել են միևնույն տոհմի անդամները: Հարկ է նշել նաև, որ այդ շարքի տիրակալների անվանումների ճնշող մեծամասնությունը աքքադական ծագում չունեն:Այս ցանկում թերևս բացառություն են կազմում ամորեացի Շամշի-Ադադ I-ը (Ք.ա. 1813-1781 թթ.) և նրա որդի Իշմե-Դագան I-ը (Ք.ա. 1780-1741 թթ.): Սակայն հետագայում ասորեստանյան արքաները նրանց անունները նույնպես զետեղել են իրենց նախնիների ցուցակում: Ամեն դեպքում ամորեացիներն, ըստ երևույթին, երկար չկարողացան իրենց ձեռքում պահել Աշշուրը, և շուտով հենց Շամշի-Ադադ I-ի մահից հետո նրա տերությունը սկսեց քայքայվել:

Ամորեական իշխանության առումով Վ. Ա. Յակոբսոնը նշում է, որ այն «հինասորեստանյան» կոչելը սխալ է, քանի որ Շամշի-Ադադ I-ն

---

[8] Lewy H., Assyria c. 2600-1816 B.C., The Cambridge Ancient History (այսուհետ՝ CAH), I/3, 1971, p. 743ff.

[9] Վերջինս Սալմանասար I-ի (Ք.ա. 1274-1245 թթ.) (RIMA, I, A.0.77.1, l. 113, p. 185) և Աշշուր-ռեշա-իշի I-ի (Ք.ա. 1133-1115 թթ.) արձանագրություններում հանդես է գալիս որպես նախահայր՝ RIMA, I, A.0.86.11, p. 320, սակայն Աշշուր-ռեմ-նիշեշուն (Ք.ա. 1410-1403 թթ.) իր արձանագրությունում որպես տոհմի նախահայր նավանում է Կիկկիյային՝ RIMA, I, A.0.70.1, l. 5, p. 101: Երկու՝ Ուշպիա և Կիկկիյա անունները, սուբարիական են, այն դեպքում, երբ մնացած բոլորը՝ աքքադական:

[10] Ասորեստանյան արքայացանկերի վերաբերյալ մանրամասն տե՛ս Grayson A, The Assyrian Royal Inscriptions (այսուհետ՝ ARI), Vol. I, Wiesbaden, 1972, p. 1f.; նույնի՝ Königslisten und Chroniken B. Akkadisch, RlA, 1980, № 6, S. 89-101; Millard A., Assyrian King Lists, The Context of Scripture, Vol. I, Canonical Compositions from the Biblical World, in W. W. Hallo, Brill, 1997, p. 463-464; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, p. 136-145 և այլք:

իրեն Աշշուրի արքա չի համարել[11]: Գտնում ենք, սակայն, որ նրա այսպիսի մոտեցումը չունի բավարար հիմնավորում: Դեռ ավելին՝ նրա արձանագրություններից մեկում «1. ᵈŠamši-ᵈAdad 2. da-núm 3. LUGAL KIŠ 4. ša-ki-in ᵈEn-líl 5. ÉNSI ᵈA-šur₄»՝ «Շամշի-Ադադ, հզորը՝ տիեզերքի արքա, նշանակված Էնլիլ աստծո կողմից, Աշշուր աստծո փոխկառավարիչը»[12] առկա նախադասությունը կարող է վկայել անգամ հակառակ տեսակետի օգտին: Գտնում ենք, սակայն, որ այստեղ առաջին հերթին մենք գործ ունենք ասորեստանյան արքաների ավանդական աստուրական պատկերացումների զարգացման հետ, ըստ որի տիրակալը կառավարում էր միայն Էնլիլի անունից և նրա կամքի կատարողն էր: Հարկ է նշել նաև, որ նմանատիպ արտահայտություն է առկա նաև մի շարք Միջին ասորեստանյան արքաների տիտղոսաշարերում: Օրինակ՝ Աշշուր-ուբալլիթ I-ը (Ք.ա. 1365-1330 թթ.) միայն մեկ արձանագրությունում է իրեն անվանում «Ասորեստանի արքա»[13]: Ամեն դեպքում գտնում ենք, որ Ասորեստանի թագավորության՝ արդեն որպես կուռ պետական կազմավորման իրական պատմությունը կարող է սկսվել Ք.ա. XV դարից:

Սկզբնապես Աշշուրն առևտրա-արհեստագործական խոշոր կենտրոն էր: Այստեղով էին անցնում մի շարք առևտրական մայրուղիներ, որն էլ նրա բնակչությանը բավականին լավ նախադրյալներ ընձեռեց մեծ հարստություն կուտակելու համար[14]: Աշշուրից զատ ասորեստանյան խոշորագույն քաղաքական և մշակութային կենտրոններ էին նաև Նինվեն, Կալախը, Արբելան: Այս քաղաքներն էլ հետագայում հանդիսացան ասորեստանյան պետության միջուկը, որի շուրջ հետագայում պետք է ձևավորվեր համաշխարհային պատմության իրական առաջին կայսրությունը՝ Ասորեստանը:

---

[11] Якобсон В., Месопотамия в XVI-XI вв. до н. э., История древнего мира (այսուհետ՝ ИДМ), I, Ранняя древность, отв. ред. И. М. Дьяконов, М., 1989, с. 203.

[12] RIMA, I, A.0.39.2, Col. I, ll. 1-5, p. 52.

[13] RIMA, I, A.0.73.6, Col. I, l. 3, p. 115.

[14] Янковская Н., Ашшур, Митанни, Аррапхэ, ИДМ, I, с. 175-179; Якобсон В., Месопотамия в XVI-XI вв. до н. э..., с. 203-205.

Աշշուրի տիրակալներից մեզ հասած առաջին արձանագրությունը թողել է Ինինլաբայի որդի Իտիտին (Ք.ա. մոտ XXII դար?)[15]: Մինչ (Ք.ա. III հազարամյակի երկրորդ կես) սեմիտական ցեղերի ներթափանցումը տարածաշրջանը հիմնականում զբաղեցրած էր խուրրիական և սուբարիական ցեղերով: Ասորեստանցիներն էլ իրենց հերթին սեմիտներ էին և խոսում էին աքքադերենի հյուսիսային բարբառով[16]: Եվ հենց վերջիններիս հետ էլ կապվում է Ասորեստան պետության հետագա շուրջ հազարամյա պատմությունը:

Ինչևէ, անցնելով Ասորեստանի քաղաքական պատմության վաղագույն շրջանին՝ նշենք, որ Ք.ա. XXIII դարում ինչպես ամբողջ Հյուսիսային Միջագետքը, այնպես էլ նոր կազմավորվող Աշշուրի պետությունը շուրջ մեկ դարով ընկավ Աքքադի հզոր պետության գերիշխանության տակ՝ Սարգոն Աքքադացուց (Ք.ա. 2316-2261 թթ.) մինչև Նարամսին (Ք.ա. 2236-2200 թթ.): Դեռ ավելին՝ նույնիսկ մի տեսակետի համաձայն, Աքքադի երրորդ տիրակալ և Սարգոն Աքքադացու որդի Մանիշտիշուն (Ք.ա. 2248-2237 թթ.) է Նինվեում կառուցել Իշտար աստվածուհու տաճարը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Շամշի-Ադադ I-ը (Ք.ա. 1813-1781 թթ.), իր իսկ արձանագրության համաձայն, նույն տաճարի վերանորոգման աշխատանքների ժամանակ հայտնաբերել է Մանիշտիշուի արձանը և տաճարը հիմնադրելու վերաբերյալ կոթողը[17]: Սակայն կուտիների առաջնորդ Էրրիդու-պիզիրից[18] (Էնրիտավիզիրից կամ Էնրիդա-պիզիր[19]) Նարամսինի պարտությունից և սպանությունից հետո, ըստ երևույթին, Աշշուրը կարճ ժամանակահատվածում ձեռք է բերում անկախություն, հնարավոր է նույնիսկ, որ հենց այս

---

[15] ARI, I, p. 2; RIMA, I, A.0.1001.1, p. 7.

[16] Языки мира: Семитские языки. Аккадский язык. Северозападносемитские языки. Ред. колл.: А. Г. Белова, Л. Е. Коган, С. В. Лёзов, О. И. Романова, М., 2009, с. 113-204.

[17] RIMA, I, A.0.39.2, Col. II, ll. 9-25, p. 53.

[18] Էրրիդու-պիզիրի արձանագրությունների վերաբերյալ տե՛ս Frayne D., Sargonic and Gutian Periods (2334-2113BC), The Royal Inscriptions of Mesopotamia Early Periods, Vol. II, Toronto, 1993, p. 220-228.

[19] Մանրամասն տե՛ս Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Ե., 2005, էջ 77-86:

ժամանակահատվածից էլ սկսված լինի Աշշուրի հետ «վրանական արքաների» և պատմական կամ նոմային շրջանը: Շատ չանցած Հյուսիսային Միջագետքի մի որոշ մասը, միգուցե նաև Աշշուրը, հայտնվում են ՈՒրի III հարստության գերիշխանության տակ[20]: Քիչ անց Միջագետքում են հայտնվում ամորեական ցեղերը, որոնց հարվածների տակ էլ ընկնում է ՈՒրի III հարստությունը: Հարավային Միջագետքում ի հայտ են գալիս մի շարք այլ քաղաքական կենտրոններ, որոնց հարևանությամբ, և մասնավորապես Հյուսիսային Միջագետքում, ստեղծվում էին ամորեական փոքրիկ իշխանապետություններ: Եվ նրանց առաջնորդներից մեկը՝ Շամշի-Ադադ I-ը, Ք. ա. մոտ 1813 թվականին կա՛մ աշշուրական ավագների խորհրդի որոշմամբ, կա՛մ էլ, որն էլ միաժամանակ առավել հավանական է, բռնի ուժով կարողանում է տիրանալ Էրիշում II-ի (Ք.ա. 1818-1813? թթ.) գահին: Սակայն Շամշի-Ադադ I-ի տոհմի ներկայացուցիչներն Աշշուրում իշխանությունն իրենց ձեռքում կարողանում են պահել շուրջ կես դար: Ամենայն հավանականությամբ, նրա թոռ Մուտ-աշկուրի (Ք.ա. XVIII դարի 2-րդ կես) կառավարումն Աշշուրում արդեն դարձել էր ձևական, և շուտով նա գահընկեց արվեց, սակայն հաջորդ կառավարիչները բավականին թույլ էին և չկարողացան ստեղծել կայուն պետական կառավարման համակարգ: Միայն XVIII դարի ընթացքում իրար հաջորդեցին 9 տիրակալներ: Իսկ արդեն նույն դարի վերջին քառորդին իշխանությունն անցնում է Ադասիին,· որը հիշատակվում է Ք.ա. մոտ 1700 թվականին: Նրան հաջորդում է որդին՝ Բելու-բանին (Ք.ա. 1700-1691? թթ.)[21]: Սակայն շուրջ երկու դար անց՝ Ք.ա. XV դարի սկզբներին, Աշշուրը կրկին կորցնում է իր անկախությունը և ընկնում արևմտյան հարևան Միտաննիի տիրապետության տակ: Միտաննիի արքա Շ/Սաուշ/աստտարը (Ք.ա. 1510-1470? թթ.) պարտության մատնելով Էնլիլ-նաձիր I-ին (Ք.ա. 1497-1485 թթ.)՝ գրավում է Աշշուրը[22]: Սակայն, ինչպես ցույց են տալիս

---

[20] Дьяконов И., Ранние деспотии в Месопотамии, ИДМ, I, с. 80-85.

[21] CAH, II/2, 1975, p. 821.

[22] Drower M., Syria c. 1550-1400 B.C., CAH, II/1, 1973, p. 4364; Gadd C., Assyria and Babylonia c. 1370-1300 B. C., CAH, II/2, p. 22; Аветисян Г., Государство Митанни (военно-политическая история в XVII – XIII вв. до н. э.), Е., 1984, с. 41, 105;

փաստերը, միտաննական գերիշխանությունը Աշուրի նկատմամբ եղել է ավելի կարճատև՝ մոտ յոթ տասնամյակ, քան փորձվում է ցույց տրվել մասնագիտական գրականությունում:

Ամենայն հավանականությամբ, ելնելով եգիպտա-միտաննական հակամարտությունից և Միտաննիում օրեցօր նկատվող քաղաքական ճգնաժամից՝ արդեն Աշուր-բել-նիշեշուի (Ք.ա. 1419-1410 թթ.) կառավարման սկզբներից կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ Աշուրը սկսում է թոթափել միտաննական լուծը: Բանն այն է, որ Աշուրը նվաճելուց հետո միտաննական թագավորի հրամանով քանդվել էին դեռևս Էնլիլ-նաձիր I-ի հոր՝ Պուզուր-Աշուր III-ի (Ք.ա. 1521-1498 թթ.) կողմից Աշուրում կառուցած «Նոր քաղաքի» պարիսպները[23], իսկ Աշուր-բել-նիշեշուն, իր իսկ արձանագրության համաձայն, վերականգնեց այն[24]: Այս հանգամանքը կարող է վկայել, որ Աշուր-բել-նիշեշուն ամրաշինություններ կառուցելով և վերականգնելով՝ ակնհայտորեն գործում էր որպես անկախ տիրակալ: Աշուր-բել-նիշեշուի համար բավականին բարենպաստ էին նաև միջազգային հարաբերությունները, շարունակվում էր եգիպտա-միտաննական հակամարտությունը, և նա շտապեց օգտագործել հարմար առիթը՝ առաջին հերթին կարգավորելով իր հարաբերությունները հարավային հարևան՝ Քասսիտական Բաբելոնիայի հետ: Աշուր-բել-նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարաինդաշ I-ի միջև կնքվեց մի նոր պայմանագիր, որն, ըստ երևութին, կրկնում էր Պուզուր-Աշուր III-ի և Բուրնա-Բուրիաշ I-ի կնքած պայմանագիրը, ըստ որի կարգավորվում էին սահմանային վեճերը երկու երկրների միջև[25]: Աշուր-բել-նիշեշուի հաջորդները շարունակեցին նրա քաղաքականությունը, և Աշուրը դուրս գալով քաղաքական քաոսից՝ բռնեց հզորացման ուղին: Հենց նրա կառավարման ժամանակաշրջանն էլ հանդիսացավ այն հիմքը, որի

նույնի՝ Политическая история Митанни в XVI – XV вв. до н. э, ВДИ, 1978, № 1, с. 6.

[23] RIMA, I, A.0.61.1, ll. 5-10; A.0.61.2-3, p. 90-92; Drower M., Syria c. 1550-1400 B.C., p. 464f.

[24] RIMA, I, A.0.69. 1, 1001, p. 99-100; Drower M., Syria c. 1550-1400 B.C., p. 465.

[25] Drower M., Syria c. 1550-1400 B.C., p. 442; Якобсон В., Месопотамия в вв. XVI-XI до н. э..., с. 199.

վրա սկսեց ձևավորվել Ասորեստանը որպես պետություն: Իսկ եթե փորձենք փուլաբաժանման ենթարկել Ասորեստանի պատմությունը, ապա գտնում ենք, որ որպես Միջին ասորեստանյան ժամանակաշրջան պետք է ընդունել սկսած Աշշուր-բել-նիշեշուի (Ք.ա. 1419-1410 թթ.) կառավարումից: Նրա որդի Էրիբա-Ադադ I-ը (Ք.ա. 1392-1366 թթ.) տնտեսական, շինարարական և այլ բնույթի արձանագրություններում իր տիտղոսաշարին արդեն ավելացնում է «արքա» տիտղոսը:

Ինչևէ, սկսած իր առաջին քաղաքական վերելքից մինչև գերտերություն, Ասորեստանի դեգերումները պատմության քառուղիներով կարելի է պարբերացնել հետևյալ գլխավոր ժամանակագրական շրջանակներում.

1. Ք.ա. XV–XIII դարեր. փաստացի ընդգրկում է Միջին ասորեստանյան ժամանակաշրջանը Ասորեստանի աստիճանաբար վերելքով, սկսած Աշշուր-բել-նիշեշուի (Ք.ա. 1419/08-1410/1399 թթ.)[26] կառավարումից մինչև մերձավորարևելյան ճգնաժամը, իսկ ասորեստանցիների գլխավոր խնդիրը տվյալ ժամանակահատվածում սեփական սահմանների անվտանգությունն էր: Էրիբա-Ադադ I-ի որդի Աշշուր-ուբալլիթ I-ն (Ք.ա. 1365/54-1330/18 թթ.) իրեն դրսևորեց որպես հմուտ դիվանագետ և ռազմական գործիչ: Նրա կառավարման ընթացքում Ասորեստանը ոչ միայն դուրս եկավ իր բնական սահմաններից և անցավ նախահարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին: Արևելքից ասորեստանցիները սկսեցին ակտիվորեն սպառնալ Միտաննիին, դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Եգիպտոսի[27] և Բաբելոնիայի հետ: Վերջինիս հետ բարեկամություն ամրապնդելու նպատակով Աշշուր-ուբալլիթ I-ն իր Մուբալլիտատ-շերուա դստերը կնության տվեց Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II –ին (Ք.ա. 1376-1347 թթ.)[28]:

---

[26] Gadd C., Assyria and Babylonia c. 1370-1300 B. C., p. 1040: Միջին ասորեստանյան ժամանակաշրջանի արքաների կառավարման վերաբերյալ այլ թվագրումների համար տես՝ Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Ninurta-apil-ekur und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1979, № 71, S. 19-38.

[27] Moran W., The Amarna Letters, Baltimore and London, 1992, EA 015-016, p. 37-41.

[28] Gadd C., Assyria and Babylonia c. 1370-1300 B. C., p. 28.

Տվյալ ժամանակահատվածում Ասորեստանը մեկը մյուսի ետևից ձեռնարկում է մի շարք հաջողված արշավներ՝ արևմուտքում երբեմնի հզոր միտաննական թագավորությունն էր, արևելքում՝ էլամական ցեղերը, հյուսիսում Հայկական լեռնաշխարհի ցեղերն էին, իսկ հարավում՝ կասսիտները: Աշխարհագրական այս ուղղություններից ասորեստանցիների համար առավել կարևոր էին արևմտյան՝ խեթա-միտաննական ուղղությունը[29] և հյուսիսային ուղղությունը՝ դեպի Հայկական լեռնաշխարհի ցեղային միությունների դեմ[30]: Եվ ինչպես իրավացիորեն նշում է Ա. Քոսյանը՝ Ասորեստանը Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում հիմնականում հանդես էր գալիս որպես ապակայունացնող գործոն[31]:

Աշշուր-ուբալլիթ I-ի թոռ՝ Արիկդենիլին (Ք.ա. 1319/07-1308/1296 թթ.) նույնպես ակտիվ նվաճողական քաղաքականություն էր վարում: Նա մի շարք հաղթանակներ տարավ Միտաննիի նկատմամբ՝ երկրի սահմանները հարավ-արևմուտքում հասցրեց մինչև Եփրատ գետի հոսանքի միջին շրջան: Արիկդենիլին սկսում է կիրառել **«šarru dan-nu šar ᵐᵃᵗA-šur»**՝ «հզոր արքա, Աշշուրի արքա»[32] տիտղոսը, որն այսուհետ սովորական մի երևույթ պետք է դառնա ասորեստանյան արքաների տիտղոսաշարերում: Արիկդենիլի հաջորդները, և մասնավորապես՝ Ադադ-Նիրարի I (Ք.ա. 1307/1296-1275/64 թթ.), Սալմանասար I (Ք.ա. 1274/63-1245/34 թթ.) և Թուկուլթի-Նինուրտա I (Ք.ա. 1244/33-1208/1197 թթ.)՝ նույնպես վարում էին ակտիվ նվաճողական քաղաքականություն՝ Ասորեստանը դարձնելով միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային կարևորագույն պետություն: Ինչպես նշում է Ա. Քոսյանը, այս շրջանում Ասորեստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հյուսիսից արևմուտք ձգվող և խեթերի կողմից վերահսկվող «կիսալուսնի» ճեղքումն էր, որը թույլ կտար ճանապարհ հարթել դեպի հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի

---

[29] Քոսյան Ա., Ս.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Ե., 1999, էջ 14-16, 18-28, 73-76:

[30] Арутюнян Н., Биайнили (Урарту), Ер., 1970, с. 20; ARI, I, p. 53; Munn-Rankin J., Assyrian Military Power 1300-1200 B. C., CAH, II/2, p. 274-306.

[31] Քոսյան Ա., Ս.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը, էջ 14:

[32] RIMA, I, A.0.75. 1, ll. 1-3, p. 120.

առևտրական ուղիներն ու կենտրոնները[33]: Ադադ-Նիրարի I-ի և մասնավորապես Սալմանասար I-ի հարվածների տակ ընկավ Միտաննիի պետությունը[34]: Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ը Ք.ա. մոտ 1223 թվականին գրավեց և շուրջ 7 տարի իր իշխանությանը ենթարկեց Բաբելոնիան: Գրավելով Բաբելոնիան նա իր տիտղոսաշարին ավելացնում է նաև **«šar Sippar u Bābili»**՝ «Սիպպարի և Բաբելոնի արքա» և **«šar māt Šumeri u Akkadî»**՝ «Շումերի և Աքքադի արքա»: Նա իր տիտղոսաշարին ավելացնում է ևս 14 տիտղոս: Նրա կառավարման շրջանից սկսած Ասորեստանի արքաների տիտռոսաշարն ընդարձակվում և ճոխացվում է[35]: Նա գրեթե ամեն տարի առաջնորդում էր ասորեստանյան բանակը դեպի աշխարհագրական այս կամ այն ուղղությամբ: Ներխուժել է նաև Հայկական լեռնաշխարհ, որտեղ բախվել է Նաիրյան ցեղային միության հետ, որից հետո իր տիտղոսաշարին ավելացնում է նաև **«šar kullat mātāt Nairi»**՝ «Նաիրյան բոլոր երկրների արքա»[36]: Թուկուլթի-Նինուրտա I-ը առաջիններից էր, ով ընդունեց **«šar šarrāni»**՝ «արքաների արքա» և **«bēl bēlē»** «տերերի տեր» տիտղոսները[37]: Կառավարման վերջին տարիներին նա փորձում էր ուժեղացնել արքայական իշխանությունը և տոհմական ավագանիներին ու քրմությանը թուլացնելու նպատակով հեռանում է Աշշուրից քիչ հեռու՝ Տիգրիս գետի ձախ ափին իր կողմից կառուցած նոր մայրաքաղաք Կար-Թուկուլտինինուրտա: Սակայն, շատ չանցած, նա դավադրության զոհ գնաց, և երկիրը կրկին ընկղմվեց քաղաքական խորը ճգնաժամի մեջ: Ասորեստանում մոլեգնում էր նրա որդիների կողմից սանձազերծված քաղաքացիական պատերազմը[38]: Շուտով այս ամենին գումարվեցին նաև բնակլիմայական կտրուկ

---

[33] Քոսյան Ա., Ա.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը, էջ 13:

[34] Аветисян Г., Государство Митанни, с. 92-102.

[35] Sazonov V., Die mittalassyrischen, universalistischen Königstitel und Epitheta Tukūltī-Ninūrtas I (1242-1206), in Identites and Societies in the Ancient East-Mediterranean Regions, Ed. by T. R. Kämmerer, Alter Orient und Altes Testament, 2011, Band 390/1, S. 235-276.

[36] RIMA, I, A.0.78.5, ll. 8-9, p. 244.

[37] RIMA, I, A.0.78.3, l. 3, p. 241.

[38] Munn-Rankin J., Assyrian Military Power 1300-1200 B. C., p. 284-294; Якобсон В., Месопотамия в XVI-XI вв. до н. э...., с. 206-207.

փոփոխություններն ու վերջինիս արդյունքում սկսված Մերձավորարևելյան ճգնաժամը[39]:

Այսպիսով, Ք.ա. XII–XI դարերի բնակլիմայական փոփոխությունների արդյունքում Եփրատ և Տիգրիս գետերի մակարդակների կտրուկ անկում է նկատվում. ծանր տնտեսական պայմաններն ու հաճախակի դարձած ամորեական ցեղերի ասպատակությունները սրեցին և գրեթե քայքայման եզրին կանգնեցրին սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունները[40]: Այս ամենից հետո միայն Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1115-1077 թթ.) կառավարման ընթացքում քաղաքական կյանքի կարճատև ակտիվություն է նկատվում, որից հետո այն որերորդ անգամ ընկղմվեց քաղաքական քաոսի մեջ: Սակայն հենց այս ժամանակաշրջանում է, որ սկսվեց առաջ մղվել բացարձակ իշխանության գաղափարը[41]: Սկսվում է Ասորեստանի պատմության Երկրորդ անցման շրջանը:

2. Ք.ա. X դարի երկրորդ կես – Ք.ա. VIII դարի առաջին քառորդ (Ք.ա. 934–783 թթ.)[42]: Այն ընդգրկում է Վաղ Նորասորեստանյան կամ Նոր ասորեստանյան ժամանակաշրջանը, որի հիմնադիրն է Աշշուր-դան II-ը (Ք.ա. 934–912 թթ.): Աշշուր-դան II-ը և նրա որդի Ադադ-Նիրարի II-ը (Ք.ա. 911–891 թթ.) մի շարք պետական միջոցառումների արդյունքում կարողացան երկիրը դուրս բերել քաղաքական խորը ճգնաժամից և ստեղծեցին գրեթե ամբողջապես ռազմականացված պետություն: Գրեթե շուրջ մեկ դար ասորեստանյան զորքերը առանց որևէ լուրջ խոչընդոտների և պարտության շարունակում էին հաղթարշավը Մերձավոր Արևելքում: Այս ժամանակահատվածում՝ (Ք.ա. 934–745 թթ.), Ասորեստանը տարածքային պետությունից հասավ մինչև կայսերական իշխանություն: Այս ժամանակահատվածը կարելի է ենթարկել նաև

---

[39] Այս մասին մանրամասն տե՛ս Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, աշխատություն:

[40] Neumann J., Parpola S., Climatic Change and the Eleventh-Tenth-Century Eclipse in Assyria and Babylonia, JNES, № 46, 1987, p. 168-179; Якобсон В., Новоассирийская держава, ИДМ, II, М., 1989, с. 27-28.

[41] Grayson A.K., Assyrian Civilization, CAH, III/2, 1991, p. 194.

[42] Grayson A.K., Assyria: Ashur-Dan II to Ashur-Nirari V (934-745 B.C.), CAH, III/1, 1982, p. 239, 248.

ներքին փուլաբաժանման՝ ա) Ասորեստանի Միջինասորեստանյան ժամանակաշրջանի տարածքային ամբողջականության վերականգնում՝ Ք.ա. 934-884 թթ., բ) Ասորեստանի հետագա առաջխաղացումը դեպի տերության արևմտյան, հարավային և արևելյան սահմանային տարածաշրջաններ՝ Ք.ա. 884/883-824 թթ., գ) Ասորեստանը ներքին հակասությունների ժամանակաշրջանում՝ Ք.ա. 824/823-745 թթ.[43]:

Արդեն, Ք.ա. X դարի երկրորդ կեսից՝ ասորեստանցիներն իրենց ուշադրությունը բևեռեցին հյուսիսային, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան սահմաններին[44]: Կարևոր էր նաև հարավային հարևանի՝ Բաբելոնիայի հետ սահմանային վեճերի կարգավորումը: Ադադ-Նիրարի II-ը դեպի Բաբելոնիա կատարեց երկու կարևորագույն հաղթարշավ: Վերջինս բավականին մեծ ուշադրություն էր դարձնում երկրի հյուսիսային սահմաններին և նույնիսկ մի քանի ռազմարշավ կազմակերպեց դեպի Հայկական լեռնաշխարհ՝ Նաիրյան երկրների դեմ: Նշված և այլ երկրների դեմ հաջող արշավանքներ էր ձեռնարկում նաև Ադադ-Նիրարի II-ի հաջորդ Թուկուլթի-Նինուրտա II-ը (Ք.ա. 891-884 թթ.)[45]: Աշշուրնածիրապալ II-ը (Ք.ա. 883-859 թթ.) նույնպես վարում էր ակտիվ նվաճողական պատերազմներ, որոնք ընթացան նրա կառավարման գրեթե ամբողջ ժամանակահատվածում: Նրան հաջողվեց նվաճել Հյուսիսային Միջագետքը, Հյուսիսային Սիրիան ու Փյունիկիան և այլն[46]: Աշշուրնածիրապալ II-ը վերակառուցելով Սալմանասար I-ի կողմից կառուցած Կալխու (ներկայիս Նիմրուդը) քաղաքը՝ դարձրեց երկրի նոր մայրաքաղաք[47]: Իսկ նրա որդի Սալմանասար III-ը (Ք.ա. 858-824 թթ.) իր կառավարման 34 տարիների ընթացքում կազմակերպեց 32 արշավանք[48]: Վերջինս Ք.ա. 859 թ.-ին արշավանք կազմակերպեց դեպի Հայկական լեռնաշխարհ, որտեղ

---

[43] Bedford P., Empire and Exploitation: The Neo-Assyrian Empire, Social Science History Institute, Stanford University, May 21-22, 2001, p. 11-16.

[44] Grayson A., Assyria: Ashur-Dan II..., p. 248.

[45] Նույն տեղում, էջ 251-253; Арутюнян Н., Биайнили (Урарту), С.-П., 2006, с. 48-55.

[46] Grayson A., Assyria: Ashur-Dan II..., p. 253-259.

[47] Mallowan M. E. L., The Excavations at Nimrud (Kalhu), Iraq, 1958, № 20/2, p. 101-108.

[48] Grayson A., Assyria: Ashur-Dan II ..., p. 259-269.

նախկին ցեղային միությունների փոխարեն Ասորեստանի դեմ դուրս եկավ արդեն կազմավորվող ՈՒրարտական թագավորությունը[49]:

Շուրջ կես դար ակտիվ ռազմական գործողությունների արդյունքում Ասորեստանի թագավորները կարողացան ընդարձակել պետության սահմաններն աշխարհագրական գրեթե բոլոր ուղղություններով: Իսկ Ք.ա. IX դարի վերջին քառորդում Ասորեստանի ակտիվ արտաքին քաղաքականությունը սկսեց նվազել, իսկ Ք.ա. VIII դարի առաջին կեսին այն կրկին հայտնվեց քաղաքական քառսում: Ադադ-Նիրարի III-ի (Ք.ա. 811-783 թթ.) պետության սահմանների անվտանգությունը պահպանելու բոլոր ջանքերը ոչ բոլոր ուղղություններով էր հաջողված: Հյուսիսում հանդես եկած ուրարտական Մենուա (Ք.ա. 810-786 թթ.) և Արգիշտի I (Ք.ա. 786-764 թթ.) թագավորները փոխեցին ուժերի հարաբերակցությունը հօգուտ Ուրարտուի, իսկ Ասորեստանն ընկղմվեց Երրորդ և վերջին անցումային շրջանը: Առաջավոր Ասիայում Արգիշտի I-ի և նրա որդու՝ Սարդուրի II-ի (Ք.ա. 764-735 թթ.) ակտիվ ռազմական գործողությունների շնորհիվ, ուրարտական պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին՝ դառնալով Առաջավոր Ասիայի հզորագույն քաղաքական ուժը: Հյուսիսային Միջագետքում Ասորեստանը մեծ դժվարությամբ էր պաշտպանում բուն ասորեստանյան տիրույթները: Սարդուրի II-ին հաջողվեց ստեղծել անգամ հակաասորեստանյան հզոր դաշինք[50]:

Ասորեստանում Ք.ա. 768-746 թթ.-ին կենտրոնախույս ուժերի կողմից ապստամբությունները պարբերական բնույթ էին ստացել[51]: Ք.ա. 763 թ.-ի հունիսի 15-ին տեղի ունեցած արևի խավարումից հետո ամբողջ երկրում անկարգություններ բռնկվեցին[52]: Իրավիճակն էլ ավելի սրվեց, երբ այդ ամենին գումարվեց ուրարտացիների ռազմական ակտիվությունը: Այս շրջանում ռազմական առավելությունն ակնհայտորեն Ուրարտուի կողմն էր:

---

[49] Арутюнян Н., Биайнили (Урарту), с. 82 и сл.

[50] Luckenbill D., Ancient Records of Assyria and Babylonia, Vol. I, Chicago, 1926, §§ 769, 797; Grayson A., Assyria: Tiglath-pileser III to Sargon II (744-705 B.C.), CAH, III/2, p. 74-77.

[51] Grayson A., Assyria: Ashur-Dan II..., p. 278.

[52] Նույն տեղում, էջ 245:

3. Հաջորդ և վերջին փուլը ըստ Ա. Կ. Գրեյսոնի ընդգրկում է Ք.ա. 744-609 թթ., որը նրա մոտ անվանված է ՈՒշ նորասորեստանյան կայսրության ժամանակաշրջան[53]: Իսկ ներքին փուլաբաժանմամբ՝ կայսրության կայացումն ու տարածումը՝ Ք.ա. 745-630 թթ.՝ ա) Տերության երկրորդ բարձրացումը և նահանգային համակարգի կազմակերպումը՝ Ք.ա. 745-722 թթ., բ) կայսերական գագաթնակետը՝ Ք.ա. 722-630 թթ.: բ) Ասորեստանի թուլացումն ու անկումը՝ Ք.ա. 630-609/605 թթ.[54]: Այս գործընթացում Յ. Զաբլոցկան հակված է առանձնացնելու երեք փուլ՝ ա) Ք.ա. 934-884 թթ., բ) Ք.ա. 884-727 թթ., գ) Ք.ա. 722-627 թթ. կամ «Սարգոնյանների ժամանակաշրջան»[55]:

Այս փուլում է, որ ծնունդ առավ և զարգացավ «համաշխարհային տերության» ասորեստանյան գաղափարը: Նույն ժամանակաշրջանում նախկին պետությունների փոխարեն առաջացան նոր բնույթի պետություններ, որոնք իրավամբ կարելի է «կայսրություններ» անվանել: Առաջավոր Ասիայում առաջին իրական կայսրությունը Ասորեստանն էր, իսկ ստեղծողը՝ Թիգլաթպալասար III-ը (Ք.ա. 745-727 թթ.): Թիգլաթպալասար III-ի գլխավոր խնդիրներն էին պատերազմների ընթացքում բնակաթափ եղած տարածքների վերաբնակեցումը, երկրի տնտեսական և ռազմական ներուժի վերականգնումը: Նրա եռանդուն գործունեության շնորհիվ, կառավարման հենց առաջին տարում կատարվեցին ռազմական և վարչական բարեփոխումներ, որոնց արդյունքում Ասորեստանը կարողացավ դուրս գալ շուրջ կես դար տևած քաղաքական քաոսից:

---

[53] Նույն տեղում, էջ 239:

[54] Bedford P., Empire and Exploitation: The Neo-Assyrian Empire, p. 16ff.

[55] Заблоцка Ю., История Ближнего Востока в древности (от первых поселений до персидского завоевания), М., 1989, с. 314-315, այսպես կոչված «Սարգոնյանները», ընդհուպ մինչև Ա22ուրբանապալ, վարում էին նույն արտաքին և ներքին քաղաքականությունը, ինչ որ Թիգլաթպալասար III-ը և Սալմանասար V-ը: Սակայն, միաժամանակ այն տարբերվում էր մինչ Թիգլաթպալասար III-ը կառավարած արքաների վարած ներքին ու արտաքին քաղաքականությունից: Այդ իսկ պատճառով ավելի հավանական ենք գտնում Թիգլաթպալասար III-ից սկսած մինչև Ասորեստանի անկումն ընկած ժամանակահատվածն անվանել Ուշ ասորեստանյան թագավորություն:

Ասորեստանյան տերության պատմության մեջ սկսվում է մի նոր փուլ, որը կարելի է «*pax assyriaca*» անվանել: Վարչական բարեփոխումների արդյունքում՝ նվաճված տարածքների նկատմամբ քաղաքականությունն արմատական փոփոխության ենթարկվեց: Եթե նախկինում նվաճված տարածքները կցվում էին Ասորեստանին որպես կախյալ թագավորություններ և կառավարվում էին փոխարքաների (**ᵐᵉˡšakin**) կողմից, ապա բարեփոխումների արդյունքում փոխարքայությունները բաժանվեցին ավելի մանր վարչաքաղաքական միավորների՝ մարզերի, որոնք էլ ղեկավարում էին մարզային կառավարիչները (**ᵐᵉˡbēl pīḫâti**): Իսկ նվաճված տարածքների բնակչության նկատմամբ տարվում էր **nasāḫu**-ի՝ զանգվածային վերաբնակեցման քաղաքականություն, որն իրենից մի տեսակն էթնիկական ձուլում կամ «*assyrianization*» էր ներկայացնում[56]:

Թիգլաթպալասար III-ի հաջորդները շարունակեցին նրա քաղաքականությունը՝ Ասորեստանը վերածելով հսկայածավալ կայսրության: Սալմանասար V-ի (Ք.ա. 727-727 թթ.) և մասնավորապես Սարգոն II-ի կառավարման ընթացքում «համաշխարհային» տերության գաղափարը մտավ ավարտական փուլ: Իսկ նրանց ակտիվ արտաքին քաղաքականության արդյունքում Առաջավոր Ասիայի էթնոքաղաքական քարտեզը վերաձևման ենթարկվեց[57]: Ք.ա. 729 թ.-ին Թիգլաթպալասար III-ը գրավեց Բաբելոնիան, որն այսուհետ պետք է լիներ Ասորեստանի գլխավոր խնդիրը: Բաբելոնիան պահպանեց իր գոյությունը Ասորեստանի կազմում:

Ասորեստանա-բաբելոնյան միությունը, սակայն, ազդարարեց Ասորեստանի կործանման սկիզբը: Ասորեստանում և մասնավորապես ամբողջ Մերձավոր Արևելքում ի հայտ եկան ասորեստանամետ և բաբելոնամետ խմբավորումներ, որոնք իշխանության հասնելու համար անընդմեջ պայքարի մեջ էին: Սարգոն II-ի հաջորդները՝ Սինախխերիբը (Ք.ա. 705-681 թթ.), Ասարխադդոնը (Ք.ա. 681-669 թթ.) և

---

[56] Ճականյան Ռ., Զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Վանի թագավորությունում (Ք.ա. VIII-VII դդ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIX, Ե., 2014, էջ 40:

[57] Ճականյան Ռ., «Համաշխարհային տերության» գաղափարի կիրառումը Ասորեստանում, Գարուն, 2012, № 9-10, էջ 121-126:

Աշշուրբանիպալը (Ք.ա. 669-627[58] թթ.), անմիջականորեն գտնվում էին այս կամ այն խմբավորման ազդեցության ներքո: Վերջին երկուսի կառավարման ընթացքում ասորեստանյան զորքերը նվաճեցին անգամ Եգիպտոսը: Ասորեստանը փաստացի գտնվում էր իր հզորության գագաթնակետին և տարածքային առումով հսկայական չափերի էր հասնում ու Հին Մերձավոր Արևելքում մինչ այդ գոյություն ունեցած պետություններից ամենամեծն էր: Ասորեստանի սահմանները ձգվում էին հյուսիսում Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններից մինչև Նուբիայի սահմանները հարավում, արևելքից արևմուտք այն ձգվում էր Էլամի արևելյան սահմաններից մինչև Կիլիկիա ու Կիպրոս: Սակայն Աշշուրբանիպալի մահից հետո Ասորեստանը հայտնվեց քաղաքական քաոսի մեջ՝ երկրում սկսեց մոլեգնել քաղաքացիական պատերազմը: Ասորեստանի գահի համար մղվող պայքարն արդյունքում հանգեցրեց հսկայածավալ կայսրության տրոհմանը: Ասորեստանում միաժամանակ հայտնվեցին մի քանի գահակալներ, որոնք, սակայն, ձևականորեն կախման մեջ էին Նինվեից: Ապստամբեց նաև Բաբելոնիան և շուրջ 21-ամյա պայքարից հետո վերջ դրեց Ասորեստանի գոյությանը: Բաբելոնիան, որը սկզբնապես վարում էր ազատագրական պայքար և սկզբնապես ձգտում էր անկախության, սկսած մոտ Ք.ա. 616 թ.-ից՝ անցավ հակահարձակման և սկսեց վարել նվաճողական պատերազմ: Նախ Ք.ա. 614 թ.-ին բաբելացիները գրավեցին նախկին մայրաքաղաք Աշշուրը, ապա իրենց դաշնակից մարերի գլխավորությամբ՝ Ք.ա. 612 թ.-ին գրավեցին ու ավերեցին Ասորեստանի վեհաշուք մայրաքաղաք Նինվեն, իսկ Ք.ա. 607 թ.-ին գրավեցին Խառանը[59]: Իսկ Ք.ա. 605 թ.-ին բաբելոնյան ուժերը գահաժառանգ Նաբուգոդոնոսորի գլխավորությամբ, Կարքեմիշի տակ կարողացավ պարտության մատնել Ասորեստանի դաշնակից Եգիպտոսին և ավարտին հասցնել բուն ասսուրական տարածքների նվաճումը:

---

[58] Աշշուրբանապալի կառավարման վերջին տարվա խնդիրների վերաբերյալ տե՛ս Ցականյան Ռ., Աշշուրբանապալի կառավարման վերջին տարին, Մերձավոր Արևելք, 2011, № 7, էջ 270-276:

[59] Մանրամասն տե՛ս Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալասարի հյուսիսային արշավանքները, ՊԲՀ, 2011, № 1 (186), էջ 261-273:

Դեռևս, Սարգոն II-ը մայրաքաղաքը Կալխու/Կալախից տեղափոխեց Ք.ա. 712-707 թթ.-ին տեղափոխեց իր կողմից կառուցած Դուր-Շարրուկին, սակայն նրա մահից անմիջապես հետո Սինախխերիբը չցանկացավ այնտեղ մնալ և մայրաքաղաքը տեղափոխեց Նինվե (ներկայիս Կույունջիկը), որն էլ փաստացի դարձավ Ասորեստանի վերջին մայրաքաղաքը, եթե իհարկե բացառենք այն հանգամանքը, որ վերջին արքա Աշշուր-ուբալլիթ II-ը (Ք.ա. 612-607/05 թթ.) գահ բարձրացավ Խառան քաղաքում:

Չնայած բազում ներքին առանձնահատկություններին, որոնցով և պայմանավորված են վերոհիշյալ պարբերացումները, այնուամենայնիվ պետք է նշել նաև, որ այն ունի պայմանական բնույթ:

TSAKANYAN RUSLAN
(IOS)

ON THE PERIODIZATION OF THE ASSYRIAN HISTORY

This article briefly presents the entire history of existence of the state of Assyria, from the very beginning till its fall. The author had drawn attention to every stage of the Assyrian history, to the internal and external characteristics of Old Assyrian kingdom (XX cent.-1420 B.C.), Middle Assyrian kingdom (1419-935 B.C.) and Neo Assyrian kingdom (934-607/05 B.C.) as far as possible. Also the author tried a new approach to chronological problems. However, in any case, the author came to the conclusion that despite the many internal characteristics, which are determined by the periodization, it should also be noted that it has a conventional character.

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՆՆԱ
(ԿՀՊ, ԱՄՆ)

ՀԱՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՈՐԲԵՐԻ «ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ» ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո պարզ է դառնում, որ Հայոց ցեղասպանությունից «փրկվածների» մեծամասնությունը կանայք և երեխաներ են, և նրանց մեծ մասն իսլամացած են և գերության մեջ են գտնվում թուրքերի, քրդերի և արաբների տներում: Պատերազմը դեռ չէր ավարտվել, երբ 1918 թ. գարնանը եգիպտահայերը կազմեցին առաջին փրկարար խմբերը, հիմնականում ուրֆացիներից բաղկացած, որոնք սկսեցին գերված հայերի փրկության աշխատանքները: Այս գործընթացը հետագայում պատմության մեջ մտավ «Փրկության առաքելություն» կամ «Ազատության առաքելություն» անունով և շարունակվեց մինչև 1930-ական թվականները: Ազատագարման այս դժվարին և վտանգավոր առաքելության մաս էին կազմում ինչպես հայ և օտար միջազգային բարեգործական կազմակերպություններ, այնպես էլ անհատ գործիչներ, որոնց շնորհիվ հազարավոր հայ որբեր և կանայք ազատագրվեցին ուծացումից և վերադարձան դեպի հայություն:

1918 թ. գարնանը թուրքերի իրար հաջորդող պարտությունները և դաշնակիցների առաջխաղացումը Մերձավոր Արևելքում հնարավորություն տվեց հայկական կազմակերպություններին ոչ միայն օգնել հայ գաղթականներին, այլև ազատագրել գերության մեջ գտնվողներին: Այս գործի հիմնական ծանրությունն իր ուսերին վերցրել էր ՀԲԸ Միությունը, որը բանակցությունների շնորհիվ համագործակցության պայմանավորվածություններ էր ձեռք բերել

դաշնակիցների զինվորական իշխանությունների հետ[1]: Այս համագործակցության շնորհիվ Միությունը պարբերաբար տեղեկություններ էր ստանում ինչպես գրավված շրջաններում գտնվող հայ գաղթականների, այնպես էլ իսլամների մոտ գերության մեջ գտնվող կանանց և որբերի մասին: Եթե գաղթականների օգնության հարցում դաշնակիցների ներկայությունը հսկայական դեր ուներ, ապա առևանգվածների և գերեվարվածների պարագայում նրանց ներկայությունը գրեթե ոչինչ չէր փոխում: Այս հանգամանքը առկա էր մասնավորապես Պաղեստինի և Հորդանանի շրջաններում, որտեղ արաբ ցեղախմբերի մեծամասնությունը իրենց կողմից գերված կանանց և երեխաներին համարում էին սեփականություն: Հատկապես արաբ բեդվինների համար երիտասարդ հայ աղջիկների, կանանց և որբերի առևտուրը, որը նրանք իրականացնում էին անգամ երկրի սահմաններից դուրս, մեծ եկամուտ էր բերում[2]:

Գերիներին փրկելու նպատակով առաջին *«ազատագրումի»* խումբը կազմվում է 1918 թ. գարնանը, երբ Սինայի և Պաղեստինի մեջ դաշնակից զորքի առաջխաղացումը հնարավորություն է տալիս բազմաթիվ հայերի (նրանց մեծամասնությունը կազմում էին օսմանյան բանակի դասալիքները[3]) անցնել Աքապա, որն արդեն գրավված էր բրիտանացիների կողմից: Այստեղ, ապրիլին, մարաշցի Հովհաննես Քըլըճեանի առաջարկով կազմվում է մեծամասամբ ուրֆացիներից բաղկացած զինյալների փոքրիկ խումբ, որը բրիտանական բանակի կողքին մասնակցում էր դեպի հյուսիս հարձակումներին՝ Դամասկոսի և Ջբել-Դրուզի հայերին ազատելու նպատակով: Խումբը հովանավորվում էր ՀԲԸՄ-ի կողմից, և նրա ղեկավարն էր օսմանյան չորրորդ բանակի նախկին զինվոր[4], ուրֆացի Լևոն Յոթնեղբայրեանը[5]:

---

[1] Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան. Հատոր Առաջին, 1906-1940, խմբ. Յարութիւն Ռ. Գէորգեանի և Վահէ Թաշճեանի, Գահիրէ-Փարիզ-Նիւ-Եորք, 2006, էջ 50, 53:

[2] Նույն տեղում, էջ 55:

[3] Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան..., էջ 55:

[4] Crows of the Desert: The Memoirs of Levon Yotnakhparian, edited by Levon Parian and Ishkhan Jinbashian, (Parian Photographic Design, California, USA, 2012), p. 19-26.

[5] Նույն տեղում, էջ 49-50:

Լևոնի զինակիցներն էին Եսայի Քըվրըշըքյանը, Թադոս Ղարաքեյլիյանը, Փանոս Գարաօղլանյանը և այլոք:

Կահիրեյի Հայոց առաջնորդրանի առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսի ջանքերով ՀԲԸ Միության Եգիպտահայ նպաստամատույցի, Հայ ազգային միության և Միացյալ որբախնամի անդամներից բաղկացած միացյալ հատուկ մարմին է ստեղծվում, որը պետք է զբաղվեր փրկության առաքելությամբ: 1918 թ. նոյեմբերի 30-ին Թորգոմ Եպիսկոպոսը այդ նորաստեղծ մարմնի անդամներին ուղակում է հրահանգ-ծրագիր, որը պետք է դառնար նրանց գործունեության հիմնական հենաքարը: Հրահանգ-ծրագիրը բաղկացած էր տասնհինգ կետերից, որոնցից երրորդ և ութերորդ կետերը հատկապես վերաբերում էին իսլամների մոտ գտնվողների ազատագրմանը: Այս հատուկ մարմնի և ոչ մի անդամ չէր վարձատրվում, և նրանցից յուրաքանչյուրի համար ամենամեծ վարձատրությունը հայրենակիցների փրկության գործին մասնակից լինելն էր[6]:

«Փրկության առաքելության» մաս էին կազմում նաև վերապրող գաղթականները, որոնք քաջատեղյակ էին տվյալ տարածաշրջանի գերիներից: Օրինակ Հազգայի անապատ աքսորված գաղթականներից ասլանբեկցի բժիշկ Սարգիս Սէլեանը մինչև 1919-ի գարունը որպես քաղաքապետի բժիշկ մնաց Հազգայում և կազմակերպեց տեղի գաղթականներին Հալեպ փոխադրելու կարևոր գործը: Նրա հաջորդ կարևոր առաքելությունը եղավ անապատում և շրջակա արաբների վրաններում գերության մեջ գտնվող հայուհիներին, պատանիներին ազատագրելը, որոնցից կազմած վերջին քարավանով ինքն էլ տեղափոխվեց Հալեպ, ուր շարունակեց իր ազգային գործունեությունը[7]: Սեբաստացի Վաղարշակ Մեծմօրուքեան պատանին եւ Չայ-Քիւրդեցի տիկին Սողիկ Նիկողոսեանը տարագրության արդյունքում հաստատվում են Սուրուճում, և պատերազմից հետո իրենց ջանքերով

---

[6] Հայաստանի Ազգային Արխիվ, Ռուբեն Հերյանի անձնական ֆոնդ № 420, ց. 65, գ. 5, թ. 2, 3:

[7] Գաբիկյան Կ., Եղերապատում Փոքուն Հայոց եւ Նորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ, Հայրենիք տպարան Պոսթըն, հրատարակութիւն «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան» Ց'Ամերիկա, 1924, էջ 443:

մոտ 800 որբեր, որբուհիներ են կարողանում հավաքել և ազատել գերությունից[8]:

«Փրկության առաքելության» կարևոր գործիչներից են եղել նաև Հայկական լեգեոնի կամավորները, որոնցից հատկապես պետք է առանձնացնել Ռուբեն Հերյանին[9]: 1918 թ. ամռանը, երբ հայկական լեգեոնի կամավորներին մաս-մաս Պաղեստինի ճակատ էին տեղափոխում, Հերյանն իր տարիքի պատճառով չուղարկվեց: Նա նշանակվեց Կահիրեյի մոտ գտնվող մի հիվանդանոցի հսկիչ: Հերյանը, չնայած հետևում և հոգ էր տանում վիրավոր հայ կամավորներին և ֆրանսիացի զինվորներին, սակայն իր գրած նամակներից[10] երևում է, թե որքան կփափագեր ավելի երիտասարդ լինել և ինքն էլ մյուս լեգեոնականների նման ստանձներ հայրենիքի փրկության գործը: Ահա այդ է պատճառը, որ երբ զինադադար կնքվեց և մի փոքր հնարավորություն ստեղծվեց ազատագրելու ցեղասպանության տարիներին թուրքերի, քրդերի և արաբների կողմից բռնի գերեվարված և ուծացման մեջ գտնվող հայ կանանց և երեխաներին, նա եղավ այդ գործի ամենանվիրյալ գործիչներից մեկը: *«Դյուրին չէր օտարներու կողմէ որդեգրուած, կրօնափոխ դարձած, կամ օտարի հետ ամուսնացած հայ մը փրկելը: Անոնց տէրերը զանոնք յանձնելու տրամադիր չէին ըլլար շատ անգամ, կը պահէին անոնց ինքնութիւնն ու*

---

[8] Նույն տեղում, էջ 549:

[9] Ռուբեն Հերյանը ծնվել է Թոքատում՝ 1869 թ.: 1883 թ. ավարտել է Թոքատի ազգային վարժարանը, որից հետո տեղափոխվել է Կ.Պոլիս, ապա Ամերիկա, հաստատվել Նյու Յորքում, որտեղ սկսել է զբաղվել առևտրով՝ հիմք դնելով իր անձնական գործին: Լինելով Հնչակյան, ապա վերափոխված Ռամկավար Ազատական կուսակցության անդամ դեռևս Պոլսից, Նյու Յորքում ևս անդամակցել է այս կուսակցությանը և զբաղվել ազգային գործերով: Նա ամերիկայում Թոքատի Կրթասիրաց Միութեան հիմնադիրներից մեկն է եղել: Երբ 1914 թ. սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, Հերյանը բավականին կայացել էր իր գործի մեջ և մեծ հեղինակություն էր վայելում ամերիկահայերի շրջանում, և երբ հայ ժողովրդի համեպ իրականացված ցեղասպանության լուրերը հասան Ամերիկա, թողնելով ամեն ինչ, նա էլ հայ կամավորների հետ եկավ Բաղդատ, ապա անցավ Կիպրոս և այնտեղ միացավ Հայկական լեգեոնին:

[10] Հայաստանի Ազգային Արխիվ, Ռուբեն Հերյանի անձնական ֆոնդ № 420, ց. 65, գ. 2, թ. 2, 3, 5, 6:

գոյութիւնը, հետքը կը կորսնցնէին Միջագետքի ցեղախումբերուն մէջ տեղէ տեղ զանոնք փոխադրելով: Հաստատ տեղեկութիւններ ունենալով հանդերձ՝ Ազատարար Միսիոնը երբեմն ամիսներ ու տարիներ կ'իյնար հայու մը հետքերով, յաճախ ձեռնունայն մնալով»[11]:

ՀՀ Ազգային արխիվում պահվում է Ռուբեն Հերյանի անձնական արխիվը, որում առկա հարյուրավոր նամակները, խնդրագրերը, պաշտոնական գրությունները, փաստաթղթերը բացահայտում են նրա դժվարին գործունեության ողջ պատմությունը: Արխիվում մեծ թիվ են կազմում հատկապես խնդրագիր- նամակները, որոնք մեկ հիմնական բովանդակություն ունեն՝ գտնել կամ փրկել, ազատագրել այս կամ այն ազգականին՝ մորը, աղջկան, քրոջը, որդուն և այլն: Այդ խնդրագրերն հանդիպում են Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության հայաբնակ տարբեր շրջանների բարբառներով, երբեմն հայատառ թուրքերենով, երբեմն արաբերենով: Նամակագիրները հաճախ ականատես են իրենց ծնողների սպանությանը, որդիների և դուստրերի բռնաբարմանը, խոշտանգմանն ու նվաստացմանը: Այդ նամակները երբեմն փոքրիկ թղթի կտորներ են, կամ այցեքարտեր[12], որոնց վրա մատիտով խզբզված են ցեղասպանությունը վերապրած հայերի դժբախտ ճակատագրերը:

1919 թ. ՀԲԸՄ հիմնում է *Ազատագրումի հիմնադրամը*, որպեսզի իրականացնի *«անապատի խորքերը բռնագրաւած կամ թափառական որբերուն ազատագրումի, եւ միաժամանակ դեռատի հայուհիներու հարէմներէ ձերբազատումի կենսական ծրագիրը»*[13]: 1919 թ. ապրիլից Սերոբյան Սրբազանի միջնորդությամբ Հերյանին հանձնարարվում է զբաղվել հայ կանանց և երեխաների փնտրտուքով և նրա գործունեության հիմնական շրջանները Հալեպն ու Դեր Զորն էին իրենց շրջակայքով[14]:

---

[11] Չոլաքեան Յ., Քարէն Եփփէ հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալէպ, 2001, էջ 52:

[12] Հայաստանի Ազգային Արխիվ, Ռուբեն Հերյանի անձնական ֆոնդ № 420, ց. 65, գ. 27:

[13] Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն, Մուղնի հրատարակչություն, Ե., 2005, էջ 99:

[14] Հայաստանի Ազգային Արխիվ, Ռուբեն Հերյանի անձնական ֆոնդ № 420, ց. 65, գ. 51, թ. 5:

1919 թ. սեպտեմբերի 6-ի Ադանայում տպագրվող Հայ Ձայնը գրում է. «Մեծ Անապատականը, աննման Ռուբեն Հերյանը...ահա վեց ամիս է, որ ամեն ինչ մոռցած ինքնասպան հրայրքով մը իրեն նետած է սպանդարանները՝ այն տեղեն ետին բեկորները հավաքելու համար: Աշիրեթապետերը արդեն զինք կճանչնան որպես Mufettish el-Ermen «Հայերի տեսուչը»...»[15]: Առանց կաշառքի անհնար էր գործը հաջողել, իսկ գումարները, որ Հերյանի տրամադրության տակ էին, բավարար չէին, սակայն նա ամեն միջոցի դիմում էր փրկելու համար հայ գերիներին: «Հայ Ձայնի» սեպտեմբերի 9-ի համարը[16] հրապարակել էր Հայ Ռամկավար կուսակցության Ադանայի կենտրոնական ակումբի հանդիպման մանրամասները, որտեղ ելույթ էր ունեցել նաև Հերյանը: Նա պատմելով իր առաքելության դժվարությունների մասին, կոչ էր արել հայությանը գումար հավաքել, և որքան հնարավոր է շատ հայ փրկել անապատներից: Հերյանի համոզմամբ ժամանակի հրամայականն էր փրկել այդ գերիներին, վաղը արդեն ուշ կլիներ: Նա մեղադրում էր հայ ազգային այն գործիչներին, ովքեր առաջնային չէին համարում փրկության առաքելությունը: Այս մտահոգությունը չլքեց նրան իր ապրած ողջ կյանքի ընթացքում: *«...արդեօք ես յիմար եմ, թէ խոսքի ազգասերները խելացի են,-գրում է Հերյանը 1919 թ. հուլիսի 19-ին Դեր Զորից իր բարեկամուհուն,- բայց իմ զօրաւոր համոզումին հակառակ չեմ կրնար գործիլ.«Որբերը վաղուան Հայաստանի կորիզը պիտի կազմէն, մէկ հատ աւելի ազատելը շահ մըն է, անոնք իմ սրտի հատորներն են, երբ ջեօլերը կը ճամբորդիմ, հօն, տաք արեւին տակ, անապատի ծաղիկներուն պէս ցցուղ սպիտակափայլ գանգերը եւ ոսկորները կը պօռան «Ազատեցէք մեր որբերը», ո՞վ կրնայ անտարբեր ըլլալ անոնց ի տես:.... Պիտի աշխատիմ, մինչեւ որ սատկիմ...»*[17]:

Հանգանակություն հավաքելու նպատակով Հերյանը 1920 թ. վերջերին մեկնեց Եվրոպա, ապա՝ ԱՄՆ: Նա որոշում էր կայացրել վերջնականապես տեղափոխվել հայրենիք, ամուսնանալ հայ որբուհու հետ և շարունակել փրկության առաքելությունը, սակայն, ցավոք,

---

[15] Հայ Ձայն, Ադանա, 1919 թ., սեպտեմբեր 6, № 204:

[16] Հայաստանի Ազգային Արխիվ, Ռուբեն Հերյանի անձնական ֆոնդ № 420, ց. 65, գ. 2, թ. 20:

[17] Հայ Ձայն, Ադանա, 1919 թ., սեպտեմբեր 9, № 207:

վերադարձից հետո, հարսանիքից մի քանի օր առաջ՝ 1921 թ. հուլիսի 7-ին մահացավ սրտի կաթվածից:

Հնչակյան գործիչ Էսկի-Շեհիցի Աբրահամ Գարակէօզեանը նույնպես անհատական զոհողություններով Տէր-Զօրի եւ Միջագետքի տարբեր շրջաններից բազմաթիվ որբեր և հայուհիներ է ազատագրել: Նույնը կարելի է ասել Ամասիացի Յարութիւն Պագալեանի մասին, ում անհատական ջանքերի շնորհիվ Սամուսատի և Զեինալի սարերում պահվող որբերից շատերը ազատագրվեցին[18]: Ազատագրման գործում կարևոր դեր են խաղացել նաև Առաքել Չաքրեանն ու Փառնակ Շիշիկյանը: Լևոն Աճէմեանը մեծ թվով գերիներ ազատեց Մուսուլի շրջակայքից: Ցեղասպանությունից հետո վերապրածների ջանքերով կազմված հայրենակցական միությունները նույնպես կազմակերպում էին փրկության հատուկ ջոկատներ: Այսպես օր. Կ. Պոլսից Քղիի, Բալուի, Երզնկայի, Չմշկածագի Հայրենակցական Միությունները իրենց որբահավաքներն ունեին:

Հարկ է նշել, որ Սևրի դաշնագրի 142-րդ հոդվածը վեաբերում էր ցեղասպանության տարիներին գերեվարված հայության ազատագրմանը և այս առաքելության իրականացման պարտականությունը դրվում էր Ազգերի Լիգայի ներկայացուցիչների՝ հանձինս դանիացի միսիոներուհի Կարեն Եփփեի վրա: Եփփեի գործունեության շնորհիվ 2000-ից ավել հայեր փրկվեցին գերությունից և բռնի ուծացումից: Հատկապես այս գործը ղեկավարում էր նրա որդեգիր .Միսակ Մելքոնյանը, ով ազատության առաքելության առաջամարտիկներից էր: Միսակն ինչպես հայ, այնպես էլ արաբ գործընկերներ ուներ, որոնցից նա կազմում էր ձիավորների խմբեր: Վերջիններս շրջում էին անապատները, բեդվիների վրաններից գտնում և ազատագրում էին հայ որբերին և կանանց: Այդ խմբերը երբեմն անցնում էին սահմանը և ազատագրում սահմանից այնկողմ գտնվող կանանց և երեխաներին, որոնք թուրքերի և քրդերի մոտ էին պահվում[19]:

Սկզբնական շրջանում ազատագրվածներին տեղավորում էին հատուկ ճամբարում, որը գտնվում էր Հալեպի հյուսիսում ընկած Շեխ

---

[18] Գաբիկյան Կ., Եղերապատում..., էջ 549:

[19] Չոլաքեան Ց. , նշվ. աշխ., էջ 76:

Դահա կոչվող այգիներում, Քուեյք գետի ափին: Այդ կայանատեղին, ուր այժմ քաղաքի խիտ բնակեցված թաղամասերից մեկն է, այն ժամանակ բավական հեռու էր բուն քաղաքից: Այնտեղ տեղադրվել էին համապատասխան վրաններ, որտեղ էլ ժամանակավոր տեղավորվում էին թուրքերից, քրդերից և անապատի բեդուիններից ազատագրված որբերն ու այրիները: Բոլորին ցուցաբերվում էր առաջին բժշկական օգնություն, սնունդ և հագուստ էր բաժանվում: Այստեղ ստուգվում էր նաև փրկվածների ու փախստականների ինքնությունը, և նրանց անուններով ցուցակները ուղարկվում էին համապատասխանաբար հայկական կենտրոններին, եկեղեցիներին, թերթերի խմբագրություններին, որոնք էլ իրենց հերթին շրջանառում էին այդ ցուցակները՝ ազգական գտնելու հույսով: Այդ շրջանում գրեթե բոլոր թերթերն ունեին «*փնտրվում է*» բաժինը, և շատերի համար դա որևէ հարազատ գտնելու միակ հույսն էր: Շատերն էին քաղաքից այս վայրը գալիս՝ հարազատ գտնելու կամ նրանց ճակատագրի մասին որևէ նորություն ունենալու, տեղեկություն հավաքելու հույսով:

Փրկության առաքելության կարևոր գործիչներից էր նաև Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Եղիայանը, ով համագործակցելով բրիտանական և ֆրանսիական զինվորական վերնախավի հետ, կազմակերպում էր այս դժվարին գործը: Նրա շնորհիվ հատկապես հավաքվեցին Կ.Պոլսի թուրքական հարեմներում գտնվող հայուհիները: Այս ժամանակաշրջանի ամենանկճոռոտ հարցերից էր հատկապես այն որբերի և կանանց հարցը, ովքեր մի շարք պատճառներից ելնելով հրաժարվում էին վերադառնալ հայություն: Որբերից շատերը, տարիքով շատ փոքր լինելով, ցեղասպանության տարիներին մոռացել էին իրենց մայրենի լեզուն և ազգությունը: Կային նաև այնպիսիները, որ հիշելով անգամ, զանազան պատճառներից ելնելով մերժում էին իրենց հայ լինելը: Կանանց պարագան էլ ավելի բարդ էր[20]:

Ազատագրվածների ինքնության հետ կապված վիճելի հարցը լուծելու համար Զավեն Սրբազան պատրիարքը ազատարար միսիոնի գործիչներից Առաքել Չաքրյանի հետ Բրիտանական

---

[20] Vahé Tachjian, Gender, nationalism, exclusion: the reintegration process of female survivors of the Armenian Genocide, Nations and Nationalism, 15 (1), 2009, p. 60-80.

իշխանությունների համաձայնությամբ հիմնում են «Չեզոք տուն», որը մեկական հայ, ամերիկացի և թուրք կանանցից բաղկացած հանձնախումբ ուներ: Այս հանձնախումբը քննության էր առնում յուրաքանչյուր ազատագրվածի գործը և որոշում նրա իրական ինքնությունը[21]:

Այսպիսով, Ցեղասպանության հետևանքով իսլամների մոտ գերության մեջ գտնվող և ուծացման դատապարտված հազարավոր հայ կանանց և երեխաների ազատագրման առաքելությունը հետպատերազմական շրջանում հայության ամենակարևոր խնդիրներից էր, որը պահանջում էր հրատապ լուծում: Այս գործում ներգրավված են եղել ոչ միայն օտար հասարակական կազմակերպություններ, այլև հայ կազմակերպություններ և անհատներ, որոնք ջանք չեն խնայել իրականացնելու իրենց առջև դրված մեծ ծրագիրը՝ փրկելու գերության մեջ գտնվող հայերին: «Փրկության առաքելությանը» հետպատերազմական շրջանի հայոց պատմության հերոսական դրվագներից է: Այս գործընթացի շնորհիվ հազարավոր հայեր են փրկվել:

ALEKSANYAN ANNA
(CU, USA)

THE RESCUE MISSION OF ARMENIAN WOMEN AND ORPHANS AFTER WWI

During WWI thousands of women, young girls and children had to change their religion and integrate into Muslim families as a result of the genocide committed by the Ottoman Government. After the end of the war when the armies of the Allies had occupied most part of the Eastern provinces of the Ottoman Empire, there was an opportunity to rescue and

---

[21] Զաւէն Արքեպս., Պատրիարքական Յուշերս. Վավերագրեր և Վկայութիւններ, տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1947, էջ 288-297;Kévorkian R., The Armenian Genocide: A Complete History, I. B TAURIS, London, New York, 2011, p. 758-762; Ekmekcioglu L., A Climate of Abduction, a Climate for Redemption: The Politics of Inclusion During and After the Armenian Genocide, Comparative Studies of Society and History, 2013, 55(3), p. 534-552.

liberate Armenian women and orphans being in the captivity of Muslim families.

A lot of Armenian and international organizations undertook the activity of finding and saving the "survived" Armenian women and children with the help of the Allies, which appeared to be a tough work to do. The rescue missions continued until 1930s and thousands of Armenians were liberated and returned to their communities thus reconstructing their identity.

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
(ԱԻ)

ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Համաշխարհային պատմության մեջ 20-րդ դարը նշանավորվեց մի շարք կարևոր իրադարձություններով: Դարի առաջին ամենաարյունալի հակամարտությունը Առաջին համաշխարհային պատերազմն էր: Պատերազմը տեղի է ունեցել երկու ռազմաքաղաքական միավորումների՝ Քառյակ միության երկրների (Գերմանական կայսրություն, Ավստրո-Հունգարիա, Օսմանյան կայսրություն, 1915 թ.-ից Բուլղարիա) և Անտանտի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, 1917 թ.-ից ԱՄՆ, ընդհանուր թվով 34 պետություն) միջև: Պատերազմի բուն նպատակը աշխարհը վերաբաժանելն էր, նրա քաղաքական քարտեզի վերաձևումը: Առաջին համաշխարհայինի պատճառներից մեկն էր նաև արաբական երկրներին տիրելու համար պայքարն էր: Գերմանիան ցանկանում էր ամրապնդվել օսմանյան սուլթանի տիրույթներում և սպառնում էր Մերձավոր Արևելքում անգլիական դիրքերին: Ֆրանսիան ձգտում էր Թուրքիայից ստանալ Սիրիան և Կիլիկիան, իսկ Մեծ Բրիտանիան նպատակ ուներ զավթել Իրաքը և Պաղեստինն ու ամուր հաստատվել Եգիպտոսում:

1914 թ. հոկտեմբերի 29-ին Օսմանյան կայսրությունը մտավ պատերազմի մեջ ընդդեմ Անտանտի: Ինքնաբերաբար պատերազմի մեջ ներքաշվեցին արաբական երկրները, որոնք գտնվում էին օսմանյան տիրապետության տակ: Պատերազմի սկզբում արաբ ազգայնականները կանգնեցին ընտրության առջև. կամ աջակցություն Անտանտին և հնարավոր անգլո-ֆրանսիական օկուպացիա, կամ մասնակցություն պատերազմին Օսմանյան կայսրության կողմից՝ նրա

սահմաններում ազգային պահանջների բավարարմանը հասնելու հեռանկարով[1]:

Ազգայնականների մեծ մասը անցան Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմը: Միայն համեմատաբար ոչ մեծ, բայց ազդեցիկ խումբ էր, որ պարզ պատկերացնում էր անգլո-ֆրանսիական օկուպացիայի հետ կապված վտանգը, և նախընտրեց աստարել Օսմանյան կայսրությանը:

Այս շրջանում թուրքերի տիրապետությունից դժգոհ արաբների մոտ արդեն հասունացել էին ապստամբության բոլոր նախադրյալները, կուտակվել էր խոր դժգոհություն, և այդ ապստամբության կենտրոնը դարձավ Հիջազը, իսկ ղեկավարը՝ շերիֆ Հուսեյնը:

Արդեն 1914 թ. սկզբին, ստանալով արաբական ցեղերի աջակցությունը, Հուսեյնն իր կրոնական ու քաղաքական ազդեցությունն ամրապնդեց Հիջազում և տարածեց Օսմանյան կայսրության արաբական այլ շրջաններում: Թուրքական տիրապետությանը վերջ դնելու համար Հուսեյնին անհրաժեշտ էր նաև որևէ մեծ տերության օժանդակությունը: Նրա ընտրությունը կանգնեց Մեծ Բրիտանիայի վրա, որի հետ դեռևս Կ. Պոլսում գտնվելու տարիներին սերտ կապեր էր հաստատել: Անգլիայի հետ այդ բանակցությունների իրականացման առաքելությունը Հուսեյնը վստահեց իր երկրորդ որդուն՝ Աբդալլահին, որը նաև օսմանյան խորհրդարանում պատգամավոր էր[2]:

1914 թ. Աբդալլահը Կահիրեում հանդիպեց բրիտանական գլխավոր կառավարիչ լորդ Կիտչեներին: Աբդալլահը նրան հարցրեց, թե Անգլիան կարո՞ղ է աջակցություն ցույց տալ շերիֆին, եթե վերջինս խնդիրներ ունենա Կ. Պոլսի հետ, և արդյոք Հուսեյնը կարող է ապավինել Բրիտանիայի բարյացակամ վերաբերմունքին այն դեպքում, երբ այդ խնդիրները կստիպեն նրան ապստամբել Օսմանյան կայսրության դեմ[3]: Հերբերտ Կիտչեները, ընդգծելով, որ ինքն արտահայտում է իր տեսակետը, ասաց Աբդալլահին, որ Մեծ

---

[1] Луцкий В., Новая история арабских стран, М., 1966, с. 327.

[2] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 107:

[3] Kedourie Elie, England and the Middle East, Cambridge: Bowes & Bowes, 1956, p. 48.

Բրիտանիայի ավանդական քաղաքականությունն է պահպանել բարեկամությունը Օսմանյան կայսրության հետ և երկիրը պատրաստ չէ կոնֆլիկտին միջամտել:

Սակայն Գերմանիայի տնտեսական և ռազմական ներկայության ընդարձակումը Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև կայսրության՝ Գերմանիայի հետ միասին պատերազմի մեջ մտնելու և Մեծ Բրիտանիայի դեմ «ջիհադի» կարգախոսի ներքո արաբական երկրներին համախմբելու հնարավորությունից մտահոգված՝ Հերբերտ Կիտչեները հրահանգեց իր խորհրդական Ռոնալդ Սթրոսին կապի մեջ մտնել Հուսեյնի հետ և նրանից պարզաբանել հետևյալը՝ եթե Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտնի Գերմանիայի կողմից, արդյո՞ք Հուսեյնը կհետևի նրան, թե՞ կմիանա Մեծ Բրիտանիային՝ ընդդեմ Թուրքիայի: Հուսեյնը կողմ էր բրիտանացիների հետ միասին թուրքերի դեմ պայքար մղելու գաղափարին, սակայն, եթե Աբդալլահը համամիտ էր այդ հարցում հոր հետ, ապա Ֆեյսալը՝ Հուսեյնի երրորդ որդին, թուրքերի հետ համագործակցության կողմնակից էր: Վերջինս գտնում էր, որ Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան տարածքային նկրտումներ ունեն Սիրիայի և Իրաքի նկատմամբ, որոնք կգրավվեն նրանց կողմից թուքերին այնտեղից դուրս մղելուց անմիջապես հետո[4]:

Բայց, 1915 թ. փետրվարին թուրքերի կողմից կազմակերպված Հուսեյնի վրա անհաջող մահափորձից հետո, իրադարձություններն առավել արագ զարգացում ստացան[5]:

Արդեն 1915 թ. հուլիսի 14-ին Հուսեյնը առաջին նամակը հղեց Կահիրեում Հերբերտ Կիտչեներին փոխարինած Մակ-Մահոնին: Ընդհանուր առմամբ կողմերի միջև փոխանակվեց 10 նամակ: Վերջին նամակը թվագրված է 1916 թ. մարտի 10-ին[6]:

Բանակցությունների հիմքում Հուսեյնը դրեց Դամասկոսի արձանագրության[7] հիմնական պահանջները՝ որոշ

---

[4] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. II, Ե., 2004, էջ 543:

[5] Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 108:

[6] Амин Саид, Восстания арабов в XX веке, М., 1964., с. 67.

[7] Այդ գաղտնի փաստաթղթում, որը հանձնվել էր Ֆեյսալին Հուսեյնին փոխանցելու համար, արաբ առաջնորդները շարադրել էին այն պայմանները, որոնց կատարման դեպքում նրանք պատրաստ էին թուրքական տիրապետության դեմ պայքարում համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ:

փոփոխություններով, որը Ֆեյսալին էին հանձնել սիրիական գաղտնի կազմակերպությունները («ալ-Ֆաթաթ» և «ալ-Ահդ»), նրա՝ 1915 թ. մայիսի 23-ին Դամասկոս այցելության ժամանակ:

Հուսեյնը նշում էր, որ հաշվի առնելով քաղաքական, աշխարհագրական և տնտեսական գործոնները և Մեծ Բրիտանիայի կառավարության դիրքորոշումը, նրանք՝ արաբները, «բրիտանական օգնությունը գերադասում են որևէ մեկ այլ երկրի օգնությունից»: Բայց Մեծ Բրիտանիայի հետ արաբների մերձեցման համար, արաբները պահանջում էին ճանաչել Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Արաբական թերակղզու անկախությունը, բացառությամբ Ադենի, և պաշտպանական դաշինք կնքել անկախ արաբական պետության հետ, որը պետք է ստեղծվեր այդ տարածքների վրա:

Հետագա նամակագրության ընթացքում կողմերը գնացին զիջումների, հիմնականում Հուսեյնը, և համաձայնության եկան հետևյալի շուրջ: Բրիտանիան կճանաչի այդ արաբական երկրների անկախությունը բացառությամբ որոշ տարածքների, որոնք զուտ արաբական չէին, կամ էլ բրիտանական շահերից ելնելով պահանջում էին հատուկ մոտեցում: Այդ տարածքներն էին՝ 1) Կիլիկիայի Մերսին և Ալեքսանդրետի շրջանները 2) Լիբանանի և Սիրիայի մի մասը, որը ընկած է Դամասկոսի և Հալեպի գծից արևմուտք 3) Հվ. Իրաքը Բաղդադից մինչև Բասրա[8]: Մեծ Բրիտանիան համաձայնվեց ապստամբության ընթացքում Հուսեյնին ցույց տալ քաղաքական, ռազմական, նյութական և ֆինանսական օգնություն:

Ըստ դրա՝ Բրիտանիան պետք է ճանաչեր Արաբական անկախ պետությունը հետևյալ սահմաններում՝ հյուսիսում՝ Մերսին-Ադանա գծով, ապա Բիրեջիկ-Ուրֆա-Մարդին-Միդյատ-Ջազիր իբն Օմար-Ամադիա մինչև պարսկական սահման, արևելքում՝ պարսկական սահմանի երկայնքով և Պարսից ծոցով, հարավում՝ Հնդկական օվկիանոսի ափով, արևմուտքում՝ Կարմիր և Միջերկրական ծովերի երկայնքով: Նախատեսվում էր նաև պաշտպանական դաշինքի կնքում Մեծ Բրիտանիայի և արաբական ապագա պետության միջև (Antonius G., The Arab Awakening, New York, 1946, p. 157-158):

[8] Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 109:

Այսպիսով, հավատալով բրիտանացիներին, չստանալով նրանցից որևէ իրավական փաստաթուղթ՝ Հուսեյնը գլխավորեց 1916 թ. Հիջազում բռնկված ապստամբությունը[9]:

Սակայն բրիտանացիները չէին պատրաստվում կատարել իրենց խոստումները: Դրա ապացույցն էր այն, որ դեռևս 1915 թ. նոյեմբերի 23-ին Լոնդոնում գաղտնի բանակցություններ սկսվեցին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև՝ արաբական աշխարհում ազդեցության հարցը քննարկելու համար: Բանակցություններին անգլիական կողմը ներկայացնում էր արտաքին գործերի նախարարի տեղակալ Արթուր Նիկոլսոնը, որին անյուհետև փոխարինեց Ֆորին Օֆիսի մերձավորարևելյան հարցերի մասնագետ Մարկ Սայքսը, իսկ ֆրանսիական կողմը՝ Բեյրութում ֆրանսիական հյուպատոս, հետագայում Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Ֆրանսուա Ժորժ-Պիկոն[10]:

«Սայքս-Պիկոյի» համաձայնագրով արաբական երկրները բաժանվում էին 5 գոտիների.

1. «Կապույտ գոտի», որի մեջ մտնում էին Դամասկոս-Հոմս-Համա-Հալեպ գծից արևմուտք ընկած տարածքները, որոնք կազմում էին Արևմտյան Սիրիան և Լիբանանը, Կիլիկիան, Այնթաբը, Ուֆան,

---

[9] Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության դեմ արաբների ապստամբության կազմակերպման և ուղորդման գործում մեծ դերակատարում է ունեցել բրիտանական լեգենդար հետախույզ, արաբագետ, զինվորական, գրող և հնեաբան Լոուրենս Արաբացին՝ Թոմաս Էդուարդ Լոուրենսը (1888-1935 թթ.): Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1914 թ. հեկտեմբերին, Լոուրենսին նշանակեցին 2-րդ աստիճանի սպա և գործուղեցին ռազմական նախարարության աշխարհագրական վարչություն, որը հանդիսանում էր Կահիրեում բրիտանական հետախուզության թաքստոցը: Առաջին համաշխարհայինի տարիներին նա գործում էր Արաբական թերակղզում՝ զբաղվելով հետախուզական տվյալների հավաքմամբ և ղեկավարելով արաբների ապստամբությունը: Աստիճանաբար, տեղի բնակչության ավանդույթների, էթնիկական հոգեբանության հիանալի իմացության ու արտակարգ խելքի շնորհիվ, Լոուրենսի հեղինակությունը բարձրացավ և նա դարձավ թուրքերի դեմ արաբական ցեղերի պարտիզանական պայքարի առաջնորդներից մեկը:

[10] Лазарев М., Крушение Турецкого господства на Арабском Востоке (1914-1918 гг.), М., 1960, с. 130.

Մարդինը, Դիարբեքիրը և Հաքյարիի շրջանը: Այս գոտին անցնում էր Ֆրանսիայի անմիջական տիրապետության տակ:

2. «Կարմիր գոտին», որը ներառում էր Իրաքի հարավային մասը՝ Բաղդադի ու Բասրայի վիլայեթները, Հայֆայի ու Ակկայի նավահանգիստները, անցնում էր Մեծ Բրիտանիայի անմիջական տիրապետության տակ:

3. «Շականակագույն գոտում», որը ներառում էր Պաղեստինն՝ առանց Հայֆայի և Ակկպայի, պետք է հաստատվեր միջազգային կառավարում՝ Ռուսաստանի և արևմտյան պետությունների հետ համաձայնեցնելուց հետո:

4. «Ա» գոտին, որի մեջ մտնում էին Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը, համարվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտի:

5. «Բ» գոտին, որը ներառում էր Կենտրոնական Իրաքը և Անդրհորդանանը, համարվում էր Բրիտանիայի ազդեցության գոտի[11]:

Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատրաստակամություն հայտնեցին ճանաչել և իրենց հովանու տակ վերցնել արաբական «անկախ» պետությունը «Ա» և «Բ» գոտիներում: Երկու տերություններն էլ, յուրաքնչյուրը իր գոտիներում, ստանում էին բացառիկ իրավունք արաբների խնդրանքով նշանակել խորհրդականներ: Անգլիական և ֆրանսիական առևտրի համար Ալեքսանդրետը և Հայֆան պետք է դառնային բաց նավահանգիստներ: Նախատեսվում էր Մեծ Բրիտանիայի կողմից Հայֆա-Բաղդադ և Ֆրանսիայի կողմից Հալեպ-Բաղդադ երկաթգծերի կառուցումը: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան պայմանավորվեցին թույլ չտալ Արաբական թերակղզում երրորդ պետության կողմից տարածքների ձեռքբերումը, կամ Կարմիր ծովի արևելյան մասի կղզիներում ռազմակայանների տեղակայումը[12]:

Բանակցությունների մասին Ռուսաստանը պաշտոնապես տեղեկացվեց 1916 թ. փետրվարին: 1916 թ. մարտի 9-ին Պետրոգրադ ժամանեցին Մարկ Սայքսն ու Ֆրանսուա Ժորժ-Պիկոն և Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին հանձնեցին իրենց համաձայնագրի տեքստը: Մարտի 17-ին անգլիական և ֆրանսիական դեսպաններին հանձնած հուշագրով Սերգեյ Սազոնովը պաշտոնապես

---

[11] Лазарев М., նշվ. աշխ., էջ 131:

[12] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 557:

հայտնում էր, որ Ռուսաստանն իր համաձայնությունը կտա, եթե կատարվեն նրա պահանջները՝ այդ թվում Կոստանդնուպոլսի ու նեղուցների մասին համաձայնությունը: Նա հավաստիացրեց, որ Ռուսաստանը հավակնություններ չունի Ամադիա-Ջազիրա իբն Օմար-Դիարբեքիր-Սահսաթ-Մարաշ-Ադանա գծից հարավ ընկած տարածքների նկատմամբ: Արաբական երկրների բաժանման վերաբերյալ պայմանավորվածությանը Ռուսաստանը պատրաստ էր համաձայնությունը տալ՝ այդ պահանջները բավարարելու դեպքում[13]:

Այն բանից հետո, երբ ֆրանսիական դեսպանը հայտարարեց, որ ռուսական պահանջները ընդունվում են Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից, Ռուսաստանը տվեց իր լրիվ համաձայնությունը անգլո-ֆրանսիական համաձայնագրին, որը ուժի մեջ մտավ մայիսի 9-ին և 16-ին Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի միջև նոտաների փոխանակությունից հետո:

«Սայքս-Պիկոյի» համաձայնությունը կնքվել էր գաղտնի ոչ միայն արաբներից, այլև դաշնակիցներից: Իտալիան, իմանալով համաձայնագրի գոյության մասին, ամեն կերպ փորձում էր իմանալ դրա բովանդակությունը: Իտալիայի՝ համաձայնությանը միանալու հետ կապված, պայմանագրի մեջ մտցվեց նաև «Կանաչ գոտին» (Փոքր Ասիայի հարավ-արևմտյան հատվածը) և «Գ» գոտին (Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան հատվածի մի մասը): 1917 թ. ապրիլի 20-ին տեղի ունեցավ նոտաների փոխանակում Ֆրանսիայի և Իտալիայի միջև[14]:

ԱՄՆ-ը նույնպես որոշ չափով տեղեկացված էր Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ Անտանտի երկրների ծրագրերից: Դրա մասին վկայում է արտաքին քաղաքականության հարցերով նախագահ Վուդրո Վիլսոնի մտերիմ խորհրդատու և օգնական գեներալ Էդվարդ Մանդել Հաուզի հրատարակված արխիվը: ԱՄՆ այդ ժամանակ դեռևս չեզոք տերություն էր, բայց անշեղորեն մտերմանում էր դաշնակիցների հետ: Բացի այդ, պատերազմի առաջին տարիներին ԱՄՆ-ը լուրջ մրցակից չէր Արաբական Արևելքում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքերի համար, իսկ «օսմանյան ժառանգության» համար

---

[13] Лазарев М., նշվ. աշխ., էջ 133:

[14] Луцкий В., նշվ. աշխ., էջ 342:

Ֆրանսիայի հետ մրցակցության ժամանակ Մեծ Բրիտանիան նույնիսկ ապավինում էր ԱՄՆ-ի աջակցությանը[15]:

Այսպիսով, Անտանտի կազմի մեջ մտնող բոլոր երկրներն էլ ինչ-որ չափով տեղեկացված էին արաբական երկրների բաժանման վերաբերյալ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գաղտնի պայմանավորվածության մասին:

1917 թ. մայիսին Մարկ Սայքսը և Ժորժ-Պիկոն ժամանեցին Հիջազ Սիրիայի ու Իրաքի ապագայի վերաբերյալ Հուսեյնի հետ բանակցություններ վարելու: Նրանք Հուսեյնից թաքցրեցին համաձայնագրի գոյության փաստը և նրան մեծ խոստումներ էին տալիս, որոնք անհամատեղելի էին համաձայնագրի հետ՝ նախապես իմանալով, որ Անգլիան և Ֆրանսիան դրանք չեն կատարելու:

Արաբները համաձայնագրի մասին իմացան այն բանից հետո միայն, երբ այն 1917 թ. նոյեմբերին հրապարակվեց Խորհրդային կառավարության կողմից, որը իշխանության էր եկել հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում [16]: Փորձելով արաբներին ետ պահել պատերազմից դուրս գալուց՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Ջեյմս Բալֆուրը հրապարակայնորեն մերժեց Սայքս-Պիկոյի համաձայնագրի գոյության փաստը: Սակայն Փարիզի խաղաղության վեհաժողովի ժամանակ դաշնակիցները ստիպված էին ընդունել նման համաձայնագրի առկայությունը:

Կնքելով Սայքս-Պիկոյի համաձայնագիրը՝ Մեծ Բրիտանիան այն դիտարկում էր որպես ռազմական դրությամբ պարտադրված քայլ, ինչպես և Մակ-Մահոն համաձայնագիրը, և հարմար առիթ էր փնտրում, որպեսզի հրաժարվի Ֆրանսիայի առջև ունեցած իր պարտականությունների կատարումից:

Արդեն 1917 թ. նոյեմբերին Անգլիան առաջ քաշեց Բալֆուրի դեկլարացիան, որի պատրվակով նա հրաժարվում էր Պաղեստինում միջազգային ռեժիմի հաստատումից և պնդում էր, որպեսզի Պաղեստինը փոխանցվի բացառապես անգլիական իշխանությանը:

---

[15] Лазарев М., նշվ. աշխ., էջ 136:

[16] Тума Э., Национально-освободительное движение и проблема арабского народа, М., 1977, с. 146-147.

Պատերազմից հետո՝ 1918 թ. դեկտեմբերին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Լլոյդ-Ջորջը հայտարարեց Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը անվավեր է, քանի որ նրա «մասնակիցներից» մեկը՝ Ռուսաստանը, հրաժարվել է համաձայնագրից: Կլեմանսոն պնդում էր, որ համաձայնագիրը պահպանում է իր ուժը, քանի որ կնքվել է Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև: Այնուամենայնիվ, նա ստիպված էր հօգուտ Բրիտանիայի հրաժարվել Մուսուլի վիլայեթից, որը Սայքս-Պիկոյի համաձայնագրով խոստացվել էր Ֆրանսիային, և Պաղեստինի կառավարմանը մասնակցելուց: Այդ հրաժարականը ձևակերպվեց 1920 թ. ապրիլի 26-ին Սան-Ռեմոյում Անտանտի երկրների ղեկավարների կոնֆերանսի ժամանակ կնքված համաձայնագրով և 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի հաշտության պայմանագրով: Այսպիսով, արաբական երկրների հետպատերազմյան բաժանման մասին Սայքս-Պիկոյի համաձայնագիրը ենթարկվեց փոփոխման՝ հօգուտ Մեծ Բրիտանիայի: Բացի այդ՝ արդեն Ազգերի լիգիայի ստեղծմամբ արաբական երկրների մանդատները հանձնվեցին այդ կազմակերպությանը: Դրանով ջնջվեցին Սայքս-Պիկոյի համաձայնագրով Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի անմիջական վերահսկողության տակ անցնող «գունավոր» և «Ա» ու «Բ» գոտիների միջև տարբերությունները: «Անկախ» արաբական պետությունը նույնիսկ այն ձևով, որով նախատեսվում էր Սայքս-Պիկոյի համաձայնագրով, այդպես էլ չստեղծվեց[17]:

Այսպիսով, արաբների հույսերը չարդարացան. նրանք դարձան եվրոպական երկրների քաղաքականության զոհը: Մեծ Բրիտանիայի բանակցությունները արաբների հետ քաղաքական քայլ էր, որը պայմանավորված էր ժամանակի ռազմական իրողությամբ: Առաջնորդվելով անգլիական քաղաքականության օրենքով, այն է՝ կարելի է խոստանալ ամեն ինչ, հետագայում իրադրությունը կփոխվի, արաբների օգնությամբ իր շահերը բավարարելուց հետո Բրիտանիան, բնավ, մտադիր չէր կատարել արաբներին տված իր խոստումները, ինչն էլ հենց արտահայտվեց արդեն Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքմամբ:

---

[17] Вышинский А., Лозовский С., Дипломатический словарь, М., 1948.

ARAKELYAN HERMINE
(IOS)

THE ENTENTE STATES POLICY IN ARAB COUNTRIES AT THE END OF THE FIRST WORLD WAR

The main reason for starting The First World War in 1914 was the conflict of interest of Great Powers, its purpose was to change the political map. Arabs, being under the rule of the Ottoman Empire at that time, became the victims of the interests of the Allied Powers. During the McMahon-Husayn negotiations England promised to give territories to Husayn, who was the sharif of Hijaz, for the creation of the independent Arab state. Instead Arabs had to revolt against Ottoman Empire. Trusting England and trying to get rid of Turkish domination as soon as possible, the Arabs revolted. But, as the time showed, the Great Powers would not keep that promise. Moreover, soon after the McMahon-Husayn negotiation ended, England, France and Russian signed the Sykes-Picot secret Agreement about the division of Ottoman Turkey between the Allies. Later, all that was confirmed by the mandate system.

ԱՓԴԱԼՑԱՆ ԱՐԹՈՒՐ
(ԱԻ)

ՂՊՏԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ (20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻՋԲ)

Ուսումնասիրվող շրջանում Եգիպտոսի տնտեսության մեջ այն դերը, որը ստանձնել էին ղպտիները որպես փոքրամասնություն, շատ ինքնատիպ էր և հաճախ համարվում էր մենաշնորհային: Ավանդաբար ղպտիների տնտեսական ակտիվությունը բարձր է եղել:

Դեռևս 19-րդ դարի վերջերից ղպտիական համայնքի ներկայացուցիչները տնտեսության մեջ կարողացան շատ մեծ հաջողությունների հասնել: Մի շարք ղպտի ընտանիքների ծաղրակշիռ սոցիալական դիրքը պայմանավորված էր նրանց տնտեսական գործունեությամբ: Այս ժամանակահատվածում հատկապես կարելի է առանձնացնել մեծահարուստ ղպտի հողատերերին: Եգիպտոսի ամենախոշոր հողատերերից տասներեքը ղպտի ընտանիքներից էին: Այս ընտանիքներից յուրաքանչյուրը տիրապետում էր 2000-ից մինչև 30 000 ֆեդան[1] հողատարածք: Բացի այդ մոտ 100 ղպտի ընտանիք էլ ուներ 100-ից մինչև 2000 ֆեդան հողատարածքներ: Ընդհանուր առմամբ ղպտիական համայնքի սեփականությունը կազմում էր մոտ 1,5 միլիոն ֆեդան հողատարածք[2]:

Այն տնտեսական ուղղություններ, որոնցում ղպտիները հանդես էին գալիս, առավել մեծ ակտիվությամբ դրսևորվեցին հիմնականում 19-րդ դարի վերջին: 1890-ականներին մասնավոր դպրոցների ղպտի շրջանավարտներն արդեն սկսեցին մտնել աշխատանքային շուկա: Չնայած ղպտիները այս ժամանակաշրջանում կազմում էին Եգիպտոսի բնակչության մոտ 6-7%-ը, սակայն մասնավոր դպրոցների շրջանավարտների մեջ նրանք շատ մեծ թիվ էին կազմում:

---

[1] Եգիպտոսում 1 ֆեդանը հավասար է 0,42 հա:

[2] Seikaly S., Coptic Communnal Reform: 1860-1914, Middle Eastern Studies, 1970, p. 268.

Այսպիսով, 1886-1910 թթ.-ին ղպտիները կազմում էին իրավագիտական մասնագիտությամբ շրջանավարտների 21%-ը, ինժեներական մասնագիտությամբ՝ 19%-ը, բժշկական մասնագիտությամբ՝ 15%-ը, մանկավարժական մասնագիտությամբ՝ 12%-ը[3]: Որոշ տվյալներով 19-րդ դարի վերջին Եգիպտոսում պետական ծառայողների 45%-ը ղպտիներ էին[4]:

Հարկ է նշել, որ ղպտիները կրթական ոլորտում զգալիորեն առաջ էին անցել մուսուլման բնակչությունից, ընդ որում այդ առաջընթացը նաև պահպանվեց 20-րդ դարի առաջին կեսին: Հենց ղպտիական համայնքն էր, որ առաջին անգամ աղջիկների համար դպրոց բացեց[5]:

Եթե 1892 թ. Եգիպտոսում գործում էր 6 ղպտիական դպրոցներ, որտեղ սովորում էին 960 ղպտի աշակերտներ (ընդհանուր առմամբ այդ նույն ժամանակահատվածում եգիպտական դպրոցներում սովորում էր 1670 ղպտի), ապա արդեն 1907 թ. կար 46 ղպտիական դպրոցներ, որտեղ սովորում էին 21 670 ղպտի, որոնցից 5680-ը աղջիկներ էին: Ավելին՝ ղպտիական համայնքը հրատարակում էր 2 բարձր վարկանիշ ունեցող օրաթերթ, ինչպես նաև գիտության տարբեր ճյուղերին վերաբերող մի քանի ամսագիր[6]: Ղպտիական մասնավոր դպրոցները մեծ հեղինակություն էին վայելում նաև 20-րդ դարի առաջին կեսին: Ընդհանուր առմամբ կրթական միջին մակարդակը ղպտիների մոտ ավելի բարձր էր, քան մուսուլմանների մոտ: 1910 թ. տվյալներով պետական տարրական դպրոցներում աշակերտների 17%-ը ղպտիներ էին, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների 29%-ը ներկայացնում էին ղպտիական համայնքը, չնայաց այդ ժամանակաշրջանում ղպտիները կազմում էին Եգիպտոսի բնակչության 7%-ը: 1952 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո ուսումնական հաստատություններն ազգայնացվեցին, վարձավճարները լուծարվեցին և մտցվեց հանրնդհանուր կրթական համակարգ, այնուամենայնիվ ղպտիները կրթական ոլորտում

---

[3] Reid D., Educational and Career Choice of Egyptian Students, 1882-1922, International Journal of Middle East Stadies, 1977, p. 362.

[4] Behrens-Abouseif Doris, The Politial Situation of the Copts 1789-1923, Christians and Jews in the Ottoman Empire, Vol. 2, New York, 1982, p. 199.

[5] Pennington J., The Copts in Modern Egypt, Middle Estern Studies, 1982, p. 160.

[6] Seikaly S., նշվ. աշխ., էջ 267:

առավելություն ուներին մուսուլմանների նկատմամբ: Ըստ 1960 թ. տվյալների՝ Եգիպտոսի քրիստոնյա բնակչության 41,4%-ն էր գրագետ, իսկ մուսուլման բնակչության միայն 23,8%-ը: Ղպտիների առավելությունը կրթական ոլորտում պարզորոշ կերպով արտահայտվեց 1976 թ. մարդահամարի արդյունքում:

Եգիպտոսում քրիստոնյա և մուսուլման բնակչության կրթական մակարդակն ըստ 1976 թ. մարդահամարի տվյալների (արտահայտված տոկոսներով)[7].

	Մուսուլման	Քրիստոնյա
Անգրագետ	57,1	44,3
Գրագետ (ոչ պաշտոնական կրթություն)	20,6	20,1
Տարրական կրթություն	7,8	9,7
Միջնակարգ կրթություն	10,8	19,0
Համալսարանական կրթություն	1,9	5,0
Ասպիրանտուրական կրթություն	1,8	1,9

Ըստ 1976 թ. մարդահամարի տվյալների՝ մուսուլման ազգաբնակչության ընդհանուր թիվը՝ 25 068 539 էր, իսկ քրիստոնյա ազգաբնակչության ընդհանուր թիվը՝ 1 715 30[8]: Չնայած այն արգելքներին, որոնք դրված էին ղպտիների առջև հեղափոխությունից հետո, նրանք պահպանեցին իրենց կրթական առավելությունները: Ղպտիական համայնքի շատ ներկայացուցիչներ կրթություն ստանալը համարում էին առավելություն: Դրա ապացույցն էր ղպտիների այն մեծ տոկոսը, որ ստանում էր տարրական և միջնակարգ կրթություն: Իսկ ամենամեծ անհամապատասխանությունը համալսարանական կրթության ոլորտում էր, որտեղ ղպտիները 2,5 անգամ գերազանցում էին մուսուլմաններին: Կարելի է փաստել, որ այս ճանապարհով ղպտիները ցանկանում էին իրենց դիրքերը ամրապնդել պետական պաշտոններ ստանալու համար:

---

[7] Chitham E., The Coptic Community in Egypt, Spatial and Social Change, Durham, 1986, p. 84.

[8] Chitham E., նշվ. աշխ., էջ 84:

1952 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո նախագահ Գամալ Աբդ Ալ-Նասերի մշակած «արաբական սոցիալիզմի» կառուցման նոր քաղաքական գաղափարախոսության շրջանակներում ղպտիների դերը զգալիորեն նվազեց ոչ միայն Եգիպտոսի քաղաքական, այլև տնտեսական կյանքում: Ազգայնացման քաղաքականության հետևանքով՝ հատկապես հողատիրության չափերի աննախադեպ կրճատման արդյունքում ղպտիները հարաբերաբար ավելի տուժեցին, քան՝ մուսուլմանները[9]:

1952 թ. սեպտեմբերի 9-ի հողային բարեփոխումների վերաբերյալ օրենքով հողատիրության առավելագույն չափը սահմանվեց 200 ֆեդդան, իսկ ավելցուկները բռնագրավվում էին և վաճառվում սակավահող գյուղացիներին[10]: Արդյունքում սեփականազրկվեցին նաև հեղինակավոր ղպտի շատ ընտանիքներ: Ըստ պաշտոնական տվյալների՝ մինչև հեղափոխությունն այդ ընտանիքները վճարում էին Եգիպտոսի ընդհանուր հողահարկի շուրջ 16 տոկոսը[11]: Իսկ արդեն 1961 թ. հուլիսի 25-ին ընդունվեց նոր հողային օրենք, որով հողատիրության առավելագույն չափաբաժինն էլ ավելի կրճատվեց և իջեցվեց մինչև 100 ֆեդդանի[12]:

Ազգայնացման քաղաքականության հետևանքով շատ ղպտիներ դարձան գործազուրկ, քանի որ աշխատում էին մասնավոր հատվածում: Ազգայնացվեցին նաև շատ խոշոր ղպտիական ձեռնարկություններ: Որոշ տեղեկություններով ղպտի համայնքը կորցրեց իր ունեցվածքի 75%-ը, փակվեցին շատ դպրոցներ և մենաստաններ[13]:

Անվար Սադաթի նախագահության ընթացքում ¥1971-1981 թթ.¤ ղպտիները կարողացան շատ արագ վերականգնել տնտեսական ոլորտում կորցրած իրենց դիրքերը, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե

---

[9] Ավդալյան Ա., 1952 թ. հուլիսյան հեղափոխության անդրադարձը Եգիպտոսի ղպտիական համայնքի քաղաքական և տնտեսական իրավիճակի վրա, Մերձավոր Արևելք, հ. V, Ե. 2008, էջ 34:

[10] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3-րդ, Ե., 2006, էջ 259:

[11] Carter Barbara Lynn, The Copts in Egyption Politics, London, 1986, p. 210.

[12] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 281:

[13] Chitham E., նշվ. աշխ., էջ 87:

մի մասը: Սադաթի վարած «բաց դռների» քաղաքականությունը ղպտիների առջև ելքի դռներ բացեց: Վերջիններս թարմացրեցին իրենց պայմանագրերը արևմուտքի հետ խրախուսելով արևմտյան գործարարներին ներդրումներ կատարել Եգիպտոսում[14]: Այս քայլերը Եգիպտոսի տնտեսության մեջ ներգրավեցին արտասահմանում գործունեություն ծավալող ղպտիների կապիտալը այդ կերպ նրանց վերադարձնելով տնտեսական դաշտ: Հրատարակվեց Եգիպտոսի Ներդրումային տեղեկագիրքը, որը հավաստում էր, որ ընդհանուր հաշվով Եգիպտոսում գործող 1100 ընկերություններից 139-ը պատկանում էին քրիստոնյաներին կամ ղեկավարվում նրանց կողմից, որը կազմում էր ամբողջի 12,6%[15]:

1974 թ. վիճակագրության տվյալներով ղպտիները ապահովում էին տնտեսության 20% ակտիվությունը[16]: 2000-ական թվականների առաջին կեսի տվյալներով ղպտիները միլիարդավոր ֆունտեր ներդրեցին Եգիպտոսի տնտեսության մեջ: Ղպտիական կապիտալը կազմում էր Եգիպտոսի ազգային հարստության 35%-ը[17]:

1960-1961 թթ. ընթացքում տրանսպորտի ոլորտի ղպտի մեծահարուստները իրենց պատկանող ընկերությունների ամբողջական ազգայնացման արդյունքում լուրջ կորուստներ ունեցան: Ղպտիների տնտեսական դիրքերի թուլացմանը նպաստեց նաև ողջ բանկային համակարգի ազգայնացումը, քանի որ Եգիպտոսի երեք ամենախոշոր Ազգային, Կահիրեի և Միսր բանկերի ներդրումային կապիտալի զգալի մասը պատկանում էր խոշոր ղպտի ընտանիքներին[18]:

Խոսելով Եգիպտոսի սոցիալ-տնտեսական կյանքում ղպտիական համայնքի ակտիվության մասին, կարելի է առանձնացնել որոշ ոլորտներ, որտեղ ղպտիները ավանդաբար մեծ դեր են ունեցել: Արդի համալսարանական վիճակագրությունը ցույց է տալիս, որ բժշկություն

---

[14] "Copts and Robbers" Economist, Vol. 275, 1980 April, p. 30.

[15] Բադավի Ջ., Ալ-վահբա ալ-վատանիա բադիլան ան ալ-ֆատնա ատ-տաֆիյա, Ալ-Կահիրա, 2001, էջ 268, (արաբերեն):

[16] Նույն տեղում, էջ 55:

[17] Նույն տեղում, էջ 58:

[18] Սամիրա Բահր, Ալ–ակբատ ֆի հայաթ ալ-սիյասիյա ալ-Միսրիյա, Ալ-Կահիրա, 1984, էջ 162 (արաբերեն):

դասավանդողների 40%-ը, բժշկական ուսանողների 40%-ը, ֆինանսների նախարարության միջին պաշտոնյաների 60%-ը ղպտի էին[19]: Բացի սրանից ղպտիները կազմում էին՝

- Դեղագործների 60%-ը
- Ֆրանսիական Առևտրային պալատի ձեռնարկատերերի 60%-ը
- Խորհրդատվական ընկերությունների աշխատողների 50%-ը
- Ամերիկյան և Գերմանական առևտրային պալատների անդամների 35%-ը
- Իրավաբանների, ինժեներների 25%-ը
- Տնտեսական ոլորտում ղեկավարների 20%-ը[20]:

Այսպիսով, կարելի է նկատել, որ ղպտիները հիմնականում զբաղեցնում էին բարձր որակավորում ունեցող աշխատանքներ: Սակայն մյուս կողմից մի քանի մասնագիտական ոլորտներում ղպտիներն ունեին «ոչ որոշիչ ձայնի» իրավունք: Ղպտիները ներկայացված չէին եգիպտական համալսարանների կառավարման ադմինիստրացիաներում և պրոֆեսորադասախոսական կազմում: Եգիպտոսում գործում է 17 պետական համալսարաններ՝ 1 ռեկտորի և 3-4 տեղակալների պաշտոններով, սակայն այս 70 պաշտոնյաներից և ոչ մեկը ղպտի չէ:

Նշված համալսարաններում կար 274 ֆակուլտետների դեկանների պաշտոններ և միայն մեկ ղպտի էր զբաղեցնում Ֆայումի համալսարանի հնէաբանության ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Իսկ 673 փոխդեկաններից միայն մեկն էր ղպտի՝ Սուեզի համալսարանի հյուսիսսինայական կրթության ֆակուլտետում: Կահիրեի համալսարանում ղպտիները կազմում էին պրոֆեսորադասախոսական կազմի ընդամենը 5%-ը, Այն-Շամսում՝ 7%-ը, Ալեքսանդրիայի համալսարանում՝ 3,5%-ը: Նույնիսկ Ասյութի համալսարանում որտեղ տարբեր ֆակուլտետներում ղպտի ուսանողները կազմում էին մոտավորապես 20-30%-ը, և որը համընկնում էր Ասյութի նահանգի ղպտի բնակչության քանակին, այնուամենայնիվ, նշված համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի միայն 6%-ն էր

---

[19] Բադավի Ջ., նշվ. աշխ., էջ 269:

[20] Կասիմ Մ., Ալ-ակբատ վա ալ-մուշարակա աս-սիյասիյա (Իխվան վա ակբատ), Ալ-Կահիրա, 2006, էջ 45 (արաբերեն):

ղպտի[21]: Պետական անվտանգությունում և ուժային կառույցներում ղպտիների համար կար որոշ սահմանափակումներ: Ռազմական և ոստիկանական ակադեմիաներում ղպտի ուսանողների թիվն ավանդաբար չէր գերազանցում 1%-ը: Ղպտիական համայնքի ներկայացուցիչները շատ քիչ էին ներկայացված դատական համակարգում, դիվանագիտական կորպուսում և տեղական ինքնակառավարման համակարգում[22]:

Սակայն ղպտիական համայնքը տնտեսական առումով այնքան էլ համասեռ չէ: Խոսելով ղպտիական համայնքի աղքատ խավի մասին, չի կարելի չնշել այնպիսի յուրահատուկ երևույթի մասին, ինչպիսին ղպտի աղբահավաքներն են: Եգիպտոսում տարբեր տվյալներով կա 30000-60000 աղբահավաքներ, որոնց մեծ մասն ապրում է Ազ- Զաբալեին շրջանում և զբաղվում են աղբի տեսակավորմամբ[23]: Այս սոցիալական խումբը ձևավորվել է 1940-ական թվականներին հիմնականում Ասյութի նահանգի հող չունեցող գյուղացիներից, որոնք տեղափոխվել էին Կահիրե: Ղպտի աղբահավաքները համարվում են ղպտիական համայնքի ամենախոցելի խումբը: Նրացից շատերը ծայրահեղ աղքատ են, ամսական աշխատում են 20-25$:

Բացի աղբի տեսակավորման և վերամշակման աշխատանքներից ղպտի աղբահավաքները զբաղվում էին նաև խոզաբուծությամբ: Ղպտի աղբահավաքները բավականաչափ տուժեցին, երբ խոզի գրիպի տարածման պատճառով կառավարությունը որոշեց ոչնչացնել խոզերին: Ղպտիներն ակտիվորեն բողոքում էին նման որոշման դեմ: Կառավարության խոստացված հատուցումը շատ ավելի քիչ էր, քան խոզերի արժեքն էր[24]:

Այս ամենից բացի հարկ ենք համարում խոսել ղպտիական տնտեսապես հարուստ էլիտայի մասին: Նրանցից ամենահայտնիները Նագիբ, Նասեֆ, Օնսի Սաուիրիսներն են՝ Օրասկոմ Տելեկոմի սեփականատերերը: Ֆորբսի տվյալներով նրանց կարողությունը 2008 թ.

---

[21] Guindy A., In Egypt: A Case of Deliberate Discrimination in Universities, Watani International, 12.04.2009, p. 58.

[22] Guindy A., նշվ. աշխ., էջ 11:

[23] Wiens C., Coptic Life in Egypt, Cairo, New York, 2003, p. 17.

[24] Datta B., How Cairo's Zabbaleen Turn Rags into Riches, African Business, 1995, 04.

դրությամբ գնահատվում էր 11 միլիարդ դոլլար[25]: Մյուս հայտնի ղպտի միլիարդատերը Սարվատ Բասիլին է, որը եգիպտական ամենախոշոր դեղագործական ընկերություններից մեկի «Ամունի» սեփականատերն է: Եգիպտոսի ղպտի օլիգարխներից կարելի է առանձնացնել նաև Սթինոների ընտանիքը, որոնք լրջորեն ներկայացված են սննդի արդյունաբերության մեջ: Սթինոների ընտանիքի շատ անդամներ զբաղեցրել են նաև խոշոր քաղաքական պաշտոններ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ 20-րդ դարի երկրորդ կեսին ղպտիական համայնքի դերը Եգիպտոսի տնտեսության մեջ զգալիորեն նվազեց: 1952 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո ղպտիները կորցրեցին իրենց դիրքերը Եգիպտոսի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Սակայն արդեն Սադաթի նախագահության ժամանակաշրջանից սկսած ղպտիական համայնքը սկսեց որոշակիորեն վերականգնել իր կորցրած դիրքերը Եգիպտոսի տնտեսության մեջ: Այնուամենայնիվ կարելի է նկատել նաև, որ ղպտիական համայնքը սոցիալ- տնտեսական հարաբերություններում ոչ համասեռ է, և դրա պատճառով աննպատակահարմար է խոսել ղպտիական համայնքի տնտեսական հետաքրքրությունների առանձնահատկությունների մասին: Իրականում, աղքատ ղպտի բնակչության խնդիրներն ավելի շատ կհասկացվեն եգիպտական մուսուլման անապահով խավերի կողմից, քան ղպտիական էլիտայի: Ղպտի միջին խավն ընդհանուր առմամբ կենտրոնացած է առևտրատնտեսական գործունեության վրա, և հեռու է քաղաքական և վարչարարական ոլորտներից:

---

[25] Forbes. 03.05.2008. The World's Billionaires, # 60. Naguib Sawiris. http: //www.forbes.com/.

AVDALYAN ARTHUR
(IOS)

SOCIAL-ECONOMIC SITUATION OF THE COPTIC COMMUNITY IN EGYPT (SECOND HALF OF THE 20TH AND THE BEGINNING OF THE 21ST CENTURIES)

The Coptic community played a big role in the economy of Egypt until the second half of the 20th century. The Copts had mainly been of the high qualificed doctors, lawyers, engineers, pharmacists, financial professionals. The significant part of the capital investment of the Egypt's largest banks belong to the Coptic families.

In the second half of the 20th century, the role of the Coptic community in the economy of Egypt significantly decreased. After the July Revolution in 1952 the Copts lost their positions in almost all areas of the Egyptian economy, but since the presidency period of Anwar Sadat the Coptic community began to recover some of its lost positions in Egypt's economy. However, it can be noted, that the Coptic community is not homogenous in the socio-economic relations, and that's why it is inappropriate to speak about the Coptic community's economic interest features. The Coptic middle class generally focused on trade and economic activity, and is mainly far from the political and administrative spheres.

ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՄՆ-Ի ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

20–րդ դարի վերջին քառորդին Պարսից ծոցի տարածաշրջանը քաղաքական, սոցիալական և տնտեսական հարաբերություններում աշխարհի ամենալարված տարածաշրջաններից էր: Մասնավորապես Ծոցի արաբական միապետությունները՝ Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Քուվեյթը, Կատարը, Բահրեյնն ու Օմանը, վերջին տասնամյակներում հայտնվել էին համաշխարհային տնտեսության և քաղաքականության կենտրոնում, այս միապետություններում տեղի էին ունենում մեծամասշտաբ գլոբալիզացման, տնտեսական կապերի ազգայնացման, միջազգային հարաբերություններում նոր չափանիշների առաջացման գործընթացներ: Մեղմ ժամանակահատվածում արաբական այս վեց միապետությունները դարձան համաշխարհային տնտեսության մեջ ակտիվ տարրեր, արևմտյան տերությունների ֆինանսական կարևոր դոնորներ, վերջիններիս զինամթերքի և գերզարգացած տեխնոլոգիաների առաջատար ներկրողներ: Նրանք նավթի և գազի առաջատար արտահանողներն են և անմիջականորեն ազդում են համաշխարհային շուկայում դրանց գների ձևավորման վրա, ինչպես նաև նավթային գործոնը դարձրել են իրական զենք՝ տարբեր ճգնաժամային իրավիճակներում: Երկար տարիներ շարունակ Պարսից ծոցի տարածաշրջանում տարբեր ուժային կենտրոնների գոյությունը անկայունության պատճառ է հանդիսացել, իսկ 1990-1991 թթ. իրաք-քուվեյթյան կոնֆլիկտից հետո Արաբական թերակղզու երկրները դարձան ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներկայության կենտրոն:

1981 թ. ստեղծվեց Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդը, որի կազմի մեջ մտան այս տարածաշրջանից վեց արաբական նավթ արդյունահանող միապետություններ՝ Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Օման, Կատար, Բահրեյն և ԱՄԷ: Ըստ պաշտոնական փաստաթղթերի՝ ԾԵՀԽ

ստեղծման նպատակն էր այս միապետությունների տնտեսական ինտեգրումը, արագ մոդեռնիզացումը, նավթային միասնական քաղաքականությունը[1]: Սակայն դրա ստեղծման իրական դրդապատճառը այս երկրների անվտանգության ապահովումն էր և տարածաշրջանի ուժային կենտրոններին հակակշիռ ստեղծելը[2]: Հասկանալու համար, թե որոնք են այն շարժառիթները, որոնց պատճառով ստեղծվեց այս խորհուրդը և այն մտավ ԱՄՆ կենսական նշանակության տարածքների մեջ, հայացք նետենք այդ ժամանակաշրջանին:

1970-1980-ական թթ. Ծոցի տարածաշրջանում գոյություն ունեին երկու ուժային կենտրոններ՝ Իրաքը և Իրանը, իսկ արաբական միապետությունները ամրապնդում էին իրենց նոր ձեռք բերած անկախությունը, փորձում էին ձևավորել ազգային և նավթային քաղաքականություն: Վերը նշված երկու երկրներն էլ ունեին տարածքային վիճահարույց խնդիրներ արաբական վեցնյակի հետ և միաժամանակ ձգտում էին արաբական միապետություններին գցել իրենց ազդեցության գոտու մեջ: Նրանք համեմատած ՕԵՀԽ-ի խիտ բնակեցված էին, ունեին հզոր բանակ, զարգացած տնտեսություն և նավթադոլլարների բավականին բարձր եկամուտ[3]:

Պետք է նկատի ունենալ, որ դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի ամբողջ քաղաքականությունն ուղղված էր վերջինիս տնտեսական, քաղաքական և ռազմավարական դիրքերի ընդլայնմանն ու ամրապնդմանը: ԱՄՆ-ի հետաքրքրությունը այս ստրատեգիական գոտուն պայմանավորված էր մի շարք դրդապատճառներով և տարածաշրջանի երկրների շահերի բախումով: Դրդապատճառներից են ԱՄՆ-ԽՍՀՄ դիմակայությունը համաշխարհային քաղաքականության գրեթե բոլոր ոլորտներում այդ թվում նաև Պարսից ծոցի տարածաշրջանում, ԱՄՆ-ը ձգտում էր հսկողություն ունենալ

---

[1] Мелкумян Е., ССАГПЗ в глобальных региональных процессах, М., 1999, с. 10.

[2] Александров И., Монархии Персидского залива. Этап модернизации, М., 2000, с. 279.

[3] Шарипов У., Проблемы международной безопасности в Персидском заливе 90-х годов и политика США, Ближний Восток. Проблемы региональной безопасности, М., 2000, с. 34.

տեղական վարչակարգերի վրա և նրանց հավատարիմ վիճակում պահել ԱՄՆ-ի համար, մուտք ունենալ ՕԵՀԽ նավթային պաշարներին: Օոցի տարածաշրջանի պաշարները կազմում են նավթի համաշխարհային պաշարների 64,9%, իսկ գազը՝ 30%[4]: Բացի այդ Օոցի համագործակցության խորհուրդը նկատելիորեն ազդում է Մերձավոր Արևելքի քաղաքական իրավիճակի վրա, համարյա թե ոչ մի որոշում չի կայացվում առանց Սաուդյան Արաբիայի մասնակցության, որը համագործակցության խորհրդի ամենաազդեցիկ և հարուստ երկիրն է: Սաուդյան Արաբիայում են գտնվում Մեքքան և Մադինան, ուր ամեն տարի մուսուլմանները հաջ են կատարում: ՕԵՀԽ–ն մուսուլմանական աշխարհի կարևոր մասնիկն է[5]: Այս վերջին հանգամանքը ԱՄՆ-ի համար մեծ նշանակություն ուներ, քանի որ ՕԵՀԽ-ի հետ սերտ դաշնակցային հարաբերությունների մեջ մտնելով ԱՄՆ-ը անշուշտ ձգտում էր արաբա-իսրայելական հարցը լուծել հնարավորինս հօգուտ Իսրայելի՝ ստանալով Սաուդյան Արաբիայի և ամբողջ ՕԵՀԽ համաձայնությունն ու աջակցությունը:

1968 թ. Մեծ Բրիտանիայի կողմից ընդունվեց Սուեզից դեպի արևելք ընկած տարածքներից զորքերի դուրս բերման մասին որոշումը[6]: Սա հիմք հանդիսացավ ԱՄՆ-ի գործունեության ակտիվացման առաջին խթանը, վերջինս հայտարարեց էներգապաշարների հսկողության և անվտանգության պահպանման անհրաժեշտության մասին: 1980 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջ. Կարտերը հայտարարեց, որ Պարսից ծոցի տարածաշրջանը մտնում է «ԱՄՆ-ի և նրա ատլանտյան դաշնակիցների կենսական նշանակության շահերի» ոլորտի մեջ՝ իր նավթային և բնական գազի պաշարներով[7]: Այստեղ ԱՄՆ-ի դիրքերին մեծ վնաս հասցրեց 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունը, այն լիովին խարխլեց ԱՄՆ-ի դիրքերը, որը զրկվեց իր հուսալի դաշնակից շահական Իրանից, իսկ Իրաքի Սադդամ Հուսեյնի վարչակարգը ԽՍՀՄ-ի հետ սերտ հարաբերությունների մեջ էր: Հաշվի առնելով այս երկու

---

[4] Александров И., նշվ. աշխ., էջ 5:

[5] Яковлев А., Исламский фактор в политике Саудидов В 90-е годы XX в., Ближний Восток. Проблемы региональной безопасности, М., 2000, с. 67.

[6] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., 2006, էջ 113:

[7] Александров И., նշվ. աշխ., էջ 5:

պետությունների դիրքորոշումը, բացառելով այստեղ իր ներկայության իսպառ վերացումը և միաժամանակ կախվածության մեջ գտնվելով Ծոցի արաբական երկրների նավթից՝ ԱՄՆ-ն իր քաղաքական վեկտորը աստիճանաբար ուղղեց դեպի Սաուդյան Արաբիա, իսկ 1981 թ. ԾԵՀԽ կազմավորումից հետո դա տարածվեց նաև մնացած արաբական միապետությունների վրա:

ԱՄՆ-ի հետ համագործակցելը անհրաժեշտ էր նաև ԾԵՀԽ երկրներին, որոնց 80-90-ական թթ. արտաքին քաղաքականության գլխավոր նպատակներից էր Իրանի Իսլամական Հանրապետության և Իրաքի Հանրապետության դեմ ռազմական գերազանցություն ձեռք բերելը: Դրան հասնելու համար Ծոցի արաբական միապետությունները ձգտում էին հենվել Արևմուտքի երկրների վրա, մասնավորապես ԱՄՆ-ի և կարելի է ասել, որ դա ԾԵՀԽ-ի երկարաժամկետ ռազմավարությունն էր[8]:

ԱՄՆ-ի և արաբական վեցնյակի կողմից միմյանց հանդեպ հետաքրքրության մեծացման գործընթացում կարևորվում են Ծոցի տարածաշրջանում տեղ գտած չորս շղթայական իրադարձություններ. 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունը, 1981 թ. ԾԵՀԽ ստեղծումը, 1980-1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմը և 1990-1991 թթ. իրաքա-քուվեյթյան պատերազմը: Հատկապես վերջին իրադարձությունը մեծ ազդեցություն ունեցավ տարածաշրջանի հետագա իրավիճակի վրա:

ԾԵՀԽ-ի համար մեծ սպառնալիք հանդիսացավ 1990 թ. օգոստոսի 1-ին սկսված Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ[9]: Մինչև Ծոցի երկրորդ պատերազմի ավարտը կամ դրա նախանշանները, ԾԵՀԽ-ի երկրները գտնվում էին անկայուն իրավիճակում: Սադդամ Հուսեյնը չէր թաքցնում, որ ինքը չի բավարարվի միայն Քուվեյթի գրավումով: Նա սպառնում էր Ծոցի արաբական միապետություններից ԱՄԷ-ին, Սաուդյան Արաբիային, Բահրեյնին ու Կատարին[10]: ԾԵՀԽ երկրները

---

[8] Шарипов У., նշվ. աշխ., էջ 45:

[9] 1990-1991 թթ. Քուվեյթի դեմ Իրաքի ագրեսիայի հետևանքով ստեղծված քաղաքական իրողությունը և պատերազմական գործողությունները նորագույն պատմության մեջ մտել են որպես Ծոցի երկրորդ պատերազմ (Gulf War II)՝ առաջինը համարելով 1980-88 թթ. Իրան–իրաքյան պատերազմը:

[10] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 529:

գիտակցում էին, որ միայն սեփական ուժերով անհնար է հասնել ռազմական հաջողության Իրաքի դեմ: Արևմտյան պետությունները՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ միջամտեցին այս կոնֆլիկտին և 1991 թ. հունվարի 16-17 Քուվեյթի, Սաուդյան Արաբիայի և ԱՄՆ-ի ղեկավարությունների կողմից ընդունվեց համատեղ որոշում «խնդիրը ռազմական ուղիով լուծելու» մասին: 1991 թ. հունվարի 17-ին սկսվեց «Փոթորիկն անապատում» ռազմական գործողությունը, որտեղ բացի ԱՄՆ-ի, ԾԵՀԽ զորքերից կային նաև արաբական մի շարք երկրների, ՆԱՏՕ-ի բազմազգ զորամիավորումներ: 1991 թ. փետրվարի 28-ին Ծոցի երկրորդ պատերազմն ավարտվեց: Այն բացառիկ նշանակություն ունեցավ ԱՄՆ-ի համար, դրա շնորհիվ Սադդամ Հուսեյնի վարչակարգը լիովին ճնշվեց, այն թույլ տվեց ԱՄՆ-ին իրականացնել 1998 և 2003 թթ. ռազմական ծրագիրը և Իրաքը դարձնել սեփական ազդեցության և ռազմական ներկայության կենտրոն[11]: Պետք է նշել, որ քուվեյթյան ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ը վարում էր բավականին նուրբ քաղաքական խաղ: Այսպես, ԱՄՆ-ն Իսրայելին չմտցրեց Իրաքի դեմ ռազմական կոալիցիայի մեջ, քանի որ հասկանում էր դրա գաղափարական վտանգը. այդ դեպքում դժվար կլիներ համակրանք և համաձայնություն առաջացնել ԱՄՆ-ի և ԾԵՀԽ-ի միջև: Միաժամանակ ԱՄՆ-ը ձգտում էր ամեն գնով պահպանել Ծոցի տարածաշրջանում իր առաջատար դաշնակցի դիրքերը, ինչը նրան հաջողվեց:

Ամփոփելով կարելի է ասել, որ 20-րդ 90-ական թթ. Պարսից ծոցի տարածաշրջանում տեղի ունեցավ ազդեցության կենտրոնների փոփոխություն. թուլացան երկու խոշոր երկրների՝ Իրանի և Իրաքի ներուժերը: Իրաքը զրկվեց իր նախկին հզորությունից, իսկ Իրանը այնքան էր թուլացել իրանա-իրաքյան պատերազմից, որ այդ ժամանակ վտանգ չէր ներկայացնում ԾԵՀԽ-ի համար: Իրաքի Հանրապետության վրա դրված միջազգային սանկցիաները երաշխավորում էին Ծոցի արաբական միապետությունների անվտանգությունը, ինչը ԾԵՀԽ գլխավոր նպատակն

---

[11] 1998 թ. ԱՄՆ-ը Մեծ Բրիտանիայի հետ ձեռնարկեց «Անապատի աղվես» (Operation Desert Fox) ռազմական օպերացիան Իրաքում, որի շրջանակներում ռմբակոծվեցին տարբեր կարևոր օբյեկտներ: 2003 թ. մարտին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ձևավորված կոալիցիոն ուժերը ռազմական գործողություններ սկսեցին Իրաքում, որն ավարտվեց Սադդամ Հուսեյնի կատարյալ պարտությամբ և նրա ձերբակալմամբ:

էր: Հենց այդ պատճառով էլ ՕԵՀԽ-ն չեզոք և դա կարելի է մեկնաբանել որպես համախոհ դիրքորոշում գրավեց Իրաքի հանդեպ ԱՄՆ-ի պատժամիջոցների կիրառման հարցում: Հենց այդ պատժամիջոցները ազդեցիկ խթան հանդիսացան ՕԵՀԽ երկրների ռազմական և տնտեսական ներուժի զարգացման համար: Այս պատերազմը խորացրեց և ուժեղացրեց Ծոցի արաբական միապետությունների ռազմական մրցարշավը. միայն 1992 թ. ՕԵՀԽ-ն 157 մլրդ. դոլլարի սպառազինություն էր գնել արևմտյան երկրներից[12]: Չնայած 1990-1991 թթ. Քուվեյթյան ճգնաժամից ՕԵՀԽ-ի կրած դժվարություններին, ֆինանսական և մարդկային կորուստներին, վերջինիս արտաքին քաղաքական դիրքերը ուժեղացան ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքում և Ծոցի արաբական միապետությունների արքայատոհմերն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը: Դրա հետ մեկտեղ պատերազմը ցույց տվեց, թե ինչ մեծ շարժիչ ուժ է նավթը արևմտյան երկրների և գլխավորապես ԱՄՆ-ի համար. ԱՄՆ-ը չի թողնի ՕԵՀԽ-ին ճգնաժամային իրավիճակում, երբ վտանգված են նրանց նավթահանքերը: Գնահատելով Ծոցի պատերազմի հետևանքները, ինչպես քաղաքական այնպես էլ ընդհանուր տեսադաշտից, մեծ հետաքրքրություն է առաջացնում Ծոցի արաբական միապետություններում շրջանառվող տեսակետը, համաձայն որի «տեղական երկրների միակ փրկիչը Արևմուտքն է, և առաջին հերթին ԱՄՆ-ն»[13]: ՕԵՀԽ-ն՝ Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ դարձավ ԱՄՆ-ի առաջատար դաշնակից, հանդես գալով ԱՄՆ-ի համար որպես միջնորդ և նրա շահերի երաշխավորող տարածաշրջանում:

ARSHAKYAN TATEV
(IOS)

THE USA INTERESTS IN THE COOPERATION COUNCIL FOR THE ARAB STATES OF THE GULF

At the end of the 20th century the Persian Gulf became the most tense territory with its political, social and economic situation. Especially the

---

[12] Шарипов У., նշվ. աշխ., էջ 47:
[13] Նույն տեղում:

monarchies of the Gulf (Saudi Arabia, the UAE, Kuwait, Qatar, Bahrain and Oman) found themselves to be the centers of the global economy and politics. These monarchies were passing through an era of globalization, nationalization of the economic relations and creation of new values in the sphere of international relations. Before long, these monarchies became important elements in the global economy and they appeared to be crucial financial donors. In the process of activation of the monarchies and the USA the following chain of events appear to be most significant: the Islamic revolution in Iran in 1979, the creation of the Cooperation Council for the Arab States of the Gulf in 1981, the Iranian – Iraqian war from 1980 to 1988 and the Iraqian – Kuwaitian war from 1990 to 1991. Especially the latter had a great influence on the later situation of the territory. Although the crisis of Kuwait caused difficulties, enormous financial and human losses to the CCCG, the latter's political positions were strengthened among the Near and Middle Eastern Arab countries. The monarchies of the Gulf became more intact.

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
(ԵՊՀ)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՇՈՒՐՋ

Ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը թուրքական զինված ուժերի արդիականացման քաղաքականության կարևոր մասն է: Բանակում կատարվում են համակարգային փոփոխություններ, կրճատվում է անձնակազմի թվաքանակը, նաև պարտադիր զինծառայության ժամկետը: Պրոֆեսիոնալ բանակ ստեղծելու համար նպատակ է դրված բանակում ավելացնել պայմանագրային զինծառայողների թիվը: Այս փոփոխությունների համատեքստում ռազմական արդյունաբերական համալիրի զարգացումը դիտվում է որպես բանակի արդիականացումն ապահովող կարևոր նախապայման: Սույն հոդվածում ներկայացված են թուրքական զինված ուժերի 3 հիմնական զորատեսակներին՝ ցամաքային զորքերին, ռազմաօդային և ռազմածովային ուժերին մատակարարվելիք զինտեխնիկայի 3 նոր տեսակները: Դրանք են թուրքական արտադրության Altay տանկը, ATAK T – 129 ռազմական ուղղաթիռը, ամֆիբիա տիպի փոխադրող ռազմանավը (LPD-Landing Platform Dock):

Թուրքիայի ռազմարդյունաբերական համալիրի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն այն տեսանկյունից, որ ներկայացնում է Հայաստանի հանդեպ ոչ բարեկամական պետության ռազմական պոտենցիալը, այլև նրանով, որ թուրքական արտադրության ռազմական տեխնիկայով հետաքրքրված է Ադրբեջանը: Թուրքական ռազմական արդյունաբերական որոշ ընկերություններ արդեն իսկ իրենց ներկայացուցչություններն ունեն Բաքվում, ինչպես օրինակ ASELSAN-ը, որը զբաղվում է հիմնականում կապի միջոցների արտադրությամբ: Թուրքիան Ադրբեջանին դիտում է որպես իր ռազմական արտադրանքի գլխավոր պատվիրատուներից մեկը:

Թուրքական ռազմական արդյունաբերության առաջ նպատակ է դրված ավելացնել զինված ուժերին թուրքական արտադրության զինտեխնիկայի և սարքավորումների մատակարարման ծավալը:

Հրապարակվել է այս ուղղությամբ Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության 2009-2016 թվականների ռազմավարությունը[1]: Փաստաթղթում ներկայացված են 7 տարվա կտրվածքով այն զինատեսակները, տեխնիկայի նմուշները, որոնք պետք է մատակարարվեն թուրքական բանակին: Ընդ որում նախատեսվում է թուրքական արտադրության զինտեխնիկան նաև արտահանել: Ռազմավարության մեջ նպատակ էր դրված 2011 թվականին Թուրքիայում արտադրված զինտեխնիկայով և ռազմամթերքով ապահովել պաշտպանական համակարգի կարիքների 50 %-ը, ռազմական արդյունաբերության արտադրանքի արտահանումը նույն տարում հասցնել 1 միլիարդ դոլարի[2]:

Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության 2013 թվականի իրականացվելիք ծրագրում նշված են նաև 2011 թվականի արդյունքները: Ջեկույցի համաձայն 2011 թվականին թուրքական ռազմարդյունաբերական համալիրը ապահովել է պաշտպանական համակարգի կարիքների 54%-ը: 2011 թվականին թուրքական ռազմական արտադրանքի արտահանման ծավալը կազմել է 1,09 միլիարդ դոլար[3]: Փաստորեն թե՛ ներքին կարիքների ապահովման, թե՛ արտահանման տեսանկյունից 2011 թվականի պլանը կատարվել է:

Թուրքական ռազմական արդյունաբերությունը իրականացնում է զրահատեխնիկայի, հրթիռահրետանային համակարգերի, կապի, էլեկտրոնային պայքարի համակարգերի, անօդաչու թռչող սարքերի, ռազմածովային զինտեխնիկայի արտադրություն: Այս հոդվածում նպատակահարմար ենք գտել անդրադառնալ ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերում կիրառվելիք թուրքական ռազմարդյունաբերության առավել մասշտաբային նախագծերին:

Ցամաքային զորքերի թերևս ամենամեծ և կարևոր նախագիծը թուրքական տանկի արտադրությունն է: Թուրքիան պատրաստվում է

---

[1] 2009-2016 Savunma Sanayii Sektörel Strateji Dokümanı.
http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Documents/2009_SSSS.pdf

[2] Նույն տեղում:

[3] Savunma Sanayi Müsteşarlığı, Performans programı 2013. s. 17.
http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Performans%20Program/2013/2013YiliPerformansPrograma.pdf

2015 թվականին սկսել սեփական Altay տանկերի խմբաքանակային արտադրություն: Altay-ի նախագծման աշխատանքները սկսվել են դեռևս 2007 թվականին: Արտադրողը թուրքական Otokar ընկերությունն է, որը զբաղվում է քաղաքացիական և ռազմական մեքենաների արտադրությամբ: Տանկի նախագծմանը աջակցել են հարավկորեացի մասնագետները և Altay-ը փոխառել է հարավկորեական K2 տանկի շատ առանձնահատկություններ: 2016 թվականին նախատեսվում է 250 տանկեր շահագործման հանձնել թուրքական բանակին[4]: 2013 թվականի ապրիլին տեղի ունեցան տանկի փորձարկումները, որոնցում թուրք մասնագետների գնահատմամբ այն ցույց է տվել տպավորիչ արդյունքներ արագության և շարժունակության տեսանկյունից: Ադրբեջանը և Սաուդյան Արաբիան արդեն հետաքրքրություն են ցուցաբերել Altay տանկի նկատմամբ և այն գնելու պատրաստակամություն հայտնել:

Հասկանալու համար Altay-ի առավելություններն ու թերությունները անհրաժեշտ է այն համեմատության մեջ դնել այլ տանկերի հետ: Թուրքական Altay տանկը հիմնականում համեմատում են գերմանական արտադրության Leopard 2 և ռուսական T-90 տանկերի հետ: Տեխնիկական-մարտավարական հատկանիշներով Altay-ը մոտենում է այս 2 տանկերին, սակայն առավել մոտ է Leopard 2 տանկին, շատ ասպեկտներում էլ Altay-ը զիջում է ռուսական արտադրության T-90 տանկին: Շարժիչի հզորությունը 1500 ձիաուժ է, ինչը հավասար է Leopard-ի շարժիչի հզորությանը և 500 ձիաուժով ավելի է քան T-90-ի շարժիչինը[5]: Altay-ի վառելիքի պաշարը 500 լիտր է: Այս ցուցանիշով այն զգալի զիջում է իր մրցակիցներին: Leopard-ի վառելիքի պաշարը մինչև 1200 լիտր է, ռուսական տանկինը՝ մինչև 1600լ: Altay-ը միանգամից կարող է անցնել 500 կմ տարածք, այս ցուցանիշով գրեթե հավասար է Leopard-ին, սակայն զիջում է T-90-ին, որի ցուցանիշը 700 կմ է: Առավելագույն արագությունը 3 տանկերի մոտ էլ

---

[4] Altay Milli Tank Projesi, Savunma ve Havacılık Sanayi İhracatçılar Birliği. http://www.turksavunmasanayi.gov.tr/tr/proje/altay-milli-tank-projesi

[5] Leopard 2 A7, Product specifications, Krauss-Maffei Wegmann. http://www.kmweg.com/home/tracked-vehicles/main-battle-tanks/leopard-2-a7/product- specification.html

գրեթե նույնն է: Altay-ի առավելագույն արագությունը 70կմ/ժ է, T-90 տանկինը՝ 60 կմ/ժ, Leopard-ինը՝ 72 կմ/ժ[6]: Ուղիղ նշանառությամբ կրակի հեռահարության ցուցանիշով Altay-ը զիջում է իր 2 հիմնական մրցակիցներին: Altay-ը ուղիղ նշանառությամբ թիրախը կարող է խոցել մինչև 3000 մ հեռավորության վրա, Leopard-ը՝ 4000, T-90-ը՝ 5000[7]:

Փաստորեն Altay-ը իր մրցակիցներին զիջում է վառելիքի պաշարի, կրակի հեռահարության և առավելագույն անցողունակության ցուցանիշներով: Ոչ պակաս կարևորություն ունի նաև տանկի գինը: Այս առումով էլ թուրքական տանկը չի դիմանում ռուսական T-90-ի հետ մրցակցությանը: Altay-ը նախատեսվում է վաճառել միջինը 5,4 միլիոն դոլար գնով՝ կախված մոդիֆիկացիայից, այն դեպքում, երբ T-90-ի գինը տատանվում է 2,5-ից 3 միլիոն դոլարի սահմաններում: Leopard 2-ի վերջին A7 մոդիֆիկացիայի գինը 4-7 միլիոն դոլար է՝ կախված տեխնիկական հագեցվածությունից և գնվող տանկերի քանակից[8]:

Այսպիսով թուրքական տանկը խմբաքանակային արտադրության հանվելուց հետո դեռևս պետք է դիմանա ուժեղ մրցակցության միջազգային շուկայում: Առաջին հերթին խոսքը վերաբերում է ռուսական տանկերին, որոնք համաշխարհային շուկայում հաստնի են գին-որակ համադրության լավագույն ցուցանիշով: Մասնագետների համոզմամբ Altay-ը հագեցած է ժամանակակից տանկ կոչվելու համար անհրաժեշտ զինատեսակներով և տեխնիկական հատկանիշներով, սակայն թուրքական տանկը համաշխարհային շուկայում դեռևս վստահելի անուն չունի, տարիներ կպահանջվեն, որպեսզի Altay-ը կոչվի կայացած նախագիծ: Altay-ը դեռ իր որակները պետք է ապացուցի թուրքական բանակում, նրա հեղինակությունը զգալի կբարձրանա, եթե ժամանակի ընթացքում դառնա թուրքական բանակի հիմնական հարվածային տանկը:

Թուրքական ռազմաօդային ուժերի խոշոր նախագծերից մեկը ATAK T-129 ռազմական ուղղաթիռի արտադրությունն է: 2007 թվականին

---

[6] Altay Ana Muharebe tankı. http://www.roketsan.com.tr/wp-content/uploads/2013/02/ALTAY.pdf

[7] УралВагонЗавод, танк-Т-90С. http://www.uvz.ru/product/70/3

[8] Desert Leopards: Germany selling heavy armor to the Saudis? Defense industry daily, 13/08/2013, http://www.defenseindustrydaily.com/desert-leopards-germany-selling-heavy-armor-to-the-saudis-06993/

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչությունը 1,2 միլիարդ դոլարի պայմանագիր ստորագրեց AgustaWestland անգլոիտալական ընկերության հետ: Պայմանագրով Թուրքիան իրավունք է ստացել արտադրել 50 T 129 հարձակվողական ուղղաթիռներ հարմարեցված Թուրքիայի պայմաններին: Ուղղաթիռները արտադրվելու են Թուրքիայում AgustaWestland կոնցեռնի A 129 Mangusta ուղղաթիռի բազայի վրա: Նախագծի թուրքական կողմի կապալառուն Թուրքիայի օդատիեզերական ընկերությունն է (TUSAŞ)[9]: ATAK T 129-ը հանդիսանում է A 129 ուղղաթիռի մոդեռնիզացված տարբերակը: Կատարելագործվել և հզորացվել է շարժիչը, ավելացել է ռադարների քանակը, ավելացել է թռիչքի հեռավորությունն ու բարձրությունը, թարմացվել է նավիգացիոն տեխնիկան, ուղղաթիռը համալրվել է ժամանակից թուրքական և արտասահմանյան հրթիռներով[10]:

ATAK T 129-ի արտադրությանը ներգրավվել են թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններ: Դրանցից ASELSAN-ը իրականացնում է ծրագրային ապահովումն ու տարբեր սարքավորումների արտադրությունը: Իսկ ROKETSAN ընկերությունը մատակարարում է հրթիռներ[11]:

Հատկանշական է, որ թուրքական ուղղաթիռը արդեն իսկ մասնակցում է միջազգային տենդերների: Հարավային Կորեայի հայտարարած ուղղաթիռի գնման մրցույթում բազմաթիվ փորձարկումներից հետո ATAK T 129-ը մրցույթի կարճ ցուցակում ընդգրկվել էր Ամերիկյան Boeing ընկերության AH-64 Apache և Bell ընկերության AH-1Z ուղղաթիռների հետ: Սակայն մրցույթի վերջնական արդյունքում հաղթող է ճանաչվել Boeing ընկերության AH-

---

[9] AgustaWestland 129 to be model for Turkish ATAK, Flightglobal 14/09/2007. http://www.flightglobal.com/news/articles/agustawestland-129-to-be-model-for-turkish-atak-216788/

[10] Вертолёт боевой поддержки Т-129 для турецких вооружённых сил, Военное обозрение. 22/10/2012. http://topwar.ru/20209-vertolet-boevoy-podderzhki-t-129a-dlya-tureckih-vooruzhennyh-sil.html

[11] Հովսեփյան Լ., «Թուրքիայի ՋՈՒ արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը», Ե., 2010, էջ 105:

64 Apache ուղղաթիռը[12]: ATAK T-129-ը ցուցադրվել է Բահրեյնի ավիաշոուում, որը համարվում է Մերձավոր Արևելքում ռազմական տեխնիկայի ցուցադրության կարևոր հարթակ: Թուրքական ուղղաթիռով հետաքրքրված են Ադրբեջանը, Ալժիրը, Կատարը, ԱՄԷ-ն, Եգիպտոսը և մի շարք այլ երկրներ: Սակայն թուրքական ուղղաթիռի արտահանման հետ կապված առաջացել են խնդիրներ: Պակիստանը սեփական ռազմաօդային ուժերի պարկը թարմացնելու համար պատրաստակամություն է հայտնել Թուրքիայից գնել ATAK T 129 ուղղաթիռներ: Պակիստանը հիմնականում օգտագործում է ամերիկյան արտադրության ուղղաթիռներ: Այս գործարքը անհանգստություն է առաջ բերել Միացյալ Նահանգներում: Խնդիրն այն է, որ ATAK T 129-ի շարժիչը արտադրված է ԱՄՆ-ում՝ անգլո-ամերիկյան ընկերության կողմից: Հավանականությունը մեծ է, որ ԱՄՆ-ը արգելափակի թուրքական ուղղաթիռի արտահանումը այս շարժիչով[13]:

Ֆինանսական տեսանկյունից թուրքական ռազմական արդյունաբերության մասշտաբային ծրագիր է սեփական ավիակրի ստեղծումը: Այս դեպքում ավիակիր ասվածը հարաբերական է, խոսք է գնում ամֆիբիա տիպի փոխադրող ռազմանավի մասին: Այս դասի ռազմանավեր ունեն աշխարհի 8 երկրներ, դրանք հիմնականում նախատեսված են ռազմական տեխնիկայի փոխադրումների, դեսանտային ուժերի տեղափոխման համար: Դրանց տախտակամածը կարճ է և նախատեսված է ուղղաթիռների տեղակայման համար: Թուրքական զինված ուժերի ղեկավարությունը խնդիր է դրել, որ կառուցվելիք ռազմանավը պետք է կարողանա ամենաքիչը 1 գումարտակ առանց բազայի աջակցության՝ սեփական լոժիստիկ միջոցներով փոխադրել ճգնաժամային գոտի[14]:

---

[12] Defense industry daily, Turkey finally lands its attack helicopters. 19/02/2014 http://www.defenseindustrydaily.com/turkey-shortlists-2-attack-helicopters-updated-02397/

[13] ABD Türkiye'yi ATAK'ın lisansı için tehdit etti. Haberler, 17/10/2013. http://www.haberler.com/abd-turkiye-yi-atak-in-lisansi-icin-tehdit-etti-5188786-haberi/

[14] Havuzlu Çıkarma Gemisi (LPD), Savunma Sanayi Müsteşarlığı. http://www.ssm.gov.tr/anasayfa/projeler/Sayfalar/proje.aspx?projeID=30

2010 թվականին Պաշտպանական արդյունաբերության վարչությունը հայտարարեց այս նավի կառուցման մրցույթի մասին: Առաջարկներ ուղարկվեցին նավաշինական 7 ընկերությունների: Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 3 ընկերություններից միայն մեկը՝ KOÇ հոլդինգին պատկանող RMK Marine Gemi Yapım Sanayi A.Ş. ընկերությունը ընդունեց կառավարության նախապայմանը և պատրաստակամություն հայտնեց կառուցել ռազմանավ ինքնուրույն նախագծով: Մնացած 2-ը առաջարկում էին չինական և իսպանական արդեն գոյություն ունեցող նախագծեր: Սպասվում էր, որ տենդերի հաղթող կճանաչվի KOÇ հոլդինգին պատկանող ընկերությունը, սակայն 2013 թվականի սեպտեմբերի 26-ին Էրդողանի գլխավորությամբ Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն հետագծեց նախագծի իրականացումը[15]:

2013 թվականի դեկտեմբերի 26-ին Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն նոր որոշում է ընդունել և ռազմանավի կառուցումը հանձնարարել Sedef նավաշինական կազմակերպությանը[16]: Այն հենց սկզբից մասնակցել էր տենդերին և առաջարկել էր կառուցել ռազմանավ իսպանական Խուան Կառլոս ռազմանավի նախագծով: Սակայն չէր հաղթել նախնական մրցույթում, քանի որ RMK ընկերությունը առաջարկել էր ինքնուրույն նախագիծ:

Թուրքիայի ռազմածովային ուժերին առնչվող կարևոր նախագիծ է նաև MILGEM-ը: Այս նախագծով ենթադրվում է կառուցել 8 կորվետներ, որոնք ունեն 99 մետր երկարություն, 2,3 հազար տոննա ջրատարողունակություն, հագեցած են ժամանակակից հրթիռային համակարգերով, ունեն 76 մմ հրանոթներ: Նախատեսված են առափնյա հերթապահության, սուզանավերի դեմ պայքարի և ցամաքային

---

15 Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի որոշումը Թուրքիայում կապում են Գեզի զբոսայգու ցույցերի հետ: Բողոքի ակցիաների ժամանակ Թաքսիմ հրապարակին մոտ գտնվող և KOÇ հոլդինգին պատկանող Divan հյուրանոցը ապաստան էր տվել ոստիկանության գործողություններից տուժած ցուցարարներին: Այս միջադեպը թուրքական կառավարությունը գնահատել էր որպես աջակցություն ցուցարարներին:

16 Milyarlık ihaleyi kazanan tersane, Sabah gazetesi. 28/12/2013, http://www.sabah.com.tr/Ekonomi/2013/12/28/milyarlik-ihalenin-kazanani-belli-oldu

բազաների պաշտպանության համար[17]: Արդեն կառուցվել և շահագործման են հանձնվել MILGEM նախագծի 2 կորվետներ: Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն չեղյալ է հայտարարել այս նախագծի կորվետների կառուցման տենդերը KOÇ հոլդինգին հանձնելու ավելի վաղ ընդունած որոշումը: KOÇ հոլդինգի հետ պայմանագրի խզումից հետո նախագծի 2 կորվետների կառուցումը հանձնվել է Ստամբուլի նավաշինական գործարանին, մնացած 4 կորվետների կառուցման համար նոր մրցույթ է հայտարարվելու:

Թուրքիայի ռազմածովային նավատորմի կորիզը կազմում են ԱՄՆ նավատորմի կողմից երկար տարիների շահագործումից հետո թուրքական կողմին հանձնված ամերիկյան ռազմանավերը և գերմանական արտադրության սուզանավերը: Հարկ է նկատել, որ ամերիկյան ֆրեգատները հնացած են, սակայն թուրքական կողմը դուրս գրված ռազմանավերը ստանալուց հետո դրանց մոդեռնիզացիայի աշխատանքներ է իրականացնում՝ համալրելով ժամանակակից հրթիռային և ռադիոլոկացիոն համակարգերով[18]: Թուրքական նավատորմը ներկայումս Սև ծովի ավազանում հանդիսանում է ամենաուժեղը: Ռուսաստանի Դաշնության Սևծովյան նավատորմի նախկին հրամանատար, ծովակալ Վլադիմիր Կոմոեդովի գնահատմամբ Սև ծովում թուրքական ռազմական նավատորմը ռուսական և ուկրաինական միացյալ նավատորմին գերազանցում է 4,7 անգամ[19]: Սևծովյան նավատորմը երբեք չի եղել ամենաուժեղը Խորհրդային, հետո նաև ՌԴ ռազմածովային ուժերում, սակայն ավանդաբար գերիշխել է այս ավազանում: Ներկայումս թուրքական կողմը առավելություն ունի թե՛ ռազմանավերի

---

[17] Аватков В., Новая армия нового турецкого режима, Институт Ближнего Востока. http://www.iimes.ru/?p=15529:

[18] Обзор турецкого флота, Военное обозрение, 30/04/2011. http://topwar.ru/27438-vse-vklyucheno-obzor-tureckogo-flota.html

[19] Турецкий флот почти в 5 раз сильнее флота России, Московский комсомолец, 10/11/2011. http://www.mk.ru/politics/article/2011/11/10/641804-turetskiy-flot-pochti-v-5-raz-silnee-flota-rossii.html

քանակով, թե՛ դրանց ռազմական պոտենցիալով: Թուրքիայի ռազմածովային ուժերի տրամադրության տակ ուղղաթիռակիր դեսանտային ռազմանավի հայտնվելը, սեփական արտադրության կորվետների կառուցումը կարող է խորացնել Սև ծովում ուժերի անհավասարակշռությունը ի օգուտ Թուրքիայի: Հարկ է նկատել, որ համեմատելիս նկատի է առնվում ամբողջ թուրքական նավատորմը և ռուսական միայն Սևծովյան նավատորմը: Հնարավոր պատերազմի դեպքում Թուրքիայի պարագայում՝ համեմատաբար փոքր տարածքի և նեղուցների առկայության պայմաններում, ավելի հեշտ է ռազմանավեր տեղափոխել Միջերկրական ծովից դեպի Սև ծով: Նույնը չի կարելի ասել Ռուսաստանի դեպքում: Պատերազմի դեպքում Բալթիկ ծովի կամ Խաղաղօվկիանոսյան նավատորմի ռազմանավերը Սև ծով տեղափոխվելու համար ստիպված կլինեն հսկայական տարածության կտրել և անցնել Թուրքիայի հսկողության տակ գտնվող նեղուցներով:

Այսպիսով թուրքական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման գործընթացն ընթանում է բավական ինտենսիվ տեմպերով: Սեփական արտադրության ռազմական տեխնիկան թույլ կտա նվազեցնել կախվածությունը արևմտյան երկրներից: Սակայն Թուրքիան փորձում է նաև արտահանել իր արտադրանքը: Որպես սպառման հիմնական շուկա դիտարկվում են Կենտրոնական Ասիան, Մերձավոր Արևելքը: Թուրքիան մոտ ապագայում չի կարող մրցակցել ռազմական տեխնիկա արտադրող արևմտյան երկրների հետ: Թուրքական արտադրության տեխնիկայով հիմնականում հետաքրքրվում են պետություններ, որոնք զենքի էմբարգոյի, տարբեր պատժամիջոցների կամ այլ քաղաքական պատճառներով չեն կարող ռազմական տեխնիկա ձեռք բերել արևմտյան երկրներից: Թուրքական արտադրանքի նկատմամբ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Ադրբեջանը: Արցախյան սառեցված հակամարտության պատճառով Եվրոպական երկրները և ԱՄՆ-ը զենք չեն վաճառում Բաքվին: Ռուսաստանից զինտեխնիկայի ներկրումը կարող է ընդհատվել հակամարտության սրման դեպքում: Թուրքիայի պարագայում որևէ խնդիր չկա, այս երկիրն Ադրբեջանի դաշնակիցն է, աջակցում է

տարածաշրջանում Բաքվի քաղաքականությանը: Թուրքական ռազմարդյունաբերության նորույթներով հետաքրքրված են նաև Պարսից ծոցի արաբական երկրները, Պակիստանը: Ժամանակ առ ժամանակ այս երկրները դժվարություններ են ունենում արևմուտքից՝ առաջին հերթին ԱՄՆ-ից զենքի ներկրման հարցում: Չնայած ծոցի երկրները ԱՄՆ դաշնակից երկրների թվում են, Վաշինգտոնը երբեմն խուսափում է որոշ զինատեսակներ մատակարարել արաբական միապետություններին՝ մտավախություն ունենալով, որ դրանք ի վերջո կարող են հայտնվել ահաբեկչական կազմակերպությունների ձեռքում: Պակիստանի դեպքում մեծ դերակատարություն ունեն վերջին շրջանում Վաշինգտոն-Իսլամաբադ լարված հարաբերությունները՝ կապված Աֆղանստանում իրավիճակի, Պակիստանի տարածքում ամերիկյան անօդաչու թռչող սարքերի չթույլատրված թռիչքների հետ: Այս բոլոր գործոնների պայմաններում առաջանում է ռազմական տեխնիկայի այլընտրանքային աղբյուրների կարիք: Նմանատիպ երկրների համար Թուրքիան բավական հարմար մատակարար է, հատկապես, եթե հաշվի առնենք, որ վերջին շրջանում Թուրքիան իր արտաքին քաղաքականության մեջ մեծ տեղ է տալիս այս տարածաշրջաններին:

GALSTYAN VARDAN
(YSU)

ABOUT THE NEW PROJECTS OF MILITARY-INDUSTRIAL COMPLEX OF TURKEY

Turkish military industry has become an important part of modernization of the Turkish army. In recent years government pays more attention to this sphere and give more financial resources to military industry. The main goal is to supply army with military technique and equipment made in Turkey. Cooperation with other countries (mainly Turkey's allies from NATO) plays a big role in developing of military-industrial complex.

In this article there are represented military innovations for Turkish armed forces – Infantry, Air forces and Navy.

Especially countries of the Middle East region are interested in Turkish military production. Countries like Saudi Arabia and Pakistan are among the main customers. Turkey also uses this fact to increase its influence in the region. The neighbors of Armenia – Azerbaijan and Georgia buy military technique from Turkey. For Armenia it is important to follow Turkish-Azerbaijani military cooperation, because Turkey makes embargo policy and on one hand there are closed borders, and on the other hand there are unresolved Nagorno-Karabakh conflict and ceasefire with Azerbaijan.

ԳԱՍՊԱՐՑԱՆ ԱՐԱՄ
(ԱԻ)

ՔՈՒՎԵՅԹԻ ԴԵՐԸ ԳԵՐՏԵՐՈՒԹՑՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՑԱՆ ՄԵՋ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

19-րդ դարի վերջին-20-րդ դ. սկզբին Քուվեյթը վերածվեց բուռն իրադարձությունների և սուր հակասությունների հարթակի: Կարճ ժամանակում այն դարձավ կարևորագույն տնտեսական կենտրոն, որի անմիջական մասնակցությամբ և միջնորդությամբ իրագործվում էին ծավալուն առևտրային գործարքներ Արևմուտքի և Կենտրոնական Արաբիայի միջև: Ալ-Սաբահ տոհմը, որն ավանդաբար ղեկավարում էր Քուվեյթը, հսկայական եկամուտներ էր ստանում առևտրային միջնորդավճարներից, հարավային Իրաքում՝ Բասրայի վիլայեթում գտնվող հողատարածքներից, ինչպես նաև հետզհետե զարգացող մարգարտի արդյունահանումից, ինչի շնորհիվ Սաբահները ձեռք բերեցին մեծ հեղինակություն, իսկ նրանց ազդեցությունը սկսեց տարածվել նաև հարևան շրջանների վրա:

1896 թ. պալատական հեղաշրջման հետևանքով իշխանության եկավ շեյխ Մուբարաք ալ-Սաբահը[1]: Ի տարբերություն իր նախորդների՝ Մուբարաքը չէր ցանկանում և չէր պատրաստվում համակերպվել Ստամբուլից կախյալ կարգավիճակին՝ նպատակ ունենալով ստեղծել Օսմանյան կայսրությունից անկախ և հզոր պետություն: Քուվեյթը մտավ պատմական զարգացման նոր ժամանակաշրջան:

Շեյխ Մուբարաքի ծրագրերը համընկնում էին Սաուդների մտադրությունների հետ, որոնք այդ ժամանակ բնակվում էին Մուբարաքի արքունիքում: Նրանց հաջողվեց իրենց շուրջը համախմբել ու դաշնակցային կապեր հաստատել տարածաշրջանի առավել ազդեցիկ ցեղախմբերի առաջնորդների և բեդվինական շեյխերի հետ:

Սակայն Մուբարաքի նպատակների իրականացումը դեռևս հնարավոր չէր, քանի որ այստեղ շարունակում էին իրենց ամուր

---

[1] Ahmad Mustafa Abu-Hakima, The Modern History of Kuwait 1750-1965, London, 1983, p. 110.

դիրքերը պահպանել թուրքական իշխանությունները և Կենտրոնական Արաբիայում Բարձր Դռան հիմնական դաշնակից և Քուվեյթի հակառակորդ Իբն Ռաշիդների Հաիլի էմիրությունը, որն իր հերթին ձգտում էր գերակայող դիրք զբաղեցնել տարածաշրջանում:

Բայց շուտով ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ դաշնակիցների. կարևոր նշանակություն ունեցավ եվրոպական տերությունների ներգրավումը, ինչը տեղային կոնֆլիկտին տվեց միջազգային հնչեղություն:

19-րդ դարի վերջին Արաբական թերակղզին վերածվեց անգլո-գերմանական պայքարի կենտրոններից մեկի:

Գերմանիայի կողմից Բաղդադի երկաթուղու կառուցումը, որը պետք է ավարտվեր Ալ-Քուվեյթում, դժգոհության առիթ էր տվել Մուբարաքին: Նա իրավացիորեն համարում էր, որ երկաթուղու կառուցումը վերջ կդնի ինչպես իր ինքնուրույնությանը, այնպես էլ զավթողական ծրագրերին: Մուբարաքի մտավախություններն իր օգտին հմտորեն օգտագործեց Անգլիան, որն ուներ սեփական շահերը և հեռուն գնացող նպատակները, այն է՝ Պարսից ծոցում էլ ավելի մեծացնել ու ամրապնդել իր ազդեցությունը և ոչ մի պայմանով թույլ չտալ Թուրքիայի ու հատկապես Գերմանիայի մուտքը Արաբական թերակղզի: Հենց այս հանգամանքը հնարավորություն ստեղծեց Մեծ Բրիտանիայի և Քուվեյթի արագ մերձեցման համար:

1897 թ. Ալ-Քուվեյթ այցելեց Պարսից ծոցում Անգլիայի ներկայացուցիչը, որի հետ հանդիպումների ժամանակ Քուվեյթի շեյխը հավաստիացրեց, որ նա պատրաստ է ընդունել բրիտանական հովանավորությունը և պաշտպանությունը: Նման հայտարարությամբ Մուբարաքը հանդես եկավ նաև 1898 թ.: Ի վերջո՝ 1899 թ. հունվարի 23-ին, ստորագրվեց անգլո-քուվեյթյան գաղտնի պայմանագիրը[2]: Համաձայն այս պայմնագրի՝ Անգլիան իր վրա էր վերցնում Քուվեյթի ամբողջականության և անվտանգության ապահովումը, իսկ Մուբարաքն իր հերթին պարտավորվում էր չընդունել այլ

---

[2] Котлов Л., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1975, с. 187. Անգլո-քուվեյթյան պայմանագիրը գաղտնի պահվեց մինչև 1912 թ., Anscomble F., The Ottoman Gulf, The Creation of Kuwait, Saudi Arabia and Qatar, 1997, New York, p. 121.

պետությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև որևէ նպատակով իր տարածքը չտրամադրել երրորդ կողմին առանց անգլիական կառավարության թույլտվության:

Այսպիսով, փաստորեն, Քուվեյթը հայտնվեց Անգլիայից կախյալ վիճակում: Անգլո-քուվեյթյան պայմանագիրը վերացնում էր Մուբարաքի կողմից ինքնուրույն արտաքին քաղաքականություն իրականացնելու հնարավորությունը, ինչին նա չէր էլ ձգտում, բայց միևնույն ժամանակ ձևական առումով որևէ կերպ չէր սահմանափակում Մուբարաքի իրավունքները ներքին գործերում և հարևան արաբական երկրների հետ հարաբերություններում:

Ստանալով Մեծ Բրիտանիայի աջակցությունը՝ Մուբարաքը սկսեց իրականացնել իր վաղեմի ծրագրերը: Նա ակտիվացրեց իր գործունեությունը Կենտրոնական Արաբիայի շրջաններում, 1900 թ. խզեց բոլոր առևտրային կապերը Ռաշիդների հետ՝ տնտեսական շրջափակման ենթարկելով Հաիլը (Ռաշիդների էմիրության կենտրոնը)[3]:

Չնայած այն հանգամանքին, որ Մուբարաքը և իր դաշնակից Աբդ ալ-Ազիզ իբն Սաուդը մշտապես ընդգծում էին իրենց հավատարմությունը Օսմանյան կայսրությանը, այնուամենայնիվ, նրանց գործողությունները կրում էին բացահայտ հակաթուրքական բնույթ:

Քուվեյթասաուդական դաշինքի հիմնական հակառակորդներ Ռաշիդները հենվում էին թուրքական իշխանությունների վրա՝ ստանալով ինչպես Բասրայի նահանգապետի, այնպես էլ սուլթանական պալատի օգնությունը:

Հակամարտությունը իր գագաթնակետին հասավ 1901 թ., երբ Մուբարաքի և Աբդ ալ-Ազիզ իբն Սաուդի միացյալ զորքերը ներխուժեցին Ջեբել Շամար: Պատերազմի սկզբնական շրջանում հաջողությունը դաշնակիցների կողմն էր, սակայն 1901 թ. մարտին Հաիլի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում Ռաշիդների զորքերը ջախջախիչ պարտության մատնեցին Մուբարաքի զորքերին[4], ինչը ստիպեց վերջինիս դադարեցնել հարձակումն ու նահանջել Քուվեյթ:

---

[3] Котлов Л., նշվ. աշխ., էջ 189:

[4] Ahmad Mustafa Abu-Hakima, նշվ. աշխ., էջ 111:

Միևնույն ժամանակ, Բաղդադում գտնվող 6-րդ բանակային կորպուսի հրամանատար Մուշիր Ահմեդ Ֆեյզի փաշան համոզում էր Ստամբուլին ռազմական գործողություններ սկսել Մուբարաքի դեմ՝ համարելով վերջինիս Արաբիայում ստեղծված իրավիճակի միակ մեղավորը, ինչպես նաև մեղադրելով նրան ոչ միայն տեղի թուրքական իշխանությունների նկատմամբ անհնազանդության, այլև Ստամբուլի անմիջական հրամանները չկատարելու մեջ: Ֆեյզի փաշան պնդում էր օգտվել Մուբարաքի պարտության հետևանքով ստեղծված ծանր իրավիճակից, և անմիջապես զավթել Քուվեյթը՝ ընդմիշտ վերջ դնելով այս խնդրին[5]:

Ուշագրավ է, որ այս հարցում միանգամայն այլ կարծիք ուներ Բասրայի գեներալ-նահանգապետ Մուհսին Ֆերիկ փաշան: Նա, լավատեղյակ լինելով Քուվեյթի խնդրին, ինչպես նախկինում, այդպես էլ այժմ խորհուրդ էր տալիս կենտրոնական իշխանություններին, համենայն դեպս, ներկա պահին մի կողմ դնել շեյխ Մուբարաքի նկատմամբ ուժի գործադրման ցանկացած մտադրություն: Ֆերիկ փաշան գտնում էր, որ Քուվեյթի կորստի վտանգը կարելի է կանխել միայն խաղաղ բանակցությունների միջոցով՝ միաժամանակ նշելով, որ անհրաժեշտ է զսպել Աբդ ալ-Ազիզ ալ-Ռաշիդին և պարտադրել նրան հրաժարվել Քուվեյթի վրա հարձակումից[6]:

Ստամբուլը երկմտում էր. ի վերջո որոշվեց զորք ուղարկել Քուվեյթ:

1901 թ. ապրիլի սկզբին 6-րդ բանակային կորպուսի հրամանատար՝ Մուշիր Ֆեյզի փաշային հրաման տրվեց սկսել հարձակողական գործողություններ՝ իր անմիջական ղեկավարությամբ:

1901 թ. ապրիլի 6-ին Մուշիրը ժամանեց Բասրա[7], իսկ մի քանի օր անց Բասրա ուղարկվեց թուրքական բանակի գեներալ Մուհամմեդ Ֆազիլ փաշա Դաղստանին՝ իր հետ բերելով 300 հետևակային, 20

---

[5] Донесение Титулованного советника Овсеенко, Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 1, N 26 (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

[6] Նույն տեղում:

[7] Секретная телеграмма Российского-Императорского генерального консула в Багдаде от 6-го апреля 1901 года, Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 1, N 13 (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

հրետանավոր և զինամթերք: Սպասվում էր նաև թուրքական հեծելազորի ժամանումը[8]:

Թուրքերի նման ակտիվությունը չէր կարող աննկատ մնալ Քուվեյթի շեյխի կողմից, որ սկսեց հավաքել իր զորքերը և զինել նրանց: Անտարբեր չմնացին նաև անգլիացիները. Ֆեյզի փաշայի Բասրա ժամանման հենց հաջորդ օրը իրադարձություններին հետևելու նպատակով Բասրայի նավահանգստում խարիսխ գցեց անգլիական «Լոուրենս» հածանավը, որն այնտեղ մնաց մինչև թուրքական զորքերի դուրս գալը[9]:

Ապրիլի 16-ին Ֆեյզի փաշան Մուբարաքին գրավոր հրավեր ուղարկեց՝ հինգ օրվա ընթացքում ներկայանալ Բասրա՝ քննարկելու կողմերի միջև ծագած խնդիրները: Շեյխը պատասխանեց. «Թող նախ Բասրա ներկայանան իմ թշնամիները՝ Յուսուֆ Իբրահիմը[10], Աբդ ալ-Ազիզ ալ-Ռաշիդը և Ֆարիկ Քազիմ փաշան, այդ ժամանակ և ես կներկայանամ: Իսկ այժմ ես դրա ժամանակը չունեմ, բայց ուրախ կլինեմ տեսնել յուրաքանչյուրին, ով ինձ հետ գործ կունենա»[11]:

Ստանալով Մուբարաքի մերժումը՝ թուրք գեներալներն սկսեցին զորքը նախապատրաստել արշավանքի: Սակայն դեռևս նախքան ռազմական գործողությունների սկիզբը շեյխ Մուբարաքին փոխանցվեցին Ստամբուլի պահանջները, համաձայն որոնց՝ նա պետք է հրաժարվեր իր իշխանությունից, ստանձներ Պետական խորհրդատվական խորհրդի անդամի պաշտոնը և իր ընտրությամբ մեկներ պատվավոր աքսորի Օսմանյան կայսրության ցանկացած

---

[8] Донесение Титулованного советника Овсеенко, Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 1, N 26, նշվ. արխիվ:

[9] Донесение генерал-лейтенанта Сахарова, Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 1, N 16 (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

[10] Ալ-Քուվեյթի խոշոր արևտրական, որը օժանդակություն էր ստանում Բասրայի նահանգապետի և սուլթանական պալատի կողմից:

[11] Донесение Титулованного советника Овсеенко в первый департамент МИД, Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 1, N 19, Секретная телеграмма Над. Сов. Круглова, Багдад, 17 апреля 1901 года, հ. 1, N 18 (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

քաղաք: Հակառակ դեպքում՝ թուրքական զորքերի ներխուժումն անխուսափելի էր[12]:

Հենց այս ժամանակահատվածում, այսինքն՝ 1901 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում, Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչների հաղորդումների համաձայն՝ ակտիվացան շփումները շեյխ Մուբարաքի և Բուշեհրում Ռուսաստանի հյուպատոսության ղեկավար Օվսեենկոյի միջև:

Ավելորդ չէ նշել, որ դեռևս 1900 թ. վերջին ռուսական «Վարյագ» հածանավով Օվսեենկոն ժամանեց Քուվեյթ: Ի դեպ՝ Հածանավի մուտքը Պարսից ծոցի նավահանգիստներ որոշված էր դեռևս ամռանը, սակայն այդ որոշման վերաբերյալ տարածաշրջանում իրենց գործունեությունն իրականացնող դիվանագետների շարքերում առկա էին որոշակի տարակարծություններ: Այսպես, օրինակ, Բասրայում Ռուսաստանի հյուպատոս Ադամովը մտավախություն էր հայտնում, որ «Վարյագի» մուտքը հատկապես Քուվեյթ կարող է բացասաբար անդրադառնալ ռուս-անգլիական հարաբերությունների վրա, ինչը կհանգեցնի Լոնդոնի կողմից պատասխան քայլերի: Այսուհանդերձ, Ստամբուլում դեսպան Ի. Ա. Զինովևի պնդմամբ ռուսական հածանավը չփոխեց իր ծրագրերը և մտավ Քուվեյթի նավահանգիստ:

Օվսեենկոյի և նավի անձնակազմի ներկայացրած հաշվետվություններում նշվում էր այն ջերմ ընդունելության մասին, որին արժանացել էին ռուս ներկայացուցիչները Քուվեյթում: Օվսեենկոն, մասնավորապես, հայտնում է. «Քուվեյթի շեյխը ոգևորված էր «Վարյագի» ժամանմամբ և ինձ հետ բազմաթիվ զրույցների ժամանակ ցանկություն էր հայտնում տեսնել իր մոտ ռուսական առևտրային նավերը, ինչպես նաև մեր ապրանքները»[13]:

Դիվանագետը հայտնում էր նաև, որ Մուբարաքը այնքան էլ գոհ չէր անգլիացիներին կատարած իր զիջումներից:

Երկուստեք փոխանակվող նամակագրության ժամանակ Մուբարաքը մանրամասն նկարագրում է պատերազմի

---

[12] Anscomble F., նշվ. աշխ., էջ 21:

[13] Михин В., Кувейт-Россия история взаимоотношений, http://www.iarex.ru/articles/43139.html

դրդապատճառները՝ իրեն անվանելով Քուվեյթի ինքնուրույն, որևէ մեկից կախվածության մեջ չգտնվող ժառանգական կառավարիչ[14]:

Սակայն ամենահետաքրքրականը ռուսական կողմին բանավոր փոխանցված առաջարկն է: Ինչպես վկայում է Օվսեենկոն, Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարություն ուղարկած իր հաղորդման մեջ, Քուվեյթի շեյխ Մուբարաք Սաբահը, ցանկանալով ելք գտնել ստեղծված իրավիճակից, որտեղ մի կողմից սպառնացող թուրքական իշխանություններն էին և Ռաշիդները, իսկ մյուս կողմից՝ անգլիացիները՝ իրենց հովանավորությունը պարտադրող առաջարկներով, խնդրում է ռուսական իշխանությունների աջակցությունը Քուվեյթի տարածքային ամբողջականության պահպանման համար և պատրաստակամություն հայտնում անհրաժեշտության դեպքում նույնիսկ ռուսական դրոշը բարձրացնել Քուվեյթի վրա[15]:

Նկատի ունենալով այն իրողությունը, որ Քուվեյթը արդեն իսկ 1899 թ. Անգլիայի հետ ստորագրել էր գաղտնի համաձայնագիր, նման խնդրանքը կասկածելի է թվում: Բայց, հաշվի առնելով Մուբարաքի ջախջախիչ պարտությունը պատերազմի ժամանակ և իր՝ հեռուն գնացող ծրագրերի տապալմաման հետ կապված հիասթափությունը, ինչպես նաև այն փաստը, որ անգլիացիները դեռևս ոչ վաղ անցյալում օժանդակում էին Քուվեյթի իշխանության համար պայքարող Յուսուֆ Իբրահիմին, Մուբարաքի խնդրանքը ստանում էր որոշակի հիմքեր:

Դեպքերի հետագա ընթացքը բարելավեց շեյխ Մուբարաք ալ-Սաբահի վիճակը:

Թուրքական պատժիչ զորամիավորումների արշավանքը այդպես էլ չիրականացավ, քանի որ ի հայտ եկան մի շարք դժվարություններ կապված զորքերի տեղաշարժման հետ: Ի սկզբանե որոշվել էր Քուվեյթի վրա հարձակումն իրականացնել երկու ուղղություններով՝ ցամաքային

---

[14] Նամակագրությունը ամբողջությամբ տե՛ս Донесение Титулованного советника Овсеенко Российско-императорскому генеральному консульству в Багдаде от 20 апреля 1902, Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 1, N 27 (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

[15] Քուվեյթի շեյխ Մուբարաքի նման խնդրանքի հնարավորության մասին վկայում է նաև Ֆրեդերիկ Անսոբլը: Տե՛ս Anscomble F., նշվ. աշխ., էջ 119:

և ծովային: Նախատեսվում էր հեծելազորը ուղարկել ցամաքային ճանապարհով, սակայն, հաշվի առնելով, որ հեծելազորը պետք է անցներ անապատով, որը լի էր թուրքերին թշնամի արաբական ցեղերով, այդ ծրագրի իրագործումը համարվեց վտանգավոր: Բացի այդ խնդիրներ առաջացան՝ կապված հետևակի և հրետանու տեղաշարժման հետ[16]:

Սակայն ամենակարևոր և ամենաէական խնդիրը, որ ծառացել էր թուրքական կողմի առջև, անգլիական երկու ռազմանավերի ներկայությունն էր Քուվեյթի ափերի մոտ, որոնք տեղակայվել էին այնտեղ թուրքական զորքերի Բասրա ժամանումից անմիջապես հետո: Կարևոր էր այն հանգամանքը, որ ռազմական գործողություններ սկսվելու դեպքում բրիտանացիները կարող էին օժանդակել Մուբարաքին, ինչը կհանգեցներ ոչ միայն թուրքական զորքերի պարտությանը, այլև հնարավոր կդարձներ Անգլիայի պրոտեկտորատի հաստատումը Քուվեյթի վրա, և ի վերջո Օսմանյան կայսրության կազմից Քուվեյթի դուրս գալը:

Գիտակցելով իրադարձությունների զարգացման այսպիսի ոչ բարենպաստ ընթացքը՝ Բ. Դուռը վերանայեց իր դիրքորոշումը և որոշվեց գտնել խնդրի կարգավորման խաղաղ ճանապարհներ: Այդ նպատակով Քուվեյթ ուղևորվեց Բասրայի գեներալ-նահանգապետը: Իր քառօրյա այցի ընթացքում Մուհսին փաշան Մուբարաքի պալատում հանդիպումներ ունեցավ Քուվեյթի նավահանգստում կայանած բրիտանական ռազմանավերի հրամանատարների հետ: Նահանգապետի այն հարցին, թե ինչ են անում անգլիական նավերը Քուվեյթի ափերի մոտ, շեյխ Մուբարաքը պատասխանեց, որ, հավանական է, վերջիններս մտադրված են թուրքական ագրեսիայի դեպքում իրեն (Մուբարաքին) վերցնել բրիտանական հովանու ներքո: Մուբարաքի նման հայտարարությունը վերջնականապես համոզեց թուրքական իշխանություններին, որ Քուվեյթը համագործակցում է անգլիական իշխանությունների հետ, և, որ Մեծ Բրիտանիան մտադիր է ուժեղացնել իր դիրքերը տարածաշրջանում[17]:

---

[16] Донесение Титулованного советника Овсеенко, h. 1, N 26, նշվ. արխիվ:

[17] Ahmad Mustafa Abu-Hakima, նշվ. աշխ., էջ 123; Anscomble F., նշվ. աշխ., էջ 133-134; Донесение Титулованного советника Овсеенко, h. 1, N 26, նշվ. արխիվ:

Թուրք–քուվեյթյան բանակցությունների ընթացում թուրքական կողմին կարողացավ պարտադրել Մուբարաքին հավատարմության երդում տալ սուլթանին:

Այսպիսով, շեյխ Մուբարաք ալ-Սաբահին հաջողվեց պահպանել իր թագը: Հավաստելով իր լոյալությունը Օսմանյան կայսրությանը և սուլթանին՝ նա պահպանեց Բասրայում գտնվող իր հսկայական հողատարածքները, սակայն նրա հեռուն գնացող ծրագրերն ու նպատակները վերջնականապես տապալվեցին: Միաժամանակ, մերձենալով Անգլիայի հետ և ձեռք բերելով նրա հովանավորչությունն ու օժանդակությունը՝ Քուվեյթը հետագա տարիների ընթացքում, ստանձնելով նորանոր պարտավորություններ, ի վերջո հայտնվեց կիսանկախ վիճակում:

Օսմանյան կայսրությունը, ինչպես և պետք էր սպասել, չհամակերպվեց ստեղծված իրադրության հետ և դեռևս երկար ժամանակ՝ մինչև կայսրության կործանումը, շարունակում էր տարբեր միջոցներ փնտրել Մուբարաքին հնազանդեցնելու և երկրում հաստատելու իր անմիջական հսկողությունը:

Ինչ վերաբերում է Ծոցի շրջանում Ռուսաստանի ներկայությանը, անհաժեշտ է նշել, որ այն կրում էր բավական սահմանափակ բնույթ և երկրորդական նշանակություն ուներ ռուսական տնտեսաքաղաքական ռազմավարության համար:

Տարածաշրջանում Ռուսական կայսրության իրականացրած քայլերը հիմնականում ուղղված էին իր ազդեցությունը պահպանելուն և որոշակիորեն զսպելու և սահմանափակելու Մեծ Բրիտանիայի մենաշնորհային դիրքերը:

Այս առումով հատկանշական է 1908 թ. Ռուսաստանում լույս տեսած լայնածավալ ուսումնասիրությունը, որտեղ մանրամասն վերլուծության էին ենթարկվում Ռուսական կայսրության ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական շահերը սահմանամերձ շրջաններում, միաժամանակ քննարկվում էին արտաքին քաղաքական ուղղությունների կոնկրետ առաջարկներ և դրանց իրագործման հնարավորությունները: Ուսումնասիրության մեջ հատուկ անդրադարձ

էր կատարվում նաև Պարսից ծոցում ռուսական ներկայության անհարժեշտությանը[18]:

Համաձայն ուսումնասիրողների կարծիքի՝ Ծոցում ռազմական նավահանգիստի ստեղծումն աննպատակահարմար էր և, ընդհանրապես, չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին: Հետևաբար, նման ծրագրի իրագործումն անհեռանկար էր և անիմաստ: Վերջիններիս կողմից անհիմն էր համարվում նաև ռազմածովային նավատորմի ստեղծումը հանուն ռուսական առևտրային շահերի պաշտպանության, քանի որ Պարսից ծոցում գտնվող առևտրային նավերի քանակը շատ չնչին էր և նրանց պաշտպանության կարիքը չկար[19]:

Ուսումնասիրության մեջ առանձնակի ուշադրություն էր դարձվում նաև այն հանգամանքին, որ Պարսից ծոցի շրջանում ռուսական քաղաքական ակտիվության ցանկացած դրսևորում կարող էր բացասական արձագանք առաջացնել եվրոպական տերություններում և, մասնավորապես, Անգլիայում, որն այստեղ գերիշխող դեր էր ստանձնել:

Ռուսաստանն, այսուհանդերձ, պահպանեց իր հարաբերությունները Պարսից ծոցի արաբական երկրերի և, հատկապես, Քուվեյթի հետ, որոնք, սակայն, ընդհատվեցին Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:

GASPARYAN ARAM
(IOS)

KUWAIT'S ROLE IN THE REGIONAL POLICY OF THE GREAT POWERS IN THE BEGINNING OF THE 20TH CENTURY

In the end of the 19th and in the beginning of the 20th century Kuwait became the platform of furious events and sharp contradictions. The goal of Sheikh Mubarak Al-Sabah, who came to power in 1896, was to make Kuwait

---

[18] Михин В., Кувейт-Россия: история взаимоотношений, http://www.iarex.ru/articles/43139.html

[19] Նույն տեղում:

a powerful kingdom in the region apart from the Ottoman Empire. For this aim he signed secret agreement with Great Britain hoping to get its assistance.

Losing the war with the Emirates of Shammar, which was the ally of Turkish authority, Mubarak tried to get Russian Empire's protection to save his power, but Russians didn't find expedient to get into a confrontation with Great Britain which had already had a leading position in the Persian Gulf. In the end Kuwait became Great Britain's semi-dependent country.

ԴԱՎԹՅԱՆ ԱՐՈՒՍ
(ԱԻ)

ԱՄՆ-Ի ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1970-ԱԿԱՆ ԹԹ. – 2000 Թ.)

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը արդեն վաղուց կարևոր տեղ է գրավում միջազգային քաղաքականության մեջ: Եվրոպական բազում երկրներ արդեն պաշտոնապես ընդունել և դատապարտել են այն:

ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացը սկսվել է 1965 թ.: Սակայն, ինչպես շատ այլ երկրներ, ԱՄՆ-ը ևս ամեննին էլ անծանոթ չէր խնդրին: Արդեն 1965 թ. հետո ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը հայտնվել է մարդու իրավունքների և արտաքին քաղաքական գերակայությունների խաչաձևման բարդ հոլովույթում: Իսկ ժամանակակից աշխարհում ցեղասպանությունը դիտարկվում է հենց մարդու իրավունքների առումով, և ցեղասպանության անցյալի դեպքերի ճանաչումն ու դատապարտումը կարևորվում են ապագայում մարդկությանը նմանատիպ հանցագործություններից ձերբազատելու համատեքստում: Այս իմաստով ԱՄՆ-ը չէր կարող խուսափել պարբերաբար Հայոց ցեղասպանության խնդրին բախվելուց: Մինչդեռ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր Թուրքիան ԱՄՆ ռազմավարական դաշնակիցն էր: Այս պայմաններում Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ-ում պաշտոնապես ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ առաջին լուրջ քայլերը կատարեցին առանձին նահանգային և քաղաքային իշխանությունները: Խոսելով ԱՄՆ կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի մասին՝ պետք է նշել, որ նմանատիպ բանաձևերի քննարկումը սկսվել է 1970 ական թթ.: 1975 թ. հունվարի 28-ին հանրապետական կոնգրեսական Հենրի Հելստոսկին Ներկայացուցիչների պալատ ներկայացրեց թիվ 148 բանաձևը, որը լիազորում էր ԱՄՆ նախագահին 1975 թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակի ազգային օր» և

հիշել ցեղասպանության բոլոր զոհերին, հատկապես հայերի այն նախնիներին, ովքեր դարձել են 1915 թ. իրականացված ցեղասպանության զոհ: Բանաձևը Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունվեց 1975 թ. ապրիլի 8-ին և ուղարկվեց Սենատ, որտեղ այն հավանության չարժանացավ[1]: Նկատենք, որ կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթ հանդիսացավ թուրքական զորքերի՝ Կիպրոս ներխուժելուց հետո ԱՄՆ-ում ծայր առած հակաթուրքական տրամադրությունները: 1984 թ. ամերիկյան նախընտրական իրարանցման ժամանակ կրկին բարձրացվեց Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: 1984 թ. սեպտեմբերի 10-ին կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հավանություն տվեց 1975 թ. ապրիլի 24-ին «Մարդու հետ մարդու անմարդկային վերաբերմունքի և հայոց կոտորածների զոհերի հիշատակի միջազգային օր» անցկացնելու թիվ 247 բանաձևին[2]: ԱՄՆ օրենսդիր մարմնի ամբիոնից շատ խոսքեր հնչեցին այդ խնդրի առնչությամբ: Հռետորների մեջ էր նաև կոնգրեսում Դեմոկրատական կուսակցության մեծամասնության առաջնորդ Օ'Նիլը, ԱՄՆ փոխնախագահի հավակնորդը Դեմոկրատական կուսակցությունից[3]: Նշված բանաձևը ԱՄՆ կոնգրեսը կարող էր ընդունել դեռ 1983 թ. ապրիլին, բայց այն ժամանակ թուրքական կառավարությանը հաջողվեց վճռական ազդեցություն գործել պետքարտուղարության վրա «այս բանաձևը կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ է ներկայացվել 1983 թ. ապրիլի 21-ին կոնգրեսական Էնթոնի Կոելհոյի կողմից»[4]: ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի՝ 1984 թ. սեպտեմբերի 10-ին ընդունած որոշումը լայն արձագանք գտավ Թուրքիայում: Թուրքիայի նախագահ

---

[1] H.J.RES.148 - Joint resolution to designate April 24, 1975, as National Day of Remembrance of Man's Inhumanity to Man, http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d094:H.J.Res148:

[2] A resolution expressing the sense of the House of Representatives that the foreign policy of the United States should take account of the genocide of the Armenian people with the objective of preventing any future genocide anywhere in the world, and for other purposes. http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d098:HE00587:@@@T

[3] New York Times, 11. IX. 1984.

[4] A joint resolution designating a day of remembrance for victims of genocide, http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d098:SJ00087:@@@T

Քենան Էվրենը, այդ բանաձևին ի պատասխան, ցասումնալի նամակ գրեց Ռոնալդ Ռեյգանին, որում ամերիկյան գործընկերոջ ուշադրությունը հրավիրեց երկկողմանի հարաբերությունների ոլորտում բացասական հետևանքների անխուսափելիությունից՝ նման «անշրջահայաց քայլի» դեպքում[5]: Այդ նույն ժամանակ, սեպտեմբերի 12-ին, Անկարայում ԱՄՆ դեսպան Շտրաուս Հյուփեն կանչվեց Թուրքիայի ԱԳՆ, որտեղ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Վ. Հալեֆօղլուն նրան բողոքի նոտա ներկայացրեց[6]: Բացի այդ, 247 բանաձևի քննարկումների հետ կապված հետաքրքիր տեղեկություններ կան ամերիկացի պաշտոնաթող դիվանագետ Արմա Ջեյն Կարերի 2009 թ. դեկտեմբերին հրապարակված հարցազրույցում[7]: Դիվանագետը 1984-1986 թթ. ԱՄՆ պետքարտուղարությունում զբաղվել է Թուրքիայի հետ հարաբերությունների համակարգմամբ: Վերջինիս համաձայն, երբ 1983 թ. կոնգրեսական Կոելհոն Ներկայացուցիչների պալատ էր ներկայացրել հիշյալ բանաձևը, թուրքական իշխանություններն ակտիվ շփումների մեջ են եղել ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչների հետ՝ բանաձևի ընդունումը կանխելու համար: Մասնավորապես, ԱՄՆ պետքարտուղարին թուրքական իշխանությունները հայտնել են, որ բանաձևի ընդունումը զգալի վնաս կհասցնի երկկողմ հարաբերություններին: Ինչպես նշում է նախկին դիվանագետը, իրեն հանձնարարվել է քայլեր ձեռնարկել բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ: Կարերի բերած տեղեկությունների համաձայն, բանաձևի ընդունումը կանխելու համար իրականացված գործողություններում նա որոշակի օժանդակություն է ստացել նաև հրեական լոբբիստական կազմակերպություններից, ովքեր չէին ցանկանում «ցեղասպանության ենթարկվածի կարգավիճակը կիսել այլ ժողովուրդների հետ»[8]: Արդյունքում՝ Սենատ ուղարկված վերոհիշյալ բանաձևն այդպես էլ չքննարկվեց: 1988-1990 թթ. Խորհրդային Հայաստանում ծավալված

---

[5] Şenol Kantarcı, Amerika Birleşik Devletleri'nde Ermeniler ve Ermeni Lobisi, İstanbul, 1911, s. 208.

[6] Milliyet, 12. IV. 1984.

[7] Former Diplomat Reveals Secret State Dept. Attacks on 1980's Genocide Resolutions, http://www.armenianweekly.com/2009/12/09/former-diplomat-reveals-secret-state-dept-attacks-on-1980%E2%80%99s-genocide-resolutions/

[8] Նույն տեղում:

ազգային-ժողովրդավարական շարժումը և Խորհրդային Միության կազմից դուրս գալու Հայաստանի հետևողական քաղաքականությունը մեծ արձագանք գտան և հսկայական հետաքրքրություն առաջացրին ԱՄՆ-ում: Այս ազդակի հիման վրա սկսվեց ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացում դրսևորված հերթական՝ թերևս ամենահուժկու ալիքը: Սկզբում՝ 1989 թ. այդ ալիքը դրսևորվեց հիմնականում ԱՄՆ կոնգրեսում շրջանառվող համապատասխան՝ Ներկայացուցիչների պալատի թիվ 36 համատեղ[9], Ներկայացուցիչների պալատի թիվ 417 համատեղ[10] և Սենատի թիվ 212 համատեղ բանաձևերով, դրանց շուրջ ծավալված աննախադեպ բուռն քննարկումներով[11], իսկ 1990 թ. նաև Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցի կապակցությամբ նախագահ Ջորջ Բուշ Ավագի պաշտոնական ուղերձով[12]: Դրանում նախագահը 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից իրականացված քաղաքականությունն անվանում էր «մարդկության դեմ հանցագործություն»[13]: Միաժամանակ պետք է նկատել, որ հենց Բուշի վարչակազմի գործուն միջամտությամբ էր, որ վերը նշված բանաձևերը չէին ընդունվել ԱՄՆ կոնգրեսում: Թեև պետք է ընդգծել, որ ԱՄՆ նախագահի՝ հայերի կոտորածները ցեղասպանություն բնորոշելու գործոնի դերը չպետք է գերագնահատել: Հարկ է հիշել, որ 1981թ. նախագահ Ռեյգանն իր թիվ 4838 ուղերձում օգտագործել էր հենց «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը[14]: Սակայն դա ամենևին էլ չէր ազդարարել ամերիկյան գործադիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու ԱՄՆ-ում այդ գործընթացի ավարտը:

1990-ական թթ. առաջին կեսին ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերի զգալի մասն ուղղված էր Ադրբեջանի դեմ ԱՄՆ կողմից պատժամիջոցների ընդունմանը, Թուրքիային ամերիկյան զենքի վաճառքի խնդրում սահմանափակումների

---

[9] Şenol kantarcı, Amerika Birleşik Devletleri'nde Ermeniler..., s. 277.

[10] Նույն տեղում, էջ 280:

[11] Նույն տեղում, էջ 282-283:

[12] New York Times, 25. IV. 1990.

[13] Նույն տեղում:

[14] New York Times, 25. IV. 1981.

մտցմանը, ինչպես նաև ԱՄՆ իշխանությունների օժանդակությամբ՝ 1993 թ. ապրիլից փակված հայ-թուրքական սահմանի վերաբացմանը հասնելը: Առաջին հերթին ԱՄՆ հայկական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ «Ազատության աջակցության ակտի» շրջանակներում ընդունվեց 907-րդ ուղղումը, որն արգելում էր ԱՄՆ կողմից Ադրբեջանին պետական օժանդակության տրամադրումը, քանի դեռ վերջինս շարունակում էր Հայաստանի հանդեպ թշնամական գործողությունները և Հայաստանի շրջափակումը[15]:

Բացի այդ, հայկական լոբբիստական կազմակերպությունները գործողություններ էին ձեռնարկում Թուրքիային տրամադրվող ամերիկյան ռազմական օգնությունը սահմանափակելու համար: Նրանք, առաջին հերթին, հունական լոբբիստական կազմակերպությունների հետ միասին քայլեր էին ձեռնարկում «Հումանիտար օգնության միջանցքի» մասին օրենքի նախագծի միջոցով այդ նպատակին հասնելու համար: Օրինագիծը նախատեսում էր դադարեցնել ԱՄՆ ցանկացած տիպի օգնություն որևէ երկիր, որը թույլ չէր տալիս սեփական տարածքով այլ պետությունների համար նախատեսված ամերիկյան հումանիտար օգնություն անցկացնել[16]: 1995 թ. մարտի 23-ին կոնգրեսական Դեյվիդ Բոնիորի կողմից ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում շրջանառության մեջ դրվեց թիվ 47 բանաձևի նախագիծը: Նախագծում ասվում էր, որ հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիայի Հանրապետության նախորդ՝ Օսմանյան Կայսրության կառավարության կողմից 1915-1923 թթ. կազմակերպված ցեղասպանությանը զոհ են գնացել հայ ժողովրդի մեկից մեկուկես միլիոն նախնիներ, ապա Կոնգրեսը միանամ է ամերիկահայ համայնքին՝ հարգելու հայկական ցեղասպանության զոհերի հիշատակը և Միացյալ Նահանգները պետք է խրախուսի Թուրքիայի Հանրապետությանը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ճանաչելու

---

[15] Heather S. Gregg, Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the United States, The Rosemarie Rogers Working Paper Series, 2002, p. 33-34.

[16] Congresswoman Nancy Pelosi, In Support of the Humanitarian Cooridor Act June 5, 1996, http://www.house.gov/pelosi/cooridor.htm.

և հիշատակի արժանացնելու 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ իրականացված դաժանությունները[17]:

Սակայն չնայած ամերիկահայ համայնքի ձեռնարկած ջանքերի, այս բանաձևը չներկայացվեց Ներկայացուցիչների պալատի քննարկմանը: 1996 թ. մայիսի 15-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ Կոնգրեսում անցկացվեցին լսումներ Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման խնդրի շուրջ[18]: 1997 թ. մարտի 21-ին Կոնգրեսական Ջորջ Ռադանովիչը շրջանառության մեջ դրեց Ներկայացուցիչների պալատի թիվ 55 բանաձևի տեքստը, որը հիմնականում կրկնում էր 1995 թ. ներկայացված թիվ 47 բանաձևի ձևակերպումները: Բանաձևն ուղղվեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողով, սակայն այդպես էլ չընդգրկվեց Ներկայացուցիչների պալատի օրակարգում[19]: 1999 թ. նոյեմբերի 18-ին կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչի և համահեղինակներ Դեյվիդ Բոնիորի, Ֆրենկ Փալոնի և Ջեյմս Ռոգանի կողմից Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 398 բանաձևը: Բանաձևը կոչ էր անում ԱՄՆ նախագահին Հայոց ցեղասպանության վերաբերյալ համապատասխան ուսուցում և նյութեր ապահովել Միացյալ Նահանգների մարդու իրավունքների ոլորտի և ընդհանրապես արտաքին քաղաքականության հետ առնչվող ծառայությունների բոլոր պաշտոնյաների, առաջին հերթին պետքարտուղարության բոլոր աշխատակիցների համար: 2000 թ. սեպտեմբերի 14-ին բանաձևը հաստատվեց արտաքին հարաբերությունների հանձնաժողովի արտաքին գործերի և մարդու իրավունքների ենթահանձնաժողովի կողմից, իսկ սեպտեմբերի 21-ին՝ նաև հանձնաժողովի կողմից: Սակայն

---

[17] H.CON.RES.47 - Honoring the memory of the victims of the Armenian Genocide. (Introduced in House - IH), http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c104:H.CON.RES.47

[18] Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Ե., 2001, էջ 13:

[19] H.CON.RES.55 - Honoring the memory of the victims of the Armenian Genocide. (Introduced in House - IH), http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c105:H.CON.RES.55

նախագահ Քլինթոնի ակտիվ միջամտության հետևանքով բանաձևը կրկին չքննարկվեց[20]:

2000 թ. սեպտեմբերի 27-ին կոնգրեսական Ջորջ Ռադանովիչի կողմից շրջանառության մեջ դրվեց Ներկայացուցիչների պալատի թիվ 596 բանաձևի նախագիծը, որը գրեթե կրկնում էր թիվ 398 բանաձևը: Բանաձևից, սակայն, հանվել էր Հայոց ցեղասպանության մասին ուսուցում ապահովելու կետը: Բանաձևը կրճատ անվանվում էր «Բանաձև ցեղասպանության մասին Միացյալ Նահանգների փաստաթղթերի հաստատման մասին»: Բանաձևի նախագծում հստակ փաստեր էին ներկայացվում Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այն կոչ էր անում ԱՄՆ նախագահին Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված ամենամյա ուղերձներում 1.5 միլիոն հայերի սիստեմատիկ կանխամտածված ոչնչացումը բնութագրել որպես ցեղասպանություն[21]: Այս բանաձևը Թուրքիայում մեծ իրարանցում էր առաջացրել: Չնայած թուրքական կողմի բանաձևի քննարկումը կանխելու ուղղությամբ ձեռնարկած բոլոր ջանքերին, 2000 թ. հոկտեմբերի 3-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 24 կողմ, 11 դեմ, 2 ձեռնպահ քվեարկության արդյունքով ընդունեց բանաձևը[22]: Միաժամանակ ԱՄՆ գործադիր իշխանությունը քայլեր էր ձեռնարկել բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ: ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթն այս կապակցությամբ հրապարակված հայտարարության մեջ նշում էր, որ բանաձևի ընդունումը լուրջ հարված կհասցնի տարածաշրջանում ԱՄՆ կենսական շահերին[23]: Նմանատիպ հայտարարությամբ հանդես եկավ նաև Կենտրոնական հետախուզության վարչության տնօրեն Ջորջ

---

[20] H.RES.398 - United States Training on and Commemoration of the Armenian Genocide Resolution (Introduced in House - IH), http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c106:H.RES.398

[21] Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution (Introduced in House - IH), http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c106:H.RES.596

[22] Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը (1991-2007 թթ.),Երևան, 2011, էջ 23:

[23] New York Times, 6. X. 2000.

Թենետը[24]: Ներկայացուցիչների պալատին հատուկ նամակ ուղղեցին նաև ամերիկյան նախկին բարձրաստիճան ութ պաշտոնյաներ, որոնց թվում էին պաշտպանության նախարարներ Ֆրենկ Քարլուչին և Ուիլիամ Փերին, պաշտպանության փոխնախարար Ռիչարդ Փերլը: Նամակի հեղինակները շեշտում էին, որ Թուրքիան ԱՄՆ անփոխարինելի դաշնակիցն է Մերձավոր Արևելքում, Կենտրոնական Ասիայում և Բալկաններում[25]: Հոկտեմբերի 3-ին կայացած քվեարկությունից հետո Թուրքիայի խորհրդարանի հինգ խմբակցություններ հատուկ հայտարարություն հրապարակեցին, որտեղ նշվում էր թուրքական կողմից պատասխան քայլեր ձեռնարկելու հնարավորության մասին, մասնավորապես, թուրք խորհրդարանականներն սպառնում էին արգելափակել ամերիկացիների կողմից Ինջիրլիկ ռազմակայանի օգտագործումը[26]: Այդ օրերին Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեյն Կիվրիկօղլուն չեղյալ էր հայտարարել ԱՄՆ նախատեսված այցելությունը, Թուրքիան վերականգնել էր Իրաքում թուրքական արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը, իսկ Թուրքիայի էներգետիկայի նախարար Ջումկուր Էրսյումերը նույնիսկ հայտարարել էր, որ Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման դեպքում պաշտոնական Անկարան կվերսկսի իրաքյան նավթի տեղափոխումը Թուրքիայի տարածքով[27]: Արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից բանաձևի ընդունումից հետո նույն օրը ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի հետ հեռախոսազրույց ունեցավ Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերը, որը Թուրքիայի դժգոհությունն արտահայտեց բանաձևի ընդունման կապակցությամբ[28]: Թուրքական այս սպառնալիքները որոշակի ազդեցություն ունեցան առաջին հերթին ԱՄՆ գործադիր իշխանության վրա: Հայոց ցեղասպանության բանաձևի քննարկումն ԱՄՆ ներկայացուցիչների

---

[24] Նույն տեղում:

[25] Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 24:

[26] New York Times, 5. X. 2000.

[27] Большинство конгрессменов - за армянскую резолюцию, http://www.ng.ru/cis/2000-10-14/5_resolution.htm

[28] Բարսեղյան Լ., նշվ. աշխ., էջ 44:

պալատում նախատեսված էր 2000 թ. հոկտեմբերի 19-ին: Քննարկումից մեկ օր առաջ ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը հատուկ ուղերձով դիմեց Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին: Նշելով, որ բանաձևի ընդունումը զգալի բացասական հետևանքներ կունենա Մերձավոր Արևելքում ԱՄՆ կենսական շահերի, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված ԱՄՆ ջանքերի վրա՝ Բիլ Քլինթոնը կոչ էր անում Դենիս Հասթերթին օրակարգից հանել բանաձևի քննարկումը[29]: Արդյունքում՝ 2000 թ. հոկտեմբերի 19-ին Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստի օրակարգից հանվեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևի քննարկումը[30]:

Այսպիսով, ԱՄՆ-ի կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերը չընդունվեցին: Չնայած, որ 2001 թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել էին ընդհանուր առմամբ 30 ամերիկյան նահանգներ և այս գործընթացը դեռ շարունակվում է:

Իրականում ԱՄՆ կառավարությունը խուսափում է այս պատմական իրողությանը վերջնական քաղաքական գնահատական տալ: Քանի որ վերջնական դիրքորոշում չցուցաբերելու դեպքում, ԱՄՆ-ում հայերի վերաբերմունքը շահելու, բայց միաժամանակ նաև Թուրքիայի հետ հարաբերությունները չսրելու հաշվին, կպահի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում կարևորագույն խաղաքարտը:

DAVTYAN ARUS
(IOS)

ON THE RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN US-CONGRESS (1970s – 2000)

The possible recognition of the Armenian Genocide by the USA is mainly related to the USA-Turkey bilateral relations. This factor is used by the American government to keep Turkey under pressure for some reason.

---

[29] Նույն տեղում, էջ 63-64:
[30] Բարսեղյան Լ., նշվ. աշխ., էջ 65:

However, by means of regulating its own problems within the scale of most important bilateral issues the official recognition of the Genocide is very often left behind and Washington stands aside from realizing decisive steps. Moreover, White House administration is trying all possible means to prevent the recognition of the Genocide and adopt Resolutions by the USA Congress.

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐՄԻԿ
(ԱԻ)

ԹՈՒՐՔ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2002-2010 ԹԹ.)

Իսլամամետ Արդարություն և զարգացում կուսակցությունը (այսուհետ՝ ԱԶԿ), շարունակելով Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթյուրքի «Խաղաղություն տանը, խաղաղություն աշխարհում» սկզբունքի վրա հիմնված արտաքին քաղաքականությունը, կարևորեց նաև Օսմանյան ժառանգությունը, որի արդյունքում առաջ քաշվեց նեոօսմանիզմի գաղափարախոսությունը՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության վեկտորներից մեկն ուղղելով դեպի Արևելք: Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց Մերձավոր Արևելքի խնդիրներին՝ հակամարտությունների լուծման ընթացքում միջնորդի և «հաշտարարի» դեր ստանձնելով[1]: Այս նոր «առաքելության» շրջանակում Թուրքիան ներգրավվեց նաև Լիբանանի Հանրապետության խնդիրներին՝ փորձելով մեղմել երկրի ներսում տիրող քաղաքական լարվածությունը:

Մեր նպատակն է պարզել, թե արդյո՞ք ուսումնասիրվող շրջանում Լիբանանում մեծացել է Թուրքիայի ազդեցությունը, և թե ի՞նչ ուղղություններով են զարգացել երկու պետությունների հարաբերությունները:

Թուրքիա-Լիբանան հարաբերությունների և Լիբանանի քաղաքական խնդիրների միջև գոյություն ունեն կարևոր զուգահեռներ: Տասնամյակներ շարունակ թուրք-լիբանանյան հարաբերությունների զարգացմանը խոչընդոտել են մի շարք խնդիրներ: Վերլուծաբան Մուհամեդ Նուրեդինը որպես առաջին պատճառ նշում է այն, որ տասնամյակների ընթացքում բազմաթիվ լիբանանցիներ բացասաբար էին տրամադրված թուրքական պետության հանդեպ, քանի որ

---

[1] Geopolitical Diary: Israel, Syria and the Turkish Mediator, Global Intelligence, Stratfor, April 29, 2008.

Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներին վերաբերվում էին որպես երկրորդ կարգի քաղաքացիների[2]: Ոչ պակաս կարևոր են նաև մահմեդականների կրոնական զգացմունքները. Օսմանյան խալիֆայության վերացումը, և 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հիմնադրումը առաջ բերեցին Լիբանանի և տարածաշրջանի մահմեդականների զայրույթը, ովքեր ցանկանում էին, որ Թուրքիան լինի մահմեդական աշխարհի առաջնորդը: Հետևաբար Թուրքիայի վերածումը աշխարհիկ պետության բացասաբար ազդեց Թուրքիայի հանդեպ Լիբանանի մահմեդականների դիրքորոշման վրա[3]: Երրորդ գործոնը, որ սահմանափակում էր Լիբանանի դրական հարաբերությունները Թուրքիայի հետ, վերջինիս կողմից 1949 թ. Իսրայելի ճանաչումն էր[4]: Բացի այս գործոններից, թուրք-լիբանանյան հարաբերությունների զարգացման համար գոյություն ունեին շատ ավելի կարևոր խոչընդոտներ. մինչև վերջին տասնամյակը Լիբանանը բազմաթիվ դրամատիկ տեսարանների ականատես է եղել՝ 30 տարի շարունակ գտնվելով Սիրիայի և Իսրայելի քաղաքական և ռազմական գերակայության տակ, ինչն էլ կառուցվածքային ճգնաժամի պատճառ էր դարձել երկրում:

1982 թ. Իսրայելը ներխուժեց Հարավային Լիբանան և իր ներկայությունը պահպանեց մինչև 2000 թ. զորքերի միակողմանի դուրսբերումը[5]: Սիրիան 1976 թ. ուղղակիորեն միջամտեց Լիբանանում 1975 թ. սկսված քաղաքացիական պատերազմին և իր զորքերն այնտեղ տեղակայեց: Սիրիայի ռազմական ներկայությունն օրինականացվեց 1989 թ. կնքված Տաիֆի համաձայնագրով[6]: Լիբանանը շարունակեց

---

[2] Noureddine M., On the road to better Lebanese-Turkish relations, Today's Zaman, February 26, 2010, http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action;jsessionid=7C6CA4A4E7A3E076396AE01EBE7212B6?newsId=202645

[3] Նույն տեղում:

[4] Relations between Turkey and Israel, http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-israel.en.mfa

[5] Bregman A., Israel's Wars: A History Since 1947, London and New York: Routledge, 2004, p. 145.

[6] Winslow C., Lebanon: War and Politics in a Fragmented Society, London and New York, 1996, p. 264-266.

մնալ Սիրիայի քաղաքական և ռազմական հովանավորության տակ մինչև 2000 թ. կեսերը, և նրա ներկայությունն ավարտվեց 2005 թ. Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո[7]:

Սիրիայի գերիշխանությունը Լիբանանում և 1990-ական թթ. լարված հարաբերությունները Սիրիայի և Թուրքիայի միջև բացասաբար են ազդել թուրք-լիբանանյան հարաբերությունների վրա: Այդ լարված հարաբերությունների հիմնական պատճառը Սիրիայի աջակցությունն էր PKK-ին, որի առաջնորդ Աբդուլլահ Օջալանն ապահով ապաստան ուներ Դամասկոսում, և 1980-1990-ական թթ. PKK-ի ուսումնական ճամբարները գտնվում էին Լիբանանի Բեքաայի հովտում: Մեկ այլ խնդիր էր նաև ջրի վեճը[8]: 1999 թ.-ից թուրք-սիրիական մերձեցումը ուղղակիորեն ազդեց Թուրքիա-Լիբանան հարաբերությունների վրա:

Թուրք-սիրիական հարաբերությունների բարելավումը զգալիորեն մեծացրեց Դամասկոսի վրա Թուրքիայի ունեցած լծակները: Սա շատ կարևոր էր Լիբանանում Թուրքիայի ազդեցության տարածման համար, քանի որ, չնայած Սիրիան իր զորքերը դուրս էր բերել Լիբանանից, այնուամենայնիվ, այն շարունակում էր մնալ ամենակարևոր քաղաքական դերակատարը երկրում:

Պետք է նշել նաև, որ Լիբանանի կրոնական խմբավորումները, որոնք տարաձայնություններ ունեն բազմաթիվ հարցերի շուրջ, միակարծիք են միայն Իսրայելի հանդեպ ունեցած ատելությամբ: Հետևաբար, վերջին տարիներին թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացումը ուղղակիորեն հանգեցրեց Լիբանանում Թուրքիայի վարկանիշի բարձրացմանը:

Բոլոր այս կարևոր գործոններից բացի, Լիբանանի հանդեպ Թուրքիայի մոտեցման փոփոխության հարցում կարևոր է Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալը: ԱԶԿ կառավարման տարիներին բարելավվեցին ոչ միայն թուրք-լիբանանյան հարաբերությունները, այլև Թուրքիան իր հարաբերությունները զգալիորեն կարգավորեց արաբական մյուս երկրների հետ: ԱԶԿ-ի մոտեցումը Լիբանանի հանդեպ հիմնականում

---

[7] Traboulsi F., A History of Modern Lebanon, London, 2007, p. 197.

[8] Kibaroglu A., Kramer A., Scheumann W., Turkey's Water Policy, National Frameworks and International Cooperation, London & New York: Springer, 2011, p. 187.

որոշվում է նեոօսմանիզմի քաղաքականության միջոցով, որը ձգտում է հակամարտությունները լուծել տնտեսական անկախության, տարածաշրջանային ինտեգրման և ակտիվ միջնորդության ճանապարհով: Թուրքիայի ներկայիս արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն Լիբանանի կայունությունը դիտարկում է որպես Թուրքիայի ազգային շահերի գլխավոր առաջնահերթություն. «Լիբանանը նման է փոքր Մերձավոր Արևելքի՝ իր բազմաթիվ համայնքներով՝ քրիստոնեական, շիական, սուննիական, դրուզական և այլն: Հետևաբար՝ Լիբանանի գոյատևումը որպես կայուն, բարեկեցիկ պետություն, տարածաշրջանային խաղաղության արտացոլումն է»[9]: Անկարայի համար մի բան պարզ է. Մերձավոր Արևելքի խնդիրները փոխկապակցված են, ուստի նույնիսկ ամենաչնչին հակամարտությունը Լիբանանում կարող է վերաճել տարածաշրջանային լուրջ հակամարտության: Լիբանանում ցանկացած տեսակի անկայունություն, հատկապես հակամարտության վերաճումը հնարավոր քաղաքացիական պատերազմի, փորձության կենթարկի նաև Իսրայելի հետ Թուրքիայի առանց այն էլ լարված հարաբերությունները:

Լիբանանում քաղաքական անհամաձայնությունները չէին դադարում՝ սկսած Ռ. Հարիրիի սպանությունից, երկրից սիրիական զորքերի դուրսբերումից և այսպես կոչված «Գուչիի հեղափոխությունից» հետո[10]: Սակայն 2006 թ. հուլիսի 12-ին սանձազերծված իսրայելա-լիբանանյան պատերազմը արմատապես փոխեց իրավիճակը[11]: 33 օր տևած պատերազմի ընթացքում Իսրայելի կատարած գործողությունները Թուրքիայում բացասական

---

[9] Dergham R., Interview with Foreign Minister of Turkey, Ahmet Davutoglu, September 28, 2010, http://www.raghidadergham.com

[10] Հեղափոխությունը այս անունը ստացել է «Մարտի 14-ի» քաղաքական ուժերին սատարող ցուցարարների մեծամասնության հագուստի դիզայնի պատճառով:

[11] Պատերազմն ընթանում էր շիական «Հիզբալլահ» կազմակերպության և Իսրայելի միջև, որին Լիբանանի կառավարությունը և բանակը պաշտոնապես չէին մասնակցում: 34 օր տևած պատերազմական գործողություններն ավարտվեցին 2006 թ. օգոստոսի 14-ին, ժամը 14.00-ին: Այս պատերազմի ընթացքում Լիբանանը տվեց 1180, իսկ Իսրայելը՝ 159 զոհ:

ազդեցություն գտան: Թուրք առաջնորդներն ու մեկնաբանները ոչ միայն քննադատեցին Իսրայելի հարձակումները, այլև, ավելի առաջ գնալով, համեմատեցին Իսրայելի գործողությունները Հիտլերի արարքների հետ և նույնիսկ հարցականի տակ դրեցին Հոլոքոսթի փաստը[12]: Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը, հետևելով ԱՄՆ-ի օրինակին, քննադատեց Իսրայելին ոչ թե հարևան երկրի նկատմամբ ռազմական ագրեսիա կազմակերպելու, այլ «Հիզբալլահի» թշնամական գործողություններին անհամաչափ հակահարված հասցնելու համար[13]: Պատերազմից հետո թուրքական կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները մարդասիրական օգնությամբ հանդես եկան[14]: Այս կերպ Թուրքիան կարևոր դեր խաղաց Լիբանանի «վերակառուցման» մեջ, ինչի հետևանքով Լիբանանի ժողովուրդը սկսեց նրան եղբայրաբար ընդունել: Ավելին, թուրքական ռազմական ուժերը, որպես պատմական պատասխանատվություն, միացան ՄԱԿ ԱԽ խաղաղապահ ուժերին[15]: Կարևոր էր նաև Թուրքիայի միջնորդությունը 2008 թ. մայիսի 21-ին Կատարի մայրաքաղաք Դոհայում տեղի ունեցած լիբանանյան «ազգային երկխոսության» ընթացքում, երբ Թուրքիայի նախաձեռնությունները էականորեն նպաստեցին խնդիրների խաղաղ կարգավորմանը, որոնցից էր հատկապես Լիբանանի նախագահի ընտրությունը և միասնական կառավարության ստեղծումը, որով ժամանակավորապես լուծվեց կառավարական և նախագահական ճգնաժամը[16]:

---

12 Սասունյան Հ., Կալիֆոռնիա Կուրիեր, Թուրքիայում հակասեմական արտահայտություններ, «ԱԶԳ» օրաթերթ, սեպտեմբերի 9, 2006:

13 Սաֆրաստյան Ռ., Թուրքիան և Մերձավորարևելյան ճգնաժամի ներկա փուլը, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=838

14 Rebuilding Lebanon together… 100 days after, November 21, 2006, http://www.rebuildlebanon.gov.lb/images_Gallery/Rebuilding%20Lebanon%20Together-4.pdf

15 The Turkish UNIFIL Troops Set off for Lebanon, Turkish Weekly, October 19, 2006, http://www.turkishweekly.net/news/40268/the-turkish-unifil-troops-set-off-for-lebanon.html

16 Հարությունյան Լ., Լիբանանը կայունության և ճգնաժամի միջև, «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (16), 2007թ.:

2009 թ. մարտի 1-ին Հոլանդիայի Լեյշենդամ քաղաքում իր աշխատանքը սկսեց Լիբանանի գծով հատուկ միջազգային տրիբունալը, որի հիմնական խնդիրն էր բացահայտել 2005 թ. փետրվարի 14-ին ահաբեկչության հետևանքով Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը և պատժել մեղավորներին[17]: Ինչպես գիտենք, Ռ. Հարիրիի սպանությունը Լիբանանում խնդրահարույց հարց է դարձել: «Հիզբալլահը» դարձել է գլխավոր թիրախը: Իսրայելը և «Հիզբալլահի» մյուս թշնամիները փորձում են ազդել Լիբանանում գոյություն ունեցող այլ խմբավորումների վրա՝ ընդդեմ «Հիզբալլահի»:

Այս խնդրի հետ կապված՝ կարևոր են Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի, Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդուլլահի, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեջադի այցերը Լիբանան, որոնց հաջորդեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի այցը: Այս այցը ԶԼՄ-ների կողմից շահարկումների պատճառ դարձավ, քանի որ տեղի ունեցավ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեջադի այցից ընդամենը մեկ ամիս անց, ինչը նշանակում է, որ քանի դեռ Իրանը աջակցում է շիաներին, Թուրքիան աջակցելու է սուննիներին: Սակայն վերլուծաբան Օյթուն Օրհանը այս հարցին պատասխանում է այսպես. «Սխալ կլինի համեմատություն անել Էրդողանի և Ահմադինեջադի կատարած այցերի միջև: Թուրքիայի դիրքորոշումը տարբերվում է Սիրիայի, Իրանի և Սաուդյան Արաբիայի դիրքորոշումից. Թուրքիան խնդրի մեջ ընդգրկում է Լիբանանի բոլոր խմբավորումներին»[18]:

Ինչպես նշում է վերլուծաբան Ռամզի Բարուդը, Թուրքիայի վարչապետի՝ Լիբանան կատարած երկօրյա այցի ժամանակը չէր կարող ավելի խելամտորեն ընտրված լինել: Դա մի շրջան էր, երբ Լիբանանի թշնամիները սկսել էին ավելի բարձր թմբկահարել պատերազմի թմբուկները: Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո առաջ եկած բոլոր չարախինդ ծրագրերը մի գլխավոր նպատակ ունեին՝

---

[17] Мохова И., Открытие Специального трибунала по Ливану, http://www.iimes.ru/rus/stat/2009/15-03-09.htm

[18] Demirelli F., Turkey Seeks Stability in Lebanon amid Hariri Probe, Today's Zaman, November 28, 2010, http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&newsId=228129

ապակայունացնել և թուլացնել Լիբանանը, զինաթափել «Հիզբալլահին», և թույլ տալ Իսրայելին վերադառնալ և երկրում առաջացնել քաոս, ինչպես 1982 թ.-ին[19]:

Էրդողանն իր այցի ընթացքում հայտարարեց. «Իսրայելը լի է անորոշություններով, և պարզ չէ, թե այն ինչ կանի: Արդյո՞ք նա կարծում է, թե կարող է մտնել Լիբանան ամենաժամանակակից ինքնաթիռներով, տանկերով և սպանել երեխաներին ու կանանց, ավիրել դպրոցները և հիվանդանոցները, ակնկալելով, որ մենք կլռենք: Մենք չենք լռի, և մենք կաջակցենք արդարությանը բոլոր հնարավոր միջոցներով»[20]:

1982 թ. Իսրայելը գործում էր Լիբանանում բազմաթիվ ընդդիմադիր խմբերի դեմ՝ այդ ընթացքում երկիրը քանդելով և ներմուծելով «ժողովրդավարության» սկզբունքով ընտրված կառավարություն: Սա հետագայում նպաստեց Լիբանանում քաոսի և քաղաքացիական պատերազմի շարունակությանը: 2000 թ., երբ լիբանանյան ուժերը ստիպեցին Իսրայելին դուրս գալ երկրի հարավից, Լիբանանը վերջապես սկսեց վայելել կայունության և ինքնիշխանության հեռանկարներ: Այնուհետև, 2005 թ. փետրվարի 14-ին պայթեցվեց Ռ. Հարիրիի մեքենան: Կայունության հեռանկարը կրկին անհետացավ: Շտապելով բաց չթողնել պահը՝ Իսրայելը 2006 թ. ամռանը հարձակվեց Լիբանանի վրա: Սակայն «Հիզբալլահին» այժմ ավելի ուժեղ էր, քան երբևէ: Իսրայելի ռազմական ձախողման հետևանքով Միրիան սկսեց վերագտնել իր ազդեցությունը տարածաշրջանում: Իրանը ևս անմասն չմնաց: Նախագահ Մահմուդ Ահմադինեջադը Հարավային Լիբանանում հանդես եկավ ելույթով, որում նշում էր. «Աշխարհը պետք է հասկանա, որ սիոնիստները գնալու են»[21]:

Հետևելով այս ամբողջ գործընթացին՝ տեսնում ենք, որ տարածաշրջանի ազդեցիկ երկրների կատարած քայլերը շատ կարևոր

---

[19] Baroud R., Lebanon at Stake: Turkey Must Reveal Its Cards, http://ramzybaroud.net/articles.php?id=93a00d6c633edaa1b46e0ff982d2317d&mode=details&offset=80&browse_category=4772302

[20] Նույն տեղում:

[21] Khoury J., Ahmadinejad Tells Lebanese at Rally Near Israel Border: The Zionists will disappear, http://www.haaretz.com/news/diplomacy-defense/ahmadinejad-tells-lebanese-at-rally-near-israel-border-the-zionists-will-disappear-1.319092

են Լիբանանի՝ առանց այդ էլ լարված քաղաքական կյանքում: Այժմ խաղի մեջ է հայտնվել Թուրքիան: Այստեղ կարող ենք ականջալուր լինել Ռամզի Բարուդի նախազգուշացումներին. «Այժմ Թուրքիան հայտնվել է կադրում: Այն պետք է բացի իր խաղաքարտերից մի քանիսը և հստակ ուղերձ ուղղի, ասելով, որ 2010 թ.-ը 1982 թ. չէ, որ Լիբանանը Իսրայելի և ԱՄՆ-ի մահացու զենքերի փորձարկման վայր չէ[22]»:

Չնայած Ջեմալ Ահմեդօղլուն նշում է. «Թուրքիան փորձում է կամուրջի դեր խաղալ Լիբանանում իշխանամետ և ընդդիմադիր խմբավորումների միջև»[23], մենք պետք է ուշադրություն դարձնենք նաև քաղաքական վերլուծաբան Մահդի Դարիուս Նազեմրոայայի այն խոսքերին, որ Սաուդյան Արաբիան, Լիբանանում Հարիրիի կլանը, և Արաբական աշխարհի բոլոր միապետերն էլ միասնական ֆինանսական և տնտեսական կապեր են կիսում «Նոր Մերձավոր Արևելք» ծրագրի հետ, ուստի նրանք շահագրգռված են խթանելու Մերձավոր Արևելքի համար ԱՄՆ-ի մշակած քաղաքական և տնտեսական ծրագիրը[24]:

Ամփոփելով Թուրքիայի և Լիբանանի հարաբերությունները, կարող ենք փաստել, որ այս հարաբերությունները զարգացել են համագործակցության, իսկ երբեմն էլ՝ հակասությունների հիման վրա: Ինչևէ, 2005 թ.-ից Թուրքիայի և Լիբանանի հարաբերությունները տնտեսության, քաղաքականության և անվտանգության ոլորտում զարգացել են արագ տեմպերով: Լիբանանը դարձել է Թուրքիայի կարևոր առևտրական գործընկերներից մեկը: 2010 թ. դրությամբ առևտրի ծավալը երկու երկրների միջև աճձանագրել է 76 % աճ, ինչն անցնում է 1 մլրդ դոլարի սահմանագիծը[25]: Երկու երկրների միջև

---

[22] Baroud R., Lebanon at Stake: Turkey Must Reveal Its Cards, http://ramzybaroud.net/articles.php?id=93a00d6c633edaa1b46e0ff982d2317d&mode=details&offset=80&browse_category=4772302

[23] Ahmedoglu C., Turkey Begins to Assert its Islamic Identity; http://www.crescent-online.net/main-story/1835-february-2010/2625-turkey-begins-to-assert-its-islamic-identity.html

[24] Nazemroaya M., America's "Divide and Rul" Strategies in the Middle East, Global Research, January 17, 2008.

[25] Republic of Turkey Ministry of Economy, "Turkey- Lebanon Association Agreement", http://www.economy.gov.tr/index.cfm?sayfa=tradeagreements&bolum=fta&country=LB&region=0

փոխադարձաբար վերացվել է մուտքի արտոնագրային ռեժիմը[26]: Թուրքիայի հանդեպ լիբանանյան խմբավորումների դիրքորոշման փոփոխությունն արդյունավետ դեր է խաղացել հարաբերությունների զարգացման մեջ: Այս հարաբերությունների արագ զարգացումը սկսած 2005 թ.-ից արագ արտացոլվել է երկու հասարակությունների մեջ: Այժմ լիբանանյան ժողովրդի մասը Թուրքիային ընկալում է որպես տարածաշրջանի կարևոր ռազմական, տնտեսական և քաղաքական գործոն:

TUMANYAN VARSIK
(IOS)

TURKISH-LEBANESE RELATIONS DURING THE GOVERNANCE YEARS OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY (2002-2010)

For years a number of structural factors prevented the development of Turkey-Lebanon relations. Up to the last decade Lebanon has been under political-military domination of Syria and Israel. The Syrian domination in Lebanon and tense relations between Turkey and Syria in the 1990s affected Turkish-Lebanese relations in a negative way. But the Turkish-Syrian rapprochement after 1999 and the deterioration of Turkish-Israeli relations gradually promoted the rise of Turkey's authority in Lebanon. A structural change in Turkey's approach to Lebanon was the arrival of the Justice and Development Party to power as well. Continuing the foreign policy based on the Kemal Atatürk's "Peace at Home, Peace in the World" principle JDP also valued the heritage of Ottoman Empire. Turkey has been involved in the issues of the Middle East, taking the role of mediator in the resolution of conflicts. Within this new mission it has been actively involved in problems of Republic of Lebanon, trying to ease the political tensions in the country.

---

[26] Noureddine M., On the Road to Better Lebanese-Turkish Relations, http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=on-the-road-to-better-lebanese-turkish-relations-2010-02-26

ԺԱՄՀԱՐՑԱՆ ԱՐՄԵՆ
(ԱԻ)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՂՐԻԲԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ (1989-1995 ԹԹ.)

1980-ական թթ. վերջից մինչև 1990-ական թթ. կեսը ընկած ժամանակահատվածում բավական նպաստավոր նախադրյալներ ստեղծվեցին Թուրքիայի և Մաղրիբի երկրների միջև հարաբերությունները սերտացնելու համար: Պետք է նշել, որ Թուրքիան և Մաղրիբի երկրները նշված ժամանակահատվածում կարողացան սերտացնել փոխհարաբերությունները նաև այն բանի շնորհիվ, որ Թուրքիան ձգտում էր Մաղրիբի յուրաքանչյուր երկրի հետ զարգացնել առանձին քաղաքականություն, որը մեծ չափով կապված չէր լինի Մաղրիբի մյուս երկրների հետ ունեցած հարաբերություններից: Սա որոշակի չափով պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ 1989 թ. Արաբական Մաղրիբի միության ստեղծումից հետո վերջինիս գործառույթների մեջ չէին մտնում երրորդ երկրների հետ հարաբերություններ հաստատելու ու արտաքին քաղաքականություն իրականացնելու գործառույթները[1]: Թուրքիայի համար, որը 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին մեծապես շահագրգռված էր Մաղրիբում իր դիրքերն ամրապնդելու հարցում, սա դրական էր և Մաղրիբում ակտիվ քաղաքականություն իրականացնելու բավական լայն հնարավորություններ էր ընձեռում: Երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին քաղաքականություն զարգացնելը Թուրքիային հնարավորություն էր տալիս Մաղրիբում մեծ քաղաքական կշիռ ունենալու և Մաղրիբի երկրներին ավելի սերտ ինտեգրելու իր տնտեսությանը: Մյուս կողմից պետք է հաշվի առնել, որ Արաբական Մաղրիբի միությունը չդարձավ այնպիսի սերտ ինտեգրված կառույց, ինչպիսին ԵՄ-ն է կամ անգամ ՕԱԵՀԽ-ն, ինչը ևս իր ազդեցությունն

---

[1] Turkey's Relations with the Arab Maghreb Union (AMU), http://www.mfa.gov.tr/amu.en.mfa.

ունեցավ Թուրքիա-Մաղրիբի արաբական երկրներ հարաբերությունների վրա:

Թուրքիա-Մաղրիբի երկրներ հարաբերությունների վրա նաև հսկայական ազդեցություն գործեց այն հանգամանքը, որ Մաղրիբի երկրների միջև մրցակցության հետևանքով կային լուրջ հակասություններ, ինչը ևս մեկ պատճառ էր, որ Թուրքիան նախընտրի յուրաքանչյուր երկրի հետ առանձին քաղաքականություն իրականացնել: Պետք է նաև նշել, որ Մաղրիբում ներքին հակասությունները բավական նպաստում էին Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Թուրքիա-Մաղրիբի երկրներ հարաբերություններում առկա առաջընթացի հիմնական պատճառներն ընկալելու համար պետք է նաև հասկանանք այն գործոնները, որոնք մղում էին Մաղրիբի երկրներին ամրապնդելու Թուրքիայի հետ ունեցած կապերը: Դրանց թվին կարելի է դասել Լիբիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, որոնք ստիպեցին Լիբիային փորձ անել բարելավվելու հարաբերությունները Արևմուտքի և տարածաշրջանային պետությունների հետ: Իրանաիրաքյան պատերազմի ավարտը, Պաղեստինում ինթիֆադայի սկսելը և ԽՍՀՄ-ի անկարողությունը՝ օգնելու նախկին դաշնակիցներին, ստիպեցին Լիբիային՝ սերտացնել հարաբերությունները տարածաշրջանային երկրների հետ: Սակայն 1989 թ. հաջորդած հետագա շուրջ տասը տարիների ընթացքում Լիբիայի քաղաքականության վրա ամենաուժեղ ազդեցությունը գործեց միջազգային հանրության արձագանքը՝ կապված 1988 թ. դեկտեմբերի 11-ին Լոկերբիի վրա և 1989 թ. սեպտեմբերի 19-ին Նիգերիայի օդային տարածքում երկու ինքնաթիռների պայթյունների հետ, որոնք բազմաթիվ մարդկային կյանքեր խլեցին[2]: Միջազգային հանրությունը, որոշակի փաստերի վրա հենվելով, այս պայթյունների մեջ մեղադրեց Լիբիային, և այս ամենը հանգեցրեց Լիբիայի դեմ Միացյալ ազգերի կազմակերպության կողմից

---

[2] Niblock T., The Foreign Policy of Libya, In "The Foreign policies of Middle East States", Lunne Rienner Publishers, Boulder 2002, p. 229.

1992 թ. ապրիլի 15-ից պատժամիջոցների կիրառմանը[3]: Հենց այս պատժամիջոցներն էին, որ ստիպեցին Լիբիային հետագա շուրջ տասը տարիների ընթացքում փորձելու վերանայել հարաբերությունները Արևմուտքի, ինչպես նաև տարածաշրջանի պետությունների, այս թվում նաև Թուրքիայի հետ: Ուստի վստահաբար կարելի է նշել, որ Թուրգութ Օզալի վարչապետ եղած ժամանակահատվածում և նաև հետագա տարիներին՝ մինչև Էրբաքանի՝ Լիբիա կատարած այցելությունը, Թուրքիա–Լիբիա հարաբերությունների սերտացումը ինչքան Թուրքիայի, այնքան էլ Լիբիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող որոշակի զարգացումների արդյունք էր: Այն, որ Թուրգութ Օզալի օրոք Թուրքիա-Լիբիա հարաբերությունները բավական սերտ են եղել, վկայում են կնքված պայմանագրերը, համագործակցության ոլորտներում նկատվող զարգացումները, ինչպես նաև Լիբիայի պաշտոնական գործիչների՝ նշված ժամանակաշրջանից ավելի ուշ արված հայտարարությունը, որում ասվում է, որ Թուրքիա-Լիբիա հարաբերությունների անկումը սկսվեց Թուրգութ Օզալի նախագահության շրջանից հետո[4]:

Թուրքիայի հետ հարաբերությունները սերտացնելու խնդրում կարևոր պատճառներ ուներ նաև Թունիսը, որը, լինելով Մաղրիբի երկրներից տարածքով առավել փոքր երկիր և չունենալով էներգակիրների պաշարներ, Մաղրիբի երկրներից ամենից ավելի շատ կախվածություն ուներ Թուրքիայից և ամենից առավել էր հակված սերտացնելու հարաբերությունները Թուրքիայի հետ: Այս ամենի հետևանքով է, որ Թուրքիան հենց Թունիսից էր փորձում ստանալ աջակցություն Կիպրոսի հարցում, ինչպես նաև այն, որ երկու պետությունների միջև 1990 թ. մարտին ռազմական համագործակցության պայմանագիր է ստորագրվում: Թուրքիայի՝ Կիպրոսի հարցում Թունիսից աջակցություն ստանալու քաղաքականության մի օրինակ է այն հանգամանքը, որ 1989 թ. Թուրգութ Օզալը Թունիս այցելության ընթացքում խնդրում է ճանաչել

---

[3] Hagger N., The Libyan Revolution: Its Origins and Legacy: A Memoir and Assessment, John Hunt Publishing, Ropley 2009, p. 118-119.

[4] Turkish Parliamentarians Seek Ways to Improve Relations' with Libya, 14 October 2000, "Hürriyet Daily News".

Հյուսիսային Կիպրոսի թյուրքական հանրապետությանը, ինչը, սակայն, մերժվում է[5]: Ե՛վ Թուրքիայի համար առավել կենսական հարցերից Հյուսիսային Կիպոսի հարցում Թունիսից աջակցություն ստանալու փորձերը, և՛ ռազմական համագործակցության պայմանագիր կնքելը ապացուցում են, որ Թուրքիան կարևոր հարցերում Մաղրիբի երկրներից առավել շատ ակնկալում էր ստանալ Թունիսի աջակցությունը: Թուրքիան Կիպրոսի հիմնախնդրում Թունիսից աջակցություն ստանալու իր այս քաղաքականությունը հետագայում էլ շարունակեց:

Թուրքայի հետ հարաբերությունները սերտացնելու համար բավականաչափ կարևոր շարժառիթներ ուներ նաև Մարոկկոն: Արևմտյան Սահարայի հարցի ծագումից ի վեր Մարոկկոյի համար շատ կարևոր էր այս հարցում Թուրքիայի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ Թուրքիան ճանաչում է Մարոկկոյի տարածքային ամբողջականությունը և չի ճանաչում Արևմտյան Սահարայի անկախությունը: Թուրքիայի ԱԳՆ կայքում այս խնդրի վերաբերյալ նշվում է, որ Թուրքիան իրազեկ է առկա դժվարություններին, որոնք կան երկու կողմերին բավարարող լուծմանը հասնելու ճանապարհին, և հույս ունի, որ բոլոր կողմերի համար ընդունելի լուծման հնարավոր է հասնել ՄԱԿ-ի շրջանակներում[6]: Թուրքիայի նման դիրքորոշումը բավական լուրջ պատճառ էր, որպեսզի Մարոկկոն ամեն կերպ ընդառաջի Թուրքիայի՝ հարաբերությունները սերտացնելու ձգտումներին: Ուստի, 1992 թ.՝ ԵՄ-ի ստեղծումից հետո, Մարոկկոյի միջերկրածովյան քաղաքականությունը կենտրոնացավ երեք հիմնական ուղղության վրա: Այս ուղղություններն էին՝ Թուրքիան, ԵՄ-ն և արաբական երկրները[7]: Վստահ կարելի է ասել, որ նշված ժամանակաշրջանում Մարոկկոյի արտաքին քաղաքականության մեջ մարոկկոյաթուրքական հարաբերությունները առանցքային ուղղություններից մեկն էր:

---

[5] Regional Surveys of The World: The Middle East and North Africa 2003, 49th Edition, Europa Publications Limited, London 2002, p. 1061.

[6] Turkey's Political Relations with Morocco, http://eski.mfa.gov.tr/turkey_s-political-relations-with-morocco.en.mfa.

[7] Relations between Turkey and Morocco, http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-morocco.en.mfa.

Ալժիրը նույնպես որոշակի պատճառներ ուներ Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավվելու համար: Կարևոր պատճառներից մեկն այն էր, որ 1990-ական թթ. Ալժիրը նոր զենքի կարիք ուներ, սակայն չէր կարողանում այն ձեռք բերել՝ Արևմուտքի երկրների կողմից իր վրա դրված զենքի էմբարգոյի պատճառով, ուստի Թուրքիային դիտում էր որպես զենքի այլընտրանքային մատակարար[8]:

Սրա հետ միաժամանակ պետք է նշել, որ Ալժիրի ձգտումները՝ ամրապնդելու հարաբերությունները Թուրքիայի հետ, նաև մեծ չափով կապված էին այն հանգամանքի հետ, որ արդեն 1990-ական թթ. սկզբներին Ալժիրը նավթի գների անկման և սկսվող քաղաքացիական պատերազմի և մի շարք այլ պատճառներով կորցրել էր տարածաշրջանում կարևոր երկրի իր դերը և կարող էր դուրս մնալ տարածաշրջանային զարգացումների վրա ազդելուց: Ավելին՝ պարզ դարձավ, որ Ալժիրը միջազգային ասպարեզում նույնիսկ հայտնվել էր որոշակի մեկուսացված կարգավիճակում[9]: Ինչպես և Լիբիայի պարագայում, Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումը Ալժիրին կօգներ բարելավվել ստեղծված իրավիճակը:

Պետք է նաև նկատի ունենալ, որ չնայած Թուրքիան ձգտում էր Մաղրիբի յուրաքանչյուր երկրի հետ առմնձին քաղաքականություն զարգացնել, այնուամենայնիվ, Թուրքիայի և Մաղրիբի երկրների միջև եղած հարաբերությունները նաև բավական մեծ ընդհանրություններ ունեին: Հարաբերություններում առկա այս ընդհանուր գծերը մեծ չափով պայմանավորված էին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ այդ ժամանակ գերիշխող սկզբունքներով: Մասնավորապես՝ Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրգութ Օզալը փորձում էր աշխարհաքաղաքական նոր զարգացումների պայմաններում արդյունավետ գործող արտաքին նոր քաղաքականություն զարգացնել, որը ենթադրում էր, որ Թուրքիան իր պատմական անցյալից ելնելով պետք է վարի ակտիվ և բազմավեկտոր

---

[8] Zoubir Y., Dris-Aït-Hamadouche L., Global Security Watch–The Maghreb: Algeria, Libya, Morocco and Tunisia, Praeger, Santa Barbara, 2013, p. 142.

[9] Welz M., Integrating Africa: Decolonization's Legacies, Sovereignty and the African Union, Global Institution Series: 68, Routledge, New York, 2013, p. 73.

արտաքին քաղաքականություն այն տարածաշրջաններում, որոնք նախկինում մտել են Օսմանյան կայսրության մեջ[10]:

Մյուս կողմից Թուրգութ Օզալը ձգտում էր ընդլայնել համագործակցությունը արաբական երկրների հետ՝ արաբական կապիտալը դեպի Թուրքիա գրավելու համար, և խրախուսում էր Թուրքիայի առևտրային ներգրավվածությունը ամբողջ տարածաշրջանում[11]: Թուրգութ Օզալի օրոք արտաքին տնտեսական հարաբերություններում իրականացված այս ձևափոխությունները ստեղծեցին այն հիմքը, որի վրա հենվելով՝ Թուրքիան հետագայում սկսեց շարունակաբար ընդլայնել իր տնտեսական հարաբերությունները Մերձավոր Արևելքի և Մաղրիբի երկրների հետ: Նաև Օզալի այս քաղաքականության շնորհիվ է, որ Լիբիան ուսումնասիրվող ժամանակաշրջանում արդեն դարձել էր թուրքական շինարարական ընկերությունների ամենամեծ շուկան[12], ինչպես նաև այն, որ Մաղրիբից Թուրքիա էներգակիրների մուտքը զգալիորեն ավելացավ:

Թուրգութ Օզալի այս քաղաքականությունը նաև դրական ազդեց Թուրքիա-Մաղրիբի երկրներ հարաբերությունների այլ ոլորտների վրա ևս: Այդ մասին են վկայում նրա օրոք Թուրքիայի և Մաղրիբի երկրների միջև տեղի ունեցած պաշտոնական այցելությունները և երկկողմ պայմանագրերը, տարբեր խնդիրների վերաբերյալ անցկացված բանակցությունները և այլ զարգացումներ: Մասնավորապես, երբ 1989 թ. Թուրգութ Օզալը այցելություն է կատարում Թունիս, Թուրքիայի և Թունիսի միջև կնքվում են նաև մի շարք առևտրային պայմանագրեր[13]: Մեկ այլ պաշտոնական այցելություն է տեղի ունենում 1992 թ. հունվարի 27-ին: Այդ օրը Կադաֆիի զինակիցներից Լիբիայի հեղափոխության ղեկավարման խորհրդի անդամ մայոր Աբդ Ալ-Սալամ Ջալուդը պաշտոնական այց է կատարում Անկարա: Նա

---

[10] Terzi Ö., The Influence of the European Union on Turkish Foreign Policy, Ashgate Publishing Company, Burlington, 2010, p. 30-31.

[11] Larrabee F., Lesser L., Turkish Foreign Policy in an Age of Unsertanity, RAND National Security Research Division, Santa Monica, 2003, p. 128.

[12] Նույն տեղում:

[13] Regional Surveys of The World: The Middle East and North Africa 2003, 49th Edition, ... p. 1061.

Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների հետ բանակցությունների ժամանակ ժխտում է Լիբիայի կապերը Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) հետ: Թուրքիա-Լիբիա հարաբերություններում կարևոր նշանակություն ուներ նաև , այդ ժամանակ պետական նախարար Թանսու Չիլերի այցը Լիբիա 1992 թ. փետրվարի 17-ին: Վերջինիս Լիբիա այցելության հիմնական նպատակներից մեկը Իսլամական զարգացման բանկի կառավարիչների հանդիպմանը մասնակցելն էր: Ժամանման հաջորդ օրը՝ փետրվարի 18-ին, պետական նախարարը հանդիպում է ունենում Կադաֆիի հետ: Այս և այլ բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունները, ձեռք բերված պայմանավորվածությունները, ինչպես նաև կնքված պայմանագրերը ցույց են տալիս, որ Թուրգութ Օզալի վերոհիշյալ քաղաքականությունը, համաձայն որի՝ Թուրքիան պետք է ակտիվացնի իր հարաբերությունները նախկինում Օսմանյան կայսրության կազմի մեջ մտած երկրների հետ, նպաստել է Թուրգութ Օզալի օրոք Թուրքիայի և Մաղրիբի երկրների հարաբերությունների ակտիվ լինելուն: Նաև պետք է նշել, որ Լիբիայի հետ սերտ հարաբերությունները չխանգարեցին Թուրքիային միանալ Լիբիայի դեմ իրականացվող միջազգային պատժամիջոցներին: Իսկ ավելի ստույգ, 1992 թ. ապրիլի 15-ին Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Ֆիլիզ Դինսմենը հայտարարեց, որ Թուրքիան հաստատել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևը՝ միանալով Լիբիայի նկատմամբ կիրառվող օդային էմբարգոյին:

Թուրգութ Օզալի նման քաղաքականության արդյունք էր նաև այն, որ արդեն նրա օրոք իսլամական ուժերի գործողությունները Մաղրիբի երկրներում որոշակի արձագանքի էին արժանանում Թուրքիայի տարբեր շրջանակներում: Մասնավորապես, երբ 1992 թ. հունվարի 11-ին զինվորականների և ազդեցիկ որոշ քաղաքական ուժերի ճնշման տակ Ալժիրի նախագահ Շադլի Բենջադիդը, ով մինչև այդ հասցրել էր լուծարել պառլամետը, ստիպված էր հրաժարական տալ, որից հետո պառլամենտական ընտրությունների երկրորդ փուլը կասեցվեց[14], Թուրքիայում տեղի ունեցավ իսլամիստների շուրջ 600 հոգանոց ցույց, որը բողոքում էր Ալժիրում զինվորականների աջակցությամբ

---

[14] Ланда Р., История Алжира, XX век, ИВ РАН, М., 1999, с. 215.

իշխանության գրավման դեմ[15]: Կարևոր է նաև այն, որ արդեն 1993 թ. ակնհայտ էր, որ Ալժիրում իսլամական ուժերի ակտիվությունը կարող է ակտիվացնել իսլամական շարժումները Թուրքիայում: Մասնավորապես՝ այսպիսի ենթադրությունների համար հիմք էր ընդունվում այն փաստը, որ ինչպես Ալժիրում գործող Իսլամական փրկության ճակատը, Թուրքիայում էլ կային մասսայականություն վայելող իսլամական շարժումներ, որոնք նպատակ ունեին բարեփոխումներ իրականացնել: Ընդ որում՝ այդ բարեփոխումները իրականացնելու համար Թուրքիայի իսլամական շարժումները պատրաստ էին գործելու ինչպես ընդունված քաղաքական չափանիշների սահմաններում, այնպես էլ այդ սահմանները խախտելով[16]: Հատկանշական է, որ հաջորդ տարի՝ 1994 թ., Նեջմեթթին Էրբաքանի հիմնած Բարօրություն իսլամամետ կուսակցությունը հաջողություններ ունեցավ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, իսկ մյուս տարի՝ 1995 թ., խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ՝ ստանալով ձայների մեծամասնությունը: Անկասկած, Թուրքիայում իրադարձությունների այսպիսի ընթացքը հիմնականում ներքին զարգացումների արդյունք էր, սակայն վստահաբար կարելի է ճիշտ համարել այն միտքը, որ իսլամական շարժումների ակտիվացումը Ալժիրում որոշ չափով ազդել է Թուրքիայում նման իսլամական տրամադրությունների արթնացմանը: Կարևոր է նաև նշել, որ այդ ժամանակաշրջանի իսլամական տրամադրությունները տեղաշարժվում էին երկրից երկիր և ազդեցություն էին կրում միմյանցից: Հենց սրա շնորհիվ է, որ երկու կողմերը ունեին գաղափարական նմանություններ, իսկ ավելի ստույգ՝ և՛ Իսլամական դեմոկրատական ճակատը՝ Ալժիրում, և՛ Բարօրություն կուսակցությունը՝ Թուրքիայում «ընդունում էին բազմակարծ

---

[15] Muslim Protesters in Turkey Protest in Support of Algerians, 18 January 1992, "The New Yourk Times".

[16] Miranda R., Islamic Resurgence in Turkey? An Analysis of Political and Social Elements, Thesis, NPS, Monterey, 1993, p. 9.

քաղաքական համակարգը և ընտրական ճանապարհը դեպի իշխանություն»[17]:

Թուրքիան շարունակեց սերտացնել իր հարաբերությունները Մաղրիբի երկրների հետ նաև Օզալից հետո: 1994-1995 թթ. ընթացքում երկու կողմերի միջև հարաբերություններում առավել կարևոր զարգացում կարելի է համարել այն փաստը, որ Լիբիան Արևմուտքի հետ իր հարաբերությունները կարգավորելու համար դիմեց Թուրքիայի միջնորդությանը: Այսպես՝ 1994 թ. հոկտեմբեր 30-ին Կասաբլանկայում սկսած Միջին Արևելքի տնտեսական եռօրյա խորհրդաժողովում Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆին խնդրեց Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերին հետ վերադառնալու ժամանակ այցելություն կատարել Լիբիա: Նոյեմբերի 1-ին Թանսու Չիլերը այցելում է Լիբիա, որի ընթացքում կայացած հանդիպման ժամանակ Կադաֆին խնդրեց նրանից փոխանցել Վաշինգտոնին իր պատրաստակամությունը ընդունելու խաղաղության գործընթացը և միջնորդելու երկու լիբիացիների համար, որոնք մեղադրվում էին ամերիկյան ինքնաթիռը պայթեցնելու մեջ[18]: Լիբիական կառավարությունը նաև խնդրեց հորդորել Միացյալ Նահանգներին՝ վերացնելու տնտեսական պատժամիջոցները և թույլ տալու երկու երկրներին առևտուր կատարել չեզոք երկրների միջոցով[19]: ԱՄՆ-ի հետ

---

[17] Knudsen A., Political Islam in the Middle East, Chr. Michelsen Institute, Bergen, 2003, p. 7.

[18] 1988 թ. Ամերիկյան «Պանամ» ինքնաթիռը Լոկերբիի վրա՝ Շոտլանդիայի երկնքում, պայթում է, ինչի հետևանքով զոհվում է 270 մարդ: Այս պայթյունը ցնցում է ամբողջ աշխարհը՝ առաջացնելով դժգոհություն և բողոքի ուժեղ ալիք: Պայթյունը կազմակերպելու մեջ մեղադրվում էին Լիբիայի ազգային անվտանգության երկու աշխատակիցներ: Երկար բանակցելուց հետո ի վերջո ՄԱԿ-ը 1998 թ. կարողացավ համաձայնության գալ Կադաֆիի հետ, որով վերջինս պարտավորվում էր դատավարության համար անվտանգության աշխատակիցներին հանձնել Նիդեռլանդների շոտլանդական դատարանին, և 1999 թ. երկու աշխատակիցները փոխանցվեցին ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին: Ավելի մանրամասն տե՛ս Pearson E., "Pan Am Flight 103 Bombing" In «The SAGA Encyclopedia of Terrorism», Second Edition, SAGE Publications, Los Angeles, 2011, p. 465-466.

[19] Otman W., Karlberg E., The Libyan Economy: Economic Diversification and International Repositioning, Springer-Verlag, Berlin-Heidelberg, 2007, p. 38.

հարաբերություններում Թուրքիային որպես միջնորդ ընտրելը վկայում է 1989-1995 թթ. Թուրքիա-Լիբիա սերտ հարաբերությունների մասին, ինչպես նաև ցույց է տալիս այն հեղինակությունը, որը այդ ժամանակ Թուրքիան ուներ Լիբիայում՝ մասնավորապես և Արաբական Մաղրիբում՝ ընդհանրապես: Հատկանշական է, որ 1995 թ. Թուրքիայում իսլամիստական կուսակցության հաղթանակը ևս որոշ չափով կապված էր նավթ արդյունահանող այնպիսի երկրների հետ հարաբերությունների սերտացմամբ, որոնցում իսլամը բավական ազդեցիկ դեր ուներ: Այդ երկրներն էին Իրանը, Սաուդյան Արաբիան և Լիբիան[20]: Այս երկրների շարքին կարելի է ավելացնել նաև Ալժիրին, որտեղ իսլամական ուժերը բավական ակտիվ էին և իշխանության էին ձգտում:

Այսպիսով, ակնհայտ է, որ 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. առաջին կեսին Թուրքիան ձգտում էր բավականին ակտիվ քաղաքականություն վարել Մաղրիբի երկրների հետ, ինչի նպատակը այս երկրների հետ հարաբերությունների էլ ավելի սերտացումն էր: Մաղրիբի երկրների հետ Թուրքիայի՝ սերտ հարաբերություններ հաստատելու ջանքերի կարևոր պատճառներից էին նաև տարածաշրջանում առաջնորդ դառնալու, զարգացած և հզոր տնտեսություն ունենալու ձգտումները: Կարևոր է նաև այն, որ Թուրքիան միշտ էլ ձգտել է ամուր կապեր ունենալ իսլամական երկրների հետ, իսկ ԽՍՀՄ-ի անկայուն շրջանում և հետխորհրդային շրջանում, երբ Թուրքիայի համար իր արտաքին քաղաքականությունը վերաձևակերպելու կարիք կար, նրա քաղաքականության այս կողմը էլ ավելի կարևոր դարձավ: Մյուս կողմից, ինչպես արդեն նկատեցինք, ուսումնասիրվող ժամանակահատվածում մի շարք էական հարցերում Մաղրիբի երկրները զգում էին Թուրքիայի աջակցության կարիքը, ինչի պատճառով ընդառաջում էին Մաղրիբում ամրապնդվելու Թուրքիայի ձգտումներին: Կարևոր է նաև ընդգծել որ կողմերի միջև հարաբերություններում առաջընթաց գրանցելուն մեծապես նպաստեց նաև Թուրքիայի ճկուն քաղաքականությունը:

---

[20] Nachmani A., Turkey: Facing a New Millennium: Coping with Intertwined Conflicts, Manchester, 2003, p. 89.

ZHAMHARYAN ARMEN
(IOS)

TURKEY'S RELATIONS WITH THE ARAB MAGHREB COUNTRIES (1989-1995)

Wrapping up Turkey's relations with the Arab Maghreb countries, it is important to note, that in 1989-1995 Turkey has been seeking to lead active and various policy with Arab Maghreb countries, which can be explained by several factors. The efforts to establish close relations with the Arab countries were aimed at becoming a leader in the territory and having a major role in the international arena, as well as Turkey's aspirations to have a strong, developed economy, and in this case, having close relations with Arab Maghreb countries for Turkey was a vital necessity.

The other important factor is, that Turkey has always strived to have strong ties with Islamic countries, and in unstable period of the Soviet Union, and in post-Soviet period, when there was a need for restructuring of foreign policy for Turkey, its policy on this side became even more important.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
(ՀՊՄՀ)

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ
(1878-1908 ԹԹ.)

Սկսած 19-րդ դարի 80-ական թվականներից գերմանական իմպերիալիստները գաղութների համար մղվող մրցապայքարում «արևի տակ տեղ փնտրելով», Մերձավոր Արևելքում ու Թուրքիայում հաստատվելու համար սկսեցին հետաքրքրվել և զբաղվել Հայկական հարցով: Մինչ այդ գերմանական դիվանագիտությունը Օտտո Ֆոն Բիսմարկի գլխավորությամբ ցույց էր տալիս, որ Արևելքի հարցերը իրենց չեն հետաքրքրում: Այդ քաղաքականությունը փոխվեց 1880-ականների կեսերից սկսած և բացահայտ կերպով սկսեց իրականացվել Վիլհելմ 2-րդի կանցլերության տարիներին: Վերջինս բացահայտ քայլեր ձեռնարկեց Մերձավոր Արևելքին տիրելու համար, որտեղ առաջնային նշանակություն տրվեց Օսմանյան Թուրքիայի տնտեսական և ռազմա-քաղաքական ճանապարհով նվաճմանը[1]:

Հայկական հարցում Գերմանիայի ընդգծված բացասական վերաբերմունքը դրսևորվեց դեռևս 1878թ. Բեռլինի կոնգրեսում, որտեղ Հայկական հարցի քննարկմանը դեմ արտահայտվողներից էր Բիսմարկը, ով գտնում էր, որ կոնգրեսում քննարկել Թուրքիայում հայերի ծանր վիճակը դեռևս վաղ է և ավելացնում էր, որ «...երբ հունական հարցը կլուծվի, այդ ժամանակ էլ կգա հարմար պահը անցնելու Հայկական հարցին»[2]:

Բեռլինի կոնգրեսից հետո աստիճանաբար ուժեղանում էր Գերմանիայի ճնշումը Թուրքիայի վրա և «Արևելյան քաղաքականության» իրականացման տեսանկյունից այն կենտրոնական դիրք զբաղեցրեց Գերմանիայի համար: Իսկ Աբդուլ Համիդ 2-րդը ընդառաջ գնալով ապագային միտված թուրք-գերմանական մերձեցման երկկողմանի շահագրգռվածությանը, թեքվեց

---

[1] Бюлов Б., Внешная политика Германии, Одеса, 1915, с. 45.

[2] Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896, с. 110.

դեպի ավստրո-հունգարա-գերմանա-իտալական զինակցության կողմը[3]:

19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայոց ցեղասպանության ընթացքում Կայզերական Գերմանիայի հանցավոր մեղսակցությունը բացահայտելու և վեր հանելու համար պետք է քննության առնել այսպես կոչված «սրբազան պատերազմը», որը ձեռնարկվել էր Օսմանյան կայսրության կողմից կայսրության քրիստոնյա և մասնավորապես հայ ազգաբնակչության նկատմամբ: Այդ պատերազմը մասամբ արտոնված էր նաև գերմանական իշխանությունների կողմից[4]: Արևմտահայությունը խանգարում էր գերմանական ղեկավարներին իրենց Արևելյան քաղաքականությունում արագ արդյունքի հասնելու համար, ուստի այս տեսանկյունից թուրք-գերմանական շահերը մեկ անգամ ևս համընկնում էին: Երբեմն նույնիսկ գերմանական իմպերիալիստները ևս միջոցներ էին ձեռնարկում հայ ժողովրդին սեփական երկրից տարհանելու և ոչնչացնելու համար[5]:

Գերմանական դիվանագիտության և ղեկավարության կարևոր խնդիրներից էր նաև Ռուսական կայսրության դիրքերի թուլացումն ու չեզոքացումն Մերձավոր Արևելքում՝ հատկապես Փոքր Ասիայում: Ուստի նրանք, հայերին դիտելով որպես Փոքր Ասիայում ռուսական ազդեցության տարածողների, գտնում էին, որ հայերով բնակեցրած հայկական տարածքները, մասնավորապես Արևմտյան Հայաստանը Գերմանիայի համար ցանկալի չէ[6]: Դա է վկայում այն փաստը, երբ Վիլհելմ 2-րդը 1895 թ. նոյեմբերին ստանալով Թուրքիայում գերմանական դեսպանի հաղորդագրությունը Էրզրումի վիլայեթում իրականացվող հայկական ջարդերի մասին, իրականացրեց դիվանագիտական խորամանկ քայլ՝ փորձելով տեղեկանալ ռուսական կողմի վերաբերմունքին Թուրքիայում կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Նա այդ մասին հաղորդեց

---

[3] Սիմոնյան Պ., Հայկական հարցը և ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թթ., Ե., 2003, էջ 252:

[4] Marquart J., Die Entstelung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin-Schöneberg, 1919, S. 46.

[5] Marquart J., նշվ.աշխ., էջ 47:

[6] Սիմոնյան Պ., նշվ. աշխ., էջ 256:

ռուսական կողմին և ստացավ սպասված պատասխանը՝ համոզվելով, որ Ցարական կառավարությունը կողմ է թուրքական կողմի վրա ճնշում գործադրելուն[7]: Գերմանական կառավարությունը համիդյան ջարդերի ժամանակաշրջանում արտաքին քաղաքականության մեջ ցույց էր տալիս, որ առաջնորդվում է չմիջամտելու քաղաքականությամբ: Այս քայլով Գերմանիան ցանկանում էր պահպանել Օսմանյան կայսրության նկատմամբ իր քաղաքական և տնտեսական ձեռքբերումները և արևմտահայության նկատմամբ իրականացվող ցեղասպանությունը համարում էր Թուրքիայի ներքին գործը: Այս նկատառումներից ելնելով Վիլհելմ 2-րդը նույնիսկ հրաժարվեց մասնակցել 1894 թ. Սասունում տեղի ունեցած կոտորածների հետևանքները հետաքննող հանձնաժողովի, ինչպես նաև հայկական բարենորոգումների ծրագրի մշակման աշխատանքներին: Դրանով նա ցույց էր տալիս, որ, փաստորեն, հովանավորում և պաշտպանում է սուլթանի արյունալի գործողությունները ու սուլթանին քաջալերում էր անձնական նամակով, որտեղ ոգևորում էր սուլթանին և նշում. «Թագավորիր ինչպես կամքդ ուզում է, չէ որ դու Ալլահի ստվերն ես աշխարհի վրա»[8]:

Գերմանիան հրաժարվեց նաև մասնակցել Մեծ տերությունների կողմից ձեռնարկված Դարդանելի շրջանում տեղակայվող ռազմական օդուժի տեղակայման աշխատանքներին, որը նպատակ ուներ նաև ստիպել սուլթանին դադարեցնել հայ ժողովրդի բնաջնջումը: Այս հարցում գերմանական կողմը իր դիրքորոշումը բացատրում էր նրանով, որ կայզերը սուլթանի հետ ունի բարեկամական և ընկերական հարաբերություններ և չի ցանկանում նոր թշնամի ձեռք բերել: Այդ մասին եվրոպական մեծ տերություններին 1895 թ. նոյեմբերի 15-ին հայտարարեց արտաքին գործերի նախարար Մարշալ ֆոն Բիբերշտայնը[9]: Վիլհելմ 2-րդը, Աբդուլ Համիդ 2-րդի հանդեպ համակված «բարեկամական և եղբայրական» զգացումներով, կտրականապես մերժեց նաև մոր խնդրանքը, որը անձամբ խնդրել էր իրեն Ռուսական կայսրությանը մանդատ շնորհել հայ ժողովրդին

---

[7] Die grosse Politik Europäischen Kabinette 1871-1914, Berlin, 1923, B.10, S. 98.

[8] Амфитеатров А., Армянский вопрос, Армяне, сборник статей, Е., 1991, с. 27.

[9] Die Grosse politik…., B.10, S. 176.

փրկելու տեսանկյունից և հասնել նրան, որ այդ ամենը կատարեն նաև եվրոպական հզոր տերությունները[10]:

Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ նույն կարծիքն ուներ նաև ռայխսկանցլեր Հոհոնլոհենը, որը ևս կարծում էր, որ անիմաստ կլինի հայերի համար լարել հարաբերությունները Թուրքիայի հետ: Ռայխսթագի պատգամավորներին ուղարկած նամակներից մեկում ասում էր. «Անհրաժեշտ է արդյոք վիճել սուլթանի հետ հայկական անկարգությունների պատճառով: Վստահեցնում եմ, որ յուրաքանչյուր պատգամավոր կընդդիմանա այդ որոշմանը»[11]: Գերմանական բարձրաստիճան պաշտոնյաներից Թուրքիայում գերմանական դեսպան ֆոն Զաուրման Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դաժանությունների մասին Բեռլին հեռագրած իր հաղորդագրություններում սկզբում արտահայտում էր իր խղճահարությունը և փորձում սեփական ղեկավարության միջնորդությամբ հնարավորինս նպաստել, որպեսզի Վիլհելմ 2-րդը սուլթանին ճնշի և լուծվի այդ անհասկանալի խաժամուժ իրավիճակը: Նա գտնում էր, որ այդ ամենը կարող է վնասել Գերմանիայի շահերին, քանի որ Մեծ տերությունները կարող են միավորվել ընդդեմ Թուրքիայի և ընդունեն Գերմանիայի համար աննպաստ որոշումներ[12]:

Նույն ձևով Զաուրման գործում էր նաև թուրքական կողմի հետ՝ փորձելով իր խորհուրդներով ազդել սուլթանի վրա և կանխել Օսմանյան պետությունում ստեղծված անկայուն իրավիճակը և հիշեցնում էր սուլթանին, որ «անցանկալի են նման դեպքերը իր կառավարության և հատկապես իր համար», և , որ «այդ ամենը կարող է շուտ գալ սուլթանի դեմ՝ ունենալով անկանխատեսելի հետևանքներ»[13]: Սակայն դեսպանը, հետևելով Վիլհելմ 2-րդի վարած քաղաքականությանը և ստացած ցուցումներին, մինչև հայոց ջարդերի վերջը ակտիվ դիվանագիտական օժանդակություն ցույց տվեց

---

[10] Նույն տեղում, էջ 110:

[11] Hohenloe-Schillingfürst Ch., Denkwürdigkeiten der Reichskanzlerzeit, Stuttgart-Berlin, 1931, S. 264.

[12] Die Grosse politik…., B.12, S. 17-18.

[13] Նույն տեղում, էջ 18:

սուլթանին, հատկապես, որ հարցը վերաբերում էր եվրոպական երկրների հետ ունեցած դիվանագիտական ճնշումների հաղթահարմանը[14]:

Գերմանական կառավարության Հայկական հարցի նկատմամբ «չեզոք» քաղաքականության ակտիվ կողմնակից էր նաև Լոնդոնում գերմանական դեսպան Պ. Հայցֆելդը, որը բացահայտորեն հայտարարում էր, որ «մենք չունենք ոչ մի հիմք և իրավունք խառնվելու Արևելքում ստեղծված իրավիճակին, եթե անգամ այն գնալով թեժանա»[15]: Գնալով ավելանում էին գերմանական ձեռքբերումները Թուրքիայում և տարեցտարի գերմանական կապիտալը Թուրքիայում ավելի էր մեծանում: Երբ Գերմանիան զգալի հաջողությունների հասավ Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարության համար մղվող պայքարում և սուլթանը գերմանական կողմին տրամադրեց Հայդար փաշա-Իզմիր, Իզմիր-Էսկիշահիր-Անկարա և դրանց ճյուղավորումները կազմող երկաթուղագծերը և աստիճանաբար գերմանական «չեզոքությունը» վերածվեց սուլթանական կողմին ակնհայտ աջակցության: Իսկ, առահասարակ, գերմանական արտաքին քաղաքականության բնագավառում ներկայացված չեզոքությունը ամենևին էլ չէր արտահայտվում գերմանա-թուրքական դիվանագիտական հարաբերություններում: Դա է վկայում Արևմտյան Հայաստանում և հայաբնակ վիլայեթներում սուլթանի կողմից կազմակերպած ջարդերի ժամանակ Վիլհելմ 2-րդի կատարած խոստովանությունը սուլթանի անձնական բանագնացին, որ «...թուրքերին ու գերմանացիներին բաժանում է միայն կրոնի տարբերությունը, սակայն նրանց միացնում են ընդհանուր շահերը, բարի հարաբերությունները և պետք է պաշտպանել այդ հարաբերությունները»: Այդ ամենին որպես ապացույց նա սուլթանին էր նվիրում իր ընտանեկան լուսանկարը, որից ոգևորված սուլթանը իր թիկունքում, զգալով բավականաչափ հզոր Գերմանիային, խնդրեց Վիլհելմ 2-րդին օգնել իրեն հաղթահարելու ստեղծված ծանր կացությունը[16]: Իսկ, երբ 1896թ. սեպտեմբերի 19-ին Թուրքիայում

---

[14] Նույն տեղում, էջ 25:

[15] Նույն տեղում, էջ 180-181:

[16] Биржевые ведомости 1897 г., N 257.

գտնվող իր դեսպանից Վիլհելմ 2-րդը ստացավ հաղորդագրություն հայերի վիճակի մասին հայտարարեց, որ վերջիններիս նկատմամբ ճնշման ուժեղացումը հանդիսանում է «սուլթանի սուվերեն իրավունքը»[17]:

Գերմանական ղեկավար շրջանների դրսևորած հակահայկական քաղաքականությունը այս շրջանից սկսած ավելի ուժեղացավ: Արգելվեցին բոլոր հակաթուրքական ելույթները, մամուլը ենթարկվեց խիստ հսկողության, որպեսզի գերմանական հասարակությունը չտեղեկանար հայ ժողովրդի ծանր վիճակի մասին: Իսկ Վիլհելմ 2-րդը, ինչպես միշտ, փորձում էր արտաքին աշխարհին ցույց տալ, որ Գերմանիան նույնիսկ դեմ է Արևմտյան Հայաստանում կատարվածին և դատապարտում է սուլթանի գործողությունները: Սակայն նրա կատարած քայլերը ամենևին էլ չէին համապատասխանում սեփական հայտարարություններին, քանի որ Գերմանիային բացի տնտեսական և քաղաքական հեռահար նպատակներից այլ հարցեր չէին հետաքրքրում[18]: Դա է վկայում 1895 թ. Կ.Պոլսում գերմանական դեսպան ֆոն Զաուրմայի զեկուցագիրը ուղարկված Վիլհելմ 2-րդին՝ հայկական կոտորածները վկայակոչող բովանդակությամբ: Կայզերը փաստաթղթի լուսանցքում կատարում է հետևյալ նշումները. «Եվ այս բոլորը քրիստոնյաները և Եվրոպան պետք է հանգիստ դիտարկեն ու սուլթանի հասցեին բարի խոսքեր ասեն»[19]: Իսկ 1896 թ. հուլիսին հայ ժողովրդի ծանր վիճակի մասին նույն Զաուրմայից ստացած հաղորդագրության վերաբերյալ նա թույլ տվեց անել հետևյալ հայտարարությունը. «Եվ քրիստոնյա տերությունները այդ ամենին պետք է հանգիստ նայեն: Ամո՛թ մեզ բոլորիս»[20]: Աստիճանաբար կարծես թե Վիլհելմ 2-րդի ատելությունը սուլթանի նկատմամբ սկսում է աճել և այն իր բարձրակետին է հասնում 1896 թ. օգոստոսի 28-ին, երբ նա ստանում է հաղորդագրություն Կ.Պոլսի արյունալի

---

[17] Die Grosse politik…., B.12, S. 25.

[18] Սիմոնյան Պ., նշվ. աշխ., էջ 257:

[19] Ստեփանյան Ս., Հովհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Ե., 1998, էջ 5:

[20] Die Grosse politik…., B.12, S. 18.

իրադարձությունների մասին և փաստաթղթի լուսանցքում գրում է հետևյալ արտահայտությունը. «Սուլթանը պետք է գահընկեց արվի»[21]:

Նման գրություններն ու արտահայտությունները մնացին թղթի վրա և հայ ժողովրդի ֆիզիկական բանաջնջման դեմ ոչ մի գործնական քայլ չձեռնարկվեց: Ճշմարտությունն այն է, որ խոսքով դատապարտվում էին հայկական կոտորածները, իսկ իրականում այդ գործողություններն իրականացնող կողմը պաշտպանություն էր ստանում իրենց կայզերական կառավարության կողմից[22]: Նույն ժամանակահատվածում Վիլհելմ 2-րդի վարած խորամանկ քաղաքականությունը շարունակում էր նաև ոայխսկանցլեր Հոհենլոհենը, որը նույնպես բացասական էր արտահայտվում արևմտահայության ջարդերի կապակցությամբ, սակայն չարեց ոչ մի գործնական քայլ դրանք կանխելու համար: Ավելին, նրա ձեռնարկած բոլոր քայլեր բխում էին Վիլհելմ 2-րդի և Գերմանիայի արտաքին քաղաքական շահերից[23]:

Սկսած 1890-ական թթ. սկզբներից գերմանիայի ղեկավար շրջանները բնավ էլ մտադիր չէին դատապարտել սուլթանի ցեղասպան գործողությունները: Նույնիսկ որոշ ակտիվ գործիչներ, մասնավորապես Պ. Ռորբախը ընդգծված կերպով նշում էր, որ գերմանական ղեկավարությունը հետևողականորեն օգնում էր սուլթանին հայ ժողովրդի ոչնչացման գործում, փոխարենը ստանալով սուլթանից՝տնտեսական և քաղաքական փոխզիջումներ[24]: Նա նշում էր, որ «...տնտեսական ձեռքբերումները, որոնք մոտ ապագայում մենք կունենանք Արևելքում, ձեռք են բերվել բոլոր ժողովուրդների արյան գնով: Մենք պետք է ազնվորեն խոստովանենք, որ Արևելք ուղարկված յուրաքանչյուր տոննա ապրանքի դիմաց վճարվում է հատկապես մեկ կամ երկու հայի դիակի գնով»[25]: Այնուհետև, անդրադառնալով արևմտահայության շրջանում իրականացվող ցեղասպան

---

[21] Նույն տեղում, էջ 20:

[22] Ստեփանյան Ս., նշվ. աշխ., էջ 5:

[23] Силин А., Экспансия Германии на Ближнем Востоке в конце 19 в., М., 1976, с. 208-209.

[24] Rohrbach P., Weiteres zur Armenienfrage, "Die christliche Welt", 1898, N 52, S. 1239.

[25] Նույն տեղում:

գործողություններին, նա միանգամայն իրավացիորեն նշում է, որ Թուրքիայի նկատմամբ Գերմանիայի ընդգծված բարեկամական վերաբերմունքը հնարավոր դարձրեց իրականացնել նման սարսափելի չափերի կոտորածներ[26]:

Հետևելով Վիլհելմ 2-րդի ցուցումներին՝ դեսպան ֆոն Զաուրման Աբդուլ Համիդ 2-րդի հետ զրույցի ընթացքում վստահեցնում է սուլթանին, որ հայերի «ապստամբությունների» նկատմամբ ճնշման ուժեղացումը միանգամայնորեն հանդիսանում է սուլթանի սուվերեն իրավունքը և արդարացնում էր արևմտահայերի տեղահանությունն ու նրանց հայրենիքը օտարազգի մուսուլմաններով բնակեցնելու թուրքական ծրագրերը[27]: Միաժամանակ դեսպանը հեռագիր ուղարկեց Բեռլին արևմտահայերի ջարդերի մասին բավականաչափ կարևոր տեղեկատվությամբ, որը բացահայտ կերպով ցույց էր տալիս գերմանական ղեկավար շրջանների հակահայկական վերաբերմունքը: Այստեղ Զաուրման նշում էր «...բոլոր նրանք, ովքեր պատկանում են այդ ազգությանը անհապաղ ենթարկվում էին ոչնչացման անկախ այն բանից, թե նրանք որտեղ էին բնակվում: Բոլորն անխնա ոչնչացվում են՝ երեխաներ, ծերեր, կանայք, տղամարդիկ»[28]:

Արևմտահայության ողբերգությունից շատ չանցած Վիլհելմ 2-րդը հայկական կոտորածների ամենաեռուն շրջանի վերջում ճանապարհորդություն կազմակերպեց դեպի Մերձավոր Արևելք: Այս այցի գլխավոր նպատակն էր պահպանել Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի նկատմամբ և վերջինիս հետ քայլեր ձեռնարկել երկուստեք հարաբերությունները ավելի զարգացնելու ուղղությամբ: Նա այցելեց Կ.Պոլիս, երբ դեռ հայկական կոտորածների ու մարդկային արյան հոտը դեռևս զգացվում էր Բոսֆորի ափերին[29]: Այս ժամանակահատվածում կայզերին ուղեկցող քարտուղար Բերնհարդ Բյուլովը Թուրքիա կատարած ուղևորության մանրամասները ներկայացրել է իր հուշերում[30]: Նա Աբդուլ Համիդ 2-րդին իրավացիորեն ներկայացրել է

---

[26] Նույն տեղում:

[27] Die Grosse politik...., B.12, dok. 2904.

[28] Die Grosse politik...., B.12, dok. 2903.

[29] Казибек Ю., Современная Турция, М., 1898, с. 48.

[30] Бюлов Б., Воспоминания, М.-Л., 1935.

որպես հայասպան հրեշի և այդ կապակցությամբ գրել է. «Իմ ծառայության ընթացքում ես ստիպված էի պահպանել գերմանա-թուրքական հարաբերությունների ջերմությունը, որի համար անընդհատ արժանանում էի թուրքական ղեկավարության պարգևներին: Այլևս թուրքական կողմում շքանշան և բարձր պարգև չէր մնացել, որ ինձ չշնորհվեր հանուն իմ կատարած աշխատանքի: Ես ստիպված էի անուշադրության մատնել կատարվածը»[31]: Այս ամենը, փաստորեն, թույլ է տալիս եզրակացնել, որ սուլթանը անում էր ամեն ինչ, որպեսզի Գերմանիան չմիջամտի արևմտահայության ցեղասպանությանը: Իսկ Գերմանիայի համար միանգամայն նպաստավոր իրավիճակ է ստեղծվում իր պետական ծրագրերն իրականացնելու և կենսական նշանակություն ունեցող զիջումները Թուրքիայից կորզելու համար: Հարկ է նշել, որ արևմտահայության կյանքի և հայրենիքի կորուստը բխում էր երկու կողմերի տնտեսական և քաղաքական շահերից: Այդ պատճառով Գերմանիայի թագակիր կայզերը գովերգում էր Աբդուլ Համիդ 2-րդին Կ.Պոլիս կատարած այցելության ժամանակ և իր հուշերում նշում, որ իր տեսակի մեջ Աբդուլ Համիդը արտասովոր կերպով հետաքրքրություն է ներկայացնում և միաժամանակ ամուր անձնավորություն է[32]:

Պաշտպանելով սուլթանի հանցավոր քաղաքականությունը արևմտահայության նկատմամբ՝ կայզերական ղեկավար ներկայացուցիչները գտնում էին, որ սուլթանի հետ բնավ էլ կարիք չկա վիճելու և պայքարելու հանուն ինչ-որ փոքրամասնության կազմակերպած խռովությունների և ապստամբությունների պատճառով: Այս կապակցությամբ իշխան Հոհենլոեն քրոջը գրած նամակում նշում է, որ «չեմ ուզում անգամ խոսել այն մասին, թե ինչ է նշանակում պատերազմ Թուրքիայի հետ, որը մեզ օգնում է Ռուսաստանի, Ֆրանսիայի հետ պայքարում, և Աստված միայն գիտի այդ կոնֆլիկտից ծագող հետևանքների մասին: Իսկ եթե մենք չենք ուզում պատերազմ, ապա ինչի է պետք բարդություն ստեղծել հանուն ինչ-որ ապստամբության: Կոնֆլիկտի դեպքում մեզ այլևս չեն լսի

---

[31] Бюлов Б., նշվ. աշխ., էջ 128-132:

[32] Записки германского кронпринца, М.-Л., 1923, с. 49.

Կ.Պոլսում և մենք կկորցնենք ձեռք բերածը և ունեցած հզոր դիրքը՝ մեծ տերությունների շարքում»[33]:

Արևմտահայերի ջարդարարական քաղաքականությունում Թուրքիային պաշտպանելը ուներ նաև շատ կարևոր մի այլ հանգամանք: Գերմանացի իմպերիալիստները կարևոր նշանակություն էին տալիս Արևմտյան Հայաստանի տարածքին՝ որպես ռազմաստրատեգիական նշանակության հենակետի, որտեղից հետագայում պետք է վճռական հարվածներ հասցնեին Ռուսաստանին և Անգլիային, իսկ նման պայմաններում գերմանական իմպերիալիստները կարծում էին , որ այդ տարածքի վրա պետք է բնակվեին գերմանա-թուրքական ռազմական խմբավորմանը բացառապես հավատարիմ ազգեր և ազգաբնակչություն, որոնք պետք է ամեն կերպ օժանդակեին ռուս-անգլիական ուժերի դեմ գերմանա-թուրքական դաշինքի պայքարին: Գերմանական կողմի այս հրեշավոր քաղաքականությունը ոչ միայն բխում էր Օսմանյան Թուրքիայի շահերից, այլև իրականություն էր դարձնում նրանց կողմից առաջ քաշված արևմտահայության բնաջնջման քաղաքականությունը: Այդ հրեշավոր պլանների իրագործման տեսանկյունից արևմտահայությունը չէր կարող օժանդակել Ռուսաստանի դեմ գերմանա-թուրքական խմբավորման ձեռնարկած պայքարին, այդ պատճառով էլ արևմտահայությունը դարձավ այդ քաղաքականության անմեղ զոհ: Արևմտյան Հայաստանի հայաթափման և նրա տարածքը ռազմական տեսանկյունից օգտագործելու վերաբերյալ ուշագրավ փաստեր և տեղեկություններ է հաղորդում վերոհիշյալ ծրագրի ակտիվ մասնակիցներից Պաուլ Ռորբախը իր «Պատերազմը և գերմանական քաղաքականությունը» գրքում: Այստեղ նա Արևմտյան Հայաստանի կանոր ռազմավարական նշանակություն ունեցող դիրքի մասին գրում է հետևյալը. «Աշխարհագրական դիրքով Հայաստանը իրենից ներկայացնում է գրեթե անհաղթահարելի և հզոր մի ամրոց: Մի կողմից այն սահմանակից է Ռուսաստանին, մյուս կողմից տիրում է բոլոր միջազգային ճանապարհներին, որոնք բնական հարստությունները հասցնում են Փոքր Ասիայի պատերի տակ և կապում են հարուստ

---

[33] Hohenloe Ch., Denkwürdigkeiten des Fürsten zu· Hohenloe-Schillingfürst, Stuttgart-Leipzig, 1907, S. 264.

երկրներն ու ծովերը Եվրոպայի հետ: Իսկ Հայաստանի կորստից հետո Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց: Կարելի է առանց զարմանալու ասել, որ այսօրվա Թուրքիայի համար նեղուցներին տիրելն ու պահպանելը այդքան կարևոր չի, որքան Հայաստանը որպես իր տարածքային ամբողջականության պահմանման գլխավոր գրավական: Վերջինս հանդիսանում է իր թանկ վճարը սեփական գոյության պահպանման համար»[34]: Այնուհետև ավելացնում էր, որ «... ով տիրում է Հայաստանին, անպայման տիրում է նաև Փոքր Ասիայի արևմտյան մասին, ինչպես նաև ողջ Միջագետքին»[35]: Նա նշում էր նաև հատկապես Արևմտյան Հայաստանի աշխարհագրական դիրքի կարևորությունը ռազմական գործողությունների իրականացման համար և կարևորում էր վերջինիս դերը Գերմանիայի նվաճողական ծրագրերի իրականացման ասպարեզում:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի հայաթափումը հեշտացնելու էր ապագայում ռուս-թուրքական սահմանի մոտ պատերազմական գործողություններ վարելը և ուներ կարևոր ռազմավարական նշանակություն:

Գերմանական ղեկավարությունը ևս որոշեց արևմտահայությանը արտաքսել իր սեփական երկրից, որը, փաստորեն, լիովին համապատասխանում էր թուրքական ղեկավարության հրեշավոր պլաններին: Այս պլանը գերմանական կողմի համար ուներ ավելի շատ քաղաքական նշանակություն, քանի որ նրանք ցանկանում էին տեղահանված շրջանները, որոնք հատկապես սահմանակից էին ռուսաց կայսրությանը, բնակեցնել մուսուլմաններով, իսկ «ընդդիմադիր» հայ ազգին քշել հնարավորինս հեռու շրջաններ՝ մասնավորապես Միջագետքի անապատային հատվածները: Գերմանական կողմը նպատակ ուներ Միջագետք քշված հայ ազգաբնակչությանը օգտագործել որպես աշխատույժ՝ հատկապես Բեռլին-Բաղդադ երկաթգծի շինարարության վրա: Այս ամենը, փաստորեն, նպաստելու էր նաև նշված շրջանում Գերմանիայի համար կարևոր գերխնդրի՝ աշխատույժի ձեռքբերման տեսանկյունից:

---

[34] Рорбах П., Война и германская политика, Петроград, 1915, с. 62.

[35] Նույն տեղում:

Գաղտնիք չէ, որ գերմանական կողմը իր գաղութային ծրագրերի իրականացման առաջին իսկ օրավանից առաջնային տեղ ու նշանակություն էր տվել Միջագետքին և նրա հարստություններին տիրելը համարում էր առաջնային քայլ հզոր գաղութատեր երկիր դառնալու համար: Սակայն Միջագետքին տիրելուց հետո այնտեղ զգացվող աշխատուժի պակասը գերմանական ղեկավարությունը որոշել էր լրացնել գլխավորապես տեղահանված արևմտահայերի միջոցով: Վերոհիշյալ ծրագրի եռանդուն կողմնակիցներից Ռորբախը նշում է, որ «Ռուսական Կովկասում կա մոտ 7-8 միլիոն ազգաբնակչություն, որոնք արյունակից և հավատակից են իրենց թուրք եղբայրներին: Եթե Թուրքիային հաջողվի շարժել իր մուսուլման ազգաբնակչությանը դեպի հուսիս և նրանց միջև շփման եզրեր գտնվեն, ապա կձևավորվի անհաղթահարելի մի հանգույց, 14-15 միլիոն մարդ՝ միմյանց հետ կազմված միևնույն ռասսայով և կրոնով, որը իրենից կներկայացներ ահռելի ուժ հակառակորդի դեմ պայքարելու համար: Բայց քանի որ Հայաստանը խանգարում է այդ պլանի իրագործմանը, ապա պետք է պայքարել այնտեղ գտնվող բնիկ հայերի դեմ՝ նրանց վոնդելով իրենց իսկ հայրենիքից: Իսկ Միջագետքը, որտեղով անցնելու է երկաթգծի գլխավոր մասը, հանդիսանում է յուրահատուկ տարածք և տնտեսական կարևոր նշանակություն ունի Գերմանիայի համար, որի կորուստը արդեն պարզ է թե ինչի է հանգեցնելու: Իսկ այդ հարցում Գերմանիային կարող են օժանդակել հայերը, որոնց Արևմտյան Հայաստանից կքշեն դեպի Միջագետք, իսկ նրանց, տեղում թուրքական ուժերը կբնակեցնեն մուսուլմանների, որոնցից շատերը կգաղթեն նաև Ռուսական կայսրության կովկասյան տարածքներից: Այս պլանի հաջող իրագործման դեպքում իրականություն կդառնա Արևմտյան Հայաստանը մի հարվածով խլել Ռուսական կայսրությունից»[36]:

Կայզերական Գերմանիայի հանցավոր քաղաքականությունը առաջացրեց գերմանական հասարակության վրդովմունքն ու դժգոհությունը: Այդ հարցում մեծ դերակատարում ունեցան Վ. Ֆոստերը, հայտնի պատմաբան Տ. Մոմզենը և շատ ուրիշներ, որոնցից, սակայն, հիշատակության է արժանի արևելագետ, Հայկական հարցին լավատեղյակ հոչակավոր լեզվաբան և եգիպտագետ Ռիհարդ

---

[36] Кавказское слово, 15.04. 1916, N 84, с. 3.

Լեփսիուսի որդի դոկտոր Յոհաննես Լեփսիուսը[37]: Նա ճանապարհորգել էր Օսմանյան գրեթե բոլոր վիլայեթներով և անձամբ ծանոթ էր թուրքական մարդասպան քաղաքականության հետևանքով ստշեղծված հայ ժողովրդի ծանր վիճակին: Այդ տպավորությունները նա լույս է ընծայել «Հայաստանը և Եվրոպան. մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» գրքում[38], որը այս ժամանակաշրջանի ուսումնասիրման համար համարվում է անգնահատելի սկզբնաղբյուր: Այն նաև վճռական նշանակություն ունեցավ հասարակության իրազեկման և հայ ժողովրդի բարեկամների մի ստավար զանգված հավաքագրելու հարցում[39]: Հասարակության իրազեկման և իր կողմից ծավալվող հայօգնության աշխատանքների զարգացման համար Լեփսիուսը 1897 թ. սկզբին Բեռլինում հիմնեց նաև «Der Chritliche Orient» (Քրիստոնյա Արևելք) պարբերականը, որտեղ հրատարակվում էին քաղաքական վավերագրեր, ականատեսների տեղեկագրեր 1895-1896 թթ. Կոտորածների վերաբերյալ, հարևան երկրներում ապաստանած հայ փախստականների դրության, հայոց պատմության, եկեղեցու, մշակույթի, Հայկական հարցի և այլնի վերաբերյալ[40]:

Լեփսիուսի նախաձեռնությամբ 1895 թ. սեպտեմբերի 30-ին Ֆրիզդորֆում հիմնադրվեց «Գերմանական առաքելություն Արևելքում» բարեգործական ընկերությունը[41], որի գլխավոր նպատակն էր օգնություն՝ ցուցաբերել և պաշտպանել Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող քրիստոնյաներին ու փրկել նրանց ֆիզիկական բնաջնջումից[42]: Նրա նախաձեռնությամբ Բեռլինում 1896 թ. հուլիսի 2-ին հիմնադրվեց «Հայերի օգնության գերմանական

---

[37] Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Ե., 1982, էջ 92:

[38] Lepsius J., Armenien und Europa. Eine Anklageschrift wieder die christlichen Großmächte und Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896.

[39] Հայրունի Ա., 1890-ական թթ. հայկական կոտորածները գերմանական հասարակական մտքի գնահատմամբ, «Էջմիածին», 2012, հ. Դ, էջ 41:

[40] Նույն տեղում:

[41] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Ե., 2002, էջ 37:

[42] Նույն տեղում:

միությունը», որը ուներ 2 գրասենյակ, 1-ինը՝ Բեռլինում, մյուսը Ֆրանկֆուրտում[43]:

«Հայերի օգնության գերմանական միությունը» իր ուժերով ձեռնարկեց միջոցառումներ, որի նպատակն էր ջարդերից մազապուրծ եղած տվյալ հայերին՝ այդ թվում մեծ թվով երեխաների և ծերերի օգնելու համար[44]: 1896-99 թթ. Իրականացված միջոցառումների շնորհիվ հավաքագրված գումարներով բացվում էին դպրոցներ երեխաների համար: Այս ամենի շնորհիվ շուրջ 2000 որբ հայ երեխաների համար բացվեցին դպրոցներ, որի ծախսերը հոգում էր «Հայերի օգնության գերմանական միությունը»[45]:

Պաշտոնական մամուլը, որը գտնվում էր գերմանական ղեկավարության անմիջական հսկողության տակ, դատապարտեց Լեփսիուսին՝ մեղադրելով նրան այն բանում, որ նա չի գիտակցում թե ինչ է անում և որքան վնաս է հասցնում սեփական երկրի շահերին և կուրորեն հետևում է անգլիական գործակալների ցուցումներին[46]: Իսկ բարձրագույն հոգևորականության առաջնորդները փորձում էին ստիպել Լեփսիուսին հրաժարվել հայերին օգնելու նախաձեռնությունից[47]: Չնայած ձեռնարկած ակտիվ միջոցառումներին, գերմանական հասարակական ուժերն անզոր էին ներազդելու սուլթանի ոճրապարտ քաղաքականության վրա: Այդ քաղաքականությունը հիմք հանդիսացավ նաև հետագայում երիտթուրքերի համար իրենց հրեշավոր քաղաքականության իրականացման համար, քանի որ Գերմանիան իր մերձավորարևելյան քաղաքականությունում հետագա պլանների իրականացման տեսանկյունից դաշնակցեց երիտթուրքերի հետ, որը կործանարար եղավ արևմտահայության համար[48]:

---

[43] Նույն տեղում, էջ 47:

[44] Նույն տեղում, էջ 54-60:

[45] Der grüne Tisch. Sammlung von Aktenstücken über die Gründe seines Austritts aus der Deutschen Orient- Mission, Potsdam, 1920, S. 77-78.

[46] Allgemeine conservative Monatsschrift für das christliche Deutschland, Leipzig, 1896, Juli-Dezember, S. 1027.

[47] Նույն տեղում:

[48] Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 93:

Այսպիսով, Գերմանիայի ղեկավար շրջանները առաջնորդվելով տնտեսական և քաղաքական ձեռքբերումներով, որը նրանց շնորհում էր Աբդուլ Համիդ 2-րդը, ոչինչ չկատարեցին արևմտահայության ոչնչացումը կանխելու համար: Կայզերական ղեկավարությունը ամրապնդելով իր դիրքերը Օսմանյան Թուրքիայում, նույնիսկ մասնակից դարձավ արևմտահայության տեղահանման և ոչնչացման թուրքական հրեշավոր ծրագրին: Գերմանիան իր հետագա հզոր հակառակորդ դիտելով Ցարական Ռուսաստանին, արևմտահայությանը համարում էր ռուսական իշխանության կողմնակից, ուստի ոչ միայն կողմնակից էր արևմտահայերի տեղահանմանը, այլև միջոցներ էր ձեռնարկում այդ ծրագրի իրականացման համար ու ավելի էր հեշտացնում Աբդուլ Համիդ 2-րդի ձեռնարկած միջոցառումներն արևմտահայության բնաջնջման տեսանկյունից:

KHACHATRYAN TIGRAN
(ASPU)

THE POSITION OF GERMANY ABOUT ARMENIAN QUESTION (1878-1809)

Since the 19th century, the 80ies was conducted by the German Empire in colonial policy. The policy was different from the latter eastern policy, where the main problems were the Ottoman Turkish conquest, economic and political achievements. These programm areas and head of the German capitalists were interested and engaged in domestic and foreign affairs and the Ottoman Empire to help him fight against opponents. 1880 imperial Germanys importance to western Armenia started from the beginning was interested in the Armenian issue. Eastern side of western Germany was considered strategically important area, which could contribute to the Anglo-Russian struggle against the forces of the military and served as a stage. Therefore, the initial phase of the West German military figures began to build strongholds and military bases. They are steps of western Armenians trying to locate and expel muslims with the belief the Turks. They should conduce German-Turkish side to struggle against opponents. This is the very

reason that Germany never attempted to prevent an entire nation Hamidian massacres of genocidal actions and implement their own plans for the most effective Western colonial displacement and destruction. Germany preffered economic and political achievements of western life and loss of homeland. And not only contributed to the first round of the western Hamidian massacres of the genocide, also prepared a firm ground Turkish authorities long-standing plans for implementation and the Armenian Genocide.

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ
(ՀՀ ՊԿԱ)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Չկարգավորված հակամարտությունների բանակցային կարգավորումը կառուցվում է մի շարք խնդիրների համակարգային՝ փուլային կամ փաթեթային լուծման առաջարկների քննարկման միջոցով: Հակամարտությունների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ դրանց հիմքում ամենից հաճախ մետրոպոլիայից առանձնացման, բաժանման խնդիր հետապնդող տարածքների, միավորների կամ հանրության հարցն է, որը բանակցային փուլում դրսևորվում է, առաջին հերթին, կարգավիճակի հարցի լուծման տարբերակների դիտարկմամբ: Բանակցային փաթեթներում ինքնորոշման իրավունքի իրացման աստիճանը պայմանավորված է կարգավիճակի կարգավորման ուղիների ընտրությամբ և ժողովրդի կարծիքին տրվող դերով:

«Իրական քաղաքականության» տեսաննկյունից, որքան էլ դա համապատասխանի կամ չհամապատասխանի մարդու իրավունքների կամ մարդասիրական իրավունքի նորմերին, կարգավիճակի հարցն, ըստ էության, դառնում է անկյունքարային խնդիրներից մեկը, որի շուրջ կառուցվում է բանակցային տրամաբանությունը:

Ստորև դիտարկվում են ղարաբաղյան հակամարտությունն ու կարգավորման գործընթացում ԼՂ կարգավիճակի հարցի տրանսֆորմացիան: Հոդվածով նպատակ ենք հետապնդում ուսումնասիրել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միջնորդների կողմից առաջարկված բանակցային փաթեթները, մասնավորապես՝ դրանցում կարգավիճակի հարցի տրանսֆորմացիայի դինամիկան և միտումները: Վերլուծության են ենթարկվել հակամարտության կողմերի միջև 1994 թ. մայիսին կնքված հրադադարից հետո 1997 թ. հուլիսին առաջարկված ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակը, 1997 թ. դեկտեմբերին առաջարկված փուլային տաբերակը, 1998 թ. նոյեմբերին առաջարկված

«Ընդհանուր պետություն» տարբերակը, 2001 թ. ապրիլին Քի-Վեսթում «համաձայնեցված» փաթեթը (որը գաղտնազերծված չէ, սակայն բովանդակությունը մասամբ ներկայացված է բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում), և 2007 թ.-ին Մադրիդում կողմերին առաջարկված սկզբունքները, որոնք ստացել են «Մադրիդյան սկզբունքներ» անվանումը (մի քանի անգամ ենթարկվել են նորացման և ամբողջովին գաղտնազերծված չեն, սակայն գաղտնազերծված վեց կետերը հնարավորություն են տալիս դատողություններ անել ԼՂ կարգավիճակի հարցի լուծման ընթացում ներկայացված մոտեցումների մասին):

Տրանսֆորմացման միտումներն ու պատճառները հասկանալու համար հատուկ ուշադրություն է դարձվել փաթեթների առաջարկման և բանակցման պահին հակամարտության կողմերում ներքաղաքական գործընթացներին և բանակցային տրամաբանության վրա դրանց ազդեցությանը:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին կարգավորման փաթեթներում մոտեցումները տարբերվում են: Փաթեթային և «Ընդհանուր պետություն» տարբերակներում, ինչպես նաև Քի-Վեսթում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կանխորոշվում էր: Փաթեթային տարբերակում նշվում է. «Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում է Ադրբեջանի կազմում, և նրա ինքնորոշումը կներառի ստորև թվարկված իրավունքներն ու առավելությունները, երբ նրանք կձևակերպվեն Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև կնքված համաձայնագրում, հավանության կարժանանան Մինսկի համաժողովի կողմից և կներառվեն Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի սահմանադրություններում»[1]: «Ընդհանուր պետություն» տարբերակում, ինչպես և փաթեթային տարբերակում ԼՂ-ի կարգավիճակը սահմանվում է Ադրբեջանի կազմում՝ սակայն ինքնավարության ավելի լայն աստիճանով. «Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հանրապետության ձևի պետական և տարածքային

---

[1] Տե՛ս ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ), Համաձայնագիր թիվ 2 – կարգավիճակը, 1997 թ. հուլիս:

կազմավորում և Ադրբեջանի հետ միասին կազմավորում է «Ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը կստորագրեն Համաձայնագիր տնօրինման առարկաների և պետական իշխանության համապատասխան մարմինների միջև իրավասությունների փոխադարձ տարանջատման մասին, որը սահմանադրական օրենքի ուժ կունենա»[2]:

Քի-Վեսթի բանակցությունների արդյունքները գաղտնազերծված չեն, դրանց մասին պատկերացում կազմելու համար հղվել ենք 2001 թ. գործող բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք անմիջականորեն ներգրավված են եղել բանակցային գործընթացում: «Այն ժամանակ խոսքը Լեռնային Ղարաբաղը՝ Լաչինի մի հատվածով Հայաստանի սուվերենության տակ դնելու մասին էր: Այսինքն, Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պետք է լինեին մեկ պետություն՝ այսօրվա իմ գնահատմամբ, Ադրբեջանի տեսանկյունից ոչ այնքան համարժեք փոխանակման դիմաց. Ադրբեջանն ընդամենը պետք է իրավունք ստանար ՀՀ տարածքով անխափան կապ հաստատել Նախիջևանի հետ: Սա էր փաստաթղթի ամբողջ առանցքը»,- ասել է ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը[3]: Ինչպես նշվում է Թոմ դե Վալի «Սև այգի» գրքում, բանակցություններին մասնակցող ադրբեջանցի մի պաշտոնյա ասել է, որ «Նա(Ալիևը), ըստ էության, առաջարկեց, որ Ղարաբաղը Հայաստանի մաս դառնա»:

Ի տարբերություն վերոնշյալ փաթեթների՝ Փուլային տարբերակում և Մադրիդյան սկզբունքներում կարգավիճակի հարցը նախատեսվում է լուծել կարգավորման ընթացքում. Փուլային տարբերակի դեպքում՝ երեք կողմերի միջև բանակցությունների, իսկ Մադրիդյան սկզունքներում՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտման միջոցով: Փուլային տարբերակում ասվում է. «Սույն Համաձայնագրի երեք Կողմերը, այսպիսով վերջ դնելով հակամարտության

---

[2] Տե՛ս Լ.Ղ. հարցի կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998 թ.:

[3] Տե՛ս «Քի Վեսթը «շեղում» էր բանակցային գործընթացի տրամաբանությունից», 4 Ապրիլ 2011 (http://www.mediamax.am/am/news/keywest/544/)

պատերազմական կողմին, համաձայն են Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել վարել բանակցություններ ԵԱՀԿ Գործող նախագահի կողմից համապատասխանաբար հրավիրված այլ կողմերի հետ հակամարտության մյուս բոլոր կողմերի անհետաձգելի համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով, ներառյալ քաղաքական կողմը, ինչը ներառում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը և Լաչինի, Շուշիի և Շահումյանի հետ կապված խնդիրների լուծումը, այսպիսի կարգավորումը բանակցությունների ճանապարհով իրականանալուց և վերոհիշյալ Կողմերի կողմից ստորագրվելուց հետո, ենթակա է ճանաչման միջազգային հանրության կողմից հնարավորինս արագ հրավիրվելիք Մինսկի համաժողովի ժամանակ»[4]: Սակայն, Փուլային տարբերակի ամբողջական ուսումնասիրությունը հանգեցնում է եզրակացության. 1) բանակցային այս տարբերակը, ինչպես և ԼՂ կարգավիճակը կանխորոշող մյուս տարբերակները, շրջանցելով ժողովրդավարության հիմքում ընկած սկզբունքները և արժեքները, զրկում է տեղի բնակչությանը հանրաքվեի միջոցով սեփական ճանակատագիրը որոշելու հնարավորությունից, 2) բանակցային այն տրամաբանությունն ու քայլերի հաջորդականությունը, որոնք ենթադրվում են այս տարբերակում, ըստ Էության կարգավիճակի հարցի բանակցման փուլում ԼՂՀ-ին, ինչպես նաև Հայաստանին Ադրբեջանի կողմից այլևս զիջումներ ակնկալելու հնարավորություն չեն տալիս, և գրեթե կանխորոշում են կարգավիճակը հօգուտ Ադրբեջանի:

Մադրիդյան սկզբունքները զերծ են մնում նմանօրինակ իրավիճակից, քանի որ քայլերի հաջորդականությունը կրում է ոչ թե փուլային, այլ ամբողջական բնույթ, և կարգավիճակի որոշումը կախման մեջ է դրվում ոչ թե բանակցող կողմերից յուրաքանչյուրի դիրքերի ամրությունից, այլև ժողովրդի կամարտահայտման արդյունքից: Մադրիդյան սկզբունքները մինչև վերջնական կարգավիճակի սահմանումն ու ճանաչումը Լեռնային Ղարաբաղի

---

[4] Տե՛ս ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 1997 թ. դեկտեմբերի 2:

համար նախատեսում են նաև ժամանակավոր կարգավիճակ: Մադրիդյան սկզբունքներում նախատեսվում է. «Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ; Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով»[5]: Սկզբունքներում ժամանակավոր կարգավիճակի էությունը հստակեցված չէ, սակայն այս հարցի վերաբերյալ միջազգային միջնորդների մոտեցման վերաբերյալ պատկերացում կազմելու հնարավորություն են տալիս նրանց կողմից արված հայտարարությունները: «Նախքան վերջնական խաղաղության ստորագրումը, որը կարող է տեղի ունենալ այս տարածքում հանրաքվեի անցկացումից հետո, գոյություն ունի միջանկյալ կարավիճակի հարցը: Հատուկ կարգավիճակը չպետք է նշանակալից տարբերություն ունենա այն կարգավիճակից, որն այս պահին ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այդ ժամանակ անհրաժեշտ կլինի այդ ժամկանանակավոր կազմավորման միջազգային ճանաչումը: Շրջանակային համաձայնագրի ընդունումից հետո մանրամասների շուրջ բանակցություններ կընթանան»,- նշել է ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկը[6]:

Եթե դիտարկենք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի տրանսֆորմացման դինամիկան, ապա Փաթեթային տարբերակում Լեռնային Ղարաբաղը նախատեսվում էր ներառել Ադրբեջանի կազմում որպես ինքնավար մարզ՝ ինքնավարության բարձր մակարդակով, այդ թվում սեփական Սահմանադրությամբ, ոստիկանությամբ և Ազգային գվարդիայով: Փուլային տարբերակում, ինչպես նշվեց, այս հարցը ենթակա է ապագայում կողմերի միջև համաձայնեցման: «Ընդհանուր պետություն» տարբերակում ամրագրվում է, որ «Լեռնային Ղարաբաղը

---

[5] Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Նախագահ Դ. Ա. Մեդվեդևի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահ Բ. Օբամայի և Ֆրանսիայի Նախագահ Ն. Սարկոզիի համատեղ հայտարարությունը Ղարաբաղյան հակամարտության շուրջ, Լ՛Ակվիլա – 2009 թ. հուլիսի 10:

[6] Տե՛ս Если бы в Нагорном Карабахе появился розовый слон, то стреляли бы и в него: интервью Анджея Каспшика, 07.06.2011 (http://www.regnum.ru/news/1412963.html):

հանդիսանում է Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում և Ադրբեջանի հետ միասին կազմավորում է «Ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում», այս դեպքում ևս փաստաթղթում մանրամասն ներկայացված են պայմանները, այդ թվում՝ սեփական Սահմանադրության առկայությունը, Ազգային գվարդիայի և ոստիկանության կազմավորումը, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև Համատեղ կոմիտեի ձևավորումը և այլն: Այս երեք փաստաթղթերից խիստ տարբերվում է Քի-Վեսթում քննարկված տարբերակը, որում, ըստ տարբեր աղբյուրների, ԼՂ-ն միավորվում էր Հայաստանի հետ: Մադրիդյան սկզբունքները չեն նախատեսում որևէ հարցի, այդ թվում նաև կարգավիճակի խնդրի կարգավորման մանրամասն նկարագրություն, դրանք ամրագրում են ընդհանուր սկզբունքները, այն է Լեռնային Ղարաբաղին ժամանակավոր կարգավիճակի շնորհում, այնուհետև ԼՂ ժողովրդի պարտադիր իրավական ուժ ունեցող կամարտահայտման միջոցով վերջնական կարգավիճակի որոշում:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի տարբեր կարգավիճակների դիտարկումից հետո, չհաշված Քի-Վեսթի քննարկումները, բանակցային գործընթացում կարգավիճակի հարցի լուծման վերաբերյալ մոտեցումը տրանսֆորմացվել է՝ խնդրի լուծումը պայմանավորելով ժողովրդի կամքով, որը պետք է որոշի իր ճակատագիրը: Նշենք, որ կարգավորման Փաթեթային և Փուլային տարբերակները մերժվել են Լեռնային Ղարաբաղի, «Ընդհանուր պետություն» տարբերակը՝ Ադրբեջանի կողմից: Քի-Վեսթում քննարկման թե՛ փաստից, թե՛ արդյունքներից ադրբեջանական կողմը հետագայում հրաժարվել է:

Ղարաբաղյան հակամարտությունը՝ լինելով հակամարտության բոլոր կողմերի համար գերակա խնդիր, իր ազդեցությունն է ունենում նաև ներքաղաքական զարգացումների վրա: Բացի այդ, կողմերից յուրաքանչյուրի ներքաղաքական զարգացումները, իշխանության մոտ գտնվող ուժերի փոփոխություններն ու նրանց դիրքորոշումներն իրենց ազդեցությունն ունեն բանակցային տրամաբանության և ընթացքի վրա: Ստորև կդիտարկենք ղարաբաղյան հակամարտության կարգավորման յուրաքանչյուր փաթեթի քննարկման ժամանակաշրջանում

հակամարտության երեք կողմերի ներքաղաքական իրադարձությունը և հնարավոր կապը բանակցային գործընթացի հետ:

Ինչպես արդեն նշել ենք, 1997 թ. մայիսից հուլիս ամիսներին ԵԱՀԿ ՄԽ համանախագահները մշակեցին և կողմերին առաջարկեցին կարգավորման Փաթեթային տարբերակը:

1996 թ. նախագահական ընտրություններից հետո ՀՀ-ում ներքաղաքական ճգնաժամ սկսվեց, օգտվելով ՀՀ նախագահի լեգիտիմության անկման հանգամանքից: Ճնշումը Հայաստանի նկատմամբ ուժեղացավ, ինչը դրսևորվեց նաև Լիսաբոնի գագաթաժողովի ժամանակ: ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից արվեց հակամարտության կարգավորման սկզբունքների առաջարկ պարունակող հայտարարություն, որի նկատմամբ Հայաստանը ստիպված եղավ վետո կիրառել[7]: Սա դժգոհության նոր ալիք առաջացրեց հանրության շրջանակներում:

1996 թ. նոյեմբերին համաժողովրդական ընտրություններով ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, ով Արցախյան շարժման քաղաքական առաջնորդներից էր և բավական կոշտ դիրքորոշում էր ցուցաբերում կարգավորման գործընթացում: Վերջինս 1997 թ. մարտին նշանակվեց ՀՀ վարչապետ: Նրան փոխարինեց Արկադի Ղուկասյանը:

Ադրբեջանը 1993 թ.-ից ղեկավարում էր Հեյդար Ալիևը: Նրա նախագահության առաջին տարիները բնորոշվում են որպես իշխանության համար նրա և այլ քաղաքական և ռազմական խմբավորումների միջև պայքարի տարիներ[8]: Ալիևը ստանձնեց

---

[7] 1996 թ. դեկտեմբերին Լիսաբոնում ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից առաջարկվեցին հակամարտության կարգավորման երեք սկզբունքներ, որոնք կարևորում էին ՀՀ և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, իսկ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը սահմանում Ադրբեջանի կազմում ինքնավարության բարձր աստիճանով, նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի ու նրա բնակչության երաշխավորված անվտանգություն, այդ թվում՝ բոլոր կողմերի փոխադարձ պարտավորություն՝ կատարելու համաձայնագրի բոլոր կետերը: Հայկական կողմը չկարողանալով կանխել նմանատիպ առաջարկը, ստիպված եղավ կիրառել իր վետոյի իրավունքը:

[8] Huseynov T., Nagorno-Karabakh: A traumatic experience that cripples a nation, Spotlight on Azerbaijan

բանակաշինության գործը և 1993 թ.-ին հանդես էր գալիս բանակի կառուցման կոչով՝ «կորցրած հողերը հետ գրավելու համար»[9]:

Ինչ վերաբերում է 1997-ին միջնորդների կողմից առաջարկված կարգավորման փաթեթային տարբերակին, Ալիևը նշել է, որ փաթեթային տարբերակը լավագույնը չէր իրենց համար, սակայն այն Ադրբեջանի կողմից ընդունվել է տեսնելու համար, թե արդյոք այն կարող է առաջ գնալ, թե՝ ոչ[10]: Փաթեթային տարբերակն ընդունվեց Ադրբեջանի կողմից, Հայաստանը որոշակի դիտողություններ արտահայտեց, սակայն ընդհանուր առմամբ դրական գնահատական տվեց փաթեթային տարբերակին, ԼՂՀ իշխանություններն այս տարբերակը մերժեցին:

1997 թ. սեպտեմբերին առաջարկվեց կարգավորման «Փուլային տարբերակը»:

1997 թ. նոյեմբերին, փուլային տարբերակի առաջարկից հետո, Լևոն Տեր-Պետրոսյանը հանրությանը զիջումների պատրաստելու քաղաքականություն էր վարում, ինչի նպատակով 1997 թ. նոյեմբերի 1-ին հրապարակեց «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը[11]: Հոդվածում ընդգծում է պատերազմի բացառման անհրաժեշտությունը, ստատուս-քվոն երկար ժամանակ պահպանելու անհնարինությունը, փոխզիջման անհրաժեշտությունը: Հոդվածում հատուկ կարևորվում էր միջազգային հանրության դժգոհությունը Հայաստանի դիրքորոշմամբ և նշվում, որ «պետք է իրատես լինել և

Edited by Adam Hug, London, May 2012, p. 53-56.
(http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/Spotlight_on_Azerbaijan_FPC_2012.pdf)

[9] Sti Призидента Азербайджанской Республики Гейдара Алиева на совещаниях в Гяндже и Агджабаде, проведенных в связи с ситуацией, возникшей в прифронтовых районах-12 декабря, 1993 года, (http://library.aliyev-heritage.org/az/4314044.html).

[10] President Heidar Aliyev addresses parliament on Karabakh -23 February, 2001. (http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/President_Heidar_Aliyev_on_Karabakh_23FEB2001_parlimanet.pdf)

[11] Տեր-Պետրոսյան Լ., Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը, «Հայաստանի Հանրապետություն», 1 նոյեմբերի, 1997 թ.: (http://hy.wikisource.org/wiki/)_

հասկանալ, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրությունը», չբացառելով Ղարաբաղի վերադարձի հնարավորությունը կարևորվում էր «այն լիարժեք կործանումից զերծ պահելը»:

Այս մոտեցումն ընդունելի չէր ո՛չ ժողովրդի, ո՛չ մյուս քաղաքական ուժերի համար, և 1998 թ.-ին բարձրաձայնվեց Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի պահանջը: 1998 թ. փետրվարի 3-ին նա հրաժարական տվեց՝ իր ելույթում նշելով, որ «կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, և ով է իրականում ծախում այն: Արտառոց ոչինչ տեղի չի ունեցել. պարզապես Հայաստանում խաղաղության և արժանապատիվ հաշտության կուսակցությունը պարտություն է կրել»[12]: Արտահերթ ընտրությունների արդյունքում իշխանության եկավ ԼՂՀ նախկին նախագահ, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:

1997 թ. սեպտեմբերին անցկացված ԼՂՀ արտահերթ նախագահական ընտրություններում Արկադի Ղուկասյանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրվեց նախագահ, այնուհետև վերընտրվեց այդ պաշտոնում 2002 թ.-ի օգոստոսին:

Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունները, որոնց թվում էին Յենի Մուսավաթն ու Ժողովրդական ճակատը, քննադատության են ենթարկել փուլային տարբերակն այն հիմքով, որ փուլային կարգավորումը «չի պաշտպանում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը» և ավելի քիչ քաղաքական լծակներ է թողնում Ադրբեջանին: Իր հերթին, Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հայտարարել է, որ Ղարաբաղը պետք է չունենա ավելին, քան «մշակութային ինքնավարություն»՝ կողմ արտահայտվելով հարցի ռազմական ուղով լուծմանը: Միաժամանակ, Ադրբեջանի ԱԳ նախարար Հասան Հասանովը գոհունակություն է հայտնել, որ Հայաստանը դրական պատասխան է տվել փուլային կարգավորմանը, և հույս հայտնել, որ համաձայնությունը կարող է ձեռք բերվել նախքան այդ տարվա ավարտը[13]:

---

[12] Տե՛ս ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հայտարարությունը, 03-02-1998: (http://nt.am/am/news/126420/)

[13] Tchilingirian H., Nagorno Karabakh: A Time for Thoughtfulness?, War Report, No. 56, November 1997.

Փուլային տարբերակը ևս մերժվեց ԼՂՀ իշխանությունների կողմից:

1998 թ. նոյեմբերին կոմերին առաջարկվեց կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակը:

1998 թ. փետրվարին կայացած արտահերթ նախագահական ընտրություններից հետո իշխանության եկած Ռոբերտ Քոչարյանի օրոք ՀՀ դիրքորոշումը բանակցային գործընթացում կոշտացավ, Հայաստանը հրաժարվում էր ստորագրել որևէ փաստաթուղթ, որում կնշվեր, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի մաս է[14]:

Ադրբեջանում, իշխանության մոտ էր գտնվում Հեյդար Ալիևը, ով 2001 թ.-ին Միլի Մեջլիսում իր ելույթում անդրադառնալով կարգավորման այս տարբերակին, նշեց. «Ես ասացի, որ նույնիսկ չեմ ցանկանում քննարկել դա: Նրանք շատ ջանք գործադրեցին բացատրելու համար: Ես ասացի, որ չեմ ուզում քննարկել դա: Դուք մեզ դնում ենք մի իրավիճակի մեջ, որտեղ Ադրբեջանի տարածքում երկու պետություններ են լինելու՝ Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը, և Ադրբեջանը իրավունքներ չի ունենալու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ... Ես ասացի, դուք կարծում եք, որ մենք այնքան հիմար ենք, որ չե՞նք կարող հասկանալ, թե սա ինչ է»[15]: Այս տարբերակը առաջացրել է նաև ադրբեջանական ընդդիմադիր ուժերի դժգոհությունը, որոնք մեղադրել են Հեյդար Ալիևին՝ նշելով, որ նա ցանկանում է ընդունել ընդհանուր պետության տարբերակը:

«Ընդհանուր պետություն» տարբերակը մերժվեց Ադրբեջանի կողմից: «Ընդհանուր պետություն» տարբերակից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դե-յուրե այլևս չէր մասնակցում բանակցային գործընթացին, հանդիպումները սկսեցին կրել երկկողմ բնույթ՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև: Ռոբերտ Քոչարյանը, ով մինչ այդ զբաղեցրել էր ԼՂՀ նախագահի պաշտոնը, սկսեց ընկալվել որպես միաժամանակ երկու հայկական կողմերի

(http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/Tchilingirian_Hratch_A_Time_for_Thoughtfulness_1997.pdf)

[14] Интервью министра иностранных дел Вардана Осканяна телекомпании "A1+", 12 мая 2001. (http://archive.aravot.am/2001/aravot_rus/May/12/st01.htm)

[15] President Heidar Aliyev addresses parliament on Karabakh - 23 February, 2001. (http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/President_Heidar_Aliyev_on_Karabakh_23FEB2001_parlimanet.pdf)

ներկայացուցիչ, և ԼՂՀ ներկայացվածությունը բանակցային գործընթացում անուղղակի բնույթ ստացավ:

2001 թ.-ին Փարիզում, այնուհետև Քի-Վեսթում կայացան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հանդիպումները:

Փարիզ-Քի-Վեսթ բանակցությունները, և դրանց վերաբերյալ թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական կողմերի հայտարարությունները դժգոհության ալիք բարձրացրեցին Հայաստանում: ՀՀ ԱԺ-ն ևս մեկ անգամ հայտարարեց, որ Ղարաբաղի կարգավիճակը քննարկման ենթակա չէ և մերժեց ցանկացած զիջում:

ԼՂՀ-ն այս փաթեթի վերաբերյալ իներտություն էր ցուցաբերում՝ ընդգրկված չլինելով բանակցություններում և հնարավորություն չունենալով անմիջականորեն ծանոթանալ քննարկման արդյունքներին:

Ադրբեջանի իշխանությունները պատրաստ էին զիջումների, քանի որ ինչպես նշում են վերլուծաբանները, Հեյդար Ալիևը, ում 2003-ին փոխարինելու էր իր որդին, ցանկանում էր անձամբ ստանձնել հակամարտության կարգավորման պատասխանատվությունը՝ այդ բեռը որդուն չփոխանցելու համար:

Բացի այդ, Քի-Վեսթի ձեռք բերված համաձայնությունը զգալի զիջում էր երկու կողմերի համար էլ, և ինչպես նշում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ (1999-2001 թթ.) Քերի Քավանոն. «Փակ դռների ետևում երկու առաջնորդներն եկան այդ եզրակացությանը և պատրաստ էին դիմել քայլերի: Սակայն հրապարակայնորեն նրանք դա ցույց չէին տալիս՝ շարունակելով պնդել, որ իրենց բոլոր պահանջները պետք է կատարվեն: Ադրբեջանում դա կրկնակի դժվար էր, քանի որ Ալիևը խիստ սահմանափակել էր գործընթացին տեղյակ մարդկանց քանակը, և դրա մասին գիտեր մարդկանց շատ նեղ շրջանակ, որում ընդգրկված չէին նույնիսկ նրա հիմնական խորհրդատուներից շատերը: Դա պահանջում էր նույնիսկ ավելի մեծ քաղաքական խիզախություն գործողությունների և որոշում կայացնելու համար, ինչը կհանգեցներ հասարակական հզոր արձագանքի»[16]:

---

[16] Տե՛ս Մեդիամաքս գործակալության բացառիկ հարցազրույցը ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ (1999-2001 թթ.) Քերի Քավանոյի

2003 թ.-ին Հեյդար Ալիևին փոխարինելու եկավ նրա որդին՝ Իլհամ Ալիևը, ով զգալիորեն կոշտացրեց Ադրբեջանի դիրքորոշումը: Նա կտրականապես հերքեց մինչ այդ առաջարկված բանակցային բոլոր փաթեթները՝ հայտարարելով, որ պետք է սկսել զրոյից: Նրա օրոք կտրուկ աճեց ռազմատենչ հռետորաբանությունը և 2003 թ.-ի իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Ալիևը բացահայտ կոչ արեց հասարակական կազմակերպություններին և Ադրբեջանի քաղաքացիներին զերծ մնալ հայերի հետ շփումներից[17]:

2007 թ.-ին բանակցությունների սեղանին դրվեց բանակցային նոր փաթեթ՝ «Մադրիդյան սկզբունքները», որոնց շուրջ բանակցությունները շարունակվում են մինչ օրս: Դրանք կոչված են հետագայում հիմք ծառայելու Խաղաղության շրջանակային համաձայնագրի կնքման համար:

Այսօրվա դրությամբ գաղտնազերծված են Մադրիդյան սկզբունքներից վեցը, դրանք առաջին անգամ բարձրաձայնվել են ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների ղեկավարների կողմից Լ՛Ակվիլլայում (2009 թ. հուլիսի 10)[18]: Կարելի է ենթադրել, որ բանակցությունների արդյունքում կատարված նորացումները, սակայն, գաղտնազերծված վեց կետերին չեն վերաբերում, քանի որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների ղեկավարների կողմից մշտապես հղում է կատարվում դրանց՝ առանց մատնանշելու որևէ փոփոխություն բարձաձայնված սկզբունքներում: Չգաղտնազերծված կետերի մասին թույլ են տալիս պատկերացում կազմել միջնորդների կողմից արված հայտարարությունները, օրինակ՝ 2012 թ. հուլիսին ԵԱՀԿ ՄԽ համանախագահ Իգոր Պոպովի հայտարարությունն այն մասին, որ բանակցությունների որոշակի փուլում Արցախը կմիանա բանակցային

հետո, 4 Ապրիլ 2011:
(http://www.mediamax.am/am/news/keywest/514/#sthash.3Rh9c6fc.dpuf)

17 Юнусов А., Азербайджан в начале XXI века: конфликты и потенциальные угрозы, Баку, 2007, с. 24. (http://www.erevangala500.com/uploads/pdf/1323818879.pdf)

18 Stíu Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009.

գործընթացին[19],ԵԱՀԿ ՄԽ ԱՄՆ նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի հայտարարությունը, որ «Հիմնարար սկզբունքների մաս է կազմում Հայաստանի և Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի միջև առևտրային բոլոր կապերի վերականգնումը»[20]:

Մադրիդյան սկզբունքների համաձայնեցման նպատակով միջնորդների կողմից իրականացվում է ինչպես մաքոքային դիվանագիտություն երեք կողմերի ներգրավմամբ, այնպես էլ ջանքեր են գործադրվում ՀՀ և Ադրբեջանի նախագահների հանդիպումների կազմակերպման ուղղությամբ: Ելնելով ներկայիս բանակցային ձևաչափից ԼՂՀ իշխանությունները բանակցություններում ուղղակիորեն ներգրավված չեն, սակայն ԵԱՀԿ ՄԽ համանախագահների տարածաշրջանային այցերի ընթացքում իրականացվում են հանդիպումներ ԼՂՀ իշխանությունների հետ և նրանց հետ քննարկվում է բանակցությունների ընթացքը:

Ընդհանուր առմամբ, հակամարտության կողմերից յուրաքանչյուրը պարբերաբար վերահաստատում է հակամարտությունը բանակցությունների միջոցով խաղաղ ճանապարհով կարգավորելու պատրաստակամությունը: Սակայն, տարբերվում են կողմերի մոտեցումներն ընթացող բանակցային գործընթացին. Ադրբեջանը պարբերաբար բարձրաձայնում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահների աշխատանքի անարդյունավետությունը, ինչպես նաև հայտարարում Մադրիդյան սկզբունքների համաձայնեցումը շրջանցելով՝ անմիջապես խաղաղության համաձայնագրի շուրջ բանակցելու անհրաժեշտության մասին: Հայաստանն աջակցում է ԵԱՀԿ ՄԽ ջանքերին և պատրաստակամություն հայտնում շարունակել աշխատանքը Մադրիդյան սկզբունքների համաձայնեցման շուրջ, իսկ ԼՂՀ-ն իր մոտեցումներն ու դիրքորոշումը հայտնում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահների՝ Ստեփանակերտ կատարվող այցերի ընթացքում:

---

[19] Տե՛ս Посредники вновь заявляют, что Карабах присоединится к переговорам, 11.07.2012, (http://rus.azatutyun.am/content/article/24642216.html)

[20] Մեթյու Բրայզա. «Մեզ պետք է կառուցողական անորոշություն», 12 Հունիս 2013. http://www.mediamax.am/am/news/interviews/7578/

Ինչպես արդեն նշվել է, բանակցային գործընթացի զարգացումները սերտորեն փոխկապակցված են հակամարտության կողմերում տեղի ունեցող ներքաղաքական, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումների հետ: Ղարաբաղյան հակամարտությունը, լինելով հակամարտության կողմերից յուրաքանչյուրի համար առաջնային կարևորության հարց, չի կարող չարձագանքել ներքաղաքական ընտրական գործընթացներում: ՀՀ-ում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների և 2013 թ. նախագահական ընտրությունների նախընտրական քարոզարշավում ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը բավական մեծ տեղ է հատկացվել, քաղաքական գրեթե բոլոր ուժերն իրենց նախընտրական ծրագրերում և ելույթներում ներկայացրել են հարցի վերաբերյալ իրենց մոտեցումները: Կարող ենք փաստել, որ հարցի լուծման վերաբերյալ ծայրահեղական մոտեցումներ հիմնականում չեն արտահայտվել, իսկ առկայության դեպքում, չեն ստացել ժողովրդի աջակցությունը: 2013 թ. նախագահական ընտրություններում առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներն էլ կողմ են արտահայտվել բանակցային գործընթացի շարունակմանը, միաժամանակ, քննարկման առարկա է եղել ՀՀ-ի կողմից Արցախի ճանաչման հարցը:

ԼՂՀ-ում 2012 թ. կայացած նախագահական ընտրությունների ժամանակ երկու հիմնական թեկնածուների մոտեցումները ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին հիմնականում համընկնում էին. նրանք հանդես են եկել ԼՂՀ-ի՝ բանակցային գործընթացին հավասար կողմի կարգավիճակով մասնակցության օգտին, դեմ են արտահայտվել որևէ տարածքի վերադարձին և անհրաժեշտ են համարել ԼՂՀ անկախության միջազգային ճանաչման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը:

Ադրբեջանում նախընտրական քարոզչության հիմքում ընկած է եղել բանակցային գործընթացի անհաջողության դեպքում ռազմական ուժով հարցի կարգավորման մոտեցումը, եղել են ուժեր, որոնք դեմ են արտահայտվել բանակցային գործընթացը շարունակելուն և պնդել են զենքի կիրառման անհրաժեշտությունը:

Ադրբեջանը մշտապես հանդես է գալիս խիստ ռազմատենչ հռետորաբանությամբ, որը բացասաբար է անդրադառնում բանակցային գործընթացի մթնոլորտի վրա: Իրենց բացասական

հետևանքն են թողնում նաև սահմանային սրացումներն ու հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը:

Բացի այդ, բանակցային գործընթացի և վստահության մթնոլորտի վրա բացասական ազդեցություն է ունենում նաև Ադրբեջանում հակահայկական քարոզչությունն ու հայատյացության սերմանումը, Ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովի 2011 թ. Ադրբեջանի վերաբերյալ զեկույցում[21] հատուկ ուշադրություն է հրավիրվում այս հանգամանքի նկատմամբ:

Այսպիսով, ելնելով թե՛ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի տրամաբանությունից և ընթացքից, թե՛ տարածաշրջանային իրավիճակից ու զարգացումներից՝ կարելի է փաստել, որ բանակցային գործընթացի հաջողությունն ու արդյունավետությունը, այդ թվում նաև՝ կարգավիճակի հարցի լուծման տեսակետից, մեծապես կախված է կողմերի փոխադարձ վստահությունից և հասարակությունների միջև վստահության մթնոլորտի առկայությունից: Վստահության միջոցառումների ներքո պետք է հասկանալ, ինչպես համանախագահների կողմից առաջարկված և հակամարտությունների կողմ երկրների նախագահների համաձայնությանն արժանացած կրակի դադարեցման գծի երկայնքով միջադեպերի հետաքննության մեխանիզմների մշակումը[22], մտավորականության, գիտական և հասարակական շրջանակների ներկայացուցիչների միջև հետագա երկխոսության հաստատման խթանումը[23], այնպես էլ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների կողմից առաջարկվող քաղաքացիական անձանց և

---

[21] Տե՛ս Ecri Report on Azerbaijan, European Commission against racism and intolerance, 31 May 2011. (http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/country-by-country/azerbaijan/AZE-CbC-IV-2011-019-ENG.pdf)

[22] Տե՛ս Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանական Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությունը, 5 մարտի 2011 թ., Սոչի:

[23] Տե՛ս Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությունը, 23 հունվարի 2012 թ., Սոչի:

զինծառայողների կյանքերի պահպանության նպատակով հակամարտության կողմերի առաջնային դիրքերից դիպուկահարների հեռացումը[24]:

Բացի այդ, վստահության մթնոլորտի կառուցմանը կարող են նպաստել ռազմատենչ հռետորաբանության կանխմանն ուղղված գործողությունները, օրինակ՝ հակամարտության բոլոր կողմերում ՋԼՄ-ների և բարձրաստիճան պաշտոնյաների ելույթների մոնիթորինգը: Կարևոր է նաև պատմության դասագրքերում և դպրոցներում ընդհանրապես, այլատյացության սերմանման կանխմանն ուղղված գործողությունների իրականացումը, որտեղ մեծ արդյունավետություն կարող է ունենալ քաղաքացիական հասարակության ներգրավումը: Ընդհանրապես, հասարակությունների միջև վստահության կառուցման և ամրապնդման տեսակետից մեծ կարևորություն ունեն տարբեր խմբերի միջև շփումներն ու ընդհանուր խնդիրների շուրջ համատեղ աշխատանքը, օրինակ՝ հրադադարի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումն ու հարակից ոլորտներում քաղաքացիական վերահսկողության մեծացումը և այլն:

Միայն հասարակության վերաբերմունքի փոփոխության և խաղաղության ձգտման միջոցով հնարավոր կլինի ապահովել արդյունավետությունը բանակցային գործընթացում, որպեսզի 2001 թ. Քի-Վեսթի օրինակով առաջնորդները ստիպված չլինեն հրաժարվել իրենց պայմանավորվածություններից՝ հասարակության կողմից չհասկացված լինելու վախից, և որպեսզի ստիպված չլինեն հասարակությանն այլ կերպ մատուցել բանակցային գործընթացը:

Կարգավիճակի հարցն անկյունաքարային է աշխարհում առկա տարբեր հակամարտություններում, և, ինչպես ցույց է տալիս առանձին օրինակների ուսումնասիրությունը, համաշխարհային ընկալումները նույնպես փոփոխություն են կրում, ուստի հակամարտության կողմերից և նրանց հասարակությունների կամքից է մեծապես կախված հակամարտության կարգավորման արդյունավետությունն ու այս կամ այն հարցի կարգավորման արդյունքը:

---

[24] Տե՛ս Joint Declaration of the Foreign Ministers and Deputy Minister of France, Russia, and the United States on Nagorno-Karabakh, 4 December 2008. (CIO.GAL/184/08).

KARAPETYAN ANNA
(PAA RA)

THE DYNAMICS OF THE NAGORNO-KARABAKH STATUS TRANSFORMATION IN THE PROCESS OF NEGOTIATION

The issue of status is one of the most difficult and at the same time one of the most important problems in the process of conflict resolution. The problem of status is affected both by the internal political moods and processes in the conflicting parties as well as by the dynamics of transformation of international tendencies and perceptions. The Nagorno-Karabakh conflict is not an exception either, in case of which different approaches concerning the settlement of the status have been presented in the negotiations packages suggested by the mediators. The approaches concerning the status underwent certain changes from package to package.

ԿԱՍՑԱՆ ԱՐԱՔՍ
(ԵՊՀ)

ԹՈՒՐՔԻԱՑԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՇՈՒՐՋ (2002-2011 ԹԹ.)

Արդարություն և զարգացում կուսակցությունը (Adalet ve Kalkınma Partisi, այսուհետ՝ ԱԶԿ) ժամանակակից Թուրքիայի քաղաքական կյանքում ամենակարևոր դերակատարություն ունեցող քաղաքական ուժն է: Հիմնադրումից ընդամենը 15 ամիս հետո կուսակցությունը, ստանալով քվեների մեծ մասը, վստահելի հաղթանակ տարավ խորհրդարանական ընտրություններում: Մտնելով Թուրքիայի ազգային մեծ ժողով (այսուհետ՝ ԹԱՄԺ)՝ կուսակցությունը կարճ ժամանակահատվածում կարողացավ իր ձեռքում կենտրոնացնել երկրի բոլոր պետական և իշխանական լծակները: Ստորև կանդրադառնանք այն քաղաքական, տնտեսական, կրոնական գործոններին, որոնք մեծապես խթանեցին երկրի խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակին և նպաստեցին այն բանին, որ ինչպես թուրք, այնպես էլ արևմտյան քաղաքագետների կողմից «իսլամական» բնորոշում ունեցող կուսակցությունն ավելի քան տասը տարի գտնվի քեմալական Թուրքիայի քաղաքական բուրգի գագաթում, ինչն աննախադեպ էր ԱԶԿ-ին նախորդած մյուս քաղաքական կուսակցությունների համար այն ժամանակից ի վեր, ինչ Թուրքիայի Հանրապետությունն անցավ բազմակուսակցական կառավարման համակարգին[1]:

ԱԶԿ-ի մասին խոսելիս չի կարելի չանդրադառնալ Նեջմեթին Էրբաքանին և երկար տարիներ նրա կողմից առաջ քաշված «Ազգային

---

[1] Թուրքիայի Հանրապետությունում բազմակուսակցական համակարգին անցում կատարվեց 1946 թ.: 1950 թ. ընտրություններում հաղթանակ տարավ նորաստեղծ ժողովրդավարական կուսակցությունը, որը, չնայած իր իսլամամետ հայացքներին, կարողացավ 10 տարի իշխել Թուրքիայում: Ժողովրդավարական կուսակցության իշխանությունը երկրում տապալվեց միայն 1960 թվականի մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո:

տեսակետ» հայեցակարգին, որը 1960-1990-ական թվականներին նպաստեց, որպեսզի երկրի քաղաքական կյանքում իսլամը սկսի կիրառվել որպես քաղաքական գործիք[2]: Ըստ Էության ԱԶԿ-ի կուսակցական գաղափարախոսությունն էլ սկիզբ առավ «Ազգային տեսակետ» հայեցակարգից՝ հետագայում հակադրվելով դրան և հանդես գալով որպես ավելի առաջադիմական մտքերի կրող: Գաղափարախոսական նման վերափոխման պատճառն այն էր, որ «Ազգային տեսակետ»-ի գաղափարների հիման վրա ստեղծված մյուս բոլոր կուսակցությունները Թուրքիայի Հանրապետության սահմանադրության հոչակած սկզբունքներին հակասելու հիմնավորմամբ տարբեր տարիներին արգելվեցին և դադարեցրին իրենց գործունեությունը երկրի քաղաքականության մեջ[3]:

ԱԶԿ կանոնադրությունում կուսակցությունը նշվեց որպես կենտրոնամետ քաղաքական ուժ[4], որը որդեգրել է «պահպանողական ժողովրդավարություն[5]» հայեցակարգը: Միաժամանակ ԱԶԿ-ն հայտարարեց «չափավոր իսլամական» գաղափարախոսական քաղաքական ուղղվածություն ունենալու մասին: Սակայն հետագա տարիների ընթացքում կուսակցության իրականացրած գործողություններն ապացուցեցին, որ «չափավոր իսլամական» բնորոշումն այնքան էլ ճիշտ չէր և պարզապես հարմար քողարկում էր երկրի քաղաքական կյանքում իր երկարակեցությունն ապահովելու համար: Պատճառն այն է, որ հանրապետական Թուրքիայի սահմանադրական սկզբունքներից մեկը՝ աշխարհիկությունը,

---

[2] Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Ե, 2008, էջ 40:

[3] Ազգային կարգ կուսակցություն (1970-1971 թթ.), Ազգային փրկություն կուսակցություն (1972-1981 թթ.), Բարօրություն կուսակցություն (1983-1998 թթ.), Առաքինություն կուսակցություն (1997-2001 թթ.). փաստացիորեն Էրբաքանի կողմից ղեկավարվող բոլոր այս կուսակցությունների գործունեությունը դադարեցվում էր Թուրքիայի սահմանադրության սկզունքներին հակասելու հիմնավորմամբ:

[4] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս կուսակցության պաշտոնական կայքում՝ http://www.akparti.org.tr

[5] Doğanay Ü., AKP'nın Demokrası Söylemi Ve Muhafazakarlık: Muhafazakar Demokrasi ve Eleştirel Bir Bakış, Ankara Üniversitesi, SBF Dergisi, 62.1, s. 68.

խստորեն սահմանում է կրոնի տարանջատումը քաղաքականությունից և հետևաբար ցանկացած իսլամիստական կուսակցության գործունեությունն անմիջապես դադարեցվում է:

Կուսակցության հիմնադրումից հետո առաջին՝ 2002 թվականի խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաջողությանը նպաստեցին մի շարք գործոններ, որոնցից կառանձնացնենք 3-ը՝ տնտեսական, կրոնական և քաղաքական:

Թուրքիայի տնտեսությունը 1990-ական թթ. վերջերից սկսած գտնվում էր վայրիվերումների մեջ: 1997-1998 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը բացասաբար էր ազդել երկրի տնտեսության վրա: Արդեն 2000-2001 թվականների ֆինանսա-տնտեսական ճգնաժամի տարիներին Թուրքիայի տնտեսական ոլորտը գտնվում էր օրհասական վիճակում: 2000 թ. Թուրքիայի համար տնտեսական անկման տարի էր[6]: Այս ժամանակահատվածում պետության տնտեսության արտադրողականության ընդհանուր ծավալը պակասել էր 6 տոկոսով, արժեզրկումը 70 տոկոս էր: Մեծացել էր նաև բյուջեի ճեղքվածքը[7]: Բնական է, որ տնտեսական խորը ճգնաժամի պայմաններում մեծ էր բնակչության դժգոհությունը պետական կառավարող շրջանակների նկատմամբ, և հենց այս դժգոհությունը դարձավ այն պատճառներից մեկը, որի արդյունքում խորհրդարանական ընտրություններում Թուրքիայի բնակիչները հրաժարվեցին քվեարկել նախկին կուսակցությունների օգտին՝ փոխարենը նախընտրելով նորաստեղծ ԱԶԿ-ին:

Գալիք ընտրություններում Արդարություն և զարգացում կուսակցության հաղթանակին նպաստող գործոններից մեկն էլ կրոնականն էր: Թեպետ Թուրքիայում սահմանադրորեն արգելվում է կրոնն օգտագործել քաղաքական նպատակներով, սակայն պատմությունը փաստում է, որ երկրի կրոնականացված հասարակության շրջանում կրոնական տարրի ակտիվացումը մեծապես նպաստում է տվյալ քաղաքական ուժի հաջողությանն

---

[6] Merih Celasun, 2001 Krizi, Öncesi ve Sonrası, Makroekonomik ve Mali Bir Değerlendirme, s. 13.

[7] TBMM Plan ve Bütçe Komisyonu, Merkez Bankası Sunuşu, Kasım 2001, http://www.tcmb.gov.tr/yeni/evds/konusma/tur/2001/tbmm/PBKsunu.html

ընտրություններում: Ինչպես տեղի ունեցավ 1950 թ. Ժողովրդավարական կուսակցության (այսուհետ՝ ԺԿ) պարագայում, այնպես էլ ԱՋԿ-ի դեպքում Թուրքիայի կրոնական հասարակությունը չվարանեց իր ձայնը տալ նորաստեղծ կուսակցությանը:

ԱՋԿ-ի հաղթանակին նպաստած մյուս՝ քաղաքական գործոնի մասին խոսելիս պետք է նշել, որ երկրի բնակչությունն արդեն վաղուց կարիք ուներ քաղաքական մտքերի և գաղափարների թարմության, որով ոչ միայն արտաքին քաղաքական ոլորտում Թուրքիան կներկայանար նոր, ավելի հզոր կերպարով, այլ նաև երկրի ներսում լուծման կարիք ունեցող մի շարք հարցեր ի վերջո իրենց հանգուցալուծումը կստանային: Այսինքն, նախորդ տարիներին քաղաքականության մեջ ակտիվ դերակատարություն ունեցող ուժերի նկատմամբ ժողովրդի դժգոհությունը, երկրում խորը արմատներ ունեցող կառուցվածքային ճգնաժամը և քաղաքական վերնախավում առկա խարդավանքները նպաստեցին ԱՋԿ-ի հաջողությանը խորհրդարանական ընտրություններում: Ընտրազանգվածի մեծ մասը, որպես երկիրը քառասային վիճակի հասցրած նախկին իշխանությունների դեմ վրեժի դրսևորում, հրաժարվեց 2002 թ. ընտրություններում քվեարկել հին կուսակցությունների օգտին՝ փոխարենը քվեները տալով ԱՋԿ-ին:

2002 թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին մասնակցած 18 կուսակցություններից ԹԱՄԺ մտան միայն երկուսը՝ նորաստեղծ ԱՋԿ-ն և Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալի հիմնադրած Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (Cumhuriyet Halk Partisi, այսուհետ՝ ՀԺԿ): Մյուս կուսակցությունները չկարողացան հաղթահարել 10%-ի շեմը[8]: Ընդ որում հետաքրքիր է այն փաստը, որ 10%-ի շեմը չհաղթահարեց և ոչ մի կուսակցություն, որը մտնում էր նախկին

---

[8] Թուրքիայում գոյություն ունի աշխարհում ամենաբարձր ընտրական շեմը՝ 10%, որը զրկում է փոքր կուսակցություններին խորհրդարան մտնելու և քաղաքական գործընթացի մեջ ներգրավվելու հնարավորությունից: Դրան գումարվում է նաև խորհրդարանում մանդատների բաշխման դ'Օնտի համակարգը, որը թույլ է տալիս հաղթող կուսակցությանը խորհրդարանում ստանալ առավելագույնը:

կառավարության կառավարող կոալիցիայի կազմի մեջ[9] (Ժողովրդավարական ձախ կուսակցություն (Demokratik Sol Parti), Ազգայնական շարժում կուսակցություն (Milliyetçi Hareket Partisi) և Մայր հայրենիք կուսակցություն (Anavatan Partisi): 550 պատգամավորական մանդատ ունեցող ԹԱՄԺ-ում ԱԶԿ-ն ստացավ 363 մանդատ[10], իսկ ՀԺԿ-ն՝ 178[11]:

2002 թ. նոյեմբերի 3-ի ընտրությունների արդյունքում հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում առաջին անգամ խորհրդարանը թարմացվեց 90%-ով: Բացի այդ 1957 թ.-ից հետո առաջին անգամ Թուրքիայի օրենսդիր ժողովում ներկայացված էին 2 կուսակցություն, այսինքն ձևավորվեց երկկուսակցական պառլամենտ: ԱԶԿ-ին հաջողվեց 1987 թ.-ից հետո առաջին անգամ ստեղծվել միակուսակցական կառավարություն[12]:

Իշխանության գալուց հետո կուսակցությունը ձեռնարկեց տարբեր միջոցառումներ երկրի արտաքին քաղաքականության ոլորտում Թուրքիայի դիրքերի ամրապնդման նպատակով: ԱԶԿ պաշտոնյաները կարողացան բարձրացնել միջազգային հարաբերություններում Թուրքիայի՝ որպես իրավական սուբյեկտի հեղինակությունը: Տարբեր քայլեր ձեռնարկվեցին նաև՝ ուղղված երկրի ներքին կյանքի բարելավմանը: ԱԶԿ-ն փորձեց ոտքի կանգնեցնել Թուրքիայի տապալված տնտեսությունը: Միաժամանակ կուսակցությունը սկսեց նոր ուղիներ փնտրել հատկապես 1980-ական թվականներից Թուրքիայում սրություն ստացած քրդական հարցը մեղմելու, դրա նկատմամբ վերաբերմունքը փոխելու ուղղությամբ: Նախկին իշխանությունների համեմատ քրդական հարցի նկատմամբ կուսակցության վերափոխված դիրքորոշումն ու մոտեցումները զգալի

---

[9] Гурьев А., Партия справедливости и развития Турции: 3 года у власти, http://www.iimes.ru/rus/stat/2005/30-11-05b.htm

[10] 363 մանդատը 4 քվեով պակաս էր սահմանադրության փոփոխության համար անհրաժեշտ 2/3-ից:

[11] Yüksek Seçim Kurulu, 03 Kasım 2002 XXII. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/GenelSecimler.html

[12] Տեր-Սաթնասյան Վ., Թուրքիան ընտրությունների նախաշեմին. «Արդարություն և զարգացում» կուսակցության հերթական «քննաշրջանը», http://armenpress.am/arm/news/653427/

դեր կատարեցին, որպեսզի ինչպես 2002 թ. խորհրդարանական ընտրությունների դեպքում, այնպես էլ արդեն 2007 թ. ընտրություններում երկրի քրդաբնակ նահանգների բնակչությունն իր ձայների գերակշիռ մեծամասնությունը տա ԱԶԿ-ին[13]: Վերոնշյալ գործոնները մեծ խթան հանդիսացան, որպեսզի հաջորդ խորհրդարանական ընտրություններում ևս ԱԶԿ-ն վստահելի հաղթանակ տանի:

2007 թ. հուլիսյան ընտրություններում ԱԶԿ-ն 12%-ով ավելացրեց 2002 թ. ստացած քվեները՝ ստանալով 46,5% վստահության քվե: ԱԶԿ-ն խորհրդարանում ստացավ 341 մանդատ, ընդդիմադիր ՀԺԿ-ն ու Ազգայնական շարժում կուսակցությունը (Milliyetçi Hareket Partisi, այսուհետ՝ ԱՇԿ) ստացան, համապատասխանաբար, 112 և 71 մանդատ, անկախ թեկնածուները՝ 26[14]:

Խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակն աննախադեպ էր, քանի որ 1954 թ. ի վեր իշխանության ղեկին գտնվող ոչ մի կուսակցության չէր հաջողվել նախորդ ընտրության համեմատ ստանալ ավելի շատ քվեները: 2007 թ. ընտրություններում տարած հաղթանակով կուսակցությունը խորհրդարանում կազմեց բացարձակ մեծամասնություն: Սա նշանակում էր, որ առաջիկա տարիներին երկրում տարբեր որոշումներն ընդունվելու էին կուսակցության կամքի համաձայն և ապահովվելու էր ԱԶԿ նախաձեռնած գործողությունների և նախաձեռնությունների շարունակականությունը:

Իշխանության ղեկին գտնվելու հանգամանքն օգտագործելով՝ կուսակցությունը տարբեր տարիներին ընդունած զանազան

---

[13] 2005 թ. Էրդողանը վարչապետ դառնալուց հետո առաջին անգամ այցելում է Դիարբեքիր, որը Թուրքիայում քրդերով բնակեցված ամենախոշոր քաղաքն է և ոչ պաշտոնապես համարվում է քրդերի մայրաքաղաքը: Նա Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին վարչապետն էր, որ այստեղ իր ելույթի ժամանակ ընդունեց, որ երկիրն անցյալում սխալներ է թույլ տվել քրդերի հետ կապված և, ի տարբերություն նախկին առաջնորդների, բարձրաձայնեց երկրում քրդական հարցի գոյության փաստը: Ավելի մանրամասն տե՛ս Erdoğanın Diyarbakır mesajı, Devlet geçmişte, http://www.radikal.com.tr/haber.php?haberno=161333

[14] Yüksek Seçim Kurulu, 22 Temmuz 2007 XXIII. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/GenelSecimler.html

որոշումներով ու կարգադրություններով կարողացավ հասնել նրան, որ Թուրքիայի քաղաքականության մեջ որոշակիորեն թուլանա նախկինում հզոր ուժ համարվող զինվորականության դերն ու նշանակությունը: Նման քայլերով ԱՋԿ-ն նախ և առաջ ցանկանում էր հանրապետական Թուրքիայի աշխարհիկության սկզբունքի պաշտպանը հանդիսացող զինվորականությանը հեռացնել քաղաքականությունից և այդպիսով նաև ապահովագրել իրեն հնարավոր ռազմական միջամտության ճանապարհով քաղաքականությունից հեռացվելու ոչ ցանկալի հեռանկարից: 2002 թ.-ից սկսված զինվորականներ-ԱՋԿ հակամարտությունում, որն իրականում աշխարհիկների պայքարն էր իսլամիստների դեմ, կշեռքի նժարը թեքվեց «չափավոր իսլամամետ» Էրդողանի գլխավորած կուսակցության կողմը:

2011 թ. հունիսի 12-ի ընտրություններում ևս ԱՋԿ-ն հաղթանակ տարավ: ԹԱՄԺ 550 մանդատներից 327-ը բաժին ընկավ ԱՋԿ-ին, 135-ը՝ ՀԺԿ-ին, 53-ը՝ ԱՇԿ-ին, իսկ 35-ը՝ անկախ թեկնածուներին[15]: Չնայած այն հանգամանքին, որ նախորդ ընտրությունների համեմատ ԱՋԿ-ն այս անգամ ևս ավելացրեց իրեն տրված ձայների քանակը 3,17%-ով, սակայն նրա խորհրդարանական մանդատների թիվը նվազեց 14-ով: Սա պայմանավորված էր այն իրողությամբ, թե տվյալ դեպքում ընտրողները որքան էին իրենց քվեները տվել այն կուսակցություններին, որոնք չեն կարողացել հաղթահարել 10%-ի շեմը: Այսինքն, նախընտրական նման բարձր տոկոսի առկայությունը բացասաբար ազդեց կուսակցության վրա և պատճառ դարձավ հետաքրքիր օրինաչափության. ԱՋԿ-ն երեք ընտրություններում անընդմեջ կարողացավ իրեն տրված ձայների տոկոսն ավելացնել, սակայն դրա հետ մեկտեղ կուսակցության պատգամավորական մանդատների թիվը պակասեց (2002 թ. ընտրություններում 34,28% և 363 մանդատ, 2007 թ. ընտրություններում 46,66% և 341 մանդատ, 2011 թ. ընտրություններում 49.83% և 327 մանդատ):

2011 թ. խորհրդարանական ընտրություններն ուշագրավ էին այն իրողությամբ, որ ԱՋԿ-ն իր հաղթանակով դարձավ Թուրքիայում

---

[15] Yüksek Seçim Kurulu, 12 Haziran 2011 XXIV. Dönem Milletvekili Genel Seçimi, http://www.ysk.gov.tr/ysk/GenelSecimler.html

բազմակուսակցական համակարգին անցնելուց հետո ամենից երկարը կառավարած կուսակցությունը՝ գերազանցելով ԺԿ-ի ռեկորդը (վերջինս կառավարել էր 10 տարի):

Թուրքիայում 2002 թ. սկսված ԱԶԿ հաղթարշավը շատերը պայմանավորում են նրա խարիզմատիկ առաջնորդի՝ Էրդողանի գործունեությամբ, ում հեղինակությունը վերջին տարիներին զգալիորեն աճել է՝ գրեթե հավասարվելով Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հեղինակությանը: Այդուհանդերձ, Էրդողանի գործողությունները շատ հաճախ քննադատության առիթ են դառնում: Որոշ վերլուծաբաններ գտնում են, թե Էրդողանն իր գործողություններով նպաստել է թուրքական քաղաքականության բևեռացմանը: Շատերն անգամ զուգահեռներ են տանում Էրդողանի և ԱՄՆ 43-րդ նախագահ Ջորջ Բուշի միջև և որպես ընդհանուր գիծ են առանձնացնում հետևյալ կարգախոսը. «Դու կամ մեր հետ ես, կամ մեր դեմ»[16]: Որպես թուրքական հասարակության և քաղաքական համակարգի բևեռացվածության ապացույց թերևս կարելի է բերել 2013 թ. մայիսից սկսված և ավելի քան մեկ ամիս տևած Ստամբուլի Թասքիմ հրապարակի Գեզի զբոսագոտու դեպքերը, որոնք ոչ թե բնապահպանական, ինչպես պնդում և ցանկանում էին ներկայացնել թուրքական իշխանությունները, այլ երկրում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների հասարակական արձագանքն էին[17]:

---

[16] Garner D., Dombey D., Erdogan's Tutkey: A Rule More Ruthless, Financial Times, March, 2012, http://www.ft.com/cms/s/0/387d2f6c-77f9-11e1-b437-00144feab49a.html

[17] Թուրքիայում 2013 թ. մայիսի 28-ից հակակառավարական ցույցերը սկիզբ առան Գեզի զբոսայգուց, որտեղից ոստիկանությունը դաժան կերպով ցրեց այգու պաշտպաններին: Ծառերի մի մասը պետք է կտրվեին կառավարության որոշմամբ հրապարակի վերակառուցման շրջանակում: Բնապահպանական նկատառումներով Թուրքիայում սկսված բողոքի ակցիաները վերածվեցին հակակառավարական ցույցերի, որոնց մասնակիցները իրենց դժգոհությունն էին հայտնում իշխանությունների վարած ներքին և արտաքին քաղաքականությունից ու պահանջում կառավարության հրաժարականը: Ոստիկանության և ցուցարարների միջև բախումների արդյունքում զոհվեց 5 ցուցարար, 7500-ից ավելի մարդ

Ներկայում Թուրքիան ապրում է վերափոխման գործընթաց թե՛ արտաքին քաղաքական, թե՛ ներքաղաքական բնագավառներում, քանի որ ԱԶԿ-ն փորձում է խորքային և երկարաժամկետ բնույթ ունեցող բարեփոխումներ իրականացնել: 2002 թ., երբ ԱԶԿ-ն եկավ իշխանության, դժվար էր կանխատեսել, որ այն նման հաջողություն կգրացնի և կկարողանա խարխլել Թուրքիայի Հանրապետության հիմնադիր քեմալականների և նրանց պաշտպան զինվորականության դիրքերը: Այդուհանդերձ, թուրքական քաղաքական իրականությունում վերջին տարիներին տեղի ունեցող իրադարձությունները վկայությունն են այն բանի, որ Զինված ուժեր-ԱԶԿ հակամարտությունում, որը շարունակվում է արդեն 10 տարի, կուսակցությունը կարողացել է հաղթանակի նժարը թեքել իր կողմը, ինչի արդյունքում այսօր տեսնում ենք զինվորականության որոշակի մեկուսացումը երկրի քաղաքականությունից:

ԱԶԿ-ն նպատակ ունի 2023 թ.-ին, Թուրքիայի Հանրապետության 100 ամյակին, ամփոփելով իր 21-ամյա գործունեության արդյունքները, գրանցել աննախադեպ հաջողություններ: Ըստ էության, հիմնադրումից ի վեր կուսակցության հռչակած «պահպանողական ժողովրդավարության» սկզբունքը տվեց իր ցանկալի արդյունքը: Թուրք պրոֆեսոր ՈՒ. Օզդաղը, իր «Միակուսակցական համակարգի երկրորդ շրջանը» գրքում, խոսելով ներկա քաղաքական վիճակի մասին, հետաքրքիր եզրահանգում է անում՝ ասելով. «ԱԶԿ-ն կարծես ձևավորում է ոչ թե նոր կառավարություն, այլ հիմնովին նոր պետություն»[18]: Թուրք պրոֆեսորի այս եզրահանգումն ամփոփում է ԱԶԿ-ի 10-ամյա իշխանությունը և գրանցում դրա հիմնական և կարևորագույն արդյունքը. Թուրքիան թևակոխում է մի նոր ժամանակաշրջան, որտեղ ի տարբերություն քեմալականների Թուրքիայի, կարևոր և առաջնահերթ են դառնում կրոնական գաղափարները և արժեքները: ԱԶԿ այսօր որդեգրել է նոր

վիրավորվեց, շուրջ 5 հազար մարդ էլ ձերբակալվեց: Թուրքիայի ներքին գործերի նախարարության տվյալներով՝ հակակառավարական ցույցերին Թուրքիայի 79 շրջաններից մասնակցեցին մոտ 2.5 միլիոն մարդ:

[18] Гаджиев А., Турция: Трансформация внешнеполитических взглядов и внутреннополитической системы, http://www.iimes.ru/rus/stat/2012/20-03-12.htm

քաղաքականություն, նոր սկզբունքներ, պետության առջև դրել նոր խնդիրներ և փորձում աշխարհին ներկայանալ նոր դեմքով:

KASYAN ÁRAKS
(YSU)

ON THE PREREQUISITES OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY'S VICTORIES IN TURKISH PARLAMENTARY ELECTIONS (2002-2011)

Justice and Development Party is the political force to have the vital role in modern Turkey's political life. After 15 months of its foundation only, the party having won in the parliamentary elections and joining the Grand National Assembly of Turkey, is abel to center all state levers in its hand in a short period of time. The aim of the article is to explore all those factors to have contributed to the Grand National Assembly victory and became the platforms through which the "Islamic" party characterized by both Turkish and Western politicians, stands at the top of Kemalist Turkey's political pyramid more than ten years, something that couldn't do other political parties since Turkey passed to the multi-party system.

KSCHENKA DAVID
(MLU, DEUTSCHLAND)

PREUßISCHES ENGAGEMENT IN PALÄSTINA: KOLONIALISMUS ODER MISSIONARISCHER AUFTRAG?

Fragestellung

In ganz Palästina, vor allem jedoch in Jerusalem kann man auf Spuren deutscher Betätigung stoßen. Diese fand im großen Stil ab dem 19. Jahrhundert statt unter preußischer Administration statt und wurde im Kaiserreich konsequent fortgesetzt. Handelt es sich beim preußischen und ab der Reichsgründung[1] deutschen Engagement im Heiligen Land[2] um Kolonialismus? Als Kolonialismus bezeichnet man eine "Politik der Inbesitznahme und Ausbeutung fremder, meist überseeischer Gebiete v.a. durch europäische Länder zwischen dem 16. und 20. Jh. Kolonialismus ist durch die territoriale Machtausweitung eines Staates mittels langfristig angelegter militärischer, politischer und/oder wirtschaftlicher Kontrolle über die unterworfene Kolonie gekennzeichnet"[3]. Hierfür werde ich eine Einordnung der Tätigkeiten in den historischen Rahmen vornehmen und versuchen, deren besondere Charakteristik herauszuarbeiten.

Europa und Palästina

Das "Heilige Land" Palästina hatte von je her eine herausragende Position im Bewusstsein der europäischen Weltbetrachtung. Dies ist darauf zurückzuführen, dass es die Kulisse für das Entstehen der monotheistischen Weltreligionen bietet. Das Christentum begann mit Kaiser Konstantin dem Großen eine Rolle als Staatsreligion, die sich im Laufe der Jahrhunderte über den gesamten europäischen Raum ausbreitete. Somit wurde Kunst, Kultur, aber auch Politik stark davon geprägt. Eine zentrale Rolle hat hier die Bibel

---

[1] Hier bezogen auf das Deutsche Reich bis Ende des 1. Weltkrieges 1918.

[2] Im Folgenden nach dem allgemeinen Sprachgebrauch in etwa für das Gebiet des heutigen Israel, basierend auf Gebiet des Wirkens Jesu Christi und der Urgemeinden.

[3] Neumair & Haas 2011.

als Heilige Schrift inne. Der Großteil der Geschichten des Alten und Neuen Testaments findet im Gebiet Palästinas statt. Dies beflügelte die Fantasie und Neugier der geografisch entfernt, und doch durch die Kultur eng an diese Region gebundenen Europäer. Das Zentrum, der Kristallisationspunkt der Geschichten und Legenden war Jerusalem. Schon in religiösen Texten gilt es als mehr als nur eine irdische Stadt. Es ist eine Braut, Gottes Wohnung auf Erden, Verheißung einer neuen Welt. Diese Mystifizierung ist Juden, Christen und Muslimen gleichermaßen gemein. So ist es nicht verwunderlich, dass schon im frühen Mittelalter immer wieder Pilger und Forschungsreisende den Weg dorthin fanden. Drastisch wird die Bedeutung Palästinas auch durch die Kreuzzüge vor Augen geführt, die für sämtliche beteiligte Konfliktparteien beträchtliche Auswirkungen bis in die heutige Zeit hatten. Auch sie trugen zum "Mythos Heiliges Land" bei. Dennoch ging bis zum 19. Jahrhundert das europäische Interesse am Heiligen Land stark zurück, wenngleich es auch nicht ganz verebbte. Gründe dafür waren die Eroberung Palästinas durch die Osmanen (1519) und die damit verbundene Bedrohung durch sie für das christliche Abendland, aber auch die Entdeckung Amerikas als "Neue Welt" und die damit verbundene Interessenverschiebung der europäischen Großmächte[4]. Der Protestantismus, der nicht nur in Deutschland mittlerweile eine wesentliche Rolle spielte, wandte sich von frommen Pilgerfahrten und Reliquienverehrung ab. Damit ging die verringerte Wichtigkeit der tatsächlichen biblischen Stätten einher. Eine nüchtern introvertierte Geisteshaltung hatte Vorrang. Dies wandelte sich zunehmend im Spätpietismus. Hier wurde der Begriff der "Jerusalemssehnsucht" geprägt, Fahrten ins Heilige Land wurden zu einer Art frommen Forschungsreise. Biblische Plätze wurden begutachtet, das Interesse an den vorherrschenden Verhältnissen der Bevölkerung wuchs. Dies geschah jedoch nachwievor meistens aus einem frommen Blickwinkel. "Das historisch-geographische Jerusalem erschien als civitasperfida, die zerstört wurde, da sie das Heil nicht angenommen hatte"[5]. In den Fokus des europäischen Interesses rückte Palästina jedoch vor allem durch den

---

[4] Vgl. Lückhoff 1998, 11.

[5] Vgl. Lückhoff 1998, 12 nach G. Mehnert, Jerusalem als religiöses Phänomen in neuer Zeit, in: FS Benz, Glaube; Geist, Geschichte. Leiden 1967, 160-174 (165)

Ägypten-Feldzug Napoleons (1798-1800). Das Osmanische Reich offenbarte militärisch eklatante Schwächen und wurde zum Schauplatz einer vorrangig europäischen Auseinandersetzung. Gleichzeitig sorgten Archäologen aus dem französischen Tross mit spektakulären Funden für weltweites Aufsehen. Die Orientwissenschaft galt fortan als besonders privilegierter Forschungszweig und Wissenschaftler konnten hier zu Ruhm und Anerkennung gelangen. Abgesehen von den wissenschaftlichen Errungenschaften war das neu erwachte Interesse der europäischen Mächte in erster Linie strategisch begründet. Das Erkennen der Dominanz des europäischen Militärs und der logistischen Möglichkeiten läutete eine Ära des kolonialistischen Zugriffes auf den Orient ein, die sich bis weit in das 20. Jahrhundert hinein zog. Dennoch war gerade die Faszination für Palästina, insbesondere Jerusalem besonders geartet. Diese Stadt ist durchzogen von Wegen und Orten, die Menschen eines bestimmten Glaubens bedeutsam sind. Einen Solchen Ort zu gestalten und zuverwalten bedeutet eine ganz besondere Ehre[6]. Die Europäischen Mächte verstanden sich trotz aller Gegensätze übereinstimmend in christlicher, teils sogar kreuzfahrerischer Tradition. Dazu kam die prestigeträchtige Rolle als Schutzbefohlene für ihre Konfessionen.Frankreich und Österreich fühlten sich als Vertreter der katholischen Kirche.Russland war Schirmherr der Orthodoxen, die seit Jesu Tod durchgehend in Jerusalem vertreten waren und dort das Patriarchat der Melkitischen Griechisch-Katholischen Kirche, das Lateinische Patriarchat von Jerusalem, sowie das Patriarchat der armenischen Apostolischen Kircheunterhielten.England protegierte die anglikanische Kirche, die 1833 die erste ständige Niederlassung in Jerusalem hatte. Preußen hingegen sah sich als nichts Geringeres als den Schirmherren der Protestanten im Heiligen Land.

Preußisches Selbstverständnis und Ambitionen

Preußens Bedeutung im europäischen Machtgefüge war vom unbedeutenden Kurfürstentum Brandenburg nach dem Dreißigjährigen Krieg über die Jahrhunderte hin zur Großmacht angewachsen. Anfang des 19. Jahrhunderts stand man neben England, Frankreich, Österreich und Russlandsich gegenseitig belauernd an der Spitze des nachnapoleonischen

---

[6] Vgl. Kohler 2005, 1.

Europas. Preußen selbst war auch gerade in Abgrenzung zu den Rivalen um ein klares protestantisches Profil bemüht. Lutheraner und Reformierte machten den Großteil der Bevölkerung aus. Zudem bestand ein beträchtliches Repräsentationsstreben. Diese Staatsfrömmigkeit gepaart mit Geltungsdrang lies die romantische Hoffnung auf eigene Kirchen im Heiligen Land keimen. Friedrich Wilhelm IV., seit 1840 regierender König von Preußenunterstützte die pietistische Erweckungsbewegung, die schon lange Jerusalem als Sehnsuchtsziel und Pilgerort verehrte. "Friedrich Wilhelm IV. hielt in seiner Kirchenpolitik an einer frommen, ständisch-patriarchalen Auffassung über den Auftrag eines christlichen Herrschers fest"[7]. Er verstand sich bewusst als Laientheologe, der der Missionsarbeit eine große Wichtigkeit einräumte. Der Gedanke an eine eigene Kirchenvertretung im Heiligen Land faszinierte ihn.

Preußen hatte sich, was Kolonien anging, zurückgehalten. Eine schlagkräftige Hochseeflotte nach Vorbild der Engländer, Spanier oder Franzosen fehlte genauso wie unerschlossenes Hinterland wie in Russland. Demnach lag der Fokus auf Machtsicherung im Zentrum Europas und gegebenenfalls gewinnbringende Allianzen. So war Preußen, anders als die anderen Großmächte, ohne nennenswertes Konfliktpotenzial mit dem Osmanischem Reich oder Gebietsansprüche in Palästina. Im Gegenteil, es entwickelte sich eine Zusammenarbeit in Logistik und Militär, die für beide Seiten gewinnbringend war. Dies ging zurück auf eine bereits lange bestehende Tradition der bilateralen Beziehungen beider Länder, die bereits durch Friedrich II. im Jahr 1760 in Gestalt eines Verteidigungsbündnisses auf den Weg gebracht worden war[8]. "Das Jerusalem des frühen 19. Jahrhunderts war eine kleine Stadt ohne größere wirtschaftliche Bedeutung. Es verfügte weder über wichtige Industrien, noch über nennenswertes Gewerbe oder Handel"[9]. Ein Engagement war also nicht gerade lohnenswert, betrachtete man den ökonomischen Aspekt. Der Wunsch nach eigenem Bistum in Jerusalem bestand jedoch auch wegen der Aussicht auf Annäherung an die anglikanische Kirche. Diese wurde von der preußischen Krone als idealer

---

[7] Lückhoff 1998, 67.

[8] Vgl. Kohler 2005, 18.

[9] Lückhoff 1998, 21.

Hybrid zwischen Katholizismus und Protestantismusangesehen. Die Einigkeit der christlichen Konfessionen im Reichsgebiet, wie auch unter den Protestanten bereits mit der Kirchenunion praktiziert, schwebte Friedrich Wilhelm IV. vor. Vorbild war hier die romantische Vorstellung einer mittelalterlichen Reichskirche, gleichzeitig als starkes Standbein der Monarchie. Der Plan war also, ein gemeinsames Bistum mit den Anglikanern aufzubauen. Der Jerusalemer Bischof sollte abwechselnd von England und Preußen ernannt werden. Gegen Ende des Jahres 1841 begannen erste Gespräche mit der osmanischen Verwaltung. Als Ergebniswurden die Protestanten im Osmanischen Reich als Konfession anerkannt. Die Christuskirche wurde gebaut und der erste Bischof traf 1842 ein. Michael Solomon Alexander, in Preußen geboren, als Rabbiner nach England gerufen und dort zum Christentum bekehrt, schien die ideale Besetzung zu sein. Seiner Biografie nach logisch und dem pietistischen Ideal entsprechend lag der Schwerpunkt seiner Arbeit vornehmlich in der Judenmission. Dies ist nicht verwunderlich angesichts der Tatsache, dass es in Jerusalem, wie im gesamten Heiligen Land nur eine sehr überschaubare Zahl Protestanten gab. Darunter waren beispielsweise die pietistischen "Templer". Diese protestantische Sekte sah sich im Heiligen Land den biblischen Ursprüngen näher und bestand größtenteils aus preußischen Emigranten.Mitdem wachsenden preußischen Engagement in Palästina gingen weitere Veränderungen einher. Wissenschaftler kamen in größerer Zahl mit Forschungsaufträgen, in kurzer Zeit gab es einen enormen Auftrieb der deutschen Orientwissenschaft. Der Deutsche Palästinaverein (später Deutsche Orient-Gesellschaft) und die Deutsche Morgenländische Gesellschaft (1845) entstanden[10].

Die Präsenz wurde sogar noch verstärkt. Ab 1844 war ein preußischer Konsul in Jerusalem ansässig. Dennocherhob die hohenzollersche Krone keine Besitzansprüche auf Palästina. Im Gegenteil, man betrieb sogar aktiv eine Stärkung der Osmanen, um die anderen europäischen Mächte im Wettbewerb um Macht und Vorherrschaft in Schach zu halten. In dieser

---

[10] Ebenfalls nicht zu vergessen, wenn auch für die protestantische Kirche unerheblich ist die preußische Verbindung zu Palästina durch die immer stärker werdenden nationalen Ambitionen von Juden aus dem Reichsgebiet.

Beziehung, wie auch im religiösen Sendungsbewusstsein war eine Kontinuität der preußischen Orientpolitik zu verzeichnen[11]. Im Jahr 1869 erwarb Kronprinz Friedrich III. auf einer Reise zur Einweihung des Suez-Kanals ein Grundstück für Bau der Erlöserkirche. Hier handelte es sich nicht um irgendeinen Platz, sondern um den Ort des ehemaligen Johanniterhospizes. Auch hier ist die durchaus positive Konnotation zu erkennen, die die Kreuzzüge in den Augen der Europäer hatten.

Das Kaiserreich und Jerusalem

Gegen Ende des 19. Jahrhunderts kam es verstärkt zum Zugriff auf arabische Territorien. Frankreich besetzte 1830 Algier, Großbritannien 1839 Aden. Die Franzosen dehnten in der Folge ihre Herrschaft auf ganz Algerien aus, ein Großteil Nordafrikas wurde wirtschaftlich und kulturell mehr und mehr europäisch durchdrungen. Es begann der sogenannte *ScrambleforAfrica.* Briten, Franzosen, Spanier und Italiener besetzten Nordafrika und sicherten sich jeweils Teile des östlichen Mittelmeerraumes. Nachdem das Königreich Preußen 1871 in das Deutsche Reich übergegangen war, wurden die mit Preußen geschlossenen Verträge bezüglich des gemeinsamen Bistums aufgekündigt. Es folgte eine Alleinverwaltung, der Plan zum Bau der Erlöserkirche bestand jedoch nach wie vor. Schließlich konnte Wilhelm II. während seiner Palästinareise die Kirche am Reformationstag 1898 feierlich eröffnen. Wilhelm II. betrat Jerusalem zu Pferd in einem Triumphzug, der dem Geltungsdrang des Monarchen entsprach. Der 31. Oktober war sorgfältig gewählt als Zeichen für einen starken und einigen Protestantismus unter Wilhelms Schutz. Wie die Einweihung der Erlöserkirche war die gesamte Palästinareise sorgfältig geplant und inszeniert worden. Einer Wallfahrt gleich diente sie gleichermaßen der Ermutigung der Glaubensbrüdern, Repräsentation und Solidaritätsbekundung zum osmanischen Reich[12]. Hierbei empfing er unter anderem auch den "Vater des Zionismus", Theodor Herzl, zu einer Audienz.

---

[11] Vgl. hierzu Lückhoff 1998, 35ff.

[12] Erwähnt werden muss, dass sich bei Weitem nicht nur die deutschen Protestanten unter dem Kaiser im Heiligen Land betätigten. Das Kloster DormitioBeataeMariaeVirginis, im Jahre 1908 fertiggestellt, ist ein Beispiel der regen Tätigkeit der Katholiken unter ausdrücklicher Förderung Wilhelms II.

Trotz eines guten Gespräches gab der Kaiser Herzl zu verstehen, dass dieser sich keine Hoffnungen auf deutsche Unterstützung für die Schaffung einer "Heimstatt für die Juden" machen konnte. Das Bemühen um ein gutes Verhältnis zum Osmanischen Reich verhinderte solche Unterfangen.

Verhandlungen mit lokalen Autoritäten und Spekulationen seitens der europäischen Kolonialmächte ergaben bald ein schwer einzuhaltendes und umso schwerer miteinander zu vereinbarendes Netz aus Abkommen und Versprechungen mit nicht geringem Konfliktpotential. Auch im Hinblick die Spannungen im europäischen Machtgefüge vor und während des Ersten Weltkrieges war jede Nation bemüht, auch im Orient Allianzen und Ressourcen zu sichern.Beispielhaft sei hier die Husain-McMahon-Korrespondenz (1915-16) und Sykes-Picot-Abkommen (1916). England war im Gegensatz zum Deutschen Reich bemüht, sich als Verbündeter der Araber gegen Osmanen zu profilieren und machte den Arabern Hoffnung auf territoriale Selbstverwaltung. Währenddessen wurden jedoch schon Gespräche mit Frankreich bezüglich der Aufteilung des kontrollierten Gebietes geführt. Demnach sollte die britische Einflusszone vom Mittelmeer bis zum Irak verlaufen, eine Grenze zu Russland wollte man dabei möglichst vermeiden. Frankreich hatte die Aussicht auf Syrien und den Libanon. Die deutsche Kooperation mit dem Osmanischen Reich gipfelte letztendlich in gemeinsamer Kriegsaktivität und Niederlage. Palästinawurde im Jahr 1920 Großbritannien zugesprochen, heute besteht der Staat Israel. Kirchliche und humanitäre Einrichtungen anderer europäischer Staaten verblieben dabei. Größtenteils bestehen diese bis heute.

Fazit

Welche Merkmale des Kolonialismus[13] treffen nun also auf das preußisch-deutsche Engagement in Palästina zu? Die zeitliche wie territoriale Einordnung trifft ebenso zu wie die Langfristigkeit der Einflussnahme. Der zentrale Punkt ist jedoch die Inbesitznahme des Gebietes. Diese stand für Preußen im Gegensatz zu Frankreich oder Großbritannien nie zur Debatte. Die Aktivitäten vollzogen sich sicherlich unter Berücksichtigung machtpolitischer Aspekte. Betrachtet man jedoch das direkte Auftreten in Form von Stiftungsgründungen und Bauten, fällt auf, dass sich dies vor allem im Rahmen der Religion und der Wissenschaft abspielte. Man

[13] Siehe Definition unter Punkt 1.

wollte sich in diesen Bereichen einreihen unter den anderen mächtigen Nationen, weltgewandt, stark, fromm. Gewissermaßen als Erbe der Kreuzritter. Hierfür bot sich Jerusalem als Bühne vortrefflich an. Trotz dieser Ambitionen den Spagat zu wagen, ein gutes Verhältnis zu den Osmanen als der lokalen Autorität zu wahren, gelang dabei erstaunlich gut.Mit dem osmanischen Sultan hatte Preußen ein geringes Konfliktpotential. Eine Schwächung vor allem Frankreichs und Großbritanniens lag in beiderseitigem Interesse, eine Kooperation in verschiedenen Bereichen von Wirtschaft und Industrie fand ausgiebig statt.Repräsentationssucht und Machtfestigung können so für einen großen Teil des betriebenen Aufwandes verantwortlich gemacht werden. Dennoch ist so das starke Interesse nicht vollends zu erklären. Die hohenzollernschen Herrscher sahen sich als Machthaber von Gottes Gnaden. Selbst zumeist tief religiös war die Schirmherrschaft über Glaubensbrüder für sie Ehre und Selbstverständlichkeit, Jerusalem hatte einen zentralen Platz in ihrer Weltsicht. Die kostenintensiven Betätigungen ohne zählbare Ergebnisse ließen sich zudem propagandistisch erstklassig verwerten und waren somit von hohem Wert. Damit stand Preußen nicht allein. Viele andere Nationen und Glaubensgemeinschaften haben so eine Betätigung im fremden Territorium Palästina ohne kolonisatorische Hintergedanken betrieben. Wenn auch ursprüngliche Beweggründe wie die Judenmission zurückgestellt wurden und die Konfessionen im heutigen Jerusalem keinem europäischen Schutz mehr bedürfen, haben die Einrichtungen bis heute einen Sinn behalten und zum heutigem Antlitz Palästinas beigetragen. Die Türme der verschiedenen Gotteshäuser im Stadtbild Jerusalems stehen exemplarisch für dieses Engagement und Nebeneinander bis ins Heute hinein.

KSCHENKA DAVID
(MLU, GERMANY)

PRUSSIAN COMMITMENT IN PALESTINE: COLONIALISM OR A MISSIONARY TASK?

The traces of Prussian commitment in Palestine can still be seen in the Jerusalem of today. The German Church of the Redeemer is part of the unique silhouette of the Old City and points to the fact that its builders also wanted to be a part of the multinational concert of nations in the Holy Land.

Displayed the German presence in Palestine signs of colonialism? This should be examined in the following, focusing on Jerusalem itself and with a explicit view on Prussian self-conception.

LITERATURVERZEICHNIS

1. Goren, H. (2003). "Zieht hin und erforscht das Land" Die Deutsche Palästinaforschung im 19. Jahrhundert. Göttingen: Wallstein Verlag.
2. Kohler, O. (2005). Zwischen christlicher Zionssehnsucht und kaiserlicher Politik - Die Entstehung von Kirche und Kloster Dormitio Beatae Mariae Virginis in Jerusalem. St. Otilien: EOS-Verlag.
3. Krämer, G. (2002). Geschichte Palästinas. München: C.H. Beck.
4. Lückhoff, M. (1998). Anglikaner und Protestanten im Heiligen Land. Wiesbaden: Harrassowitz Verlag.
5. Neumair, D. S.-M., & Haas, P. D.-D. (2011). www.wirtschaftslexikon.gabler.de. Abgerufen am 18. September 2012 von http://wirtschaftslexikon.gabler.de/Archiv/638/kolonialismus-v5.html

ՀԱԿՈԲՅԱՆ ԼԻԼԻԹ
(ԵՊԼՀ ԿԻ)

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992-2013 ԹԹ.

Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը (ՉԺՀ) աճն արդեն սառը պատերազմից հետո աշխարհում ձևավորված աշխարհաքաղաքական հավասարակշռության վերախմբավորման պատճառ է դարձել, որտեղ տնտեսական հզորությունն ու մարդկային կապիտալի առատությունը ձեռք են բերում էլ ավելի մեծ նշանակություն այն դեպքում, երբ միջուկային զենքի և բալիստիկ հրթիռների նշանակալիությունը նվազում է, ինչը թե գերտերություններին, թե պակաս նշանակալի երկրներին դրդում է մեկը մյուսի հետևից ամրապնդել իրենց կապերը Չինաստանի հետ: Այս երկիրն արդեն դարձել է այնպիսի տերությունների խոշորագույն առևտրային գործընկերը, ինչպիսիք են Ճապոնիան, Ռուսաստանը և Հնդկաստանը: Նա նաև Լատինական Ամերիկայի ու Աֆրիկայի երկրների խոշորագույն, ինչպես նաև ԱՄՆ-ի առևտրային երկրորդ գործընկերն է[1]:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո Հարավային Կովկասի պետությունները ձեռք բերեցին անկախություն: 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն: ՉԺՀ-ն առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու անկախությունը և առաջինը դեսպանությունը բացեց Երևանում: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում չինական կառավարության առաջին դեսպանատունը բացելու որոշումը վկայում էր Հայաստանում Չինաստանի ունեցած հետաքրքրությունների մասին[2]:

---

[1] Сараджян С., Армения и Китай: доводы в пользу особого сотрудничества, Бюллетень НОФ Нораванк, 21-й ВЕК, № 4, 2012, с. 115-116.

[2] Սարգսյան Գ., Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և չին-հայկական հարաբերությունները (1991-

1992 թ. ապրիլի 6-ը նշանակալից է Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար, քանի որ այդ օրը ստորագրվեց երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համատեղ հուշագիրը: Այդ փաստաթղթում ամրագրված է, որ ՀՀ-ի և ՉԺՀ-ի կառավարությունները համաձայնեցին զարգացնել բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը երկու երկրների միջև ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, փոխադարձ հարգանքի ու չհարձակման, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության, փոխշահավետության, ինչպես նաև խաղաղ գոյակցության սկզբունքների հիման վրա[3]: 1992 թ. հուլիսին Երևանում սկսեց գործել ՉԺՀ-ի դեսպանությունը: Ինչպես նաև 1992 թվից Երևանում գործում է ՉԺՀ-ի առևտրական ներկայացուցչությունը: Այսպիսով ՉԺՀ-ի և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո հայ-չինական առևտրատնտեսական համագործակցությունը սկսեց զարգանալ արագ տեմպերով: 1992 թ. հունվարի 9-ին Երևանում Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև ստորագրվեց Առևտրատնտեսական համաձայնագիրը[4]:

1996 թ. ապրիլի 16-ին Հայաստան ժամանեց ՉԺՀ-ի Պետական խորհրդի նախագահի տեղակալ, արտաքին գործերի նախարար Ցյան Ցիչենի գլխավորած պատվիրակությունը: ՀՀ-ի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ՉԺՀ-ի արտգործնախարարին ներկայացրեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները՝ վստահություն հայտնելով, որ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացի և Հայաստանի հաղորդակցության

2010 թթ.), ատենախոսություն, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Ե., 2012, էջ 103:

[3] Չալըմյան Ն., Հայ-չինական հարաբերությունները 1992-2007 թթ., Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 130.6, Ե., 2010, էջ 25:

[4] http://www.mfa.am/hy/country-by-country/cn/

ուղիների բացման հետ հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունները կաշխուժանան[5]:

Առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովը հիմնվել է 1999 թ. օգոստոսի 3-ին ստորագրված Արձանագրության համաձայն: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն էր ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը, չինական կողմից՝ ՉԺՀ-ի առևտրի նախարարության Եվրոպայի վարչության պետ Սուն Իյունֆուն: Համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 1999 թ. Երևանում: 2007 թ. ապրիլի 20-ին Երևանում կայացավ հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը, որի ընթացքում նշվեց, որ անցած տարվա ընթացքում արձանագրվել է երկկողմ առևտրային շրջանառության ավելի քան 40 տոկոս աճ, ինչը կազմել է մոտ 52 մլն ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ Հայաստան ներկրվող չինական արտադրության ապրանքների ծավալն անցել է 100 մլն ԱՄՆ դոլարի սահմանը[6]: 2009 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է համարյա 302,5 մլն ԱՄՆ դոլար, ավելի քան 50,5 անգամ գերազնցելով 2000 թ. չափանիշը: 2010 թ. ապրանքաշրջանառությունը կրկին թափ առավ և գերազանցեց 436,7 մլն ԱՄՆ դոլար՝ 44 տոկոս աճելով 2009 թ. համեմատությամբ և 73 անգամ՝ 2000 թ. համեմատությամբ[7]: 2011 թ. Հայաստանի և Չինաստանի միջև ապրանքների ներմուծումը կազմել է ընդհանուրը 16 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանումը՝ 405 մլն ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ Վրաստանի ու Չինաստանի միջև ապրանքաշրջանառությունը 2011 թ. կազմել է 553 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա, այդ հանրապետության Ազգային վիճակագրական գործակալության տվյալների համաձայն՝ 2011 թ. երկիր է ներմուծվել 628 մլն ԱՄՆ դոլարի ընդհանուր արժողությամբ չինական ապրանք[8]: Հայաստանի և Չինաստանի միջև ապրանքների ներմուծումը և արտահանումը 2012 թ. կազմել է

---

[5] Չալըմյան Ն., նշվ. աշխ., էջ 26:

[6] Նույն տեղում, էջ 33:

[7] Китай глазами армян, Е., 2013, с. 95.

[8] Сараджян С., նշվ. աշխ., էջ 116-117:

ընդհանուրը 31 մլն ԱՄՆ դոլար և 400 մլն ԱՄՆ դոլար համապատասխանաբար[9]:

Ներկայումս անց է կացվել առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի 7 նիստ: Վերջին նիստը տեղի է ունեցել 2013 թ. հունիսի 19-ին՝ Պեկինում: Նիստի ընթացքում կողմերը ներկայացրել են երկու երկրների տնտեսական իրավիճակը, քննարկել են հայ-չինական առևտրատնտեսական համագործակցության արդյունավետության բարձրացմանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ երկկողմ առևտրում ապրանքատեսակների բազմազանության ավելացման և դրանց որակի բարձրացման խնդիրները, ենթակառուցվածքների զարգացման, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, էներգետիկայի, քիմիական արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտներում համագործակցության ընդլայնման, հայկական և չինական ձեռնարկությունների միջև կապերի ամրապնդման, համատեղ գործարար համաժողովների, ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպման հնարավորությունները և այլ խնդիրներ: Նիստի արդյունքում ստորագրվել է Հայ-չինական հանձնաժողովի յոթերորդ համատեղ նիստի Արձանագրությունը[10]: Հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի համատեղ նիստերն առանձնապես կարևորել են երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը:

Չինաստանից Հայաստան ներկրվում են էլեկտրոնային սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, տնտեսական ապրանքներ, շինանյութ, մետաղական կոնստրուկցիաներ, ավտոմեքենաներ, ավտոբուսներ, պոլիմերներ, հագուստ, ոսկերչական զարդեր: Հայաստանը Չինաստան է արտահանում մարմար, պղնձի խտանյութ, տուֆ, տարբեր քարեր, խողովակներ, և, իհարկե, կոնյակ[11]:

2001 թ. հոկտեմբերի 12-ին ՉԺՀ-ի ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի պալատում կայացավ «Նաիրիտ» ձեռնարկության և Շանսի նահանգի սինթետիկ կաուչուկի

---

[9] http://www.armstat.am/en/?nid=380&thid%5B%5D=156&years%5B%5D=2012&submit=Search

[10] http://www.mineconomy.am/uploades/20130307101950873.pdf

[11] http://www.panarmenian.net/arm/news/169893/

միջև համատեղ ձեռնարկություն ստեղծելու վերաբերյալ պայմանագրի կնքման հանդիսավոր արարողությունը: «Սինթետիկ կաուչուկի Շանսի-Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկության շինարարությունը սկսվեց 2002 թ. և, պայմանավորվածության համաձայն, գործարանը պետք է գործարկվեր 2008 թ. սկզբին: Ձեռնարկության տարեկան արտադրական հզորությունը կազմելու էր 30 հազար տոննա: Նախնական շրջանում այն գործելու էր հնարավորությունների 75 տոկոսով, այնուհետև պետք է ավելացվեին արտադրության ծավալները: Ձեռնարկության կառուցման համար նախատեսվեց ավելի քան 100 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Ընկերության ստացած շահույթի 40 տոկոսը պատկանելու էր ՀՀ-ի կառավարությանը, իսկ 60 տոկոսը՝ չին ներդրողներին[12]: 2010 թ. մայիսի 3-ին ՀՀ-ի նախագահ Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել ՉԺՀ-ի Շանսի նահանգի Դաթուն քաղաքում հայ-չինական ամենամեծ տնտեսական համագործակցության նախագծի բացման հանդիսավոր արարողությանը: Ինչպես հայտնել է ՀՀ-ի Էներգետիկայի և բնական ռեսուրսների փոխնախարար Իոսիֆ Իսայանը, 2010-2012 թթ. ընթացքում ձեռնարկությունը տվել է հետևյալ արդյունքները՝ 2010 թ. արտադրվել է 9,5 մլն ԱՄՆ դոլարի 2,9 հազար տոննա կաուչուկ, 2011 թ.՝ 35 մլն ԱՄՆ դոլարի 10,2 հազար տոննա կաուչուկ, 2012 թ.՝ 40 մլն ԱՄՆ դոլարի 10 հազար տոննա կաուչուկ, իսկ 2013 թ. 9 ամիսների ընթացքում՝ 40 մլն ԱՄՆ դոլարի 10 հազար տոննա կաուչուկ[13]:

Բացի քիմիական արդյունաբերությունից, չինական ընկերությունները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին նաև Հայաստանում մրցույթով հայտարարվող ձեռնարկությունների նկատմամբ՝ այն համարելով համագործակցության ամենահուսալի տարբերակը: Այսպես, 2000 թ. դեկտեմբերին չինական տեխնոլոգիաների արտահանման և ներմուծման «CNTIC» (China National Technical IMP & EXP Corp) ընկերությունը շահեց Հրազդանի ջերմաէլեկտրակայանի 5-րդ էներգաբլոկի պահածոյացման աշխատանքների իրականացման միջազգային մրցույթը: 2002 թ. հունվարին ընկերությունը ժամանակին կարողացավ ավարտել

---

[12] Չալըմյան Ն., նշվ. աշխ., էջ 32:

[13] http://www.regnum.ru/news/1722386.html#ixzz2lCzkPyRa

կաթսայական ագրեգատի հավաքակցման, փորձարկման և պահածոյացման աշխատանքներին[14]:

2008 թ. մարտին Ծաղկաձորում տեղի ունեցավ «Չինաստան-Հայաստան» տնտեսական համագործակցության առաջին նիստը, որի աշխատանքներին մասնակցում էր ՉԺՀ Սինձյան-Ույղուրական ինքնավար շրջանի պատվիրակությունը: «Չինաստան-Հայաստան» տնտեսական համագործակցության առաջին նիստը նոր հեռանկարներ բացեց երկու կողմերի միջև տնտեսական կապերի զարգացման համար[15]:

2013 թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ-ի վարչապետ Տիգրան Սարգսյանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում Դալիան քաղաքում հանդիպել է ՉԺՀ-ի վարչապետ Լի Կեցիանին: Հանդիպման շրջանակներում վարչապետների ներկայությամբ երկու երկրների միջև ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

- Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վահե Գաբրիելյանը),
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների միջև տեխնիկական համագործակցության վերաբերյալ (Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վահե Գաբրիելյանը),
- Հուշագիր Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև, արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում փոխըմբռնման վերաբերյալ (Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը)[16]:

---

[14] Չալըմյան Ն., նշվ. աշխ., էջ 32-33:

[15] Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 115:

[16] http://www.gov.am/am/in-the-focus/item/10677/

Անշուշտ, այս այցը նոր շունչ կհաղորդի հայ-չինական բազմադարյան բարեկամական հարաբերությունների դինամիկ զարգացմանը:

Չինաստանն աշխարհի հզորագույն երկրներից է, և Հայաստանի պետականության համար ՉԺՀ-ի հետ համագործակցությունը կարևորագույն նշանակություն ունի: Չինաստանը Հայաստանի 2-րդ կարևորագույն արտաքին առևտրային գործընկերն է, և պետք է նշել, որ երկու կողմերի կարծիքով փոխադարձ առևտրի ծավալները կարող են հասնել 500 մլն. ԱՄՆ դոլարի: Եվ դա էլ սահման չէ: Տնտեսական համագործակցության խորացման ակնհայտ ուղիներից է էլ ավելի մեծ թվով ներդրողների ներգրավումը Չինաստանից, որը հսկայական արժութային պաշարներ ունի՝ 3,2 տրլն ԱՄՆ դոլար (առավելագույնը աշխարհում), և որն ամեն տարի տասնյակ միլիարդավոր դոլարներ է ծախսում օտարերկրյա ակտիվների վրա ձեռքբերման համար: Վերջին մի քանի տարիներին Չինաստանն ավելի քան 40 մլրդ ԱՄՆ դոլար է ներդրել արտասահմանյան իրական ակտիվներում, բայց Հայաստանն, այնուամենայնիվ, այդ ներդրումների ընդամենը մի փոքր մասն է կարողացել ներգրավել: Որոշ գնահատականների համաձայն՝ Հայաստանը ներգրավել է 1,4 մլրդ ԱՄՆ դոլար 1992-2010 թթ. և էլի 2,7 մլրդ ԱՄՆ դոլար 2011թ. առաջին մի քանի ամիսներին[17]: Հայաստանը և Չինաստանը գտնվում են միմյանցից շատ հեռու, սակայն երկու երկրների և ազգերի միջև հարաբերությունները զարգանում են բավականին դինամիկ:

HAKOBYAN LILIT
(CI at YSLU)

ARMENIAN-CHINESE TRADE AND ECONOMIC RELATIONS FROM 1992 TO 2013

The present article studies Armenian-Chinese trade and economic relations right after the collapse of the Soviet Union. The People's Republic of China, which is one of the most powerful trade partners of Japan, Russian and

---

[17] Сараджян С., նշվ. աշխ., էջ 120:

India, was among the first countries to recognize the independence of the Republic of Armenia. In 1992 governments of Armenia and China signed the first agreement on trade relations. In 1999 Armenian-Chinese joint committee was established, the parties of which regularly meet to discuss the trade and economic relations of the two countries. The last session of which was held in 2013 in Beijing. On May 3, 2010 RA president Mr. Serzh Sargsyan was present at the opening ceremony of the grandest joint economic project "Shanxi-Nairit Synthetic Rubber" in Datong, China. It is worth mentioning that in December 2010 China National Technical Import and Export Corporation (CNTIC), a large scale state-owned enterprise with main businesses in technology trade, project contracting and project management integrated service, won the international tender on the installation of the boiler at the 5th unit of the Hrazdan Power Plant in Armenia. In 2013 during RA Prime-Minister Mr. Tigran Sargsyan's official visit to Dalian, China, a number of agreements were signed between the two parties. China is the 2nd external trade partner of Armenia, so the two parties believe that the trade volume between Armenia and China can reach 500 mln US dollars and one of the best waysis to attract more investors from China.

ՀԱԿՈՐՑԱՆ ՇԱՀԱՆԵ
(ԱՒ)

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՄՆ-ԻՍՐԱՑԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ժամանակակից միջազգային հարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում Մերձավոր Արևելքում հակամարտության կարգավորման խնդիրը: Արդեն բավականին երկար ժամանակ շարունակվող լարվածությունը մեծ վտանգ է ներկայացնում տարածաշրջանի համընդհանուր խաղաղության համար:

Բացի այդ, ակնհայտ է, որ Պաղեստինի հարցը միշտ եղել և մնում է որպես կենսունակ գործոն արաբական պետությունների ներքին քաղաքականության համար: Այս գործոնը հատկապես կարևոր է արաբական այն երկրների համար, որոնք անմիջականորեն սահմանակից են Իսրայելին[1]:

ՊԱԿ-ի (Պաղեստինի Ազատագրման Կազմակերպություն) սկզբունքային մոտեցումը առավել կամ նվազ չափով խոչընդոտում է տարածաշրջանում ամերիկյան դիվանագիտությանը:

Չսահմանափակվելով Ամերիկայի «փուլային» դիվանագիտության քննադատությամբ, ՊԱԿ-ը առաջադրեց կոնկրետ առաջարկություններ պաղեստինյան խնդրի լուծման համար: Այդ առաջարկություններն ենթադրում էին Իսրայելի դուրս բերումը Հորդանանի Արևմտյան ափից և Գազայի շրջանից, պաղեստինյան ազգային կառավարության ստեղծում այդ տարածքներում, 1948 թ. Իսրայել պետության սահմանները լքած պաղեստինցի փախստականների հայրենադարձություն: Այս առաջարկությունների տրամաբանական հետևանքը պետք է լիներ Իսրայելի կողմից պաղեստինցիների իրավունքների ճանաչումը[2]:

Սակայն, մերժելով Պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման և անկախ պետականություն ստեղծելու իրավունքները, իսրայելական

---

[1] Cobban H., The Palestinian Liberation Organization, Cambridge, 1984, p. 195.

[2] http://rudocs.exdat.com/docs/index-181395.html

կառավարությունը փորձում է բացառել իր կողմից Արևմտյան ափի և Գազայի շրջանի վերադարձման հնարավորությունը օրինական տերերին, որով ավելի են ոտնահարվում միջազգային իրավունքի նորմերը, ՄԱԿ-ի կանոնակարգը և այդ կազմակերպության բազմաթիվ որոշումներ:

Իսրայելական իշխանությունները ջանք չեն խնայում արմատավորելու բոլոր նոր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային խտրականության ձևերը:

1973 թ. արաբաիսրայելական պատերազմից հետո Միացյալ Նահանգները ուղղակի պատասխանատվություն ստանձնեց դիվանագիտական գործընթացների համար, որով սկսվեցին բանակցություններն Իսրայելի և նրա հարևանների միջև[3]: Պատերազմից հետո ԱՄՆ քաղաքականությունը կենտրոնացավ տնտեսական համագործակցության՝ տարածաշրջանի հիմնական երկրների հետ և բանակցությունների վերսկսման վրա, որոնք կարող էին տանել արաբաիսրայելյան հակամարտության լուծմանը[4]:

Պաղեստինի հակամարտության նկատմամբ ԱՄՆ քաղաքականության կողմնորոշվածության առանձնահատկությունների մասին շատ է գրվել: Քաղաքագետների մի մասի կարծիքով, ամերիկյան քաղաքականությունը տվյալ տարածքում հիմնականում ունի ռազմական նպատակներ: Քաղաքագետների մյուս մասն էլ՝ ամերիկաիսրայելյան ստրատեգիական և չափազանց ջերմ հարաբերությունները բացատրում է ԱՄՆ-ում իսրայելական ուժեղ լոբբիի առկայությամբ: Այս կապակցությամբ մի անգամ Հենրի Քիսինջերը ասել է, որ Իսրայելի նշանակալի ռազմական գերազանցությունն արաբների նկատմամբ պետք է կանխի պատերազմի վտանգը և ծառայի ԱՄՆ-ի շահերին Մերձավոր Արևելքում:

Մերձավոր Արևելքում ԱՄՆ «Փուլային» դիվանագիտությունը 1973-1976 թթ. հանգեցրեց Քեմպ Դևիդի բանակցություններին՝ ԱՄՆ-ի, Իսրայելի և Եգիպտոսի միջև 1977-1978 թթ.: Արդյունքում մշակվեցին

---

[3] Saunders Harold H., The Middle East Problem in 1980, London, p. 37.

[4] Նույն տեղում, էջ 15:

«խաղաղության շրջանակներ» ծրագիրը, որը կոչված էր դառնալ ունիվերսալ բանաձև արաբաիսրայելյան խաղաղ գործընթացի համար[5]:

1978 թ. Իսրայելի և Եգիպտոսի միջև Քեմպ դևիդյան սեպարատ համաձայնագրի ստորագրումը ԱՄՆ սեփական միջնորդությամբ, արգելափակում էր Պաղեստինի արաբ ժողովրդի անբաժանելի ազգային իրավունքները[6]: Այդ գործարքի նպատակն էր թույլ չտալ ստեղծել անկախ պաղեստինյան պետություն, պաղեստինյան ժողովրդի վզին փաթաթել «ադմինիստրատիվ ինքնավարությունը», և դրանով նրան ծնկի բերել, ստիպել հաշտվել իսրայելական շրջափակման հետ:

Քեմպ դևիդյան համաձայնագիրը չհանգեցրեց ցանկալի արդյունքների ձեռք բերվեց խաղաղության համաձայնագիր Եգիպտոսի և Իսրայելի միջև, որը դարձել է խոշոր հիմնաքար Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման գործընթացում: Իսրայելը շարունակում էր պահել արաբական տարածքները: Խաղաղության պայմանագիրը Իսրայելի և Եգիպտոսի միջև այդպես էլ չլուծեց պաղեստինյան խնդիրը[7]:

Մերձավոր Արևելքում հակամարտությունը վերահսկելու և կառավարելու ԱՄՆ-ի քաղաքականությունը բխում էր Իսրայելի շահերից: Ամերիկյան քաղաքագետների գնահատմամբ ուժեղ Իսրայել պետություն է պետք Մերձավոր Արևելքում՝ որպես որոշից գործոն տարածաշրջանում:

Տարածաշրջանում ամերիկյան հետաքրքրությունների ներքին հակասությունները, մի կողմից ուղղված էին Իսրայելին աջակցելուն, ինչպես նաև նրա ազդեցության ընդլայնմանը արաբական երկրներում, որը պայմանավորված էր Մերձավոր Արևելքի նավթը վերահսկելու ձգտումով: ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունը կենտրոնացած էր միասնական արաբական դիրքորոշումը

---

[5] Колобов О., США и проблема Палестины в новое и новейшее время // Ближневосточная политика великих держав и арабо-израильский конфликт, в 3-х томах. – Нижний Новгород: Институт стратегических исследований Нижегородского государственного университета им. Н.И. Лобачевского, 2008, с. 82.

[6] Михайлов Г., Западный берег реки Иордан и сектор Газа под гнетом израелских колонизаторов. М., 1985, с. 4.

[7] http://aspirantspb.ru/forstudents/palestineusdip/

խափանելու, դրանով իսկ Իսրայելին և արաբական երկրներին ներգրավել խաղաղ կարգավորման գործընթացին[8]:

ԱՄՆ-ն Իսրայել պետությունը դիտարկում է որպես իր քաղաքական և տնտեսական ծրագրերի հավատարիմ կատարող: Իսրայելի ղեկավար շրջանակներն իրենց հերթին պետության գոյության առաջին իսկ օրվանից մինչ օրս էլ չեն թաքցրել և չեն էլ թաքցնում իրենց ագրեսիվ նպատակներն արաբական երկների նկատմամբ: Հենց այստեղ է, որ իրար են համընկնում ԱՄՆ-ի և սիոնիզմի շահերը. դրանով էլ բնորոշվում են նրանց «առանձնահատուկ» հարաբերությունները:

Ակնհայտ է որ, ԱՄՆ-ի և Իսրայելի «առանձնահատուկ» հարաբերությունները բացատրվում են Մերձավոր Արևելքում նրանց ընդհանուր հետաքրքրություններով: Ուստի, պատճառը պետք է փնտրել նաև ԱՄՆ ներքաղաքական կյանքում իսրայելական լոբբիի դերի և նշանակության մեջ, հրեական ծագում ունեցող Ամերիկայի քաղաքացիների սոցիալ-տնտեսական ակտիվ դերի մեջ:

Դեռևս 1952 թ. հուլիսին ստորագրվեց ամերիկա-իսրայելական համաձայնագիրը փոխադարձ անվտանգության ապահովման մասին՝ համաձայն որի Իսրայելը պարտավորվում է ԱՄՆ-ի հետ համատեղ մասնակցել Մերձավոր Արևելքի տարածաշրջանի «պաշտպանությանը»[9]:

1968 թ. ամերիկյան օգնությունը Իսրայելի նշանակալիորեն մեծացավ, 1970 թվականին հասնելով 800 մլն., իսկ 1971թ-ին 1.5 մլրդ. դոլար: 1948-1967 թթ. ամերիկյան կառավարության տնտեսական օգնությունը Իսրայելին կազմում էր 2.5 մլրդ. դոլար: 1973 թ. հոկտեմբերյան ռազմական գործողություններից հետո Ամերիկայի Միացյալ Նահանգները պարտավորվում են Իսրայել պետությանը տրամադրել 2,2 մլրդ. դոլարի չափով ռազմամթերք[10]:

Եթե մինչև 1967 թ. տարածաշրջանում խորհրդային դիրքերի ամրապնդումն ու արաբական «ազգայնական» ճամբարի ուժեղացումը Վաշինգտոնը փորձում էր Իսրայելին զսպել հիմնականում Սաուդյան Արաբիայի և Իրանի միջոցով, ապա 1967 թ. հետո Մերձավոր Արևելքում

---

[8] http://aspirantspb.ru/forstudents/palestineusdip/

[9] Дмитриев Е., Ладейкин В., Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, с. 168.

[10] Նույն տեղում, էջ 170:

ամերիկյան շահերի հետապնդման գործում Իսրայելը սկսեց առանցքային դեր խաղալ պատերազմի արդյունքում վերածվելով տարածաշրջանային լուրջ ուժի: Ըստ այդմ, 1967 թ. պատերազմից հետո ԱՄՆ-ը դարձավ Իսրայելի գոյության և անվտանգության հիմնական «հովանավորը»[11]:

Արաբա-իսրայելյան հակամարտության անհետևողականությունը հենց սկզբից էլ կայանում էր նրանում, որ իսրայելական էկսպանսիոնիզմի ամեն մի սրացում, առաջացնում էր արաբական պետությունների պատասխան արձագանքը, վստահեցնելով նրանց առաջնորդներին իրենց գործողությունների միասնության և իրենց շարքերն անցնելու մեջ: Այդպես եղավ նաև 1982 թ. հունիսին, երբ Իսրայելը ներխուժեց Լիբիա: Իսրայելական ագրեսիայի տարածման վտանգը ոչ միայն Լիբիայի, այլև Հորդանանի, Սիրիայի և արաբական այլ երկրների համեպ, արաբական առաջնորդներին ստիպեց անցնել 1982 թ. սեպտեմբերի 9-ին Ֆեսում ընդունված համատեղ գործողությունների իրականացմանը լիկվիդացնել իսրայելական ագրեսիայի հետևանքները և անցնել մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորմանը[12]:

Սակայն, արաբական երկրների ջանքերը կյանքի կոչել Ֆեսի խաղաղության ծրագիրը հենց սկզբից հանդիպեց մի շարք խոչընդոտների: Միացյալ Նահանգներ Իսրայելը իրենց ջանքերը կենտրոնացրել էին, որպեսզի չեզոքացնեին ֆեսյան խորհրդակցության դրական արձագանքները և այնտեղ ընդունված համաարաբական ծրագիրը Մերձավոր Արևելքում հակամարտության խաղաղ կարգավորման մասին: Այդ նպատակին հասնելու համար նրանք

---

[11] Կարապետյան Ռ., Սիրիայի տեղն ու դերը արաբա–իսրայելական հակամարտությունում (1946-2000), Կահիրե, 2008, էջ 112-113:

[12] 1982 թ. սեպտեմբերի 9-ին Ֆեսում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների հանդիպումը, որին մասնակցում էին արաբական 19 պետությունների ղեկավարները և Պաղեստինի Ազատագրման կազմակերպությունը: Խորհրդակցությանը չէր մասնակցում Լիբիան՝ լիբիական հեղափոխության առաջնորդ Քադաֆիի մերժման պատճառով, ով անհանդուրժողական դիրք էր գրավում Իսրայել պետության ճանաչման հարցում, և Եգիպտոսը, որը հեռացվել էր Արաբական երկրների Լիգայից և դրա համար էլ չէր հրավիրվել:

փորձում էին օգտագործել զանազան միջոցներ: Դրանցից մեկը Միացյալ Նահանգների կողմից առաջ քաշված «Ռեյգանի ծրագիրն» էր որպես այլընտրանք Մերձավոր Արևելքում արաբական ծրագրին:

Լինդոն Ջոնսոնին փոխարինած ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնը շարունակեց սառը պատերազմի «խաղի կանոնները» Մերձավոր Արևելքում, ուր ԽՍՀՄ-ի ազդեցության նվազեցումը շարունակեց մնալ Վաշինգտոնի քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Նիքսոնը հավատացած էր, որ ԱՄՆ-ն պետք է բարելավի իր հարաբերությունները արաբական աշխարհի, հատկապես՝ Սիրիայի և Եգիպտոսի հետ, որոնք խորհրդային զենքի հիմնական սպառողներն էին հանդիսանում և ամենալուրջ ռազմական վտանգն էին ներկայացնում Իսրայելի համար: Ի տարբերություն իր նախորդի, ամերիկյան նոր նախագահը կարծում էր, որ արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորումը անհնարին է առանց Խորհրդային Միության ակտիվ մասնակցության:

Հարկ է նշել, որ Սպիտակ Տան ղեկավարության մեջ առկա էին լուրջ տարաձայնություններ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վերաբերյալ: Եթե ԱՄՆ պետքարտուղար Ռոջերը կողմնակից էր համընդհանուր արաբա-իսրայելյան կարգավորմանը, որը պետք է ընդգրկեր Իսրայելի հարևան բոլոր երկրները, ապա Քիսինջերը, որը մինչ պետքարտուղար նշանակվելը վարում էր ԱՄՆ նախագահի անվտանգության գծով խորհրդականի պաշտոնը, կողմնակից էր «քայլ առ քայլ» կարգավորմանը[13]: Եթե Ռոջերը կարծում էր, որ անկախ կողմերի միջև գոյություն ունեցող հակասություններից, բանակցությունները պետք է շարունակվեն, ապա Քիսինջրի պատկերացմամբ, բանակցությունները պետք է վարվեին միմիայն այն կողմերի միջև, որոնք պատրաստ են դիմել զիջումների[14]:

Նիքսոնն ու Քիսինջերը հանդես էին գալիս Իսրայելին ռազմական օժանդակության քաղաքականության շարունակման օգտին: Մտահոգված լինելով Մերձավոր Արևելքում միջուկային բախման հնարավորության վտանգից, նրանք սխալմամբ կարծում էին, որ

---

[13] Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996 թթ.), Ե., 2000, էջ 28:

[14] Կարապետյան Ռ., Սիրիայի տեղն ու դերը..., էջ 114;

Իսրայելի ռազմական գերակայության հաստատումը կստիպի նրա արաբ հարևաններին հրաժարվել հակամարտությունը ուժային միջոցներով կարգավորելու գաղափարից: Միևնույն ժամանակ, Նիքսոնն ու Քիսինջերը երկյուղում էին, որ եթե նոր բախման արդյունքում արաբները մեկ անգամ ևս պարտված դուրս գան, ապա Մոսկվան պարտադրված կլինի միջամտել, ինչն էլ անխուսափելիորեն հակամարտության մեջ կներքաշի նաև Միացյալ Նահանգներին:

Ընդհանուր առմամբ, ամերիկաիսրայելյան հարաբերություններում հատուկ տեղ է զբաղեցնում երկքաղաքացիության մասին հարցը: Ամերիկյան օրենսդրության համաձայն, ամերիկացին, ով մասնակցում է մեկ այլ պետության ընտրություններին կամ ծառայում է ռազմական ուժերում կամ պետական համակարգում, կորցնում է ամերիկյան քաղաքացիությունը: Սակայն, 1969 թ. աշնանը ԱՄՆ Բարձրագույն դատարանը ընդունեց մի որոշում, ըստ որի ամերկացիները կարող են ծառայել Իսրայելում՝ առանց քաղաքացիությունը կորցնելու: Իսկ Իսրայելի օրենքների համաձայն, ամերիկացի հրեաները գալով Իսրայել ստանում են Իսրայելի քաղաքացիություն[15]:

Այլ կեպ ասած, ԱՄՆ և Իսրայելի միջև «հատուկ» հարաբեությունները այն մակարդակի էին հասել, երբ Իսայելի անվտանգությունն ու բարեկեցությունը համարվում էր ոչ միայն ամերիկյան անվտանգության կենսական կարևորության մաս, այլև երբ Իսրայելի նկատմամբ հնարավոր վտանգի ժամանակ ամերիկյան ռեակցիան «ավելի բուռն էր, քան եթե հարցը վերաբերեր ՆԱՏՕ-ի որևէ գործընկերոջը»:

ԱՄՆ-ում ակտիվորեն փորձել են ապացուցել, որ Իսրայելը և ամերիկաիսրայելյան հարաբերությունները դարձել են բավականին լուրջ խնդիր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար, քանի որ Իսրայելը դուրս է եկել ԱՄՆ-ի վերահսկողությունից և չի հանաձայնեցնում Մերձավոր Արևելքում իր գործողությունները ամերիկյան քաղաքականության հետ: ԱՄՆ կառավարությունը Իսրայելին դատապարտեց որպես ագրեսոր, ինչպես նաև դեմ բանաձևով կոչ է անում Իսրայելին դուրս բերել իր զորքերը այն տարածքներից, որոնք օկուպացրել է:

---

[15] Дмитриев Е., Ладейкин В., նշվ. աշխ., էջ 170-171:

Փոխարենը ԱՄՆ առաջարկում էր ներկայացնել բանաձևի նախագիծ, կոչ անելով վերսկսել բանակցությունները կողմերի միջև խաղաղության նպատակով[16]:

Այսպիսի հայտարարությունն ունի երկկողմանի նպատակ՝ մի կողմից դա արվում էր որպեսզի Ամերիկայի կառավարությունը իրեն ազատեր Մերձավոր Արևելքում ստեղծված ճգնաժամային իրավիճակի պատասխանատվությունից, ապացուցել ԱՄՆ-ի անմեղությունը Իսրայելի վարած ագրեսիվ և նվաճողական քաղաքականության մեջ, իսկ մյուս կողմից՝ խրախուսում էր իսրայելական ղեկավարների կոշտ, անզիջում դիրքորոշումը նրանց նկատմամբ, ովքեր կապված են արաբահիսրայելյան հակամարտության կարգավորման համար ուղիներ փնտրելու հետ:

Մոտավորապես 1970 թ. կեսերին, երբ Մերձավոր Արևելքում հրադադար էր, ոչ միայն Վաշինգտոնի քարոզչական մեքենան, այլև կառավարության պաշտոնական ներկայացուցիչներն ավելի հաճախակի էին դիմում «թաքնված դիվանագիտության» ներքաղաքական տերմինին[17]: Խոսքը գնում է ամերիկական ադմինիստրացիայի պաշտոնական ներկայացուցիչների գաղտնի կապերի մասին՝ հակամարտող կողմերի պաշտոնական ներկայացուցիչների հետ, որի արդյունքում հնարավոր էր ձեռք բերել փոխհամաձայնեցված պայմանավորվածություն՝ կապված մերձավորարևելյան կարգավորման այս կամ այն հարցի կոնկրետ լուծման հետ:

Ամերիկյան Ադմինիստրացիան, ձգտելով ամրապնդել գաղտնի հարաբերություններ Սաուդյան Արաբիայի հետ, ցանկանում է օգտագործել այդ երկիրը ԱՄՆ քաղաքական և տնտեսական ծրագրերի իրականացման շուրջ համախմբել նաև արաբական մյուս երկրներին:

Խորհրդային Միությունը բազմիցս մատնանշում էր, որ իսրայելյան վերնախավի բացահայտ նվաճողական քաղաքականությունը, որը ԱՄՆ-ի աջակցության վրա էր հենվում, սպառնում էր ոչ միայն Մերձավոր Արևելքի խաղաղությանը և անվտանգությանը, այլև

---

[16] Cattan H., Palestine: The Road to Peace, London 1970, p. 31.

[17] Дмитриев Е., Ладейкин В., նշվ. աշխ., էջ 170-171, 175:

ամբողջ աշխարհին[18]: Դրա հետևանքով Մերձավոր Արևելքում ստեղծվեց նոր պայթյունավտանգ իրավիճակ:

Այսպիսով, շարունակելով իրենց «հովանավորյալների» զինումը, գերտերությունները նպաստում էին տարածաշրջանի էլ ավելի բևեռացմանն ու արաբա-իսրայելյան հգնաժամի խորացմանը:

HAKOBYAN SHAHANE
(IOS)

THE PROBLEM OF SETTLEMENT OF PALESTINIAN ISSUE IN THE CONTEXT OF US-ISRAEL RELATIONS

The article is an attempt to study the US foreign policy, the Camp-David summit of 1978 which was convened to establish peace in the Middle East. The involvement of the United States has significantly affected the evolution of the Arab-Israeli conflict. Nowadays, about thirty years after the Camp-David summit, the Palestinian problem still remains unresolved. In spite of the US diplomatic activity the peace settlement was not reached. The reasons why this crucial problem is still unresolved are the matter of study of this article.

---

[18] Осипов А., США и арабские страны 70-е – начало 80-х годов, М., с. 52.

ՀԱԿՈՐՑԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
(ԱԻ)

ԲՈՒԼՂԱՐԻԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՑԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՑՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՑԻ ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՑԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 1980-ԱԿԱՆ ԹԹ.

Թուրքիայի Հանրապետության սահմաններից դուրս ձևավորված մեծաքանակ թուրքական համայնքները մեծ կարևորություն են ներկայացնում ինչպես հյուրընկալ երկրների, այնպես էլ Թուրքիայի համար: Այդ երկրների շարքում է նաև Բուլղարիան, որտեղ իր ուրույն և հաստատուն տեղն ունի Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնությունը: Այն համարվում է Արևելյան Եվրոպայի ամենաազդեցիկ և ամենահաջողակ փոքրամասնություններից մեկը: Ներկայումս Բուլղարիայի թուրք բնակչության թիվը հասնում է շուրջ 600.000-ի, որը կազմում է երկրի ընդհանուր բնակչության մոտ 10%-ը[1]: Թուրքալեզու բնակչությունն ակտիվ մասնակցություն ունի երկրի հասարակական կյանքում և մեծ դերակատարում ինչպես Բուլղարիայի ներքին և արտաքին քաղաքականությունում, այնպես էլ բուլղարաթուրքական հարաբերություններում[2]: Սակայն բուլղարաթուրքերի նկատմամբ իշխանությունների քաղաքականությունը ոչ միշտ է եղել հանդուրժողական: Ելնելով տարբեր հանգամանքներից՝ բուլղարական կառավարությունը թուրքալեզու փոքրամասնության նկատմամբ կիրառել է ինչպես իրավունքների սահմանափակման, այնպես էլ ձուլման քաղաքականություն, որի հիմքը դրվեց Բուլղարիայում խորհրդային կարգերի հաստատմամբ:

---

[1] Национален Статистически Институт, 2011, Население по местоживеене, възраст и етническа група, http://censusresults.nsi.bg/Census/Reports/2/2/R9.aspx

[2] Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է 1990 թ. ի վեր Բուլղարիայի խորհրդարանում բուլղարաթուրքերի հիմնած «Իրավունքների և ազատությունների շարժում» (ԻԱՇ) կուսակցության ներկայությամբ: 2013 թ. մայիսի 13-ի ընտրությունների արդյունքում ԻԱՇ-ն ստացավ ընտրողների ձայների 11%-ը, ինչը հնարավորություն տվեց օրենսդիր անցնել ԻԱՇ-ի 36 անդամի, http://results.cik.bg/pi2013/rezultati/index.html

1944 թ. խորհրդային բանակի ստորաբաժանումների մուտքի հետ Բուլղարիայում հաստատվեցին խորհրդային կարգեր: Չնայած այն հանգամանքին, որ 1947 թ. ընդունված սահմանադրությունը սահմանում էր փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, այնուամենայնիվ, 1960-ական թթ. փակվեցին թուրքական դպրոցները, գրեթե չկար թուրքերենով մամուլ և տպագրություն: Ընթանում էր բուլղարաթուրքերի «բուլղարացման գործընթաց»[3]:

Բուլղարիայի կոմկուսի առաջնորդ Տոդոր Ժիվկովի օրոք ընդունված 1971 թ. սահմանադրությամբ էլ ավելի սահմանափակվեցին բուլղարաթուրքերի իրավունքները, իսկ որ ամենակարևորն է, ըստ այս սահմանադրության 45-րդ հոդվածի «ազգային փոքրամասնություն» անվանումը փոխարինվեց «ոչ բուլղարական ծագմամբ քաղաքացիներ» անվամբ[4]:

Բուլղարաթուրքերի նկատմամբ իշխանությունների վարած անհանդուրժողական քաղաքականությունն իր գագաթնակետին հասավ 1984 թ., երբ իշխանությունների կողմից որոշում կայացվեց անցնել թուրք բնակչության ձուլման քաղաքականությանը: Հետաքրքրական է, որ այս քաղաքականությունից դեռևս մի քանի տարի առաջ բուլղարական իշխանությունները բացառել էին նման քաղաքականության կիրառումը՝ այն համարելով անհեթեթ և վտանգավոր: Բացի այդ, Տոդոր Ժիվկովն անձամբ էր նշել, որ այն կարող է մեծ վտանգ ներկայացնել երկրի համար և Բուլղարիայի թուրքերի մոտ հանգեցնել կրոնական մոլեռանդության և ազգայնականության[5]: Այնուամենայնիվ որոշումը կայացված էր, իսկ դրա համար Բուլղարիայի իշխանությունները, հանձին կոմկուսի առաջնորդի, ունեին իրենց պատճառները: Նախ, բուլղարաթուրքերի վերարտադրման բարձր ցուցանիշները, որոնք, տարբեր տվյալների համաձայն, տատանվում էին 900.000-1.5 մլն., պարզապես

---

[3] Նահապետյան Հ., Բուլղարաթուրքեր. Անկարայի 5-րդ շարասյունը, 21-րդ ԴԱՐ, թիվ 1 (15), 2007 թ., էջ 81:

[4] Karadjov A., The Turkish Minority in Bulgaria and the Revival Process, The Construction of a Political Minority, Budapest, 2011, p. 65.

[5] The Human Rights of Muslim in Bulgaria in Law and Politics since 1878, Bulgarian Helsinki Committee, Sofia, November 2003, p. 73.

սարսափեցնում էին բուլղարական իշխանություններին, քանի որ ժամանակի ընթացքում կարող էին սպառնալ երկրի ներքին անվտանգությանը[6]: Հաջորդ կարևոր հանգամանք էր հանդիսանում այդ տարիներին ձևավորված «Կիպրոսյան սինդրոմը»՝ Բուլղարիայում Կիպրոսյան ճակատագրի վտանգը[7], քանի որ մեծաքանակ թուրքալեզու բնակչության իրավունքների պաշտպանության պատրվակով Թուրքիան կարող էր հասնել նաև Բուլղարիայի մասնատմանը: Այս ամենին լրացնելու եկավ 1985 թ. Բուլղարիայի ԳԱԱ գիտնականների և իշխանության կողմից առաջ քաշած տեսությունը, ըստ որի՝ բուլղարաթուրքերը համարվում էին բուլղարացիներ, որոնք Օսմանյան կայսրության տարբեր ժամանակաշրջանում մահմեդականացվել են և յուրացրել թուրքերեն լեզուն[8]: Հատկանշական է, որ այս վարկածը շրջանառվում էր նաև Թուրքիայում, որտեղ տարբեր աղբյուրներ հաստատում էին այն տեսությունը, որ Բուլղարիայի թուրք բնակչության զգալի մասը կրոնափոխ եղած քրիստոնյաներ են: Այս խնդրին անդրադարձ էր կատարվել դեռևս 19-րդ դարում. Օսմանյան կայսրության Մեծ վեզիր Միդհաթ փաշան 1878 թ. ֆրանսիական ամսագրերից մեկում գրել էր. «Բուլղարացիների շրջանում բնակվում է ավելի քան մեկ միլիոն մահմեդական: Այդ մահմեդականները չեն եկել Ասիայից, որպեսզի հաստատվեն Բուլղարիայում: Նրանք նույն այն բուլղարացիների ժառանգներն են, որոնք նվաճման ժամանակաշրջանում և հետագա տարիներին ընդունել են իսլամ: Նրանք նույն երկրի զավակներն են, պատկանում են նույն ռասային և նույն արմատներն ունեն»[9]:

---

[6] Maeva M., The Revival Process and its Influence on Bulgarian Turks Identity in Turkey, Nationalism, Society and Culture in post-Ottoman South East Europe, SEESP, Oxford, 2004, http://www.sant.ox.ac.uk/esc/esc-lectures/maeva.pdf

[7] Maeva M., նշվ. աշխ.:

[8] Çelik N., The Political Participation of Turkish Minority in Bulgaria the Public Reaction: The Case of Movement for Rights and Freedoms (1990-1994), Karadeniz Anlaştırmaları, Cilt 6, Sayı 22, 2009, p. 5.

[9] Can T., Todorov M. Stilyanov, Turks of Bulgaria: Assimilation Policy and Linguistic Oppression, Syracuse University, 2004, http://www.ingilish.com/turksofbulgaria.htm

1980-ական թթ. նպաստավոր պայմաններ ստեղծվեցին բուլղարական իշխանությունների համար՝ իրականացնելու բուլղարաթուրքերի ձուլման քաղաքականությունը: Տոդոր Ժիվկովը կարող էր ապավինել Խորհրդային Միության ռազմական ներուժին և միևնույն ժամանակ զերծ մնալ վերջինիս վերահսկողությունից: Ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա 1980 թ. ռազմական հեղաշրջման հետևանքով երկրում տիրող իրավիճակը, այդ տարիներին քրդերի դեմ մղվող պայքարը, ինչպես նաև Բուլղարիայի և Թուրքիայի միջև փակ սահմանները վերջինիս կզրկեին թուրք փոքրամասնությանը օգնության հասնելու հնարավորությունից[10]:

Վճռական գործողությունների անցնելու համար առիթ հանդիսացան 1984 թ. օգոստոսի 30-ին Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի կայարանում և Վառնայի օդանավակայանում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները, որոնք, ըստ Տոդոր Ժիվկովի, իրականացվել էին Բուլղարիայի թուրքերի կողմից[11]:

1984 թ. հունիսի 19-ի Բուլղարիայի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քաղխորհրդի որոշմամբ սկիզբ դրվեց բուլղարաթուրքերի ձուլման քաղաքականությանը, որն իրականացվելու էր Բուլղարիայի կոմունիստական կուսակցության և Ներքին գործերի նախարարության վերահսկողությամբ[12]: 1984 թ. դեկտեմբերի 10-ին Բուլղարիայի Ներքին գործերի նախարար Դ. Ստոյանովի հրամանով մեկնարկում է թուրք բնակչության բռնի անվանափոխության գործընթացը, որն իրականացվեց ոստիկանության, բանակի ստորաբաժանումների անմիջական մասնակցությամբ: Անվանափոխության մեկնարկը տրվեց Քըրջալիի շրջանից, որտեղ թուրքերը կազմում էին բնակչության 90%-ը[13]: Այն

---

[10] Dimitrov V., In Search of a Homogeneous Nation: The Assimilation of Bulgaria's Turkish Minority, 1984-1985, Journal on Ethnopolitics and Minority Issues in Europe, UK, 2000, http://www.ecmi.de/fileadmin/downloads/publications/JEMIE/JEMIE01Dimitrov10-07-01.pdf

[11] Çelik N., նշվ. աշխ., էջ 5:

[12] Maeva M., նշվ. աշխ.:

[13] Minority Rights in Bulgaria and Greece, and the Impact of European Integration Process, p. 114.

անձիք, ովքեր հրաժարվում էին նոր անձնագրից, զրկվում էին հետագայում աշխատավարձ, թոշակ ստանալու, բանկում գործարքներ կատարելու հնարավորությունից[14]: 1985 թ. հունվարի 14-ի դրությամբ ավելի քան 315.000 թուրքեր անվանափոխվեցին, որոնցից 214.000՝ Քըրջալի շրջանում, 41.000՝ Հասկովի շրջանում, 22.000՝ Պլովդիվի շրջանում, 5.000՝ Փազարջիկ շրջանում, 35.000՝ Սիլիստրա շրջանում, 11.000՝ Ստառա Զագոռա շրջանում, 9000՝ Բուրգասի շրջանում, 3000՝ Բլագոևգրադ շրջանում: 1985 թ. հունվարի դրությամբ Բուլղարիայի հարավային շրջաններում անվանափոխության գործընթացն ամբողջովին ավարտված էր[15]:

Շարունակելով ձուլման քաղաքականությունը՝ 1986 թ. ապրիլին իշխանության կողմից ընդունվեց օրենք հասարակական վայրերում թուրքերենն արգելելու վերաբերյալ, իսկ օրինախախտներին սպասվում էր տուգանք 5 լևա (այն համազոր է 5 ԱՄՆ դոլարի) չափով: Սահմանափակվեցին իսլամական արարողությունները, արգելվեց լսել թուրքական երաժշտություն, կրել ավանդական մահմեդական հագուստ, արգելվեց նույնիսկ թլպատումը: Արգելվեցին բոլոր թուրքական թատրոնների, մշակութային կազմակերպությունների գործունեությունը[16], տուգանքից մինչև ազատազրկման էին ենթարկվում այն ուսուցիչները, որոնք շարունակել էին թուրքերենի դասավանդումը: Դադարեցվեց մզկիթների գործունեությունը, իսկ կրոնական կառույցների համագործակցությունը միջազգային

---

http:www.openstarts.units.it%2Fdspace%2Fbitstream%2F10077%2F8629%2F1%2Ftahir_phd.pdf&h=dAQE1ZGGj

[14] Zahariev B., The Treatment of Ethnic Turks by the Bulgarian Communist Party and their Status Quo, p. 17.
http:www.ithaca.edu%2Fhs%2Fdepts%2Fhistory%2Fdocs%2Fhistjourndocs%2Fspring04%2Fturkishminorities.pdf&h=dAQE1ZGGj

[15] Marushikova E., Popov V., The Muslim Minorities in Bulgaria, p. 47.
http:Fwww.balkanethnology.org%2Ffiles%2Flibrary%2FE%2520%26%2520V%2FMuslims.pdf&h=dAQE1ZGGj

[16] Petkova L., The Ethnic Turks in Bulgaria: Social Integration and Impact on Bulgarian-Turkish Relations, 1947-2000, The Global Review of Ethnopolitics, Vol. 1, № 4, June 2002, p. 47.

մահմեդական կրոնական կառույցների հետ դրվեց պետական վերահսկողության տակ և հասցվեց նվազագույնի[17]:

Ի պատասխան Տոդոր Ժիվկովի քաղաքականության, Թուրքիան դիվանագիտական արշավ սկսեց Բուլղարիայի դեմ, ինչը հանգեցրեց վերջինիս մեկուսացմանը ՄԱԿ-ում և Եվրախորհրդարանում[18]:

Միջազգային կառույցները, ինչպիսիք են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, խիստ քննադատեցին Բուլղարիայի իշխանությունների քաղաքականությունը: 1988 թ. մարտի 21-25-ը Ամանում ընթացող ԻԿԿ վեհաժողովը դատապարտեց բուլղարական իշխանությունների քաղաքականությունը և հիշեցրեց, որ Բուլղարիան պարտականություններ ունի իր փոքրամասնությունների իրավունքների հանդեպ: 1989 թ. հունվարին Վիեննայում ԵԱՀԿ անդամ երկրներից ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդներն ու Թուրքիան խիստ քննադատության ենթարկեցին Բուլղարիայի իշխանություններին, սակայն վերջիններս չընդունեցին իրենց մեղքը՝ նշելով, որ իրենց երկրում գոյություն չունեն ազգային փոքրամասնություններ[19], իսկ ի պատասխան Թուրքիայում ընթացող բողոքի ցույցերի՝ բուլղարական կառավարությունը Բուլղարիայի թուրք հյուպատոսին հիշեցրել էր 1915 թ. Օսմանյան կայսրությունում ցեղասպանության զոհ դարձած 1,5 մլն հայերի մասին[20]:

1980-ական թթ. բուլղարաթուրքերի դեմ ուղղված քաղաքականությունը հակառակ ազդեցություն ունեցավ Բուլղարիայի թուրք փոքրամասնության համար: Թուրքերի մոտ ուժեղացան ազգայնական զգացումները, նրանց մոտ ցանկություն առաջացավ վերադառնալու իրենց մոռացված ավանդույթներին, հայացք ուղղել դեպի անցյալը, դեպի իրենց արմատները և ապացուցել իրենց թուրք էթնիկական պատկանելիությունը[21]:

---

17 The Human Rights of Muslim in Bulgaria in Law and Politics since 1878, p. 72.

18 Minority Rights in Bulgaria and Greece and the Impact of European Intagration Process, p. 116.

19 The Human Rights of Muslim in Bulgaria in Law and Politics since 1878, p. 76.

20 Նույն տեղում, էջ 76:

21 Dimitrov V., նշվ. աշխ.:

Այսպիսով, 1980-ական թթ. բուլղարական իշխանությունների իրականացրած ձուլման քաղաքականությունը չարդարացրեց վերջիններիս սպասելիքները: Բուլղարաթուրքերը չվերադարձան իրենց «բուլղարական արմատներին», շարունակեցին իրենց վերարտադրման բարձր ցուցանիշը, ինչը հնարավորություն տվեց վերջիններիս հետագայում լուրջ դերակատարում ունենալ երկրի ներքին և արտաքին քաղաքականությունում, դառնալ Անկարայի 5-րդ շարասյունը և վերջապես Սոֆիայի խորհրդարանում «մեծ ավանդ» ունենալ Հայոց ցեղասպանության օրինագծի ընդունման, տապալման գործում:

HAKOBYAN VAGHARSHAK
(IOS)

THE POLICY OF BULGARIAN GOVERNMENT TOWARDS TURKISH-SPEAKING MINORITY OF BULGARIA IN THE 1980s

In the 1980s the demographic boom of the Turkish-speaking population in Bulgaria horrified the authorities in Sofia. The birth rate of the Turkish-speaking minority would endanger national security of Bulgaria and leaders felt threatened by the "Cyprus Scenario". To resolve this problem, the Bulgarian government decided to hold assimilation policy. Hundreds of thousands of Turks were forced to change their names. The replacement of the names was followed by the law of prohibitions to speak Turkish in public places, to practice Islamic customs and rituals, to listen to Turkish music and to wear traditional Muslim clothing.

АМБАРЯН ГАГИК
(ГТПИ)

ТАЛЫШСТАН И ЛЕЗГИСТАН: КОНФЛИКТОГЕННЫЕ РЕГИОНЫ АЗЕРБАЙДЖАНА

В начале XX в. на Южном Кавказе, в результате стечения многих обстоятельств, была образована Азербайджанская республика, которая включила в себя не только территории Армении (Нахичевань, Равнинный и Нагорный Арцах), но и регионы, где компактно проживали другие народы (лезгины, талыши, удины, ингилойцы и др). Например, один из лидеров Белого движения генерал А. Деникин в своих "Очерках русской смуты" писал: " Все в Азербайджанской республике было искусственным, "не настоящим", начиная с названия взятого взаимообразно у одной из провинций Персии. Искусственная территория, обнимавшая лезгинские Закаталы, армяно-татарские Бакинскую и Елисаветспольскую губернии и русскую Мугань и объединенная турецкой политикой в качестве форпоста пантюркизма и панисламизма на Кавказе. Искусственная государственность. Наконец, искусственно держалось и азербайджанское правительство: первоначально - волею Нури-паши, потом – генерала Томсона и в дальнейшем – просто по инерции"[1]. Впоследствии руководство Советского Азербайджана начало проводить политику ассимиляции коренных народов республики «превращая» их в тюрок. Однако, политика "гласности и демократии" провозглашенная последним руководителем СССР М. Горбачевым, привела к расцвету национального самосознания у многих народов населяющих Советский Союз, в результате чего на территории огромной империи, в последние годы ее существования, вспыхнули межнациональные конфликты. Больше всего таких конфликтов вспыхнуло в Закавказье (армяно-азербайджанский конфликт в НКАО Азербайджана, абхазский и югоосетинские конфликты в Грузии). Однако кроме этих конфликтов в Грузии и

---

[1] См. Гаджиев К., Геополитика Кавказа, М., с. 102.

Азербайджане есть так же конфликтогенные регионы, которые представляют еще большую опасность для этих стран, чем существующие конфликты.

В этой статье рассмотрим ситуацию в конфликтогенных регионах Азербайджана – Лезгистане и Талышстане.

Лезгистан – занимающая юго-восточную часть большого Кавказского хребта горная область, где веками проживают лезгины. В процессе образования государств и изменений границ, лезгинский народ оказался разделенным по реке Самур между двумя странами – Россией (к Лезгистану относится ряд районов южного Дагестана) и Азербайджаном. Здесь лезгины компактно проживают на северо-востоке республики (в Кусарском, Кубинском, Хачмасском, Габалинском, Огузском, Шекинском и Гахском районах)[2].

В годы советской власти азербайджанские лезгины подвергались всяческим гонениям, в республике шел процесс насильственной ассимиляции лезгин. После принятия Конституции 1936 г. государственным языком народов, населяющих многонациональный Азербайджан, был утвержден азербайджанский , вследствие чего в школах лезгинских районов было упразднено преподавание лезгинского языка. После принятия новой конституции и обмена паспортов представителей многочисленных народностей постарались записать азербайджанцами. В результате этой операции более 500 тыс. (по другим данным 300тыс.) лезгин приняли новое этническое название – азербайджанец. Те, у кого в графе «национальность» значилось «лезгин», с конца 30-х до середины 50-х гг. XX в. за обучение в средних и высших учебных заведениях должны были платить специальный налог в размере 440 рублей[3].

Почти полностью было уничтожено и культурное наследие лезгинского народа. Действовавший с 1906 г. в Баку Национальный лезгинский театр был закрыт, а построенная еще в 1169 г. в том же Баку «Лезги мечеть» по решению азербайджанских властей была

---

[2] http://wikipedia.org/wiki/лезгины#cite-note-11

[3] Lez.wikipedia.org/wiki/ Лезги-чlал

переименована в «Мечеть XII века»[4]. Для выдавливания лезгинского населения из республики бакинские правители абсолютно не обращали внимание на социально-экономическую ситуацию в районах компактного проживания этого этноса. Уровень жизни на северо-востоке Аз. ССР был самым низким в республике.

Еще в начале 1960-х годов, в среде лезгинских студентов Дагестана зародилось движение "Садвал" ("Единство"). Ее главной целью была защита и продвижение интересов лезгинского народа. Когда Советский Союз находился на грани краха "Садвал" начала выступать как политическая организация. 28 сентября 1991г. в селе Касумкент в Дагестане состоялся 3-й съезд лезгинского народа, на котором была принята Декларация о восстановлении государственности лезгинского народа в пределах Российской Федерации. Это решение не вызвало восторга у Баку, что породило еще большую напряженность между азербайджанцами и лезгинами.

Во время карабахской войны на первую линию направлялись не азербайджанские военные, а солдаты набранные из национальных меньшинств, в том числе и лезгин. В результате лезгины отказались воевать в рядах национальной армии Азербайджана[5]. В конце февраля 1992 г. азербайджанское правительство приняло решение о строительстве трубопровода Самур-Апшерон, по которому вода из Самура – единственной крупной реки во всем Лезгистане – доставаляются в Баку и Сумгаит. Из-за этой политики река Самур очень сильно обмелела, в результате чего Мюшкюрская долина, где проживают более 100 тыс. лезгин лишилась единственного источника воды.

Под патронажем "Садвала" лезгины начали борьбу за самоопределение. 6 апреля 1992 г. в Москве прошла демонстрация лезгин, которые требовали от руководства РФ защиты их прав и интересов в Азербайджане. 3 июля 1993 г. организация "Садвал" получила официальную регистрацию в Минюсте Дагестана[6]. Активизация членов этой организации и попытки втянуть РФ во

---

[4] Ванюков Д., Веселовский С., Непризнанные государства, М., 2011, с. 29.

[5] Նույն տեղում, էջ 30:

[6] http://wikipedia.org/wiki/Лезгины

внутренние дела Азербайджана вызвали резкую реакцию у Баку. В мае 1996 г. 11 членов "Садвала" были осуждены на закрытом процессе за организацию взрыва в бакинском метрополитене в 1994 г[7]. Организация была объявлена вне закона на территории Азербайджана. Нужно так же отметить, что многие политические деятели и эксперты в Азербайджане считают "Садвал" детищем спецслужб РФ. Они предполагают, что с помощью этой организации Москва дестабилизирует ситуацию на северо-востоке республики и создает для себя еще одну возможность (первое- НК конфликт) для вмешательства во внутренние дела Азербайджана. Лезгинский вопрос вновь всплыл в российско-азербайджанских отношениях, когда президенты двух стран-Д. Медведев и И. Алиев 3 сентября 2010 года подписали «Договор о государственной границе между двумя государствами» по которому два села Магарамкентского района Дагестана Храх-Уба и Урьян–Уба отошли к Хачмазскому району Азербайджана вместе с лезгинами-гражданами РФ(более 450 человек)[8]. Это решение лидеров двух государств вызвало шквал резкой критики со стороны лезгинских организаций действующих в РФ («Садвал», «Федеральная Лезгинская Национально-Культурная автономия» и др.). Однако российская сторона устами посла РФ в Азербайджане Василия Истратова подтвердила, что считает сёла Храх-Уба и Урьян-Уба территорией Азербайджана[9]. Однако жители села Храх–Уба 8 февраля 2011 года провели в Махачкале митинг, где высказали недовольство руководством Азербайджана, которая от них требует принятия азербайджанского гражданства под угрозой депортации без выплаты компенсаций за имущество и земельные участки[10]. 26 декабря 2012 г. Правительство Дагестана выделило 900 миллионов рублей на переселение лезгин из этих двух сёл Азербайджана

---

[7] Четерян В., Малые войны и большая игра, Е., 2003, с. 72.

[8] МИД РФ: Граница между Россией у Азербайджаном определена как по дну Каспийского моря, так и по суще. www.регнум.рф/news/1373956.html

[9] Посол России: села Храхоба и Урьяноба пренадлежат Азербайджану. www.deyerler.org/ru/25636/-posol-rossii-sela-urjanoba-khrakhoba.html

[10] Жители российского анклава в Азербайджане провели митинг в Махачкале. www.lenta.ru/news/ 2011/02/08/hrahuba

в Россию[11]. В июне 2013 года Федеральная Лезгинская Национально-Культурная Автономия (ФЛНКА) сообщила о том, что РФ снова отдала часть территории Дагестана Азербайджану. Российские власти отдали соседнему государству три больших участка с горными пастбищами которые для выпаса скота и сельскохозяйственных нужд использовали местные жители-лезгины.По данным ФЛНКА передача этих территорий Азербайджану произошло после состоявшегося в мае 2013 г. совместного заседания российско-азербайджанской комиссии по демаркации государственной границы. Вице-президент ФЛНКА Сабир Мамедов и руководитель Докузпаринского района Дагестана Аббасов выступили с протестом, однако дипломаты из МИД РФ заявили: «Всё уже решено....»[12]. В июне 2013 г. резко обострилась ситуация в Дербенте, местная власть решила переименовать одну из улиц города в честь покойного президента Азербайджана Гейдара Алиева. Этому воспротивились местные лезгины и поддерживающие их «Садвал» и ФЛНКА. Митинг организованный местными лезгинскими активистами против этой затеи властей был жестоко пресечён местной милицией и эмиссарами из Баку[13]. Репрессии в отношении ФЛНКА, которая в последние два-три года очень активно защищала интересы лезгинского меньшинства в Азербайджане не заставили себя долго ждать. Баку считает ФЛНКА ангажированной российскими властями и подрывающей суверенитет Азербайджана. В августе 2013 года, за несколько дней до визита президента РФ в Баку, в Азербайджане были арестованы родственники руководителей ФЛНКА Арифа Керимова и Амиля Саркарова .Двое из трёх задержанных граждане РФ. Всем им предъявлены обвинения в хранении наркотиков. За это они могут провести в тюрьме от 7 до 12 лет. 4 сентября 2013 года журналист Максим Шевченко на заседании Совета по правам человека при президенте РФ назвал арест вызовом для России и лично президенту

---

[11] Дагестану понадобилось 900 миллионов на переселение лезгин из Азербайджана. www.lenta.ru/news/2012/12/26/resettlement/

[12] Словецкий В., Территориальные отступники. Россия продолжает раздачу своих земель. www.svpressa.ru/society/article/69118/

[13] Курбанов Х., Дербентский митинг. Шаг назад. www.lezgistan.tv/novosti/derbentskij-miting-shag-nazad/

страны. В. Путин тут-же дал поручение МИД-у разобраться с арестами российских предпринимателей в Азербайджане. Однако до сих пор они находятся в бакинских застенках[14].

Что касается демографической ситуации в лезгинонаселенных районах, то здесь ситуация неоднозначна. Почти все лезгинские национальные и земляческие организации, а так же многие независимые эксперты обвиняют власти Азербайджана в грубых фальсификациях. Согласно первой переписи населения Российской империи от 1897 г., на территории, которая позже вошла в состав Азербайджана, проживало 64тыс. лезгин. В дальнейшем численность лезгин увеличивалась как за счет миграции из Дагестана в азербайджанские города, так и за счет естественного прироста. Однако, если верить официальной статистике за последние 20 лет (с 1989 – 2009 гг.) их численность увеличилась только на 6%. То есть, если в 1989 г. их было 171400 человек, то в 2009 г. лезгин в Азербайджане стало 178тыс[15]. При этом по данным представителей лезгинских национальных движений, реальная численность лезгин Азербайджана составляет 600-800 тыс. человек, дагестанские демографы отмечают цифру 450 тыс., а независимые азербайджанские эксперты считают, что у них проживает 250-260 тыс. человек[16].

Талышстан – горная страна на юго-западе Каспийского моря, где уже много веков живет один из древнейших народов в Азии – талыши. Как и лезгины, так и талыши в результате политических пертурбаций оказались по разные стороны государственных границ. В XVIII в. Талышстан был независимым ханством со столицей в городе Ленкорань. В 1813 г. северная часть ханства была присоединена к России, а южная часть осталась в составе Ирана. В 1919 г. на территории ханства была провозглашена Муганская Советская республика. Просуществовала она недолго – всего три месяца. После утверждения конституции 1936 г. и создания на Южном Кавказе трех независимых республик, Талышстан

---

[14] Болотникова С., Лезгинские заложники российско-азербайджанских отношений. www.bigcaucasus/events/today/09-09-2013/86188-lezgin-putin-baku-0/

[15] Щахбанов М., Дагестанцы и чудеса азербайджанской арифметики. www.regnum.ru/news/1458816.html

[16] Искандарян А., Миграции на Кавказе, Е., 2003, с. 100.

был признан частью Азербайджанской ССР. Как и все другие национальные меньшинства, так и талыши были подвергнуты насильственной ассимиляции. В 1939 г. в Азербайджане были закрыты все талышские школы, а многие представители талышской интеллигенции были арестованы. При смене паспортов многие талыши были записаны как азербайджанцы. Во время переписи населения СССР от 1959, 1970 и 1979 годов талыши вообще не фиксировались как нация[17].

Расцвет самосознания среди талышей произошел в последние годы существования СССР. Во второй половине 80 гг. XX в. в республике был создан Народный Фронт Азербайджана (НФА) одним из лидеров которого был ленкоранский автоинженер Алякрам Гумматов. По инициативе А. Гумматова и талышского поэта Али Насира, в программу Ленкоранского отделения Народного Фронта в 1989 г. было включено положение о создании автономии в талышских районах[18]. 11 января 1990 г. в ходе антисоветских волнений в Азербайджане Гумматов во главе местного отделения НФА сверг Советскую власть в Ленкорани и на протяжении 10 дней возглавлял город, после чего был арестован советскими правоохранительными органами.

Во время политического кризиса в июне 1993 г. А. Гумматов поддержал мятежного полковника С. Гусейнова. 21 июня 1993 г. А. Гумматов выступил по Ленкоранскому телевидению, объявив о создании Талыш-Муганской Автономной Республики в составе Азербайджана (ТМАР). ТМАР была провозглашена на территории 7 районов юго-восточного Азербайджана (Астаринский, Ленкоранский, Лерикский, Ярдымлынский, Джалилабадский, Нефтечалинский и Массалинский районы) площадью 4659 км² [19]. 7 августа открывалось заседание Милли Меджлиса ТМАР, которое одобрило создание Талыш-Муганской Республики. На том же собрании Милли Меджлиса президентом автономной республики был избран А. Гумматов, назначен председатель Милли Меджлиса Фахраддин Аббасов и премьер-министр Рафик

---

[17] Նույն տեղում, էջ 100:

[18] Шнирельман В., Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье, М., 2011, с. 118.

[19] http://wikipedia.org/wiki/Талышстан

Ходжаев. Был принят конституционный закон, учреждены гимн, флаг и другие атрибуты автономной республики. Для поддержки новой власти в регионе была создана трехтысячная национальная гвардия, во главе с начальником оперативного отдела 704 войсковой части Эльманом Османовым[20]. 16 августа 1993 г. и. о. президента Азербайджана Г. Алиев созвал внеочередную сессию Милли Меджлиса Азербайджана, посвященную событиям в талышском регионе. Меджлис обвинил А. Гумматова в сепаратизме (хотя ТМАР была провозглашена в составе Азербайджана) и принял постановление, согласно которому на юге республики в течение трех дней должны быть "восстановлены конституционные законы". 23 августа по призыву Г. Алиева в Ленкорани был организован антигумматовский митинг, в котором участвовало до «10 тысяч» человек. Ворвавшиеся в здание горисполкома митингующие не обнаружили там А. Гумматова. В это время он находился в штабе 704 военной части. Узнав об этом протестующие направились туда, взломали дверь и ворвались на территорию части. Солдаты в начале открыли огонь, в результате чего было убито 3 и ранено 5 человек. Для предотвращения кровопролития по приказу А. Гумматова огонь был прекращен, а он скоро покинул город. 24 августа 1993 г. Талыш-Муганская республика была упразднена. Дальнейшая судьба лидера талышей А. Гумматова сложилась драматично: 9 декабря 1993г. он был арестован, но спустя год ему удалось бежать из СИЗО Министерства Национальной безопасности. Второй раз Гумматов был арестован 7 августа 1995 г., а в феврале 1996г. трибунал его приговорил к смертной казни. В 2003 г. над А. Гумматовым состоялся повторный суд, который приговорил его к 15 годам лишения свободы.Под давлением европейских стран и правозащитных организаций президент Азербайджана Ильхам Алиев 3 сентября 2004 г. помиловал Гумматова, однако лишил его азербайджанского гражданства и выслал в Нидерланды[21].

Азербайджанское руководство не церемонится и с другими представителями талышской интеллигенции и активистами талышского

---

[20] Ванюков Д., Веселовский С., Непризнанные государства, М., 2011, с. 33-34.

[21] Նույն տեղում, էջ 35:

национального движения. Известный талышский ученый, политолог и общественный деятель Фахраддин Абосзода, который считался вторым человеком в ТМАР подвергался гонениям после упразднения автономии и вынужден был бежать в Россию. В мае 2005 г. по приглашению Ереванского Госуниверситета и Центра иранских исследований приехал в Ереван и принял участие в Первой международной конференции по талышским исследованиям[22]. После принятия в Азербайджане акта об амнистии, в конце 2005 г. Ф. Абосзода вернулся на родину и начал издавать газету «Шавнышт» ("Ночные посиделки") В 2007 году против него было возбуждено уголовное дело по обвинению в разжигании межнациональной розни. Поводом послужила публикация в газете "Шавнышт" заявления правления Талышского национального движения с протестом против переименования талышского села Озибижон на тюркское название Гюнешли[23]. Однако, мы считаем, что это уголовное дело было местью официального Баку из-за его позиции в отношении истории Азербайджана. Абосзода рассматривает Азербайджан как искусственное образование-«незаконно рожденное дитя России, выброшенное на арену истории...[24]. Трагичнее сложилась судьба еще одного лидера талышского национального движения Новруза Мамедова - издателя газеты «Талыши садо» («Голос Талыша»). В 2007 г. по приказу азербайджанских властей он был арестован и осужден к 10 годам тюремного заключения по обвинению в государственной измене. Спустя 2,5 года после ареста Н.Мамедов скончался в бакинской тюремной больнице[25].

По нашему мнению больше всего в нестабильности в регионе Талыш-Мугана заинтересован соседний Иран. Таким образом Тегеран отвечает Азербайджану за то, что Баку поддерживает сепаратистские движения среди тюрок-азербайджанцев компактно проживающих на северо-западе Ирана (по независимым данным в Иране проживают от 25-30 млн.

---

[22] Сармакешян Г., В эфире-«Голос Талышстана». www.golosarmenii.am/ru/20384/world/25661

[23] Амелина Я., Ставка на талышей.www.rosbalt.ru/main/2005/08/03/220114html

[24] http://ru.wikipedia.org/wiki/ Абосзода_Фахрадин_note-D0.90.D0.BC.D0.B5.D0.BB

[25] Меджид Ф., Азербайджане в тюремной больнице скончался главвред газеты «Толыши садо».www.kavkaz-uzel.ru/articles/158085/

азербайджанцев). Официальный Тегеран категорически отверг свою причастность к этим событиям. Однако, несмотря на официальные заявления Тегерана о своей непричастности к событиям на юге Азербайджана, в последние 2-3 года именно иранские интернет ресурсы (например – "аранньюз.ир", ФАРС, "кавказ.ир" и др), которые контролируются госорганами, стали рупором для лидеров нацменьшинств Азербайджана (в основном талышей) выдворенных за пределы страны и не имеющих право легально действовать в Азербайджане. Так, 27 октября 2011г. иранский сайт «кавказ.ир» поместил статью под заголовком "Азербайджан объявил войну талышам", где подробно описывается ситуация в юго-восточном регионе Азербайджана и сообщается, что «учредитель Талыш-Муганской республики» А. Гумматов, который после выхода из азербайджанской тюрьмы живет на Западе, будет приглашен в Иран иранскими талышами и общественными организациями[26]. Арест и смерть Новруза Мамедова не сломили талышскую интеллигенцию. Новым главным редактором «Толыши садо» стал Гилал Мамедов –талышский правозащитник и оппозиционный журналист, который стал известен благодаря песне «Ты кто такой? Давай до свидания» размещённом на YouTube и набравшем большое количество голосов. В октябре 2010 года Г.Мамедов посетил Москву и провёл несколько репортажей с такими талышскими деятелями как Исмаил Шабанов и Мазаир Ахадов. Активная политическая деятельность главного редактора «Толыши садо» и его оппозиционность к алиевскому режиму предрешили его судьбу. 21 июня 2012 года в Баку сотрудники МВД Азербайджана арестовали Г.Мамедова за хранение 33 граммов наркотиков(героина). 4 июля против него были выдвинуты новые обвинения –в государственной измене(из-за встречи с талышами из Ирана) и разжигании национальной, расовой, социальной и религиозной ненависти. Такие международные организации как Amnisty International, Human Rights Watch и ПАСЕ посчитали арест Г.Мамедова

---

[26] Иранск сайт: Азербайджан объявил войну талышам.
www.panorama.am.ru/politics/2011/10/27/khafkaz-irazers-talish/

политически мотивированным[27]. Начавшийся 9 января 2013 года в Бакинском суде процесс над Мамедовым закончился 27 сентября 2013 года приговором по которому представитель талышской интеллигенции должен провести 5 лет в колонии строгого режима. Многие правозащитные организации осудили азербайджанские власти за столь суровый приговор[28].

Не лучшим образом обстоят дела и с демографической ситуацией в районах компактного проживания талышей. Как в ситуации и с другими нацменьшинствами в Азербайджане, так и с талышами, официальные власти прибегают к фальсификациям относительно их численности. По переписи от 1989 г. в республике проживало 21200 талышей, а по переписи 1999 г. их число достигло 76800 человек[29]. Однако многие эксперты и демографы считают эту цифру явно заниженной. Сами талыши называют различные данные о численности этого народа в Азербайджане – вплоть до 1,5 млн. человек. В реальности их на территории современной Азербайджанской республики вероятно около 400 тыс. человек[30].

Несмотря на то, что ситуация в азербайджанском Лезгистане и Талышстане стабильна, мы думаем, что это временное явление, так как оно достигнуто не с помощью реформ, которые так необходимы для населения этих регионов, а обусловлено репрессивной политикой Баку, который не приемлет инакомыслия среди национальных меньшинств населяющих республику. Как и в былые советские времена, так и сейчас, официальный Баку продолжает политику ассимиляции коренных народов Лезгистана и Талышстана, жонглирует цифрами – уменьшая их численность. Все это делается для того, чтобы не допустить впоследствии, превращения Азербайджана в федеративную республику, как того требуют от официальных властей Баку не только лезгины и

---

[27] Азербайджан: Совет Европы должен высказать свою позицию.www.hrw.org/ru/news/2012/06/27

[28] Тюрьма для талышской интеллигенции.www.bigcaucasus.com/events/article/30-09-2013/86789-prison-0/

[29] Искандарян А., Миграции на Кавказе, Е., 2003, с. 100.

[30] «Pia.az»: Талыши считают, что Азербайджан захватил их земли и признают лидером А. Гумбатова. www.panorama.am./ru/politics/2011/10/25/pia-az-talish/

талыши, а также аварцы, таты, удины, ингилойцы, цахуры с вытекающими из этого преференциями (открытие школ и классов с обучением родного языка, открытие культурных центров, предоставление квот для нацменьшинств в структурах местной власти и т.д.).

По нашему мнению сепаратистские тенденции в Лезгистане и Талыш-Мугани представляют еще большую опасность для Азербайджанской республики, чем отделившийся Нагорный Карабах, который более 20 лет назад провозгласил свою независимость и не контролируется Баку.

HAMBARYAN GAGIK
(GSPI)

TALYSHSTAN AND LEZGISTAN: CONFLICTOGEN REGIONS OF AZERBAIJAN

The Azerbaijan Republic, which was formed at the beginning of the 20th century, involved territories inhabited by various Caucasian peoples. During the years of the Soviet power the Azerbaijan authorities pushed the policy of assimilation of these people which provoked their protests.

This policy resulted in the Armenian-Azerbaijanian conflict in Nagorni-Kharabakh. Besides this, there exist other conflict-arising regions in Azerbaijan: Lezgistan and Talishstan. According to many experts in these regions separating tendencies hold strong which are more dangerous for Azerbaijan statehood than de facto separated Nagorni-Kharabakh.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ
(ԱԻ)

ՉԻՆ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՆԱԽՔԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Նախակոմունիստական Չինաստանը Ասիայում միակ պետությունն էր, որը դեմ չքվեարկեց Իսրայելի պետության ստեղծման վերաբերյալ ՄԱԿ-ի ԳԱ-ի 1947 թ. պատմական քվեարկությանը[1]: Չինաստանի ձեռնպահ քվեարկումը փաստացի կերպով օգնեց անհրաժեշտ 2/3 մեծամասնությամբ բանաձևի անցկացմանը, որն Իսրայելի պետության ստեղծման համար միջազգային լեգիտիմություն ապահովեց[2]:

Իր հերթին Իսրայելը ոչ-կոմունիստական դաշինքի յոթերորդ և, մինչ 1956 թ., Մերձավոր Արևելքի (ՄԱ) առաջին պետությունն էր, որը պաշտոնապես ճանաչեց Չինաստանի Ժողովրդական հանրապետությունը (ՉԺՀ)՝ 1949 թ. հոկտեմբերի 1-ին վերջինիս հիմնադրումից անմիջապես հետո[3]:

Առաջին պաշտոնական փոխանակությունը ՉԺՀ-ի և Իսրայելի միջև տեղի է ունեցել 1950 թ. սկզբին: Հունվարի 9-ին Իսրայելի արտգործնախարար Մոշե Շարեթն իր չինացի գործընկերոջը՝ Ճոու Էնլային · տեղեկացրեց Չինաստանի նոր կառավարության օրինականության ճանաչման մասին: Հունվարի 16-ին Երուսաղեմը ՉԺՀ-ի ճանաչման վերաբերյալ հաղորդագրություն ուղարկեց Պեկին[4]:

---

[1] Электронная Еврейская Энциклопедия. Ассоциация по изучению еврейских общин, Китай (ДИАСПОРА/Регионы и страны), КЕЭ, Том 4, кол. 312–319, Иерусалим, 21.08.2006. http://www.eleven.co.il/print.php?id=12104

[2] Aron Shai, Sino-Israeli Relations: Current Reality and Future Prospects, Institute for National Security Studies, Memorandum No. 100, Tel Aviv, September 2009, p. 18. http://www.tau.ac.il/~aashai/INSS-2009.pdf

[3] Jin Liangxiang, Energy First. China and the Middle East, Middle East Quarterly, Vol. XII, No. 2, Spring 2005. http://www.meforum.org/article/694

[4] Yitzhak Shichor, The Middle East in China's Foreign Policy, 1949-1977, New York, 1979, p. 21.

Իր հերթին Պեկինը մի շարք քայլեր գործադրեց իսրայելցի դիվանագետների հետ կապեր հաստատելու ուղղությամբ, հատկապես Մոսկվայում: 1950 թ. հունիսին ՉԺՀ-ի գործերի հավատարմատարն այցելեց Մոսկվայում Իսրայելի դիվանագիտական ներկայացուցչություն և իր կառավարության անունից հետաքրքրվեց ՉԺՀ դիվանագիտական առաքելություն ուղարկելու Իսրայելի մտադրության մասին, որին հստակ պատասխան չտրվեց[5]:

Հարկ է նշել, որ Իսրայելի և ՉԺՀ-ի փոխադարձ ճանաչմանը նպաստեցին մի շարք գործոններ: Նախ՝ կոմունիստական Չինաստանը միջազգային հանրության կողմից ՉԺՀ-ի ճանաչումն ապահովելու նպատակով պատրաստ էր դիվանագիտական կապեր հաստատել անգամ ԱՄՆ-ի ազդեցության տակ գտնվող երկրների հետ, ինչպիսին Իսրայելն էր: ՉԺՀ-ի առաջնորդ Մաո Ձեդունն այն կարծիքին էր, որ իմպերիալիստական պետություններ՝ ԱՄՆ-ը, Մեծ Բիրիտանիան, Ֆրանսիան ու Արևմտյան Գերմանիան պարզապես շահագործում են Իսրայելին[6]: Պեկինում գտնում էին, որ Իսրայել պետության ստեղծումը Մեծ Բրիտանիայի դեմ հրեա ժողովրդի երկարատև ազգային ազատագրական պայքարի արդյունք է: Չին-իսրայելական կապերի հաստատմանը նպաստեցին նաև Մոսկվա-Պեկին դաշինքի վաղ շրջանում Իսրայել պետության ձևավորմանն ուղղված ԽՍՀՄ-ի աջակցությունը և խորհրդաչինական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Նշենք նաև, որ 1950-ականների սկզբներին Իսրայելի կառավարող և անթաքույց սոցիալիստական հակումներ ունեցող ձախամետ կոալիցիան գաղափարապես ավելի մոտ էր գտնվում ՉԺՀ-ին, քան արևմտյան շատ այլ կառավարություններ: Բացի այդ, ի տարբերություն մի շարք արևմտյան և ոչ-արևմտյան, ինչպես նաև արաբական երկրների, Իսրայելը երբեք չճանաչեց Չինաստանի հանրապետությունը՝ Թայվանը, թեև վերջինս ճանաչել է Իսրայելը 1949 թ. մարտին՝ չին կոմունիստներից կրած

---

[5] Նույն տեղում, էջ 22:

[6] Malcolm Scott, Sino-Israeli Relations and Associated Impact on Arab-Israeli Relations, 1949-1993, 23.04.2012. p. 2. http://www.slashdocs.com/mphixt/sino-israeli-relations-and-associated-impact-on-arab-israeli-relations-1949-1993.html

պարտությունից և Թայվան տեղափոխվելուց մի քանի ամիս առաջ[7]: 1949 թվից ի վեր Իսրայելի և Թայվանի միջև ոչ-պաշտոնական, ոչ-կառավարական և գլխավորապես ռազմական ու կոմերցիոն կապերը սովորաբար կրել են գաղտնի բնույթ, քանի որ Թայվանը ձգտում էր խուսափել հակաչինական տրամադրությամբ արաբական երկրների հետ հարաբերությունների վատթարացումից[8]:

1950 թ. սեպտեմբերի 19-ին ՄԱԿ-ում Իսրայելի ներկայացուցիչները պաշտպանեցին ԱԽ-ում Թայվանի պատվիրակներին ՉԺՀ-ի պատվիրակներով փոխարինելու վերաբերյալ բանաձևի ընդունումը: ԱԽ-ում ՉԺՀ-ի հատուկ ներկայացուցիչն իր երախտագիտությունը հայտնեց Իսրայելին՝ տասնվեց երկրներից մեկին, որը կողմ էր քվեարկել բանաձևի ընդունմանը[9]:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խանգարեց կորեական պատերազմը: 1950 թ. հոկտեմբերին կորեական պատերազմին Պեկինի միջամտությունից հետո 1951 թ. փետրվարի 1-ին ՉԺՀ-ն ագրեսոր, իսկ նրա կառավարության գործողություններն ագրեսիա հայտարարվեցին ՄԱԿ-ի 43 պատվիրակի, այդ թվում Իսրայելի ներկայացուցչի կողմից[10]: Վաշինգտոնը խիստ ճնշում գործադրեց Իսրայելի վրա, որի արդյունքում Չինաստանի հետ Իսրայելի որևէ հարաբերություն

---

[7] Yitzhak Shichor, The U.S. Role in Delaying Sino-Israeli Relations: Two's Company, Three's a Crowd, Jewish Political Studies Review 22:1-2, 30.04.2010. http://jcpa.org/article/the-u-s-role-in-delaying-sino-israeli-relations-twos-company-threes-a-crowd/

[8] Թայվանի և Իսրայելի միջև առևտրային կապերը պահպանվել են անգամ 1971 թ. Թայվանին՝ Չինաստանի Հանրապետությանը, ՄԱԿ-ի կազմից բացառելու բանաձևի օգտին քվեարկելուց հետո: Այս մասին տե՛ս Комаров И., Китайско-израильские отношения: проблемы, достижения, перспективы, История международных отношений и мировой дипломатии, Нижегородский журнал международных исследований, Нижний Новгород, Осень-зима 2009, с. 47.

[9] Yitzhak Shichor, The Middle East in China's Foreign Policy, 1949-1977, նշվ. աշխ., էջ 23-24:

[10] Malcolm Scott, Sino-Israeli Relations and Associated Impact on Arab-Israeli Relations, 1949-1993, 23.04.2012, p. 4. http://www.slashdocs.com/mphixt/sino-israeli-relations-and-associated-impact-on-arab-israeli-relations-1949-1993.html; Yitzhak Shichor, The Middle East in China's Foreign Policy, նշվ. աշխ., էջ 24:

կասեցվեց: ՉԺՀ-ն իբրև կոմունիստական երկիր, սկսեց առաջին անգամ քննադատական և թշնամական վերաբերմունք դրսևորել Իսրայելի նկատմամբ[11]: Սուեզի ջրանցքի ճգնաժամի ընթացքում Պեկինն Իսրայելին անվանեց կայսերապետական քաղաքականության գործիք[12]:

Հարկ է նշել, որ 1952 թ. վերջին և 1953 թ. սկզբին Թել Ավիվի հանդեպ ՉԺՀ-ի թշնամական կեցվածքը համահունչ էր խորհրդաիսրայելական հարաբերությունների սրմանը: Այս շրջանում չինական կառավարությունն առավել բացահայտորեն սկսեց դատապարտել Իսրայելին ու Սիոնիզմն ընդհանրապես[13]:

ԱԽ-ում ՉԺՀ-ի տեղի վերականգնման հարցում Իսրայելի ձեռնպահ քվեարկելուց և կորեական թերակղզում զինադադար հաստատելուց հետո ՉԺՀ-ը սկսեց զգուշորեն դիվանագիտական կապերի հաստատման ուղիներ որոնել Իսրայելի հետ: 1953 թ. նոյեմբերի 9-ին Ֆինլանդիայում Չինաստանի գործերի հավատարմատարը հայտնեց, որ Իսրայելի կառավարության կողմից նախաձեռնության դեպքում պատրաստ է Պեկինին ներկայացուցչությունների փոխանակում առաջարկել: Իսրայելցի դիվանագետները հավանություն տվեցին չին-իսրայելական դիվանագիտական հարաբերությունների խնդրի վերանայման առաջարկին՝ պայմանով, որ պատասխանել կարող են միայն ԱՄՆ-ի դիրքորոշումը պարզելուց հետո: Մեկ ամիս անց բացասական պատասխան եկավ, որի համաձայն՝ Կորեայում և Հնդկաչինում ՉԺՀ-ի ագրեսիայի նկատմամբ Արևմուտքի անբարյացակամ վերաբերմունքով պայմանավորված, չին-իսրայելական դիվանագիտական կապերի հաստատումը խիստ համարձակ ու վտանգավոր էր գնահատվում: Այդժամ Պեկինը՝

---

[11] Yitzhak Shichor, Hide and Seek: Sino-Israeli Relations In Perspective, Israel Affaires, Vol.: 1, No: 2, Winter 1994, p. 189-190.
http://www.academia.edu/280915/Hide_and_Seek_Sino-Israeli_Relations_In_Perspective

[12] Zhiqun Zhu, China's New Diplomacy in the Middle East and Its Implication for the United States, Prepared for the Conference, "Transcending Borders: Asia, Middle East and the Global Community", U.S. Naval Academy, Annapolis, Maryland, USA, October 16-17, 2009, p. 8.
http://www.usna.edu/MiddleEast/AME/Papers/Zhiqun%20Zhu%20paper.pdf.

[13] Malcolm Scott, նշվ. աշխ., էջ 4-5:

«հիասթափվելով» Իսրայելի հետ հարաբերությունների հաստատման հեռանկարի հարցում, արաբական երկրների հետ կապերի զարգացման որոշում կայացրեց[14]:

Այնուհանդերձ, հակառակ սառըպատերազմյան մթնոլորտին և դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը, Չինաստանի և Իսրայելի կառավարությունների միջև ոչ-պաշտոնական կապեր արձանագրվել են: 1954 թ. երկու կառավարությունների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Չինաստանի Արտաքին Առևտրային գործերի վարչության (Chinese Commercial Foreign Affairs Office) հրավերով, իսրայելական առևտրային պատվիրակությունը՝ 1955 թ. հունվարին չորս-շաբաթյա այցով շրջագայել է ՉԺՀ-ի խոշոր քաղաքներով: Առաքելությունը հաջողությամբ է պսակվել՝ հետագա առևտրային կապերի շարունակման ակնկալիքով[15]:

Ըստ էության, երկու երկրները կարող էին հաստատել դիվանագիտական հարաբերություններ, եթե չլիներ ԱՄՆ-ի կողմից Իսրայելի նկատմամբ գործադրված ճնշումը, և եթե ասիական ու աֆրիկական երկրների 1955 թ. ապրիլի բանդուգյան համաժողովից հետո Չինաստանը չվերանայեր իր արտաքին քաղաքականությունը[16]: Խնդիրն այն է, որ Բանդունգից հետո Չինաստանի Կոմկուսի համար արաբական աշխարհի հետ կապերի զարգացումը, Իսրայելի համեմատությամբ առաջնահերթ էր դիտվում: Թեև 1956 թ. սեպտեմբերին Իսրայելի Կոմկուսի առաջնորդ Մեիր Վիլների գլխավորած պատվիրակությունը ժամանեց ՉԺՀ, և Իսրայելի Կումկուսի կանանցից կազմված մի շարք պատվիրակություններ մասնակցեցին ՉԺՀ-ում կազմակերպված միջազգային համաժողովներին, այնուհանդերձ Բանդունգից հետո խզվեցին ոչ միայն չին-իսրայելական

---

[14] Yitzhak Shichor, The U.S. Role in Delaying Sino-Israeli Relations: Two's Company, նշվ. աշխ., էջ 1:

[15] Sino-Israeli Commercial Relations – A Historical Perspective, Israel Chamber of Commerce in China - Beijng branch. http://beijing.ischam.org/business-in-china/history

[16] Zhiqun Zhu, նշվ. աշխ., էջ 7-8:

կոմունիստական կուսակցությունների միջև կապերը[17], այլ չին-իսրայելական հարաբերություններն ընդհանրապես: ՉԺՀ-ի իշխանություններն արգելեցին չինական շուկայով շահագրգռված որոշ իսրայելցի գործարարների մուտքը Չինաստան: Երկու երկրների միջև կապերը միառժամանակ սահմանափակվեցին գիտնականների միջև հազվադեպ շփումներով[18]:

1958 թ. գործարար Վիկտոր Զիրինսկին նշանակվեց այնժամ արդեն հայտնի համաշխարհային կոմերցիոն և արդյունաբերական կենտրոն Հոնգկոնգում՝ Իսրայելի պատվավոր հյուպատոսի պաշտոնում: Ավելի ուշ, 1973 թ. Իսրայելը հյուպատոսարան հիմնեց Հոնգկոնգում, որի գլխավոր հյուպատոս նշանակվեց Էմանուել Գելբերը: Հյուպատոսարանի նախնական նպատակը չին-իսրայելական կապերի խթանումն էր, որի ջանքերն ապարդյուն անցան, և գլխավոր հյուպատոսարանը փակվեց՝ Իսրայելը ներկայացնելու առաքելությունը կրկին թողնելով Վիկտոր Զիրինսկուն[19]:

Պեկինի պատմական աջակցությունը պաղեստինյան ազգային գործին ևս նպաստեց իսրայելաչինական դիվանագիտական կապերի հաստատման հետաձգմանը[20]: 1950-ականների կեսերից ի վեր ՉԺՀ-ը խիստ հակաիսրայելական դիրքորոշում զբաղեցրեց և դադարեցրեց երկկողմանի կապերն Իսրայելի հետ[21]: Պեկինը ջերմեռանդորեն պաշտպանում էր Իսրայելի դեմ արաբական հեղափոխական գործը: ՊԱԿ-ը մշտական պատվիրակություն ուներ Պեկինում[22]: Չինաստանը շարունակում էր հրաժարվել ճանաչել Իսրայելը և աատարում էր անկախ պետություն ստեղծելու պաղեստինցիների պահանջները[23]: 1967 թ. Վեցօրյա պատերազմից և Միացյալ Արաբական

---

17 Peter Berton, The Evolution of Sino-Israeli Relations, Center of Jewish Studies of Shanghai, Shanghai Academy of Social Sciences, Shanghai, 05.08.2013. http://www.cjss.org.cn/a/English/Related_Works/2013/0508/51.html

18 Sino-Israeli Commercial Relations – A Historical Perspective, նշվ. աշխ., էջ 1:

19 Նույն տեղում, էջ 1:

20 Chris Zambelis and Brandon Gentry, China through Arab Eyes: American Influence in the Middle East, Parameters, Vol. XXXVIII, No. 1, Spring 2008, p. 68.

21 Sino-Israeli Commercial Relations – A Historical Perspective, նշվ. աշխ., էջ 1:

22 ТАСС. БПИ, No. 132, 10.07.1979, с. 39.

23 ТАСС. БПИ, No. 236, 05.12.1979, с. 42.

Հանրապետության ու Իսրայելի միջև հրադադարի հաստատումից հետո պեկինյան քարոզչությունը լայնորեն շրջանառության մեջ դրեց «արաբական գործերում երկու գերտերությունների միջամտությունը» դատապարտող և Իսրայելի դեմ զինված պայքարի շարունակությունը պաշտպանող պաղեստինյան կազմակերպության և «ՖԱԹՀ»-ի կարգախոսները[24]: Սա համընկնում էր «Մշակութային հեղափոխության» ոգու հետ, երբ Չինաստանն առավել քան երբևէ մեծացրեց իր աջակցությունն ազգային ազատագրական պայքարի գործի հանդեպ[25]:

1979 թ. Պեկինի և Պաղեստինի Ազատագրման կազմակերպության (ՊԱԿ) միջև հարաբերությունները որոշ չափով սառեցին և համագործակցությունը ժամանակավորապես դադարեցվեց, հատկապես երբ փետրվարին չինական զինված ուժերը ներխուժեցին Վիետնամի տարածք, մի երկիր, որը ջերմորեն պաշտպանում էր ՊԱԿ-ին[26]: Մինչդեռ չին-իսրայելական հարաբերություններում նոր առաջընթաց նկատվեց՝ սկիզբ դնելով վերջիններիս միջև ռազմական և առևտրային կապերի հաստատմանը: Չինաստանի Ժողովրդական Ազատագրական բանակում՝ ՉԺԱԲ-ում, հաշվի առնելով վիետնամական թշնամու դեմ պայքարում չինական զենքի ու մարտավարության թերությունները, որոշեցին օգտվել արաբների դեմ մարտերում իսրայելական ՅԱԽԱԼ-ի կուտակած փորձից[27]: Նշենք, որ այդժամ Չինաստանը մտել էր հետմաոական տնտեսական բարեփոխումների և աճի շրջան, հետևաբար Պեկինում քաջ գիտակցում էին, որ 20 տարվա մեկուսացումից և գործնական լճացումից հետո ՉԺՀ-ի ռազմական համակարգը հրատապ և համակողմանի արդիականացման կարիք ունի[28]: Ընդ որում ՉԺԱԲ-ը ռազմական և տեխնոլոգիական աջակցության կարիք ուներ խորհրդային արտադրության զինվածության դեմ պայքարի փորձ ունեցող այնպիսի

---

[24] TACC. Атлас No. 40 (691), 06.10.1970, c. 54.

[25] Malcolm Scott, նշվ. աշխ., էջ 12:

[26] TACC. БПИ, 132, 10.07.1979, c. 42.

[27] http://flot2017.com/posts/new/_2935

[28] Yitzhak Shichor, Mountains out of Molehills: Arms Transfers in Sino-Middle Eastern Relations, Middle East Review of International Affairs, Vol. 4, No. 3, September 2000. http://meria.idc.ac.il/journal/2000/issue3/jv4n3a6.html

մատակարարներից, որոնք ի վիճակի էին արդիականացնել չինական ռազմական տեխնիկան: Իսրայելն այն եզակի երկրներից էր, որը համապատասխանում էր Պեկինի պահանջներին: 1967 թ. և 1973 թ. արաբ-իսրայելական պատերազմների ընթացքում բռնագրավված խորհրդային արտադրության զինատեսակներին քաջածանոթ լինելով, Իսրայելի ռազմական արդյունաբերությունը բավականաչափ կատարելագործել էր խորհրդային որոշ հնացած զինատեսակներ[29]: Իսրայելը, օգտվելով Արևմուտքում զենքի և ռազմական տեխնոլոգիաների ձեռքբերման հարցում ՉԺՀ-ի հետաքրքրվածությունից, շտապեց անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Պեկինին[30]: Կոմսոպոլիտ հրեա գործարար և ձեռնարկատեր Շաուլ Ն. Այզենբերգը (Shoul N. Eisenberg), որն Իսրայելի ռազմական արդյունաբերության և ՉԺՀ-ի միջև միջնորդի բացառիկ արտոնություններից էր օգտվում, էական դեր խաղաց այդ գործում[31]:

Չինաստանի և Իսրայելի միջև տեղի ունեցած գաղտնի բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Իսրայելն արդիականացրեց ՉԺՀ-ի խորհրդային արտադրության «T-59» և «T-69» տեսակի հազարավոր տանկեր[32]: Միևնույն ժամանակ, Իսրայելի հետ գաղտնի գործարքը «հավասարակշռելու» նպատակով Պեկինը մեկ միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն տրամադրեց Յասեր Արաֆաթին և բարձրացրեց Պեկինում ՊԱԿ-ի գրասենյակի կարգավիճակը դեսպանատան մակարդակի[33]:

Նշենք, որ նախքան դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, չին-իսրայելական ռազմական առնչությունները

---

[29] Aron Shai, նշվ. աշխ., էջ 24:

[30] Yitzhak Shichor, Mountains out of Molehills: Arms Transfers in Sino-Middle Eastern Relations, նշվ. աշխ., էջ 1:

[31] Aron Shai, նշվ. աշխ., էջ 24:

[32] 1984 թ. հոկտեմբերին Չինաստանի Ազգային օրվան նվիրված շքերթին ցուցադրելու ժամանակ այդ տանկերի ծագման մասին ոչինչ չնշվեց: Այս մասին տե՛ս Friedman Thomas L., Israel and China Quietly Form Trade Bonds, The New York Times, 22.07.1985, p. 2. http://www.nytimes.com/1985/07/22/world/israel-and-china-quietly-form-trade-bonds.html?pagewanted =2

[33] Peter Berton, նշվ. աշխ., էջ 1:

գաղտնի են եղել[34]: Ըստ օտարերկրյա դիտորդների՝ 1970-ականների վերջերից մինչև 1980-ականների սկիզբը ՉԺՀ-ի և Իսրայելի միջև զենքի վաճառքը կազմել է 3-4 մլրդ ԱՄՆ դոլար[35]:

Փաստորեն, դեռևս 1979 թ. սկզբին, չինացիներն ըստ էության կորցրել էին պաղեստինյան ազգային գործի նկատմամբ հետաքրքրությունը[36]: Ինչ վերաբերվում է «Արաբական դիմադրության ճակատում» պառակտումներին, ապա Պեկինը ձգտում էր խուսափել կողմերից որևէ մեկին հակվելուց: Այդ պատճառով էլ Պեկինը հրաժարվում էր Քեմփ Դևիդի գործընթացի սկզբնական շրջանում հստակ դիրքորոշում գրավել՝ խուսափելով այն դատապարտող արաբների թշնամությունից և զայրույթից[37]: Ըստ 1979 թ. մարտի 22-ի չինական պաշտոնաթերթ «Ժէնմին Ժիբաո»-ի՝ ՄԱ-ում Պեկինի քաղաքականությունն արմատական արաբականության պաշտպանությունից անցում էր կատարում ամերիկյան քաղաքականության պաշտպանությանը: Թերթի համաձայն՝ Չինաստանը ոչ միայն նավթ ներկրող երկիր չէր, այլ իր նավթի փոքր մասն էր օգտագործում, ուստի Պեկինն ազատ էր իր արտաքին քաղաքականության և թշնամուս (ԽՍՀՄ-ի) թշնամին (ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները) «իմ բարեկամն է» սկզբունքների պաշտպանության հարցում[38]: Ելնելով ԽՍՀՄ-ին իր գլխավոր հակառակորդ դիտելու հանգամանքից, Չինաստանը ցանկանում էր սերտ կապեր պահպանել հակախորհրդային սադաթյան Եգիպտոսի հետ[39]: Պեկինում գտնում էին, որ՝ արաբ-իսրայելական հակամարտությունը պետք է կարգավորվի Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի նշած՝ Իսրայելի հետ քեմփդևիդյան համաձայնագրի հիման վրա հաշտեցման ուղիով[40]: Թեև ԱՄՆ-ի նախագահ Ջիմմի Կարտերի խաղաղ կարգավորման ջանքերին ցուցաբերած Չինաստանի աջակցությունը զուսպ էր,

---

[34] Sudha Ramachandran, US up in Arms over Sino-Israel Ties, Asia Times, 21.12.2004. http://www.atimes.com/atimes/Middle_East/FL21Ak01.html

[35] Aron Shai, նշվ. աշխ., էջ 25:

[36] ТАСС. БПИ, No. 132, 10.07.1979, с. 41.

[37] ТАСС. БПИ, No. 236, 05.12.1979, с. 42.

[38] ТАСС. БПИ, No.132, 10.07.1979, с. 39.

[39] ТАСС. БПИ, No. 236, 05.12.1979, с. 42.

[40] ТАСС. БПИ, No. 132, 10.07.1979, с. 41.

այնուհանդերձ Պեկինը չէր թաքցնում իր համակրանքը Եգիպտոսի հանդեպ[41]:

Դեռ ավելին, 1979 թ. ՉԺՀ-ի արտգործնախարարն ամերիկյան սենատորների պատվին ճաշկերույթի ժամանակ հայտարարեց, որ ՉԺՀ-ը մտադիր չէ «Իսրայելին ծովը նետել»: Սա նշանակում էր, որ Պեկինը, ի տարբերություն պաղեստինցիների, Իսրայելի գոյության դեմ որևէ առարկություն չուներ: Իսրայելի արտգործնախարար Մոշե Դայանը Հարավային և Հարավ-արևելյան Ասիայի երկրներ կատարած շրջագայության ընթացքում՝ Նեպալում հայտնեց, իսկ Հոնգկոնգում կրկնեց, որ «Իսրայելը Չինաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մեծ ցանկություն ունի»[42]: 1979 թ. Իսրայելի և Եգիպտոսի միջև խաղաղության հաշտագրի ստորագրումից հետո Չինաստանի հարաբերությունները Պաղեստինի հետ անկում ապրեցին[43]:

1980-ականների կեսերից ի վեր Իսրայելի նկատմամբ ՉԺՀ-ի դիվանագիտությունն ակտիվացավ, որը պայմանավորված էր Պեկինի որդեգրած բացության քաղաքականությամբ և վերջինիս բնորոշ պրագմատիզմով ու ռեալիզմով: Պեկինը մի կողմից պաշտպանում էր «հող խաղաղության դիմաց հայեցակարգը, մյուս կողմից՝ ընդունում Պաղեստինի անկախ պետության ճանաչման անհրաժեշտությունը»[44]: 1980-ականների երկրորդ կեսին Չինաստանն իսրայելական գյուղատնտեսության, հատկապես ոռոգման համակարգերի եւ չորային գոտիների մշակման, արևային էներգիայի, ապրանքային արտադրության, առաջադեմ տեխնոլոգիաների, ռոբոտների, շինարարության, ճանապարհաշինության և զենքի արտադրության ոլորտներում . իսրայելական փորձի փոխանակման և համագործակցության մեծ կարիք ուներ: Չինական ռազմական համակարգերի արդիականացման և ժամանակակից ռազմական

---

41 Китайцы обхаживают арабов, ТАСС. БПИ, No. 252, 27.12.1979; Far Eastern Economic Review, 07.12.1979.

42 ТАСС. БПИ, No. 132, 10.07.1979, с. 40; South China Morning Post, Hongkong, 05.05.1979.

43 Aron Shai, նշվ. աշխ., էջ 24:

44 Адар Примор, Противоречивые отношение между Израилем и Китаем. 20 лет спустя, zahav.ru, 24.01.2012. http://mnenia.zahav.ru/Articles/661/israel_china

տեխնոլոգիաների ձեռքբերման խնդրանքով Չինաստանը կարող էր դիմել Իսրայելին, ինչը նրան անհասանելի էր ԱՄՆ-ում ու ԽՍՀՄ-ում: Չինացիները «նոու-հաու»-ի, նոր գաղափարների և ներդրումների մեծ կարիք ունեին: 1986 թ. դեկտեմբերին չինական նահանգներն ու տնտեսական ոլորտի տարբեր ընկերություններ առավել քան 70 նախագծային առաջարկ են ներկայացրել իսրայելական ընկերություններին: Այդ նախագծերը վերաբերվում էին բնակելի թաղամասերի շինարարությանը, բարձր տեխնոլոգիաների ապարատային սարքավորումների արտահանմանը և այլ ոլորտների: Սկզբնական շրջանում նման գործարքների միջնորդի դերում հանդես էին գալիս հրեա գործարարներ Հոնգկոնից, Եվրոպայից և Ավստրալիայից, սակայն հետագայում չինացիներն աստիճանաբար սկսեցին գործարքներ կնքել ուղղակի իսրայելական ընկերությունների հետ[45]:

1986 թ. Հոնգկոնգի վերլուծական «KANWA» կենտրոնի անկախ փորձագետի համաձայն՝ ռազմական ավիաշինարարության ոլորտի իսրայելական մասնագետների մեծ խումբ ժամանել է Սիչուան նահանգի Չէնդու քաղաք՝ չինական ավիատեզերական արդյունաբերության կենտրոն, որտեղ իսրայելցիների ժամանումը քողարկված է եղել գաղտնիության հաստ շղարշով[46]:

1987 թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին իսրայելական կառավարական աղբյուրի համաձայն՝ Իսրայելի տարբեր ձեռնարկություններից կազմված պատվիրակությունը չինական իշխանությունների հրավերով այցելել է ՉԺՀ: Այն փաստը, որ իսրայելցիները ՉԺՀ ժամանել էին առանց թաքցնելու իրենց ինքնությունը, այսինքն՝ իսրայելական անձնագրերով, խոսում էր այն մասին, որ երկու երկրների հարաբերություններում որոշակի առաջընթաց է արձանագրվել: Չին-իսրայելական տնտեսական կապերի խթանման, ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով Իսրայելի ԱԳՆ-ը

---

[45] Friedman Thomas L., նշվ. աշխ., էջ 1-2:

[46] Шульман А., Израиль и Китай: Курс на стратегическое сотрудничество, Израиль Сегодня, 07.09.2011. http://is2day.co.il/2011/09/izrail-i-kitaj-kurs-na-strategicheskoe-sotrudnichestvo/

որոշել էր վերաբացել բյուջետային կրճատումների և Չինաստանի հետ կապերի բացակայության պատճառով 1975 թ. փակված Հոնգկոնգի հյուպատոսությունը[47]:

1987 թ. երկու երկրների արտգործնախարարները գաղտնի հանդիպում ունեցան ՄԱԿ-ի շրջանակներում: Երկխոսությունը շարունակվեց Հոնգկոնգում: Սա իր հերթին 1990 թ. Պեկինում Իսրայելի հումանիտար գիտությունների ակադեմիայի ներկայացուցչական գրասենյակի բացման առիթ ծառայեց: Միաժամանակ Թել-Ավիվում իր գրասենյակը հիմնեց Չինաստանի միջազգային ուղևորային ծառայությունը (China International Travel Service), որը վարում էին ԱԳՆ-ի պաշտոնյաները[48]:

Իսրայելի կառավարությունն օգնեց Պեկինին շրջանցել 1989 թ. տիանանմենյան դեպքերից հետո Չինաստանին պարտադրված ամերիկյան ու եվրոպական ռազմական պատժամիջոցները: Զենքի վաճառքը և ռազմական այլ գործարքների կնքումը հանգեցրին Իսրայելի հանդեպ չինական թշնամական հռետորաբանության մեղմացմանը՝ ի վերջո չին-իսրայելական հարաբերությունների կարգավորման համար ուղի հարթելով[49]: Չինաստանում կարծում էին նաև, որ Վաշինգտոնի հետ սերտ և հատուկ կապեր ունեցող Իսրայելի հետ լավ հարաբերությունների հաստատումը, ըստ ամենայնի, պետք է օգներ չին-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը[50]:

1990 թ. երկու երկրները ոչ-պաշտոնական հանդիպումներ ունեցան Պեկինում ու Թել-Ավիվում: Նույն թվին Պեկինի համալսարանի փոխնախագահը փորձում էր ամերիկացիների օգնությամբ համալսարանում հրեական լեզվի կենտրոն բացել[51]:

---

[47] Իսրայելի քաղաքացիները ՉԺՀ այցելելու համար սովորաբար օգտվում էին ամերիկյան անձնագրերից:

[48] About Sino-Israel Relations, China.org.cn, 07.09.2009. http://www.china.org.cn/culture/expriencechina/2009-09/07/content_18475777.htm

[49] Kumaraswamy P. R., At What Cost Israel-China Ties? Middle East Quarterly, Spring 2006, p. 37-44. http://www.meforum.org/article/926

[50] Zhiqun Zhu, նշվ. աշխ., էջ 9:

[51] Peter Berton, նշվ. աշխ., էջ 1:

ԽՍՀՄ-ի փլուզումից և սառը պատերազմի ավարտից հետո փոխվեց նաև Չինական կառավարության արտաքին քաղաքականության բնույթը: Եթե հատկապես 1960-1970 թթ. երկկողմ հարաբերություններում գերիշխում էր քաղաքական տարրը (ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի երկու գերտերությունների առճակատման պայմաններում Երրորդ աշխարհի երկրների նկատմամբ առաջնորդության ձգտումը), ապա ԽՍՀՄ-ի փլուզումից և «Սառը պատերազմի» ավարտից հետո տնտեսությունն ու տնտեսական դիվանագիտությունը Չինաստանի քաղաքականության առաջատար օղակն էր[52]:

ԽՍՀՄ-ի փլուզումը, Չինաստանի արդիականացման քաղաքականությունը, ԱՄՆ-ի հրեական լոբբիի առասպելի նկատմամբ հավատը, 1991 թ. Ծոցի պատերազմը (հատկապես իրաքյան «Սքուդ» տեսակի հրթիռների գրոհին ենթարկվելուց հետո հակահարված հասնելուց Իսրայելի հրաժարման փաստը), այս ամենը չին-իսրայելական հարաբերությունների կարգավորմանը նպաստող գործոններից էին[53]:

Իրաքի դեմ ՄԱԿ-ի ԱԽ-ի տարբեր բանաձևերի ընդունման գործում Արևմուտքի հետ համագործակցության միջոցով Պեկինը փորձում էր վերականգնել իր նախկին կարգավիճակը և առավել ակտիվ գործունեություն ծավալել միջազգային գործերում: Չինաստանը շահագրգռված էր նաև արաբ-իսրայելական հակամարտության և պաղեստինյան խնդրի խաղաղ կարգավորմանը նվիրված Մադրիդի համաժողովին մասնակցելու հարցում, քանի որ 1980-ականների կեսերից ի վեր արաբ-իսրայելական գործընթացին վերջինիս մասնակցությունը կասեցվել էր: Մինչդեռ Պեկինում քաջ գիտակցում էին, որ ՄԱ-ի գործերին լայն ներգրավվածություն կարող են ունենալ միայն Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո[54]: Չին-իսրայելական դիվանագիտական կապերի

---

[52] Комаров И., Китайско-Израильские Отношения: Проблемы, Достижения, Перспективы, История Международных Отношений и Мировой Дипломатии, Нижний Новгород, Нижегородский журнал международных исследований, Осень-зима 2009, с. 46.

[53] Aron Shai, նշվ. աշխ., էջ 24:

[54] Yitzhak Shichor, Hide and Seek: Sino-Israeli Relations In Perspective, Israel Affaires, նշվ. աշխ., էջ 204:

հաստատման գործընթացն արագացվեց 1992 թ. փետրվարին Մոսկվայում կայանալիք համաժողովին Չինաստանի մասնակցության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված[55]:

1992 թ. հունվարի 23-ին Իսրայելի արտգործնախարար Դավիդ Լեվին և Չինաստանի արտգործնախարար Ցիան Ցիչենը ՉԺՀ-ի և Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ համատեղ հուշագիր ստորագրեցին՝ պաշտոնապես դիվանագիտական հարաբերություններ հաստատելով երկու երկրների միջև: 1992 թ. Պեկինում բացվեց իսրայելական դեսպանատունը, իսկ 1994 թ. Իսրայելի հյուպատոսությունը բացվեց Շանհայում[56]:

ՉԺՀ-ի և Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը նպաստեցին վերջինիս և ասիական տարածաշրջանի բազմաթիվ երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացին: Իսրայելի հետ Արևելյան Ասիան և ընդհանրապես խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը կապող ուղիղ չվերթները Թել-Ավիվի համար բացեցին աշխարհի ամենաարագ զարգացող տարածաշրջանը[57]:

HARUTYUNYAN AGHAVNI
(IOS)

CHINESE-ISRAELI CONTACTS BEFORE THE ESTABLISHMENT OF DIPLOMATIC RELATIONS

Israel was one of the very first countries to officially recognize the PRC after the latter's founding in 1949. Israel was the first and, until 1956, the only country from the Middle East to recognize the People's Republic of China, even though the two countries did not exchange ambassadors until 1992. The two countries would have established diplomatic relations in the

---

[55] Yitzhak Shichor, Competence and Incompetence: The Political Economy of China's Relations with the Middle East, Asian Perspective, Vol. 30, No. 4, 2006, p. 60.

[56] About Sino-Israel Relations, China.org.cn, 07.09.2009; Chris Zambelis and Brandon Gentry, նշվ. աշխ., էջ 68:

[57] Yitzhak Shichor, Hide and Seek: Sino-Israeli Relations In Perspective, նշվ. աշխ., էջ 205:

early 1950s had Israel not been pressured by the United States and had China not readjusted its foreign policy following the Bandung Conference of Asian and African states. Establishing bilateral diplomatic ties, however, was complicated also by the Korean War. Chinese sentiments toward the Israeli government became noticeably hostile. This paralleled the severed ties of the Israeli and Soviet governments, and Chinese government more openly condemned Israel and Zionism in general. Beijing's historic support for the Palestinian nationalist cause delayed the development to the Sino-Israel relationship for nearly half a century.

Unofficial ties, however, were established by the Chinese and Israeli governments, regardless of global politics. Israel had secret arms relations with China from the mid-70s onwards. Following the Sino-Soviet split and China's 1979 establishment of diplomatic relations with the United States, China began to develop a series of secret, non-official ties with Israel.

The period between 1987-1991 saw significant strides forward in Sino-Israeli relations. 1987, in order to facilitate Israeli-Chinese economic relations, the Israeli Foreign Ministry decided to reopen its consulate in Hong Kong, which had closed in 1975. Hong Kong consulate would be used as the main point for diplomatic and economic contacts between Israel and China. The Foreign Ministers of the two countries held a secret meeting at the United Nations in 1987. The Israeli government enabled Beijing to circumvent U.S. and European military sanctions imposed following the 1989 Tiananmen Square crackdown. Most experts agree that arms sales and other military transactions lessened Chinese opposition toward Israel, led to a mitigation of hostile rhetoric, and eventually paved the way for normalization of relations. By 1990, both countries had unofficial missions in Beijing and Tel Aviv.

The collapse of the Soviet Union, China's push for modernization and its growing belief in Israel's ability to further this objective, the belief in the myth of the American Jewish lobby, strained relations with the Palestinians, and the 1991 Gulf War, when Israel was attacked by Iraqi Scud missiles and refrained from retaliation, all combined to serve as a catalyst for the normalization of ties between the two countries. One of the excuses used by Beijing to establish diplomatic relations with Israel was its supposed willingness to take an active part in settling the Arab-Israel conflict and the

Palestine problem. The timing was also meant to enable the Chinese to take part at the Moscow conference, held in late February 1992 just several days after Sino-Israeli diplomatic ties were established.

On January 23, 1990, Israeli Foreign Minister David Levy and Chinese Foreign Minister Qian Qichen signed Joint Communiqué on the Establishment of Diplomatic Relations between the People's Republic of China and Israel, officially establishing diplomatic relations between China and Israel. An Israeli Embassy was set up in Beijing in 1992, and in 1994 an Israeli Consulate was opened in Shanghai. High-level visits between China and Israel have frequently been exchanged since 1992 with the establishment of diplomatic relations.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ ԵՎԱ
(ԱԻ)

ՆԱՎԹԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՃԳՆԱԺԱՄԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՆ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔ, ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

1980 թ. սեպտեմբերի 22-ին սկսվեց Իրան-իրաքյան պատերազմը: Պատերազմում նախահարձակն Իրաքն էր, սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ զինված հակամարտությանը մասնակցող երկու կողմերն էլ՝ թե՛ իրաքյան բասսական վարչակարգը, և թե՛ Իրանի Իսլամական Հանրապետությունը, ունեին պատերազմ սանձազերծելու ներքին և արտաքին շահագրգռվածություններ[1]: Իրանի և Իրաքի միջև առկա հակասությունների ամբողջականությունը չի սահմանափակվում միայն երկու երկրների գաղափարախոսական առանձնահատկությամբ, առկա էին նաև կրոնական (շիաներ-սուննիներ փոխհարաբերությունը), էթնո-ազգային (պարսիկներ-արաբներ փոխհարաբերությունը), տարածքային (միջպետական սահմանների, Շատ ալ-Արաբ գետի, վիճելի կղզիների հետ կապված հարցերը) խնդիրներ[2]:

Նավթային երրորդ ճգնաժամը, որն արձանագրվեց 1985-1987 թթ., Իրան-իրաքյան պատերազմի հետևանք էր: Նավթային երրորդ ճգնաժամի առաջացման պատճառների շարքին են դասվում.

Առաջինն այն, որ պատերազմող կողմերը՝ Իրանը և Իրաքը, հանդիսանալով Նավթարդյունահանող երկրների կազմակերպության՝ ՕՊԵԿ-ի անդամներ, սահմանափակում էին կազմակերպության հնարավորությունները՝ միահամուռ ուժերով հակազդելու արևմտյան տերությունների փորձերին իրենց պայմաններն ՕՊԵԿ-ին թելադրելու հարցում: ՕՊԵԿ-ի թուլացումից օգտվեցին ՕՊԵԿ-ի անդամ

---

[1] Stivang N., Iran and the GCC States: Prospects for Long Term Regional Security in the Gulf, Gulf thesis, 2000, p. 34.

[2] Сажин В., К вопросу о причинах ирано-иракской войны, Специальный бюллетень, N 5, M., 1988, с. 53.

չհանդիսացող նավթարդյունահանող պետությունները, որոնք սկսեցին ակտիվորեն մշակել իրենց սեփական հանքավայրերը և բարձրացնել նավթի արդյունահանման քանակը՝ հասցնելով մինչև 4 մլն բարելի 1 օրում: Արդյունքում՝ 1980-ականների կեսերին համաշխարհային շուկայում գոյացավ 1 օրում 10 մլն բարելի նավթի ավելցուկ:

Եվ երկրորդ պատճառը՝ նավթ ներկրող երկրների կախվածության թուլացումն էր նավթից, որը պայմանավորված էր արդյունաբերությունում այլընտրանքային էներգիայի օգտագործմամբ և նավթային պաշարների պահուստային ֆոնդի ստեղծմամբ[3]:

Հատկանշական է, որ ամենամեծ նվաճումն այլընտրանքային էներգիայի օգտագործման ոլորտում պատկանում է Ճապոնիային: Նա կարողացավ մի շարք արդյունաբերությունների աշխատանքն ամբողջովին վերափոխել քարածուխով աշխատելու[4]:

Ինչ վերաբերում է նավթային պաշարների պահուստային ֆոնդին, ապա 1984 թ.-ի դրությամբ ԱՄՆ-ի ֆեդերատիվ պահուստը կազմում էր 375 մլն բարել նավթ, իսկ Ճապոնիայում՝ 82.7 մլն. բարել, որը կբավականացներ համապատասխանաբար 25 և 19 օր՝ երկրի նավթային պահանջարկն ապահովելու համար[5]:

Փաստորեն՝ նավթային պահանջարկի թուլացման և նավթի առաջարկի ավելացման արդյունքում, տեղի ունեցավ նավթի գնի անկում:

Ստեղծված իրադրությունը ստիպեց ՕՊԵԿ-ին վերանայել իր քաղաքականությունը՝ փորձելով վերահսկողություն սահմանել թե՛ վառելանյութի արդյունահանման քանակի, թե՛ նավթի գնի վրա: Նավթի արդյունահանման քանակի վերահսկողությունն ՕՊԵԿ-ը փորձեց իրականացնել յուրաքանչյուր անդամ պետության համար չափաբաժիններ սահմանելու միջոցով, որը թույլ կտար հավասարակշռություն մտցնել առաջարկի և պահանջարկի միջև՝ պահպանելով նավթի գնի կայունությունը[6]: Նավթի արդյունահանման

---

[3] Инджикян Р., ОПЕК в мировом капиталистическом хозяйстве, М., 1983, с. 42; Middle East Economic Digest, 1981, Jan. 22, p. 2.

[4] Инджикян Р., նշվ. աշխ., էջ 39:

[5] Растущая напряженность в районе Персидского залива, ТАСС, БПИ 13.03.1984, с. 30.

[6] Вокруг вопроса о нефти, ТАСС, Атлас N 15 (1292), 09.04.1984, с. 39.

քանակը կամ չափաբաժինները որոշվում էր տվյալ երկրում առկա նավթային պաշարների և նավթաարդյունաբերության հնարավորությունները հաշվի առնելու միջոցով:

Այսպես՝ արդեն 1982 թ. մարտի 19-20-ը Վիեննայում անցկացվող ՕՊԵԿ-ի խորհրդաժողովի ժամանակ որոշվեց նավթի արդյունահանման քանակը նվազեցնել մինչև 18 մլն բարել 1 օրում, այսինքն՝ 1979 թ.-ի համեմատ (31 մլն բարել 1 օրում)՝ պակասեցնելով մոտ կիսով չափ[7]: Բացի այդ ՕՊԵԿ-ը կրճատեց նավթի պաշտոնական գները 1 բարելի համար սահմանված 34 դոլարից՝ իջեցնելով մինչև 29 դոլար[8]:

Ըստ սահմանված չափաբաժինների՝ Սաուդյան Արաբիան պարտավորվում էր արդյունահանել 4.77 մլն բարել, Քուվեյթը՝ 1.59 մլն բարել[9], Իրաքը՝ 1.37 մլն բարել[10], ԱՄԷ-ն՝ 1 մլն բարել[11], Կատարը՝ 300 հազար բարել նավթ 1 օրում[12]: Սակայն ոչ բոլոր պետություններն էին համամիտ ՕՊԵԿ-ի ընդունած չափաբաժինների հետ: «Կատար Ջեներալ մոթորս կորպորեյշն»-ի տնօրենը նշեց, որ իր երկրի համար սահմանած չափաբաժինը բավարար չէ երկրի գոյատևման համար և այդ պատճառով անհրաժեշտ է համարում ՕՊԵԿ-ի անդամներին խորհրդակցության հրավիրել՝ չափաբաժինները բարձրացնելու նպատակով[13]: Վենեսուելան հայտարարեց, որ չի կարող պահպանել սահմանված 1,5 մլն բարել նավթ արդյունահանելու իր չափաբաժինը և

---

[7] «Fortune», N.Y., 21.07.1982.

[8] Нефть и энергетика, ТАСС, БПИ N 15, 20.01.1984, с. 40.

[9] Об экономическом положении Кувейта, ТАСС, БПИ N 41, 27.02.1984, с. 36.

[10] Նշենք, որ Սաուդյան Արաբիան և Քուվեյթը պարտավորվեցին ապահովել Իրաքի չափաբաժինը՝ Իրան-իրաքյան պատերազմի արդյունքում հնարավոր խոչընդոտների առաջացման դեպքում: Այս մասին տե՛ս Григорьева В., Новые тенденции в политике Иракской партии «Басс» в начале 80-х годов, Восток и современность, Научно-информационный бюллетень, 2 (36), М., 1985, с. 87.

[11] Cockburn P., Internal Situation in the United Arab Emirates, Financial Times, London, 26.10.1982.

[12] Ahmad Saleh Alsalem, Subhash C. Sharma, Troutt Marvin D., Fairness Measures and Importance Weights for Allocating Quotas to OPEC Member Countries, The Energy Journal, Vol. 18, No. 2, 1997, p. 4.

[13] Катар: политико-экономический обзор, ТАСС, БПИ N 170, 30.08.1984, с. 46.

մտադիր է այն բարձրացնել 300 հազար բարելով: Միևնույն ժամանակ Նիգերիան առաջարկեց, որպեսզի Սաուդյան Արաբիան նվազեցնի իր արդյունահանման քանակը՝ պատճառաբանելով, որ չափաբաժինները պետք է սահմանվեն ոչ թե նավթային պաշարների քանակի հիման վրա, այլ ըստ ՕՊԵԿ-ի անդամ երկրների բնակչության թվաքանակի, որի տվյալներով Սաուդյան Արաբիան իր 5 մլն բնակչությամբ անհամեմատ զիջում է Նիգերիային և Ինդոնեզիային՝ համապատասխանաբար 80 մլն և 150 մլն բնակչությամբ[14]:

Հատկանշական է, որ չափաբաժինների սահմանումը չնպաստեց նավթի գների կանոնակարգմանը և չկասեցրեց ճգնաժամի խորացումը: Եվ խնդիրը ոչ միայն կայանում էր պարբերաբար ՕՊԵԿ-ի երկրների կողմից սահմանված նավթի արդյունահանման չափաբաժնի խախտման, այլև ՕՊԵԿ-ի անդամ չհանդիսացող նավթարդյունահանող երկրների անպատասխանատու մոտեցման մեջ, որոնք լուրջ չընդունեցին նավթի գների անկման վտանգը և ՕՊԵԿ-ի նախազգուշացումները՝ շարունակելով ակտիվորեն մշակել իրենց նավթահանքերը: Նավթի գնի անկումը դարձավ անկառավարելի, որն իր ազդեցությունն ունեցավ բոլոր նավթարդյունահանող երկրների տնտեսության վրա՝ սկիզբ դնելով նավթային երրորդ ճգնաժամի առաջացմանը[15]:

Ճգնաժամից դուրս գալու փորձ ձեռնարկեց Սաուդյան Արաբիան: 1985 թ. ապրիլին նա իր նավթի արդյունահանման քանակն իջեցրեց մինչև 1 օրում 2.35 մլն բարելի, սակայն սաուդովցիները չկարողացան երկար պահել այդ ցուցանիշը և արդեն նույն թվականի աշնանը նավթի արդյունահանման քանակը հասավ մինչև 4.35 մլն բարելի, որը, ինքնստինքյան, կրկին նպաստեց նավթի գնի անկմանը[16]:

Արդեն 1986 թ. ձմռանը, ՕՊԵԿ-ի կողմից սահմանված չափաբաժինների խախտման արդյունքում, արձանագրվեց նավթի գնի հերթական անկումը[17], որի պատճառով 1986 թ. դեկտեմբերին ժնևում

---

[14] Ibrahim Y., Attack on the Role of Saudi Arabia in OPEC, Wall Street Journal, N.Y., 21.07.1982, p. 35.

[15] Petroleum Economist, L., 1986, N4, p. 6.

[16] The Gulf Crisis: A Kuwaiti Perspective: An Interview with Hassan Al-Ebraheem, Journal of Palestine Studies, Vol. 20, No. 2 (Winter, 1991), p. 96.

[17] Middle East Economic Digest, London, 1986, N12, p. 5-7.

հրավիրված ՕՊԵԿ-ի անդամ երկրների խորհրդաժողովի ժամանակ որոշվեց նավթի արդյունահանման քանակը կրկին նվազեցնել՝ իջեցնելով մինչև 15.8 մլն բարելի 1 օրում, իսկ նավթի գինը սահմանվեց 18 դոլար 1 բարելի համար[18], որը 1987 թ. սկզբին ընկած մինչև 10 դոլար 1 բարելի համար, ինչը նավթարդյունահանումը դարձնում էր ոչ օգտավետ:

Հատկանշական է, որ ի տարբերություն 1973 թ.-ի ճգնաժամի, որի ժամանակ նավթ ներկրող երկրներն էին պայքարում վառելանյութ ձեռք բերելու համար, այժմ իրավիճակը ճիշտ հակառակն էր: 1985-1987 թթ.-ի նավթային ճգնաժամի ընթացքում նավթարդյունահանող երկրները փնտրում էին «գնորդի»՝ իրենց նավթը վաճառելու համար, քանի որ նավթի քանակի ավելցուկը և նավթի գների անկումը նավթարդյունահանող երկրների համար լուրջ մտահոգության տեղիք էր տալիս: Առաջին անգամ գնագոյացման համակարգը չէր աշխատում: Գոյություն չուներ նույնիսկ ՕՊԵԿ-ի պաշտոնական գին նավթի համար: Այժմ նավթի գինը որոշվում էր ոչ թե ՕՊԵԿ-ի երկրների միջև լարված բանակցությունների, այլ բազմաթիվ գործարքների արդյունքում: ՕՊԵԿ-ը պառակտվել էր մի կողմից Իրանի, Ալժիրի և Լիբիայի միջև, որոնք ցանկանում էին, որ Նավթարդյունահանող երկրների կազմակերպությունն ընդունի նոր և ավելի ցածր չափաբաժիններ և այդ ճանապարհով վերադարձնի նավթի գինը 29 դոլարի 1 բարելի համար, իսկ մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի և ԱՄԷ-ի, որոնք, ունենալով հսկայական նավթային պաշարներ, ձգտում էին վերադարձնել «կորցրած» շուկան:

Ինչ որ առումով, Իրան-իրաքյան պատերազմը և նրա հետևանքով առաջացած ճգնաժամը ձեռնտու էր նավթ ներկրող երկրներին: Չնայած նավթի գնի հաճախ տատանողականությունը հանգեցրեց ինֆլյացիայի անկանոն աճին, արդյունաբերական զարգացած պետությունները՝ ի դեմս ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի երկրների և Ճապոնիայի, կարողացան հաղթահարել և վերահսկողություն սահմանել նավթի գնի անկման արդյունքում առաջացած ինֆլյացիայի նկատմամբ[19]:

---

[18] Валькова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М. 1987, с. 27.

[19] Иностранная печать о борьбе на мировом рынке нефти, ТАСС, БПИ № 249, 21.12.1984, с. 29-30.

Հատկանշական է, որ չնայած նավթային ճգնաժամին՝ 1984 թ.-ի դրությամբ Ճապոնիան արձանագրեց 3%-անոց տնտեսական աճ, իսկ ՀՆԱ-ի ցուցանիշը աճեց 4%-ով[20]:

Իրան-իրաքյան պատերազմը, ակնհայտորեն, ձեռնտու էր նաև գերտերություններին ՕՊԵԿ-ի միջազգային դերը նավթային շուկայում խարխլելու, ինչպես նաև տարածաշրջանում գերիշխանության ձգտող Իրանի և Իրաքի ներուժը քայքայիչ պատերազմական գործողություններում սպառելու տեսանկյունից, սակայն ոչ ոք շահագրգռված չէր պատերազմական գործողությունների ընդլայնման, ինչպես նաև չեզոք պետություններին ռազմական գործողությունների մեջ ներգրավելու հարցում[21]: Պատերազմական գործողությունները բարդացնում էին իրավիճակը նաև կարևորագույն ծովային հաղորդակցության գոտում՝ Հորմուզի նեղուցում, որը Պարսից ծոցից նավթ առաքելու հիմնական ճանապարհն էր: Հատկապես խնդիրը սրվեց Իրանի կառավարության կողմից արված հայտարարությունից հետո, համաձայն որի՝ Իրանը սպառնում էր փակել Հորմուզի նեղուցը, եթե իր նավթային արդյունաբերությանը վտանգ սպառնա, որը լուրջ սպառնալիք էր ինչպես նավթ արտահանող, այնպես էլ Պարսից ծոցի տարածաշրջանից նավթ ներկրող երկրների համար: Նշենք, որ Հորմուզի նեղուցով է անցնում ոչ միայն իրանյան նավթը, այլև Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Կատարի և ԱՄԷ-ի նավթային մատակարարումները, որոնք կազմում էին ընդհանուր նավթային առաքումների 73%-ը[22]՝ օրական արտահանելով մոտ 7.3 մլն բարել նավթ[23]: Հորմուզի նեղուցով ԱՄՆ առաքվող նավթի քանակը կազմում էր 7%, Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ 25% և Ճապոնիա՝ 55-60%[24]: Այսպիսով, ցանկացած խոչընդոտ կարող էր նավթի արտահանման ընդհատման պատճառ դառնալ՝ մեծ վնաս հասցնելով մի շարք երկրների, մասնավորապես՝ Ճապոնիայի տնտեսությանը: Թեև ԱՄՆ և

---

[20] Обзор экономического положения капиталистического мира, ТАСС, БПИ № 41, 27.02.1984, с. 7-8.

[21] Война в Персидском заливе и неустойчивость границ, ТАСС, БПИ N 37, 23.02.1981, с. 35.

[22] «Kyodo News Service», May 18, 1984.

[23] Строительство новых нефтепроводов, ТАСС, Атлас N 27 (1409), 06.07.1984, с. 44.

[24] "The Japan Times", 07.06.1987.

ՆԱՏՕ-ի անդամ երկրներին նույնպես անհանգստացնում էր Հորմուզի նեղուցի նավարկության անվտանգության հարցը, սակայն ի տարբերություն Ճապոնիայի՝ նրանք կարող էին արտահանել նավթ նաև միջերկրածովյան նավահանգիստներով, որոնք կապակցված էին Պարսից ծոցի տարածաշրջանի հետ նավթախողովակներով: Այդ պատճառով Ճապոնիան կապիտալիստական երկրներից ամենից շատն էր հետաքրքված Իրան-իրաքյան հակամարտությունը շուտափույթ ավարտին հասցնելու հարցում՝ կասեցնելով վերջինիս տարածումը Պարսից ծոցի ամբողջ տարածաշրջանով:

Հորմուզի նեղուցի հնարավոր փակման հարցի շուրջ լրագրողներին իր մտավախությունն է հայտնել Ճապոնիայի արտգործնախարար Շինտարո Աբեն՝ նշելով, որ հակամարտությունն Իրանի և Իրաքի միջև հղի է նավթային նոր ճգնաժամով[25]:

Ռազմական գործողությունների արդյունքում ընդհատվեց նաև հակամարտող պետություններում զանազան արդյունաբերական օբյեկտների կառուցումը: Առաջին հերթին, վնասվեցին Ճապոնական «Միցուի» խմբի ֆինանսական շահերը, որոնք Իրանում իրականացնում էին Բենդեր-Խոմեյնու նավթաքիմիական համալիրի կառուցումը: Այդ պատճառով Տոկիոն շահագրգռված էր Պարսից ծոցում պատերազմը շուտափույթ ավարտին հասցնելու հարցում:

1984 թ. Իրաքի կողմից իրանյան նավթային օբյեկտների վրա հարձակման արդյունքում Հորմուզի նեղուցի շրջափակման վտանգ առաջացավ, որը ստիպեց Ճապոնիայի կառավարությանը փոփոխություններ մտցնել իր քաղաքականության մեջ և ակտիվացնել իր միջազգային դերն աշխարհում[26]՝ առաջարկելով միջնորդական միջամտություն՝ հակամարտությանը շուտափույթ վերջ դնելու նպատակով[27]: Հարկ է նշել, որ Ճապոնիայի միջնորդական առաքելության գաղափարը ծնվել է ոչ թե Տոկիոյում, այլ Բաղդադում ռազմական գործողությունները սկսելուց մի քանի ամիս անց: 1980 թ.

---

[25] Богатуров А., Японская дипломатия в борьбе за источники энергетического сырья (70-80-е годы), М., 1988, с. 133.

[26] Ueki Y., Japan's UN Diplomacy: Sources of Passivism and Activism, Japan's Foreign Policy after Post – Cold War: Coping with changes, New York, 1993, p. 354.

[27] "The Japan Times", Tokyo, 02.07.1983.

հոկտեմբերին Իրաքի բարձրագույն և միջնակարգ կրթության նախարարը՝ Դ. Մ. Խալաֆը, ով պաշտոնական այցով գտնվում էր Տոկիոյում, փոխանցեց վարչապետ Սուձուկի Դզենկոյին Սադամ Հուսեյնի անձնական ուղերձը, որում իրաքյան կողմը դիմում էր ճապոնական կառավարությանը խնդրանքով աջակցել կրակի դադարեցման և Իրանի հետ համաձայնագրի կնքման հարցում: Այդ առաջարկը կրկնվեց նաև 1980 թ. դեկտեմբերին՝ Իրաքի նավթի նախարար Աբդուլ Քարիմի կողմից Ճապոնիա կատարած այցի ժամանակ: Այս անգամ Բաղդադի ներկայացուցիչը ներկայացրեց հակամարտության կարգավորման ծրագիրը, որի մեջ Տոկիոյին շահագրգռելու համար առաջարկեց վերջինիս ներգրավել յոթ խոշոր նախագծերի (նավթաքիմիական կազմակերպությունների, էլեկտրակայանների և ագրոարդյունաբերական համալիրների կառուցման) իրագործման մեջ: Այս հարցերի քննարկմանն էր նվիրված 1981 թ. հունվարին տեղի ունեցած տնտեսական համագործակցության շուրջ ճապոնա-իրաքյան հանձնաժողովի խորհրդաժողովը: Արդեն 1981 թ. մարտին Ճապոնիան հայտարարեց իր հնարավոր միջնորդական առաքելության մասին[28]: Պատերազմը դադարեցնելու միջնորդական առաքելության առաջարկով հանդես եկան նաև մի շարք այլ պետություններ՝ Ալժիրը, Թուրքիան: Սակայն Իրանի կառավարության ժխտողական մոտեցումը հակամարտության գործընթացին որևիցե երրորդ կողմի մասնակցության վերաբերյալ[29], Ճապոնիային ստիպեց որոշակիորեն փոխել իր միջնորդական առաքելության գործելաոճը՝ հանդես գալով լուսանցքային դերում[30]:

Հետաքրքրված լինելով պահպանել ազատ նավարկությունը Հորմուզի նեղուցում՝ ճապոնական կառավարությունը ձգտում էր ներկայանալ որպես կապիտալիստական զարգացած երկրների ներկայացուցիչ՝ օգտագործելով իր առաքելության համար միջազգային

---

[28] 日本経済新聞(Nihon Keizai Sinbun), Tokyo, 03.02.1981.

[29] Kazuo Ch., Japan and the Middle East in the 1970s and Early 1980s: A Japanese Diplomat's View, Japan in the Contemporary Middle East, London, 1993, p. 144-154.

[30] Reich B., Cutler Ch., Japan, The Powers in the Middle East: The Ultimate Strategic Arena, New York, 1987, p. 301-302.

կազմակերպությունների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի բեմահարթակները և ցանկանալով ներգրավել մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացների մեջ՝ դրանով իսկ վստահություն ներշնչելով իր դիվանագիտության հանդեպ և նպաստելով տարածաշրջանի կայունությանը[31]: Ելույթ ունենալով 1983 թ. սեպտեմբերի 28-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում՝ Ճապոնիայի արտգործնախարար Շ. Աբեն հայտարարեց. «Մենք ջանքեր չենք խնայի զարգացնելու ՄԱԿ-ի հետ մեր համագործակցությունը (Ճապոնիայի սահմանադրությամբ սահմանված շրջանակներում)՝ Իրանի և Իրաքի հակամարտությունը խաղաղ միջոցներով կարգավորելու համար»[32]:

Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 39-րդ խորհրդաժողովի ժամանակ՝ 1984 թ. սեպտեմբերին, Ճապոնիայի արտգործնախարարը նշեց, որ քիմիական զենքի օգտագործման արգելումը և Պարսից ծոցում անվտանգ նավագնացությունը՝ շատ կարևոր է Իրան-իրաքյան հակամարտությունը չսրելու համար[33]: Իսկ արդեն Ճապոնիայի Ազգային ժողովի 104-րդ նստաշրջանի ժամանակ՝ 1986 թ. հունվարի 27-ին, Շ. Աբեն նշեց. «Պետք է կառուցողական մթնոլորտ ստեղծել խաղաղ ճանապարհով խնդրին լուծում տալու նպատակով»[34]:

1981-1987 թթ. պատերազմական գործողությունների արդյունքում Հորմուզի նեղուցում վնասվեցին ավելի քան 330 քաղաքացիական, գլխավորապես՝ երրորդ պետությունների նավթալցոնային նավերը: Բացի այդ, իրանյան իշխանությունները վերազննման նպատակով հաճախակի կանգնեցնում էին արաբական երկրներ ուղևորվող «չեզոք» պետությունների նավերը՝ փորձելով խոչընդոտել հնարավոր սպառազինությունների առաքումն Իրաք: Միայն 1987 թ. առաջին կեսին գրանցվեց իրանյան ռազմական ներկայացուցիչների կողմից Քուվեյթ

---

[31] Chubin Sh., The Middle East Factor in Alliance Politics, Washington D.C., 1986, p. 22-23.

[32] "The Japan Times", Tokyo, 30.09.1983.

[33] Japan, The Ministry of Foreign Affairs, The Information Bulletin, October 18, 1984, p. 131.

[34] Japan, The Ministry of Foreign Affairs, The Diplomatic Bluebook 1986, Tokyo, 1986, p. 137.

ուղևորվող ճապոնական նավերի զննման 5 միջադեպ: Այս ամենը լուրջ անհանգստություն առաջացրեց Տոկիոյում[35]:

Ճապոնիայի դիվանագիտական փորձերը հասնելու փոխըմբռնման հակամարտող կողմերի միջև ոչ մի արդյունք չտվեցին:

Իրավիճակը տարածաշրջանում ավելի բարդացավ ԱՄՆ-ի վարչակարգի կողմից Պարսից ծոցում ամերիկյան ռազմածովային բազա տեղակայելու վերաբերյալ հայտարարությունից հետո: Ավելին, Վաշինգտոնը կոչ էր անում իր դաշնակիցներին, այդ թվում՝ Ճապոնիային, միանալ ռազմական գործողություններին[36]: Սակայն Տոկիոյի իշխող օղակները դեմ էին Ծագող Արևի Երկրի ռազմական ներկայությանը Պարսից ծոցի տարածաշրջանում՝ պատճառաբանելով, որ այն հակասում է երկրի «խաղաղ» սահմանադրության դրույթներին[37]: Այդ մասին պաշտոնապես հայտարարվեց 1987 թ. մայիսի 30-ին Ճապոնիայի արտաքին գործերի նախարարությունում կազմակերպված ճեպազրույցի ընթացքում, որի ժամանակ նշվեց, որ Ճապոնիայի կառավարությունը մտադիր չէ ուղարկել որևիցե նավ Հորմուզի նեղուց, բացառությամբ նավթային տանկերների՝ ընդգծվելով, որ Ծագող Արևի Երկիրը կարող է մասնակցություն ունենալ հակամարտության կարգավորման գործընթացին բացառապես խաղաղ միջոցներով[38]: Ճապոնիայի վարչապետ Յ. Նակասոնեն 1987 թ. հունիսին Վենետիկում «Յոթ երկրների» հերթական խորհրդակցության ավարտից հետո մամլո ասուլիսի ժամանակ հաստատեց իր երկրի դիրքորոշումը վերոնշյալ հարցի շուրջ՝ հավելելով, որ Տոկիոյի կողմից ֆինանսատնտեսական աջակցությունն ավելի մեծ ներդրում կլինի տարածաշրջանում ստեղծված խնդրի լուծման հարցում, քանի որ այն կօգնի երկու պետություններին արագորեն վերականգնել պատերազմական գործողությունների արդյունքում քայքայված տնտեսությունը[39]: Այսպես, Ճապոնիան տրամադրեց Իրաքին ավելի քան 2 մլրդ դոլարի օգնություն՝

---

35 Богатуров А., նշվ. աշխ., էջ 138:

36 日本経済新聞(Nihon Keizai Sinbun), Tokyo, 27.05.1987.

37 "The Japan Times", Tokyo, 20.05.1987.

38 "The Japan Times", Tokyo, 07.06.1987.

39 Ueki U., նշվ. աշխ., 355:

երկրում ստեղծված տնտեսական ծանր վիճակը հաղթահարելու համար[40]:

Այսպիսով, Ճապոնիայի կառավարությունը, առաջնորդվելով «խաղաղ» սահմանադրության սկզբունքներով և ցանկանալով պահպանել իր կապերը նավթաարդյունահանող երկրների հետ, նախընտրեց չաջակցել իր դաշնակցին ռազմական միջամտության իրականացման հարցում, որի պատճառով ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը 1987 թ. մայիսին մտցրեց 100% տուրք (մոտ 300 մլն դոլար) Միացյալ Նահանգներ ներկրվող ճապոնական էլեկտրական ապրանքների վրա[41]: Սակայն դա չկանգնեցրեց Ճապոնիային շարունակելու իր գործունեությունը Իրան-իրաքյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու ուղղությամբ: Դեռևս 1987 թ. հունվարին, դառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, նա իր ակտիվ քաղաքականության շնորհիվ կարողացավ ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծել Իրան-իրաքյան Ռազմական Հետախուզական խումբ (ԻԻՌՀԽ), որի հիմնական գործառույթն էր երկու երկրների միջև կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը[42]: Արդեն 1987 թ. հուլիսի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց N 598-րդ բանաձևը՝ երկու պատերազմող պետությունների միջև կրակի դադարեցման վերաբերյալ:

1988 թ. օգոստոսի 20-ին Իրանի և Իրաքի միջև կնքվեց զինադադար՝ դրանով իսկ վերջ դնելով ութամյա պատերազմին:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Իրան-իրաքյան պատերազմը, որը հրահրվեց գերտերությունների «լուռ» միջնորդությամբ՝ նպատակ ունենալով թուլացնելու ոչ միայն Իրանի և Իրաքի դիրքերը տարածաշրջանում, այլև խարխլելու ՕՊԵԿ-ի դիրքերը միջազգային նավթային շուկայում, ստեղծեց նախադրյալներ նավթային երրորդ

---

[40] Шарипов У., Персидский залив: обострение политической и военной ситуации и международных отношений в конце XX - начале XXI вв., М., 2010, с. 49.

[41] Вербицкий С., Новые тенденции в новой политике Японии: Япония 1987, Ежегодник, М., 1987, с. 55–56.

[42] Ueki Y., նշվ. աշխ., էջ 355:

ճգնաժամի առաջացման համար, որն ունեցավ իր բացասական ազդեցությունը նավթարդյունահանող երկրների տնտեսության վրա:

Եվ թեև կապիտալիստական երկրների, այդ թվում նաև Ճապոնիայի տնտեսությանը, մեծ վնասներ չէր հասցվել նավթային երրորդ ճգնաժամի արդյունքում, սակայն Իրան-իրաքյան հակամարտության հետագա ընդլայնումը կարող էր լուրջ ճգնաժամերի պատճառ դառնալ, որոնցից հնարավոր եղավ խուսափել Տոկիոյի դիվանագիտական ջանքերի շնորհիվ:

HARUTYUNYAN YEVA
(IOS)

IRAN-IRAQ WAR AS THE RESULT OF THE THIRD OIL CRISIS AND THE ROLE OF JAPAN IN THE CONFLICT RESOLUTION

Iran-Iraq war began on September 22 in 1980. The causes of the war between Iraq and Iran are historic and deeply rooted in concern over internal security, territorial boundaries, ethno-national and religious issues. Iran-Iraq war was initiated by the Superpowers aiming not only to weaken the role of Iran and Iraq in the region, but also to undermine OPEC's role in the oil market which became the reason of the third oil crisis having negative influence on the economy of oil-producing countries.

OPEC tried to overcome the crisis by determining quotas for all its member states. Though undertaking of OPEC was not successful as non-OPEC oil producing countries used the droop of the role of OPEC for increasing their oil production. The other reason of failing the initiative of OPEC was the policy of the industrialized countries to keep oil reserves and to use renewable energy in their industries. The result of such policy became leftover oil in the market – about 10 million barrels oil per day (oil/day). It is noteworthy to mention, that a great achievement in renewable energy belongs to Japan. The Country of Rising Sun managed to change work of some its industries on coal. Besides it, a great amount of oil reserves let industrialized countries be independent from the policy of the oil-producing countries.

However, the further continuation of Iran-Iraq war threatened the Strait of Hormuz through which was delivered oil of the Persian Gulf. The Japanese government was interested in safely navigation through the Strait as it was the only way for Japan to import oil. Japan started to mediate using for its mission the stages of the United Nation and trying to be involved in the Middle Eastern political processes.

The situation in the region was compounded after the announcement of the USA to deploy its naval forces in the Persian Gulf. Moreover, Washington asked its allies to join in its military undertaking. In respond to this suggestion, Japan preferred not to take part in military action giving preference to help Iran and Iraq by diplomatic methods.

Thus, in 1987 becoming the non-permanent member of the UN Security Council, Japan imitated the foundation of Iran-Iraq Military Observer Group (UNIIMOG). This Group should support the conflicting countries to sign ceasefire. On July 20 in 1987 the UN Security Council adopted resolution N 598 about the ceasefire and on the 20th of August, 1988 Iran and Iraq signed an agreement about the ending of eight year war.

Eventually, the continuation of Iran – Iraq war would become the reason of the crisis in the Persian Gulf which should damage not only the economy of oil-producing countries in the region but also the economy of industrialized countries. Mostly, due to the diplomatic efforts of Japan the war was over.

ՂԱԶԱՐՑԱՆ ՍԱՐԳԻՍ
(ԱԻ)

ՋՐԻ ԽՆԴԻՐԸ ՀՈՐԴԱՆԱՆԱ-ԻՍՐԱՑԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ[1]

Դեռևս 25 տարի առաջ ամերիկյան փորձագետները նշեցին երկրագնդի 10 շրջաններ, այդ թվում՝ Մերձավոր Արևելքը, որտեղ կարող էին պատերազմներ ծագել ջրային ռեսուրսների պաշարների սպառման պատճառով: Մերձավոր Արևելքում ապրում է աշխարհի բնակչության հինգ տոկոսը, սակայն նրան բաժին է ընկնում մոլորակի քաղցրահամ ջրերի միայն 1%-ը[2]:

Եփրատ-Տիգրիսի և Հորդանանի գետավազանի երկրների միջև գոյություն ունեն ոչ միայն քաղաքական, այլև ջրի գործոնով պայմանավորված հակասություններ: Եփրատ-Տիգրիսի գետավազանի երկրների՝ Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի միջև արդեն տասնամյակների պատմություն ունեցող ջրային հակասությունները ժամանակ առ ժամանակ այդ պետություններին կանգնեցրել են պատերազմի սպառնալիքի առաջ: Խնդիրն այն է, որ Եփրատն ու Տիգրիսը իրենց հիմնական սնուցումը ստանում են վերին հոսանքի երկրում՝ Թուրքիայում, որն օգտագործելով այդ հանգամանքը և ունենալով բավարար ֆինանսական ռեսուրսներ՝ կարողացել է հօգուտ իրեն խոշոր ջրային ծրագրեր իրականացնել, ինչը բազմաթիվ հակասությունների առիթ է դարձել:

Ոչ պակաս լարված իրավիճակ է Հորդանան գետի ջրավազանում, որն ընկած է Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի, Իսրայելի և

---

[1] Հոդվածում երկկողմ հարաբերություններում առկա ջրի խնդիրը քննարկվում է 20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի սկզբի համատեքստում:

[2] The Water-Energy Nexus in the Jordan River Basin: The Potential for Building Peace through Sustainability, Global Energy Network Institute, http://www.geni.org/globalenergy/research/water-energy-nexus-in-the-jordan-river-basin/the-jordan-river-basin-final-report.pdf

Պաղեստինի Ինքնավարության[3] տարածքներում: Տնտեսական առումով Հորդանան գետը չափազանց կարևոր, կենսական նշանակություն ունի հատկապես Իսրայելի և Հորդանանի համար: Եթե Սիրիան ու Լիբանանն ունեն այլ ջրային աղբյուրներ, ապա Իսրայելն ու Հորդանանը գրեթե ամբողջապես կախված են Հորդանան գետից:

Հորդանան և Յարմուք գետերի ջրերի բաժանման պայքարն Իսրայելի և Հորդանանի միջև մշտապես եղել է արաբ-իսրայելական հակամարտության առանցքային խնդիրներից մեկը: Այս գետերն սպասհովում են Իսրայելի և Հորդանանի ջրերի ընդհանուր սպառման ավելի քան 1/3-ը:

Ջրի վերաբերյալ վեճի պատմությունը սկիզբ է առել Իսրայել պետության հռչակումից սկսած[4]: Արդյունքում, ջուրը դարձել է ռազմավարական և դիվանագիտական հիմնախնդիր, որը ստիպում է Իսրայելին պարբերաբար վիճել իր հարևան երկրների հետ[5]:

Հարկ է նշել, որ ջրի գործոնը հորդանանաիսրայելական հարաբերություններում, սկսած 1950-ականներից, եղել է նաև երկու երկրների համագործակցությանը խթանող իրողություն, չնայած պաղեստինյան թնջուկի գոյությանը: Հորդանան գետի ջրերի բաժանման և համատեղ ջրային ծրագրերի իրականացման նպատակով ԱՄՆ նախագահ Էյզենհաուերը 1953 թ. իր բանագնաց Է. Ջոնսթոնին

---

[3] Պաղեստինի Ինքնավարությունը ստեղծվել է 1994 թ., Օսլոյի 1993 թ. համաձայնագրի հիմքի վրա՝ Պաղեստինի ազատագրության կազմակերպության (արաբերեն՝ Ֆաթհ) և Իսրայելի ղեկավարների միջև բանակցությունների արդյունքում՝ ղեկավարելու Հորդանան գետի արևմտյան ափն ու Ղազայի հատվածը:

[4] Իսրայելը ստեղծվել է 1948 թ. մայիսին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի որոշման հիման վրա՝ մանդատային Պաղեստինի տարածքների վրա: Դեռևս 19-րդ դարի վերջերից հրեական վերաբնակեցումը Պաղեստինում, ապա հրեական պետության ստեղծումը լրջագույն հակասություններ առաջացրեց արաբական երկրների հետ՝ հետագայում վերաճելով արաբ-իսրայելական պատերազմների (1948-1949 թթ., 1967 թ., 1973 թ.):

[5] Manna Maya, "Water and the Treaty of Peace between Israel and Jordan" (2006). Macro Center Working Papers, http://docs.rwu.edu/cgi/viewcontent.cgi?article=1031&context=cmpd_working_papers

գործուղել է Մերձավոր Արևելք: Վերջինիս մշակած նախագծով առաջարկվում էր մի քանի ջրատարների և ջրամբարների կառուցում, ինչպես նաև սահմանվում էին գետավազանի երկրների միջև ջրերի բաշխման մասնաբաժինները[6]: Առաջարկվում էր ջրերի բաժանումը կազմակերպել այնպես, որպեսզի կողմերից ոչ մեկն ամբողջական վերահսկում չունենա դրանց վրա: Ընդհանուր առմամբ, Հորդանան գետի ջրերի մոտ 60%-ը հատկացվում էր Լիբանանին, Սիրիային և Հորդանանին, իսկ մնացած 40%-ը՝ Իսրայելին[7]: Երկու կողմերի՝ արաբական և իսրայելական, տեխնիկական հանձնախմբերն ընդունեցին նախագիծը, որը սակայն այդպես էլ չիրականացվեց[8]:

Իսրայելը հավանություն տվեց Ջոնսթոնի նախագծին 1955 թ. հուլիսին և չնայած այն փաստին, որ արաբական տեխնիկական հանձնախումբը նույնպես կողմ էր ծրագրին, Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ) մերժեց այն: Հորդանանը, քաղաքական նկատառումներից ելնելով, նույնպես միացավ Ջոնսթոնի նախագիծը մերժելու ԱՊԼ 1955 թ. հոկտեմբերի որոշմանը[9]: Արաբները մերժեցին Իսրայելի հետ համագործակցությունը, որովհետև դա կնշանակեր իրենց կողմից Իսրայել պետության փաստացի ճանաչում: Բայց և այնպես, ԱՄՆ-ի ջանքերի շնորհիվ Հորդանանի և Իսրայելի միջև բանակցային գործընթացը շարունակվեց, ինչը սակայն նույնպես ձախողվեց: 1960-70-ականների ողջ ընթացքում Իսրայելի և Հորդանանի պաշտոնյաները տարին 2-3 անգամ հանդիպում էին, քննարկում

---

[6] The Jordan River Basin, Water Conflict and Negotiated Resolution, Munther J. Haddadin, Special Counselor to HRH Prince El Hassan Bin Talal, http://webworld.unesco.org/water/wwap/pccp/cd/pdf/case_studies/jordan_haddadin_2.pdf

[7] Eliahu Rosenthal and Robbie Sabel, Water and Diplomacy in the Jordan River Basin, http://www.internationalwaterlaw.org/bibliography/articles/general/Rosenthal+Sabel.pdf

[8] Baumgarten, Philip A., Israel's Transboundary Water Disputes" (2009). Pace Law School Student Publications, http://digitalcommons.pace.edu/cgi/viewcontent.cgi?article=1001&context=lawstudents

[9] Major Max E. Kirschbaum,Water Resources: Security Impacts in the Jordan River Basin. A Research Paper Presented to the Research Department Air Command and Staff College, March 1997, www.dtic.mil/cgi-bin/GetTRDoc?AD=ADA392882

Հորդանան և Յարմուք գետերի ջրերի օգտագործման հարցը[10]: Արդեն 1970-80-ականներին ԱՄՆ-ի միջնորդությամբ Իսրայելն ու Հորդանանը փորձում էին համաձայնության գալ ջրի բաժանման խնդրի շուրջ[11]: Բանակցությունները շարունակվեցին մինչև 1994 թ. Իսրայելի և Հորդանանի միջև հաշտության պայմանագրի կնքումը: 1994 թ. հոկտեմբերի 26-ին Վադի Արաբայում Հորդանանի Հուսեյն թագավորը և Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինը ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի, Իսրայելի նախագահ Էզեր Վեյցմանի և բազմաթիվ այլ պաշտոնյաների մասնակցությամբ ստորագրեցին հորդանանաիսրայելական խաղաղության համաձայնագիրը[12]:

Իսրայելի և Հորդանանի միջև կնքված հաշտության պայմանագիրը համարվում է իսրայելցիների և արաբների միջև համագործակցության բացառիկ օրինակներից մեկը: Այն ջրերի բաշխման վերաբերյալ աշխարհի ամենահայտնի համաձայնագրերից մեկն էր, որը Հորդանանը Եգիպտոսից հետո դարձրեց Իսրայելի հետ բարիդրացիական հարաբերություններ ունեցող երկրորդ արաբական երկիրը[13]: Իսրայելա–հորդանանյան հաշտության պայմանագիրը ջրերի միասնական տնօրինմանը հասնելու ջանքերից մեկն էր: Այն իր մեջ ներառում էր հետևյալ միջոցառումները.

1. 20 միլիոն մետր^3 Յարմուքի ջրերից ձմեռային ամիսներին Իսրայելը կուտակելու էր և բաց թողներ դեպի Հորդանան ամռան ամիսներին:

---

[10] Raed Mounir Fathallah:Water Disputes in the Middle East: An International Law Analysis of the Israel-Jordan Peace Accord, http://www.docstoc.com/docs/20385357/WATER-DISPUTES-IN-THE-MIDDLE-EAST-AN-INTERNATIONAL-LAW

[11] Neda Zawahri, Governing The Jordan River System: History, Challenges And Outlook, Cleveland State University, http://wrri.nmsu.edu/publish/journal_of_transboundary/Zawahri.pdf

[12] Thirty Years of Clandestine Meetings, The Jordan-Israel Peace Treaty, Middle East Quarterly, Vol. II, March 1995, http://www.meforum.org/241/thirty-years-of-clandestine-meetings

[13] Եգիպտոսի և Իսրայելի միջև 1979 թ. Քեմփ-դեվիդյան համաձայնագրի կնքումով՝ Եգիպտոսը դարձավ առաջին արաբական պետությունը, որը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Իսրայելի հետ:

2. 10 միլիոն մետր³ Թիբերիասի լճից բաց կթողնվեր Հորդանանի համար ոչ ամառային ամիսներին մինչև աղազտման կայանների, Ցարմուք և Հորդանան գետերի վրա ջրամբարների կառուցումը, ինչպես նաև Վադի Արաբայում ստորգետնյա ջրերի հետազոտությունը:

3. Իսրայելն ու Հորդանանը պետք է համագործակցեին լրացուցիչ 50 մլն մ³ խմելու ջուր հայթայթելու ուղղությամբ, որը հատկացվելու էր Հորդանանին[14]:

Ընդհանուր առմամբ, ըստ Հորդանանի ջրի և ոռոգման նախարար Մունզիր Հադդադինի, Հորդանանը ստանալու էր լրացուցիչ 215 մլն մ³ ջուր, որը մինչ այդ օգտագործվել էր Իսրայելի կողմից կամ ընդհանրապես չէր օգտագործվել[15]:

Նշենք, որ պայմանագիրը բաղկացած էր 30 հոդվածից, որոնց մեջ առանցքայինը միջազգային սահմանների, անվտանգության, տնտեսական հարաբերությունների, փախստականների և իհարկե ջրի վերաբերյալ համաձայնություններն էին[16]: Պայմանագրի 6-րդ հոդվածը, որ վերնագրված էր «Ջուր», նպատակ ուներ հասնել Իսրայելի և Հորդանանի միջև ջրային խնդիրների բազմակողմանի և տևական կարգավորմանը[17]: Պայմանագրի համաձայն ստեղծվեց Համատեղ ջրային հանձնախումբ, որի մեջ ընդգրկվեցին երեքական ներկայացուցիչներ Իսրայելից և Հորդանանից: Հանձնախմբի խնդիրն էր ապահովել կնքված համաձայնությունների իրացման վերահսկողությունը և կողմերի հետագա համագործակցությունը Հորդանան գետի ջրային պաշարների համատեղ տնօրինման հարցում[18]:

---

[14] Manna Maya, "Water and the Treaty of Peace between Israel and Jordan" (2006). Macro Center Working Papers. Paper 33, page 58-59, http://docs.rwu.edu/cgi/viewcontent.cgi?article=1031&context=cmpd_working_papers

[15] Հարությունյան Կ., Ջրի հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում (1945-2004 թթ.), ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Ե., 2005, էջ 98:

[16] Մանրամասն տե՛ս Treaty of Peace Between The Hashemite Kingdom of Jordan and the State of Israel October 26, 1994, http://www.kinghussein.gov.jo/peacetreaty.html

[17] Treaty of Peace Between the Hashemite Kingdom of Jordan and the State of Israel October 26, 1994, Article 6, http://www.kinghussein.gov.jo/peacetreaty.html

[18] Peace Treaty 1994, Annex II, Article 6.

Չնայած պայմանագիրը լավ հնարավորություն էր Հորդանանի և Իսրայելի համագործակցության համար, սակայն ջրի հարցի շուրջ շարունակվեցին վիճարկումները: Պատճառներից մեկը կապված էր տարածաշրջանի կլիմայական չոր պայմանների հետ, որի արդյունքում գետի հոսքը նվազում էր:

1997 թ. որոշ տարաձայնություններ առաջացան Հորդանանի և Իսրայելի միջև կապված համաձայնագրով նախատեսված 50 մլն մ³ ջուր հայթայթելու հետ, որը պետք է հատկացվեր Հորդանանին: Սակայն խնդիրը հարթվեց 1997 թ. մայիսի 8-ին Աքաբայում Հորդանանի թագավոր Հուսեյնի և Իսրայելի վարչապետ Նաթանյահուի հանդիպման ժամանակ, որի արդյունքում Իսրայելը համաձայնեց ժամանակավոր սկզբունքով Հորդանանին տարեկան հավելյալ 25-30 մլն մ³ ջուր մատակարարել Թիբերիասի լճից[19]:

1999 թ. շրջանում երաշտ գրանցվեց: Մարտին Իսրայելը զգուշացրեց Հորդանանին, որ երաշտի պատճառով չի կարող նրան հատկացնել պայմանագրով նախատեսված 20 մլն մ³ ջուրը: Վարչապետ Նաթանյահուն նշեց, որ Իսրայելը չէր հրաժարվում ստանձնած պարտավորությունից և հետագայում կփոխհատուցեր այդ չափաբաժինը[20]: Երաշտն Իսրայելի համար ավելի շատ տնտեսական խնդիրներ էր առաջացնում, իսկ Հորդանանի համար կենսական: Նույն թվականի օգոստոսին Հորդանանն առաջարկեց Իսրայելին պայմանագրով հատկացված 20 մլն մ³ ջուրը վերցնել ոչ թե Թիբերիասի լճից, այլ .Յարմուք գետից: Առաջարկն ընդունվեց Իսրայելի կողմից, պայմանով, որ շարունակական բնույթ չկրեր[21]:

Ջրային ռեսուրսների ճգնաժամային վիճակի հիմնական պատճառներից էին տեղումների ցածր քանակը, մակերևային ջրերի չորացումը, եղանակային ոչ բարենպաստ փոփոխությունները, բնակչության արագ աճը, ջրային աղբյուրների աղտոտվածությունը:

---

[19] Eliahu Rosenthal and Robbie Sabel, Water and Diplomacy in the Jordan River Basin, http://www.internationalwaterlaw.org/bibliography/articles/general/Rosenthal+Sabel.pdf

[20] Israel Line, 16 March 1999, ըստ http://www.waternet.be/jordan_river/shortage/IJfollow-up.htm

[21] Jordan Times, 17/8/,1999, ըստ http://www.waternet.be/jordan_river/shortage/IJfollow-up.htm

2005 թ. մայիսին Հորդանանի, Իսրայելի և Պաղեստինի Ինքնավարության միջև ստորագրվեց համաձայնագիր՝ սկսելու Կարմիր ծովից Մեռյալ ծով ջրանցքի նախագծի իրագործման ուսումնասիրությունը: Ծրագրի ֆինանսավորմանն աջակցում էին Համաշխարհային բանկն ու տարբեր դոնոր կազմակերպություններ[22]:

Ջրանցքի կառուցման հիմնական նպատակներից մեկը Կարմիր ծովի ջրերի հաշվին աստիճանաբար չորացող Մեռյալ ծովը փրկելն էր: Ջրանցքը պետք է անցներ Կարմիր ծովից դեպի Մեռյալ ծով և ապահովեր Հորդանանին, Իսրայելին և Պաղեստինի Ինքնավարությանը խմելու ջրով և էլեկտրաէներգիայով: Կարմիր և Մեռյալ ծովերի մակերևույթների միջև եղած բարձրությունը (մոտ 400 մետր) պետք է օգտագործվեր էներգիա ստանալու համար, որն էլ, ըստ նախագծի, օգտագործվելու էր ծովի ջրի աղազրկման խոշոր կոմպլեքսների աշխատանքներում[23]: 180 կմ երկարությամբ ջրանցքի մեծ մասն անցնելու էր Հորդանանի տարածքով: Նախագծի շրջանակներում նախատեսվում էր ստեղծել աշխարհում ջրի աղազրկման ամենախոշոր կայանը, որը տարեկան պետք է ապահովեր 850 մլն մ³ խմելու ջուր Հորդանանի, Իսրայելի և Պաղեստինի համար, իսկ ավելցուկ ջուրն արդեն պետք է լցվեր Մեռյալ ծով: Մոտ 5 միլիարդ դոլար գնահատվող այս ծրագիրը համարվում էր ամենախոշոր ենթակառուցվածքային նախագիծը Մերձավոր Արևելքում, որն իրականացնելու համար անհրաժեշտ էր մոտ 20 տարի[24]:

2006 թ. հունիսին Իսրայելի ազգային ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիեզերը և Հորդանանի ջրի և ոռոգման նախարար Մուհամեդ Ջաֆեր Ալ-Ալեմը Համաշխարհային բանկին ներկայացրին միասնական պահանջ նախագծի իրագործման

---

[22] Նույն տեղում:

[23] An Environmental and Socioeconomic Cost Benefit Analysis and Pre-design Evaluation of the Proposed Red Sea / Dead Sea Conduit, Amman, Febrauary, 2007, http://foeme.org/uploads/publications_publ73_1.pdf

[24] Sustainable Water Strategies for Jordan, International Economic Development Program, Gerald R. Ford School of Public Policy, University of Michigan, Ann Arbor, April 2008, http://www.umich.edu/~ipolicy/IEDP/2008jordan/IEDP%20Jordan%20-%20Water%20Strategies.pdf

ուսումնասիրությունը սկսելու համար[25]: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին Մեռյալ ծովի հորդանանյան ափին կայացավ Հորդանանի, Իսրայելի և Պաղեստինի Ինքնավարության ներկայացուցիչների հանդիպումը: Հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին տեխնիկական և տնտեսական համագործակցության մանրամասներ՝ փրկելու Մեռյալ ծովը չորացումից[26]:

Նշենք, որ վերջին 50 տարում Մեռյալ ծովի մակարդակը նշանակալիորեն իջել էր մոտ 25 մետր և շարունակում էր իջնել (տարեկան 1 մետր) Հորդանան գետի և նրա վտակների ջրերի մեծ քանակությամբ ծախսվելու պատճառով[27]: Երկրաբանների կարծիքով՝ Մեռյալ ծովի մակարդակի հետագա նվազումը կնպաստեր երկրաշարժերի առաջացմանը: Նույն կանխատեսման համաձայն՝ եթե ծովի չորացման միտումը շարունակվեր, ապա այն 50 տարի հետո կանհետանար երկրի երեսից[28]:

Ջրանցքի կառուցման նախագծի առաջարկը ոչ միայն լուծում էր կենսական, տնտեսական ու էկոլոգիական բազմաթիվ խնդիրներ, այլև հնարավոր մոդել էր արաբ-իսրայելական բնականոն համագործակցության համար: Իսրայելի ազգային ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիեզերի կարծիքով՝ նախագիծը կնպաստեր Հորդանանի հետ տարածաշրջանային և տնտեսական համագործակցության զարգացմանը էներգետիկայի, ջրի և գյուղատնտեսական ոլորտներում: Նա նշեց, որ տարածաշրջանի զարգացումը շատ կարևոր քայլ էր քաղաքական գործընթացի

---

[25] Retelling The Story Of Water in the Middle East: Reflections on and about a Conversation at the Dead Sea, Integrated Water Resources Management and Security in the Middle East, 1-29, 2007, http://www.academia.edu/3108266/

[26] Иорданцы, израильтяне и палестинцы пытаются спасти Мертвое море, Ближний Восток, http://www.newsru.co.il/mideast/10dec2006/daed_sea.html

[27] An Environmental and Socioeconomic Cost Benefit Analysis and Pre-design Evaluation of the Proposed Red Sea / Dead Sea Conduit, Amman, Febrauary, 2007, http://foeme.org/uploads/publications_publ73_1.pdf

[28] Иорданцы, израильтяне и палестинцы пытаются спасти Мертвое море, Ближний Восток, http://www.newsru.co.il/mideast/10dec2006/daed_sea.html

առաջխաղացման համար[29]: Եվ իրոք, ջրանցքի կառուցման նախագիծը բացառիկ հնարավորություն էր տարածաշրջանում խաղաղ համագործակցության և հակամարտությունների լուծման համար:

Թվում էր, թե երկու երկրների միջև հաշտության պայմանագրի կնքումը կխթաներ բազմակողմ համագործակցությունը, այդ թվում՝ ջրանցքի կառուցումը: Սակայն նախագծի դեմ դուրս եկան իսրայելական բնապահպանները: Իսրայելի շրջակա միջավայրի նախարարությունը բացարձակապես դեմ էր երկու ծովերի ջրերի միախառնմանը և նախազգուշացնում էր, որ ջրանցքի կառուցումը ոչ թե կփրկեր Մեռյալ ծովը, այլ լուրջ վնաս կհասցներ դրան[30]: Բնապահպանների հիմնական մտահոգություններից էր նաև այն, որ Կարմիր և Մեռյալ ծովերի ջրերի միախառնումը կվնասեր Մեռյալ ծովի յուրահատուկ էկոհամակարգը, որի արդյունքում ջրիմուռների աճը կարող էր փոխել ծովի գույնը, խոչընդոտներ ստեղծել դրանում լողալու համար՝ վնասելով զբոսաշրջության զարգացմանը թե՛ Իսրայելում և թե՛ Հորդանանում[31]:

2009 թ. Հորդանանը մշակեց Կարմիր ծովից Մեռյալ ծով ջրանցքի կառուցման իր սեփական նախագիծը և որոշեց ջրանցքի կառուցման 1-ին փուլը սկսել առանց Իսրայելի և Պաղեստինի Ինքնավարության օգնության[32]: Այդ նախագիծը, ծրագրում էր ամեն տարի 10 միլիարդ դոլար ծախսելու պայմաններում Կարմիր ծովից արտադրել 2150 մլն մ³ ջուր: Սակայն 2012 թ. նախարարությունը նշեց, որ նախագիծը

---

[29] The "Red-Dead" Canal: Israeli-Arab Efforts to Restore the Dead Sea, Congressional Research Service Reports on the Middle East and the Arab World, May 13, 2008, http://www.fas.org/sgp/crs/mideast/RS22876.pdf

[30] Канал из Красного моря уничтожит Мертвое море, http://cursorinfo.co.il/news/novosti/2013/02/14/kanal-iz-krasnogo-morya-unichtozhit-mertvoe-more/?print=1

[31] Red-Dead Canal Idea Stirs Controversy, http://www.jewishjournal.com/israel/article/red_dead_canal_idea_stirs_controversy_20080803/

[32] Jordan Set to Begin Alone on Red-Dead Canal, http://www.globes.co.il/serveen/globes/docview.asp?did=1000501533

կկրճատվի ներդրողների, գործարարների և համապատասխան միջոցների հետ կապված մարտահրավերների պատճառով[33]:

2013 թ. հուլիսի 24-ին Հորդանանի ջրի և ոռոգման նախարարությունը հայտարարեց, որ մշակել էր ծրագիր Կարմիր ծովի զարգացման նախագիծն իրականացնելու համար[34]: Ջրի և ոռոգման նախարար Նասերը նշեց, որ նախարարությունը ծրագիրն իրականացնելու համար մինչև տարվա վերջ մրցույթ կհայտարարի, որն իր մեջ ընդգրկելու էր 1.Կարմիր ծովից ջուրը տեղափոխելու համար նախատեսված փոխադրամիջոցների ստեղծում: 2.Վադի Արաբայում աղազրկման կայանի կառուցում: 3. Մեկ այլ խողովակատարի անցկացումն այդ կայանից դեպի Մեռյալ ծով՝ դուրս բերված աղային զանգվածը տեղափոխելու համար[35]: Նախագիծն արժենալու էր մոտավորապես 980 մլն ԱՄՆ դոլար: Այն արդարացնելու էր Հորդանանի հույսերը՝ վերականգնել Մեռյալ ծովի ջրի պակասը և ջուր մատակարարել արագ աճող բնակչությանը:

2013 թ. օգոստոսի 18-ին կայացած նիստի ժամանակ, որը գլխավորում էր վարչապետ Աբդուլլահ Էնսուրը, Նախարարների խորհուրդն իր Տնտեսական զարգացման հանձնախմբից հավանություն ստացավ՝ պատրաստելու ուսումնասիրությունները և մրցույթի փաստաթղթերը ներկայացնելու նախագծի առաջին փուլին[36]:

Ներկայումս խմելու ջրի ռեսուրսների սպառման և պահանջի միջև հարաբերակցությունը հասել է ճգնաժամային չափանիշի, որը սպառնալիք է տարածաշրջանի երկրներում սոցիալական աղետների և քաղաքական հակամարտությունների առաջացման համար: Դրությունը խորանում է բնակչության բարձր աճի հետևանքով (1,8% Իսրայելում, և մինչև 2,2% Հորդանանում)[37] և գետի հոսքի նվազման ու

---

[33] Red Sea Project Dropped, The Jordan Times, http://jordantimes.com/red-sea-project-dropped-govt-ready-with-alternatives

[34] Նույն տեղում:

[35] Red Sea Water Desalination Project Moving Ahead, The Jordan Times, http://jordantimes.com/red-sea-water-desalination-project-moving-ahead

[36] Նույն տեղում:

[37] Population Growth, The World Bank, http://data.worldbank.org/indicator/SP.POP.GROW

ծանծաղ լինելու պատճառով (Հորդանան գետի հոսքը դեպի Մեռյալ ծով 1950-ական թթ. տարեկան 1,3 մլն կմ³ էր, իսկ այսօր մոտ՝ 20-200 մլն մ³)[38]:

Խորացող ջրային ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է տարածաշրջանի երկրների ընդլայնված համագործակցություն՝ հանուն ջրի շահեկան օգտագործման, նրա աղտոտվածության կրճատման, այլընտրանքային ջրային աղբյուրների հայթայթման և դրանց ճիշտ արդյունահանման համար: Սակայն ներկայումս Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող բարդ ու խրթին իրավիճակն իր բացասական ազդեցությունն է ունենում հորդանանաիսրայելական հարաբերությունների, այդ թվում՝ ջրային խնդրի կարգավորման հարցում, որը ըստ էության, նաև քաղաքական խնդիր է:

GHAZARYAN SARGIS
(IOS)

THE WATER PROBLEM IN JORDAN-ISRAELI RELATIONS: FROM CONFRONTATION TO COOPERATION

The Middle East as a whole is the most water-scarce region in the world, accounting for nearly 5% of the world's population but possesses just 1% of the world's renewable freshwater resources.

The deficit of water resources especially in the Jordan River region is quite profound. The history of water disputes continues all the way through the establishment of Israel. As a result, water became a strategic and diplomatic issue that periodically threatened to bring the country to blows with its neighbors.

Since 1950s the water factor in Jordanian-Israeli relations has become one of the main factors for the two country's cooperation. After US Special Envoy Eric Johnston's plan had not been ratified, Jordan and Israel began

---

[38] UN-ESCWA and BGR (United Nations Economic and Social Commission for Western Asia; Bundesanstalt für Geowissenschaften und Rohstoffe). 2013. Inventory of Shared Water Resources in Western Asia. Beirut.,page 170, http://waterinventory.org/sites/waterinventory.org/files/chapters/Chapter-06-Jordan-River-Basin-web.pdf

negotiations under the U.S. mediation in an effort to reach an agreement over their shared river system. The negotiations continued until the signing of the 1994 Peace Treaty. Though the Treaty of Peace between Israel and Jordan, which was signed on October 26 in 1994, relations between the two countries and were normalized and resolved territorial and water disputes, but the water problem continued to remain contentious. The main reason for the scarcity of water resources in the region is the dry climate, rapid growth of population, pollution of water sources, which makes it necessary to strengthen international cooperation over adopting and maintaining measures over issues related to water, especially over saving water resources.

In 2005 Israel, Jordan and the Palestinian Authority signed an agreement to begin the feasibility study of Red Sea Dead Sea Canal project, which was administered by the World Bank and financed by various donors.

In 2009 Jordan decided to go through it alone and build the canal from the Red Sea to the Dead Sea without any support from Israel and the Palestinian Authority.

In August 2013 during a session, headed by Prime Minister Abdullah Ensour, the Cabinet approved a recommendation by its Economic Development Committee to prepare studies and tender documents for the first phase of the project. Despite this, actions on the Jordanian side are coordinated with Israel and not unilateral.

However, the situation created in the Middle East has its negative impact on Jordan-Israeli relations and the water problem still remains one of the most important and primary factors in the two countries relations.

ՂԱՀՐԻՑԱՆ ՄՈՒՇԵՂ
(ԵՊՀ)

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ

1991 թ. Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում տեղի ունեցավ արաբաիսրայելական հակամարտության կողմերի մասնակցությամբ համաժողով, որով սկիզբ դրվեց պաղեստինաիսրայելական բանակցություններին: Ընդմիջումներով շուրջ երկու տասնամյակ տևած խաղաղ բանակցություններն էական արդյունք չունեցան հակամարտության կարգավորման համար:

2010 թ. սեպտեմբերին ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի նախաձեռնությամբ սկիզբ դրվեց պաղեստինաիսրայելական բանակցությունների և Պաղեստինի անկախության միջազգային ճանաչման նոր փուլի: Պաղեստինի ինքնավարության իշխանությունները միաժամանակ որդեգրեցին դիվանագիտական այլ ռազմավարություն և սկսեցին դիմել առանձին պետությունների՝ խնդրելով ճանաչել ինքնավարությունը որպես անկախ պետություն՝ 1967 թ. սահմաններով[1]: Աշխատանքի նպատակն էլ հենց այս նոր փուլի առանձնահատկությունների և արդյունքների ուսումնասիրությունն է:

Գործընթացում, ինչպես նշվեց, կենտրոնական դեր ունի Միացյալ Նահանգները: Հաշվի առնելով, որ ԱՄՆ - Իրան հարաբերություններն աստիճանաբար սրվում են և չի բացառվում նաև հարցի ռազմական ճանապարհով լուծման տարբերակը, ԱՄՆ-ին անհրաժեշտ էր նման զարգացումների դեպքում ունենալ տարածաշրջանի արաբական պետությունների աջակցությունը: Աջակցություն կամ առնվազն բարենպաստ դիրքորոշում կարող էր ապահովել պաղեստինաիսրայելական հակամարտության լուծումը և Պաղեստինի անկախության միջազգային ճանաչումը:

---

[1] Ներկայիս Արևմտյան ափին ամբողջությամբ, Գազայի հատվածը և Արևելյան Երուսաղեմը:

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման դեռևս 2009 թ. հուլիսի 4-ին Կահիրեի համալսարանում ունեցած ելույթի ժամանակ ուղերձ հղեց իսլամական աշխարհին, որում նշվում էր, որ երկու ժողովուրդների ցանկությունները պետք է իրականանան երկու պետությունների գոյության միջոցով, ինչպես նաև կոչ արեց Իսրայելին եւ Պաղեստինին վերսկսել բանակցությունները[2]:

2010 թ. օգոստոսի 20-ին էլ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը կոչ արեց Իսրայելին և Պաղեստինին ուղիղ բանակցություններ անցկացնել[3]: Միևնույն ժամանակ Բարաք Օբաման և Հիլարի Քլինթոնը հայտարարեցին, որ Պաղեստին պետությունը հնարավոր է ստեղծել մեկ տարում[4]: 2010 թ. սեպտեմբերի 2-ին Մերձավորարևելյան քառյակի (ՄԱԿ, ԵՄ, ԱՄՆ, Ռուսաստան) միջնորդությամբ 10 ամիս և 7 փուլ տևած անուղղակի բանակցությունների շնորհիվ Իսրայելի և Պաղեստինի միջև սկսվում են ուղիղ բանակցությունները, որոնք սակայն մի քանի շաբաթ են տևում, քանի որ Իսրայելը հրաժարվում է երկարաձգել Արևմտյան ափում բնակավայրերի կառուցման սառեցման ժամկետը, որը սկսվել էր 2009 թ. նոյեմբերի 25-ից[5]:

Պաղեստինի ինքնավարության առաջնորդ Մահմուդ Աբբասը սեպտեմբերի 27-ին սպառնաց, որ եթե շարունակվեն բնակավայրերի կառուցումը, Պաղեստինը դուրս կգա բանակցություններից՝ պահանջելով շինարարությունը դադարեցնել ևս 3-4 ամսով: Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն էլ պահանջը որակեց որպես անընդունելի նախապայման խաղաղ բանակցությունների համար՝

---

[2] Remarks by the President on a new Beginning, 04.06.2011, http://www.whitehouse.gov/the-press-office/remarks-president-cairo-university-6-04-09

[3] Quinn A., Clinton invites Israel, Palestinians to direct talks, 20.08.2010, http://www.reuters.com/article/2010/08/20/us-palestinians-israel-clinton-idUSTRE67C2GL20100820

[4] Bowen J., 24.11.2011, Palestinian statehood bid: Useful points scored at UN, http://www.bbc.co.uk/news/world-middle-east-15045011

[5] Ravid B., Netanyahu declares 10-month settlement freeze 'to restart peace talks', 25.11.2009, http://www.haaretz.com/news/netanyahu-declares-10-month-settlement-freeze-to-restart-peace-talks-1.3435

ավելացնելով, որ բնակավայրերի հարցը պետք է լուծվի առանձին բանակցություններով[6]:

Այսպիսով, բանակցությունների այս հերթական փուլն էլ ավարտվեց ձախողումով, որից հետո պաղեստինյան իշխանություններն ակտիվացրին արշավը ՄԱԿ լիիրավ անդամ դառնալու և առանձին պետությունների կողմից ճանաչվելու համար:

Պաղեստինի ազգային վարչակազմի դիրքորոշումը

Պաղեստինի ինքնավարության իշխանությունները պահանջում են ճանաչում մինչև 1967 թ. արաբաիսրայելական 6-օրյա պատերազմը գոյություն ունեցած սահմանները, որի մեջ են մտնում Հորդանան գետի արևմտյան ափը, Գազայի հատվածը, ինչպես նաև Արևելյան Երուսաղեմը, որը պետք է դառնա ապագա պետության մայրաքաղաք: Ընդհանուր այս տարածքները միասին կազմում են մոտ 6,300 ք/կմ[7], որտեղ, ի դեպ, ապրում է մոտ կես միլիոն հրեա՝ 320 հազար Արևմտյան ափի մոտ 120 բնակավայրերում, 192 հազար՝ Արևելյան Երուսաղեմում[8]:

Պաղեստինցիները պահանջում են նաև ՄԱԿ-ում լիիրավ անդամի կարգավիճակ: Այժմ Պաղեստինը ՄԱԿ-ում մշտական դիտորդի կարգավիճակ ունի: Բացի այդ, Պաղեստինի կարգավիճակի բարձրացումը որպես ՄԱԿ ոչ-անդամ դիտորդի՝ կօգներ Պաղեստինի ինքնավարությանը միանալ մի շարք միջազգային կազմակերպությունների եւ ինստիտուտների, ինչպիսիք են Միջազգային քրեական դատարանը, որտեղ կարող է բողոքարկել Իսրայելի կողմից իր տարածքների օկուպացիայի հարցը[9]:

---

[6] Heller J., Israeli settlement freeze ends, peace talks in balance, 27.09.2010 http://www.reuters.com/article/2010/09/27/us-palestinians-israel-idUSTRE68O1RJ20100927?pageNumber=1

[7] The World Factbook, West Bank, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/we.html

[8] Palestinians shun Israeli settlement restriction plan, 25.11.2009, http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/8379868.stm

[9] Палестинцы и полное членство в ООН: вопросы и ответы, 20.09.2011, http://www.bbc.co.uk/russian/international/2011/09/110919_palestine_bid_un_recognition_qa.shtml

ՀԱՄԱՍ-ի դիրքորոշումը

Այս հարցում Գազայի հատվածում իշխող ՀԱՄԱՍ-ը չի աջակցում ՖԱԹՀ-ին: ՀԱՄԱՍ-ի կառավարության վարչապետ Իսմայիլ Հանիյան հայտարարել է, որ իրենք չեն աջակցելու Մահմուդ Աբբասին: «Մենք աջակցում ենք Պաղեստինյան պետության ստեղծմանը պաղեստինյան հողի ցանկացած հատվածում առանց մեկ թիզ հող զիջելու և Իսրայելը ճանաչելու», հայտարարել է նա: Հանիյայի կարծիքով Աբբասի ճանապարհը հիմնված է զիջումների վրա, ով միաժամանակ հեռացնում է իրեն դիմադրությունից և ուժեղ խաղաքարտերից: ՀԱՄԱՍ-ի առաջնորդ Խալեդ Մաշալն էլ նշել է, որ Պաղեստին պետությունը պետք է կայանա նախքան 1967 թ. եղած արաբ-իսրայելական պատերազմը եղած սահմաններով, Արևելյան Երուսաղեմը պետք է դառնա մայրաքաղաք, բոլոր փախստականներին պետք է թույլ տրվի վերադառնալ իրենց տներ, որոնք գտնվում են ներկայիս Իսրայելի տարածքում, Արևմտյան Ափի իսրայելական բոլոր բնակավայրերը պետք է ապամոնտաժվեն, չպետք է ճանաչվի Սիոնիստական գոյությունը[10]: Իբրահիմ Հանիյան էլ հայտարարեց, որ «պետությունները չեն կարող ստեղծվել որոշումներով և նախաձեռնություններով: Սկզբում երկրներն ազատագրում են իրենց հողը, որից հետ միայն կարող է քաղաքական մարմին ստեղծվել»[11]:

Իսրայելի դիրքորոշումը

Իսրայելը ԱԳՆ-ը հայտարարել է, որ Պաղեստին պետությունն իրականում գոյություն չունի մի շարք պատճառներով, որոնցից են.

1. Պաղեստինը չունի հստակ տարածք և դրանում գործող արդյունավետ կառավարություն: Պաղեստինյան ազգային վարչակազմը Մահմուդ Աբբասի գլխավորությամբ չի վերահսկում ո՛չ

---

[10] Akram F. and Bronner E., A Nervous Hamas Voices Its Issues With a Palestinian Bid for U.N. Membership, 18.09.2011.
http://www.nytimes.com/2011/09/19/world/middleeast/hamas-voices-issues-with-palestinian-bid-for-united-nations-membership.html

[11] Hamas: Abbas relinquishing Palestinian rights with UN bid,
http://www.haaretz.com/news/diplomacy-defense/hamas-abbas-relinquishing-palestinian-rights-with-un-bid-1.386355

Գազայի հատվածը, ո՛չ էլ Հորդանան գետի Արևմտյան ափը, որի 60%-ը գտնվում է Իսրայելի վերահսկողության տակ:

2. Իսրայելը կասկածի տակ է դնում, որ պաղեստինյան ղեկավարությունը ճանաչում է միջազգային օրենքները, հետևում է մարդու իրավունքներին և ձգտում է խաղաղության, ինչը ՄԱԿ անդամ դառնալու անհրաժեշտ պայման է[12]:

2011 թ. հունվարին Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանն առաջարկել է միջանկյալ խաղաղության պայմանագիր, համաձայն որի, Պաղեստին պետությունը պետք է ստեղծվի Արևմտյան ափի 50%-ի վրա, իսկ վերջնական սահմանները պետք է ճշտվեն հետագա բանակցությունների ժամանակ[13]: Այս առաջարկը Պաղեստինը մերժել է:

Պաղեստինի ճանաչման արշավը

Պաղեստին պետության ճանաչման համար Պաղեստինի իշխանությունները, դիվանագիտական ներկայացուցչությունները լայն արշավ սկսեցին: Պաղեստինյան բարձրաստիճան պատվիրակությունները ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասի, ԱԳ նախարար Ռիյադ Ալ-Մալիքիի գլխավորությամբ այցելեցին մի շարք պետություններ: Պաղեստինցի դիվանագետներն ակտիվ աշխատում էին բազմաթիվ պետություններում, միջազգային կազմակերպություններում, ինչպիսիք են Աֆրիկյան Միությունը, ինչպես նաև Չմիացած պետությունները շարժումը:

Արշավն ընթանում էր երկու ուղղությամբ՝ առանձին պետությունների կողմից ճանաչում և «Պաղեստին-194» գործընթացը, որը նշանակում է՝ Պաղեստինը պետք է դառնա ՄԱԿ 194-րդ լիիրավ անդամը: Արշավի սկսելուց հետո Պաղեստինը ճանաչեցին 19 պետություններ՝ հիմնականում Հարավային և Կենտրոնական Ամերիկաների

---

[12] Foreign Ministry spells out legal points against PA UN bid, http://www.jpost.com/DiplomacyAndPolitics/Article.aspx?id=241246

[13] Levi E., Erekat on Lieberman plan: No partial state, 23.01.2011, http://www.ynetnews.com/articles/0,7340,L-4017562,00.html

պետությունները, ինչպես նաև Թայլանդը և Իսլանդիան: Այսպիսով, Պաղեստինը ճանաչած պետությունների թիվը հասավ 130-ի[14]:

Ինչ վերաբերում է ՄԱԿ ներկայացրած հայտին, ապա 2011 թ. մայիսին դրան աջակցություն հայտնեց Արաբական պետությունների լիգան, իսկ հունիսի 26-ին հաստատվեց Պաղեստինի ազգային վարչակազմի կողմից[15]: Մահմուդ Աբբասը պետք է հայտը ներկայացներ 2011 թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 66-րդ նստաշրջանին:

Պաղեստինի այս քայլերն առաջ բերեցին Իսրայելի և ԱՄՆ հակազդեցությունը: Իսրայելը զգուշացրել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի 15 անդամներին, որ եթե Պաղեստինի ինքնավարությունը շարունակի ճանաչում պահանջել 1967 թ. սահմաններով, Իսրայելը համապատասխան միակողմանի քայլեր կձեռնարկի: Նշվում է, որ նման քայլը չի հանգեցնելու Պաղեստին պետության ստեղծմանը, նույնիսկ եթե Անվտանգության խորհուրդը ճանաչի դա: Այն, ընդհակառակը, նոր բռնությունների է հանգեցնելու[16]: Իսրայելը շարունակեց նաև բնակավայրերի կառուցումը Արևմտյան ափում և Արևելյան Երուսաղեմում, ինչպես նաև դադարեցրեց Արևմտյան ափ ապրանքների ներմուծման հարկերից ստացվող տարեկան 100 միլիոն դոլար գումարի վճարումը պաղեստինյան իշխանություններին: Այս քայլը դատապարտեցին ԱՄՆ-ն, ԵՄ-ն, և հետագայում Իսրայելը վերադարձրեց այդ գումարը[17]:

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ևս անհամաձայնություն է հայտնել Պաղեստինի ինքնավարության հայտին: «Խաղաղությունը չի

---

[14] Scruton P., Ball J., Which countries recognize Palestine?, 20.09.2011 http://www.guardian.co.uk/world/interactive/2011/sep/20/palestinain-state-israel-un-interactive

[15] Sawafta A., Arabs to seek full Palestinian upgrade at U.N, 14.07.2011, http://www.reuters.com/article/2011/07/14/us-palestinians-israel-statehood-arabs-idUSTRE76D21020110714

[16] Ravid B., Israel threatens unilateral steps if UN recognizes Palestinian state, 29.03.2011, http://www.haaretz.com/print-edition/news/israel-threatens-unilateral-steps-if-un-recognizes-palestinian-state-1.352423

[17] Israel to speed up settler homes after Unesco vote, 01.11.2011, http://www.bbc.co.uk/news/world-middle-east-15548585

գալիս հայտարարությունների և բանաձևերի միջոցով: Եթե ամեն ինչ այդքան հեշտ լիներ, ապա վաղուց արված կլիներ», - ասել է նա ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայում[18]: Ըստ Օբամայի՝ միջազգային հանրությունը պետք է իսրայելցիներին և պաղեստինցիներին բանակցությունների մղի 4 չլուծված հարցերի շուրջ՝ Պաղեստին պետության սահմաններ, Իսրայելի անվտանգություն, պաղեստինցի փախստականների կարգավիճակ և Երուսաղեմի հարց:

Մահմուդ Աբբասը 2011 թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ անդամակցության հայտը ներկայացրեց Գլխավոր քարտուղարին, ով այն փոխանցեց Անվտանգության խորհուրդ:

ՄԱԿ-ում պետությունների ճանաչման ընթացակարգի համաձայն՝ հայտը նախ ներկայացվում է ՄԱԿ գլխավոր քարտուղարին, ով այն ուղարկում է Անվտանգության խորհուրդ: Խորհրդի 15 անդամներից (5 մշտական, 10 ոչ մշտական) առնվազն 9-ի համաձայնության դեպքում (եթե մշտական անդամներից որևէ մեկը վետո չի կիրառում) հարցը տեղափոխվում է ՄԱԿ Գլխավոր Ասամբլեա՝ քվեարկության: Այնտեղ անդամ-պետությունների 2/3-ի հավանությանն արժանանալու դեպքում տվյալ պետությունը դառնում է ՄԱԿ լիիրավ անդամ[19]: 2011 թ. ընթացքում ԱԽ ոչ մշտական անդամներն էին Բրազիլիան, Կոլումբիան, Գերմանիան, Պորտուգալիան, Բոսնիան և Հերցեգովինան, Գաբոնը, Նիգերիան, ՀԱՀ-ը, Լիբանանը և Հնդկաստանը:

Ինչպես արդեն նշել ենք, Պաղեստինը ճանաչել է մոտ 130 պետություն, և Պաղեստինի համար դժվարություններ չէին լինի ԳԱ հավանությունը ստանալ: Սակայն գլխավոր խնդիրը Անվտանգության խորհրդում էր: Պաղեստինին հաջողվել էր 8 պետության աջակցությունը ստանալ: Կողմ քվեարկող պետություններն էին մշտական անդամներ Չինաստանը և Ռուսաստանը, ոչ մշտական

---

[18] Cooper H., Obama Says Palestinians Are Using Wrong Forum, 21.09.2011, http://www.nytimes.com/2011/09/22/world/obama-united-nations-speech.html?_r=2

[19] Admission of New Members to the United Nations, http://www.un.org/en/ga/about/ropga/adms.shtml

անդամներ Բրազիլիան, Հնդկաստանը, Լիբանանը, ՀԱՀ-ը, Գաբոնը և Նիգերիան[20]:

Պաղեստինյան իշխանությունները 9-րդ կողմ ձայնը ստանալու համար փորձում էին համոզել Բոսնիային, Պորտուգալիային և Կոլումբիային: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հայտարարել էին, որ չեն մասնակցելու քվեարկությունը[21]: Եվրամիության պետությունները իրենց դիրքորոշումը բացատրում են այն բանով, որ այդ պահին Պաղեստինի ճանաչումը հարցականի տակ կդներ քաղաքական բանակցությունների ապագան:

2011 թ. նոյեմբերի 11-ին Անվտանգության խորհրդի՝ նոր անդամների ընդունելության հարցերով հանձնաժողովը հայտարարեց, որ Պաղեստինի հայտի հարցում փոխզիջում ձեռք չի բերվել, և հանձնաժողովը չի կարող որևէ խորհրդատվություն տալ Անվտանգության խորհրդին: Մահմուդ Աբբասը կարող էր պնդել, որպեսզի հարցը քվեարկության դրվի Անվտանգության խորհրդում, սակայն չգնաց այդ քայլին:

Մեր կարծիքով, Մահմուդ Աբբասը կգնար այդ քայլին, եթե ունենար նաև 9-րդ պետության աջակցությունը: Այդ ժամանակ ԱՄՆ-ը վետո կկիրառեր, ինչպես խոստացել էր: Նման դեպքում Աբբասը, այսպես կոչված, բարոյական հաղթանակ կտաներ, ինչն ավելի կբարձրացներ Պաղեստինի ինքնավարության հեղինակությունը և միջազգային աջակցությունը:

Աբբասը ռիսկի չգնաց նաև մի շարք այլ պատճառներով, որոնցից կարելի է նշել այն, որ եթե հայտն Անվտանգության խորհրդում հավանության չարժանանար, ապա Պաղեստինի անդամակցության հարցը կարող էր երկար ժամանակով դուրս գալ օրակարգից, իսկ Աբբասի վարչակազմը կմեղադրվեր միջազգային հանրության հետ համագործակցելու ցանկության բացակայության մեջ: Բացի այդ, գոյություն ուներ նաև ներքին մրցակցության հարցը: ՀԱՄԱՍ-ը, որն ի

---

[20] McGreal C., UN vote on Palestinian state put off amid lack of support, 11.11.2011, http://www.guardian.co.uk/world/2011/nov/11/united-nations-delays-palestinian-statehood-vote

[21] Richard Spenser, Britain to to abstain on Palestinestatehood vote at UN, 04.11.2011 http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/palestinianauthority/8869966/Britain-to-abstain-on-Palestine-statehood-vote-at-UN.html

սկզբանե, դեմ էր հանդես գալիս գործընթացին, Աբբասին կմեղադրեր ձախողման և պարտության մեջ, ինչը զգալիորեն կարող էր թուլացնել ՖԱԹՀ-ի դիրքերը:

Չնայած աշխարհի պետությունների 2/3-ը ճանաչել է Պաղեստինի անկախությունը, այդ թվում, Չինաստանը, Ռուսաստանը, Եվրամիության 9 պետություն, այդուհանդերձ, լիակատար ճանաչման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է ԱՄՆ և Եվրամիության առաջատար պետությունների՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի կողմից ճանաչում: Այս պետությունները վճռորոշ դեր ունեն միջազգային կազմակերպություններում, այդ թվում ՄԱԿ-ում: ԱՄՆ-ն կարող է վետո դնել Պաղեստինի ճանաչման վրա: Բացի այդ ԱՄՆ-ն չի կարող հաշվի չառնել Իսրայելի շահերը, որը Մերձավոր Արևելքում նրա ամենասերտ գործընկերն է, ինչպես նաև ԱՄՆ-ում առկա է ուժեղ հրեական լոբբի:

Պաղեստինի վրա ճնշման լծակներից է նաև ֆինանսականը: Պաղեստինն ամեն տարի զգալի ֆինանսական օգնություն է ստանում ԱՄՆ-ից և Եվրամիությունից, որը կարող է դադարեցվել, ինչը ծանր կացության մեջ կդնի ինքնավարությանը: Այս խնդիրները հաշվի առնելով՝ Պաղեստինը ստիպված էր զիջումների գնալ և հայտը քեարկության չդնել:

Այդուհանդերձ, պաղեստինցիները կարողացան մեկ խոշոր հաջողություն արձանագրել ՄԱԿ կառույցներից ՅՈՒՆԵՍԿՕ-ում՝ դառնալով կազմակերպության լիիրավ անդամ: Պաղեստինը 1974 թվականից այս կառույցում դիտորդ էր: 2011 թ. հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած քվեարկությունում Պաղեստինի անդամակցության օգտին քվեարկել է 107, դեմ՝ 12 պետություն, իսկ մնացած պետությունների ներկայացուցիչները կա՛մ չեն քվեարկել, կա՛մ էլ բացակայել են քվեարկությունից[22]: ԱՄՆ-ն և Իսրայելը չկարողացան խոչընդոտ հանդիսանալ, քանի որ, ի տարբերություն, Անվտանգություն խորհրդի, այս կառույցում վետո դնելու իրավունք չկա:

---

[22] General Conference admits Palestine as UNESCO Member, 31.10.2011, http://www.unesco.org/new/en/media-services/single-view/news/general_conference_admits_palestine_as_unesco_member_state/

GHAHRIYAN MUSHEGH
(YSU)

THE PROCESS OF INTERNATIONAL RECOGNITION OF PALESTINE IN 2011

In 2011 international recognition of Palestinian statehood entered a new phase which was marked by endeavours to obtain full membership in United Nations. The recognition program was launched in two ways: persuading separate countries to recognize Palestine and the rally which was named Palestine 194. The latter aimed to make Palestine the 194th member of UN.

Most part of the world supported the process except Israel, USA, EU key countries which persisted that the recognition without direct negotiations cannot be effective and would destabilize situation. HAMAS, which rules in Gaza Sector also condemned Palestinian national administration's step, arguing that it contradicts the interests of Palestinian nation.

Mahmoud Abbas and the Palestinian administration could not achieve the goal because of pressure from Israel and US. However they recorded a big success becoming full member of UNESCO.

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԱՓԵՎԻԿ
(ԱՒ)

ԱԶԿ «ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

2002 թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի Հանրապետությունում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին Արդարություն և զարգացում կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) հաղթանակով, որը ստացավ խորհրդարանում տեղերի բացարձակ մեծամասնությունը: Թուրքիայի ազգային մեծ ժողովում ներկայություն ունենալու 10 տոկոսանոց ընտրաշեմը գործող կուսակցություններից կարողացավ հաղթահարել միայն Հանրապետական ժողովրդական կուսակցությունը և ինը անկախ պատգամավոր[1]: Ձևավորվեց երկկուսակցական խորհրդարան, ինչն աննախադեպ երևույթ էր երկրում 1949 թ.-ից հետո, քանի որ 1987 թ.-ից ի վեր Թուրքիայում միակուսակցական կառավարություն չէր ձևավորվել, ուստի աննախադեպ էր նաև Արդարություն և զարգացում կուսակցության միանձնյա իշխանություն ձևավորելու իրողությունը:

Հատկանշական է, որ ողջ նախընտրական քարոզարշավը կուսակցությունն անցկացրեց «Թուրքիայի Եվրամիության անդամակցության», «երկրում չքավորության և գործազրկության վերացման», «տնտեսական ճգնաժամի հաղթահարման» ընդհանրական կարգախոսներով՝ չունենալով հստակ ծրագիր[2]:

Երկրում առկա ներքաղաքական խառնաշփոթի, տնտեսական ճգնաժամի, Եվրամիության հետ անարդյունք ընթացող բանակցությունների, ինչպես նաև բազմաթիվ այլ և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքական խնդիրների հետ մեկտեղ ԱԶԿ իր նախորդներից որպես ժառանգություն ստացավ նորանկախ

---

[1] http://www.akparti.org.tr/site/secimler/2002-genel-secim

[2] Ekzen N., AKP iktisat politikaları: 2002-2006.
http://www.bagimsizsosyalbilimciler.org/Yazilar_Uye/EkzenNov06.pdf

Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների անկուծելի հանգույցը:

Թուրքիայի քաղաքական դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության նկատմամբ անկախության հռչակումից ի վեր պայմանավորվեց արցախյան հակամարտությունում Ադրբեջանի նկատմամբ բացահայտ կողմնակալությամբ և օժանդակությամբ: Այս քաղաքականության հետևանքով Անկարան ակամա դարձավ Բաքվի «քաղաքական պատանդը», երբ ցանկացած քայլ՝ ուղղված հայ-թուրքական երկխոսության հաստատմանը հանգեցնում է Ադրբեջանի նյարդային ջղաձգումներին, որի հետ Անկարան ստիպված է հաշվի նստել[3]: Հայկական ուժերի մարտական յուրաքանչյուր հաջողություն կտրուկ արձագանք էր ստանում Թուրքիայի իշխանական վերնախավի և Գլխավոր սպայակույտի կողմից պարբերաբար հնչող ագրեսիվ հայտարարություններում: 1993 թ. ապրիլի 1-ին, երբ Քելբաջարի շրջանի ազատագրման օպերացիայի ընթացքում հայկական ուժերը գրավեցին Քելբաջար քաղաքը[4], Թուրքիայի կառավարությունը ապրիլի 3-ին որոշում կայացրեց փակել հայ-թուրքական սահմանը՝ շրջափակելով Հայաստանի Հանրապետությունը[5]:

Փաստ է, որ այդուհետ Անկարան Երևանի հետ յուրաքանչյուր բանակցության ժամանակ ուղղակիորեն շահարկում էր և այսօր էլ դեռ շարունակում է շահարկել սահմանի վերաբացման խնդիրը՝ որպես Երևանից քաղաքական զիջումներ կորզելու ազդեցիկ միջոց՝ Հայաստանի նկատմամբ իրականացնելով «ճնշման» կամ «հարկադրման» քաղաքականություն[6]:

Անկախ այն իրողությունից, թե ինչ ուժ է եղել Թուրքիայի իշխանական ղեկին, Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր, բացի անմիջական ռազմական միջամտությունից, այն մշտապես

---

[3] Հ. Դեմոյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի, 2007 թ., Ե., 2011, էջ 119:

[4] http://www.mil.am/1297065356

[5] Özbay F., Türkiye-Ermenistan ilişkileri, http://www.bilgesam.org/tr/images/stories/rapor/Turkiye-ermenistan%20iliskileri.pdf

[6] Սաֆրաստյան Ռ., Հայ-թուրքական սահմանի նշանակությունը, Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Ե., 2005, էջ 63:

իրականացրել է ընդգծված հակահայկական քաղաքականություն և փորձել հայ-թուրքական հարաբերություններում հանդես գալ ուժեղ կողմի դիրքերից, օգտագործել ճնշման հնարավոր բոլոր միջոցները՝ շրջափակում, տարբեր միջազգային կառույցներում հակահայկական ակտիվ քարոզչություն, բանակցային գործընթացի տապալում, Ադրբեջանին հատկացվող ռազմական, ֆինանսական և տնտեսական համապարփակ աջակցություն, ստիպելու համաձայնել Թուրքիայի կողմից առաջ քաշվող նախապայմաններին՝

- *հրաժարում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացից*
- *Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչում*
- *Ղարաբաղյան հիմնահարցի՝ հօգուտ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման, կարգավորում*

Անդրադառնալով ցեղասպանության ճանաչման խնդրին, պետք է նշել, որ Հայաստանն այն ներառել է իր արտաքին քաղաքականության օրակարգում, բայց երբեք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայման չի դարձրել՝ փաստելով, որ միայն առանց նախապայմանների է հնարավոր հաստատել բնականոն հարաբերություններ՝ հետագայում առկա խնդիրներին անդրադառնալու և լուծումներ գտնելու անհրաժեշտ հիմքեր ստեղծելու համար:

Ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքային ամբողջականության և սահմանների ճանաչման խնդրին, ապա, ինչպես նշում է նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը. «Այս դեպքում դեռևս ուժի մեջ են Կարսի և Մոսկվայի պայմանագրերը: Մենք դրանք ժառանգել ենք խորհրդային ժամանակաշրջանից: Մեր օրենսդրությունն այդ հարցերում շատ հստակ է: Եթե Խորհրդային Միությունից ժառանգված պայամանագրերը չեն հերքվել և կամ չեն փոխարինվել նորով, ապա դրանք դեռևս մնում են ուժի մեջ: Եթե դրանք ուժի մեջ չեն, ապա միայն այդ պատճառով, որ Թուրքիան կոպտորեն խախտել է այդ պայմանագրերի դրույթները: Այս դեպքում լավագույն մոտեցումը կլինի ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Միջազգային ընդունված պրակտիկա է, երբ ցանկացած դիվանագիտական հարաբերությունների հիմքում դրված է երկու երկրների միջև փոխադարձ հարգանքի, ինքնիշխանության հարգման,

սահմանների ճանաչման և ներքին գործերին չմիջամտելու դրույթների վրա հիմված հուշագիր»[7]:

Լեռնային Ղարաբաղի նախապայմանը հայ-թուրքական հարաբերությունների բանակցային գործընթացում առաջացավ մի փոքր ավելի ուշ, երբ հայկական ուժերը ազատագրեցին Արցախն ու նրա շուրջ անվտանգության գոտի ապահովեցին: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությամբ՝ Թուրքիան փաստորեն դարձավ հակամարտության պաշտոնապես չհայտարարված կողմ և մեկ անգամ ևս փաստեց, որ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը չի տեղավորվում իր աշխարհառազմավարական ծրագրերում:

Մինչև 2002 թ., երբ Արդարություն և զարգացում կուսակցությունը եկավ իշխանության, երկու երկրների նախագահները և արտաքին գերատեսչությունների ղեկավարները միջազգային տարբեր կառույցների գագաթաժողովների շրջանակներում հանդիպել են միմյանց հետ, փորձել քննարկել հայ-թուրքական հարաբերությունների հաստատման հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, 1995 թ. հոկտեմբերի 23-ին առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Նյու Յորքում, որտեղ մասնակցում էր ՄԱԿ-ի հիսունամյակին նվիրված հոբելյանական հավաքին, հանդիպեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ. դա Հայաստանի ու Թուրքիայի նախագահների առաջին հանդիպումն էր. քննարկման թեման Լեռնային Ղարաբաղը և հարակից տարածքները Ադրբեջանին վերադարձնելու, ինչպես նաև Հայաստանի անկախացումից հետո աշխարհաստիւ հայության ջանքերով նոր թափ առած Ցեղասպանության միջազգային ճանաչման

---

[7] Վ. Օսկանյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի, 2007 թ., Ե., 2011, էջ 18:
Հայ-թուրքական իրավապայմանագրային հարաբերությունների, հայ-թուրքական սահմանի, ինչպես նաև Կարսի և Մոսկվայի պայմանագրերի վավերականության մասին մանրամասն տե՛ս Ա. Պապյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի, 2007 թ., Ե., 2011, էջ 43-53:

գործընթացից հրաժարվելու թուրքական կողմի պահանջը: ՀՀ առաջին նախագահը մերժել էր թուրքական կողմի պահանջները[8]:

Փաստ է, թերևս, որ Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության տարիներին նորանկախ Հայաստանի՝ Թուրքիայի նկատմամբ արտաքին քաղաքականության հայեցակարգը բավականին զուսպ էր, և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը դրված չէր Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում:

Այդուհանդերձ, դեռևս Հայաստանի Հանրապետության առաջին նախագահն ի հակադրություն թուրքական կողմի, ամրագրեց Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների և քաղաքական երկխոսության հաստատման ՀՀ դիրքորոշումը: Շարունակելով այս քաղաքականությունը Հայաստանի հաջորդ նախագահ Ռ. Քոչարյանը որդեգրեց առավել կոշտ դիրքորոշում՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը դարձնելով Հայաստանի արտաքին քաղաքականության աննկյունաքար: Գնահատելով ՀՀ դիրքորոշման փոփոխությունը՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանը նշում է. «այն, ինչ կատարվեց 1998-2000 թթ. կապված Թուրքիայի նկատմամբ դիրքորոշումների կոշտացման առումով, տրամաբանական էր, քանի որ մենք ոչինչ չէինք ստացել զիջումների դիմաց»[9]:

Հետագայում տարբեր միջազգային կառույցների համաժողովների շրջանակներում Թուրքիայի նախագահ Դեմիրելը հանդիպել է նաև ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանին, 1998 թ. հունիսի 5-ին Յալթայում՝ Սևծովյան տնտեսական համագործակցության գագաթաժողովի ընթացքում, իսկ երկրորդը՝ 1999 թ. նոյեմբերին Ստամբուլում, ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ[10]: Հանդիպումներն ընթացել են հիմնականում նույն տրամաբանությամբ և անարդյունք:

---

[8] Օսկանյան Վ., Անտեսված դասեր, http://www.mediamax.am/am/column/12231/

[9] ԵԿՆ հարցազրույց ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանի հետ, հունիս 17, 2008, http://www.esiweb.org/pdf/esi_picture_story_-_turkish_armenian_relations_am_-_august_2009.pdf

[10] ՀՀ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության Թուրքիայի բաժնի ընթացիկ արխիվ:

Տարբեր ձևաչափերով բանակցություններ երկու երկրների արտաքին գործերի նախարարների մակարդակով առավել հաճախ են ընթացել, և ինչպես փաստում է ՀՀ նախկին արտաքին գործոց նախարար Վ. Օսկանյանը. «այդ հանդիպումներում ևս նշույլ անգամ չկար, որ Թուրքիան ցանկություն ունի Հայաստանի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել կամ բացել սահմանը. թուրքերն այդ ամենը կապում էին միայն ու միայն Ղարաբաղի հարցի հետ»[11]:

Հարկ է նշել, որ մինչև 2002 թ. խորհրդարանական ընտրություններում տարած հաղթանակը, ԱԶԿ ղեկավարներն իրենց նախընտրական ելույթներում և հանդիպումներում հիմնականում չեն արծարծել Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրենց դիրքորոշումը՝ վարելով ինչպես արդեն նշվեց հիմնականում «պոպուլիստական» քարոզարշավ:

Հայաստանի նկատմամբ քաղաքական դիրքորոշումը բացակայում էր նաև Արդարություն և զարգացում կուսակցության 2002 թ. ծրագրային դրույթներում, որտեղ հստակ ներկայացված էին արտաքին քաղաքականության հայեցակարգի սկզբունքները[12]:

Նախընտրական քարոզարշավում բացառություն էր թերևս կուսակցության առաջնորդներից մեկի՝ տնտեսագետ Ալի Բաբաջանի հայտարարությունը, ով հետագայում դարձավ Թուրքիայի արտաքին գործոց նախարար, թե «իշխանության գալուց հետո Արդարություն և զարգացում կուսակցությունը պետք է փորձի Հայաստանի հետ հարաբերությունների հետ հիմքում դնել ոչ թե քաղաքական, այլ տնտեսական խնդիրները, տնտեսական հետաքրքրությունները»[13]:

Նմանատիպ հայտարարություններ կուսակցության ազդեցիկ ղեկավարների կողմից հնչեցին նաև իշխանության գալուց հետո՝ առաջին ամիսներին, որոնք, սակայն, հիմնականում Եվրամիության հետ ակնկալվող բանակցություններից առաջ քաղաքական

---

[11] Օսկանյան Վ., Անտեսված դասեր, http://www.mediamax.am/am/column/12231/

[12] http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum_

[13] Ռ. Սաֆրաստյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի, 2007 թ., Ե., 2011, էջ 64:

նախաձեռնություն էր և այդպես էլ մնաց անիրականանալի, քանի որ իշխանությունն ամրապնդելուց հետո ԱՋԿ գաղափարախոսները վերահիմաստավորեցին, վերագնահատեցին տարածաշրջանում իրենց աշխարհառազմավարական հնարավորություններն ու հավակնությունները:

Ուշագրավ է, որ Հայաստանի հետ սահմանի բացման հնարավորության մասին 2002 թ. դեկտեմբերի 27-ին կայացած մամլո ասուլիսի ժամանակ ակնարկեց Թուրքիայի ԱՋԿ նորանշանակ արտգործնախարար Յաշար Յաքըշը. «Մենք մեր հարաբերությունները կզարգացնենք Ռուսաստանի, Իրանի և Հայաստանի հետ: Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելիս մենք հաշվի կառնենք Ադրբեջանի անհանգստությունները, սակայն, եթե մեր տնտեսական շահերը պահանջեն Հայաստանի հետ հարաբերությունների հաստատում, մենք դա կանենք»[14]:

Այս հայտարարությունը ևս եզակի երևույթ է թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մշտապես հակահայ քաղաքական հայտարարություններում, եզակի է նաև այն առումով, որ առաջին և, թերևս վերջին անգամ, տնտեսական հետաքրքրությունների գործոնը վեր է դասվում «մեկ ժողովուրդ, երկու երկիր» պանթյուքիստական կարգախոսից:

Թուրքիայի նոր իշխանությունների Հայաստանի նկատմամբ որդեգրած քաղաքականության հակահայկական բնույթը դրսևորվեց արդեն ընտրություններից օրեր անց, երբ վարչապետի հավանական թեկնածուն համարվող ԱՋԿ փոխնախագահ Աբդուլլահ Գյուլն[15] ադրբեջանական «Զերկալո» թերթին տված հարցազրույցում առաջին անգամ անդրադարձավ հայ-թուրքական հարաբերություններին և ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում իր կուսակցության մոտեցումները՝ Անկարա-

---

[14] Engin Lütem Ö., 2002 yılının bilançosu, http://www.eraren.org/index.php?Page=DergiIcerik&IcerikNo=80

[15] Քանի որ ԱՋԿ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նկատմամբ Թուրքիայի Սահմանադրական դատարանը իրավական սահմանափակումներ էր կիրառել և արգելել մասնակցել խորհրդարանական ընտրություններին, ապա վերջինս զրկված էր վարչապետի պաշտոնը ստանձնելու հնարավորությունից:

Բաքու հարաբերությունների մակարդակը գնահատելով ոչ բավարար. «Թուրք-ադրբեջանական կապերը մեզ համար առաջնային են, շուրջ 1 մլն ադրբեջանցի փախստականներ ապրում են վրաններում: Կարծում եմ, Ադրբեջանի և Թուրքիայի ջանքերով կհասնենք այդ հակամարտության կարգավորմանը, ադրբեջանական հողերի ազատագրմանը օկուպացիայից: Նշեմ նաև, որ ակտիվացման կարիք ունեն թուրք-ադրբեջանական ռազմական կապերը»[16]:

Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևին Լեռային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու հավաստիացումներ տվեց նաև ԱՋԿ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը[17], ով սկզբնական շրջանում առավել զուսպ էր հայ-թուրքական հարաբերություններում առկա հիմնախնդիրների վերաբերյալ իր հայտարություններում:

Եվրահանձնաժողովի նախագահ Ռ. Պրոդիի Անկարա կատարած այցի ժամանակ կազմակերպված մամուլի ասուլիսին Էրդողանը հայտարարեց. «Նախ և առաջ մենք պետք է պատասխանենք այն հարցին, թե եղե՞լ է սրդյոք ցեղասպանություն, թե՞ ոչ: Այս խնդիրը հնարավոր չէ լուծել առանց հարցի պատասխանը գտնելու»[18]: Սա թերևս առաջին անգամ էր, երբ թուրք քաղաքական գործիչը միանշանակ չէր հերքում Հայոց ցեղասպանության իրողությունը:

Այս հայտարարությունը պայմանավորված էր և՛ ներքաղաքական դաշտում նորահայտ կուսակցության հաստատվելու անհրաժեշտությամբ, որտեղ Էրդողանը դեռևս հասարակության տարբեր շերտերի, այդ թվում նաև հայ համայնքի վստահությունն ու աջակցությունը ստանալու խնդիր ուներ, և՛ թե Կոպենհագենում դեկտեմբերի 12-ին կայանալիք Եվրամիությանն անդամակցության բանակցություններում դրական ազդանշաններ հաղորդելու ակնկալիքով:

---

[16] Գյուլը խոստանում է ազատագրել ադրբեջանական հողերը, ԱՋԳ, № 202, 06.11.2002 թ.:

[17] Aliyev, Erdoğan ve Baykal'ı tebrik etti, http://arsiv.zaman.com.tr//2002/11/06/dis/h9.htm

[18] Erdoğan-Prodi Görüşmesi, 21.11.2002, http://www.abgs.gov.tr/index.php?p=23361&l=1

Կարելի է նշել, որ այդ փուլում Էրդողանի քաղաքականությունն արդարացվեց. Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու գործընթացի եվրոպական քարոզարշավին միացավ նաև Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը՝ նոյեմբերի վերջին եվրոպական մի շարք մայրաքաղաքներ՝ Կոպենհագեն, Փարիզ, Բրյուսել, Լոնդոն, Բեռլին, Հռոմ և Վատիկան կատարած իր այցելություններով: Թուրքական ԶԼՄ-ները լուրջ ուշադրություն դարձրեցին այդ այցելություններին, պատրիարքի հանդիպումները նույնիսկ առաջնային լուր դարձան թուրքական կենտրոնական լրատվամիջոցների համար: Հանդիպումներին արձագանքեցին նաև Ստամբուլի հայկական «Մարմարա», «Ժամանակ» և «Ակօս» թերթերը, ինչպես նաև հայաստանյան և սփյուռքահայ մամուլը:

Թուրքական մամուլի վկայությամբ պատրիարքն այցելությունները կատարել էր Թուրքիայի արտգործնախարարության համաձայնությամբ, և նրա գործունեությունը եղել է թուրքական դեսպանատների անմիջական վերահսկողության տակ[19]:

Հարկ է նշել, որ Մեսրոպ Բ պատրիարքի եվրոպական այցելություններն արժանացան տարբեր գնահատականների. թուրքական մամուլը և փորձագետները դրանք չափազանց կարևոր գնահատեցին՝ փաստելով, որ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության դեպքում ազգային փոքրամասնությունների սահմանադրական իրավունքներն էականորեն կընդլայնվեն, ուստի պատրիարքն առաջնորդվում է առաջին հերթին հայ համայնքի շահերով: Հայկական կողմից արձագանքներն այլ բնույթ ունեին. «ԵՄ-Թուրքիա հարաբերությունները քաղաքական խնդիր են, և դրանց կարգավորմանը նպաստելը քաղաքական գործունեություն է ենթադրում: Հետևաբար դա պետք է լինի քաղաքական գործիչների առաջադրանքը, այլ ոչ թե պատրիարքի[20]:

---

[19] Türkiye "tarih" için AB'ye dört koldan basturıyor
http://arsiv.zaman.com.tr/2002/11/27/dis/h3.htm
Mutafyan, kulis yapıyor, http://haber.mynet.com/mutafyan-kulis-yapiyor-9410-dunya/

[20] Չաքրյան Հ., Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանը փորձում է նպաստել Պոլսո հայոց պատրիարքը, ԱԶԳ, № 220, 30.11.2002 թ.:

Ընդհանրապես Արդարություն և զարգացում կուսակցության «հայկական քաղաքականության» ձևավորումը սկզբնական շրջանում որոշակի հակասական տարրեր էր պարունակում: Տնտեսական հետաքրքրությունների, տնտեսական շահի գերակայությամբ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ կուսակցության վերնախավի հայտարարությունները, որոնք կարող էին հիմք դառնալ հայ-թուրքական հարաբերությունների իրական բարելավման, այդպես էլ չկենսագործվեցին, քանի որ Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախաձեռնությունները ԱՋԿ գաղափարախոսների համար ընդամենը անհրաժեշտ պահերին բարձրացնելու քաղաքական շղարշ են, իմիտացիոն բնույթի քայլեր, որոնք միտված են տպավորություն ստեղծելու, թե Թուրքիան կատարում է Եվրամիության առջև իր ստանձնած պարտավորությունները կարգավորել հարաբերությունները հարևանների հետ, միևնույն ժամանակ խուսափել միջազգային ճնշումներից և բարելավել իր «իմիջը»:

Հավելենք նաև, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիր և Հայոց ցեղասպանության միջազգայնացման դեմ պայքարի գործընթացի վերահսկողությունը ներառված է Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի հայեցակարգում: Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների հաստատումը առավել խորքային դրսևորում ունի՝ փոխկապակցված տարածաշրջանում Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարական առաջնահերթություններով և պանթյուրքիստական գաղափարախոսությամբ:

MANUKYAN TATEVIK
(IOS)

THE FORMATION OF THE "ARMENIAN POLICY" OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY: MAIN TENDENCIES

The first stage of the formation of the "Armenian policy" of Justice and Development Party (JDP) obviously was containing some controversial elements. Upon priority of their own economic interests, the statements of

the party leaders about regulation of relations that could be a basis for real improvement in Armenian-Turkish relations, have never been realized because initiatives for establishment of diplomatic relations with the Republic of Armenia were only political cover and imitative moves of JDP ideologists aimed to create the impression that Turkey fulfills its commitments to the European Union which is regulation of relations with its neighbors and at the same time avoiding from international pressure and improving its "image".

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ
(ԱԻ)

ՀԱՐՈՒՆԻԵԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՍ ՏԱՐԻՆ (1910-1920 ԹԹ.)

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում գործող գերմանական միսիոներական կայանները, թեև դժվարին պայմաններում, սակայն շարունակում են իրենց գործունեությունն ի տարբերություն Անտանտի երկրների միսիոներական կազմակերպությունների, որոնք, որպես թշնամի պետության ներկայացուցչություններ, ստիպված էին դադարեցնել իրենց գործունեությունը և հեռանալ երկրից: Մինչև ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը՝ 1917 թ. ապրիլը, որպես չեզոք երկիր, վերջինիս միսիոներներն ու Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը ևս (ՕԱԼԱԽ-ABCFM American Board of Commissioners for Foreign Missions) կարողանում են այստեղ գործունեություն ծավալել: Այնուամենայնիվ, ելնելով Օսմանյան կայսրության և Գերմանիայի միջև դաշնակցային հարաբերություններից, գերմանացի միսիոներները փոքր ինչ արտոնյալ կարգավիճակ ունեին օսմանյան իշխանությունների հետ հարաբերություններում:

Համաշխարհային պատերազմի սկսվելու ժամանակ Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում գործում էր գերմանական միսիոներական 7 հիմնական կայան: Դրանցից Մեզրեի, Մարաշի, Վանի, Մուշի և Հարունիեի կայանները պատկանում էին «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությանը» (այսուհետ՝ ԱՔԲԳՕՄ, նախապես այս կազմակերպությունը կոչվել էր «Հայաստանի օգնության գերմանական միություն»՝ ունենալով երկու հիմնական կենտրոն՝ Բեռլինի և Մայնի Ֆրանկֆուրտի: Սակայն հիմնադրումից որոշ ժամանակ անց Ֆրանկֆուրտի կոմիտեն վերանվանվել էր ԱՔԲԳՕՄ, իսկ Բեռլինի կոմիտեն՝ «Գերմանական արևելյան առաքելություն»), որոնցում (ենթակայանների հետ միասին) ապաստան էր գտել շուրջ 3000 երեխա,

իսկ կայաններում և հարակից գյուղերում գերմանացիների կողմից պահվող դպրոցներում կրթություն էր ստանում 3361 երեխա[1]: Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում ևս մեկական հիմնական կայան պատկանում էր Գերմանական արևելյան առաքելությանը (Ուրֆայի կայանը՝ հիմնադրված 1896 թ.)[2] և Քրիստոֆելի կույրերի առաքելությանը (Մալաթիայի կայանը՝ հիմնադրված 1909 թ. Էռնստ Յակոբ Քրիստոֆելի կողմից (1876-1955 թթ.), ով մինչ այդ եղել էր Սվազում շվեյցարական որբախնամ գործի տնօրենը[3]:

Այս գերմանական միսիոներական հիմնական կայաններից[4] վերջինը հիմնադրվել է Հարունիեի կայանը: Այն վերոշարադրյալներից միակն էր, որը տեղակայված էր գյուղում: (Այս գյուղը կոչվում էր նաև Խառնե (Գտնվում էր Ադանայի վիլայեթում), սակայն քանի որ գերմանացիների մոտ կայանը անվանվում էր Հարունիեի, մենք հավատարիմ ենք մնացել այդ անվանը)[5]:

Հարունիեն, լինելով Ադանայի վիլայեթի գյուղերից մեկը, անմասն չէր մնացել 1909 թ. կոտորածներից: Դրանք այստեղ սկսվել էին ապրիլի 15-ին: Ըստ Հարունիեի քահանայի այրու՝ գյուղի բոլոր տղամարդկանցից կենդանի էր մնացել միայն 5-6 հոգի: Սպանվել էր 157 տղամարդ և 1 կին: Փրկվածները 14 օր շարունակ անցկացրել էին լեռներում: Այդ ընթացքում բռնություններն ու սպանությունները

---

[1] Sonnen-Aufgang, Mitteilungen des Deutschen Hülfsbundes für christliches Liebeswerk im Orient e.V, Frankfurt am Main, 1914, Heft 5, Februar, S. 69.

[2] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Ե., 2002, էջ 73:

[3] Ավելի մանրամասն տե՛ս Thüne S., Ernst Jakob Christoffel, Ein Leben im Dienst Jesu, Nürnberg, Verlag für Theologie und Religionswissenschaft, 2007, S. 450.

[4] Գերմանացիներն իրենք են առանձնացնում հիմնական կայանները ենթակայաններից՝ առաջինները որակելով որպես Hauptstation, իսկ երկրորդները՝ Nebenstation:

[5] Հարունիե (Խառնի, Խարնե, Խառնը, Հարուն, Հարունի դղյակ և այլն) գյուղը գտնվում էր Ադանայի նահանգում, Ջեբել-Բերեքեթի գավառում, Բաղչե գավառակում: 1909 թ. ջարդից առաջ Հարունիեն ուներ 140 տուն, որից 130-ը թուրքերը ջարդի ժամանակ այրել էին և հայ բնակչությանը գրեթե ամբողջությամբ կոտորել էին: Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1988, հատոր 2, էջ 679:

շարունակվել էին, թուրքերը տարել էին երիտասարդ հայ կանանց ու աղջիկներին[6]: Այս կոտորածների ժամանակ Մարաշի կայանի աշխատակիցները (Մարաշն իր աշխարհագրական դիրքով հեռու չէր գտնվում Հարունիեից) բժիշկ Բ. Մյուլերլայլեի, վերջինիս կնոջ Լուիզեի Մյուլերլայլեի (օրիորդական ազգանունը Այտել), Պաուլա Շեֆերի և հայ աշխատակիցների մասնակցությամբ արշավախումբ կազմելով շտապում են այստեղ փորձելով օգնություն ցուցաբերել տեղի ու շրջակայքի հայ ազգաբնակչությանը, սննդամթերք, դեղորայք տրամադրում նրանց, հիմնում վրանային ճամբարներ վերջիններիս համար և այլն: Մարաշի կայանի աշխատակիցները վերադարձի ժամանակ իրենց հետ Մարաշ են բերում նաև շուրջ 200 որբացած երեխայի, ինչպես նաև այրիների:

Սակայն Մարաշի կայանում երեխաների քանակի կտրուկ ավելացման հետ կապված ծագած դժվարությունների պատճառով, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ Հարունիեի բնակչությունը խիստ կարիքի մեջ է, ստեղծված պայմանների ճնշման տակ որոշում է կայացվում Հարունիեում չսահմանափակվել միայն ժամանակ առ ժամանակ օգնություն ցուցաբերելով, այլ այդ աշխատանքը դարձնել մշտական և գյուղում կայան հիմնել: 1910 թ. այստեղ սկսվում է որբանոցի շինարարությունը, որը ղեկավարում էր Մարաշի կայանից Կառլ Բլանկը: Հարունիեում որբանոցի շենքի կառուցումից հետո (ինչն ամեննին էլ սահուն ընթացք չի ունենում թուրքական կողմից հարուցված մի շարք խնդիրների պատճառով) 1910 թ. դեկտեմբերի 5-10-ը Մարաշից Հարունիե է տեղափոխվում ժամանակին այստեղից ու շրջակայքից հավաքագրված 175 երեխա՝ 80 տղա և 95 աղջիկ (մեկ այլ տվյալի համաձայն՝ 166 երեխա՝ 86 աղջիկ և 80 տղա), իսկ կայանը ղեկավարելու էր Յոհաննես Շտորքը՝ կնոջ՝ Զիգրիդի (Զիգրիդ Գրյունհագեն, դանիացի, Մեզրեի դանիական էմմաուս որբանոցի կառավարիչ Մինա Գրյունհագենի դուստրը, այժմ՝ Շտորք) հետ միասին, իսկ կայանում աշխատելու էին նաև Կեթե Յորկենն ու Ինա Մայնքեն[7]: Հետագայում՝ 1912 թ. աշնանից սկսած Շտորք ամուսինների հեռանում են այստեղից (տեղափոխվում են Մարաշի կայան), իսկ

---

[6] Sonnen-Aufgang, Heft 1, 1909, Oktober, S. 8-9; Heft 2, 1909, November, S. 19-22.

[7] Sonnen-Aufgang, Heft 6, 1911, März, S. 79; Heft 7, 1911, April, S. 99.

փոխարենը Գերմանիայից այստեղ են ժամանում Բեննո և Աննա ֆոն Դոբելեր ամուսինները (վերջիններս մինչ այդ ղեկավարել էին Մուշի կայանը, սակայն Գերմանիա հանգստանալու վերադառնալուց հետո ԱՔԲԳՕՄ որոշմամբ ոչ թե մեկնել էին Մուշ, այլ՝ Հարունիե) և ստանձնում Հարունիեի կայանի ղեկավարումը[8]:

Նորակառույց երկհարկանի որբանոցն իր սպիտակ ներկված լինելու պատճառով կոչվում էր նաև «Սպիտակ տուն»: Այն նախատեսված էր աղջիկների և տղաների համար: Բացի երեխաների կացարաններից, շենքում կային նաև բնակարաններ աշխատակիցների համար, ճաշասենյակ, հյուրասենյակ, չորանոց, հիվանդասենյակներ և կարի սենյակ: Սեղանները, անկողինները և աթոռները բերվել էին Մարաշի կայանից: Շենքի երկարությունը 41 մետր էր: Կային օժանդակ շինություններ, ինչպես օրինակ բաղնիքն ու լվացքատունը[9]:

Երեխաների կրթությունը սկզբնապես երկլեզու էր՝ հայերեն և գերմաներեն: Բարձր դասարաններում հետագայում սկում են սովորել նաև օսմաներեն: Այստեղ ժամանակի ընթացքում բավականին բարձր մակարդակի է հասնում երեխաների գերմաներենի իմացությունը: Այստեղ, ինչպես նաև Մարաշի կայանում գերմաներենի պահանջարկը բարձր էր՝ պայմանավորված Բաղդադի երկաթուղու մոտիկությամբ և Հալեպի գերմանական ռեալական դպրոցով[10]: Ուսուցչական

---

[8] Ադանայի կոտորածների ազդեցության տակ 1911 թ. Աննա ֆոն Դոբելերը 12 տարի Օսմանյան կայսրությունում հայերի շրջանում աշխատելուց հետո տալիս է այստեղ տիրող իրավիճակի նկարագիրը. «Մեզ համար ցնցող կերպով պարզ դարձավ. մեր աշխատանքը մի մեռնող ժողովրդի հետ էր: Սովը, մերկությունը, ամեն տեսակի ճնշումները և չլսված սարսափելի հարկային բեռը ժողովրդին այս վիճակին էին հասցրել: Աբդուլ Համիդի ոչնչացման համակարգն արել էր իր գործը և շարունակում է անել օրեցօր: Այն գաղափարը, որ հայ ժողովուրդը պետք է ճնշվի, առկա է յուրաքանչյուրի մեջ՝ կառավարության պաշտոնյայից մինչև տգետ ոստիկան: Տղամարդիկ, կերակրողները զանգվածաբար բանտեր են ուղարկվել»: Schulz H.- D. (Schriftsleiter), Handelt bis ich wiederkomme: 100 Jahre Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient e.V., Bad Homburg, 1896, S. 16.

[9] Sonnen-Aufgang, Heft 11, 13 Jahrgang, 1911, August, S. 167-168.

[10] Blaser B., (Hg.), 110 Jahre Deutscher Hilfsbund im Orient: 1896-Ende 2006, Bad Homburg, 2006, S. 5.

անձնակազմում ներգրավված էին նաև հայեր ի դեմս Մարթայի, ով այստեղ էր ժամանել Մեզրեից և Մարինե Դայանի Պարտիզակից:

Կայանի հիմնադրումից շուրջ մեկ ամիս անց 1911 թ. հունվարին միսիոներուհիներից Ինա Մայնքեի և Կեթե Յորկենի ջանքերով ու տեղացիների աջակցությամբ այստեղ մի սենյակ է կահավորվում որպես պոլիկլինիկա և սկիզբ դրվում նաև հիվանդախնամ գործունեությանը: Որոշ ժամանակով այստեղ աշխատելու է գալիս Մարաշի կայանի «Սալեմ» հիվանդանոցի երկարամյա քույր Պաուլա Շեֆերը:

Հարունիեի կայանը մեծ դժվարություններով կարողանում է վերապրել Համաշխարհային պատերազմն ու Հայոց ցեղասպանությունը: 1916 թ. սկզբներին այստեղ է տեղափոխվում էստոնուհի Հեդվիգ Բյուլը, ում ֆոն Դոբելերների ու Յոհաննա Հաքերի հետ միասին վիճակված էր կրելու այս կայանի գործունեության հետ կապված բոլոր դժվարությունները: Այս միսիոներները մեծագույն ջանքերի գնով կարողանում են փրկել որբերին վերապրելով Առաջին համաշխարհային պատերազմն ու կոտորածները[11]:

Կիլիկիայում ֆրանսիական և թուրքական զորքերի բախումների, ինչպես նաև պատերազմում Գերմանիայի պարտությամբ պայմանավորված Հարունիեի կայանը հայտնվում է նոր դժվարությունների առջև: Կայանի գերմանացի աշխատակիցներն Անտանտի որոշմամբ ստիպված էին լքել Օսմանյան կայսրությունը: Վերջիններս մեկնում են Մարաշի կայանի աշխատակիցների հետ միասին: Հեդվիգ Բյուլն անձնագրային խնդիրների պատճառով որոշ ժամանակ դեռևս պետք է մնար կայսրությունում: Կայանը դեռևս որոշ ժամանակ շարունակում է իր գոյությունը հայ աշխատակիցների ղեկավարության ներքո (ամերիկացի միսիոներները պատրաստակամություն էին հայտնել գերմանական բոլոր կանգուն միսիոներական կայանները համալրել իրենց աշխատակիցներով վերջիններիս հեռանալուց հետո), սակայն այս կարգավիճակով ևս երկար կյանք չի ունենում: 1920 թ. մարտին ֆրանսիական զորքերի

---

[11] Գրիգորյան Վ., Հայությանը նվիրված կյանք. Էստոնուհի Հեդվիգ Բյուլի հայանպաստ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում (1911-1951 թթ.), Ե., 1996, էջ 24:

նահանջի ժամանակ կազմակերպվում է կայանի երեխաների փախուստը (այստեղ կար 170 երեխա) հայ աշխատակիցների և ուսուցիչների ղեկավարությամբ: Փետրվար-մարտ ամսիներին Հարունիեն դարձել էր ռազմադաշտ: 1920 թ. մարտի 26-ի գիշերը 13 օրվա մարտերից հետո երեխաները կայանի հայ աշխատակիցների ու հայ զինվորների ուղեկցությամբ (ֆրանսիացի զինվորները սպասում էին հարթավայրում) սարսափելի ցրտի ու խոնավ եղանակային պայմաններում անաղմուկ փախչում են նախ՝ մոտակա գյուղ (գերմանացիներն այն անվանում են Յարըբաշը, առանց կորուստների այստեղ հասնում 14 ժամվա քայլքից հետո՝ շրջանցելով ուղիղ ճանապարհը), ապա՝ Ադանա, որտեղից էլ հետագայում՝ Զմյուռնիա: Ադանայում Հարունիեի որբանոցի երեխաներն արժանանում են հայ օգնական ուժերի խնամքին: Նրանց կեսը վրանների տակ են վերցվում, իսկ մյուս կեսը՝ քաղաքի որբանոցներից մեկը[12]: Այս փախուստով Հարունիեի կայանը վերջնականապես դադարեցնում է իր գոյությունը, իսկ որբանոցը, գրավվելուց հետո, կողոպտվում և հրի է մատնվում թուրքերի կողմից:

Ամփոփելով Հարունիեի կայանի գործունեության 10 տարին, պետք է նշել, որ այն սեղծվելով 1909 թ. կիլիկիահայության կոտորածների հետևանքով, դադարեցնում է իր գոյությունը նոր կոտորածների և պատերազմական գործողությունների պատճառով: Որոշ ժամանակ լինելով բախումների ականատես և մասնակից՝ տեղի հայությունը ֆրանսիացի զինվորների և հայ կամավորների նահանջի հետ մեկտեղ հեռանում են Հարունիեից: Կայանի շուրջ 170 որբերը ևս լքելով որբանոցը՝ հեռանում են դեպի Ադանա: Այդքանով ավարտվում է Օսմանյան կայսրությունում գերմանական ամենաերիտասարդ միսիոներական հիմնական կայանի գոյությունը: Այստեղ, ինչպես նաև գերմանական միսիոներական կայանների մեծ մասում (բացառությամբ

---

[12] Sonnen-Aufgang, Heft 11/12, 1920, August-September, S. 74-76, S. 80; Heft 2, 1920, November, S. 10-11: Պատմելով այս փախուստի մասին՝ հոդվածի հեղինակն այն համեմատում է 1915 թ. տարագրության հետ նշելով, որ այն շատ ավելի լավն էր սրա համեմատ, քանի որ ամեն ընտանիք իր տրամադրության տակ ուներ մի կենդանի և հետն էր վերցրել անհրաժեշտ իրերը: Այժմ փախչողներն ստիպված էին ամեն ինչը թողնել: Երեխաներն ու նրանց ուղեկիցները գտնվում էին խղճուկ վիճակում:

Մուշի և Մալաթիայի) հնարավոր եղավ վերապրել Առաջին համաշխարհային պատերազմը և դրա ընթացքում իրականացված հայ ազգաբնակչության կոտորածներն ու ցեղասպանությունը՝ փրկելով կայանում ապաստան գտած երեխաներին ու անձնակազմին:

MARTIROSYAN HAYK
(IOS)

A DECADE OF THE ACTIVITY OF HARUNIE GERMAN MISSIONARY CAMP (1910-1920)

Harunie missionary camp in Adana Vilayet is the last one of the German missionary camps established in the Ottoman Empire. The camp began its activities in December 1910. The establishment of the orphanage of the camp was due to the need of providing shelter to at least a small number of orphans of the Cilicia massacres in 1909. After Cilicia massacres, about 200 kids from these areas found a shelter in German Marash orphanage. Most of them moved to Harunie camp after its construction. The camp was able to continue its operation during the years of World War One and Genocide saving the lives of most of its godchildren and staff. Harunie missionary camp existed till March 1920.

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ
(ԱԻ)

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Սիրիայի և Լիբանանի բանակների ստեղծման և հետագա կայացման գործում մեծ դեր են խաղացել մի շարք հայորդի զինվորականներ, ովքեր բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցրել և իրենց գործունեությամբ նպաստել են սիրիական և լիբանանյան ազգային բանակների կայացմանն ու նրաց դիրքերի ամրապնդմանը քաղաքական կյանքում:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ ավանդ է ունեցել գեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը[1], ով պատկանում է սիրիական սպայական կազմի երկրորդ դասին[2]: Սիրիայի ռազմական պատմության մեջ ոսկե տառերով գրվեց Արամ Գարամանուկյանի անունը[3]: Նա ծնվել է Այնթապում 1910 թ. մայիսի 10-ին[4], նախնական ուսումը ստացել է ծննդավայրի Ադենական, այնուհետև Հալեպի Հայկազյան վարժարանում[5], որն ավարտել է 1923

---

[1] Գեներալ Արամ Գարամանուկյանի մասին մանրամասն տե՛ս Տոլպագեան Ե., Հայրենական նամականի ի պատիւ Զօր. Գարամանուկեանի, Նոր Այնթապ, թիւ 44-56, Լիբանան, 1971-1973, էջ 63-69; Պապայեան Ե., Պատմութիին Անթէպի Հայոց, Գ. հատոր, Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1994, էջ 484-629; Նոր Այնթապ, Ի Բ. տարի, թիւ 9-10 (81-82), նոր շրջան, Լիբանան 1995, էջ 93-96; Սիմոնեան Յ., Յաւելուած Այնթապի Հայոց Պատմութեան, Ոիոլթհէմ, ԱՄՆ, 1997, էջ 138-142; Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրութիւն, յուշեր և գործունէութիւն, Հալէպ, 1999, էջ 97, Զարթօնք, Պեյրութ, 1974, էջ 3:

[2] Van Dusen M., Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army, Ph.D., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, p. 379.

[3] Սամսոնյան Հ., Վարդանյան Գ., Հարցազրույց Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի հետ, Գիտական ֆիլմ, Դամասկոս, 2010 (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարան):

[4] Ըստ Արամ Գարամանուկյանի եղբորորդի պ.գ.թ. Շահեն Կարամանուկյանի բանավոր տեղեկությունների, Ե., 2011:

[5] Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ա տարի, Հալէպ, 1975, էջ 405:

թ.-ին: Զորավարի զինվորական գործունեությունն ընդգրկում է մի փոթորկալի ժամանակաշրջան, որ սկսվում է 1932 թ. և ավարտվում 1958 թ.-ին: 1934 թ. նա ավարտել է Դամասկոսի զինվորական վարժարանի հրետանու բաժինը, իսկ 1935-1937 թթ. ծառայել է Բեյրութում[6]: Մասնագիտությունը կատարելագործելու նպատակով՝ 1938-1939 թթ. նա մեկնել է Ֆրանսիա, իսկ 1945 թ. բարձրագույն զինվորական կրթություն ստացել Փարիզի Զինվորական բարձրագույն ակադեմիայում: Այնտեղ նրան առաջարկվել է զինվորական աստիճանի անմիջական բարձրացումով մնալ ֆրանսիական բանակում, սակայն նա հրաժարվել է և իր պարտքը համարել վերադառնալ Սիրիա և մասնակցել սիրիական ազգային բանակի կազմավորմանը[7]: 1948-1957 թթ. նա զբաղեցրել է Սիրիայի հրետանու գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Զորավարը մասնակցել է 1948 թ. արաբ–իսրայելական պատերազմին[8]: Ռազմական առաջնակարգ կարևորություն ներկայացնող Գոլանի բարձունքներն ամրացված էին զորավարի հաստատած թնդանոթային մարտկոցների խիտ շարքերով և թշնամու համար թվում էր անանցանելի[9]: Իսրայելական բանակի հրամանատարությունը մեծ պարգևատրում էր խոստացել նրան, ով կսպանի կամ գերի կվերցնի Արամ Գարամանուկյանին՝ վնասելով նրա հրետանային համակարգը[10]: Ա. Շորվողլեանը Արամ Գարամանուկյանի մասին գրել է. «Զօր. Արամ Գարամանուկեանին և բաժանմունքին

---

[6] Գարամանուկեան Յ., Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, Ֆորթ Լի, Նիի Ճըրզի, ԱՄՆ, 1998, էջ 60:

[7] مختار فوزى النعال، اللواء آرام قره مانوكيان، صفحة ناصعة في سجل العسكرية السورية، أريف، مايو 2001، صفحة 10-11.

[8] محمد رفعت الإمام، العلاقات العربية الأرمنية، الماضى والحاضر، كلية الأداب جامعة القاهرة، 2009، صفحة 173.

[9] Էպլիղաթեան Մ., Գաղթականականէն խորհրդարան, Հալէպ, 1998, էջ 159:

[10] Ըստ Ալեքսանդր Քեշիշյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009, տե՛ս նաև كشيشيان أ.، إسهامات المواطنين الارمن في الحياة العامة للبلاد السورية منذ أقدم العصور وحتى يومنا، حلب، 2007، صفحة 40.

սիրագործութիւնները թևեր առած ամբողջ ժողովուրդին հիացմունքին արժանացան»[11]:

Արամ Գարամանուկյանի հրամանատարության ներքո սիրիական բանակի հրետանին ավելի հզորացավ և դարձավ բանակի կարևորագույն մասը: Սիրիական բանակի հրետանու մասին իսրայելական բանակի գեներալներից մեկն ասել է, որ իսրայելական բանակն անպարտելի է և նրանք չեն վախենում արաբական զինված ուժերից՝ բացառությամբ սիրիական բանակի հրետանուց[12]:

1956 թ. նա ստացել է ստորաբաժանման զորավարի գեներալ-լեյտենանտի աստիճան: Այնուհետև 1957 թ. զինվորական կցորդ է նշանակվել ԱՄՆ-ում Սիրիայի դեսպանատանը, իսկ 1961 թ. ընտրվել Սիրիայի Ազգային ժողովի պատգամավոր և միաժամանակ Սահմանադիր ժողովի անդամ[13]:

Գեներալ Գարամանուկյանը սովորել է Սորբոնի համալսարանում և, պաշտպանելով «Օտարները և զինվորական ծառայությունը» գիտական ուսումնասիրությունը, 1972 թ. ստացել է իրավագիտության դոկտորի գիտական աստիճան[14]: Իր կատարած զինվորական ծառայությունների համար գեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, այդ թվում նաև ֆրանսիական կառավարության կողմից՝ առաջին կարգի պատվո շքանշանով[15]: Հաշվի առնելով զորավարի մատուցած ծառայությունները Սիրիային և ազգօգուտ անդրադարձը սիրիահայ գաղութին՝ Արամ Գարամանուկյանը պարգևատրվել է նաև Ներսես Շնորհալի և Կիլիկիո Մեծ Խաչի Ասպետի շքանշաններով:

---

[11] Տե՛ս Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, նշվ. աշխ., էջ 402:

[12] Գարամանուկեան Յ., նշվ. աշխ., էջ 83:

[13] Ըստ պ.գ.թ. Հուրի Ազեզյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2010, տե՛ս նաև عزازيان ه.، نبذة تاريخية موجزة عن الجاليات الارمنية في البلاد العربية (سورية، لبنان، مصر، فلسطين، الاردن...)، اللاذقية، 1993، صفحة 62.

[14] Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 555:

[15] عزازيان ه.، المصدر المذكور، صفحة 62.

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ դեր է խաղացել նաև գեներալ-մայոր Հրանտ բեյ Մալոյանը[16]: Այս պատվական հայորդին ծնվել է 1895 թ. Մուշում[17]: 1905-1907 թթ. սկզբնական ուսումը ստացել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Սուրբ Ղազարի վանքում[18]: 1913-1914 թթ. ընդունվել է իրավագիտական համալսարան: 1914 թ. Հրանտ Մալոյանը զորակոչվեց բանակ և որպես սպա՝ 1916 թ. տեղակալի պաշտոնով ծառայեց թուրքական 53-րդ ստորաբաժնում[19]: Առաջին համաշխարհային պատերազմի զինադադարի նախօրյակին՝ թուրքական բանակի նահանջելու ժամանակ, գերի վերցվեց Դարաայի արաբական գնդերի կողմից[20]: Ազատվելով գերությունից՝ նա մտավ նորակազմ Հայկական լեգեոն և, աչքի ընկնելով որպես ուշիմ և մի քանի լեզուների տիրապետող երիտասարդ, Կիլիկիայի զինվորական կառավարիչի կողմից նշանակվեց ժանդարմերիայի օգնական[21]: Հրանտ Մալոյանը մասնակցեց Կիլիկիայի ինքնապաշտպանության մարտերին և դրանից հետո նա տեղափոխվեց Դամասկոսի առաջին բրիգադի, այնուհետև Հալեպի երկրորդ բրիգադի հրամանատարություններ և միաժամանակ համատեղությամբ փոխարինեց Հալեպի ոստիկանության հրամանատարության ներքո գտնվող

---

[16] Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria, New York, 2008, p. 136: Հրանտ Մալոյանի մասին տե՛ս նաև Տարեկան տեղեկագիր Դամասկոսի հայ կաթողիկէ բարեսիրական միութեան, 2006, էջ 59; Torrey G., Syrian Politics and the Military 1945-1958, Ohio State University Press, 1964, p. 146, أندرو راثميل، الحرب الخفية في الشرق الأوسط، الصراع السرّي على سورية 1949–1961، جميع الحقوق محفوظة، 1997، صفحة 69–70، دعد الحكيم، أوراق ومذكرات فخري البارودي، 1887–1966، خمسون عاماً من حياة الوطن، دمشق، 1999، صفحة 298.

[17] وزارة الداخلية السورية، إدارة الهجرة والجوازات، جواز سفر، صفحة 1.

[18] Atamian P., Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth, 1964, p. 155.

[19] Ըստ Լաթաքիայի Թիշրին համալսարանի դասախոս, Արաբական աշխարհագրագետների միության փոխնախագահ Նաղիմ Շամսինի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2010:

[20] Ըստ Հրանտ Մալոյանի մտերիմ Սարգիս Քեշիշյանի բանավոր վկայությունների, Դամասկոս, 2009:

[21] Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Ա տարի, նշվ. աշխ., էջ 406-407:

ժանդարմերիայի փոխգնդապետ Հասան Բահրային[22]: Սիրիայի ազատագրական պայքարի ժամանակ Դամասկոսի ֆրանսիացի զինվորական կառավարիչ գեներալ Օլիվյե Ռոժեն նրան առաջարկում է հայ երիտասարդների գումարտակ կազմել ֆրանսիական բանակին օգնելու համար[23]: Հրանտ Մալոյանը մերժում է գեներալի հիշյալ առաջարկը: Հայ զորավարի այդ դիրքորոշումը բարձր գնահատվեց սիրիացի ազգայնականների կողմից: Սիրիայի անկախացումից հետո նրան հանձնվեց երկրի ներքին ապահովությունը՝ ստանձնելով ոստիկանական զորքերի ընդհանուր հրամանատարի պաշտոնը[24]: 1946-1950 թթ. Հրանտ Մալոյանը Սիրիայի ժանդարմերիայի գլխավոր հրամանատարն էր[25]: Գեներալ-մայոր Հրանտ Մալոյանը պարգևատրվել է սիրիական, լիբանանյան, եգիպտական, ֆրանսիական մի շարք շքանշաններով[26]: Մեծանուն զորավարը մահացավ 83 տարեկանում՝ 1978 թ. հուլիսի 24-ին[27]:

Սիրիական բանակում իր ուրույն տեղն ուներ նաև զորավար Ալբեր Քիլեջյանը, ով ծնվել է 1920 թ. Համայում: Նա պատկանում է սիրիական սպայական կազմի երրորդ դասին[28]: Իր ռազմական ուսումը նա ստացել է Հոմսի Ռազմական ակադեմիայում, այնուհետև մասնակցել է արաբ-իսրայելական առաջին պատերազմին[29]: Մասնագիտությունը կատարելագործելու նպատակով 1957 թ. Քիլեջյանը մասնակցել է Կահիրեի բարձրաստիճան սպաների դասընթացներին: Դրանից հետո նա նշանակվել է ենթասպաների դպրոցի և պահեստային սպաների վարժարանի հրամանատար: 1959 թ. ավարտել է իր զինվորական

---

22 كشيشيان ا.، صفحات وثائقية من جريدة (التقدّم) الحلبية عن الأحوال الأرمنية والعربية في الدولة العثمانية والبلاد الشامية، صفحة 199.

23 Մասիս, թիվ 39, Բեյրութ, 2008, էջ 27:

24 محمد رفعت الإمام، المصدر المذكور، صفحة 173.

25 نديم شمسين، دمشق، 2008/11/30، صفحة 1.

26 Atamian P., նշվ. աշխ., էջ 156-157:

27 Ըստ Դամասկոսի Հայ Կաթողիկե Տիեզերքի թագուհի եկեղեցու մահվան գրանցման մատյանի, Դամասկոս, 2009:

28 Van Dusen M., նշվ. աշխ., էջ 383:

29 مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجلد الأول، 1901-1948، مركز الدراسات العسكرية، صفحة 290.

ծառայությունը գեներալ-լեյտենանտի աստիճանով և պարգևատրվել է սիրիական, լիբանանյան, եգիպտական և այլ շքանշաններով[30]:

Սիրիական բանակում է ծառայել նաև օդային պաշտպանության գեներալ-մայոր Ավետիս Արսլանյանը, ով ծնվել է 1944 թ. մարտի 8-ին Դամասկոսում: Արմատներով այնթապցի գեներալը 1963 թ. ընդունվել է Դամասկոսի համալսարան և այն ավարտել 1968 թ.-ին: 1968 թ. դեկտեմբերին նա լեյտենանտի աստիճանով ծառայության է անցել սիրիական բանակ: 1973 թ. մասնակցել է արաբ-իսրայելական պատերազմին և պարգևատրվել բազմաթիվ շքանշաններով, որից հետո բրիգադի գլխավոր ինժեներ Ավետիս Արսլանյանը 1974 թ. ստացել է մայորի աստիճան: 1981-1985 թթ. նա սովորել է Անգլիայում և պաշտպանել «Թվային ազդանշանի մշակում» թեմայով ատենախոսություն: 1985 թ. վերջին վերադարձել է Սիրիա, իսկ 1986 թ. նրան շնորհվել է գեներալ-մայորի աստիճան: 1986-2002 թթ. Ավետիս Արսլանյանը եղել է Դամասկոսի օդային պաշտպանության գեներալ[31]:

Հայազգի մյուս բարձրաստիճան սպաներից արժանի է հիշատակել գնդապետ Ժոզեֆ Բայրամյանին, ով ծնվել է 1915 թ. Հալեպում: Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Ազգային Հայկազյան վարժարանում, իսկ 1939 թ. ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա՝ 1941 թ. ավարտելով նրա հրետանու բաժինը, ապա Ժոզեֆ Բայրամյանը նշանակվել է հրետանու ստորաբաժանման հրամանատար և 1958 թ. ստացել գնդապետի աստիճան՝ պարգևատրվելով մի շարք շքանշաններով[32]:

Սիրիական բանակի հայազգի սպաներից է նաև գնդապետ Վռամշապուհ (Աֆրամ) Սալաթյանը, ով պատկանում է սիրիական

---

[30] Ըստ Ալբեր Քիլեջյանի կնոջ՝ Գարուն Քիլեջյանի (Մելիքյան) բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009:

[31] Հարցազրույց Սիրիայի բանակի գեներալ Ավետիս Արսլանյանի հետ, Ե., 2013: Ավետիս Արսլանյանի հորեղբայրը՝ Ֆրեդ Արսլանյանը, 1947 թ. ընտրվել է Սիրիայի Ազգային ժողովի պատգամավոր: Ֆրեդ Արսլանյանը ծնվել է 1915 թ. Այնթապում: 1964-1970 թթ. նա եղել է Փաստաբանների միության ընդհանուր քննիչի օգնական և "المحامون" «Փաստաբաններ» թերթի տնօրեն: Տե՛ս Ազդակ, 19 Մայիս, 2001 թ.:

[32] Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Ա տարի, նշվ. աշխ., էջ 408:

սպայական կազմի երրորդ դասին[33]: Նա ծնվել է 1920 թ. Հալեպում: Սկզբում սովորել է Հալեպի Կիլիկյան վարժարանում, այնուհետև արաբական Սուլթանիե երկրորդական վարժարանում[34]: Նախնական կրթությունը ստանալուց հետո նա ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա: Այն ավարտելուց հետո Վռամշապուհ Սալաթյանն ուղարկվում է Եգիպտոս՝ կապի բնագավառում ավելի լավ մասնագիտանալու նպատակով: Նա 1947-1948 թթ. Լաթաքիայում նշանակվել է զինվորական պատասխանատու[35], այնուհետև՝ մասնակցել արաբ–իսրայելական պատերազմին[36]: Հայազգի ռազմական գործիչն իր ենթակայության տակ գտնվող 8 զինվորականի հետ զոհվել է Կուվեյտրայում[37]:

Հայազգի մյուս բարձրաստիճան սպաներից արժանի է հիշատակել գնդապետ Գրիգոր Հինդոյանին, ով պատկանում է սիրիական սպայական կազմի երկրորդ դասին[38]: Նա ծնվել է 1901 թ. Այնթապում: Երկու տարի սովորել է ծննդավայրի Ներսեսյան, այնուհետև՝ Թերա Սանտա վարժարանում: 1921 թ. կամավորագրվել է կապի գումարտակում, իսկ 1932 թ. ստացել է ավագ լեյտենանտի աստիճան[39]: Գրիգոր Հինդոյանը մասնակցել է արաբ-իսրայելական պատերազմին[40]: 1949 թ. նա ստացել է փոխգնդապետի աստիճան, այնուհետև՝ գնդապետի[41]:

Սիրիական բանակում են ծառայել նաև Անտուան և Հիքմեթ Գուշակչիները: Անտուան Գուշակչին ծնվել է 1911 թ. Հալեպում: Նա 1932 թ. ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա, իսկ 1949 թ. ստացել է փոխգնդապետի աստիճան: Հիքմեթ Գուշակչին ծնվել է 1916 թ.: Նա

---

[33] Van Dusen M., նշվ. աշխ., էջ 385:

[34] Ըստ Ռոբերտ Ջեբեջյանի՝ Վռամշապուհ Սալաթյանի մասին գրած նամակի:

[35] Ըստ Վռամշապուհ Սալաթյանի քրոջ՝ Էլիզաբեթ Սալաթյանի գրած նամակի:

[36] مصطفى طلاس، المصدر المذكور، صفحة 289.

[37] Ըստ Վարուժան Սալաթյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009:

[38] Van Dusen M., նշվ. աշխ., էջ 378:

[39] Սարաֆեան Գ., Այնթապցի հայ սպաներ սուրիական բանակին մէջ, Պատմութիին Անթէպի Հայոց, Բ. հատոր, Լոս Անճէլըս, Գալիֆորնիա, 1953, էջ 778:

[40] مصطفى طلاس، المصدر المذكور، صفحة 284.

[41] Հարցազրույց Աշխեն Արսլանյանի (Շալջյան) հետ, Ե., 2013:

նախնական ուսումը ստացել է Հալեպի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից վարժարանում, իսկ 1948 թ. սկսած՝ ծառայել է սիրիական բանակում՝ հասնելով մինչև փոխգնդապետի աստիճանի: Նրանք երկուսն էլ ծառայել են պարենավորման և հաշվապահական սպասարկման բնագավառում: Սիրիական բանակում իրենց կարևոր տեղն ու դերն են ունեցել նաև հայազգի սպաներ Լևոն Դարադուբյանը, Սմբատ Կուդշինյանը, Արշակ Սարաֆը, Նադիմ Թարաջյանը, Վազգեն փաշա Բազյանը և այլք[42]:

Ինչպես սիրիական, այնպես էլ լիբանանյան բանակում նույնպես ծառայել են հայազգի ռազմական գործիչներ, որոնցից են՝ Լիբանանի պետական նախարար, բանակի բրիգադի գեներալ Փանոս Մանջյանը, գեներալներ Նարեկ Աբրահամյանը, Հրայր Թերզյանը, Արամ Սուլուքյանը, Ստեփան Տոնոյանը, Մելքոն Ուրֆալյանը, Սողոմոն Ֆերնեզյանը, Նազարեթ Գաբրիելյանը, Բեյրութի միջազգային օդանավակայանի անվտանգության պետ Ժան Թալուզյանը, պետական նախարար գնդապետ Ժան Օղասապյանը և այլք[43]:

Լիբանանի պետական նախարար, բանակի բրիգադի գեներալ Փանոս Մանջյանը ծնվել է 1952 թ. դեկտեմբերի 3-ին Այնճարում: Այս հայորդին մեծ դիրք ու դերակատարում է ունեցել լիբանանյան զինված ուժերում: Նրա զինվորական կյանքը սկսվում է 1939 թ.-ին, երբ որպես կամավոր մտնում է ֆրանսիական բանակի շարքերը: Նա սովորել է Այնճարի Հառաջ վարժարանում, ապա՝ Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում: 1972 թ. Փանոս Մանջյանը ռազմական ակադեմիայի սան էր, իսկ երեք տարի անց՝ լիբանանյան բանակի սպա: 1979 թ. Փանոս Մանջյանին գործուղում են ԱՄՆ, որտեղ կատարելագործվում է զրահատանկային մասնագիտության մեջ, որից հետո նա նշանակվում է բրիգադի շտաբի պետ, հրամանատարի օգնական, այնուհետև՝ բանակի 10-րդ զրահատանկային բրիգադի

---

[42] Ըստ Սիրիայի բանակի գեներալ Ավետիս Արսլանյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009:

[43] 2013 թ. օգոստոսի 1-ին լիբանանյան բանակի հիմնադրման 68-րդ տարելիցի առթիվ հայտարարվեց բանակի շարքերը համալրող նոր սպաների անունները, որոնց մեջ էին նաև բանակի սպա Արցախ Խոշյանը և զինվորական բժիշկ Սարգիս Չանկուլյանը:

հրամանատար: 2001 թ. Լիբանանի նախագահ գեներալ Էմիլ Լահուդի[44] հրամանագրով Փանոս Մանջյանին շնորհվեց գեներալի աստիճան: 2005-2008 թթ. նա բանակի հրամանատար գեներալ Միշել Սուլեյմանի չորս օգնականներից մեկն էր, իսկ 2010 թ.-ին՝ ավարտեց զինվորական ծառայությունը[45]: 2011 թ. Փանոս Մանջյանը նշանակվեց Լիբանանի պետական նախարար[46]:

Լիբանանյան բանակի բրիգադի գեներալ Նարեկ Աբրահամյանը ծնվել է 1953 թ. Այնճարում: Սկզբնական կրթությունը ստացել է Հառաջ վարժարանում, այնուհետև՝ Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում: Ռազմական ակադեմիան ավարտելուց հետո նա 1994-1995 թթ. վերապատրաստվել է ԱՄՆ-ի հրամանատարաշտաբային քոլեջում: Նարեկ Աբրահամյանը նշանակվել է վաշտի, գումարտակի, այնուհետև՝ գնդի հրամանատար, իսկ 1998 թ. պաշտոնաթող է եղել: Նա մասնակցել է 1975 թ. սկսված Լիբանանի երկրորդ քաղաքացիական

---

[44] Էմիլ Լահուդը ծնվել է 1936 թ. հունվարի 12-ին Բեյրութում: Նրա հայրը լիբանանյան բանակի գեներալ Ջամիլ Լահուդն էր, ով հայտնի է եղել «Կարմիր գեներալ» մականվամբ, իսկ մայրը՝ հայազգի Ադրինե Բաջակյանը: Էմիլ Լահուդն ամուսնացած է հայուհի Անդրեա Ամատունու հետ: Մանրամասն տե՛ս Dossier: Emile Lahoud, President of Lebanon, Middle East Intelligence Bulletin, November, 2001, Vol. 3, № 11. 1989 թ. գեներալ Էմիլ Լահուդը նշանակվեց լիբանանյան բանակի հրամանատար, իսկ 1998 թ. ընտրվեց Լիբանանի 11-րդ նախագահ և պաշտոնավարեց մինչև 2007 թ.: Տե՛ս Pakradouni K., Years of Resistance, The Mandate of Emile Lahood, the former President of Lebanon, Garnet Publishing, 2012, p. 2; Рассадин П., Конфессиональные меньшинства в общественно-политической жизни Сирии и Ливана (1943-2010 гг.), Диссертация, МГИМО МИД России, М., 2011, с. 235. Էմիլ Լահուդի պաշտոնավարման լիազորությունները ևս երեք տարի ժամկետով երկարացվեցին 2004 թ. սեպտեմբերին կայացած Լիբանանի խորհրդարանի հատուկ նստաշրջանի ընթացքում՝ երկրի Սահմանադրության 49-րդ հոդվածի փոփոխմամբ: Տե՛ս Шевченко В., "Кедровая революция" в Ливане (2005 г.), Ближний Восток и современность, Сборник статей, М., 2011, с. 317.

[45] عسكريون في السياسة، الوزير منجيان، مجلة الجيش، العدد 324، حزيران، 2012، http://www.lebarmy.gov.lb/ar/news/?31693#.UqW4kdIW33p

[46] Сарабьев А., Ливан, Ближний Восток, Арабское пробуждение и Россия: что дальше?, Сборник статей, М., ИВ РАН, 2012, с. 343.

պատերազմի ժամանակ ծավալված գործողություններին[47]: Գեներալ-մայոր Նարեկ Աբրահամյանը հիմնել է Ազատ լիբանանահայերի շարժումը և դարձել նրա ղեկավարը[48]:

Լիբանանի պետական նախարար, գնդապետ Ժան Օղասապյանը ծնվել է 1954 թ. փետրվարի 17-ին Բեյրութում: 1974 թ. ընդունվել է ռազմական ակադեմիա և լեյտենանտի աստիճանով այն ավարտել 1977 թ.-ին: Զինվորական ծառայությունը սկսել է 6-րդ բրիգադից, իսկ 1985 թ. տեղափոխվել է 8-րդ բրիգադ: 1990-2000 թթ. Ժան Օղասապյանը նախագահական կամ հանրապետական գվարդիայի հրամանատարի օգնականն էր: 2000 թ. նա ավարտեց իր զինվորական ծառայությունը և դարձավ խորհրդարանի պատգամավոր, այնուհետև՝ պետական նախարար: Գնդապետ Օղասապյանը վերապատրաստվել է Հորդանանում Ֆրանսիայում, Գերմանիայում և ԱՄՆ-ում[49]: 2009 թ. «Մարտի 14-ի» դաշինքի ներկայացուցիչ Ժան Օղասապյանը կրկին ընտրվեց Լիբանանի խորհրդարանի պատգամավոր[50]:

Այսպիսով՝ հայ զինվորականները, ապրելով և իրենց գործունեությունը ծավալելով Սիրիայում և Լիբանանում՝ իրենց տաղանդի, ռազմական հնարամտությունների և կարողությունների շնորհիվ արժանացել են զինվորական բարձր աստիճանների: Նրանք ազնվաբար ծառայել են ի պաշտպանություն Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության, խաղաղության ու անվտանգության համար և միասնական ճակատով հանդես գալով՝ նպաստել են հայ-սիրիական, հայ-լիբանանյան դարավոր բարեկամության ամրապնդմանը:

---

47 ناريك أبراهميان، عميد متقاعد، رئيس "حركة اللبنانيين الأرمن الأحرار"، http://www.focusonlebanon.com/homepage.php?page=Members&cat=Politics&sub=politicfigures&mem=Narek%20Abrahmian

48 Messerlian Z., Armenian Participation in the Lebanese Legislative Elections During the Presidency of Michel Suleiman (2008), Haigazian Armenological Review, Vol. 31, 2011, p. 349.

49 عسكريون في السياسة، النائب جان أوغاسبيان، مجلة الجيش، العدد 325، تموز 2012، http://www.lebarmy.gov.lb/ar/news/?32025#.UqW8V9IW33p

50 Հարությունյան Լ., Լիբանանը քաղաքական ճգնաժամերի և հարաբերական կայունության միջև (2008-2011), Ժամանակակից Եվրասիա, հատոր 1 (2), Ե., 2012, էջ 35:

SAMSONYAN HAYK
(IOS)

ARMENIAN MILITARY OFFICERS IN THE SYRIAN AND LEBANESE ARMIES

In the question of creation and further development of the Syrian and Lebanese armies, a significant role was played by a number of Armenian officers. They possessed highest ranks in the army and contributed much to the process of formation of the Syrian and Lebanese national armies, also to the strengthening of positions in the political life of the country.

In Syrian army their outstanding contribution made the Armenians Aram Garamanukyan, Hrant bek Maloyan, Alber Kilejyan, Avetis Arslanyan, Grigor Hindoyan, Josef Bayramyan, Vramshapuh (Afram) Salatyan, Antuan and Hikmet Gushakchins, Levon Daraghubyan, Smbat Kudshinyan, Arshak Saraf, Nadim Taradjyan, Vazgen Bazyan pasha and others.

In Lebanese army an important role was played by Panos Manjyan, Narek Abrahamyan, Jean Taluzyan, Nazaret Gabrielyan, Jean Oghasapyan, Hrayr Terzyan, Aram Sulukchyan, Stepan Tonoyan, Melkon Urfalyan, Soghomon Fernezyan and others.

Armenian military officers served for Syrian and Lebanese national security offering their valuable contribution to both Armenian-Syrian and Armenian-Lebanese friendships.

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ
(ԵՊՀ)

ԱԹԱԹՈՒՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ (1923-1938 ԹԹ.)

1960-ական թվականներին Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգ մտավ Եվրամիության անդամագրության հարցը: Կրելով բովանդակային մի շարք փոփոխություններ այն շարունակում է մնալ առանցքային Թուրքիա-ԵՄ հարաբերություններում: Երկրի ներկայիս կառավարությունը վարչապետ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ վարում է երկակի քաղաքականություն օգտագործելով չափավոր իսլամի հայեցակարգը քայլեր են կատարվում պետության մեջ իսլամի դերի բարձրացման ուղղությամբ միևնույն ժամանակ պահպանվում է աշխարհիկ պետության մոդելը: ԱՋ կուսակցությունը, գալով իշխանության, սկսեց աշխատել եվրաինտեգրման խնդրի ուղղությամբ բարեփոխիչ մի շարք քայլեր կատարելով այս գործընթացի արագացման համար: Էրդողանը բազմիցս ընդգծել է, որ Թուրքիայում իրականացվող բարեփոխումները նպատակ ունեն երկիրը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին[1]: Սակայն պետք է փաստել, որ եվրոպական մեծ ընտանիքին միանալու առաջին քայլերը Թուրքիան կատարել է շատ ավելի վաղ թանզիմաթական բարեփոխումների, ապա Մուտաֆա Քեմալ Աթաթուրքի կառավարման տարիներին, քանի որ հենց այդ ժամանակ դրվեց աշխարհիկ պետության հիմքերը հրաժարվելով իսլամական անցյալից:

Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի՝ քեմալական շարժման հիմնադրի և առաջնորդի, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահի կառավարման ժամանակահատվածը (1923-1938 թթ.) հանրապետական Թուրքիայի պատմության ուսումնասիրման կարևորագույն շրջաններից մեկն է, քանի որ հենց այդ ժամանակ

---

[1] Кудряшова Ю., Турция и Европейский союз: История, проблемы и перспективы взаимодействия, М,, 2010, с. 219.

ձևավորվեց և կայացավ թուրքական պետությունը, սահմանվեցին երկրի ներքին և արտաքին քաղաքականության առանցքային սկզբունքները և ուղղությունները, որոնց հիման վրա էլ Թուրքիան հետագայում շարունակեց իր ուղին՝ փորձելով պահպանել Աթաթուրքի քաղաքական հայացքների հիմնական գիծը, իսկ երբեմն էլ շեղվեց դրանցից: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին Աթաթուրքի իրականացրած արդիականացման քաղաքականությունը, որը մեծ նշանակություն ունեցավ թուրքական պետության եվրոպականացման, ինչպես նաև հետագա տարիներին արտաքին քաղաքական կուրսի և գաղափարախոսության ընտրության ճանապարհին:

Հետաքրքրական է, որ թուրքական քաղաքական վերնախավը միշտ էլ կանգնած է եղել երկակի ընտրության առաջ՝ հայացք ուղղել դեպի Արևմուտք թե Արևելք: Ինչպես նշեցինք, այս խնդիրը երկրի օրակարգում էր գտնվում Աթաթուրքից շատ ավելի առաջ՝ 19-րդ դարում, երբ սկսվեց երկրի արդիականացման գործընթացը և թանզիմաթական բարեփոխումների միջոցով փորձ կատարվեց կայսրության մեջ ներդնել եվրոպական արժեքներ՝ մասնավորապես բոլոր հպատակների հավասարության, այսինքն ժողովրդավարության սկզբունքը: Այն ժամանակ այս բարեփոխումները արդյունք չտվեցին, քանի որ դրանց հետևում իրականում թաքնված էր կայսության ոչ մուսուլման տարրերի միաձուլումն ու միախառնումը մուսուլմանների հետ[2]: Իսկ Աթաթուրքի օրոք դրությունը այլ էր, Թուրքիան խնդիր ուներ վերականգնելու իր կորցրած հեղինակությունն ու դիրքը Եվրոպայի աչքում, ինչպես նաև դառնալ առաջատար մերձավորարևելյան տարածաշրջանում:

Հանրապետության հենց առաջին տարիներից Աթաթուրքը նպատակ դրեց արդիականացնել Թուրքիան՝ որպես զարգացման հիմք ընդունելով արևմտականացման ուղին: Ըստ Սուրեն Բաղդասարյանի՝ այդ ընտրությունը թելադրված էր պարզ պրագմատիկ շահով. եթե Թուրքիան ցանկանում էր պահպանել այն, ինչ նվաճել էր զենքի ուժով,

---

[2] Միաձուլման և միախառնման քաղաքականության մասին մանրամասն տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Ե., 2009, էջ 44-72:

ապա նրան անհրաժեշտ էր յուրացնել արևմտյան քաղաքակրթությունը[3]: Սա միանշանակ ճիշտ դիտարկում է, քանզի Աթաթուրքը իր ելույթներում բազմաթիվ անգամ նշել է քաղաքակրթվելու անհրաժեշտության մասին. «Մենք քայլելու ենք քաղաքակրթության ճանապարհով և հասնելու ենք դրան...Մենք կդառնանք քաղաքակիրթ և կհպարտանանք դրանով...Մենք ապրելու ենք ինչպես առաջադեմ և քաղաքակիրթ ազգ...Մենք պետք է լինենք քաղաքակրթության մի մասը»[4]:

Արդիականացման վերաբերյալ քաղաքագիտության և սոցիոլագիայի մեջ գոյություն ունեն մի շարք տեսություններ: Ըստ Հանթինգտոնի «արդիականացումը հեղափոխական գործընթաց է, որը կարելի է համեմատել միայն հասարակից քաղաքակրթվածին անցնելու հետ»[5], իսկ ըստ Ջ. Քոուլմանի «արդիականացումը հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակույթային փոփոխությունների մի համալիր գործընթաց է»[6]: Աթաթուրքը, իր համար որպես ուղենիշ սահմանելով այս սկզբունքները, սկսեց քայլեր իրականացնել թուրք իրականության մեջ Եվրոպայի բուրժուական հասարակարգի, կացութաձևի և մշակույթի ներդնման ուղղությամբ:

Պետք է նշել, որ այս նպատակը կապված է քեմալիզմի սկզբունքներից մեկի՝ լայիցիզմի հետ: Մի երկրի համար, որտեղ իսլամը ոչ միայն կրոն էր, այլ միաժամանակ կյանքի բոլոր բնագավառները ընդգրկող բարոյական ու իրավական մի համակարգ, երբ կրոնական պատկանելիության հանգամանքը անհամեմատ ավելի ուժեղ էր, քան ազգային պատկանելության փաստը, արդիականացում առաջին հերթին նշանակում էր աշխարհիկացում: Այդ պատճառով էլ Քեմալի կողմից կարևոր քայլ էր խալիֆայության վերացումը և դերվիշական միաբանությունների փակումը: «Դարեր շարունակ կապված լինելով մեր իսլամի կրոնի հետ՝ մենք այսօր անհրաժեշտություն ենք դիտում ազատել նրան քաղաքականության միջոց ծառայելու դիրքից»,-

---

[3] Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Ե., 2001, էջ 102:

[4] Васильев А., Мост через Босфор, М., 1979, с. 22.

[5] Хантингтон С., Столкновение цивилизаций, М., 2003, с. 137.

[6] Բաղդասարյան Ս., նշվ. աշխ., էջ 104:

հայտարարում էր Մուստաֆա Քեմալը 1924 թվականին[7]: Այս բարեփոխման շնորհիվ կրոնական բոլոր հաստատությունները դարձան պետական ապարատի մասը: Ինչպես նշում է Օսման Նուրին՝ «այդ գործողություններով երիտասարդ Թուրքիան իր նման անկախության համար պայքարող մուսուլմաններին մեջքով կանգնեց, նրանց ճակատագրի հետ դեմ առ դեմ թողեց, և իր երեսը թեքեց դեպի Արևմուտք՝ նպատակ դնելով հասնել ժամանակակից քաղաքակրթության մակարդակին»[8]:

Որպեսզի ցույց տան իրենց պատկանելությունը եվրոպական, զարգացած հասարակությանը՝ քեմալիստները որոշեցին մտցնել եվրոպական հագուստ: Քեմալը արգելեց ֆեսը և պատվիրեց կրել եվրոպական քաղաքակիրթ հագուստ[9]: Ֆեսը, որ թուրքերը կրում էին մոտ հարյուր տարի շարունակ, Աթաթուրքի համար մոլեռանդության, տգիտության, ինչպես նաև առաջադիմության ու քաղաքակրթության նկատմամբ ատելության խորհրդանիշ էր[10]: Առաջին հայացքից աննշան և անիմաստ թվացող այս բարեփոխումը իրականում շատ խորը հիմքեր ուներ: Բանն այն է, որ մուսուլմանները «անհավատներից» իրենց տարբերակում էին հագուստով և գլխավորապես ֆեսի կրումով: Ընդհանրապես պատմության մեջ հագուստը փոխելը նշանակել է թույլերի ցանկությունը նմանվել ուժեղներին: Այս պարագայում ուժեղը Եվրոպան էր՝ իր զարգացման և քաղաքակրթության բարձր մակարդակով, որին ձգտում էր նմանվել Թուրքիան:

Արդիականացման ճանապարհին Քեմալի կատարած բարեփոխումներից պետք է առանձնացնել կնոջ իրավունքների ընդարձակումը, մուսուլմանական հիջրայի օրացույցի վերացումը, փոխարենը՝ եվրոպական օրացույցի ներմուծումը: Մուսուլմանների համար սրբազան ուրբաթ օրվա փոխարեն որպես հանգստի օր սահմանվեց կիրակին: Այս բարեփոխումներից հետո միակ օղակը, որ նոր Թուրքիան կապում էր այսպես ասած հնի հետ, արաբական գիրն

---

[7] Atatürk Söylev ve Demeçleri, C 2, Ankara, 1961, s. 314.

[8] Osman N., Türk dış politikası ya da Redd-i Miras dönemi, İstanbul, 2009. http://www.tarihvebugun.org/2009/02/turk-dis-politikasi-1923-1939-ya-da.html

[9] Ֆեսը հյուսիսաֆրիկյան ծագում ունեցող երկարավուն գլխարկ էր, որը սուլթան Մահմուդ II-ը չալմայի փոխարեն մտցրել էր 1828 թվականին:

[10] Պոզդնանսկա Ք., Հին ու նոր Թուրքիա, Ե., 1985, էջ 56:

էր: Հայտնի է, որ արաբական այբուբենը, լինելով կայսրության պաշտոնական լեզվի՝ օսմաներենի գիրը, բավական դժվար էր ընկալվում հասարակ ժողովրդի կողմից, քանի որ այն հագեցած էր բազմաթիվ արաբապարսկական փոխառություններով թե՛ բառապաշարում, թե՛ քերականական կառույցներում: Այդ է պատճառը, որ Թուրքիայում տիրում էր համատարած անգրագիտություն՝ բնակչության կեսից ավելին գրաճանաչ չէր: Աթաթուրքը խորապես գիտակցում էր այս բարեփոխման կարևորությունը: «Անհրաժեշտ է արագ սովորել նոր թուրքական տառերը: Սովորեցրե՛ք դրանք քաղաքացուն, կնոջը, տղամարդուն, բանվորին, ատաղծագործին: Այդ պարտականությունը կատարելիս մտածեք, որ մի ժողովրդի միայն տասը տոկոսը գրել, կարդալ գիտի, իննսուն տոկոսը չգիտի: Մարդ պետք է ամաչի սրանից», - ասում էր Աթաթուրքը[11]:

Քեմալը 1932թ. հիմնադրեց թուրքական լեզվաբանական ընկերությունը, որի նպատակն էր մաքրել լեզուն օտար փոխառություններից, այդ թվում նաև եվրոպական տերմիններից[12]: «Լեզվաբանական ընկերությունը, որպես մի լավ ու արդյունավետ գործ, դուրս բերեց տարբեր գիտությունների վերաբերյալ թուրքերեն տերմինները և այդ կերպ մեր լեզուն փրկեց օտար լեզուների ազդեցությունից», -նշում էր Աթաթուրքը[13]: Անցում կատարելով լատինատառ այբուբենին զգալիորեն նվազեց անգրագիտության մակարդակը, ինչպես նաև ավելի հեշտ դարձավ եվրոպական լեզուների; հետևաբար նաև մշակույթի յուրացումը: Հերթական բարեփոխումը, որը կարևոր երևույթ էր, 1934 թվականին ընդունված ազգանվան մասին օրենքն էր[14]:

Չնայած Քեմալը մշտապես ընդգծում էր արևմտականացման կարևորությունը, այնուհանդերձ նրա վարած քաղաքականության մեջ հստակ երևում էր թուրք ազգայնականության արտահայտումը: «Այժմ

---

[11] Karal E., Atatürk'ten düşünceler, Ankara, s. 82-83.

[12] Türk dil kurumu, Tarihçe
http://www.tdk.gov.tr/index.php?option=com_content&view=article&id=77

[13] Karal E., նշվ. աշխ., էջ 84:

[14] Soyadi kanunu
http://www.nvi.gov.tr/Files/File/Mevzuat/Nufus_Mevzuati/Kanun/pdf/soyadi_kanunu.pdf

կարող եք վստահ լինել, որ աշխարհի երեսին ապրած և ապրող ազգերի շարքում հոգեպես ժողովրդավար ծնված միակ ազգը թուրքերն են»,- ասում էր Աթաթուրքը[15]: Այստեղ պետք է հիշել Աթաթուրքի հայտնի արտահայտությունը. «Ինչ երջանկություն է թուրք լինելը»: Հետագայում այն բազմիցս հնչել է և հնչում է նաև այսօր ցույց տալու համար ազգի միասնությունը և միմյանց հետ սերտ կապը[16]: Հենց այս ժամանակաշրջանում է սահմանադրության մեջ ամրագրվում «Թուրքիայի Հանրապետության բոլոր քաղաքացիները թուրքեր են» սկզբունքը[17], ինչպես նաև արգելվում ոչ թուրքական ազգանունների կիրառումը:

Այսպիսով Աթաթուրքի շնորհիվ Թուրքիայում տեղի ունեցած մի շարք փոփոխությունները մեծ առաջընթաց էին երկրի արդիականացման ու զարգացման համար մղված պայքարում: Սակայն պետք է նշել, որ այս բարեփոխումները, ըստ էության, շոշափեցին գլխավորապես ազգային բուրժուազիային, նոր մտավորականության և բյուրոկրատիայի շրջանակներին: Հասարակ ժողովրդի շրջանում դեռևս ուժեղ էր ավանդույթների ազդեցությունը: Բացի այդ, պետք է արդարացիորեն նշել, որ Թուրքիան հանրապետության առաջին տարիներին հետամնաց երկիր էր, և եթե չլինեին Աթաթուրքի իրականացրած բարեփոխումները, դժվար թե ժամանակակից Թուրքիան հասներ զարգացման ներկայիս մակարդակին: Ինչպես իրավացիորեն փաստում է գերմանացի թուրքագետ Կարլ Գրոթհուզենը, «ժամանակակից Թուրքիան, անկասկած, հանդիսանում է Քեմալ Աթաթուրքի ստեղծագործությունը»[18]: Թուրք նշանավոր հետազոտող, գրող Օրհան Քոլօղլուն նշում է, որ եթե Եվրոպայում «ռենեսանսի մարդու» ասպարեզ գալով սկսվեց մի ժամանակաշրջան, որը մեծ ազդեցություն թողեց աշխարհի վրա, ապա Թուրքիան

---

[15] Karal E., նշվ. աշխ., էջ 140:

[16] Uluslararası konferans Atatürkçülük ve modern Türkiye, Ankara Üniversitesi siyasal bilgiler fakültesi yayını: No 582, Ankara, 1998, s. 51. http://kitaplar.ankara.edu.tr/dosyalar/pdf/161.pdf

[17] Բաղդասարյան Ս., նշվ. աշխ., էջ 63:

[18] Նույն տեղում, էջ 72:

«հանրապետության մարդու» միջոցով աշխարհում նոր տեղ գրավելով ավարտին էր հասցնելու իր արդիականացումը[19]:

Ըստ էության, Աթաթուրքը կատարեց երկրի արդիականացման համար անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ինդուստրիալիզացիա, ուրբանիզացիա, գրագիտության մակարդակի բարձրացում, կրթության, բարեկեցության համար պայմանների ստեղծում: Աթաթուրքը Թուրքիան դարձրեց «կտրված երկիր», որի հասարակությունը իսլամական էր իր կրոնով, ժառանգությամբ, սովորույթներով և ինստիտուտներով, սակայն այնտեղ կառավարում էր այնպիսի վերնախավ, որի նպատակն էր երկիրը դարձնել ժամանակակից, արևմտյան և այն միավորել Արևմուտքի հետ[20]:

Աթաթուրքից հետո էլ շարունակվեց նրա թողած եվրոպականացման քաղաքական գիծը, թեև նրան հաջորդած իշխանությունները իրենց առջև դնում էին բոլորովին այլ խնդիրներ՝ երկրի արդիականացման հարցը համարելով ոչ առաջնային: Այսպիսով, թուրքական իրականության մեջ ինչպես առնվազն մեկ հարյուրամյակ առաջ, այնպես էլ այսօր շարունակվում է երկու իրարամերժ հոսանքների պայքարը, որոնցից մեկը ձգտում է Ասիա, իսկ մյուսը՝ Եվրոպա: Թուրք հասարակության մեջ չկա միասնական կարծիք դեպի Արևմուտք, թե Արևելք ուղղվելու հարցում և այն պնդումը, թե Թուրքիան կամուրջ է հանդիսանում այդ երկու քաղաքակրթությունների միջև, հենց գալիս է ապացուցելու այդ անջատվածությունը: Այնուհանդերձ, կարևորելով Աթաթուրքի իրականացրած բարեփոխումները, պետք է նշել, որ դրանով Թուրքիայի առջև բացվեց մի երկրորդ դուռ՝ դեպի Արևմուտք, դեպի Եվրոպա՝ արդիականացման հարցը բերելով թուրքական արտաքին քաղաքական օրակարգ, որը հետագայում իր արտահայտությունը գտավ եվրաինտեգրման գործընթացում:

---

[19] Uluslararası konferans Atatürkçülük ve modern Türkiye, s. 64.

[20] Хантингтон С., նշվ. աշխ., էջ 157:

SARGSYAN TATEVIK
(YSU)

ON THE MODERNIZATION OF TURKEY DURING THE REIGN OF ATATURK (1923-1938)

In this article is represented the modernization process in Turkey, which began during government of the first president of the Republic of Turkey - Mustafa Kemal Ataturk. This process brought fundamental changes in many spheres that were very important for development of the country. Ataturk brought the question of moving towards West or East into the Turkish foreign policy agenda. This question continues to be up-to-date in Turkish society nowadays.

ՍԱՖԱՐՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ
(ԱԻ)

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1978 թ. ի վեր անցած 35 տարիների ընթացքում իրականացվող բարեփոխումների և ազատականացման քաղաքականության արդյունքում Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը դարձավ աշխարհի առաջատար տերություններից մեկը: Չնայած այն հանգամանքին, որ ՉԺՀ-ն մի շարք սոցիալտնտեսական ցուցանիշներով դասվում է զարգացող երկրների շարքին, երկրի համընդհանուր ազգային հզորությունը (*ծոնգհը գուոլի*[1]) թույլ է տալիս Չինաստանին միջազգային ասպարեզում ազդեցիկ դեր ստանձնել: Մեր օրերում համաշխարհային գիտական միտքն ինտենսիվորեն զբաղվում է ՉԺՀ-ի հասարակական և քաղաքական կյանքի տարբեր բնագավառների, այդ թվում նաև արտաքին քաղաքականության ուսումնասիրությամբ: Այսպիսի աշխատությունների ծավալն աճել է հատկապես վերջին տասը տարիների ընթացքում:

XX դարի վերջը և XXI դարի սկիզբն առանձնանում է տնտեսության ոլորտում· Չինաստանի ձեռքբերումներով, ինչպես նաև միջազգային ասպարեզում երկրի դերակատարության բարձրացմամբ: ՉԺՀ-ն ոչ միայն արագ մուտք գործեց համաշխարհային տնտեսության համակարգ, այլև հաջողությամբ մրցակցում է աշխարհի զարգացած պետությունների հետ վերջիններիս ավանդական շուկաներում և ազդեցության գոտիներում՝ դրանքով քաղաքական այլընտրանքի հնարավորություն ստեղծելով աշխարհի տարբեր անկյուններում: Այսպիսի տարածաշրջաններից մեկն է աստիճանաբար դառնում նաև Հարավային Կովկասը, որը պատմականորեն եղել է տարբեր ուժային կենտրոնների շահերի բախման հանգույց: Հետևաբար Հարավային

---

[1] Այս եզրը արդի չինական քաղաքագիտական մտքի նորամուծություն է և սկսել է կիրառվել ՉԺՀ գիտական հաստատությունների կողմից 1990-ականներին:

Կովկասում ՉԺՀ-ի՝ որպես մեծ տերության, արտաքին քաղաքականության պատմությունը կարևոր գիտական արժեք է ներկայացնում: Մեր օրերում Հարավային Կովկասում ՉԺՀ-ի քաղաքականության ուսումնասիրությունն արդիական է մնում նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հարավային Կովկասում տեղի ունեցած պատմական փոփոխությունների լույսի ներքո, քանի որ ՉԺՀ-ի հասարակական-քաղաքական համակարգում քաղաքական և տնտեսական բաղադրիչների ուրույն հարաբերակցությունը կամ չինական առանձնահատկություններով սոցիալիզմն ապացուցել է իր կենսունակությունը[2]: ՉԺՀ հարավկովկասյան քաղաքականության ուսումնասիրության կարևորությունն ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ վերջին տարիներին Հարավային Կովկասում տիրող քաղաքական իրավիճակի շրջադարձային փոփոխությունների պայմաններում, աճում է Չինաստանի դերը թե՛ որպես քաղաքական և թե՛ որպես տնտեսական գործընկերոջ[3]: ԽՍՀՄ-ի փլուզումից և Հարավային Կովկասի պետությունների անկախացման ժամանակաշրջանից անցել է ավելի քան 20 տարի, որը բավականաչափ ժամանակահատված է հարաբերությունների անցած ուղին ամփոփելու, դրանց պատմությունը շարադրելու և դինամիկան վերլուծելու համար:

ՉԺՀ-ի և Հարավային Կովկասի պետությունների միջև ձևավորված հարաբերությունները գիտական աշխատանքներում և ուսումնասիրություններում դիտարկվել են տարբեր տեսանկյուններից: Այսպես օրինակ, փորձեր են արվել Հարավային Կովկասում Չինաստանի աշխարհաքաղաքականությունը դիտարկել այսպես

---

[2] Սաֆարյան Մ., Հարավային Կովկասի նկատմամբ Չինաստանի արտաքին քաղաքական ռազմավարության ուսումնասիրության արդիականության մասին, Մերձավոր Արևելք, Ե., 2007, էջ 111-114:

[3] Goble P., China's Growing Political Role in the Caucasus, Eurasia Daily Monitor,Vol. 10, Issue 12, January 23, 2013.
http://www.jamestown.org/programs/edm/single/?tx_ttnews[tt_news]=40355&tx_ttnews[backPid]=685&no_cache=1#.UvdGWs5IQZQ (առկա է համացանցում, ներբեռնվել է՝ 22 սեպտեմբերի, 2013 թ.).

կոչված «քլաստերային» մոտեցման ներքո[4]: Որոշ հոդվածներում ներկայացվել են ՉԺՀ-ի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում[5]:

Գնահատելով նշված աշխատանքների կարևորությունը բարձրացված խնդիրների համատեքստում՝ հարկ ենք համարում նշել, որ ՉԺՀ-ի արտաքին քաղաքականության համապարփակ ուսումնասիրությունը ենթադրում է դրա բոլոր հիմնական միջոցների, այդ թվում՝ դիվանագիտական և հումանիտար բնագավառներում գործունեության շարադրում և վերլուծություն: Պատահական չէ, որ Ա.Վոսկրեսենսկին իր «Չինաստանը և Ռուսաստանը Եվրասիայում[6]» ֆունդամենտալ աշխատության մեջ ներկայացրել է բազմագործոն հավասարակշռության համակարգը, որը թույլ է տալիս Չինաստանի արտաքին հարաբերությունների նկարագիրը շարադրել հանգամանալից և սպառիչ ձևով[7]: Որքանո՞վ է ՉԺՀ-ի կողմից կարևորվել, օրինակ, հարավկովկասյան պետությունների հետ երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հիմքերի ստեղծումը, համագործակցությունը միջազգային ասպարեզում և կազմակերպություններում կամ մշակութային փոխանակումները: ՉԺՀ և Հարավային Կովկասի պետությունների միջև ստորագրված իրավապայմանագրային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդգրկում են հարաբերությունների ողջ սպեկտրը[8],

---

[4] Бабаян Д., Роль и место Южного Кавказа в геополитической повестке Китайской Народной Республики, 21-й Век, № 2, (18), 2011, с. 66-93.

[5] Pipinashvili D., Sino-Russian Geopolitical Interests in Central Asia and South Caucasus, 2011, Bulletin of the Georgian National Academy of Sciences, Vol. 5, № 2, p. 147-148.

[6] Воскресенский А., Китай и Россия в Евразии: Историческая динамика политических взаимовлияний, М., 2004.

[7] Սաֆարյան Մ., Հարավային Կովկասը Չինաստանի արտաքին քաղաքականության մեջ (տեսական մոտեցումներ), Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVII, Ե., 2009, էջ 135-139:

[8] Չինաստան, Երկկողմ հարաբերություններ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, http://www.mfa.am/hy/country-by-country/cn/, (ներբեռնվել է 2014 թ. փետրվարին): Relations between Georgia and

ինչը գալիս է ապացուցելու իրավական դաշտի ուսումնասիրության կարևորությունը դրված խնդրի լուծման հարցում:

Խոսելով նախկին խորհրդային տարածքում ՉԺՀ-ի քաղաքականության վերաբերյալ կատարված աշխատանքերի մասին՝ հարկ է հիշատակել Ռուսաստանի ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտի 2013 թ.-ին հարապարակված «ԱՊՀ և Բալթիայի երկրները Չինաստանի գլոբալ քաղաքականության մեջ» հոդվածների ժողովածուն, որն արժեքավոր է նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ՉԺՀ-ի ընդհանուր հայեցակարգային քաղաքական մոտեցումների և առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից[9]: Որոշ փոքր ձևաչափի հոդվածներում, որոնք հիմնականում լույս են տեսել անգլալեզու աղբյուրներում, արձանագրվել են արժեքավոր դիտարկումներ մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ: Այս առումով հատկանշական է Ռոման Մուզալևսկու հոդվածը, որը վերլուծում է Հարավային Կովկասում ՉԺՀ ներգրավվածության սահմանները և հեռանկարները [10]: Մի շարք այլ աշխատություններում դիտարկվում են ՉԺՀ հարաբերությունները Հարավային Կովկասի առանձին պետությունների հետ[11]:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ինստիտուտի, ինչպես նաև Չինաստանի արդի միջազգային հարաբերությունների

---

the People's Republic of China, Ministry of Foreign Affairs of Georgia, http://www.mfa.gov.ge/index.php?sec_id=381&lang_id=ENG (ներբեռնվել է 2014 թ. փետրվարին).

[9] Страны СНГ и Балтии в глобальной политике Китая, М., 2013.

[10] Muzalevski R., China's Engagement with the South Caucasus: Limitations and Prospects, 2010, Central Asia and Caucasus Analyst, Vol. 12, № 11, 9 June 2010, p. 13-15.

[11] Սարուջյան Ս., Հայաստան և Չինաստան. փաստարկներ հատուկ համագործակցության օգտին, «21-րդ ԴԱՐ», թիվ 5 (45), 2012, էջ 5-22; Габибзаде Э., Азербайджан и Китай: формы, особенности и перспективы развития взаимоотношений, Баку, 2009; Ismailzade F., China's Relations with Azerbaijan, China and Eurasia Forum Quarterly, Vol. 5, № 1, 2007, p. 29-34; Zhou J., Chinese in Georgia, Working Paper, January 2012, Germany.

ակադեմիայի կողմից հրատարակվող պարբերականներում տեղ գտած չին գիտնականների փաստագրական աշխատությունները[12]: Մեր ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում նախկին ԱԳ նախարար Ցիեն Ցիչընի «Տասը պատմություն դիվանագիտական կյանքից» աշխատությունը[13], որտեղ հեղինակը ներկայացնում է մանրամասներ ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ և դրանից հետո ընկած ժամանակաշրջանում արդեն հետխորհրդային տարածքի երկրների հետ միջպետական հարաբերությունների սկզբնավորման պատմությունից: Ուսումնասիրվել է գրքի չինարեն բնագիրը: Տեղեկատվական տեսնակյունից հատկապես մեծ արժեք են ներկայացնում ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնում պահվող փաստաթղթերը, որոնք, մեզ հասանելի տվյալների համաձայն, գիտական աշխատանքում օգտագործվում են առաջին անգամ: Ադրբեջանի և Վրաստանի ԱԳՆ-ների գործավարության համապատասխան տիպի փաստաթղթային բազայի հասանելիության պակասը լրացվում է գոյություն ունեցող աշխատանքներում կատարված դիտարկումների հիման վրա: Համեմատական վերլուծության համար օգտագործվել են նաև դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակի կապակցությամբ ՉԺՀ ԱԳՆ կողմից հրատարակված Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ ՉԺՀ-ի ստորագրված իրավապայմանագրային փաստաթղթերի ժողովածուները[14]:

---

[12] Feng Y., Russia-Georgia Conflict and Beyond, Contempoarary International Relations, Vol. 18, № 5, 2008, Beijing, p. 18-28.

[13] 钱其琛,外交十记, Ցիեն Ց., Ուայ Ցյաո Շի Ցի, Պեյձինգ, 2003, Շի Ցիե Ցիե Շի Չու Բան Շը (Ցիեն Ց., Չինաստանի դիվանագիտության տասը դրվագ, 2003:

[14] 中华人民共和国与亚美尼亚共和国双边关系重要文件汇编，中华人民共和国与阿塞拜疆共和国双边关系重要文件汇编，中华人民共和国与格鲁几吉亚共和国双边关系重要文件汇编，1992–2012，
中华人民共和国外交部欧亚司，世界知识出版社，北京，2012。(Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների կարևոր փաստաթղթերի հավաքածու, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների կարևոր փաստաթղթերի հավաքածու, Չինաստանի Ժողովրդական

Դիտարկվող թեմայի օբյեկտիվ և պատմականորեն ճշգրիտ լուսաբանմանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ կատարված ուսումնասիրություններում ՉԺՀ հարաբերությունները Հարավային Կովկասի երկրների հետ առավելապես նկարագրվել և ուսումնասիրվել են դրանց ընդլայնման և խորացման փուլում, իսկ դրանց սկզբնավորման ժամանակաշրջանը գրեթե չի լուսաբանվել, մինչդեռ այս ժամանակաշրջանի ուսումնասիրությունը կարևոր է այնքանով, որ այստեղ են ձևավորվում հետագա տարիներին հարաբերությունների դինամիկան ու դրանց կայունությունը պայմանավորող որոշ կարևոր քաղաքական բաղադրիչներ, մասնավորապես՝ Թայվանի խնդրի կապակցությամբ Հարավային Կովկասի երկրների դիրքորոշումները: Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը հարաբերությունների նախնական փուլում Հարավային Կովկասի երկրների դիրքորոշումների և վարքագծի դինամիկան ունեցել է որոշակի վայրիվերումներ և ճշգրտումներ, ինչպես օրինակ՝ 1992 թ.-ին Ադրբեջանի վարչապետի առաջին տեղակալ Աբաս Աբասովի՝ Թայվան այցի պարագայում[15], այն դեպքում, երբ Ադրբեջանը 1991-ին ՉԺՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելիս իրավականորեն արձանագրել էր Թայվանի հետ պաշտոնական շփումներից հրաժարվելու իր դիրքորոշումը[16]:

Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների կարևոր փաստաթղթերի հավաքածու, 1992-2012, Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարարության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժանմունք, Միջազգային ինտելեկտուալ միտք հրատարակչություն, Պեկին, 2012 թ.):

[15] Peng Tammy C., Ukraine may sink carrier purchase, 28.08.1992, Taiwan today, http://www.taiwantoday.tw/ct.asp?xItem=75786&CtNode=451 (առկա է համացանցում, ներբեռնվել է 2013 թ. հոկտեմբերի 20-ին).

[16] Совместное коммюнике об установлении дипломатических отношений между Китайской Народной Республикой и Азербайджанской Республикой. 中华人民共和国与阿塞拜疆共和国双边关系重要文件汇编，1992–2012，中华人民共和国外交部欧亚司，北京，2012。Ադրբեջանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների կարևոր փաստաթղթերի հավաքածու 1992-2012, Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտաքին

Հետևաբար, հարաբերությունների սկզբնական փուլի շարադրումը կարևոր է:

Անհրաժեշտ է նշել, որ առկա գիտական գրականության մեջ գերակշռում են աշխարհաքաղաքական ռազմավարության ասպեկտի ուսումնասիրությունները, մինչդեռ Հարավային Կովկասի երկրների հետ ՉԺՀ-ի հարաբերությունների առաջին նախնական փուլում (1991-1997 թթ.) ՉԺՀ-ի քաղաքականության մեջ աշխարհաքաղաքական ռազմավարության հստակ արտահայտված տարրերի վերաբերյալ փաստեր չկան: ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակահատվածում ՉԺՀ արտաքին քաղաքականությունում գործում էր արտաքին քաղաքական հայեցակարգ, որը շեշտադրում էր ՉԺՀ զսպված և զգուշավոր մոտեցումները արտաքին քաղաքականությանը, մինչդեռ դասական աշխարհաքաղաքական ռազմավարությունն իրենից ներկայացնում է աշխարհագրական ծավալման գործընթաց և պարունակում նաև ուժային քաղաքականության որոշակի տարրեր: Այսպես օրինակ՝ ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում ՉԺՀ արտաքին քաղաքականության մեջ գերակշիռ կարևորություն ուներ *«թաո գուանգ յանգ խուի»* (թարգմանաբար՝ սառը դատողությամբ, փոքր քայլերով առաջ շարժվել և ղեկավար դերակատարություն չստանձնել) հայեցակարգային մոտեցումը[17]:

Այսպիսով, չնայած, որ ԽՍՀՄ-ի փլուզումից անցել է ավելի քան 20 տարի, սակայն, ՉԺՀ և Հարավային Կովկասի երկրների հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված գիտական աշխատանքները սակավաթիվ են, իսկ թեման իր բոլոր հարթություններում լիարժեք լուսաբանման և խորը վերլուծության չի ենթարկվել: Այսպիսի աշխատանքներում ուսումնասիրված չեն ՉԺՀ-ի

գործերի նախարարության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժանմունք, Պեկին, 2012, էջ 4:

[17] Ինչպես նշում են Մակաոյի համալսարանի ՉԺՀ արտաքին քաղաքականության հետազոտությամբ զբաղող գիտնականներ Չեն Դինգդինգը և Վանգ Ծիենվեյը ՉԺՀ արտաքին քաղաքականության այս հայեցկարգի գերակշռող ուղղորդող դերը ՉԺՀ արտաքին քաղաքականության մեջ սկսկում է որոշակիորեն փոփոխվել 2010 թ. հետո: Տե՛ս Chen D., Wang J., Lying Low No More? China's New Thinking on Tao Guang Yang Hui Strategy, China: An International Journal 9, 2, Sept. 2011, p. 195-216.

արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումների կիրառումը Հարավային Կովկասի երկրների պարագայում, դրանց բոլոր բաղադրիչների, և գրեթե ընդգրկված չեն չինալեզու աղբյուրներ:

Վերը շարադրվածը թելադրում է Հարավային Կովկասում ՉԺՀ-ի քաղաքականության համապարփակ և մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունը, այդ թվում՝ դրա ձևավորման փուլերը, խնդիրները և առանձնահատկությունները, որոնց և նվիրված է մեր աշխատանքը: Տվյալ աշխատության մեջ բարձրացվում է նաև ՉԺՀ հարավկովկասյան քաղաքականության կառուցվածքային տարրերի վերծանման խնդիրը ինչպես նաև ուրվագծվում Հարավային Կովկասի տեղը և դերը ՉԺՀ քաղաքականության մեջ հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջանում:

Ինչպես հայտնի է, Չինաստանի և Հարավային Կովկասի ժողովուրդների և պետությունների առնչությունների պատմությունը ներառում է տարբեր պատմական ժամանակաշրջաններ: Մետաքսի մեծ ճանապարհի և 17-18-րդ դարերում Հնդկական օվկիանոսում կոմերցիոն համակարգի ձևավորման ժամանակաշրջանում, որը կարելի է պայմանականորեն անվանել հին ժամանակաշրջան, առնչությունները հիմնականում եղել են առևտրական, ինչպես նաև մշակութային բնույթի[18]: ՉԺՀ-ն հասարակական և մշակութային բնույթի առնչություններ է ունեցել նաև Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ վերջիններիս ԽՍՀՄ կազմում գտնվելու ընթացքում. խորհրդային շրջանի կապերը: Ինչպես ցույց են տալիս մեր հետագա ուսումնասիրությունները հին և խորհրդային ժամանակահատվածների առնչությունները բարենպաստ ազդեցություն են ունեցել ԽՍՀՄ-ի

---

[18] Bedrosian R., China and the Chinese According to 5-13th Century Classical Armenian Sources, Armenian Review, Vol. 34, № 1-133, 1981, p. 17-24. http://rbedrosian.com/Downloads/china.pdf (առկա է համացանցում, ներբեռնվել է 2014 թ. փետրվարին). "Кино, человек, время" - Интервью с Рубеном Гини, Журнал "Анив", № 6 (45), http://www.aniv.ru/archive/45/kino-chelovek-vremja-intervju-s-rubenom-gini/ (առկա է համացանցում, ներբեռնվել է 2014 թ. փետրվարին).

փլուզումից հետո Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի հետ ՉԺՀ-ի հարաբերությունների հաստատման և զարգացման վրա[19]:

Մեր ուսումնասիրությունը վերաբերում է հետխորհրդային ժամանակաշրջանին, այսինքն ՉԺՀ և հարավկովկասյան երկրների հարաբերությունների արդի պատմությանը, որն իր հերթին բաժանվում է երեք փուլի:

ԱՊՀ տարածքում ՉԺՀ քաղաքականության ձևավորման պատմության մասին գոյություն ունեցող գրականության մեջ սահմանվել են դրանց փուլերը: Այսպես, Շանհայի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի գիտաշխատող Յան Սյաոյունի Միջին Ասիայի երկրների նկատմամբ ՉԺՀ քաղաքականությունը պայմանականորեն բաժանել է երեք ժամանակաշրջանի, որը Ռուսաստանի ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից 2013 թվականին հրատարակված «ԱՊՀ և Բալթյան երկրները Չինաստանի գլոբալ քաղաքականության մեջ» աշխատության մեջ առաջարկվում է էքստապոլացնել ամբողջ հետխորհրդային տարածքի վրա[20]: Մեր ուսումնասիրությունը ևս հանգում է այս պայմանական բաժանմանը փուլերին, սակայն տալով փոքր-ինչ այլ նկարագրություն և բնութագրություն: Առաջին փուլ՝ 1991-1997 թթ., բարեկամական հարաբերությունների հաստատում և զարգացում, երկրորդ փուլ՝ 1997-2001 թթ., համագործակցության համակողմանի ծավալում և ամրապնդում, երրորդ փուլ՝ 2001-ից ի վեր, տարբերակված համագործակցության զարգացում:

Առաջին փուլում հաստատվում են դիվանագիտական հարաբերությունները, կողմերը ձեռնամուխ են լինում

---

[19] Габибзаде Э., Азербайджан и Китай: формы, особенности и перспективы развития взаимоотношений, Баку, 2009, с. 16. Правительство и народ Китая выступают категорически против регрессивного и уродливого посещения храма Ясукуни Премьер-министром Японии Синдзо Абэ (статья Посла Тянь Чанчуня по поводу посещения храма Ясукуни Премьер-министром Японии Синдзо Абэ), Новое Время, http://www.nv.am/tema-dnya/32599-pravitelstvo-i-narod (առկա է համացանցում, ներբեռնվել է 2014 թ. փետրվարին).

[20] Гузенков Т., Карпов М., Введение: глобализация по китайски или Китай в странах СНГ и Балтии, Страны СНГ и Балтии в глобальной политике Китая, М., 2013, с. 7.

իրավապայմանագրային դաշտի ձևավորմանը, իրականացվում են առաջին բարձրաստիճան այցերը և հաստատվում միջպետական հարաբերությունների սկզբունքները: Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունները ընդունում են ՉԺՀ արտաքին քաղաքական կարևոր հայեցակարգային դրույթի՝ խաղաղ գոյակցության հինգ սկզբունքների հիման վրա հարաբերությունների զարգացման գաղափարը և ճանաչում «մեկ Չինաստանի» սկզբունքը:

Երկրորդ՝ համագործակցության համակողմանի ծավալման և զարգացման փուլին հատկանշական է բոլոր հիմնական ուղղություններով՝ քաղաքական, առևտրատնտեսական, ռազմատեխնիկական, մշակութային, կրթական ու գիտական, երկկողմ գործակցության ընդլայնմանն ուղղված երկուստեք քայլերի և միջոցառումների ձեռարկումը ՉԺՀ-ի և հարավկովկասյան երկրների կառավարությունների կողմից: Այս փուլում ավարտվել է երկկողմ հարաբերությունների հիմքը կազմող իրավապայմանագրային դաշտի ձևավորումը, կատարվել է տնտեսական գործակցության որոշակի ինստիտուցիոնալացում՝ հիմնվել են համատեղ առևտրատնտեսական հանձնաժողովները: Այս փուլի համար հատկանշական է համագործակցության շրջանակների և բովանդակության կայացումը: ՉԺՀ-ի հետ հարաբերությունների զարգացման արդյունքում աղրբեջանա-չինական, հայ-չինական, և վրաց-չինական հարաբերությունները սկսում են կարևոր տեղ զբաղեցնել Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի արտաքին հարաբերությունների կառուցվածքում՝ ակտիվ փոխգործակցության մեջ մտնելով այլ տերությունների հետ հարավկովկասյան երկրների վարած քաղաքականությունում: Արդյունքում ՉԺՀ-ի հետ համակողմանի հարաբերությունների ծավալումը սկսվում է պայմանավորվել ոչ միայն հարաբերությունների զարգացման ներքին տրամաբանությամբ, այլև այլ մեծ տերությունների հետ հարավկովկասյան երկրների հարաբերություններով: Այս իրողությունը կանխանշում է երկկողմ համագործակցության համակողմանի զարգացման քաղաքականությունից անցումը դեպի Չինաստանի հետ համագործակցության առաջնահերթությունների որոշման և դրանց հետևողական հետապնդման գործելակերպին՝ այն հաշվարկով, որ դրանք ներդաշնակորեն միահյուսվեն Հարավային Կովկասի երկրների

կողմից վարվող արտաքին քաղաքական հիմնական կուրսերի հետ և ուղղված լինեն հարաբերությունների կայուն հիմքերի ստեղծմանը:

Երրորդ՝ տարբերակված զարգացման փուլում լիովին դրսևորվում և ձևավորվում է ՉԺՀ կողմից Հարավային Կովկասի երկրների նկատմամբ ինտեգրացված տարածաշրջանային քաղաքականության իրականացումը: Այսպիսի մոտեցման ձևավորումը և կիրառումը ՉԺՀ-ի կողմից պայմանավորված է ոչ միայն Հարավային Կովկասի երեք հանրապետությունների աշխարհագրական դիրքի առանձնահատկություններով և դրանց պատմաքաղաքական զարգացման ընդհանրություններով, այլ նաև ՉԺՀ ազգային շահերին համապատասխան և դրանցից բխող արտաքին քաղաքականության իրականացմամբ[21]: Տարբերակված մոտեցման էությունն է այն, որ յուրաքանչյուր պետության հետ հարաբերությունների զարգացման պարագայում ՉԺՀ-ի կողմից ընտրվում են զարգացման առաջնահերթ բնագավառները և դրանց շուրջ ծավալվող ինտենսիվ փոխանակումների միջոցով ապահովվում փոխգործակցության ակտիվացումը մյուս բնագավառներում ապահովելով հարաբերություններում հավասարակշռության հաստատումը տարածաշրջանային մակարդակում: Ինչպես արդեն նշել ենք, այս մոտեցումը Ա.Վոսկրեսենսկու կողմից սահմանվել է որպես բազմագործոն հավասարակշռության հաստատում:

Այս աշխատության շրջանակներում դիտարկվում է ՉԺՀ-ի և Հարավային Կովկասի հարաբերությունների առաջին փուլը:

ԽՍՀՄ-ի փլուզումը պատմական նախադրյալներ ստեղծեց ՉԺՀ-ի և Հարավային Կովկասի երեք նորանկախ հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի միջև ինքնիշխանության վրա հիմնված միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման համար: Միևնույն ժամանակ, ՉԺՀ հարևան տարածքների քաղաքական կարգավիճակի փոփոխման պատճառով ՉԺՀ արտաքին քաղաքականության առջև առաջացավ տարբեր բնույթի խնդիրների մի ամբողջ սպեկտր, օրինակ՝ ռազմավարական, սահմանազատման, անվտանգության, դիվանագիտական, տնտեսական, ինչպես նաև ժողովրդագրական, մշակութային և այլն: ՉԺՀ-ն ստիպված էր արագ

---

[21] Սաֆարյան Մ., Հարավային Կովկասը Չինաստանի արտաքին..., էջ 139:

մոբիլիզացնել իր հնարավորությունները այս պատմական մարտահրավերին հրատապ արձագանքելու և դիմագրավելու համար:

Այսպես, Խորհրդային Միության փլուզումից հետո Չինաստանը բանակցություններ սկսեց սահմանակից հետխորհրդային պետությունների հետ նոր սահմանազատում իրականացնելու նպատակով, քանի որ ԽՍՀՄ նախկին սահմանների երկայնքով գոյություն ունեին նախկինում լուծում չգտած սահմանազատման բազմաթիվ խնդիրներ[22]:

ՉԺՀ Սինձյան-Ույղուրական Ինքնավար Շրջանում և դրա հարևանությամբ առկա անվտագության, մասնավորապես՝ իսլամական և ազգայնական անջատողականության խնդիրները պայմանավորել են դրանց չեզոքացմանն ուղղված ՉԺՀ ակտիվ գործունեությունը, որը առաջին հերթին իրականացվել է տարածաշրջանի պետությունների հետ փոխշահավետ հարաբերություններ ծավալելու միջոցով՝ կանխելու ռազմավարական տեսանկյունից տարածաշրջանն ի վնաս իր շահերի օգտագործելու հնարավորությունները[23]:

Հարկ է նշել, որ դիվանագիտական շփումների, բարձրաստիճան փոխայցելությունների ու դիվանագիտական առաքելությունների բացման աշխարհագրության և տեմպերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Չինաստանն արագ է արձագանքել նորանկախ պետությունների, այդ թվում՝ Հարավային Կովկասի երկրների, հետ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությանը: Այս օրերին, լինելով ՉԺՀ-ի արտաքին գերատեսչության ղեկավար և մասնակցելով նշված պատմական իրադարձություններին, Ցիեն Ցիչընը գրում է, որ այս ժամանակաշրջանում ժամանակի սղության պատճառով ՉԺՀ-ի դիվանագիտական պրակտիկայում առաջին անգամ սկսեցին կիրառվել ձեռագիր կազմված համատեղ կոմյունիկեներ և

---

[22] Սահմանազատման բանակցությունները վարում էին մի կողմից ՉԺՀ-ն, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: Սահմանազատման խնդիրների լուծման համատեքստում կազմավորվեց Շանհայի հնգյակը, որը հետագայում ընդլայնվելով՝ վերանվանվեց Շանհայի Համագործակցության Կազմակերպություն:

[23] Савкович Е., Экономическая политика Китая в постсоветской Центральной Азии (1992-2012 гг.), Томск, 2012, с. 67.

հայտարարություններ[24]: Պատճառն այն էր, որ ՉԺՀ-ի դիվանագիտության առջև խնդիր էր ծառացել ստեղծել և կառուցել բարենպաստ հարաբերություններ 15 նորանկախ պետությունների հետ, քանի որ այս երկրները ոչ հեռու ապագայում դառնալով ՄԱԿ-ի անդամ (ՈՒԴ-ին այս կարգավիճակն անցել է ԽՍՀՄ-ից համապատասխան պայմանավորվածությունների արդյունքում), իրենց ուրույն դիրքորշումներն էին ձևավորելու զանազան միջազգային խնդիրների, այդ թվում՝ Չինաստանի կենսական շահերը շոշափող հարցերի կապակցությամբ[25]: ՉԺՀ-ի կողմից միջազգային հարաբերությունների համակարգում ՄԱԿ-ի անփոխարինելի դերակատարության շեշտադրումը նույնպես ազեցություն է ունեցել ՉԺՀ վերը ներկայացված վարքագծի վրա: Հաշվի առնելով բոլոր նշված հանգամանքները և կշռադատելով ստեղծված իրավիճակը՝ ՉԺՀ-ն բավականին կարճ ժամանակահատվածում պաշտոնապես ճանաչել է հարավկովկասյան հանրապետությունները և ձեռնամուխ եղել դրանց հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը[26]:

Այստեղ ավելորդ չի նշել նաև, որ ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ՝ 1989 թ.-ին տեղի էին ունեցել Թյանանմենի իրադարձությունները, որից ի վեր անցել էր համեմատաբար փոքր ժամանակահատված, և Չինաստանին հարկավոր էր վճռորոշ քայլերով ձերբազատվել միջազգային

---

[24] 钱其琛, 外交十记. Յինն Յ., Ուայ Յյաո Շի Մի, Պեյձինգ, 2003, Շի Միե Միե Շի Չու Բան Շը (Յինն Յ., Չինաստանի դիվանագիտության տասը դրվագ, 2003, Պեկին, էջ 196:

[25] Արդի դիվանագիտության պատմության մեջ լավ հայտնի է Մակեդոնիայի կողմից Թայվանի ճանաչման դրվագը, երբ 1999-ի հունվարին Թայվանից ներդրումներ ներգրավելու խոստումների դիմաց Մակեդոնիան ճանաչեց Թայվանը, իսկ Չինաստանը դրանից երկու շաբաթ անց ՄԱԿ-ի ԱԽ-ում կիրառեց վետոի իրավունքը նախկին Հարավսլավիայի տարածքում գործող ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի մանդատն ընդլայնելու դեմ: Տե՛ս Nikolic D., Macedonia's "Taiwan Adventure" ends, 6 September, 2005, Institute for War and Peace Reporting, http://iwpr.net/print/report-news/macedonias-taiwan-adventure-ends (առկա է համացանցում, ներբեռնվել է 2014 թ. փետրվարին).

[26] China Entered into Diplomatic Relations with Independent Former Soviet Republics, Ministry of Foreign Affairs of the People's Republic of China, http://www.fmprc.gov.cn/eng/ziliao/3602/3604/t18019.htm (առկա է համացանցում, ներբեռնվել է 2014 թ. փետրվարին).

դիվանագիտական մեկուսացումից, որը սկսել էր արդեն իսկ որոշակի ազդեցություն ունենալ նաև ազատականացման բարեփոխումներով ապահովված տնտեսական աճի վրա[27]: Այս առումով ՉԺՀ-ի ղեկավարության կողմից դեռևս 1954 թ. մշակված բազմաբևեռ աշխարհի հայեցակարգը և Դենգ Սյաոփինգ 1992 թ. հռչակված ռեֆորմների խորացման քաղաքականությունը բարենպաստ քաղաքական ֆոն են ստեղծել միջպետական հարաբերությունները սկզբնավորած առաջին բարձրաստիճան փոխայցելությունների և բանակցությունների ընթացքում ու նպաստել ՉԺՀ-ի գրավչության աճին: Այսպես, ՀՀ ԱԳՆ վերլուծական տեղեկանքներից մեկում նշվում է. «Դենգ Սյաոփինգի կողմից 1992 թ. իրականացված բարեփոխումները Չինաստանը գրավիչ են դարձրել աշխարհի երկրների և, մասնավորապես, ԱՊՀ երկրների համար: Ազատ առևտրի գոտիների ստեղծումը փոփոխել է ՉԺՀ ընկալումը ԱՊՀ, այդ թվում՝ Հարավային Կովկասի երկրների ղեկավար շրջաններում[28]: Դրանք (ազատ առևտրի գոտիները, ճշտումը հեղ.) նպաստում են տնտեսական շահերի նոր համակարգի ստեղծմանը, շուկայական հարաբերությունների զարգացմանը և բարեփոխումների խորացմանը[29]»: Այս հանգամանքը հստակ դրսևորվում է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հարավային Չինաստանի ազատ տնտեսական գոտիների այցելություններից հետո, երբ նրանք հայտարարում են, որ չինական փորձը մեծապես ուսանելի է[30]:

Ինչպես արդեն նշել էինք, Չինաստանը Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերություններ կառուցելիս առաջնորդվել է տարածաշրջանային ինտեգրացված կամ միասնական մոտեցմամբ՝ ջանալով ձևավորվել հավասարաչափ հարաբերություններ Հարավային Կովկասի բոլոր երկրների հետ՝ լրացնելով որևէ ոլորտում այս կամ այն

---

[27] Tyler P., A Great Wall. Six Presidentsand China: An Investigative History, 1999, New York, p. 384.

[28] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, I-ին ցուցակ, գործ հ. 297, էջ 96-97:

[29] Նույն տեղում:

[30] Statement of the President of the Republic of Azerbaijan Heydar Aliyev at the Press Conference in Beijing During His Official Visit to China – March 8, 1994; Heydar Aliyev Heritage, International On-line Library, http://lib.aliyev-heritage.org/en/9733009.html (ներբեռնվել է 2014 թ. փետրվարին).

երկրի հետ գործակցության բացն այլ բնագավառներում: Այսպես օրինակ, հարաբերությունների ձևավորման առաջին փուլում Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ղեկավարների ՉԺՀ պաշտոնական այցերի ընթացքում ստորագրված կոմյունիկեները երկկողմ հարաբերությունների սկզբունքների վերաբերյալ պարունակում են գրեթե միանման դրույթներ (տե՛ս 13): Միաժամանակ, 1996-1997 թթ. ՉԺՀ-ից Հարավային Կովկաս պաշտոնական այցերով ժամանած ՉԺՀ փոխվարչապետ, ԱԳ նախարար Ցիեն Ցիչընգը և ԺՆՀԺ նախագահի տեղակալ Վան Բինցիանն այցելել են հարավկովկասյան բոլոր երեք հանրապետությունները, ընդ որում՝ այցերի նախապատրաստական փուլում նշվել է, որ դրանց տարածաշրջանային բնույթը պայմանավորված է հավասարակշռությունը չխախտելու հանգամանքով:

Հաշվի առնելով, որ 1990-ականների կեսերից, ընթացող տնտեսական բարեփոխումների և ազատականության քաղաքականության լույսի ներքո Չինաստանում սկսվում է ազգային մշակութային արժեքների վերիմաստավորում, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՉԺՀ-ն քաղաքականության կարևորագույն բաղադրիչ է դառնում իր մշակութային արժեքների ներկայացումը արտաքին աշխարհին և, մասնավորապես, դրանց չմիջնորդավորված փոխանցումը հետխորհրդային տարածքի հասարակություններին: Չինաստանն այս պարագայում լուծում է իր երկար տարիներ «պատսպարված» հարուստ մշակույթն արտաքին աշխարհին հասանելի դարձնելու, և դրանով գործընկեր երկրների ժողովուրդներին առավել ընկալելի դառնալու հարցը:

ՉԺՀ-ի վերը բերված քաղաքական մոտեցումները հետագայում իրենց էվոլյուցիոն շարունակությունն է գտնում «խաղաղ վերելքի» և «փափուկ ուժի»[31] քաղաքական հայեցակարգերում, որոնք, մեր կարծիքով, և կազմել են Հարավային Կովկասում ՉԺՀ քաղաքականության հիմքը և Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերությունների երրորդ փուլում իրենց արտացոլումը գտել 2008 թ.-ի Պեկինի Օլիմպիական

---

[31] Kurlanzik J., Charm Offensive: How China's Soft Power is Transforming the World, August 2007, Foreign Policy Research Institute, http://www.fpri.org/enotes/200708.kurlantzick.chinacharmoffensive.html (առկա է համացանցում, ներբեռնվել է 2013 թ. դեկտեմբերին):

խաղերի և 2010 թ.-ի Շանհայի Համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում իրականացված «սպորտային դիվանագիտության»[32] և «ցուցահանդեսային դիվանագիտության»[33] մեջ: Ավելորդ չի լինի նշել, որ չինական դասական փիլիսոփայական գրականության մեջ քաղաքական և աշխարհաքաղաքական ռազմավարության իրականացման գործում զանազան փիլիսոփայական եզրերի և դարձվածքների միջոցով նույնպես կարևորվում է «փափուկ ուժի» գաղափարը (Լաո Ծը, Կոնֆուցիուս, Սյուն Ծը):

Անդրադառնալով Հարավային Կովկասին ՉԺՀ աշխարհաքաղաքական մոտեցմանն անհրաժեշտ է նշել, որ այն առավել ցայտուն կերպով վերծանելու նպատակով արդյունավետ է զուգադրել ՉԺՀ քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում[34] և Հարավային Կովկասի ՉԺՀ քաղաքականության հետ: Այս զուգադրությունն էֆֆեկտիվ է առաջին հերթին այն տեսանկյունից, որ այս երկու տարածաշրջանների պետություններն ունեն ետխորհրդային տարածքի անցումային փուլի երկրներին բնորոշ խնդիրներ, մի շարք տերությունների համար կազմում են մեկ աշխարհաքաղաքական վեկտորի մասեր և այս պատճառով հաճախ ուսումնասիրվում են զուգադրմամբ: Միաժամանակ, Ե. Սավկովիչը գիտությունների դոկտորի աստիճան հայցելու իր ատենախոսության մեջ, որը նվիրված է Կենտրոնական Ասիայում ՉԺՀ քաղաքականությանը, շեշտադրում է Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ՉԺՀ քաղաքականության

---

[32] Zhang Q., Sports Diplomacy: The Chinese Experience and Perspective, The Hague Journal of Diplomacy 8 (2013), Koninklijke Brill NV, Leiden, 2013, p. 211-233.

[33] Yang J., World Expo Diplomacy: A New Starting Polint for China's Diplomacy, 2011, English Edition of Qiushi Journal, Vol. 3, № 1, http://english.qstheory.cn/international/201109/t20110924_112562.htm (առկա է համացանցում, ներբեռնվել է՝ 2013-ի դեկտեմբերին):

[34] Մեր ուսումնասիրության մեջ Կենտրոնական Ասիայի տարածաշրջան եզրը կիրառվում է նախկին ԽՍՀՄ-ի 5 միջինասիական հանրապետությունների նկատմամբ, ինչը հաճախ է հանդիպում չին գիտնականների աշխատանքներում:

միասնական կամ «համալիր»[35] բնույթը, որը, ինչպես նշել էին վերևում, մեր կարծիքով իրականացվել է նաև Հարավային Կովկասի դեպքում:

Կենտրոնական Ասիան և Հարավային Կովկասը մաս են կազմում ՉԺՀ աշխարհաքաղաքական ռազմավարության այն վեկտորի, որը տարածվում է Կենտրոնական Եվրասիայի տնտեսական ենթակառուցվածքների հնարավոր միաձուլման ուղիների երկայնքով[36]: Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նկատմամբ ՉԺՀ քաղաքականության տարբերությունը և համագործակցության ողջ ներուժը սահմանվում է այնպիսի գործոններով ինչպիսիք են աշխահրագրական դիրքը և ընդհանուր սահմանները, առևտրատնտեսական ներուժը, տարածաշրջանային պետությունների քանակական գործոնը, բնական հանածոների պաշարները, բնակչության թվաքանակի և էթնոմշակութային գործոնները: Անգամ էներգակիրների պաշարների և դրանց փոխադրման ուղիների տեսանկյունից Կենտրոնական Ասիան ՉԺՀ-ի համար անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունի քան Հարավային Կովկասը: Այս մասին մանրամասն տվյալներ են բերվել Չինաստանի Սինոպեկ ընկերության փորձագետ Ճանգ Յինգյունի աշխատության մեջ[37]: Շուկայական ներուժի տեսանկյունից Կենտրոնական Ասիայի առավելությունը Չինաստանի համար առավել քան ակներև է: Բավական է միայն նշել, որ ՉԺՀ առևտրաշրջանառության կառուցվածքում 2012 թ., որը ՉԺՀ-ի հետ առևտրաշրջանառության ծավալներով անցած 20 տարիների ընթացքում ամենամեծն է եղել, Կենտրոնական Ասիայի երկրների հետ

---

[35] Савкович Е., Политика Китая в Центральной Азии (1992-2012 гг.), Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, Томск, 2013.

[36] Սաֆարյան Մ., Հայ-չինական հարաբերությունները նոր պատմական իրողությունների ներքո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXII, Ե., 2003, էջ 130:

[37] 张清云, 中亚-阿塞拜疆地区油气资源及合作对策, 《石油实验地质》2010年第2期, 中国石化发展计划, 北京 (Ճանգ Յինգյուն, Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի նավթի և գազի պաշարները և համագործակցության քաղաքականությունը, «Վառելիքի երկրաբանական հետազոտություն», 2010 թ. հ. 2, Չինաստանի նավթաքիմիական զարգացման վարչություն, Սինոպեկ ընկերություն), http://euroasia.cass.cn/news/405806.htm, (առկա է համացանցում, ներբեռնվել է՝ 2013-ի դեկտեմբերին):

առևտրաշրջանառության ծավալը ՉԺՀ արտաքին առևտրի կառուցվածքում կազմել է 1,08% իսկ Հարավային Կովկասի երկրներինը՝ 0,06%[38]:

Այսպիսով հանրագումարի բերելով վերը շարադրվածը, գտնում ենք, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Չինաստանն ակտիվ քայլեր է ձեռնարկել Հարավային Կովկասի երկրների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և քաղաքական երկխոսություն ծավալելու ուղղությամբ: հարավկովկասյան տարածաշրջանի հանդեպ ՉԺՀ-ի հետաքրքրությունը 1991-1997 թթ. չի ստացել հստակ աշխարհաքաղաքական ուղղվածություն և հիմնականում պայմանավորված է եղել Կենտրոնական Ասիայում ՉԺՀ-ի կենսական շահերին առնչություններով: Չինաստանը քայլեր է ձեռնարկել իր կենսական շահերը շոշափող խնդիրների, մասնավորապես Թայվանյան խնդրի կապակցությամբ հարավկովկասյան երկրների աջակցություն ստանալու և այն իրավականորեն ամրագրելու ուղղությամբ: Հարաբերությունների առաջին փուլում սկսել է ձևավորվել ՉԺՀ ինտեգրացված քաղաքականությունը Հարավային Կովկասի երկրների նկատմամբ, որը հետագայում զարգացում է ստացել երկրորդ և երրորդ փուլերում: Չինաստանի ընդհանուր մոտեցումն Հարավային Կովկասին ուղղված է եղել տարածաշրջանում առկա նուրբ հավասարակշռության պահպանման ապահովմանը, քանի որ այս հանգամանքը բխում է Չինաստանի երկարաժամկետ շահերից: Նպատակ ունենք ուսումնասիրելու 1997 թ.-ից հետո ընկած ժամանակաշրջանում Հարավային Կովկասում ՉԺՀ-ի քաղաքականության մեջ աշխարհաքաղաքականության տարրերի առաջացումը Հարավային Կովկասի երկրների հետ ՉԺՀ առևտրատնտեսական կապերն ուսումնասիրելով, որը, սակայն, առանձին շարադրանք և վերլուծություն է պահանջում:

---

[38] China Statistical Yearbook 2012, National Bureau of Statistics of China, http://www.stats.gov.cn/tjsj/ndsj/2012/indexeh.htm

SAFARYAN MNATSAKAN
(IOS)

THE FORMATION OF THE POLICY OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA IN THE SOUTH CAUCASUS AFTER THE BREAK-UP OF THE USSR

The article is an enquiry into the contemporary history of relations of the People's Republic of China with South Caucasian states and the formation of PRC's policy in the region after the break-up of the USSR. It dwells on the main constituents of the policy of the People's Republic of China in the South Caucasus, and among them political, geopolitical, economic, and cultural factors. It shows how China's "soft power" diplomacy is realized as the main tool of PRC's policy in the states of South Caucasus and reveals complex, balanced policy as the main characteristic feature of China's approach to the region.

The research stresses the scientific importance of the dynamic change in China's regional policy, defining the three periods (1991-1997, 1998-2001, 2002-2012) in the time span analyzed. The article addresses the content of the first period, laying special importance on the international dimesion of the diplomatic constituent.

Thus, South Caucasus is identified as a regional unit in China's foreign policy, to which an integrated approach has been formed in the course of the development of bilateral relations with the countries of the region.

ՍՈՂՈՄՈՆՑԱՆ ՀԱՑԿ
(ԱՀ)

ԻՐԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՑՈՒՆՆԵՐԸ ՆԱՎԹԱՐԴՑՈՒՆԱԲԵՐՈՒԹՑԱՆ ԱՋԳԱՑՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԻ ԺԱՄԱՆԱԿ (1950-1953 ԹԹ.)

20-րդ դարի 50-ական թվականների սկզբին Մեծ Բրիտանիան շարունակում էր գերիշխող դիրք գրավել Իրանում, ինչպես նաև միջամտություն էր ցուցաբերում երկրի կառավարման ներքին գործերին: Մեծ Բրիտանիայի ձեռքին էր գտնվում երկրի նավթարդյունաբերությունը, որն Իրանի հիմնական հարստությունն էր: Անգլո-իրանական նավթային ընկերությունը (ԱԻՆԸ) շարունակում էր շահագործել իրանցի բանվորներին չնչին աշխատավարձով: ԱԻՆԸ-ում աշխատող իրանցի բանվորը մի քանի անգամ ավելի քիչ էր վարձատրվում, քան բրիտանացի աշխատողները: Տնտեսական վիճակը գնալով վատթարանում էր, իսկ գործազրկությունը մեծ թվերի էր հասնում: 1950 թ. միայն մայրաքաղաք Թեհրանում գործազուրկների թիվը հասնում էր 70 հազարի, իսկ երկրում ընդհանուր թիվը հաշվվում էր 500.000 մարդ[1]:

Ստեղծված ծանր պայմանների հետևանքով երկրում դժգոհության ալիք էր բարձրանում: Իրանի տարբեր շրջաններում սկսվում էր բանվորական գործադուլներ: Միևնույն ժամանակ անգլիական նավթային ընկերությունը ձգտում էր առավել արտոնությունների, որն ավելի էր սրում Իրանի ֆինանսատնտեսական իրավիճակը: Երկրորդ աշխարհամարտից հետո Անգլիայում և արևմտյան մյուս երկրներում նավթի պահանջարկը մեծացել էր, որը կապված էր ինտենսիվ ռազմականացման քաղաքականության անցման հետ և Իրանում

---

[1] Башкиров А., Экспансия английских и американских империалистов в Иране, Госполитиздат, 1954, с. 167.

նավթի արտադրության քանակը 1941 թ. 6,6 մլն. տոննայի համեմատ բարձրացվեց և 1950 թ. այն հասցվեց 31,75 մլն. տոննայի[2]:

Անգլիայում վառելանյութի պահանջարկը գնալով մեծանում էր և ԱԻՆԸ-ի կողմից նավթի արդյունահանման քանակի ավելացումն էլ չէր կարող կանխարգելել Անգլիայում վառելիքի ճգնաժամը: 1951 թ. հունվարի 2-ին Անգլիայի վարչապետ Կլիմենթ Էթլին շտապ խորհրդակցություն է հրավիրում կապված նավթային ճգնաժամի հետ և օրակարգում դնում երկրում ջեռուցման նպատակով էլեկտրաէներգիայի օգտագործման արգելման հարցը[3]:

Ստեղծված պայմաններում բրիտանական կառավարությունը չէր կարող հրաժարվել իրանական նավթի հանդեպ ունեցած իր մենաշնորհից և պիտի դիմեր ցանկացած քայլի՝ պահպանելու ԱԻՆԸ-ն իր ձեռքում: Միևնույն ժամանակ Իրանում անգլիացիներն ամեն կերպ ձգտում էին հարավիրանական նավթի վերաբերյալ «հավելյալ պայմանագրի» ստորագրմանը[4]:

1950 թ. վերջերին և 1951 թ. սկզբներին երկրում ծավալված ժողովրդական շարժումը ոչ միայն վերոնշյալ համաձայնագրի ստորագրման դեմ էր հանդես գալիս, այլ նաև պահանջում էր չեղյալ հայտարարել 1933 թ. Իրանի և բրիտանական կառավարության միջև կնքված մենաշնորհային պայմանագիրը, ինչպես նաև հանդես էին գալիս Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման պահանջով[5]: 1951 թ. հունվար-փետրվար ամիսներին երկրի տարբեր անկյուններում՝ Թեհրանում, Ղոմում, Ռեշթում, Համադանում և այլուր տեղի ունեցան զանգվածային ցույցեր: Երկրում ցույցերն ու հացադուլները գնալով զանգվածային և երկարատև բնույթ էին կրում:

Իրանում նավթի ազգայնացման շարժումը իրենց ձեռքը վերցրին 1949 թ. ձևավորված ազգային բուրժուազիայի շահերը ներկայացնող «Ազգային ճակատը», որը ղեկավարում էր դոկտոր Մոհամմադ Մոսադեղ օս-Սալթանեն[6]: Մոսադեղին հաջողվեց կարճ ժամանակում

---

[2] Стамболцян А., Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана 1951-1953 гг., Е., 1984, с. 21.

[3] "Правда", 04.01.1951.

[4] Иванов М., Новейшая история Ирана, М., 1952, с. 432.

[5] Նույն տեղում:

[6] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2006, էջ 656:

մեծ հեղինակություն ձեռք բերել ժողովրդի և բարձր հոգևորականների շրջանում: Նրան էր հարում Իրանում բարձր հեղինակություն ունեցող հոգևորական Աբուլ Ղասեմ Քաշանին: Վերջինս մեծ ազդեցություն ուներ Թեհրանում և երկրի շատ շրջաններում: Երկրում սկսված ազատագրական շարժման մեջ էին գտնվում իրանական բանվոր դասակարգը, ուսանողները, գյուղացիները, քաղաքային մանր բուրժուազիան: Ցուցարարների պահանջներից էր նաև ԱՄՆ-ի հետ բոլոր տեսակի մենաշնորհային պայմանագրերից հրաժարումը:

1950 թ. ամռանը իշխանության գլուխ անցած Ալի Ռազմարայի կառավարության և Մոսադեղի ղեկավարած «Ազգային ճակատի» միջև սուր պայքար էր գնում անգլիական կառավարության հետ «լրացուցիչ համաձայնագրի» կնքման հարցի շուրջ[7]: Ռազմարայի կառավարությունը կողմ էր հավելյալ պայմանագրի կնքմանը, համարելով այն ելք ստեղծված ճգնաժամից: Նա գիտակցում էր, որ Իրանում նավթի ազգայնացման դեպքում պետությունը ստիպված պիտի լինի փոխհատուցում վճարել ԱԻՆԸ-ին, որը կազմում էր մինչև 500 միլիոն ֆունտ ստեռլինգ և բացի այդ նա վստահ էր, որ Իրանն ինքնուրույն չի կարող վաճառել իր սեփական նավթը, քանզի չունի ոչ համապատասխան մասնագետներ և ոչ էլ փոխադրման միջոցներ, որով պետք է նավթն արտահանվեր միջազգային շուկա[8]:

1951 թ. մարտի սկզբներին իրանական մեջլիսում սկսվում են բուռն քննարկումներ ուղղված Անգլիայի արտգործնախարարի տեղակալ Դեյվիսի արած հայտարարությանը, որում ասվում էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը չի կարող անտարբեր լինել Իրանում իր շահերի նկատմամբ և փաստացիորեն պահանջել էր ճանաչել իրանական նավթի նկատմամբ անգլիական իրավունքը[9]:

Մեջլիսի պատգամավորների մեծամասնությունը արտահայտվում էին նավթի ազգայնացման օգտին[10]: Ռազմարայի վարած քաղաքականությունը շարունակում էր ժծգոհության ալիք բարձրացնել:

---

[7] Բաշկիրով Ա, Անգլիական և ամերիկյան իմպերիալիստների էքսպանսիան Իրանում, Հայպետհրատ, 1954, էջ 252:

[8] Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 657:

[9] "Правда", 04.04.1951.

[10] Նույն տեղում:

Քաշանին բոլոր հայրենասեր քաղաքացիներին և անկեղծ մահմեդականներին կոչ էր անում պայքարել իսլամի թշնամիների դեմ: «Ֆեդայան-ե էսլամ» (իսլամի անձնազոհ մարտիկներ) կազմակերպության անդամներից 26-ամյա մի հյուսն 1951 թ. մարտի 7-ին Թեհրանի կենտրոնական մզկիթում սպանում է Ռազմարային, որին նրանք տվել էին «Բրիտանիայի պնակալեզ» մականունը[11]: Ճիշտ է, Ռազմարան բրիտանամետ քաղաքական գործիչ էր, և դա առաջացնում էր հոգևորական խավի դժգոհությունը, որոնք իրենց հերթին այն սերմանում էին ժողովրդի շրջանում: Չնայած ակնհայտ էր, թե ովքեր էին կանգնած Ռազմարայի սպանության թիկունքում, բայց այնուամենայնիվ խորհրդային հեղինակները սպանության մեջ մեղադրում էին ամերիկյան լրտեսներին: Դա իհարկե կարելի է վերագրել ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև մրցակցությանը:

Իրանում ներքաղաքական իրավիճակը գնալով թեժանում էր, և միևնույն ժամանակ Թեհրանում Անգլիայի դեսպան Ֆրենսիս Շեփարդը շարունակում էր իր կառավարության անունից սպառնալիքների տարափ տեղալ իրանական կառավարությանը և անընդհատ շեշտում, որ անգլիական լեյբորիստական կառավարությունը «չի հանդուրժի Անգլո-իրանական նավթային ընկերության դուրս մղումն Իրանից[12]»: Դեսպան Շեփարդի սպառնալիքներն արդյունք չտվեցին: Իրանական վերնախավն ու ժողովուրդն անդրդվելի էին և տեղի չէին տալիս անգլիական ոչ մի սպառնալիքին:

Ռազմարայի սպանությունից մի քանի օր անց Իրանի շահը նոր վարչապետ է նշանակում հմուտ քաղաքագետ Հուսեյն Ալային, որը նավթի ազգայնացմանը զուգընթաց գտնում էր, որ նավթի գործարանները և դրա արտահանումը պետք է գտնվի օտարազգի մասնագետների հսկողության տակ[13]: Մարտի 12-ին իրանական մեջլիսը 96 ներկա գտնվող պատգամավորներից 68 կողմ քվեարկությամբ հաստատում է Հուսեյն Ալայի նշանակումը

---

[11] Abrahamian E., Iran Between Two Revolutions, Princeton, 1982, p. 265-266.

[12] "Правда", 11.03.1951.

[13] Փահլավի Մոհամմադ Ռեզա, Առաքելություն հայրենիքիս համար, Թեհրան, 1973, էջ 181:

վարչապետի պաշտոնում[14]: 1951 թ. մարտի 15-ին մեջլիսի և մարտի 20-ին սենատի կողմից հաստատվեց Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման մասին բանաձևը[15]: Նավթարդյունաբերության ազգայնացման փորձի պատճառով Անգլիայի ճնշումն Իրանի վրա էլ ավելի ուժեղացավ: Անգլիան անցավ իր հին ռազմավարությանը դիվանագիտական ճնշման հետ մեկտեղ ուժեղանում էին ռազմական սպառնալիքները: 1951 թ. մարտին "Правда"-ն հղում տալով «Յունայթիդ պրես» լրատվական գործակալությանը հայտարարում էր, որ Անգլիայի զինված ուժերի որոշմամբ Պարսից ծոց էր ուղարկվել անգլիական 4 կրեյսեր, 12 ականակիր և այլ տեսակի ռազմանավեր, որոնք Պարսից ծոցում արդեն գտնվող ռազմանավերի հետ կազմելու էին 40 ռազմական միավոր[16]: Անգլիական կառավարությունը մտադրվել էր Իրանի ափերին գտնվող իր ռազմանավերի քանակը հասցնել մինչև 100 ռազմական միավորի[17]: Ռազմանավերի և զորքի տեղակայումը անգլիական կառավարությունը փաստորեն փորձում էր քողարկել «անգլիացիների կյանքին սպառնացող» վտանգից զերծ պահելու միտումով, սակայն իրականում ուղղված էր իրանական կառավարության դեմ և նպատակ էր հետապնդում պաշտպանելու ԱԻՆԸ-ի շահերը:

Բրիտանական կառավարությունը սկսում է շահարկել մեկ այլ խաղաթուղթ: Իրանական «Շահեդ» թերթին վկայակոչելով՝ խորհրդային "Известия"-ն գրում էր, որ ԱԻՆԸ-ի գործակալները սկսում են զենք բաժանել Խուզիսթանի շրջանում բնակվող ցեղերին և մասնավորապես բախթիարական ցեղերին, ապստամբություն բարձրացնելու նպատակով[18]: Գործակալները ցեղապետերին համոզում էին, որ հենց իրենք (ցեղապետերը) պետք է շահույթ ստանան Խուզիսթանի շրջանի նավթահորերից ստացված նավթի եկամուտներից: Անգլիական գործակալությունը մեծ ազդեցություն ուներ հարավային ցեղերի առաջնորդների վրա և նրանց զինելով՝ ակնկալում էր, որ ցեղերը

---

[14] "Правда", 13.03.1951.

[15] Башкиров А., նշվ. աշխ., էջ 190:

[16] "Правда", 31.03.1951.

[17] Նույն տեղում:

[18] "Известия", 11.04.1951.

ճնշում կգործադրեն իրանական ղեկավարության վրա և այդպիսով կխոչընդոտեն նավթարդյունաբերության ազգայնացման հարցին:

1951 թ. ապրիլին ԱԻՆԸ-ի գործարաններում աշխատող բանվորական գործադուլները ավելի հուժկու բնույթ են ստանում և սկսվում են բախումներ տեղական ոստիկանության և ցուցարարների միջև: Ապրիլի 12-ին Աբադանի կենտրոնում 30.000 ցուցարարների և ոստիկանության միջև բախումների հետևանքով սպանվեց 2 բրիտանացի[19]: Երկրում մտցվեց ռազմական դրություն: Բրիտանական կառավարությունը դիմում է բացահայտ սպառնալիքի: 1951 թ. ապրիլի 27-ին Իրանում դեսպան Շեփարդը մամլո ասուլիսի ժամանակ օտարերկրյա լրագրողներին (ոչ մի իրանցի լրագրող հրավիրված չի եղել) հայտարարեց, որ. 1933 թ. Անգլո-իրանական պայմանագրի հետ կապված չի կարող միակողմանի որոշում ընդունվել և որ դա հղի է շատ լուրջ հետևանքներով[20]: 1951 թ. ապրիլի 26-ին իրանական մեջլիսը որոշում է ընդունում մեջլիսի, սենատի և պառլամենտի մի քանի անդամներից կազմված հանձնախումբ ստեղծել, որը երեք ամսվա ընթացքում պետք է կյանքի կոչեր մեջլիսի և սենատի ընդունած նավթարդյունաբերության ազգայնացման մասին օրենքը և կասեցներ Իրանում նախկին Անգլո-իրանական նավթային ընկերության գործունեությունը[21]: Մինչ այդ դեսպան Շեփարդի և վարչապետ Հուսեյն Ալայի միջև տեղի ունեցավ առանձնազրույց, իսկ հաջորդ օրը՝ ապրիլի 27-ին, Հուսեյն Ալան հրաժարական տվեց[22]: 1951 թ. ապրիլի 29-ին ձայների 29 կողմ, 6 դեմ, 2 ձեռնպահ քվեարկությամբ մեջլիսն ու սենատը առաջ քաշեցին դոկտոր Մոսադեղի թեկնածությունը վարչապետի պաշտոնի համար, իսկ ապրիլի 30-ին թեկնածությունը հաստատվեց շահի կողմից և Մոսադեղին հանձնարարվեց ձևավորել կառավարություն[23]:

1951 թ. մայիսի 6-ին իրանական մեջլիսում 99 պատգամավորներից 97-ը կողմ քվեարկեցին ի վստահություն դոկտոր Մոսադեղի

---

[19] "Известия", 15.04.1951.

[20] "Известия", 29.04.1951.

[21] Նույն տեղում:

[22] Նույն տեղում:

[23] "Известия", 01.05.1951.

կառավարության: Մեջլիսի պատգամավոր Ալի Շուշթարին իր ելույթում հայտարարեց, որ կառավարության նավթարդյունաբերության ազգայնացման որոշման մեջ չկա ոչ մի հիշատակում Բահրեյնի վերաբերյալ: Նա ասաց, որ Բահրեյնի կղզիները Իրանի մի մասն են և ըստ այդմ այդ կղզիների նավթարդյունաբերությունը նույնպես պետք է ազգայնացվի[24]: Մոսադեղի իշխանության գալը անգլիական շրջանակներում հուսահատության ալիք բարձրացրեց: 1951 թ. մայիսի 7-ին բրիտանական the "The Time magazine"ամսագիրը գրում էր. «Իրանում փոխզիջման վերջին հույսը մարում է: Երիտասարդ շահի օգնությամբ խորաթափանց Հուսեյն Ալան փորձում է դանդաղեցնել նավթարդյունաբերության ազգայնացման գործընթացը, սակայն Ազգային ճակատը դուրս մղեց Ալային և փաստացի ազգայնացրեց նավթը[25]»: 1951 թ. "New York Times"-ի մայիսի 20-ի համարում նշվում էր, որ Մեծ Բրիտանիան զգուշացրել է Իրանին, որ նավթի խնդրի առանց բանակցությունների լուծումը կարող է ունենալ «ամենալուրջ հետևանքները» և առաջարկում էր բանակցությունների համար առաքելություն ուղարկել Թեհրան[26]:

Նավթի ազգայնացման համար մղված պայքարում ԱՄՆ-ն սկզբնական շրջանում պաշտպանում էր Իրանի պահանջները ԱԻՆԸ-ի նկատմամբ և Իրանում ազգայնացման օրենքի ընդունումից հետո նախագահ Հարրի Թրումենը հավանություն տվեց Ազգային անվտանգության խորհրդի հայտարարությանը՝ խնդիրը շուտափույթ լուծելու համար օգտագործել ԱՄՆ-ի ազդեցությունը: ԱՄՆ-ը կոչ էր անում Մեծ Բրիտանիայի կառավարությանը հրաժարվել Իրանի նկատմամբ ռազմական գործողություններից՝ մտավախություն ունենալով, որ այդ երկրում կուժեղացնի հակաարևմտյան տրամադրությունները[27]: ԱՄՆ-ը Մոսադեղի կառավարությանը

---

[24] "Известия", 08.05. 1951.

[25] Iran: Expropriation, "The Time magazine", 07.05.1951, http://www.time.com/time/magazine/article/0,9171,856756,00html#ixzz2IM9qLoVd

[26] Clifton Daniel, British Warn Iran of Serious Result if She Seizes Oil, "New York Times", 20.05.1951, partners.nytimes.com/library/word/mideast/052051iran-britain.html

[27] Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 659:

որոշակի աջակցություն էր ցուցաբերում, պատճառաբանելով, որ Իրանում վարչապետը պայքարում է կոմունիզմի դեմ[28]:

Բրիտանական կառավարությունը տեսնելով Մոսադեղի կառավարության հետ երկխոսության անարդյունավետությունը՝ դիմում է հետագա քայլերի: Անգլիայի արտգործնախարար Հերբերթ Մորիսոնն իր ելույթում հայտարարում է, որ Անգլիան մտադիր է դիմել Միջազգային դատարան, խնդրանքով՝ ձեռնարկել ժամանակավոր միջոցներ, պաշտպանելու իր իրավունքներն Իրանում, մինչ նավթի վեճի շուրջ որոշման կայացումը[29]: Իր հայտարարության ժամանակ Մորիսոնը սպառնալի տոնով հայտնում է, որ եթե իրանական կառավարությունը չկարողանա «կարգ ու կանոն» ապահովել, ապա անգլիական կառավարությունը իր պարտքը կհամարի ապահովել անգլիացի հպատակների կյանքի պաշտպանությունը: Նույն օրերին "Известия" թերթը հղում տալով «Էթելաաթ»-ին նշում էր, որ հայտարարություն էր տեղադրվել այն մասին, որ Բահրեյնի կղզիներում մեծ թվով անգլիական զորքեր, ռազմական ինքնաթիռներ են տեղակայված[30]: 1951 թ. հուլիսի 5-ին Հաագայի միջազգային դատարանը անգլոնպաստ որոշում է կայացնում, որով պահանջվում է, որ իրանական կառավարությունը միջոցներ չձեռնարկի, որը կարող է խոչընդոտել նավթահանման աշխատանքներին և աշխատանքները պետք է իրականացվեն այն մակարդակով, որն իրականացվել էր մինչ 1951 թ. մայիսի 1-ը[31]:

Ակնհայտ է, որ Միջազգային դատարանը այլ կերպ չէր էլ վարվի, քանզի Մեծ Բրիտանիան Իրան չէր: Այն բավական հզոր պետություն էր և մեծ ազդեցություն ուներ Միջազգային դատարանի վրա: Ճիշտ է, ԱՄՆ-ը հետ էր պահում Մեծ Բրիտանիային, սակայն նրա շահերից չէր բխում նավթի ազգայնացման գաղափարը, որը կզրկեր իրանական նավթին տիրելու իր փափագից, այդ իսկ պատճառով այդ հարցում

---

[28] Իսկանդարյան Գ., Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960 թվականներին, Ե., 2011, էջ 87:

[29] "Известия", 21.06.1951.

[30] "Известия", 15.06.1951.

[31] Башкиров А., նշվ. աշխ., էջ 193:

աջակցում էր բրիտանական կառավարությանը, որպեսզի Միջազգային դատարանում վեճը լուծում ստանա հօգուտ Բրիտանիայի:

Ի պատասխան Միջազգային դատարանի որոշմանը, Իրանի արտգործնախարար Բաղեր Քազեմին նամակ հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, իսկ նամակի մեկ պատճենն էլ ուղարկվում է Հաագայի Միջազգային դատարան, որում մասնավորապես ասվում էր, որ անգլիական կառավարությունը ոչ մի իրավական հիմք չուներ դիմելու Հաագայի Միջազգային դատարան և այդ դատարանն էլ իրավունք չուներ ընդունելու Անգլիայի բողոքը[32]:

Իր հերթին իրանական նորաստեղծ կառավարությունը չէր էլ կասկածում, որ Միջազգային դատարանը նման վճիռ կկայացներ, սակայն Մոսադեղի քաղաքականությունը նպատակասլաց էր և անզիջող, այդ իսկ պատճառով Մոսադեղը պիտի գնար մինչև վերջ և բնականաբար իրանական կառավարության համար ոչ մի արժեք պիտի չունենար Հաագայի դատարանի որոշումը: Ըստ այդմ նման քայլը դիտվում է որպես Իրանի ներքին գործերին միջամտություն և իրանական կառավարությունը չի ընդունում այդ որոշումը[33]:

1951 թ. հուլիսի 15-ին Թեհրան է ժամանում ԱՄՆ նախագահ Թրումենի մերձավորներից հայտնի քաղաքական գործիչ Էվերիլ Հարրիմանը՝ նավթի շուրջ բանակցությունների համար, որի այցելությունը զուգորդվեց կատաղի ցույցերով[34]: 1951 թ. հուլիսի 16-ին Մոսադեղը երկրում մտցրեց ռազմական դրություն, որը տևեց 6 օր: Ստեղծված պայմաններում Անգլիայի ներկայացուցիչը Իրան ժամանեց միայն մեկ ամիս անց[35]:

Հարրիմանի ղեկավարած բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին և անարդյունավետ բանակցությունների ավարտից հետո նա նշեց, որ. «Ես զգում եմ Իրանում մենք ավելի շատ ժամանակ ենք վատնում, քան ԱԻՆԸ-ի բոլոր պաշտոնյաները միասին վերցրած»[36]:

---

[32] "Известия", 11.07.1951.

[33] Նույն տեղում:

[34] Avery P., Modern Iran, New York, Washington, p. 422-423.

[35] Նույն տեղում:

[36] Իսկանդարյան Գ., նշվ. աշխ., էջ 76:

Նշենք նաև, որ սեպտեմբերի սկզբներին բրիտանական կառավարության կողմից էմբարգո դրվեց Բրիտանիայից Իրան ներմուծվող պողպատի, երկաթի, շաքարի, նավթի վերամշակման սարքավորումների և դոլարով վերավաճառվող ապրանքների վրա[37]: 1951 թ. սեպտեմբերի 29-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում սկսվում է Բրիտանիայի դիմումի քննարկումներն իրանական նավթի հարցի շուրջ, որտեղ նշված էր երկու հիմնական կետ՝ Հաագայի որոշումից իրանական կառավարության հրաժարվելը և 350 բրիտանացի մասնագետների արտաքսման գործընթացը[38]: 1951 թ. հոկտեմբերի 3-ին բրիտանական "The Argus" թերթը գրում է, որ Խուզիսթանի նավթային շրջանի բրիտանական գլխավոր հյուպատոս Ֆրենսիս Քափերը պատրաստվում է լքել Իրանը բրիտանացի մյուս մասնագետների հետ և, որ նա իրանական կառավարության կողմից հայտարարվել է որպես «persona non grata»[39]: Նշված էր նաև, որ 300 բրիտանացի նավթային մասնագետներ «Մաուրիցիոս» նավով կլքեն Աբադանը, ուղևորվելով Բասրա (Իրաք):

Անվտանգության խորհուրդը հոկտեմբերի 19-ին որոշում ընդունեց հետաձգել նավթի հարցի շուրջ անգլո-իրանական վեճի քննարկումը: 1952 թ. հուլիսի 22-ին Հաագայի դատարանը հայտարարեց, որ իրավասու չէ անգլո-իրանական վեճի շուրջ վճիռ կայացնելու համար: Նույն թվականի հուլիսի 30-ին իրանական կառավարությունը փակեց բրիտանական Շահնշահական բանկը:

Միջազգային նավթային կորպորացիաները թույլ չտվեցին իրանական կառավարությանը դուրս գալ միջազգային նավթային շուկա, քանի որ նրանց վերահսկողության տակ էին գտնվում տանկերների մեծ մասը և արտահանման շուկաները: Ստեղծված պայմաններում Մոսադեղն ու իր կառավարությունն առաջ քաշեցին

---

[37] Gasiorowski Mark J., The 1953 Coup d'atat in Iran, International Journal of Middle East Studies, Vol. 19, No 3 (Aug., 1988), p. 261-286, Cambridge University Press, jft-newspaper.aub.edu.lb/reserve/data/pspa237-wh-gasiorowski/Gasiorowski.pdf

[38] Rosenthal A., Britain-Iran Talk in U.N. is Sought, "New York Times", 30.09.1951, partners.nytimes.com/library/world/mideast/093051iran-un.html

[39] Diplomat Must Go, "The Argus", Melbourne, 03.10.1951, trove.nla.gov.au/ndp/del/article/23083651

«տնտեսություն առանց նավթի» գաղափարը[40]: 1952 թ. հուլիսի 13-ին Մոսադեղը մեջլիսից պահանջեց արտակարգ լիազորություններ 6 ամիս ժամկետով, ինչպես նաև «պատերազմի նախարարի»՝ ռազմական նախարարի պորտֆելը: Շահը՝ տեսնելով, որ այդ քայլը կզրկի իրեն զինված ուժերի գերագույն հրամանատարի պաշտոնից, մերժեց Մոսադեղին[41]: 1952 թ. հուլիսի 16-ին Մոսադեղը հրաժարական տվեց և շահը վարչապետի պաշտոնում նշանակեց Ահմեդ Ղավամին[42]: Իրանում սկսեց ցույցերի և բողոքի խոշոր ալիք բարձրանալ՝ պահանջելով Մոսադեղի վերադարձը: Այդ իսկ պատճառով 4 օր հետո Ղավամը հրաժարական տվեց և հեռացավ երկրից: Մոսադեղը կրկին վարչապետի պաշտոնում վերականգնվելով՝ օգոստոսի 3-ին ստացավ արտակարգ լիազորություններ:

Վարչապետի պաշտոնում վերականգնվելուց հետո ԱՄՆ նախագահ Թրումենի և Անգլիայի վարչապետ Չերչիլի ստորագրությամբ հուշագիր ներկայացվեց Մոսադեղին՝ նավթի վեճի լուծման շուրջ, սակայն Մոսադեղը մերժեց այն[43]: 1952 թ. հոկտեմբերին իրանական կառավարությունը փակեց Իրանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը և խզեց դիվանագիտական իր հարաբերությունները[44]: Բրիտանական կառավարությունում գիտակցում էին, որ Մոսադեղի կառավարությունը երբեք չի գնա փոխզիջումների, ինչպես նաև, որ անիմաստ է իրանական կառավարության հետ այլևս բանակցել: Իրանում իր նախկին դիրքերն ամրապնդելու համար Մեծ Բրիտանիայի կառավարությունը տեսնում էր միայն ռազմական հեղաշրջման իրականացման մեջ: 1952 թ. հոկտեմբերին բրիտանական MI6 գործակալության և Ֆորին Օֆիսի աշխատակիցները դիմում են ամերիկյան ԿՀՎ-ին (Կենտրոնական հետախուզության վարչություն) Իրանում համատեղ ուժերով ռազմական հեղաշրջում իրականացնելու համար: Նշենք, որ Իրանը նավթի ազգայնացումից հետո հրաժարվեց

---

[40] Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 661:

[41] Փահլավի Մոհամմադ Ռեզա, նշվ. աշխ., էջ 189-190:

[42] Նույն տեղում:

[43] Փահլավի Մոհամմադ Ռեզա, նշվ. աշխ., էջ 192:

[44] A Great Venture Overthrowing the Government of Iran, by Mark Curtis, Lobster, www.lobster-magazine.co.uk/articles/130iran.htm

աշխատել նաև ԱՄՆ պահանջարկով և մտավախություն կար, որ այն կարող է միանալ ԱՄՆ թշնամու՝ ԽՍՀՄ հետ[45]:

Օպերացիայի շուրջ երկար ժամանակ բանակցելուց հետո 1953 թ. օգոստոսի 16-ին պետական հեղաշրջման փորձը տապալվեց, բայց ի վերջո օգոստոսի 19-ին հեղաշրջումը տեղի ունեցավ, Մոսադեղի կառավարությունը տապալվեց, նրան ձերբակալեցին, իսկ իրանական նավթը կրկին ընկավ օտար ազդեցության տակ[46]:

• • •

1950-1953 թթ. Իրանում բռնկված զանգվածային հասարակական շարժումը մեծ ազդեցություն և արձագանք գտավ ոչ միայն Իրանում, այլև Մերձավոր և Միջին Արևելքի այլ երկրներում: Դոկտոր Մոհամմադ Մոսադեղի գլխավորությամբ նավթի ազգայնացման համար մղված պայքարը ժողովրդին հանեց շահի դեմ, ինչպես նաև հանդիպեց արտաքին ուժերի դիմակայությանը: Կառավարությունը՝ հենվելով քաղաքային և գյուղական բնակչության վրա, սկզբնական շրջանում հասավ նշանակալի հաջողությունների, սակայն շուտով բախվեց ներքին ուժերի և արտաքին միջամտության հետ և չհասավ իր նպատակին: Ազգայնացնելով նավթը՝ Մոսադեղը կարծում էր, որ դա կբերի պետբյուջեի նշանակալի հավելմանը, որն իր հերթին թույլ կտար վարելու արդյունավետ սոցիալական քաղաքականություն, սակայն Մեծ Բրիտանիայի կողմից ռազմական շրջափակման և կիրառած պատժամիջոցների պատճառով իրանական կառավարությունը չկարողացավ հասնել իր նպատակին: Մոսադեղի վարած քաղաքականությունը՝ հիմնված ակտիվ չեզոքության սկզբունքի վրա, չտվեց սպասված արդյունքը: Անգլո-ամերիկյան միացյալ ուժերով կատարված հեղաշրջման արդյունքում Ազգային ճակատի փափագած նպատակը հօդս ցնդեց: Այնուամենայնիվ նավթի ազգայնացման շուրջ Իրանում բռնկված շարժումը յուրօրինակ էր և փոթորկալի մինչ իսլամական հեղափոխության շրջանը: Այն ցույց տվեց, թե ինչքան մեծ

---

[45] Amanda Lathham, Operation Ajax: CIA, Muhammad Mossadeq, and the Shah of Iran, www.coldwar.org/articles/50s/Operation Ajax.asp

[46] A Great Venture Overthrowing the Government of Iran, by Mark Curtis, Lobster, www.lobster-magazine.co.uk/articles/130iran.htm

էր իրանական ժողովրդի դժգոհությունը Անգլիայի հանդեպ, ում գլխավոր մեղավորն էր համարում յուր հետամնացության և ծայրահեղ չքավորության մեջ, քանզի Իրանը լինելով հարուստ օգտակար հանածոներով և որ ամենակարևորն է՝ նավթով, իրանական ժողովուրդն իր երկրի տերը չէր համարում իրեն: Անգլիական կառավարության վարած քաղաքականության հետևանքով Իրանի ժողովուրդն էլ ավելի էր շահագործվում և այլևս լցվել էր ժողովրդի համբերության բաժակը, որը լի էր թե՛ անգլիացիների հանդեպ տածած ատելությամբ, և թե՛ մյուս օտարերկրյա շահագործողների:

SOGHOMONYAN HAYK
(IOS)

IRAN-GREAT BRITAIN RELATIONS DURING THE ATTEMPT OF OIL INDUSTRY NATIONALIZATION (1950-1953)

This article is about the relations between Iran and Great Britain in the 1950s, when Great Britain continued to have a dominant position in Iran and the British government to which the Anglo-Iranian oil company belonged, continued to exploit the Iranian people. Workers' strikes and the wave of protest that started in the country gradually transformed into the people struggle against AIOC and the west in general.

Under these conditions Dr. Mohammad Musaddiq came to the power and led the national movement and made all efforts to nationalize the oil, the general wealth of Iran in 1951. After the nationalization Musaddiq wasn't able to export oil to the international market because of the Anglo-American policy. The Anglo-American governments who had no hope to possess the Iranian oil through peaceful negotiations considered the armed revolution as the only way. At last in 1953 with the close cooperation of British MI6 and American CIA it was possible to accomplish the armed revolution called "AJAX".

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՄՈ
(ՊԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԸ 1918 Թ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ՇՐՋԱՆՈՒՄ

1918 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության և Վրացական Հանրապետության անկախացումից հետո երկկողմ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը հեշտ չընթացավ: Պատճառը չլուծված տարածքային վեճերն էին: Չնայած 1918 թ. հունիսի սկզբին երկու պետությունները փորձեր կատարեցին գոյություն ունեցող հակասությունները լուծել բանակցությունների միջոցով, սակայն նրանց երկխոսությունն այդպես էլ չստացվեց: Խնդիրը բարդացնում էր այն հանգամանքը, որ հայ և վրացի ղեկավար գործիչները միմյանց հանդեպ անվստահությամբ էին տրամադրված: Վրացիները դժգոհում էին և պահանջում՝ հայկական կառավարությունը հեռացնել Վրաստանի մայրաքաղաքից: 1918 թ. հուլիսի 17-ին Հայոց ազգային խորհրդի ու ՀՀ ձևավորվող կառավարության՝ Թիֆլիսից Երևան մեկնելուց հետո ժամանակավորապես դադարեցին փոխադարձ մեղադրանքները[1]:

1918 թ. աշնանը Քառյակ դաշինքի երկրների բանակները պարտություններ էին կրում Անտանտի պետությունների զինական ուժերից: Այս իրավիճակում Օսմանյան կայսրությունը սկսեց զորքերը ետ քաշել ռազմակալված Բորչալուի գավառից: Թուրքական զորքերի դուրսբերմանը 1918 թ. հոկտեմբերին անմիջապես հաջորդեց Դրոյի գլխավորած հայկական ջոկատների մուտքը Հարավային Լոռի: Այն անակնկալի բերեց վրացիներին՝ Հայաստանի և Վրաստանի միջև կարճ ընդհատումներով առաջ բերելով մեկուկես ամսից ավելի տևող

---

[1] Սուքիասյան Հ., Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով, մաս առաջին. Միջպետական սահմանի հարցը 1918 թ. հունիս-հուլիսին, «ՎԷմ», 2012, թիվ 4, էջ 194-206:

դիվանագիտական հակամարտություն, որը, ի վերջո, դեկտեմբերի 13-ին հանգեցրեց վրաց-հայկական պատերազմին[2]:

Այսրկովկասում գտնվող Անտանտի ներկայացուցիչները պատերազմի ընթացքում քայլեր կատարեցին ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Այդ նպատակով Այսրկովկասում Դաշնակիցների զորքերի հրամանատար Ու. Թոմսոնը ռազմական գործողությունների վայր ուղարկեց իր ներկայացուցիչ կապիտան Է. Գրինին, ով դեկտեմբերի 15-ին Հայաստանի իշխանություններին առաջարկեց 14 օրով զինադադար հաստատել[3]:

Կապիտան Գրինի և վրացական պատվիրակների հետ ռազմական գործողությունները դադարեցնելու պայմանները որոշելու նպատակով դեկտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը պատվիրակություն ուղարկեց Ղարաքիլիսա: Պատվիրակության նախագահը հայտնի դաշնակցական գործիչ Սարտիրոս Հարությունյանն էր, անդամները՝ Սմբատ Խաչատրյանը, Գրիգոր Տեր-Խաչատրյանը, Արշամ Խոնդկարյանը, Ստեփան Մամիկոնյանը, զինվորական խորհրդականը՝ գեներալ Գաբրիել Ղորղանյանը: Պատվիրակության բոլոր հինգ անդամները Հայաստանի խորհրդի պատգամավորներ էին: Պատվիրակության առջև խնդիր էր դրված դադարեցնել ռազմական գործողությունները, հարթել հայ-վրացական հակամարտությունը և երկու երկրների միջև երկաթուղային հաղորդակցություն հաստատել՝ լիազորված լինելով Հայաստանի կառավարության անունից ստորագրել անհրաժեշտ բոլոր պայմանագրերը[4]:

---

[2] 1918 թ. աշնանը վրաց-հայկական դիվանագիտական հակամարտության և դեկտեմբերյան պատերազմի մասին տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 230-242; Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Ե., 2005, էջ 99-127; Վիրաբյան Վ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը. ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Ե., 2003, էջ 137-191:

[3] Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Ե., 2002, էջ 81-82:

[4] Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. մարտ), «Պատմա-բանասիրական հանդես», 2009,·թիվ 1, էջ 186-187:

1918 թ. դեկտեմբերի 22-ին հայ պատվիրակները ժամանեցին Ղարաքիլիսա: Սակայն վրացական կառավարությունը պատվիրակներ չուղարկեց, և Գրինի առաքելությունն անհաջողությամբ ավարտվեց:

Թիֆլիսում գտնվող Դաշնակիցների ներկայացուցիչներ անգլիացի գեներալ Ու. Ռայկրոֆտը, ֆրանսիական միսիայի ղեկավար գնդապետ Պ. Շարդինիեն և Վրաստանի վարչապետ Նոյ Ժորդանիան, Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի մասնակցությամբ (չնայած վերջինի ընդդիմությանը) 1918 թ. դեկտեմբերի 25-ին զինադադարի համաձայնագիր ստորագրեցին, որով նախատեսվում էր վերջ դնել պատերազմական գործողություններին: Բորչալուի գավառում հայկական զորամասերը պետք է հետ քաշվեին մինչև, այսպես կոչված, հին թուրքական գիծը, իսկ Ախալքալաքի գավառում պետք է վրացական վարչակազմ հաստատվեր[5]:

Դեկտեմբերի 28-ին Ղարաքիլիսա ժամանեց միջազգային հանձնաժողով, որի անդամներն էին՝ անգլիացի կապիտան Հ. Դուգլասը, ֆրանսիացի կապիտան Ն. Գասվիլդը, վրացի գնդապետ Ջափարիձեն և մեկ անգլիացի թարգմանիչ սպա: Նրանց հետ եկել էր նաև Ա. Ջամալյանը: Հանձնաժողովն իր հետ բերել էր Ու. Ռայկրոֆտի և Պ. Շարդինիեի որոշումը զինադադարի մասին: Սակայն հայերին առաջարկվող պայմաններն անարդար էին և միակողմանի: Ուստի՝ մինչև պաշտոնական նիստը հայկական կողմը մասնավոր հանդիպում ունեցավ .միջազգային հանձնաժողովի եվրոպացի անդամների հետ: Հայկական հաշտարար պատվիրակության անդամները սկզբում բողոքեցին առաջարկվող սկզբունքներից, սակայն սկզբունքորեն համաձայնություն տվեցին պատերազմը դադարեցնելու Դաշնակիցների պահանջին: Պատվիրակությունը, կապվելով ՀՀ կառավարության հետ, տեղեկացրեց դրության մասին: Կառավարությունը, տեսնելով իրավիճակի վատթարացումը, առաջարկեց ստորագրել պայմանագիրը և պահանջել, որպեսզի այնուհետև Թիֆլիսում որոշ պայմաններ վերաքննվեն հայկական

---

[5] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 2, գ. 33, թ. 1:

պատվիրակության մասնակցությամբ[6]: Դեկտեմբերի 29-ին զինադադարի համաձայնագիրը ՀՀ անունից, Դաշնակիցների հորդորների արդյունքում, ստորագրեց նաև Մ. Հարությունյանը: Հ. Դուգլասն այս առթիվ իր գոհունակությունը հայտնեց: Նա իր հետ Թիֆլիս տարավ Մ. Հարությունյանին և գեներալ Գ. Ղորղանյանին: Պատվիրակության մյուս անդամներն առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է մեկնեին Թիֆլիս: Դեկտեմբերի 31-ին Հայաստանի և Վրաստանի միջև ռազմական գործողությունները դադարեցին:

Հայկական հաշտարար պատվիրակության նախագահ Մ. Հարությունյանը և զինվորական խորհրդական գեներալ Գ. Ղորղանյանը Դաշնակիցների ներկայացուցիչների ուղեկցությամբ 1918 թ. դեկտեմբերի 30-ի կեսօրին Ղարաքիլիսայից մեկնելով՝ դեկտեմբերի 31-ի երեկոյան հասան Թիֆլիս:

Մինչև պատվիրակության մյուս անդամների գալը Մ. Հարությունյանն ու Գ. Ղորղանյանը նախապատրաստական աշխատանքներ կատարեցին հայ-վրացական հնարավոր կոնֆերանսին պատրաստվելու համար: Այդ նպատակով հրավիրված խորհրդակցությանը, բացի պատվիրակության անդամներից, ներկա էին նաև Փարիզ մեկնող հայկական պատվիրակության անդամներ Ավետիս Ահարոնյանը, Միքայել Պապաջանյանը, ՀՀ պարենավորման նախարար Լևոն Ղուլյանը, Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմը: Խորհրդակցության ժամանակ որոշվեց կազմել և Դաշնակիցներին ներկայացնել մի նախագիծ՝ Լոռվա շրջանի վարչակազմի համար, ապա խնդրել, որ վրացական զորքերը հետ տարվեն բոլոր հայաբնակ վայրերից, քանի որ իրենց կատարած քայլերով նրանք գրգռում են ժողովրդին և ապստամբության պատճառ դառնում: Որոշվեց խնդրել նաև, որ Սադախլուի շրջանի թուրքաբնակ վայրերում անգլիական զորամասեր տեղակայվեն: Այդ նպատակով հունվարի 3-ին մի շարք փաստաթղթերով հիմնավորված գրություն ուղարկվեց դաշնակից հրամանատարությանը[7]:

---

[6] Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 188-189:

[7] Նույն տեղում, էջ 190-191:

Հայկական պատվիրակության մյուս անդամները Թիֆլիս ժամանեցին հունվարի 3-ին: Նշենք, որ պատվիրակներից Գրիգոր Տեր-Խաչատրյանը հունվարի 22-ին մեկնեց Երևան: Այդ շրջանում, Փարիզ մեկնելու կապակցությամբ, զինվորական խորհրդականի պաշտոնից հրաժարվեց գեներալ Գ. Ղորղանյանը: Դրանից հետո պատվիրակությունը գործել է 4 անձով:

Կոնֆերանսի նիստերը սկսվեցին հունվարի 9-ին: Այն նախագահում էր անգլիացի գնդապետ Ռոբերտ Ստյուարտը: Նա ուներ իր թարգմանիչը (բանակցությունները տարվում էին ռուսերենով, որը նախագահի համար անգլերեն էր թարգմանվում, իսկ ֆրանսիական ներկայացուցիչը ռուսերեն գիտեր), անգլիացի քարտուղարը: Ֆրանսիական միսիայի կողմից կոնֆերանսի նիստերին մասնակցում էին կապիտան Ն. Գասֆիլդը, երբեմն նաև ֆրանսիական հյուպատոս Դյուրան և հայկական զինվորական նախարարության կցորդ Ա. Պուադեբարը: Հայկական կողմից մասնակցում էր ողջ պատվիրակությունը: Հայկական պատվիրակության թարգմանիչն էր Երվանդ Միրզոյանցը, քարտուղարը՝ Վարդգես Ահարոնյանը: Վրացական կողմից մասնակցում էին արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորին, նրա օգնական Կոնստանտին Սաբախտարիշվիլին, ներքին գործերի նախարար Նոյ Ռամիշվիլին, ֆինանսների նախարար Գեորգի Ժուրուլին, ռազմական նախարարի օգնական գեներալ Ա. Գեդևանովը, գնդապետ Ի. Ջափարիձեն, Կ. Կանդելակին և ուրիշներ:

Կոնֆերանսի հաջորդ նիստերը տեղի ունեցան հունվարի 10-ին, 11-ին, 13-ին, 15-ին և 16-ին: Կոնֆերանսի ընթացքում զուգահեռաբար աշխատում էին զինվորական (հայկական կողմից՝ գեներալ Գ. Ղորղանյան), վարչական (հայկական կողմից՝ Մ. Հարությունյան և Ա. Խոնդկարյան) և ֆինանսական (հայկական կողմից՝ Ս. Մամիկոնյան) հանձնաժողովները: Կոնֆերանսի որոշումները ստորագրվեցին ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն տարբերակներով: Վերջում յուրաքանչյուր կողմին հանձնվեց պայմանագրի մեկական օրինակ ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով[8]:

---

[8] Նույն տեղում, էջ 191-192:

Վրաց-անգլիական համագործակցությունը դրսևորվեց հենց խորհրդաժողովի բացման ժամանակ, երբ նախագահող Ռ. Ստյուարտը, Ե. Գոգեչկորու հետ համաձայնեցված, մերժեց հայկական պատվիրակության առաջարկած տնտեսական բնույթի օրակարգային հարցերը: Կոնֆերանսի ընթացքում հիմնական քննարկումներն ընթացան Բորչալուի և Ախալքալաքի գավառների շուրջ: Ստյուարտը մերժեց նաև գեներալ Գ. Ղորղանյանի առաջարկը՝ Չեզոք գոտու սահմանների որոշումը թողնել զինվորական հանձնաժողովին: Մերժվեց նաև հայերի մյուս առաջարկը՝ Չեզոք գոտու սահմանները որոշել համաձայն 1918 թ. դեկտեմբերի 25-ի զինադադարի ստորագրման պահին եղած իրավիճակի[9]: Զինվորական հանձնաժողովը՝ Ա. Գեդևանով, Գ. Ղորղանյան, Ի. Ջափարիձե կազմով, հունվարի 10-ին խորհրդաժողովին ներկայացրեց Լոռու Չեզոք գոտու հյուսիսային և հարավային սահմանները, հայկական և վրացական զորքերի կողմից զբաղեցվելիք գծերը և նրանց թվակազմը:

Հունվարի 16-ին ավարտվեցին հայ-վրացական խորհրդաժողովի նիստերը, ինչը, Դաշնակիցների պարտադրանքի տակ, ժամանակավորապես «կարգավորեց» Բորչալուի և Ախալքալաքի պատկանելության վերաբերյալ եղած հայ-վրացական տարածքային վեճերը: Որոշվեց Ախալքալաքում մտցնել վրացական վարչակարգ, իսկ հայկական զինուժի կողմից ազատագրված Լոռին վերածել Չեզոք գոտու՝ Դաշնակիցների հսկողության տակ: Եվ սա այն դեպքում, երբ պատերազմն ավարտվել էր հայերի հաղթանակով: Լոռու ազատագրված ավելի քան 40 գյուղեր մտան Չեզոք գոտու մեջ, որը բաժանվեց երեք տեղամասի՝ Ալավերդու, Ուզունլարի (ներկայիս Օձունը), Վորոնցովկայի (ներկայիս Տաշիրը): Խորհրդաժողովի արդյունքում հաստատված Բորչալուի գավառի չեզոք գոտու հյուսիսային սահմանը լինելու էր 1918 թ. դեկտեմբերի 31-ի, ժամը 24[00]-ի դրությամբ հայ-վրացական զինադադարի պահին վրացական զորքերի կողմից զբաղեցված գիծը: Հարավային սահման հաստատվեց, այսպես կոչված, հին թուրքական սահմանը, այսինքն՝ այն գիծը, որը մինչև

---

[9] Խառատյան Վ., Լոռու և Ախալքալաքի հարցը 1919 թ. հայ-վրացական խորհրդաժողովում, «Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու», թիվ 2, Ե., 2001, էջ 100:

Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելը Բորչալուի գավառում զբաղեցնում էին թուրքական զորքերը[10]:

Չնայած 1919 թ. հունվարյան կոնֆերանսի արդյունքում տպավորություն էր ստեղծվում, թե Հայաստանի և Վրաստանի միջպետական հարաբերությունները կարգավորվել էր, սակայն իրականությունն այն էր, որ երկկողմ վիճելի հարցերը շաբաթներ շարունակ բաց էին մնում: Հայկական պատվիրակությունը մնաց Թիֆլիսում, որպեսզի Վրաստանի ներկայացուցիչների հետ քննարկի ընթացիկ բոլոր հարցերը:

Հայկական կողմի համար միջպետական խնդիրների շարքում առաջնային էր համարվում Հայաստանի Հանրապետության և Վրացական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը: Այս ուղղությամբ Մ. Հարությունյանի գլխավորած պատվիրակության գործադրած ջանքերն արդյունք չէին ունենում: Խնդիրն այն է, որ վրացական կառավարության ներկայացուցիչները զանազան պատճառաբանություններով ձգձգում էին այս հարցը:

Կոնֆերանսի ընթացքում և մասնավոր հանդիպումների ժամանակ հայ պատվիրակները փաստում էին, որ պատերազմը վերջացել է, ուստի երկու ժողովուրդներին ի ցույց դնելու համար, որ խաղաղությունը վերջնական է, անհրաժեշտ է վերականգնել նորմալ միջպետական հարաբերությունները: Վրացական փաստարկները հիմնականում բխում էին նրանց այն դիրքորոշումից, որ երկու երկրների միջև պատերազմը դեռևս վերջնականապես ավարտված չէ, այլ միայն զինադադար է կնքված: Ըստ այդմ էլ՝ պետք է պարզել պատերազմի մեղավորի հարցը և ապա միայն վերականգնել դիվանագիտական կապերը: Սրա պատճառներից էր այն, որ վրաց-հայկական դիվանագիտական հակամարտության և հատկապես երկշաբաթյա պատերազմի ընթացքում մենշևիկյան կառավարությունը վրացի ժողովրդին հակահայկական տրամադրություններ էր ներարկել, ուստի նրա համար դյուրին չէր կտրուկ փոխել տարվող

---

[10] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 82-83; Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 308:

քաղաքականությունը: Մանավանդ որ կայանալիք Սահմանադիր ժողովի (այն գումարվեց 1919 թ. մարտի 12-ին) ընտրությունների ժամանակ այդ քայլը կարող էր օգտագործվել ընդդիմադիր ազգային-դեմոկրատների կողմից: Այս մասին հաղորդելով ՀՀ կառավարությանը՝ Մ. Հարությունյանը պատկերավոր եզրափակում էր. «իսկ այդ շովինիզմին ս[ոցիալ]-դ[եմոկրատիա]ն շատ նպաստել էր [իր] ընթացքով այս կոնֆլիկտի ժամանակ: Ս[ոցիալ]-դ[եմոկրատիա]ն իր դուրս կոչած չար ոգիներին այժմ ինքը չի կարողանում զսպել»[11]: Նշված իրողությունների արտացոլում էր այն, որ Մ. Հարությունյանի հետ հանդիպումներից մեկի ժամանակ Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին հայտարարեց, թե անմիջապես դիվանագիտական կապերի վերահաստատումն «անհնար է, քանի որ դեռ չի պարզված, թե ո՞ր կողմն է հանցավոր, ուստի եթե անմիջապես վերսկսեն հարաբերությունները նախկին եղանակով, վրաց հասարակական կարծիքը բավարարված չի լինի, քանի որ Վրաստանը մեծ զոհեր է տվել, մեծ ծախսեր է արել և դեռ տերիտորիա էլ կորցրել է: Անհասկանալի կլինի, թե ինչու պատերազմեցին և ինչու, առանց որևէ բավարարություն ստանալու, հաշտվեցին»[12]: Ե. Գեգեչկորին և վրացի մյուս պաշտոնյաները նման փաստարկներ էին բերում նաև կոնֆերանսի ընթացքում:

Արդյունքում՝ կոնֆերանսի հունվարի 16-ի նիստում, երբ քննարկվեց դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցը, Ե. Գեգեչկորին, որպես փոխզիջում, առաջարկեց Հայաստանի կողմից տարբեր ագենտներ ընդունել, որոնք պատասխանատու կլինեն որևէ գործնական խնդրի համար՝ առանց Հայաստանի քաղաքացիներին պաշտպանելու իրավունքի: Այսինքն՝ կարող էին լինել ագենտներ պարենավորման, ֆինանսների, երկաթուղու համար և այլն, որոնք կգործեին այնքան ժամանակ, մինչև ժամանակի ընթացքում երկու կողմերի կարծր դիրքորոշումները կմեղմանային և դրանից հետո միայն նախկին վիճակին կվերադառնային[13]: Այս տարբերակն ընդունելի չէր

---

[11] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 90 շրջ.:

[12] Նույն տեղում, թ. 66 և շրջ.:

[13] Նույն տեղում, թ. 66 շրջ.-67, 79 և շրջ.: Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Е., 2012, с. 130.

հայկական կողմի համար: ՀՀ պատվիրակությանը հաջողվեց նախնական համաձայնության գալ, որ այդ ագենտները պետք է ղեկավարվեն մեկ անձի կողմից՝ հույս ունենալով, որ այս մարմնի լիազորությունները հետագայում կարող են ընդլայնվել: Կոնֆերանսի արձանագրությունները ստորագրելու ժամանակ հայկական պատվիրակությունն առաջարկեց որոշման հետևյալ խմբագրումը. «հարաբերությունների համար նշանակվում են ագենտներ՝ գլխավորությամբ մի անձի»: Վրացիների առաջարկած խմբագրությունը հետևյալն էր. «ագենտներ՝ գործնական բնույթ ունեցող մասնագիտական խնդիրների համար»: Հայկական պատվիրակության հաշվետու զեկուցման մեջ նշելով այս մասին՝ Մ. Հարությունյանը փաստում է, որ վրացիների առաջարկած բանաձևը «երկար ժամանակ անորոշ էր թողնում դիվանագիտական հարաբերությունների խնդիրը, ուստի վերջին փուլում, երբ պիտի ստորագրեինք որոշումները և երբ [Ռ.] Ստյուարտը հակվեց դեպի վրաց բանաձևը, մեր պատվիրակությունը գերադասեց այդ կետը բոլորովին հանել և դիվանագիտական հարաբերությունների խնդիրը բաց թողնել»[14]:

Վրաց-հայկական պատերազմի շրջանում Վրաստանի տարածքում գտնվող Հայաստանի քաղաքացիների շահերը պաշտպանում էր Թիֆլիսի պարսկական հյուպատոսը: ՀՀ հաշտարար պատվիրակության՝ Թիֆլիս ժամանելուց հետո այստեղ գտնվող հայերը տարաբնույթ հարցերով արդեն դիմում էին պատվիրակությանը: Վերջինն էլ դրանք լուծելու համար ուղարկում էր Վրաստանի կառավարությանը կամ Թիֆլիսում գտնվող բրիտանական ներկայացուցչությանը[15]: Իր հերթին՝ բրիտանական ներկայացուցչությունը հայերին առնչվող դիմումներն ընդունում էր միայն ՀՀ պատվիրակության միջոցով: Փաստորեն՝ ՀՀ պատվիրակությունը փաստացի դիվանագիտական ներկայացուցչության գործառույթներ էր իրականացնում:

---

[14] Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 198-199:

[15] Նմանատիպ դիմումների օրինակները տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Ա. Զաքարյան, Ե., 2005, էջ 98-99, 103-104, 106:

Նման դրությունը ձեռնտու չէր նաև անգլիացիներին: Ուստի՝ նրանք ևս միանշանակ հակվեցին այն մտքին, որ Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչության վերաբացումն անհրաժեշտություն է: Հունվարի 22-ին հայկական պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ֆ. Ուոկկերը կարծիք հայտնեց, թե Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունները պիտի վերականգնվի, քանի որ ոչ թե զինադադար, այլ խաղաղություն է հաստատվել: Իսկ փետրվարի 15-ին վրացական կառավարության անդամներին ի գիտություն հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունն իրավունք չունի արգելելու Հայաստանի ներկայացուցչության գործունեությունը: Վրացական կառավարությանն ուղղված հորդորներն ու ճնշումը դրական արդյունք ունեցան[16]:

Մ. Հարությունյանն իր ղեկավարած պատվիրակության՝ Թիֆլիսում գտնվելը կարևորում էր մինչև այն պահը, երբ կվերաբացվեր Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: Այսպես՝ փետրվարի 17-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Միրական Տիգրանյանին ուղղված նամակում նա գրում էր. «Մենք կարծում ենք, որ, եթե միսիան վերաբացվի, Միք. Թումանյանը կարող է առժամանակ գործերը տանել՝ մինչև ներկայացուցիչ նշանակվելը: Այնուհետև գուցե դելեգացիան հնարավորություն ունենա իրեն ազատ զգալ և վերադառնալ»[17]: Փաստենք, պատվիրակությունը հասավ իր առջև դրված այս կարևոր խնդրի լուծմանը:

1919 թ. փետրվարի վերջերին վրացական կառավարությունը դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցում այլևս չպնդեց իր նախկին տեսակետները և, ի վերջո, հայտարարեց, որ համաձայն է Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչության վերաբացմանը: Փետրվարի 28-ին կայացավ հայկական և վրացական պատվիրակությունների հանդիպումը: Մի քանի ժամ անընդմեջ տևող բանակցությունների արդյունքում կողմերը

---

[16] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 77; Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 199; Սարդարյան Կ., նշվ. աշխ., էջ 103:

[17] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 84:

կարողացան գտնել որոշ հարցերի լուծումներ և փոխհամաձայնության գալ: Չնայած որոշումների հիմնական մասը մնաց թղթի վրա, սակայն նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկու երկրների միջև դիվանագիտական կապերի վերականգնման համար:

Վրաստանի ղեկավարները համարում էին, որ անհրաժեշտ է պաշտոնապես հայտարարել երկու երկրների անկախությունը: Սրան համամիտ էր նաև ՀՀ պատվիրակությունը: Այս մասին պատվիրակությունը տեղեկացրեց իր կառավարությանը: Բանն այն է, որ վրացիները մտավախություն ունեին, թե հայերը կողմնակից չեն Վրաստանի անկախությանը: Մարտ ամսվա ընթացքում Վրաստանի և Հայաստանի կառավարությունները միմյանց անկախության ճանաչման վերաբերյալ նոտաներ փոխանակեցին[18]: Պատվիրակությունների հանդիպման ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց մարտի 1-ից պաշտոնապես բացված համարել Վրաստանում ՀՀ դիվանագիտական միսիան՝ նախկին դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Միքայել Թումանյանի գլխավորությամբ՝ մինչև ներկայացուցչի նշանակումը[19]: Դիվանագիտական ներկայացուցչի հարցում վրացական կառավարության անդամները, ինչպես մասնավոր խոսակցությունների ժամանակ, այնպես էլ երկկողմ բանակցությունների ընթացքում, դիվանագիտական պրակտիկայում տարածված սովորույթը վկայելով, դեմ էին արտահայտվում Ա. Ջամալյանի վերանշանակմանը՝ մինչև իսկ առաջարկելով փոխել ներկայացուցչության ողջ կազմը: Մասնավոր խոսակցությունների ժամանակ նրանք նաև ակնարկում էին, որ իրենց համար առավել ընդունելի կլինի ոչ դաշնակցական ներկայացուցչի նշանակումը: Նման մոտեցում ունեին նաև Այսրկովկասում բրիտանական հրամանատարության ներկայացուցիչները[20]:

Հաշվի առնելով վրացիների դիրքորոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նախկին

---

[18] Туманян М., նշվ. աշխ., էջ 132:

[19] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 117:

[20] Նույն տեղում, թ. 126 և շրջ.; Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի ... հաշվետվությունը, էջ 199-200:

անդամ, անկուսակցական, մասնագիտությամբ իրավաբան Լևոն Եվանգուլյանին: Վերջինի թեկնածության դեմ վրացիները որևէ առարկություն հանդես չբերեցին[21]: Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչությունը վերաբացվեց 1919 թ. մարտի 8-ին:

Մ. Հարությունյանի ղեկավարած հայկական հաշտարար պատվիրակությունը շուրջ երեք ամիս մնաց Թիֆլիսում: Պատճառն այն էր, որ Վրացական Հանրապետության ղեկավարները գոյություն ունեցող երկկողմ հակասություններն ու խնդիրներն արագ և արդյունավետ լուծելու պատրաստակամություն հանդես չէին բերում: Հաճախ էլ այդ հնարավորությունը չէին ունենում: Վրացական պատվիրակության անդամները կառավարության անդամներ և իշխող սոցիալ-դեմոկրատական կուսակցության բարձրաստիճան պարագլուխներ էին, ովքեր առաջին հերթին զբաղված էին իրենց անմիջական պարտականությունների կատարմամբ: Բացի այդ՝ հաճախ նույնիսկ մանր հարցերը նրանք հետաձգում էին, քննարկում կառավարության նիստերի ժամանակ և նոր միայն հանդիպում հայ պատվիրակների հետ: Հասկանալի է, հայ պատվիրակներն այլ աշխատանքներով ծանրաբեռնված չէին և ձգտում էին բանակցությունները շուտ ավարտել (սա ՀՀ կառավարության հրահանգն էր): Զգձգումներով ուղեկցվող բանակցություններն վերջացնելով՝ հայկական պատվիրակության անդամները 1919 թ. մարտի վերջին վերադարձան Երևան[22]: Իսկ արդեն ապրիլի 7-ին պատվիրակությունը ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանին ներկայացրեց ընդարձակ զեկուցում-հաշվետվություն՝ 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. մարտը կատարած աշխատանքների մասին:

Չնայած առկա վիճելի խնդիրներին՝ երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը ՀՀ հաշտարար պատվիրակության առջև դրված կարևոր խնդիրներից էր,

---

[21] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 77 և շրջ.; Туманян М., նշվ. աշխ., էջ 133: Ի դեպ, ՀՀ պատվիրակության նախագահ Մ. Հարությունյանն արտգործնախարար Ս. Տիգրանյանին առաջարկում էր Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակել անկուսակցական Տիգրան Բեկզադյանին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 77 շրջ., 109): Վերջինս 1919 թ. մարտին նշանակվեց Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ:

[22] Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի... հաշվետվությունը, էջ 203-204:

ինչը վերջինս մեծ դժվարությամբ իրականացրեց: Դիվանագիտական հարաբերությունների վերականգնումով նոր փուլ սկսվեց հայ-վրացական հարաբերություններում: Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ստացավ Վրաստանի տարածքով կապվելու արտաքին աշխարհի հետ:

SUKIASYAN HAMO
(IH)

ISSUE OF THE RESTORATION OF DIPLOMATIC RELATIONS BETWEEN ARMENIA AND GEORGIA AFTER THE PERIOD OF GEORGEAN-ARMENIAN WAR IN 1918

After the Armenian-Georgian war in December 1918 diplomatic relations between the Republic of Armenia and Republic of Georgia were interrupted. In 1919 an Armenian - Georgian conference was held. Armenian-Georgian territorial disputes were temporarily "settled" due to efforts of the representatives of the Entente: Georgian regime was established in Akhalkalaki and Lori became a "neutral zone." However, the issue of the restoration of diplomatic ties between the two countries hasn't been solved. In these conditions the Armenian conciliation delegation in Tbilisi was de facto performing functions of the diplomatic representation. On February 28, 1919 after prolonged negotiations Armenian and Georgian delegations agreed to restore diplomatic relations between Armenia and Georgia. On March 8, the diplomatic representation of the Republic of Armenia in Tbilisi was reopened.

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
(ԱԻ)

ԱԼԱՎԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Խնդրո առարկա ուսումնասիրությունը վերաբերում է 2011 թ. մարտին Սիրիայի Արաբական Հանրապետությունում (ՍԱՀ) սկսված քաղաքացիական պատերազմի ընթացքում ալավիական համայնքում[1] տեղի ունեցած իրադարձություններին և փոփոխություններին:

Սիրիայում ձևավորված ներքաղաքական նոր իրողությունների պայմաններում ալավիական համայնքում ընթացող զարգացումների, ներհամայնքային տրամադրությունների և վերափոխումների վերաբերյալ մեր կողմից քննության առնվող նյութը հիմնվում է երեք հետազոտությունների վրա:

Առաջինը գերմանական «Ֆրեդերիկ Էբերտ» հիմնադրամի գիտաշխատող Ազիզ Նակկաշի կողմից արված «Ալավիների դիլեման Հոմսում» դաշտային հետազոտությունն է[2], որը հիմնականում կատարվել է Հոմսի ալավիների հետ հարցազրույցների արդյունքում:

Երկրորդը ծագումով նորզելանդացի, Օմանի Սուլթան Կաբուսի անվան համալսարանի պրոֆեսոր Լեոն Գոլդսմիթի «Սիրիայի

---

[1] Սիրիայում ալավիները կազմում են բնակչության 12 %-ը, շուրջ 2,5 միլիոն մարդ, որոնք հիմնականում կենտրոնացած են երկրի հյուսիսարևմտյան շրջաններում՝ Լաթաքիա, Տարտուս, Բանիաս քաղաքներում, Հոմսում և համանուն նահանգում, ինչպես նաև մայրաքաղաք Դամասկոսում: Իրականում անհնար է ներկայացնել ալավիների ճշգրիտ թվաքանակը Սիրիայում, քանի որ 1960-ից սկսած Սիրիայում փոքրամասնությունների թվական տվյալներն արտացոլող մարդահամար չի անցկացվել: Ժողովրդագրագետ Օնն Ուինքլերը պնդում է, որ Սիրիայի ալավիական բնակչությունն իրականում ավելի մեծ է, քան սովորաբար ներկայացվող 12%-ը: (Տես Winckler O., Arab Political Demography: Population Growth, Labor Migration and Natalist Policies, Ed. N 2, Eastbourne, Sussex Academic Press, 2009, p. 34):

[2] Nakkash A., The Alawite Dilemma in Homs, Friedrich Ebert Shtiftung, Dep. For Middle East and North Africa Hiroshimastr: 28, Berlin, Germany, March 2013.

ալավիները և համայնքային անապահովության էությունը. Խալդունյան հեռանկարը» հոդվածն է[3]: Հեղինակը, քննության առնելով Սիրիայում ալավիների իշխանության անցնելը, նրանց ամուր ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումը բացատրում է միջնադարյան արաբ փիլիսոփա Իբն Խալդունի «ասաբիյյա» (ցեղային համերաշխություն) տեսությամբ՝ Բաշար Ալ-Ասադի վարչակարգի ամրության ֆենոմենը մեկնաբանելով ալավիական համայնքի ասաբիյյայի էությամբ:

Երրորդ հետազոտությունը միջազգային իրավապաշտպան «Human Rights Watch» կազմակերպության 2013 թ. հոկտեմբերին հրապարակած զեկույցն է[4]: Զեկույցի հեղինակները մանրամասն ներկայացնում են 2013 թ. օգոստոսի 4-ին իսլամական ծայրահեղական խմբավորումների կողմից Լաթաքիայի շրջանի ալավիաբնակ շուրջ 10 գյուղերում իրագործված սպանդն ու վայրագությունները: Զեկույցում առկա են փաստեր, որոնք ի դերև են հանվել հարյուրավոր ալավի տեղաբնիկների, սպանվածների հարազատների, բարձրաստիճան սպաների, ռազմական հետախուզության, հատուկ ծառայությունների աշխատակիցների, Լաթաքիայի Ազգային հիվանդանոցի բժշկական անձնակազմի հետ հարցազրույցների միջոցով:

Սիրիայի ալավիները 2011 թ. մարտին սկսված իրադարձությունների ընթացքում հաճախ գիտական և փորձագիտական շրջանակներում ներկայացվել են որպես բասասական[5] վարչակարգին հավատարիմ և անվարան աջակիցներ, այնինչ հետազոտողների մեծ մասը հաշվի չի առել աշխարհագրական,

---

[3] Goldsmith L., Syria's Alawites and the Politics of Sectarian Insecurity: A Khaldunian Perspective, Ortadoğu Etütleri, Vol. 3, № 1, July 2011.

[4] Human Rights Watch, You Can Still See Their Blood, Executions, Unlawful Killings, Hostage Taking by Opposition Forces in Latakia Countryside, October 2013.

[5] 1946 թ. սիրիացի քրիստոնյա քաղաքական գործիչ Միշել Աֆլակի և Դամասկոսի դպրոցներից մեկում պատմություն դասավանդող ուսուցիչ Սալահադին Բիթարը հիմնում են Արաբական վերածննդի կուսակցությունը, որը 1953 թ. միավորվեց Ակրամ Հաուրանիի Արաբական սոցիալիստական կուսակցության հետ և միայն 1954 թ. վերանվանվեց Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության՝ Հիզբ Ալ-բաաս Ալ-արաբի Ալ-իշթիրաքի: Կուսակցության կարգախոսն է միասնություն՝ վահդա, ազատություն՝ հուրրիյա, սոցիալիզմ՝ իշթիռաքիյա, լոզունգը:

սոցիալ- տնտեսական և սոցիալ-հոգեբանական որոշ գործոններ: Նվազ ուշադրություն է դարձվել ներհամայնքային հարաբերությունների առանձնահատկություններին և այդ համատեքստում վարչակարգին աջակցելու կամ ընդդիմանալու համայնքի ունեցած պատճառներին:

Հետազոտական շրջանակների կողմից հիմնականում քննարկվել է ալավիների կողմից վարչակարգին աջակցելու խնդիրը, սակայն աչքաթող է արվել Սիրիայում գործող բասասական իշխանությանն ալավիների աջակցության հետզհետե անկման միտումը, որը հիմնականում պայմանավորված է բասասական վարչակարգի կազմում ալավիական փոքրամասնության արդեն երկրորդ սերնդով: Դինաստիաների երկրորդ սերնդի մոտ համերաշխության անկման տեսությունը պատկանում է միջնադարյան արաբ հեղինակ Իբն Խալդունին, որն իր դասական աշխատություններից մեկում, խոսելով «Ասաբիյայի» մասին, նշում է, թե դինաստիաների երկրորդ սերնդի մոտ ցեղախմբային կամ համայնքային համերաշխությունը սկսում է նվազել[6]:

Ալավիական համայնքն ասադական վարչակարգին կապող առաձգական կապերից է վարչակարգի կողմից երկրում համայնքային անապահովության մթնոլորտի ձևավորումը: Գործող վարչակարգը խթանում է ալավիական համայնքի համար համընդհանուր անապահովության մթնոլորտի ձևավորումը, որպեսզի, որպես ապահովության միակ երաշխավոր, ստանա ալավիների անվերապահ աջակցությունը և այդպիսով պահպանի իշխանությունը թե՛ երկրում, թե՛ ոչ միատարր ալավիական համայնքում:

Ալավիների համայնքային համերաշխության մակարդակի նվազման օրինակներ կան հետազոտող Ազիզ Նակկաշի՝ հոմսաբնակ ալավիների հետ հարցազրույցներում: Այսպես, ալավի, Սալիմ մականվամբ գնդապետներից մեկը նշում է, թե այսօր խնդիրը սիրիական բանակը չէ, այլ Սիրիան ամբողջապես: Թիրախը Սիրիայի միասնականությունն է (ալ-հադաֆ հուա վահդաթ Սուրիյա): Նա նկարագրում է ներքին շրջանների ալավիների (դախիլ) իրավիճակը: «Մենք այստեղ փոքրամասնություն ենք և սուննիներն ուզում են մեզ դուրս քշել

---

[6] Ibn Khaldun, The Muqaddimah, an Introduction to History, translated by Rosenthal F., London, 1967, p. 283.

այստեղից»: Գնդապետի կարծիքով խնդիրը Բաշար Ալ-Ասադի անձը չէ, այլ այն, որ, եթե նա գնա, ապա Հոմսի և նրա շրջակա բնակավայրերում բնակվող ալավիները վտանգի առաջ կկանգնեն: Նրանք ավելի վտանգված կլինեն, քան ծովափնյա շրջաններում բնակվող ալավիները (սահիլ)[7]: Սա օգնում է հասկանալ ալավիների ներհամայնքային հարաբերությունների էությունը: Հոմսաբնակ ալավիները գտնում են, որ իրենք իշխանական լծակներից զուրկ են, այնինչ ծովափնյա շրջաններում բնակվողներն իշխանությունն ամբողջովին կենտրոնացրել են իրենց ձեռքերում: Հոմսի ալավիների աջակցությունը վարչակարգին պայմանավորված է մի շարք գործոններով, նրանք աջակցում են ոչ միայն սոցիալապես վարչակարգից կախվածության մեջ լինելու պատճառով, այլև վարչակարգի տապալումից հետո բնաջնջվելու վախի հետևանքով, քանի որ սիրիական ապստամբությունը նրանց շրջանում դիտվել է որպես հակաալավիական շարժում: Հարցվածներից փոխգնդապետ Աբու Այմանը նշում է, որ բացի սահիլ և դախիլ ալավիների միջև առկա անհավասարություններից, պառակտվածություն կա նաև հենց ծովափնյա բնակավայրերի ալավիների շրջանում: Նա նշել է, որ իր թեկնածությունը բանակում ծառայողական առաջխաղացման էին ներկայացրել, սակայն իր տոհմացեղային պատկանելությունը խանգարեց ավելի ազդեցիկ լծակներ ունենալուն[8]:

Իշխանություններն ի սկզբանե, օգտագործելով սիրիական հատուկ ծառայությունները, ձգտել են մոբիլիզացնել հիմնականում գործազուրկ երիտասարդ ալավիներին՝ նրանց վարչակարգի հենարանը դարձնելու նպատակով:

Հատուկ ծառայությունների աշխատակիցները հրահանգավորել են հավաքագրված ալավիներին՝ Հոմսի սուննիաբնակ շրջաններում կազմակերպել նրանց պաշտպանությունը: Այս գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել Հոմսում՝ սրելով սուննի-

---

[7] Գոլդսմիթի ուսումնասիրության մեջ հստակ տարանջատում է դրվում ծովափնյա և ներքին շրջաններում բնակվող ալավիների միջև: Ծովափնյա և ներքին շրջանների միջև սահմանն անցնում է Սիրիայի հյուսիս արևմտյան շրջանում հյուսիսից հարավ ձգվող լեռնաշղթայով, որն առավելապես հայտնի է Ջիբալ Ալ-Ալաուիյին անունով:

[8] Goldsmith L., նշվ. աշխ., էջ 6:

ալավիական հարաբերությունները: Այդ հարաբերությունների սրման մասին հարցազրույցի ընթացքում օրինակներ է բերում պահեստազորի փոխգնդապետ Աբու Այմանը: Այսպես, 2011 թ. ապրիլին Հոմսի Զահրա շրջանում սպանվեցին ալավի բրիգադի գեներալ Աբդու Թելաուին, նրա երկու որդիներն ու եղբորորդին: Ալավի գեներալի սպանությունը շրջադարձային նշանակություն ունեցավ Հոմսի ալավիների համայնքում, քանի որ դրանից հետո վախի մթնոլորտը և ցասումը սկսեց տիրող դառնալ համայնքի կյանքում՝ նրանցից շատերին դրդելով վարչակարգին անվերապահ աջակցության: Լեոն Գոլդսմիթն, իր հետազոտության մեջ հղում կատարելով հրեա ուսումնասիրող, Հայֆայի համալսարանի դասախոս Յեվեթթե Թալհամիի «Ֆեթվաները և Սիրիայի ալավիները»[9] հոդվածին, հետաքրքիր օրինակ է բերում՝ նշելով, որ ալավիական համայնքի քաղաքական վերակազմավորման համար մեկ համապատասխան նախադեպ կա: 1936 թ. ալավիները կանգնած էին դժվարին ընտրության առաջ, նրանք կա՛մ պետք է միանային սիրիական նոր ձևավորվող պետությանը, կա՛մ պետք է պայքարեին իրենց ինքնավարության համար, որը ստացել էին ֆրանսիական իշխանությունների կողմից դեռևս 1920 թ.: Այդ ճակատագրական պահին Երուսաղեմի գլխավոր մուֆթի ազդեցիկ կրոնական և քաղաքական գործիչ Մուհամմադ Ամին Ալ-Հուսեյնին ֆեթվա է արձակում, որով հաստատում է ալավիների իսլամական լիազորությունները, ինչը լեգիտիմացրել է ալավիներին սուննիական իսլամական միջավայրում: Ավելի ուշ, ալավիական համայնքի առաջնորդներն ընտրեցին Սիրիական պետության հետ միավորումը:

«Արաբական գարնան» հետևանքով Սիրիայում ծայր առած բռնությունների հարաճուն ալիքը լուրջ մարտահրավեր է միջհամայնքային հարաբերությունների միջև լարվածության հաղթահարմանը: Այս դեպքում, ինչպես գրում է Գոլդսմիթը, ալավիների համար ամենալավ տարբերակը ասադական վարչակարգից և նրա հիմնական աջակիցներից աստիճանաբար հեռանալն է: Հակառակ պարագայում, անհրաժեշտ է 1936 թ. մուֆթի Մուհամմադ Ամին Ալ-Հուսեյնի ֆեթվային համահավասար

---

[9] Yvette Talhamy, The Fatwas and the Nysayri/Alawis of Syria, Middle Eastern Studies, № 46-2, 2010, p. 185-186.

երաշխավորություն, որպեսզի ալավիները կարողանան ավելի ազատ գործել և վարչակարգից նրանց անջատումը տեղի ունենա ավելի հեշտ:

Ալավիական համայնքում տեղի ունեցած իրադարձություններին մանրամասն անդրադարձ են կատարել «Human Rights watch» իրավաշտպան կազմակերպության փորձագետները:

2013 թ. օգոստոսի 4-ին մի շարք ընդդիմադիր զինյալ խմբավորումներ հարձակումներ են իրականացրել Սիրիայի Լաթաքիա շրջանի ալավիաբնակ գյուղերում[10]: Օգոստոսի 3-ի լույս 4-ի գիշերը նրանք հարձակումներ են գործում կառավարական զորքերի դիրքերի վրա, գրավում դրանք և մտնում ավելի քան 10 ալավիաբնակ գյուղեր: Իշխանությունները օգոստոսի 5-ին հակահարձակ են լինում շրջանները զինյալներից հետ վերցնելու նպատակով: Ամբողջական վերահսկողություն այդ տարածքներում կառավարական ուժերը հաստատում են միայն օգոստոսի 18-ին: Ջեկույցի պատրաստման ընթացքում իրավապաշտպան կազմակերպության աշխատակիցները հավաքել են ընդդիմադիր զինյալների կողմից սպանված 190 քաղաքացիների անունները, որոնցից 57-ը՝ կին, 18-ը՝ երեխա և 14 ծերեր[11]:

Բարուդան Լաթաքիայի շրջանի առաջին բնակավայրն է, որտեղ ընդդիմադիր զինյալները սկսել են իրականացնել իրենց գործողությունները՝ սպանելով բնակիչների: Զինյալները հարձակվել են նաև ալավիական մակամներից սրբատեղիներից մեկի վրա: Բարուդայում գրոհայինները սպանել են մի շարք ալավիական ընտանիքների՝ Շեբիլ, Բադուր, Ֆթայմա, Կուսեյբա բազմաթիվ անդամների:

Իրավապաշտպան կազմակերպության աշխատակիցների հետազոտությունը Լաթաքիայի ազգային հիվանդանոցի արխիվում և

---

[10] Ընդդիմադիր խմբերը գրոհի մասին տարբեր կայքերի միջոցով հայտարարություն էին տարածել մինչև հարձակումը: Ընդդիմադիրների հարձակում օպերացիան տարբեր անուններ ուներ, որոնցից հատկանշական էին «Աիշայի ժառանգների արշավանքը», «Բարուդայի գրոհը» և «Ծովափի ազատագրության գործողությունը»:

[11] Human Rights Watch Report, You Can Still See Their Blood, Executions, Unlawful Killings, and Hostage taking by Opposition Forces in Latakia Countryside, October 2013, p. 16.

նրանց զրույցները բժշկական անձնակազմի հետ ցույց են տվել, որ սպանվածները հիմնականում տանջամահ են արվել: «Human Right Watch»-ի հետազոտական խումբը 2013 թ. սեպտեմբերի 7-ին այցելել է Բարուդա գյուղի շեյխ Նաբհանի անվան այն սրբատեղին, որը զինված խմբավորումների կողմից ռմբահարությամբ քանդվել էր[12]: Դեռ ավելին, զինյալները մտադրված պղծել են մակամում գտնվող շեյխ Նաբհանի գերեզմանը: Օգոստոսի 21-ին Սուքուր Ալ-Իզզ կոչվող ծայրահեղական խմբավորումներից մեկը youtube վիդեոկայքում տեղադրել էր մակամի ռմբահարման ամբողջական տեսագրությունը[13]:

Պետք է նշել, որ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով հակամարտության կողմերը պատասխանատվություն են կրում կրոնական հաստատությունների վրա մտադրված հարձակումների համար: Կրոնական հաստատությունների վրա կանխամտածված հարձակումները, որոնք մարտական խնդրի կատարման նպատակներից դուրս են, համարվում են պատերազմական հանցագործություններ[14]:

Հարձակման առաջին իսկ օրը զինյալները առևանգել են հայտնի ալավիական ընտանիքից սերած շեյխ Բադր Ալ-Ղազզալին, որը Հաֆեզ Ալ-Ասադի[15] խորհրդականներից մեկի՝ Ֆադլ Ղազզալի բարեկամն էր: Շեյխի առևանգման պատասխանատվությունն իր վրա էր վերցրել ընդդիմադիր խմբավորումներից «Շամ Ալ-Իսլամը»: Խմբավորումը հետագայում Ղազզալին հանձնել է Ջաբհաթ Ալ-Նուսրայի զինյալներին, որոնք էլ ի վերջո սպանել են նրան[16]:

---

[12] Human Rights Watch interview with member of the National Defense Forces, Latakia countryside, Syria, September 8, 2013, p. 28.

[13] https://www.youtube.com/watch?v=tFogzxFeaL8

[14] http://www.icrc.org/eng/assets/files/other/icrc_002_0703.pdf, Միջազգային հումանիտար իրավունքով հակամարտությունների ընթացքում մշակութային հաստատությունների պահպանումն ամրագրված է 1954 թ. Հաագայի կոնվենցիայով:

[15] Հաֆեզ Ալ-Ասադի մասին տե՛ս Seale P., Asad, The Struggle For The Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989.

[16] http://www.youtube.com/watch?v=J7dBCHWABfA

Հաջորդը Նբեյթիե բնակավայրն է, որտեղ ընդդիմադիր զինյալները ոչ իրավաչափ ձևերով սպանել են շուրջ երկու տասնյակ մարդկանց երեք ալավիական Շիհադե, Իբրահիմ և Մարիամ ընտանիքների անդամներից:

Զանգվածային սպանություններ են տեղի ունեցել շրջանի Ալ-Համբուշիյա բնակավայրում, որտեղ զինյալները կրկին հարձակումներ են գործել ալավիական ընտանիքների վրա և առանց խտրականության սպանել նրանց: Այստեղ ամենաշատը տուժել է Դարվիշ ընտանիքը, որի ներկայացուցիչներից մեկի պնդմամբ օգոստոսի 4-ին զինյալները սպանել են ընտանիքի շուրջ 13 անդամների միաժամանակ տարբեր վայրերում:

Փաստերը ցույց են տվել, որ զինյալները խաղաղ բնակիչների սպանությունները շարունակել են նաև Սլեյբա Ալ-Համբուշիյա գյուղում, որտեղ նրանք սպանել են շուրջ 15 հոգու Սլեյմ, Դիբ և Իբրահիմ ընտանիքներից: Զինյալների կողմից խաղաղ բնակչության անխտրական և զանգվածային սպանություններն առանց խտրականության կատարելու վառ օրինակ է այս գյուղի 80 ամյա բնակչուհու Նասիբա Սալիմ Սլեյմի սպանությունը[17]:

Բլուտա գյուղը գտնվում է Բարուդա և Համբուշիյե բնակավայրերի միջև: Գրոհայինները շրջապատել են Բլուտան և մտել գյուղ: Կենդանի մնացած բնակիչներից Բաշիր Շեբիլը պատմել է իրավապաշտպաններին, թե ինչպես են զինյալները սպանել կնոջն ու հորը, վիրավորել իրեն, իսկ ամենափոքր որդուն գերի վերցրել: Բաշիրն ականատես է եղել, թե ինչպես ընդդիմադիր զինյալները վայրագություններից հետո այրել են սպանվածների դիակները: Զինյալների գործողությունները շարունակվել են Լաթաքիայի շրջանի մի շարք այլ գյուղերում նույնպես, ինչպիսիք են Աբու Մաքան, Արամոն, Բրամսան և այլն[18]:

Եզրակացնելով՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին՝

1. Սիրիայում քաղաքացիական պատերազմի ընթացքում ալավիական համայնքը բազմաթիվ մարդկային և նյութական կորուստներ

---

[17] Human Rights Watch, նշվ. զեկույց, էջ 41:

[18] Human Rights Watch, նշվ. զեկույց, էջ 52-57:

է ունեցել, ծայր առած սուննիական արմատականության պայմաններում խախտվել է սուննի-ալավիական հարաբերություններում դեռևս Հաֆեզ Ալ-Ասադի ժամանակներից ձևավորված հավասարակշռությունը: Ալավիական համայնքի Նումայլաթիյա և Մատավիրա տոհմերի հիմնականում Ասադ և Մախլուֆ ընտանիքների ներկայացուցիչները Սիրիայում զբաղեցրել և զբաղեցնում են բարձր իշխանական պաշտոններ: Նրանք բանակում որոշում կայացնող բարձր հրամանատարական պաշտոնների են նշանակվել, ղեկավարել են հատուկ ծառայությունները:

2. Իշխանական համակարգում ալավիական գործոնը պատճառ դարձավ բնակչության սուննի մեծամասնության շրջանում ալավիների դեմ ոչ հրապարակային, սակայն հարաճուն դժգոհության ձևավորմանը:

3. «Արաբական գարնան» արդյունքում Սիրիայի շուրջ ձևավորված միջազգային լարվածության համատեքստում առանձին ուժային կենտրոններ, հատկապես Սաուդյան Արաբիան և Կատարը, կարողացան օգտագործել երկրում առկա սուննիական դժգոհությունը: Նրանք սկսեցին Սիրիա ուղարկել սալաֆիական ռազմական խմբավորումներ, որի արդյունքում հակամարտություն էլ ավելի սրվեց, իսկ բռնությունների ալիքը Սիրիայում ավելի բարձրացավ:

VARDANYAN GRIGOR
(IOS)

ALAWITE COMMUNITY AND SYRIAN CRISIS

In this article we tried to focus on Alawite community within Syrian crisis. The examined material is about intercommunity relations and transformations. This article is mainly organized base on three researches. The first is telling us about the alawites' life in Homs and surrounded outskirts of that town. This research was done by interviewing alawi inhabitants of Homs representing different layers of society. The second is a thorough examination of alawites military-political role and their capabilities of keeping authority in Syria in such a long period. Third is the report entitled "You can still see their blood" by Human Rights Watch.This report is

based on a field investigation in September 2013 by a Human Rights Watchresearcher to Latakia and its countryside. Human Rights Watch visited five of the villages that the opposition fighters attacked during the operation. Human Rights Watch requested and received permission from the Syrian government to operate officially in the country for the purpose of conducting this investigation. At the end we arrived at some conclusions on Syrian crisis and the future of alawite community.

ԱՑՎԱՋՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
(ԵՊՀ)

ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԷԹՆՈՆԻՄՆԵՐՆ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ

Թյուրքալեզու ժողովուրդների մասին խոսելիս լեզվական ընդհանրությունից բացի առաջ է գալիս նրանց բոլորին ընդհանրացնող ևս մեկ հասկացություն՝ ցեղանունը:

Պատմության ընթացքում ինչպիսի էթնոնիմների շուրջ են ընդհանրացվել թյուրքալեզու ժողովուրդները և ինչ պատմական իրադարձությունների հետևանքով այդ ժողովուրդներն ի մի բերվեցին «թյուրք» ցեղանվան շուրջ:

Նախ պարզենք, թե որոնք են էթնոսի բնորոշիչ հիմնական հասկացությունները, երբ է մարդկային խումբը համարվում էթնոս.

«Էթնոսը որոշակի աշխարհագրական տարածքում տևական ժամանակ բնակվող և կայուն ժառանգականություն ունեցող մարդկային խումբ է, որի անդամները ոչ միայն ունեն ընդհանուր նմանություն, այլ նաև ունեն հարաբերականորեն կայուն մշակութային գծեր, այդ թվում՝ լեզուն և հոգեկերտվածքը, իրենց միասնականության գիտակցությունը, որը բխում է մյուս նմանատիպ մարդկային խմբերից զատվելու անհրաժեշտությունից, ինչն արտահայտվում է էթնոնիմի ինքնանվան մեջ»[1]:

«Միավորվել էթնոսի մեջ» հնարավոր չէ, քանի որ տվյալ սուբյեկտի կողմից պատկանելությունը այս կամ այն էթնոսին ընկալվում է անմիջականորեն, իսկ նրան շրջապատողների կողմից ընդունվում է որպես անվիճարկելի փաստ»[2]:

---

[1] Бромлей Ю., Очерки теории этноса, М., 1982, с. 57.

[2] Гумилев Л., Этногенез и биосфера земли, Л., 1974, с. 39.

Էթնոսի բնութագրիչ հասկացություններն են մշակույթը, նրա հիմնական բաղադրիչ լեզուն, էթնիկական ինքնաբնակալումը, հոգեբանությունը, էնդոգամությունը և էթնոնիմը[3]:

Մշակույթը էթնոսի գոյության համար բացարձակ չափանիշ չէ, քանի որ մշակութային արժեքները ժամանակի ընթացքում փոփոխվում են: Տվյալ մարդկային խումբը կարող է ապրել բոլորովին այլ աշխարհագրական, քաղաքական, կենցաղային պայմաններում, կամ զարգացնելով սեփական մշակույթը այն փոփոխել անճանաչելիության աստիճան, բայց կրկին իրեն համարել տվյալ էթնոսի անդամ:

Մշակույթի ցայտուն բաղադրիչներից է լեզուն:

Էթնոսի կազմավորումը և լեզվի ձևավորումը համաժամանակյա երևույթներ են, իսկ արդեն ձևավորված էթնոսի համար լեզվական ընդհանրությունն այլևս էական նշանակության չունի[4]:

Թյուրքալեզու ժողովուրդները ներկայումս սփռված են Եվրասիա մայրցամաքի մեծ մասում, նրանք ունեն ռասայական տարբեր հատկանիշներ: Պատմականորեն թելադրված պայմանների և քոչվոր կյանքի բերումով նրանք նաև տարբեր մշակույթների կրողներ են, սակայն ներկայացվում են ըստ ընդհանուր լեզվական հիմքի, այն է, որ նրանք թյուրքալեզու են:

Լեզուն այսօր թյուրքալեզու ժողովուրդների, թերևս, միակ ընդհանրական բնութագրիչն է: Սակայն մեր ժամանակներում այն նրանց բնութագրական բացարձակ հատկանիշ չի կարող լինել, քանի որ այդ լեզուներով խոսում են ոչ միայն իրենց «թյուրքական ժողովուրդներ» համարող ազգերը:

Որպես ցայտուն օրինակ Թուրքիայի Հանրապետության բնակչությունն է, որը էթնիկական տեսանկյունից մլատարր չէ: Թուրքիայում ապրող տարբեր ազգային և կրոնական փոքրամասնությունների մեջ տարածված է թուրքերենը, սակայն նրանցից շատերն իրենց էթնիկ թուրք չեն համարում:

Ահա, այստեղ էլ առաջ է գալիս էթնիկական ինքնագիտակցության խնդիրը, որն արտացոլվում է էթնոնիմի մեջ:

---

[3] Бромлей Ю., նշվ. աշխ., էջ 129-135:

[4] Նույն տեղում, էջ 114-115:

Էթնոնիմը այն հասկացությունն է, որը տրվում է տվյալ էթնոսին իր խմբի անդամների կողմից՝ որպես այլ մարդկային խմբից տարբերակող անվանում: Էնդոէթնոնիմով ինքն իրեն տարբերակող մարդկային խմբի անդամների մոտ արդեն ձևավորված է լինում այն ինքնագիտակցությունը, որ իրենք պատկանում են տվյալ խմբին: Էթնոսի յուրաքանչյուր անդամ դառնում է իր էթնոսին հատուկ էթնիկական հատկությունների կրողը՝ մշակույթի, այդ թվում՝ լեզվի, կենցաղի, հոգևոր արժեքային համակարգի և այլն: Սակայն անգամ այն դեպքում, երբ զանազան հանգամանքների բերումով տվյալ էթնոսի անդամները ապրում են այլ աշխարհագրական տարածքում, խոսում են այլ լեզվով և դառնում են այլ մշակութային համակարգի կրողը, բայց պահում են իրենց էթնիկական ինքնագիտակցությունը, ապա կրկին համարվում են տվյալ էթնոսի անդամ:

Էթնոնիմ հասկացությունը նույնպես էթնոսի բնութագրման բացարձակ բնութագրիչ չէ, այն կարևորագույն բաղադրիչ է միայն տվյալ էթնոսի կազմավորման փուլում: Իսկ շատ դեպքերում իրական էթնոսը և տվյալ էթնոսի անվանումը՝ էթնոնիմը, համարժեք չեն: Հաճախ հանդիպում են տարբեր էթնոսներ, որոնք կրում են միևնույն էթնոնիմը, և հակառակը միևնույն էթնոսը կարող է բազմաթիվ այլ անուններով կոչվել: Օրինակ, «հռոմեացիներ՝ romani» էթնոնիմով սկզբում տարբերակում էին վաղ Հռոմի պոլիսի քաղաքացիներին, բայց ոչ երբեք նրանց հարևան իտալիկներին և նույնիսկ՝ Լացիում մարզի լատիններին: Հայտնի է, որ մ.թ. 212թ. *հռոմեացիներ* սկսեցին կոչվել նաև կայսրության հպատակ հույները, հրեաները, բերբերները, գերմանացիները, և այլն[5]: *Հռոմեացի* հասկացությունը այլևս կորցրեց մարդկային որոշակի խմբի անուն լինելու նշանակությունը, անգամ լեզուն չէր կարող համախմբել այս ժողովուրդներին, նրանց համախմբում էր միմիայն պատմական ճակատագիրը:

Հաշվի առնելով էթնոսի ձևավորման համար անհրաժեշտ բոլոր բնութագրիչ հասկացությունների կարևորությունը և միևնույն ժամանակ անկայունությունը, փորձենք պատմական անդրադարձ կատարել այսպես կոչված «թյուրքական աշխարհին» տրված էթնոնիմներին:

---

[5] Гумилев Л., նշվ. աշխ., էջ 67-69:

Թյուրքալեզու ժողովուրդների հավանական նախնիների մասին առաջին հիշատակությունները մեզ են հասել չինական պատմագրության շնորհիվ[6]: Այս աղբյուրներում թյուրքալեզու ժողովուրդների նախնիները նույնականացվում են հոների հետ, որի իսկությունը լեզվական փաստերի բացակայության պատճառով բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս մինչ այսօր:

Թյուրքալեզու ժողովուրդների նախնիների մասին վկայող ոչ օտար առաջին աղբյուրները ենիսեյաօրխոնյան արձանագրություններն են, որոնք գրվել են *Թյուրքական հաքանություններ* անուններով հայտնի ցեղային միավորումների գոյության ժամանակահատվածում[7]: Այս հաքանությունների գոյությունը հիմք է դարձել նաև արաբապարսկական պատմագրության էջերում ընդհանրացնելու լեզվական և ռասայական մոտ հատկանիշներ ունեցող ցեղերին մեկ անվան շուրջ, որն ինչի շնորհիվ տվյալ ժամանակաշրջաններից մինչ մեր օրերը բոլոր թյուրքալեզու ժողովուրդները ի մի են բերվում «թյուրքական» ընդհանուր հասկացության ներքո:

Նշենք, որ միջնադարում հատկապես իսլամական աշխարհում էթնիկական պատկանելությանը նշանակության չէր տրվում, կարևորվում էր կրոնական կողմնորոշումը, ուստի թյուրք էթնոնիմն ընդհանրացնում էր լեզվական նմանությունը և մարդաբանական մոտ հատկանիշները:

Իրականում թյուրքալեզու ցեղերի և ժողովուրդների դասակարգումները կարելի է դիտարկել ժամանակային տեսանկյունից:

Տարբեր էթնոնիմների շուրջ նրանց համախմբելու անհրաժեշտությունը, ըստ մեզ, առաջ է եկել առաջին հերթին միջնադարյան ասիական հասարակության ներսում *էթնոս* հասկացությունը ոչ այդքան կարևորելու առանձնահատկությունից:

Թյուրքալեզու ցեղերի դասակարգման առաջին եւ ամենահայտնի տարբերակներից է օղուզական ցեղերի դասակարգումը, որը հայտնի է

---

[6] Сыма Цянь, Исторические записки (Ши Цзи) (XXXII,8), перевод и комментарий - Р. В. Вяткина и В. С. Таскина, т. VIII, М., 2002.

[7] Малов С., Памятники древнетюркской писменности Монголии и Киргизии, М.-Л., 1959.

դեռևս միջնադարյան հեղինակներ Մահմուդ Կաշգարիի[8], Ռաշիդ ադ Դինի[9] և Աբուլ Ղազիի[10] ստեղծագործություններում, որտեղ ներկայացվում են օղուզական ծագում ունեցող ցեղերի մասին ավանդազրույցները: Այս դասակարգումներն, իհարկե, չեն ներառում բոլոր թյուրքալեզու ցեղերին, այլ միայն նրանց օղուզական հատվածը, որն իրեն միջնադարում ավելի շատ օղուզական էր համարում, քան թյուրքական: Սա ակնհայտ երևում է ժողովրդական բանահյուսության էջերում:

Մյուս փուլը, որը թյուրքալեզու ցեղերին ի մի բերելու երկրորդ հնարավորությունն է ստեղծել, ինչպես արդեն նշեցինք թյուրքական երկու հաքանությունների գոյության ժամանակաշրջանն էր V-VIII դդ.:

Հաջորդ փուլն առնչվում է մոնղոլաթաթարական արշավանքների հետ:

Հայտնի է, որ թյուրքալեզու ժողովուրդներից շատերի ձևավորման բուն գործընթացը տեղի է ունեցել ողջ միջնադարի ընթացքում, երբ նրանցից շատերի նախնիներն արդեն տարածված են եղել Արևելյան Եվրոպայի, Առաջավոր Ասիայի և Կենտրոնական Ասիայի տարածքներում: Նրանք ունեցել են իրենց էնդոէթնոնիմները, սակայն մտել են, օրինակ Մոնղոլական կայսրության կազմի մեջ, իսկ նրանց տրվել է ընդհանրական *թաթարներ կամ մոնղոլաթաթարներ* անվանումը:

Թաթար էթնոնիմի ծագման, նրա կիրառության լայն աշխարհագրության մասին տարբեր վարկածներ կան[11]: Ինչ վերաբերում է *թաթար* էթնոնիմի *թաթ* արմատի առաջացմանը, ապա հայտնի է, որ *թաթ* անվանվել են ֆարսի լեզվով խոսողները, որով հասկացվել են նրանց լեզվական առանձահատկությունները, խոսքի

---

[8] Kaşgarlı Mahmud, Divân-ü Lügati't-Türk, Kabalcı Yayınevi, Istanbul, 2005.

[9] Фазлаллах Рашид ад Дин, Джами-ат-таварих, Огуз–Наме, перевод с персидского, комментарии, примечания и указатели Р. М. Шукоровой, Баку, 1987.

[10] Кононов А., Родословная туркмен, сочинение Абу-л-Гази хана хивинского, М.-Л., 1958.

[11] Бушаков В., Этнонимы "татар" во времени и пространстве, www.turkolog.narod.ru.pdf

տարբերությունը այլ իրանալեզու բնակչությունից[12]: Սկզբում դրանք միայն իրանալեզուներն էին, իսկ հետո նաև օտարազգիները, *թաթարներ* սկսել են անվանվել նաև թյուրքալեզու ցեղերը:

Թյուրքալեզու ժողովուրդներին տրվող հավաքական *մոնղոլաթաթարներ* անվանումը գալիս է XVII դ. եվրոպական մի քարտեզից: Այն լիովին կեղծ էր և չէր արտացոլում մոնղոլական կայսրության իրական էթնոլեզվական իրավիճակը:

Ռուսական կայսրությունում *«թաթարներ»* ցեղանունը, ըստ ռուս գիտնական Վ.Ա.Բուշակովի, տրվել է տարբեր ծագմամբ ժողովուրդների, այն հոմանիշ է եղել նաեւ *«թյուրք»* ցեղանվանը: Այն վերաբերվել է Ղրիմի թաթարներին եւ վոլգյան թաթարներին, նողայներին, կումիկներին, Կովկասի թյուրքալեզու բնակչությունը, Ալթայում տելեուտներին, կալմիկներին, եւ այլն:

Թաթ էթնոնիմը պահպանվել է մինչ այսօր Ադրբեջանի և Իրանի թաթերի շրջանում և բոլորովին էթնիկական նշանակություն չունի, քանի որ կան թաթ-հրեաներ, թաթ-հայեր և այլն:

Հայերի շրջանում ընդունված է հաճախ Արևմտյան Հայաստանը անվանել Տաճկահայաստան, որում *տաճիկ* տերմինը ամենևին էլ կապ չունի Թուրքիայի էթնիկ թուրքերի էթնիկական առանձահատկությունների հետ:

Տաջիկ/տազիկ/տաչիկ էթնոնիմը նույնպես կապված է *թաթ* բառի հետ: Ըստ պրոֆեսոր Գ. Ասատրյանի այն միջին պարսկերենով XI դարում նշանակում էր *արաբ*, որն օգտագործում էր թյուրքալեզու բնակչությունը և այդպես անվանում իսլամ ընդունած պարսիկներին:

Եթե ողջ միջնադարի ընթացքում էթնոսի գաղափարը հատկապես իսլամական աշխարհում չէր կարևորվում, ապա նոր ժամանակներից սկսած հատկապես արևմուտքի ազդեցությամբ առաջացավ մարդկային հասարակությունը էթնիկական խմբերի բաժանման անհրաժեշտությունը, որով և սկիզբ դրվեց հետագայում ազգային շարժումների և ազգային հիմքով պետությունների ստեղծմանը:

Թաթար ընդհանրական անունից հրաժարվելու անհրաժեշտությունը կար ընդհուպ մինչև վերջին ժամանակները: Գորբաչովյան Վերակառուցման ժամանակաշրջանում Ղրիմի և վոլգյան

---

[12] Кляшторный С., Древнетюркские рунические памятники, М., 1964, с. 123.

թաթարների շրջանում առաջանում է *թաթար* էթնոնիմից ազատվելու հարցը: Նրանք ցանկանում էին կրել իրենց էնդոէթնոնիմները՝ *բոլգար և կիրիմլի*[13]:

Եվ ընդհանրապես, մասնագիտական գրականության մեջ այսօր արտացոլվում է ընդհանրական տերմիններից, ինչպես օրինակ, *մոնղոլաթաթարներ, թաթարներ* արհեստական էթնոնիմներից ազատվելու անհրաժեշտության խնդիրը, որովհետև այսօր, Կենտրոնական Ասիայի ժողովուրդների շրջանում, լինեն դրանք ռուսահպատակ, թե անկախ պետությունների ժողովուրդներ, ընդունելի է դառնում նրանց առանձին էթնոնիմների, մշակութային առանձնահատկությունների վերհանումը և վերաարժեքավորումը:

Թուրքմեն, թորքման էթնոնիմը ավելի նեղ աշխարհագրություն ունի, սակայն այն նույնպես արհեստականորեն առաջացած էթնոնիմ է (*թյուրք-իման արաբ.-ճշմարտությունը ճանաչած թյուրք, և թյուրք-մանենդպարսկ.-թյուրքի նման)* նշանակություններով[14], որով անվանվել են հատկապես օղուզական ծագում ունեցող ցեղերը կրկին արաբապարսկական ազդեցությամբ պայմանավորված:

Ժամանակային տեսանկյունից դիտարկելիս մյուս կարևորագույն փուլը թյուրքալեզու ժողովուրդների ընդհանրացման համար տասնիններորդ դարն է, որ կարելի է համարել թյուրք էթնոնիմի վերածննդի ժամանակաշրջանը. դա կապվում է թյուրքականության գաղափարախոսության առաջացման հետ:

Մինչև 20-րդ դարի սկիզբը Օսմանյան Կայսրությունում բնակվող թյուրքալեզու ցեղերին պաշտոնական *թյուրք* անվանում չի տրվել: Առհասարակ, միջնադարում *թյուրք* անվամբ հասկացվել է ռամիկ, հասարակ ժողովուրդը:

Ընդհանուր նախնու փնտրտուքը ռուսահպատակ թյուրքալեզու բնակչության շրջանում, իսկ կարճ ժամանակ անց՝ Օսմանյան կայսրության մտավորականությանը վերադարձրեց թյուրք էթնոնիմին: Ընդհանուր հայրենիքի և թյուրք էթնոնիմի վերարժևորումն, իհարկե, չտվեց սպասվող արդյունքը. Թյուրքականության գաղափարախոսությանը չհաջողվեց հասնել իր նպատակին,

---

[13] Бушаков В., նշվ. աշխ., էջ 2-3:

[14] Еремеев Д., Этнонимы, М., 1970, с. 133-141:

փոխարենը այն հիմք հանդիսացավ *«թուրք ազգ»* հասկացության առաջացման համար:

Իսկ մեր օրերում ինչպես է օգտագործվում ընդհանրացնող թյուրք էթնոնիմը:

Մի կողմից մենք տեսնում ենք մի դաշտ, որը շրջանառվում է ոչ գիտական շրջաններում: Դա տարբեր ոլորտներում առասպելական, գգացմունքային ֆոնի ապահովումն է հզոր նախնիների մասին, որը հաճախ հիմք է հանդիսանում մշակութային միասնականություն ապահովելուն Թուրքիայի և թյուրքալեզու այլ ժողովուրդների միջև:

Մյուս կողմից, Կենտրոնական Ասիայում, Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության գիտական շրջանակներում ստեղծվում է թյուրքալեզու ժողովուրդներին մեկ ընդհանուր հարթակում գենետիկորեն իբրև նույն ծագումն ունեցող «թյուրքական» ժողովուրդների դասակարգման մասին «փաստարկված» գրականություն, որն ունի ոչ միայն զուտ գիտական նշանակություն, այլ հաճախ հատկապես մեր հարևան երկրներում քաղաքական ենթատեքստեր է պարունակում: Նման դասակարգումները երբեմն դուրս են գալիս միայն թյուրքալեզու ժողովուրդների դասակարգման շրջանակներից՝ հակագիտական փորձեր կատարելով նրանց շարքում դասելու նաև այլ էթնոլեզվական հիմք ունեցող ժողովուրդների:

Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության էթնիկական նկարագիրը, հակառակ այդ երկրներում գործադրվող ջանքերի, միատարր չէ:

Մեր հարևան երկրներում տեղ գտած գործընթացները կարող ենք հարաբերականորեն կոչել լոկալ «թյուրքացում»: Այսինքն, երբ մեր օրերում թյուրքականության գաղափարախոսությունն ավելի առասպելական բնույթ է ստացել, Թուրքիան և Ադրբեջանի կառավարական շրջանները իրականում իրենց բնակեցրած տարածքներում կայուն դիրք և պատմական ամուր հենքեր ունենալու համար փորձում են այդ տարածքները *թյուրքականացնել* գիտականորեն: Ադրբեջանի Հանրապետությունն ստեղծում է «բաժանված ազգի» հասկացությունը՝ Իրանական Արևելյան և Արևմտյան Ադրբեջանների թյուրքալեզու բնակչության հետ իբր

միավորվելու անհրաժեշտություն տեսնելով[15]: Միևնույն ժամանակ ստեղծվում է հսկայական գրականություն, որով փորձ է արվում ապացուցել թյուրքալեզու բնակչության բնիկ բնակչություն լինելու գաղափարը:

AYVAZYAN SHUSHANIK
(YSU)

THE ETHNONYMS OF TURKIC SPEAKING PEOPLES ACCORDING TO STAGES

The first and most known stage of classification of Turkic speaking peoples is known in behalf of such medieval authors, as Mahmud Kashgari, Rashid ad Din and Abul Ghazi. In this sources we can find the classification of oguz tribes. Mostly this classification is identified with the classification of hunnic tribes, which were known in historical area from the III century B.C. to V century A.D. This problem, concerning the identifcvation of the huns and the oguz tribes has not yet been solved because of the poorness of linguistic sources.

The second stage of classification of Turkic speaking peoples is the time of appearing the Turkic khaganats in historical area. The ethnonym Turk has been used in Arabic and Persian literature and historiography since the VIII century and spread almost all over the world.

The next stage of unifying the Turkic speaking peoples are the Mongolian times, when almost all the tribes associating with the Mongols were known mostly as Tatars.

The last stage was the nineteenth century, the time of rebirth of the Turk ethonym and appearing ideology of Turkism.

---

[15] Асатрян Г., Этническая композиция Ирана от "Арийского протора" до азербайджанского мифа, Е., 2012, с. 39.

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
(ԵՊՀ)

ՆԱԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԴՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՍԻԲԱՈՒԵՅՀԻ «ԱԼ-ՔԻԹԱԲ» («ԳԻՐՔԸ») ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ

Սիբաուեյհիի (8-րդ դար) «Ալ-Քիթաբ» («Գիրքը») աշխատության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն եղել է արաբական քերականության առաջին համապարփակ ձեռնարկը իր համապատասխան տերմինաբանությամբ լայնորեն արտացոլելով արաբերենի յուրահատկությունները: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է արաբական քերականական համակարգը, արաբական պոեզիան և հանգավորումը:

Գրքում իր անկյունաքարային տեղն է զբաղեցնում ճարտասանությունը (علم البلاغة - 'ilm al-balaġa)[1] և մասնավորապես վերջինիս ճյուղերից մեկը հանդիսացող իմաստաբանությունը կամ իմաստների գիտությունը (علم المعاني-'ilm al-ma'āny)[2]: Ճարտասանական արվեստի ավանդույթը արաբների մոտ գնում է դեպի խոր վաղեմություն: Դեռևս նախաիսլամական ժամանակաշրջանում արաբական քոչվոր և նստակյաց ցեղերի անդամները հավաքվում էին տարվա մեջ որոշակի ժամանակահատվածում տոնավաճառներում, որտեղ բեդվին բանաստեղծները և հռետորները, ովքեր ներկայացնում էին տարբեր ցեղեր, մենամարտում էին բանաստեղծական արվեստում ու ճարտասանության մեջ: Նման մրցությունները արաբների մոտ տարածված էին հետագա դարերում: Իսլամի ձևավորումից հետո կրոնաքաղաքական ելույթների կենտրոններ դարձան մզկիթները, որտեղ ուրբաթօրյա աղոթքների ժամանակ խալիֆաները և

---

[1] Արաբերենի տառադարձումը կատարվել է ISO 233 տառադարձման համակարգով:

[2] محمد حسن عبد العزيز – كتاب سيبويه – مادته و منهجه و آثاره في العلوم العربية و الإسلامية، ص 39

զորահրամանատարները հանդես էին գալիս իրենց ծրագրերի շարադրմամբ[3]:

Մուսուլմանական հռետորական արվեստի նմուշ կարելի է համարել Մուհամմադի խոսքերը, ով իր քարոզչությունը անում էր Մադինայի մզկիթում: Այստեղ ընդունված ուրբաթօրյա աղոթքից հետո մարգարեն ողջույնի խոսքով դիմում էր հավաքված ժողովրդին, խրատներ էր անում կամ համայնքի տարբեր հարցերի շուրջ որոշումներ կայացնում: Մուհամմադի մահից հետո այս ավանդույթը մեծ տարածում գտավ մուսուլմանական համայնքում, այդ թվում Սիրիայում, Իրաքում և այլուր:

Այսպիսով, նման ճառերի ընթերցումը սկիզբ առավ 7-8-րդ դարերում և իր զարգացումը ապրեց հետագա ժամանակներում: Այս արվեստը, անցնելով ուսուցչից աշակերտին և այդպես շարունակ, սկսեց ենթարկվել որոշակի օրենքների, որոնք արդեն 9-րդ դարում ստացան կանոնակարգված համակարգի տեսք՝ ամրագրվելով ընդհանուր «ալ-բալաղա» (البلاغة - al-balāġa)՝ «ճարտասանություն» անվան տակ[4]:

Արաբական իրականության մեջ ճարտասանությունը իր զարգացման բարձր մակարդակին է հասել հատկապես 11-րդ դարում՝ Աբդ ալ-Կահիր ալ-Ջուրջանիի շնորհիվ: Այնուամենայնիվ, որպես այդ գիտության բաղկացուցիչների շտեմարան հանդիսացող աղբյուր, անհրաժեշտ է նշել «Ալ-Քիթաբ» աշխատությունը, քանի որ այստեղ անդրադարձ է կատարվել ճարտասանության հետ առնչվող մի շարք հարցերին, որոնք գերազանցապես կապված են իմաստաբանության գիտության բաժինների հետ: Դրանք են՝ զեղչումը և հավելումը (الحذف و الزيادة – al- ḥiḏf wa az-ziyāda), նշումը և քողարկումը (الذكر و اضمار al-ḏikr wa al-iḍmār), նախադրումը և հետադրումը (التقديم و التأخير – al-taqdim wa al-ta'ḫir), հարցումը և կրճատումը (الاستفهام و قصر – al-istifhām wa al-qaṣr), առանձնացումը և միավորումը (الفصل و الوصل – al-faṣl wa al-waṣl), ֆիգուրը

---

[3] Фильштинский И., История арабской литературы, т. 1, V – начало X века, М., 1985, с. 245.

[4] Նույն տեղում, էջ 247:

(փոխաբերությունը) (المجاز العقلي – al-majāz al-aqliy), վիճակի համապատասխանությունը (مقتضى الحال - muqtaḍa al-ḥāl) և այլն:

Սույն հոդվածում նշվածներից կդիտարկվի նախադրումը և հետադրումը: Արաբերենում գոյություն ունի բառերի դասավորության որոշակի սկզբունք: Դասավորության խախտումը կամ նախադասության անդամների տեղափոխումը էական դեր ունեն խոսքի իմաստային ընկալման մեջ, այսպիսով հոդվածի նպատակը այս դեպքերին անդրադառնալն է՝ որպես նման փոփոխությունների հիմք հանդիսացող Սիբաուեյհիի «ալ-Քիթաբ» աշխատության վրա հիմնվելով:

Սիբաուեյհիի աշխատության որոշ գլուխներում տեղ են գտել նախադրումը և հետադրումը, և հավանականությունը մեծ է, որ նա գիտնականներից եղել է առաջինը, ով անդրադարձել է ճարտասանական այդ հնարքներին, եթե համեմատենք միջնադարից մեզ հասած քերականական աշխատությունների բովանդակությունների հետ: Կարելի է նկատել, որ Սիբաուեյհիին նախորդող գիտնականները, ինչպես օրինակ՝ Յունուս իբն Հաբիբը (8-րդ դար), ծանոթ են եղել նախադրմանը և հետադրմանը, սակայն նրանք կանգ չեն առել դրա ճարտասանական առանձնահատկությունների վրա, իսկ Սիբաուեյհին նախադրումը և հետադրումը խոսքում վերլուծելիս ուշադրություն է դարձրել ճարտասանական այն կարևոր նշանակությանը, որն ըմբռնեցին և որպես այդպիսին մշակեցին նրան հաջորդող քերականագետները և ճարտասանները, քննարկեցին կողմնակիցները և հակառակորդները:

Գործող-ենթակային նախորդող բայի մասին գլխում[5] Սիբաուեյհին ասում է, որ, եթե «ուղիղ խնդիրը բերվի առաջ, իսկ գործող-ենթական դրվի հետո, ապա ընդունված ضرب عبد الله زيدا- ḍaraba ʻabdallah zeydan «Հարվածեց Աբդալլահը Զեյդին» տարբերակը կվերափոխվի ضرب زيدا عبد الله - ḍaraba zeydan ʻabdallah – «Հարվածեց Զեյդին Աբդալլահը», տարբերակին[6]: Այստեղ նշվում է, որ եթե գործող-ենթական նախադաս

---

[5] باب الفاعل الذي يتعداه فعله الى المفعول، ج. 1، ص 12 سيبويه – الكتاب

[6] Նույն տեղում:

դիրքում է՝ հղվելով առաջին տարբերակին, ապա այդ երևույթը ընդունված է համարել որպես «լավ արաբերեն» (عربي جيد – ʻarabi jayyid)[7]:

Մյուս կողմից, եթե խոսքի ուշադրությունը կենտրոնացվում է ոչ թե գործող-ենթակայի, այլ հենց գործողությունը իր վրա կրողի՝ բուն խնդրի վրա, ապա երկու տարբերակներն էլ կարող են ընդունվել: Այստեղ հարկ է նշել նախադրման այն կարևոր բացատրությունը, որ այն նախապատվություն է տալիս ուշադրությանը և կենտրոնացմանը (عناء و اهتمام - ʻina' wa 'ihtimām)՝ նախորդողի դիրքում գտնվելով[8]: Այսպիսով, ուղիղ խնդրի նախորդումը բային ունի ճարտասանական նպատակ, այն է՝ ուշադրությունը և կենտրոնացումը: Նման կերպով, եթե բերվում է ضرب زيد zeydan ḍarabtu «Զեյդին հարվածեցի» օրինակը, ապա այստեղ ակնհայտորեն երևում է, որ ուշադրությունը կենտրոնացվում է խնդրի վրա և բայը հանդես է գալիս հետադիր դիրքում՝ ելնելով արդեն նշված ճարտասանական նպատակներից՝ հավասար ضرب زيد عمرا - ḍaraba zeyd ʻamran – «Հարվածեց Զեյդը Ամրին» և ضرب عمرا زيد - ḍaraba ʻamran zeyd – «Հարվածեց Ամրին Զեյդը»[9]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Սիբաուեյհին արդեն ամրագրել էր ճարտասանի այն նպատակը, որն էր՝ հասցնել իր խոսքը լսողին՝ կենտրոնանալով և ուշադրությունը սևեռելով կարևոր մանրամասների վրա:

Առհասարակ արաբերենում նախադասության մեջ առկա անդամների դասավորության մասին խոսելիս նկատվում է, որ ենթակա-բայ կամ բայ-ենթակա դասավորության տարբերակները հավանական են և տարածված: Առաջին դեպքում անձը, սեռը և քանակը ամբողջությամբ համաձայնեցվում են բայի հետ, իսկ երկրորդ դեպքում եթե նախադիր է բայը, ապա ենթական համապատասխանում է բային միայն սեռով, բայց ոչ քանակով (օրինակ հոգնակի թվով դրված անշունչ գոյականները վերաբերում են եզակի իգականին). սա արտացոլված է քերականական մեկնաբանության մեջ բայ+արական սեռի ենթակա կամ բայ+իգական սեռի ենթակա հարաբերակցություններում:

---

[7] Նույն տեղում:

[8] سيد رضا – أثر سيبويه النحوي في نشأة علم البلاغة، مجلة آفاق الحضارة الإسلامية، 1969

[9] Նույն տեղում:

Օրինակներ՝

جاء الأولاد - jā'a al-awlād – «Եկան երեխաները»

إنّ الأولاد جاؤا - 'inna al-awlād jā'ū – «Իսկապես եկան երեխաները»[10]:

Արաբերեն նախադասությունը գլխավորապես նկարագրվում է որպես բայ-ենթակա-ստորոգյալ (այսուհետ Բ-Ե-Ս) երկընտրանքային ենթակա-բայ-ստորոգյալ կապով: Թողնելով Բ-Ե-Ս գերակշռության հարցը Ե-Բ-Ս-ի նկատմամբ դասական արաբերենում, ժամանակակից արաբերենում կամ բարբառում բայով սկսվող նախադասությունների ընդունված տարբերակներում հնարավոր է գտնել մի շարք խախտումներ, որտեղ բայն ու ենթական իրար հարևանությամբ չեն գտնվում և չկա ենթակա-ստորոգյալ խիստ կարգ, ինչպես օրինակ բայ-ստորոգյալ-ենթակա և այլ բարդ կարգեր:

Օրինակներ՝

كتب جرجي زيدان الرواية – kataba jirjy zaydān ar-riwāya – «Գրեց Ջիրջի Զեյդանը պատմվածքը»:

جرجي زيدان كتب الرواية – jirjy zaydān kataba ar-riwāya – «Ջիրջի Զեյդանը գրեց պատմվածքը»:

كتب الرواية جرجي زيدان – kataba ar-riwāya jirjy zaydān – «Գրեց պատմվածքը Ջիրջի Զեյդանը»:

Այսպիսով, նախադասության անդամների դասավորության խնդիրը տեղափոխելով ժամանակակից հարթակ՝ անհնար է անտեսել դեռևս 8-րդ դարում դրված ճարտասանական նպատակների հիմքերը, որոնք որոշիչ դառնալով խոսքում և ցանկացած անդամի շեշտադրման մեջ, հանգեցրել են իմաստային զանազանությանը և լեզվի ճկունությանը:

«Ալ-Քիթաբում» մասնավորապես կարծիք արտահայտող բայերին (ظنّ - ẓanna և այլ), ինչպես նաև բայանման գործառույթ ունեցող մասնիկներին (إنّ-'inna և այլ) և թերիմաստ բայաձևերին (كان-kāna և այլ) վերաբերող գլուխներում, նախադրման և հետադրման խնդիրը կրկին

---

[10] Hewitt S., Arabic: Verb-Subject-Object or verb-Given-Now? Implications for Word Order Typology, Conference on Communication and Information Structure in Spoken Arabic, Center for Advanced Study of Language, College Park, Maryland, 2006.

դիտարկվում է ճարտասանական պատճառի և ճարտասանական արժեքի տեսանկյունից: Հետևյալ օրինակում ظن ذاهب الله عبد- abdallah aẓunnu ḏāhib - «Աբդալլահը կարծում եմ կգնա» հետադրումը ավելի ուժեղ է և սա դարձյալ համարվում է «լավ արաբերեն»[11]: Այսպիսով, հետադրումը ուժեղ է, քանի որ այն հաղորդում է կասկածի երանգ, այսինքն՝ նրան հաջորդող խոսքը պետք է լինի համոզում, բայց եթե այն դրվում է համոզում արտահայտողից առաջ, ապա բերում է կասկածի: Այսպիսով այս օրինակում ճարտասանական նպատակը ոչ թե ուշադրությունը և կենտրոնացումն է, այլ կասկածի երանգ հաղորդելն է[12]:

Այսպիսով, «նախադրում» և «հետադրում» հասկացությունները ժամանակակից պատկերացմամբ կապվում են արաբական նախադասության մեջ առկա անդամների դասավորության հետ[13]: Մասնավորապես բայական նախադասություններում ընդունված է, որ բայը գտնվում է առաջնային դիրքում, իսկ ենթական հաջորդում է նրան: Անվանական նախադասությունների պարագայում դարձյալ ընդունված է, որ սկսող ենթական (al-mubtada' - المبتدأ) նախորդում է հաղորդող ստորոգյալին (al-ḫabar - الخبر): Եթե հարցը տեղափոխենք ճարտասանական հարթակ, ապա այստեղ երևում է, որ մի շարք քերականագետներ, որոնց մեջ առանձնանում է Աբդ ար-Ռահման ալ-Մայդանին (20-րդ դար), սահմանափակում չեն դնում նախադասության անդամների դասավորության մեջ և դա թողնում են խոսողի, այս դեպքում՝ հռետորի հայեցողությանը, ով ինքն է որոշում, թե որ դեպքում իր խոսքը կարող է լինել ազդեցիկ և լսելի[14]:

Իր հերթին, նախադրման և հետադրման ճարտասանական նշանակությունն ընդգծել է ալ-Ջուրջանին (11-րդ դար), նա նշել է, որ նախադրումը և հետադրումը մի շարք օգուտներ ունեն. դրանք հարուստ են լավ հատկանիշներով, լայն կիրառություն ունեն և չեն դադարում առանձնանալ իրենց գերազանցությամբ և հարստացնում են խոսքը նրբությամբ, իսկ պոեզիան դարձնում են հաճելի ունկնդրելու

---

11 سيبويه – الكتاب – باب ظنّ، ج 1 ص 20

12 أحمد سعد محمد – الأصول البلاغية في كتاب سيبويه و أثرها في البحث البلاغي، ص 205

13 عبد الكريم الدخيسي – التقديم و التأخير في بلاغة العرب، ص 17

14 عبد الرحمن حسن حبنكة الميداني – اللاغة العربية و أسسها و علومها و فنونها، ص 356

համար: Այս գերազանցությունը և նրբությունը երևում են, երբ ինչ-որ մի անդամ նախորդում է մյուսին, կամ մի բառ փոխում է իր տեղը նախադասության մեջ[15]: Ինչպես երևում է, Ճարտասանական որոշ չափով դուրս է գալիս ավանդական քերականության մեջ ընդունված կանոնների շրջանակից՝ հնարավորություն տալով հռետորին լինել բաց և ազատ՝ տալով ընտրության հնարավորություն:

Այս խնդիրը, որին անդրադարձել են քերականագետները, լեզվաբանները և Ճարտասանները, չի դադարում քննարկելի լինել մինչև օրս քերականության, քննադատության և Ճարտասանության հարցերում, և Սիբաուեյհին առաջինն է, ով մատնանշել և անդրադարձել է խնդրին, և, ամենայն հավանականությամբ, այս ներդրումը մեծ գովեստի է արժանացել այն հետազոտողների կողմից, ովքեր դեր են խաղացել Ճարտասանական արվեստի զարգացման մեջ:

GABRIELYAN NIKOLAY
(YSU)

THE PROBLEM OF INVERSION IN SIBAWEYHI'S WORK "AL-KITAB" ("THE BOOK") AND ITS RHETORICAL SIGNIFICANCE IN ARABIC LANGUAGE

Sibaweyhi's "Al-Kitab" not only has a value of the first volumetric grammatical book in Arabic, but also has its influence on the development of rhetoric art by Sibaweyhi's successors, especially Abd al-Qahir Al-Jurjani who is considered one of the founders of this scientific branch.

One of the main rhetorical problems that are discussed in "Al-Kitab" is the inversion, the verb-subject-object order in the sentence. Generally, this order is the most popular in Arabic speech, but there are several essential reasons why this order sometimes is broken. When the order is verb-object-subject, it can be concluded that the reader needs to concentrate his attention on the direct object more than on the subject. For example ضرب زيد عمرا – ḍaraba zeyd 'amran -"Zeyd beat Amr" (V-S-O) and ضرب عمرا زيد – ḍaraba 'amran

---

[15] عبد القاهر الجرجاني – دلائل الإعجاز، ص 156

zeyd – "Amr (was the man, whom) Zeyd beat". Here the direct object, Amr, comes earlier than the subject and therefore the attention is focused on Amr who was beaten by Zeyd. Another reason of inversion is clearly shown in cases of supposition, when the suppositive verb precedes the basic verb and breaks the fact that the action will definitely happen. For example, اظن عبد الله ذاهب – aẓunnu 'abdallah ḏāhib – "I think, that Abdallah will go" and عبد الله اظن ذاهب – 'abdallah aẓunnu ḏāhib – "Abdallah, I think, will go".

These inversions are considered "good Arabic" by medieval grammarians and this opinion became one of the bases of existence with different options of order.

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՆՈՒՇ
(ԱԻ)

ԻԲՆ ԱԼ-ՋԱՈՒԶԻՆ ԵՎ ՀԱՆԲԱԼԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲԻ ՎԵՐԵԼՔԸ XII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հանբալիականությունն իսլամի չորս հիմնական մազհաբներից՝ կրոնա-իրավական դպրոցներից մեկն է, որ կոչվել է հիմնադրի՝ իր ժամանակի խոշորագույն մուհադիս[1] Ահմադ Իբն Հանբալիի անունով (778-855 թթ.): Ի տարբերություն մյուս սուննիական մազհաբների՝ հանբալիականությունը ստեղծվել է որպես կրոնաքաղաքական շարժում և հետո միայն վերածվել իրավական դոգմատիկ դպրոցի[2]:

Հանբալիականությունը առաջացել է IX դ. սուր քաղաքական և սոցիալական ճգնաժամի պայմաններում: Հանբալիականության տեսության և փորձընթացի մեջ իրենց արտահայտումն են գտել ավանդապաշտության կողմնակիցների առավել պահպանողական հայացքները (ահլ ալ-հադիս): Սա հասարակության մեջ սոցիալ-քաղաքական և կրոնական կյանքի անկման արձագանքն էր[3]: Հանբալականության գաղափարախոսները առաջ քաշեցին իսլամի մաքրման և սուննայի՝ որպես կրոնագիտության կարևորագույն աղբյուր ընկալելու տեսությունը: Հանբալահական գաղափարները մասնագետների կողմից հաճախ բնորոշվում են որպես սահմանափակ, սուննայի ավանդույթներին կուրորեն ենթարկվող, ցանկացած

---

[1] Մուհադիսներն այն գիտնականներն էին, որ զբաղվում էին հադիսների հավաքագրմամբ և ուսումնասիրությամբ: Մուհադիսներն ավանդական իսլամական գաղափարախոսության հիմնական կրողները դարձան: Հիշեցնենք, որ հադիսները իսլամական հասարակության կրոնահրավական կյանքի տարբեր կողմերն ընդգրկող ավանդապատումներն են, որոնք հիմնված են Մուհամմեդի կյանքի և խոսքի վրա:

[2] Петрушевский И., Ислам в Иране VII-XV вв., Л., 1966, с. 140.

[3] Ислам: Энциклопедический словарь, М., 1991, с. 271.

նորամուծության (բիդա) նկատմամբ անհանդուրժող, և իսլամի հին մեդինական ավանդույթերին վերադառնալու միտում ունեցող[4]:

Հանբալիականությունը այս առումով միշտ հակասություններ է ունեցել ռացիոնալիստների՝ մութթազիլիականների տեսության հետ: Տարբերությունը նրանում էր, որ կոնկրետ խնդիր լուծելիս մութթազիլիտները հենվում էին բանականության և տրամաբանության վրա, իսկ հանբալիները հենվում էին միայն հադիսների և սուննայի օրինակների վրա[5]:

Վաղ հանբալիական աշխատություններում արդեն ձևավորվեց սուննայի կոնցեպցիան՝ որպես Ղուրանի տեքստի թաֆսիռ (մեկնաբանություն): Հադիսների տեքստերի կարևորությունը գրեթե հավասարեցվում է Ղուրանի տեքստին, այսինքն դրանց իմաստը կամ բովանդակությունը քննարկման կամ մեկնաբանության ենթակա չէ[6]:

X դարում հանբալիական աստվածաբաններն առաջինը նախաձեռնեցին իսլամի ավանդույթների կանոնակարգումը: Դա իր արտահայտությունը գտավ ժամանակի հանբալի հեղինակների կարևորագույն աշխատություններում, որոնցով ներկայացվում էին կրոնի և իրավունքի ավանդապաշտական մեկնաբանության հիմնական դրույթները[7]:

Արդեն X դարի առաջին քառորդից հանբալիականները հրաժարվում են ողջ իսլամական հասարակության միավորման գաղափարից: Այդ ժամանակից արդեն հանբալիական գրականության մեջ նկատվում է հանբալիականության էլիտարացման միտում՝ որպես սուննայի դրույթների, ավանդույթի միակ ճշմարիտ կրող: Նրանք կարևոր էին համարում բարոյահիրավական նորմերի նոր, ամբողջական համակարգ ստեղծելը, որին հետևելը միակ միջոցն էր ապահովելու հասարակական կյանքի ճիշտ կազմակերպումը և կրոնի մաքրությունը[8]:

---

[4] Goldziher I., Introduction to Islamic Theology and Law, New Jersey, 1981, p. 237; Петрушевский И., նշվ. աշխ., էջ 140-141:

[5] Goldziher I., նշվ. աշխ., էջ 92-93:

[6] Makdisi G., The Hanbali School and Sufism, Humanoria Islamica, Vol. II, 1974, p. 119.

[7] Laoust H., Hanabila – EI2, III, London, 1986, p. 158-159.

[8] Ислам: Энциклопедический словарь, с. 271:

Հանբալիական իրավական դպրոցը (մազհաբը), որպես այդպիսին, սկսել է ձևավորվել XI դարի սկզբին և ձևավորման առաջին իսկ փուլից արդեն ուներ մշակված աղբյուրների հենք, որում արտահայտված էր հանբալիական ուսմունքը: Դրա ձևավորման համար հիմք էին հանդիսանում Ղուրանը, սուննան և հադիսները՝ ներկայացված Ահմադ Իբն Հանբալիի հեղինակած «Մուսնադում» հադիսների հանբալիական ձեռնարկում: Հանբալիական դոկտրինայի հիմնական դրույթները հստակ ձևակերպված են *ակիդներում:* Դրանք գրված էին լայն հանրության համար ընթեռնելի, պարզ լեզվով: Ի լրացում ակիդների տեքստերի՝ հանդես էին գալիս *մասաիլները,* որոնցում պարփակված էին հանբալիական դպրոցի հիմնադրույթները[9]:

Կային նաև մի շարք ավելի բարդ և մասնագիտական ոճով գրված աշխատություններ, որոնցում քննարկվում էին հանբալիական գաղափարախոսության սկզբունքային հիմնադրույթները: Այս աշխատություններն ուղղված էին արդեն կոնկրետ մասնագետներին և աստվածաբաններին. դրանցում կային մեծ քանակությամբ մեջբերումներ Ղուրանի տեքստերից, հադիսներից, այլ անվանի հեղինակների աշխատություններից: Դրանցից մեկի՝ «Քիթաբ ալ-Ռումդա ֆի ահքամ ալ-Ֆիքհի» հեղինակն է Մուվաֆֆակ ադ-Դին Իբն Կուդամը (1146-1223 թթ.): Մյուս կարևորագույն աշխատությունը կոչվում է «Աս-Սիյասա աշ-Շարիա», որը գրել է Իբն Թայմիյան (1263-1328 թթ.)[10]:

Հանբալիական մազհաբը, որը գերիշխող դիրք ստացավ Սաուդների դինաստիայի իշխանության գալուց հետո միայն, մինչ այդ շատ քիչ թվով հետևորդներ ուներ և որևէ երկրում գերիշխող դիրք չուներ: Այն, համեմատած մյուս երեք ընդունված մազհաբների, ամենափոքր թվով հոտևորդներն ուներ[11]: Հանբալիական մազհաբի այսպես քիչ տարածված լինելը պայմանավորված էր նախ այն հանգամանքով, որ այն ստեղծվեց շատ ավելի ուշ, այն դեպքում, երբ մյուս սուննիական մազհաբներն արդեն վաղուց ձևավորված և տարածվել էին արաբական

---

9 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ермаков Д., Ибн Ханбал и начало Ханбалитства, Религии мира: История и современность, М., 1984, с. 182-183:

10 Laoust H., Hanabila, p. 160-162.

11 Ермаков Д., նշվ. աշխ., էջ 182-183:

աշխարհի տարբեր շրջաններում: Մյուս պատճառը դրա խիստ պահպանողական լինելն էր: Հանբալիականները բոլորից առավել էին ուշադրություն դարձնում կրոնի արտաքին դրսևորման վրա, կոչ էին անում ապրել Մուհամմեդի և նրա համախոհների ժամանակաշրջանին համապատասխան: Երբեմն այդ գաղափարները ձեռք էին բերում ծայրահեղական դրսևորումներ[12]:

Իմամ Ահմադ Իբն Հանբալիի և նրա աշակերտների գործունեության ժամանակաշրջանում հանբալիականությունը տարածում ուներ Իրաքի շրջանում: Ժամանակի ընթացքում այն տեղափոխվեց Արաբական թերակղզի: Ներկայումս էլ հանբալիական կրոնաիրավական դպրոցը պաշտոնապես ընդունված է Սաուդյան Արաբիայում, իսկ մյուս իսլամադավան պետություններում շատ փոքրաթիվ հետևորդներ ունի[13]: Չնայած դրան՝ հանբալիական մազհաբը համալրում է իսլամի չորս հիմնական կրոնաիրավական դպրոցների շարքը, որի ավանդույթի և տեսության իրավացիությունն ու ճշգրտությունն երբևէ կասկածի չի ենթարկվել:

Հանաբալիական մազհաբի ամենավառ ներկայացուցիչներից էր Իբն ալ-Ջաուզին (1116-1201 թթ.): Իբն ալ-Ջաուզին, պատմակենսագրական աղբյուրների համաձայն, հանդիսանում է խոշորագույն գիտնական, գիտության տարբեր ոլորտներին վերաբերվող ավելի քան երկու հարյուր աշխատությունների հեղինակ, շատ անվանի և մեծ տաղանդ ունեցող հանբալիական քարոզիչ, հայտնի պատմաբան, աստվածաբան և մուհադիս[14]:

Իբն ալ-Ջաուզին շատ լավ և բազմակողմանի կրթություն է ստացել: Սկսում է կրթությունը շատ վաղ հասակից. վեց տարեկանից նա արդեն Աբու Ֆադիլ Իբն Նասիռի մզկիթում Ղուրանի և հադիսների ուսումնասիրությամբ էր զբաղվում: Նա մոտ իննսուն ուսուցիչ է ունեցել: Նրա գլխավոր ուսուցիչներն են եղել իրենց ժամանակին մեծ

---

[12] Петрушевский И., նշվ. աշխ., էջ 140:

[13] Laoust H., Hanabila, p. 162.

[14] Իբն ալ-Ջաուզին ծնվել է Բաղդադում, նրա հայրը փականագործ էր և բավականին մեծ կարողություն ուներ: Երբ Իբն ալ-Ջաուզին երեք տարեկան էր, նրա հայրը մահանում է՝ որդուն թողնելով բավական մեծ կարողություն: Հոր մահվանից հետո Իբն ալ-Ջաուզիին խնամում և դաստիարակում են մայրը և հորաքույրը:

համբավ վայելող հանբալիական հեղինակներ՝ ֆաքիհ և քարոզիչ Իբն ազ-Զաղունին (1133 թ. մահ.), Աբու Բաքր ադ-Դինավարին (1137 թ. մահ.), որի մոտ ուսուցանում էր ճարտասանության արվեստ, լեզվի ուսուցիչն էր Աբու ալ-Մանսուրը (1144 թ. մահ.)[15]:

Չնայած բազմաթիվ կարևորագույն աշխատությունների հեղինակ լինելուն՝ Իբն ալ-Զաուզին մեծ ճանաչում և համբավ ձեռք բերեց իր քարոզչական գործունեության շնորհիվ, որի արդյունքում էլ նա դարձավ Բաղդադի իր ժամանակի կարևորագույն քաղաքական և կրոնական գործիչներից մեկը:

Իր առաջին քարոզներն Իբն ալ-Զաուզին սկսել է կարդալ տասը տարեկան հասակում: Չնայած այդքան վաղ հասակից սկսած քարոզչական գործունեությանը՝ Իբն ալ-Զաուզին ավելի լուրջ սկսեց դրանով զբաղվել իր ուսուցչի՝ Իբն ալ-Զաղունիի մահվանից հետո, երբ նա ստիպված եղավ փոխարինել վերջինիս: Այդ իսկ ժամանակ՝ 1133 թ., Իբն ալ-Զաուզին դարձավ Ալ-Մանսուր մզկիթի քարոզիչը[16]:

Իբն ալ-Զաուզին իր կյանքի ողջ ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել Բաղդադի հոգևոր կյանքում՝ երկար ժամանակ հանդիսանալով Բաղդադի հանբալիականների առաջնորդ: Հանդես գալով որպես ավանդական իսլամի քարոզիչ՝ վայելում էր խալիֆայի մեծ վստահությունը և բնակչության լայն զանգվածների շրջանում մեծ հեղինակություն ուներ: Իբն ալ-Զաուզիի ժամանակակիցների վկայությունների համաձայն նրա քարոզներին միշտ մեծաթիվ բանակությամբ մարդիկ էին հավաքվում[17]:

Իբն ալ-Զաուզին հովանավորվել է իր ժամանակի հոգևոր և քաղաքական էլիտայի կողմից: Նրան իր հովանու տակ էր վերցրել իր ժամանակի ամենաազդեցիկ պետական գործիչներից մեկը՝ հանբալիական վեզիր Իբն Հուբայրան, որը 1149 թ.-ին Իբն ալ-Զաուզիին հրավիրում է իր պալատում ուրբաթ օրվա քարոզները իրականացնելու, որոնք բաց էին հասարակության համար[18]:

---

[15] Романов М., Хадис в системе аргументации Ибн ал-Джаузи, Проблемы историографии, источниковедения и истории востока, Луганск, 2008, с. 129.

[16] Laoust H., Ibn al-Djawzi – EI2, III, London, 1986, p. 752.

[17] The Travels of Ibn Jubayr, Ed. By W. Wright, Leiden, 1907, p. 219-225.

[18] Петросян А., Ибн ал-Джаузи, Ислам: энциклопедический словарь, М., 1991, с. 84.

Արդեն 1174 թ.-ին Իբն ալ-Ջաուզին Դարբ Դինարի մոտ հիմնում է իր դպրոցը, որտեղ գիտության տարբեր ոլորտներ ընդգրկող բազմաթիվ դասընթացներ են անցկացվում: 1161 թ. Իբն ալ-Ջաուզին արդեն դարձավ Բաղդադի երկու մեդրեսեների ղեկավար: Այդ իսկ ժամանակ՝ խալիֆա Մուսթանջիդի (1160-1170 թթ.) իշխանության ընթացքում, նա սկսեց քարոզներ կարդալ պալատական մզկիթում:

Հաջորդ խալիֆա ալ-Մուսթադի (1170-1180 թթ.) իշխանության ընթացքում հանբալիական մազհաբը գերիշխող դարձավ Բաղդադում: Այդ իսկ ժամանակահատվածում Իբն ալ-Ջաուզին, որ արդեն բազմաթիվ աշխատությունների հեղինակ էր, դարձավ Բաղդադի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը. նա պալատական շրջաններում մեծ հեղինակություն էր վայելում և արդեն թվով հինգ մեդրեսեների ղեկավար էր հանդիսանում[19]:

Հայտնի է, որ 1175 թ. Իբն ալ-Ջաուզին, խալիֆայի թույլտվությամբ, իր քարոզների ժամանակ կոչ է արել իրեն հայտնել անհավատության արտահայտման ցանկացած դեպքի մասին, մեղավորներին ժամանակին պատժելու համար[20]:

Իբն ալ-Ջաուզիի մեծ ազդեցությունը խալիֆայի վրա և վերջինիս համակրանքը հանբալիականության նկատմամբ մեծ դժգոհություններ և բողոք առաջացրեց մյուս մազհաբների ներկայացուցիչների մոտ: Խալիֆա ալ- Մուսթադիի մահը և ան-Նասիռի իշխանության գալը, որը շիիզմի կողմնակից էր, նախանշեց Իբն ալ-Ջաուզիի գործունեության անկումը, նրա ազդեցության և նշանակության նվազումը[21]:

1194 թ. հանբալիական վեզիր Իբն ալ-Ջաուզիի ընկեր և հովանավոր Իբն Յունուսի պաշտոնանկումից և ձերբակալությունից հետո նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց շիա Իբն ալ-Կասսաբին: Այդ իսկ ժամանակ Իբն ալ- Ջաուզին, որ բազմիցս քննադատել էր ան-Նասիռի վարած քաղաքականությունը, բանտարկվում է և աքսորվում Վասիտ: Այնտեղ նա պահվում է բանտում ուժեղ հսկողության տակ: Նրան ազատ են արձակում միայն հինգ տարի անց խալիֆի մոր

---

[19] Laoust H., Ibn al-Djawzi, p. 752.

[20] Նույն տեղում, էջ 751:

[21] Кныш А., Ханбалитская критика суфизма, Письменные памятники и проблемы культуры народов Востока, М., 1985, с. 170-175.

միջնորդության արդյունքում: Իբն ալ-Ջաուզին իր Բաղդադ վերադառնալուց քիչ ժամանակ անց մահանում է[22]:

Իբն ալ-Ջաուզին թողել է շատ հարուստ և տպավորիչ գրական ժառանգություն: Ինչպես արդեն նշվեց՝ նրա գրչին են պատկանում ավելի քան երկու հարյուր աշխատություններ, որոնցում գրեթե բոլոր իսլամական ավանդական դիսցիպլինները ներկայացված են:

Առավել նշանակալից աշխատություններից է տասը հատորանոց ալ-Մունթազիմը, որը Արաբական խալիֆայության պատմության անփոխարինելի աղբյուր է: Մեծ նշանակություն ունեն նաև գովերգող և փառաբանող կենսագրական աշխատությունները (մանակիբ)՝ նվիրված առաջին չորս խալիֆաներին, իմամներին, վաղ իսլամի հայտնի ասկետներ (զուհհադ) և սուֆի ալ-Հասան ալ-Բասրիին, Մասրուֆ ալ-Կարհիին, Ռաբիա ալ-Ադավիային և այլոց, որոնց նա համարում էր ուղղադավան իսլամի օրինակելի ներկայացուցիչներ[23]:

Իբն ալ-Ջաուզին, ինչպես արդեն վերը նշվեց, իր ողջ գործունեության ընթացքում պայքարել է իսլամում ամեն տեսակ նորամուծությունների (բիդա) դեմ, և այդ պայքարի համապարփակ դրսևորումն է «Թալբիս Իբլիս» («Սատանայի խաբկանք») աշխատությունը[24]: Սա հանբալիական մազհաբի հրապարակախոսական գրականության ամենակարևոր նմուշներից մեկը դարձավ: Աշխատությունը նվիրված է մուսուլմանական հասարակության տարբեր շերտերի քննադատությանը, որոնք ըստ հեղինակի հեռացել են ավանդական իսլամից և նպաստել իսլամում այլևայլ նորամուծությունների ի հայտ գալուն: Աշխատության մեծ մասը նվիրված է սուֆիզմի փիլիսոփայության և փորձընթացի մեջ նկատվող ծայրահեղությունների քննադատմանը, որոնք իհարկե, ըստ հեղինակի, բացասական ազդեցություն էին ունենում ուղղահավատ իսլամի հետևորդների շրջանում: Սա իհարկե սուֆիզմի ամենահետևողական մերժումներից մեկն է միջնադարյան

---

[22] Leder S., Ibn al-Gawzi und seine Kompilation wider die Leidenschaft, Beirut, 1984, S. 69.

[23] Макдиси Дж., Суннитское возрождение, Мусульманский мир (950-1150), М., 1981, с. 181-182.

[24] Makdisi G., նշվ. աշխ., էջ 61-63:

մուսուլմանական աստվածաբանական գրականության մեջ, որը ուսումնասիրության համար մեզ մեծ նյութ է տալիս:

Հեղինակը չի սահմանափակվում մուսուլմանական միստիցիմը ներքելով, նա բացահայտում է նաև խարիջիների, քարմատների, իսմաիլականների (այդ թվում նաև բատինիների) և սատանայի մյուս «զոհերի» մոլորությունները:

Այսպիսով, Իբն ալ-Ջաուզին, XII դարի 60-80 թթ. հանդիսանալով Բաղդադի հանբալիականների առաջնորդ, մեծ ազդեցություն է ունեցել այդ մազհաբի վերելքի և ազդեցության մեծացման գործում: Նա հանդես էր գալիս որպես ավանդական իսլամի կողմնակից, սակայն չէր բացառում չափավոր ասկետական և միստիկ տարրերի առկայությունը դրանում: Նա կողմնակից էր խալիֆական անկախ իշխանության վերականգնմանը և սուննիական ավանդույթների վերահաստատմանը: Որպես Բաղդադի պաշտոնական քարոզիչ՝ նա աննկուն կերպով պայքարել է ուղղահավատությունից ցանկացած շեղումի դեմ՝ այդ գործում որպես չափանիշ համարելով հանբալիական մազհաբը: Նրա աշխատությունները մանրակրկիտ, հետևողական ուսումնասիրության են ենթարկվել և միշտ շատ բարձր են գնահատվել հանբալիական մազհաբի ներկայացուցիչների կողմից:

TAMRAZYAN ANUSH
(IOS)

IBN AL-JAWZI: THE HANBALI SCHOOL AND ITS RISE IN THE 2ND PART OF XII CENTURY

Ibn al-Jawzi, leader of the Hanbali school in Baghdad from 60-80 years of XII century, had a great influence on the rise and expansion of this school. He was a supporter of traditional sunni Islam, thought he didn't exclude the existence of reasonable ascetic and mistic elements in it. As the official preacher of Baghdad he always contend with any deviation from the "True Islam". As a criteria he used Hanbali school. His works had been exploured scurpulously and were highly rated by the followers of hanbali school.

ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ՀԱՃԱԽ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

Նախադասությունների հիմնական կաղապարներից բացի արաբերենում գործածվում են նաև հատուկ եղանակավորող իմաստներով նախադասություններ, որոնց առանցքային կաղապարներն ունեն որոշակի կառուցվածքային առանձնահատկություններ:

Լեզվի քերականական ավանդական միջոցները երբեմն չեն ունենում տրամադրությունը, զգացմունքն արտահայտելու ունակություն: Բավական չէ լավ մտքեր ու զգացմունքներ ունենալը, անհրաժեշտ է գտնել նաև դրանց արտահայտման ձևը: Մտքի խորությունը, ճշգրտությունը և ընդհանրապես լավ միտքն ի հայտ են բերվում ընթերցողի կամ լսողի վրա կենդանի կերպով ներգործող լեզվական միջոցների օգնությամբ: Արաբերենը հարուստ է ոճական որակ ստեղծող քերականական միջոցներով, որոնք միտքը, զգացմունքն արտահայտում են նպատակահարմար ձևով: Այս եղանակով խոսքը դառնում է համոզիչ, իրականացվում են տրամադրությունը, զգացմունքը ճիշտ, լրիվ հաղորդելու պահանջը և խոսքը նպատակին հասցնելու ձգտումը: Արաբերենում հատուկ եղանակավորող իմաստներով նախադասությունների կազմում գործածվող քերականական հիմնական միջոցներն են.

1. Օգնության կանչի միջոցը (uslūb 'alistiġāŝa). սա որևէ անձի՝ դժբախտ պատահարից կամ դժվարին իրավիճակից փրկություն հայցող կանչն է՝ ուղղված մեկ այլ անձի, օրինակ՝ Ya-lal'qarīm li'l-muĥtāğ[1]: Օգնության կանչի հասցեատերն անվանվում է mustaġāŝ, իսկ օգնություն հայցողը՝ mustaġāŝ lahu: Այս միջոցի մեջ օգտագործվում է

---

[1] Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, Դուրուս ֆի'լ-ի'րաբ (արաբերեն), Կահիրե, 2002, էջ 193:

ձայնարկության մասնիկ ya-ն: Թույլատրելի չէ ողել ո՛չ հիշյալ մասնիկը, ո՛չ էլ mustaġãŝ-ը: Մինչդեռ mustaġãŝ lahu-ն կարող է տղվել: Mustaġãŝ-ն ունի կազմության երեք ձև. ա) հաճախ այն դրվում է սեռական հոլովով՝ նախորդվելով կանչի՝ fatĥa ձայնանշան կրող lam-ով[2], բ)եզրափակվում է հավելյալ alif-ով[3], գ) պահպանում է անկախ կոչականի կարգավիճակը[4]:

Ինչ վերաբերում է mustaġãŝ lahu-ին, ապա այն խոսքի մեջ հիշատակված լինելու պարագայում արտահայտվում է ակնհայտ անվան կամ խոսողի ya-ի միջոցով՝ պարտադիր դրվելով սեռական հոլովով և նախորդվելով qasra ձայնանշան կրող lam-ով[5]: Եթե mustaġãŝ-ն ունենում է որոշիչ, ապա այդ որոշիչը դրվում է սեռական հոլովով[6]: Այս միջոցի մեջ mustaġãŝ-ը կարող է ունենալ wua շաղկապի միջոցով իրեն կցված շաղկապյալ[7]:

2. Ողբի իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb 'an-nudba). սա սգացողի կանչն է: Այս միջոցը կազմվում է «ողբի մասնիկ» wua-ի միջոցով, օրինակ՝ Wua 'Umaru[8]: Mandūb-ին (սգացյալին) պարտադրվում է լինել որոշյալ վիճակում գտնվող թեքվող անուն[9] կամ

---

[2] Տե՛ս թիվ 1 ծանոթագրության օրինակը:

[3] Ya kawumā lil-mażlūm: Ալ-Սայիդ Ահմադ Ալ-Հաշիմի, Ալ-կաուաիդ ալ-ասասիյա լի'լ-լուղա' լ-արաբիյա (արաբերեն), Բեյրութ, Հիջրայի 1354, էջ 254: Նման դեպքում կարելի է alif-ին կցել ѕuqun ձայնանշան կրող ha' տառը, օրինակ՝ Ya 'Umrāh: Տե՛ս նույն տեղում:

[4] Yā kawumu lil-mażlūm: Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս թիվ 4 ծանոթագրության օրինակը: Այլապես lam-ը կրում է fatĥa ձայնանշան, օրինակ՝ Yal-ĥamdu laqa: Տե՛ս Ալ-Սայիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., նույն տեղում: Հնարավոր է, որ այն դրվի սեռական հոլովով՝ նախորդվելով սեռական հոլովի վերածող min նախդիր-մասնիկով, օրինակ՝Ya lal-šurafā' min-al'xā'inīn (այս դեպքում այն կոչվում է mustaġãŝ minhu): Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 193:

[6] Ya-lalsa'din az-za'imi lil-wuaţan: Տե՛ս Ալ-Սայիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 254:

[7] Ya-lalqarīm wua lil-kawūiy li'l-muĥtāğ: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 193: Այս դեպքում շաղկապյալին նախորդած lam-ը ոչ թե օգնության կանչի lam-ն է, այլ qasra-ով անփոփոխ՝ սեռական հոլովի վերածող lam-ը:

[8] Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 194:

[9] Տե՛ս թիվ 8 ծանոթագրության օրինակը:

հատկացյալ[10]: Uslūb ʿan-nudba-ն թույլատրում է իր միջոցով սգալ սոսկ հայտնի (որոշյալ) անձի վրա[11]: Չի կարելի սղել nʿ mandūb-ը, nʿ էլ ողբի մասնիկը: Mandūb-ը, որը, ըստ էության, ḍamma կամ fatḥa ձայնանշան կրող կոչական է, վերջավորվում է հավելյալ alif-ով[12], suqun ձայնանշան կրող haʾ-ով[13] կամ պահպանում է անկախ կոչականի կարգավիճակը[14]:

3. Առանձնացման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb ʿalʾixtiṣāṣ). սրա ելքային կաղապարը բաղկացած է դերանունից, որը հենված է որոշյալ վիճակում գտնվող և արտահայտված տեսք ունեցող անվան վրա, օրինակ՝ Ana- al-jundiyya- fidaʾu ʿal-wuatan[15]: Այս միջոցի ելքային կառուցվածքը բնորոշող առանձնացված անունը (muxtaṣ-ը) դրվում է հայցական հոլովով: Ենթադրվում է, որ muxtāṣ-ի պարտադիր սղված բայը axuṣṣu-ն է, akṣidu-ն կամ aʾanī-ն: Muxtāṣ-ի դիրքում հանդես եկողը որոշյալ վիճակում դրվող անունն է[16] կամ հատկացյալը՝ ավելացված որոշյալ վիճակում դրված հատկացուցչին[17] կամ ավելացված որևէ հատուկ անվան[18]: Ixtiṣāṣ-ը կարող է կազմվել նաև ayyuha կամ ayyatuha բառերի միջնորդությամբ[19]. այս դեպքում muxtāṣ-ը դրվում է ուղղական հոլովով:

4. Հորդորման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb al-iġraʾ). սա խոսողի ցանկությունն է, հորդորը՝ գովասանքի

---

[10] Wua fakīda ʿal-umma: Տե՛ս նույն տեղում:

[11] Mandūb-ը չի կարող արտահայտվել անորոշ կամ թերի անորոշ անուններով, ինչպիսին են հարաբերական կամ ցուցական դերանունները: Արաբերենում չի ասվում՝ Wua man žahaba ḍaĥiyya ʿal-wuāğib, բայց կարելի է ասել՝ Wua man fataĥa Miṣra, քանի որ անորոշ անունը հայտնի է դառնում man կապի միջոցով: Տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշ. աշխ., էջ 255:

[12] Wua qabdā: Տե՛ս նույն տեղում, էջ 256:

[13] Wua wualadāh: Տե՛ս Մուհամմադ Ալ-Անտաքի, Ալ-մինհաջ ֆի'լ-կառաիդ ուա ալ-ի'րաբ (արաբերեն), Բեյրութ, 1975, էջ 343:

[14] Տե՛ս թիվ 9 ծանոթագրության օրինակը:

[15] Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 195:

[16] Տե՛ս նախորդ ծանոթագրության օրինակը:

[17] Naĥnu- maʾašira ʿaṭ-ṭalaba silāĥ ʿal-ʿumma: Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 259:

[18] Naĥnu- bni ḍabba- aṣĥābu' l-ğamāl: Նույն տեղում:

[19] Ana- ayyuha' al-ğundiyyu- fida'u 'al-wuaṭan: Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 196:

արժանի գործ կատարելու, օրինակ՝ Al'iğtihāda, al'iğtihāda[20]: Հորդորի մեջ մատնանշվող անվան (al-muġra' bihi) բայը տրված է. ենթադրվում է, որ այն ilzim-ն է, սխալ-ը կամ if'al-ը: Al-muġra' bihi-ն եզակի թվով անուն է[21], այն կարող է ունենալ շաղկապյալ[22] կամ կարող է կրկնվել[23]: Al-muġra' bihi-ն դրվում է հայցական հոլովով:

5. Զգուշացման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb at-taḥžīr). սա խուսափելու կամ ոչ ցանկալի իրավիճակից հրաժարվելու զգուշացում է՝ ուղղված խոսակցին, օրինակ՝ Iyyāqa wua'n-nāra[24]: Այս միջոցը կազմվում է iyyāqa բառի և iyyāqi, iyyāquma, iyyāqum, iyyāqunna հատանմանների օգնությամբ (ի դեպ, խոսողի և բացակայողի գործառույթով դերանունները չեն գործածվում քերականական այս միջոցի կազմում): Uslūb at-taḥžīr-ի ելքային կառուցվածքը կարող է բնորոշվել նաև wua շաղկապի սրմամբ[25]: Այսպես, զգուշացման առարկայի իմաստային գործառույթ արտահայտող անվանածևի (muḥaššar minhu)՝ սովորաբար հայցական հոլովով դրվելը հետևանքն է անհրաժեշտաբար տրված ենթադրյալ բայերի հայցական հոլովի վերածող գործառույթի, թեպետ muḥaššar minhu-ն կարող է դրվել սեռական հոլովով՝ նախորդվելով min նախդիր-մասնիկով[26]: Muḥaššar minhu-ի շաղկապյալ ունենալու պարագայում պարտադիր է iyyāqa-ի տրումը միջոցի կազմում[27]: Նշյալ միջոցի ելքային իրացումը կարող է կատարվել նաև iyyāqa բառի կրկնությամբ[28]: Taḥžīr-ի միջոցն առերևներ ունի iġra'-ի հետ. վերջինիս կառուցվածքում բացակայում է տրսկ iyyāqa-ն:

6. Հիացմունքի իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb at-ta'ağğub). սա հիացմունքի զգայական վիճակ ցույց տվող միջոց

---

[20] Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 257:

[21] Aş-şidka: Նույն տեղում:

[22] Aş-şabra wua'a-taf'āula: Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 196:

[23] Տե՛ս թիվ 21 ծանոթագրության օրինակը: Կրկնվող al'iğtihāda-ն բառային tawuqīd է. բառային է որևէ բառի կամ նախադասության կրկնությունը:

[24] Մուհամմադ Ալ-Անտաքի, նշվ. աշխ., էջ 217:

[25] Iyyāqa' aš-šarra: Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 198:

[26] Iyyāqa' min' aš-šarri: Նույն տեղում:

[27] Al-ğībata wua'l-ifsāda: Նույն տեղում:

[28] Iyyāqa iyyāqa'-l- qažba: Տե՛ս նույն տեղում:

է, որի հիմքում ընկած է հիացմունք արտահայտող կանոնավոր բայի իմաստային գործառույթի ուռճացումը: Բանավոր խոսքում այն ունի դրսևորման բազում ձևեր, իսկ գրավորում ունի կազմության երկու ձև (ma 'af'a'lahu[29] և 'af'il bihi[30] բանաձևերը): Առաջին բանաձևում[31] 'af'a'la-ն անցյալ ժամանակի բայ է, իսկ նրան նախորդող ma-ն «բան» իմաստով անորոշ անուն է: Երկրորդ բանաձևում 'af'il-ը հրամայականի նմանությամբ կազմված անցյալ ժամանակի բայ է, ինչին հետևում է bi նախդիրով նախորդված mut'ağğab-ը (հիացմունքի առարկան): Նշյալ բայերը, իրենց խորքում կրելով առանձնացվող հատկանիշ, գերադրական աստիճանի ածականի նման պետք է կազմվեն միայն եռատառ բայահիմքերից, ունենան կանոնավոր խոնարհում, լինեն ներգործական սեռի[32]: Եթե բայը կրավորական սեռի է, ապա հիշյալ միջոցը կազմվում է մեկնաբանվող maṣdar-ի օգնությամբ[33]: Mut'ağğab-ը,

---

[29] Aqrim bi'ṣ-ṣādik: Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 327:

[30] Ma akalla nuzūla' l-maṭar fi Filaṣṭīn: Մասնագետների խումբ (Իբրահիմ Ռաֆա և ուրիշներ), Ալ-արաբիյյա (արաբերեն), Բաղդադ, Հիջրայի 1379, էջ 9:

[31] Մի օր Աբու Ալ'Ասվադի (տե՛ս Խաչատրյան Է., Արաբերենի քերականության սկզբնավորման հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք», Ե., 2006, էջ 137) դուստրը, հայացքը հառելով երկնքի աստղերին, ասաց՝ Ma aḥsanu as-sama'? (Ի՞նչն է երկնքում ամենալավը): Հայրը պատասխանում է՝ աստղե՛րը: Դուստրն ասում է, որ ինքը ցանկանում էր իր հիացմունքն արտահայտել: Հայրը բացատրում է, որ դրա համար նա, բերանը բացելով, պիտի ասեր՝ Ma aḥsana as-sama'!(Որքա՜ն գեղեցիկ են աստղերը): Տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 5:

[32] Եթե բայահիմքը եռատառ չէ կամ թերի է կամ նրանից ածանցվող որակական ածականը կազմվում է af'alu բանաձևով, ապա հիացմունքի միջոցը կազմվում է ma ašadda կամ ma aqṣara բանաձևին հետևող maṣdar-ով՝ կցորդված bi նախդիրով, օրինակ՝ Ma ašadda' al'zdihār' al-madīna: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), Կավահիդ ալ-լուղա ալ-արաբիյյա (արաբերեն), Բաղդադ, Հիջրայի 1467, էջ 127: Չխոնարհվող կամ առանձնացվող իմաստից զուրկ բայահիմքից հիացմունքի միջոց կազմելը բացառվում է:

[33] Ma aḥsana 'an yuğāza' l-muxliṣ: Տե՛ս նույն տեղում: Թեպետ պատահում է, որ mut'ağğab-ի դերում հանդես է գալիս մեկնաբանվող maṣdar-ը, օրինակ՝ Ma afḍala an yaṣduka' al-insān: Աբդ Ալլահ Ալ-Թատավի, Ուդ իլա ս'սիհա'լ-լուղավիյյա, Կահիրե, 2002 թ., էջ 114:

որը սովորաբար որոշյալ վիճակում է, կարող է դրվել անորոշ վիճակում, եթե բնութագրվում է որոշչի պաշտոնով նախադասությամբ[34]: Այս միջոցի կազմության համար պարտադիր պայման է, որ mut'ağğab-ը չնախորդի բային. նրանց միջև կարող են գործածվել միայն պարագաներ կամ տվյալ բային վերաբերող նախդիրներ: Հաճախ բայի և ma -ի միջև կարող է ներթափանցել անցյալ կամ ներկա ժամանակով դրված qãna-ն[35], որը, երբեմն նախորդվելով բայանվանական մասնիկ ma-ով, տեղ է գրավում հիացմունքի բայից անմիջապես հետո՝ դրսևորվելով որպես ĥaşala իմաստով լիարժեք բայ[36], ոչ թե թերի բայ կամ ածանցի իմաստակիր:

7. Հիացած կանչի իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb an-nidã' t-ta'ağğubiy). սա արտահայտում է զարմանք՝ կապված ինչ-որ բանի առատության կամ մեծաքանակության հետ: Այս միջոցը կազմվում է հայցական հոլովով դրված mut'ağğab minhu-ի (զարմանքի առարկա) և ձայնարկության ու զարմանքի մասնիկ ya-ի կցորդությամբ, օրինակ՝ Ya ru'ata' l'-a'mali' ţ-ţayyīb[37]: Կարող է կազմվել նաև fatĥa ձայնանշան կրող lam-ի միջնորդությամբ[38]:

8. Պայմանի իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb arš-šarţ). օրինակ՝ In tadrus tanğaĥ[39]: Այս միջոցը երկու՝ պայման և պայմանի պատասխան մասերից բաղկացած խոսք է: Պայմանը պարտադիր կերպով արտահայտվում է ներկա կամ անցյալ ժամանակի բայերի միջոցով, իսկ նրա պատասխանը՝ ներկա կամ անցյալ ժամանակի բայերի կամ նախադասության միջոցով: Այս միջոցը դրսևորվում է հինգ ձևով. ա) երբ պայմանի բայը և նրա պատասխանը ներկա ժամանակի բայեր են[40], բ) երբ պայմանի բայը ներկա ժամանակի

---

[34] Aqrim bi-rağul yuğahid fi xidma bilādihi: Նույն տեղում:

[35] Ma qãna aqrama' l-ĥalīma: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 199:

[36] Ma atkana ma qãna' l'a'mal: Նույն տեղում:

[37] Աբդ Ալլահ Ալ-Թատավի, նշվ. աշխ., էջ 114:

[38] Ya la-ru'ati' l'-a'mali' ţ-ţayyīb: Նույն տեղում: Հենց lam-ի առկայությունն էլ պատճառ է՝ նկատելու աղերսներ այս միջոցի և istiğãŝa-ի միջոցի միջև:

[39] Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), Կավաիդ ալ-լուղա ալ-արաբիյյա (արաբերեն), Բաղդադ, Հիջրայի 1467, էջ 64:

[40] In tusrif tandam: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 39:

է, պատասխանը՝ անցյալ[41], գ) երբ պայմանի և նրա պատասխանի բայերն անցյալ ժամանակի են[42], դ) երբ պայմանի բայը ներկա ժամանակի բայ է, իսկ պատասխանն արտահայտված է բայական կամ անվանական նախադասությամբ[43], ե) երբ պայմանի բայն անցյալ ժամանակի բայ է, իսկ պատասխանն արտահայտված է բայական կամ անվանական նախադասությամբ[44]:

Uslūb aš-šarṭ-ի ելքային իրացումը կատարվում է ջազմավորող[45] և չջազմավորող[46] միջոցների օգնությամբ: Միջոցի կազմում երբեմն նկատվում է պայմանի պատասխանի կամ պայմանի բայի և նրա պատասխանի համաժամանակյա սղում[47]:

---

[41] In taṣmut kalla xaṭa'ūq: Նույն տեղում:

[42] In šā'a'ti' l-fawuda qaśura'l-xawuf: Նույն տեղում:

[43] In taqźib fa-lan yaśika fi-qa aḥadun; Man yarda bi-l-kaḍ ā' fa-huwa' l-mū'min: Նույն տեղում:

[44] Man āmana bi'l-kadar fa-kad amina mina' l-qadar: Նույն տեղում, էջ 40:

[45] Սրանք կոչվում են մասնիկային ('in, 'iźma) և անվանական (man, ma, mahma, mata, 'ayyāna, 'ayna, 'atta, ḥayśuma, qayfama, ayya) միջոցներ: Ջազմավորում են և' պայմանի բային, և' նրա պատասխանին: Նրանց jazm-ն ակնառու կերպով արտահայտված է կամ ենթադրվում է ըստ շարահյուսական դիրքի: Սրանք սովորաբար ջազմավորում են ներկա ժամանակի, երբեմն էլ՝ անցյալ ժամանակի երկուական բայերի: Ma tukaddimhu min tadḥiya fi sabīli' l-wuaṭani yanfa'q: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, Ալ-լուղա ալ-արաբիյյա, (արաբերեն), Դամասկոս, 1985, էջ 150: Արժի հիշատակել, որ պայմանի պատասխան նախադասությունը՝ կապակցված fa'-ով կամ անսպասելիության 'iźa-ով, միշտ jazm-ի դիրքում է. նման դեպքում պայմանի միջոցի ելքային իրացումը կատարվում է ջազմավորող միջոցների մասնակցությամբ. օրինակ՝ Man yu'śiru a'la nafsihi fa-hwua' l-qarīmu ḥakkan: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 47:

[46] 'Iźa, lawu, lawu la, qullama: Սրանք պայմանի միջոցների գործառույթ ունեն, նթե ներթափանցում են պայմանի բայի և նրա պատասխանի միջև, օրինակ՝ Qullama taḥdiruna mubaqqiran yazdād ḥaṣād a'maliqum: Տե՛ս Աբդ Ալլահ Ալ-Թաուալի, նշվ. աշխ., էջ 113:

[47] Taqallam bi-xayr wua illa fa'usqut (այսինքն՝ In la tataqallam bi-xayr fa'usqut) նախադասության մեջ սղվել է պայմանի պատասխանը illa-ի առկայության պատճառով: Anta fa'iz in-iğtahadta (այսինքն՝ Satandam in lam tağtahid) նախադասության մեջ ևս սղվել է պայմանի պատասխանը, քանզի նրա մասին կա վկայություն. այս պարագայում պարտադրվում է բայի՝ անցյալ

9. Գերադասման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb at-tafḍīl). այս միջոցն ունի կազմության երկու ձև. ա) կազմվում է af'alu բանաձևով[48]՝ ցույց տալով միևնույն հատկանիշ կրողներից մեկի հատկանիշի գերազանցությունը մյուսի նկատմամբ, օրինակ՝ Sāmir aqbar min Farīd[49]: Նշված բանաձևը վերցվում է միայն արմատական եռատառ, լիարժեք խոնարհմամբ, հաստատական բնույթի, գերադասվելու հակվածությամբ ներգործական սեռի բայերից (ընդ որում, նման բայերից ածանցվող ածականը չպետք է կազմվի af'alu բանաձևով, այլապես օգտագործվում է հայցական հոլովով դրված maṣḏar-ը՝ կցորդված aqbaru, a'azamu, ašaddu կամ aqŝaru բառերով[50]), բ) կազմվում է գովասանքի (ni'ma, ĥabbaža) ու պարսավանքի (la ĥabbaža, b'isa, sā') իմաստ ունեցող, faṯ-ով անփոփոխ անցյալ ժամանակի չթեքվող բայերի մասնակցությամբ[51]:

ժամանակով դրված լինելը: Man sallama a'layqa fa-sallim a'layhi, wua illa (այսինքն՝ Man la yusallim a'layq fa-la tusallim a'layhi) նախադասության մեջ պայմանի բայը և նրա պատասխանը տղված են: Տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 348:

[48] Այս դեպքում գերադրական անունը դրված է եզակի թվով, արական սեռով, զերծ է որոշյալ հոդից և հատկացյալից, կամ եզակի թվով է, զերծ է հոդից, որպես հատկացուցիչ ավելացված է անորոշ անվանը, օրինակ՝ Al-masraĥ arwu'a fann bin-nisbati ilayya, կամ հատկացուցիչ է՝ ավելացված որոշյալ վիճակում գտնվող անվանը, օրինակ՝ Al-masraĥ arwu'a' funun al-abadiyya bin-nisbati ilayya, կամ եթե գտնվում է որոշյալ վիճակում, ապա անհրաժեշտ է նրա՝ որպես որոշչի համաձայնությունը նախորդող որոշյալի հետ, օրինակ՝Nāla' aṭ- ṭālibu' l-afḍal ğā'iza' l-idāra: Տե՛ս Մասնագետների խումբ (Մուհամմադ Նուր ալ-Դին Ալ-Տուվաշի և ուրիշներ), Քիթաբ ան-նահու ուա'աս-սարֆ ուա ալ'իմլա' (արաբերեն), Դամասկոս, 1997, էջ 116:

[49] Տե՛ս Մասնագետների խումբ (Մուհամմադ Նուր ալ-Դին Ալ-Տուվաշի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 116:

[50] Āŝaru Tadmur min aqšari' l-āŝāri' šuhratan fi-l'ā'lam: Տե՛ս Մասնագետների խումբ (Ղազի Մուֆլիհ և ուրիշներ), Ալ-լուղա ալ-արաբիյյա (արաբերեն), 1999, էջ 37:

[51] Bi'sa ar-rağul al-qažūb; Ni'ma' al'xuluk al'wuafa': Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, նշվ. աշխ., էջ 47: Այս բայերի հետ դրված ենթական որոշյալ վիճակում գտնվող ակնհայտ անուն է (Ni'ma' ar-rağulu Xalīlun: Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 324) կամ հատկացուցիչ է (Bi'sa rağulu'-s-su'i Nağībun: Նույն տեղում) կամ muḍāf-ին ավելացված muḍāf ilayhi է (Ni'ma ĥaqīmu šu'arā'i' l-

10. *Երդման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb al-kasam)*[52]. այս միջոցի կառուցվածքն ամբողջացնում է երդման և սեռական հոլովի վերածող նախդիր մասնիկ wua-ն, որին հաջորդում են Allahi բառը, հաստատող մասնիկ lam-ը և ներկա ժամանակի՝ tawuqīd-ի «ծանր» nun-ով կցորդված, fatḥ-ով անփոփոխ բայը, օրինակ՝ Wua ʻAllahi la'usāfiranna[53]:

11. *Բացառման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb al'istiśnā').* սրա բաղկացուցիչ մասերն են mustaśna-ն, mustaśna minhu-ն և բացառման միջոցը[54]: Քերականագետների պարզաբանմամբ՝ istiśnā'-ն մասերի բացառումն է ամբողջից: Այն երկու տեսակի է. ա) ամբողջական բացառում, որի դեպքում առկա են բացառման բոլոր երեք բաղկացուցիչները, օրինակ՝ Ḥadara' at-ṭulābu illa Zaydan[55], բ) թերի

ğāhiliyya Zahīrun: Նույն տեղում) կամ fa'il-ի գործառույթով հարաբերական դերանուն է (Ni'ma' allaźi yaxdimu wuaṭanahu sa'dun: Նույն տեղում) կամ tamīz-ի դիրքում գտնվող անհրաժեշտաբար քողարկված դերանուն է (Bi'sa ğāhilan al'aḥmaku: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 203) կամ fa'il-ի գործառույթով ma կամ man հարաբերական դերանուն է (Ni'ma ma tataxalla bihi' l-wuafā'; Bi'sa man nastami'u ilayhi' n-namāmu: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 115):

[52] Մանրամասն տե՛ս Խաչատրյան Է., Al-'I'rāb-ում շարահյուսական դիրքից զրկված նախադասությունները, Մերձավոր Արևելք, Հոդվածների ժողովածու, Ե., 2012, էջ 380-388:

[53] Նույն տեղում: Եթե երդման նախադասությունը ժխտական է, ապա նրա պատասխանը հաստատվում է tawuqīd-ի nun-ով, օրինակ՝ Wua ʻAllahi lan yaf'ūza' al-qasūl: Աբդ Ալլահ Ալ-Թատավի, նշվ. աշխ., էջ 115:

[54] Բացառման միջոցներն են՝ illa, ğayra, siwua, xalā, ā'd ā, ḥāšā, laysa, la yaqūnu: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 127: Որոշ քերականներ այս միջոցների շարքում հիշատակում են նաև la siyyama-ն և bayda-ն: Տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 220:

[55] Այս դեպքում mustaśna'-ն հայցական հոլովով է: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 65: Եթե բացառումը ժխտական է, և mustaśna' minhu-ն հիշատակված է, mustaśna'-ն կարող է դրվել թե՛ հայցական, թե՛ ուղղական հոլովով, օրինակ՝ Ma ğā' mudarrisūna illa ustāžu' n-naḥwui, Ma ğā' mudarrisūna illa ustāža' n-naḥwui: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, նշվ. աշխ., էջ 81:

բացառում, որի դեպքում բացակայում է mustaŝna'-ն. հարկավոր է, որ նման բացառումը լինի ժխտական, օրինակ՝ Ma ğā' 'illa A'liyyun[56]:

12. Պահանջի իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը *(uslūb aţ-ţalab).* սա ներկայացվում է հետևյալ տեսակների միջոցով. ա) հարցում (uslūb al'istfhām). պատասխան ակնկալող հայց, պահանջ է, որի ելքային իրացումը կատարվում է անորոշ բանի մասին հարցադրում անող մասնիկների[57] և անունների[58] միջոցով, որոնց բնորոշ է նախադասության մեջ կենտրոնական տեղում գտնվելը, բ) հրաման, արգելում, խնդրանք (uslūb al-amr wua' nahy wua'ad-du'a'). amr-ը պարտադրում է ինչ-որ մեկի հանդեպ գերազանցություն պարունակող պահանջ, որն արձակվում է խոսակցից դիրքով ավելի բարձր անձից, իսկ երբեմն այն նպատակամղված է հրամանի իրագործման պահանջի[59] պարտադրմանը: Nahy-ի նպատակը խոսակցից ավելի բարձր դիրքում գտնվողի կողմից գործողության արգելումն է[60]: Հրամանը վերածվում է du'a'-ի, երբ հրամայողն իր դիրքով խոսակցից ցածր է[61], կամ վերածվում է iltimās-ի (խնդրանքի),

---

[56] Այս դեպքում mustaŝna-ի հոլովը պայմանավորված է 'Al-'I'rāb-ում նրա ունեցած դիրքով: Որոշ քերականներ հակված են նման բացառումը համարելու հաստատում (tawuqīd) կամ սահմանափակում (ĥaşr):

[57] Դրանք են՝ a, hal:

[58] Դրանք են՝ man, ma, mata, ayna, anna, ayyāna, qayfa, qam, ayyu:

[59] Այս միջոցը կազմվում է հրամայական ժամանակի բայի (Kala U'mar Bn A'bd Al'A'zīz li-l'ğulām: Taqallam!), հրամանի lam-ով նախորդվող ներկա ժամանակի բայի (Li-tataqallam man hua asannu minq!), ենթակայի պաշտոնակատարի դերում գտնվող maşdar-ի (Mahlan ya-ğulām-ը ենթադրյալ Tamahhal ya-ğulām-ի փոխարեն), բայանվան (Hati ma i'ndaq-ը ենթադրյալ A'ţini ma i'ndaq-ի փոխարեն) կամ հրամայական ժամանակի անվան մասնակցությամբ (Dūnaqa' l-qitāb-ը ենթադրյալ Xužhu-ի փոխարեն): Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 29-33:

[60] Այս միջոցը կազմվում է արգելող և ջազմավորող մասնիկ lam-ի և ներկա ժամանակի ջազմավորված, խոսակցի կամ բացակայողի վրա հենված բայի մասնակցությամբ, օրինակ՝ La tatruqū li'l-a'dā' furşa' l'inkidād a'layqum: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, նշվ. աշխ., էջ 149:

[61] Երբ դիմում ենք Աստծուն՝ Wua'ğfir lana žunūbana: Տե՛ս Ինջիլ (արաբ.), Ավետարան՝ ըստ Մաթևոսի, 1/6-12:

եթե խոսակիցները հավասար դիրքերում են[62]: Արգելումը ևս վեր է ածվում du'a'-ի[63] և iltimās-ի[64]: Երբեմն du'a'-ն կազմվում է անցյալ ժամանակի բայի և ժխտական մասնիկ la-ի կցորդությամբ[65] կամ ընկալվում է ենթատեքստից[66], գ) պատվելու և հաստատորեն դրդելու միջոցը (uslūb al'i'rd wua't-taĥdīd). 'i'rd-ը մեղմությամբ և քնքշությամբ ուղեկցվող միջոց է, ինչը պահանջում է խոսքին ձայնային երանգավորում տվող բառերի ընտրություն[67]: Արտահայտվում է նաև ala, amma, lawu, lawu la մասնիկների կցորդությամբ[68]: Taĥdīd-ը պարունակում է խոսքին դրդում և սաստկություն հաղորդող իմաստ, որն ընկալվում է խոսքի ենթատեքստից[69]: Արտահայտվում է նաև ala, alla, halla, lawu ma, lawu la մասնիկների կցորդությամբ[70], դ) ցանկության և ակնկալիքի միջոցը (uslūb at-tamanni wua'tarağğī). tamanni-ն սիրած գործին հասնելու փափագն է: Նրա ելքային իրացումը կատարվում է layta, lawu, hal, la'lla մասնիկների միջոցով[71]: Tarağğī-ն սիրած գործին հասնելու ակնկալիքն է: Նրա ելքային իրացումը կատարվում է la'lla մասնիկի, ինչպես և a'asa, ĥara, axlawulaka բայերի մասնակցությամբ[72]:

---

[62] Երբ ընկերը դիմում է ընկերոջը՝ Zurni fi bayti: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ. էջ 33:

[63] Երբ դիմում ենք Աստծուն՝ La tudxilna fi tağriba: Տե՛ս Ինջիլ, 1/6-13:

[64] Երբ ընկերը դիմում է ընկերոջը՝ La taxaf: Մուհամմադ Ալ-Անտաքի, նշվ. աշխ., էջ 307:

[65] La samaĥa' Allah: Баранов Х., Арабско-русский словарь, М., 2002, Т 1, с. 372.

[66] Ayyada' Allah al-muxlişīn: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ. էջ 33:

[67] La i'lma li bi-žaliq, ya-amīn al-mu'minīn: Մասնագետների խումբ, Ալ-լուղա ալ-արաբիյյա, արաբերեն, Դամասկոս, 2003, էջ 44:

[68] Lawu tazuruna fanuqrimuq: Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ. էջ 41:

[69] Alla tukātiluna kawuman naqaŝu iymānahum: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 42:

[70] Որպեսզի նշված մասնիկները տան 'i'rd-ի և taĥdīd-ի իմաստ, պետք է կցորդվեն միայն ներկա ժամանակի բայի, օրինակ՝ Halla tazūruna: Տե՛ս Մուհամմադ Ալ-Անտաքի, նշվ. աշխ., էջ 338:

[71] Lawu ta'tini fa-tuĥaddiŝani: Տե՛ս նույն տեղում, էջ 314:

[72] La'lla' l-imtiĥāna sahlun: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 53:

13. *Ժխտման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb an-nafy).* սա օգտագործվում է միտքը հերքելու և ժխտելու կամ խոսակցի մտքից ինչ-որ բանի հանդեպ համոզմունքը վերացնելու նպատակով: Լինում է երկու տեսակի. ակնհայտ ժխտում և թաքցված ժխտում: Ակնհայտ ժխտման ելքային իրացումը կատարվում է laysa, la, ma, in, lāta, lam, lamma, lan, ժխտման lam (lam al- ǧuḥūd) և ġayru միջոցների մասնակցությամբ[73], որոնցով ժխտվում են բայական և անվանական նախադասությունները կամ անունները և այլն: Թաքցված ժխտումը երկու տեսակի է՝ ժխտման իմաստով հարցում[74], որում բացակայում է ժխտման միջոցը, և ժխտման իմաստով պայման[75], որում առկա են պայմանի չջազմավորող միջոցներ lawu-ն, lawula-ն, lawuma-ն:

14. *Նախադրության և ետադրության իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb at-takdīm wua't-ta'xīr).* սա երկու տեսակի է՝ ա) xabar-ի նախադաս գործածությունը mubtadā'-ի նկատմամբ[76], որը, առանց անորոշություն և երկատվածություն առաջացնելու խոսքի մեջ, պարտադրվում է հետևյալ չորս իրավիճակներում. 1. եթե mubtadā'-ին կցորդված է xabar-ին վերագրվող կցական դերանուն[77], 2. եթե mubtadā'-ն անորոշ է, այսինքն՝ չի բնութագրվում ո՛չ որոշչով, ո՛չ էլ հատկացյալով, իսկ xabar-ը պարագա է, կամ նրան կցորդված է սեռական հոլովի վերածող նախդիր մասնիկ[78],

---

[73] Laysa' aḍ-ḍawu' sāṭi'an: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 41:

[74] Սա հարցման տեսակ է, որով ոչ թե ակնկալվում է ինչ-որ որոշյալ բանի իրազեկ դառնալը, այլ այն ժխտելը, օրինակ՝ Wua-man yaġfiru' l-ẕunūba illa' Allah: Տե՛ս Ալ-Կուրան, Ալ-Ու'մրան/135 (արաբերեն):

[75] Lawu zārani Muḥammad la'aqramtuhu; Lawula' l-hawuā' la-halaqati' l-aḥyā: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 48-49: Lawuma-ն առհասարակ իմաստային և գործածման տեսակետից չի տարբերվում lawula-ից:

[76] Արաբերեն նախադասության կառուցվածքին բնորոշ է xabar-ի՝ mubtadā'-ի նկատմամբ ետադաս դիրքը: Նման ետադասությունը բացատրվում է նրանով, որ xabar-ը բնութագրում է mubtada'-ին իմաստային տեսանկյունից. այն այս առումով նման է որոշչին, ինչը հաջորդում է որոշյալին:

[77] Fi' l-madīna u'lamā'uha: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 118:

[78] Fi' l-madīna u'lamā'(նույն տեղում): Եթե mubtadā'-ն նկարագրվում է որոշչով կամ հատկացյալով, xabar-ը կարող է և՛ նախադաս, և՛ ետադաս գործածվել

3. եթե xabar-ը նախադասության սկզբում հանդես եկող բառերի գործառույթ ունի[79], 4. եթե xabar-ը սահմանափակված է mubtadã'-ով[80], բ) ուղիղ խնդրի ետադաս գործածությունը fi'al-ի նկատմամբ, ինչն անհրաժեշտ է հետևյալ չորս իրավիճակներում[81]. 1. եթե fi'al-ը գտնվում է պայմանի միջոցի իմաստով amma-ի պատասխանի մեջ, և amma-ի և fi'al-ի միջև միակ բաժանարարն ուղիղ խնդիրն է[82], 2. եթե նրա fi'al-ը հրամանի բայ է՝ կցորդված fa'-ի հետ[83], 3. եթե այն անջատ դերանուն է[84], 4. եթե նախադասության սկզբում հանդես եկող բառերի գործառույթ ունի, ինչպես՝ պայմանի և հարցման անունները և այլն[85]:

15. Կոչի իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb annidã'). սա խոսակցի՝ որևէ կոչական մասնիկի հաջորդողի դիրքում գտնվող անվան կամ որևէ հատկանիշի հիշատակման միջոցով ուշադրություն հրավիրելու պահանջն է: Կոչական մասնիկներն են՝ ya, ay, aya, haya[86]: Եթե կոչի հասցեատիրոջ իմաստով բառը՝ կոչականը (munãda), որոշյալ վիճակում է, ապա նրա շարահյուսական դիրքում կարող են իրացվել haža և hažihi ցուցական դերանունները կամ

նրա նկատմամբ, օրինակ՝ Fi' l-mağlisi rağulu i'lmin կամ Rağulu i'lmin fi' l-mağlisi; Fi' l-mağlisi rağulun' ã'limun կամ Rağulun' ã'limun fi' l-mağlisi: Տե՛ս Մասնագետների խումբ (Նի'մա Ռահիմ Ալ-Ա'զավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 107:

[79] Ayna' l-mawūludu, maliqu' l-yahūd? Ինջիլ, Ավետարան՝ ըստ Մաթևոսի, 1/2-2:

[80] La ilaha illa' Allahu: Տե՛ս Մասնագետների խումբ, Դամասկոս, Ալ-լուղա' ալ-արաբիյա, արաբերեն, 1998, էջ 78:

[81] Իր վրա ուշադրություն հրավիրելու նպատակով որոշ դեպքերում ուղիղ խնդիրը կարող է և՛ նախադաս գործածվել, և՛ ետադաս, օրինակ՝ Aş-şidka kul ya-fata; Kul aş-şidka ya-fata: Տե՛ս Մասնագետների խումբ (Նի'մա Ռահիմ Ալ-Ա'զավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 81:

[82] Amma' amãna fa'şun wua'amma' l-mabãdi' fa-uxdum: Տե՛ս Մասնագետների խումբ (Նի'մա Ռահիմ Ալ-Ա'զավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 80:

[83] Amma' l-mukaşşir fa-ĥãsib: Տե՛ս նույն տեղում, էջ 78:

[84] Iyyãqa na'budu wua iyyaqa nasta'īnu: Տե՛ս Ալ-Կուրան, Սուրա' Ալ-Ֆաթիհա/5:

[85] Qam baladin zurtu: Տե՛ս Մուհամմադ Ալ-Անտաքի, նշվ. աշխ., էջ 289:

[86] Mawui'duna ya Kudsu ãtin karīb: Տե՛ս Մասնագետների խումբ (Իբրահիմ Ռաֆա և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 27:

կոչական մասնիկով նախորդված ayyu և ayyatu բառերը[87]: Կոչականը հինգ տեսակի է՝ հատուկ անուն, կոնկրետ ուղղվածություն ունեցող անորոշ անուն, կոնկրետ ուղղվածություն չունեցող անորոշ անուն, հատկացուցիչ, հատկացուցչին նմանվող անուն[88]:

16. Կրկնման կամ հաստատման իմաստաբանական գործառույթն իրացնող միջոցը (uslūb at-tawuqīd). սա օգտագործվում է որևէ գործողություն շեշտելու, նախապես գործածված բառը հաստատելու համար՝ թյուրիմացությունների տեղիք չտալու նպատակով: Այն ունի բազմաթիվ տեսակներ, որոնցից են. ա) բառային. սա որևէ բառի, նույնիսկ նախադասության կրկնումն է[89], բ) իմաստային. սա իրացվում է միայն որոշյալ անունների հետ գործածվող nafsun, a'yunun, qullun, ğamī'un, ā'mmatun, qila, qilta, ağma'u, žatu բառերի միջոցով, որոնց հաջորդում է շեշտված բառին (mu'aqqad) թվով ու սեռով համաձայնող դերանունը[90], գ) kad, anna, inna, amma, tawuqīd-ի lam (lam at-tawuqīd), tawuqīd-ի nun (nun at-tawuqīd) մասնիկների[91] և ներկա[92] ու

---

[87] Ya ayyatuha' mar'atu la tatabarrağī: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ189:

[88] Ya Ma'ažu anta sālimun la saqatta, fa-maža taqallamta fa-a'layqa awu laqa (Ալ-Կուրան); Ya fatayātu la tatabarrağna (Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ184). Ya muslimātin la tusrifna (նույն տեղում, էջ185), Ya wualiyya' l-amri qun a'dilan (նույն տեղում), Ya mutkinan a'maluhu kad aḥsanta (նույն տեղում):

[89] Nağaḥa nağaḥa' l-mağdu: Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշ.), նշվ. աշխ., էջ 90:

[90] Zārana' rā'īsu nafsuhu: Տե՛ս Աբու Բաքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, նշվ. աշխ., էջ 227: Ակնհայտ է, որ վերևում նշված բառերը mu'aqqad-ին վերաբերող դերանվան հետ կազմում են հատկացուցիչ-հատկացյալի կապակցություն, և mu'aqqad-ն էլ ըստ այդմ դրվում է ուղղական, սեռական կամ հայցական հոլովով:

[91] La-qalimatun ṭayyibatun xayrun min ṣadīkin: Տե՛ս Մասնագետների խումբ (Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 92:

[92] Ներկա ժամանակի բայի tawuqīd-ը պարտադիր է, եթե երդման պատասխան է, օրինակ՝ Wua 'Allahi, la'usāfiranna: Տե՛ս Խաչատրյան Է., Al-'i'rāb-ում շարահյուսական դիրքից զրկված նախադասությունները, Մերձավոր Արևելք, Հոդվածների ժողովածու, Ե., 2012, էջ 385-386:
Կամ եթե այն երդման պատասխան է՝ կցորդված lam-ով, ապառնի է և հաստատական, օրինակ՝ Fi žimmati. la-abarranna abawuayya: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ

հրամայական[93] ժամանակների բայերի վերջին տառի հաստատման միջոցով իրացվող tawuqīd-ը[94], դ) ba, min, in, ma, lyam, qaf նախածանցների միջոցով իրացվող tawuqīd -ը[95], ե) հատկացուցչի կամ որոշյալի դերում չգտնվող բացարձակ խնդրի միջոցով[96], զ) որոշչի դերում գտնվող «մեկ» և «երկու» թվականների միջոցով իրացվող tawuqīd -ը[97], է) սահմանափակման (kaşr) միջոցով իրացվող tawuqīd-ը[98], ը) երդման և այլ բառերի միջոցով իրացվող tawuqīd-ը[99]:

Այսպես, արաբերենում լայն գործառություն ունեցող հատուկ եղանակավորող իմաստներով միջոցների կաղապարները ցուցաբերում

93: Կարող է շեշտվել, եթե ածանց ma'-ի հետ գործածվելիս նախորդվում է šadda ձայնանշան ստացած պայմանական in-ով, օրինակ՝ Imma tuhmilanna al-hažara tata'rrad li-l'xaţar: Տե՛ս նույն տեղում: Կամ նախորդվում է ţalab-ի, nahy-ի, istfhām-ի, 'i'rđ-ի, taĥđīđ-ի, tamanni-ի միջոցներով, օրինակ՝ La-taĥzaranna madīĥa nafsiqa wua-illa qunta hadafan li's-suxriyya (նույն տեղում), Wua-la taĥsabanna' Allaha ġāfilan a'mma ya'malu' z-zālimūna (Ալ-Կուրան, Իբրահիմ /42), Hal tusāi'danna' l-bāi'sa?, Alla taġfiranna hafwuata' aş-şadīkin, Halla taxlişanna li-man aĥabbaqa, Layta' as-sā'data ta'umanna' an-nāsa: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 93-94:

93 Ինչ վերաբերում է հրամայական ժամանակի բայի հաստատմանը, ապա նրա իրացումը կատարվում է առանց պայմանի կամ արգելքի, օրինակ՝ Iğtahadan fi-a'maliqa: Տե՛ս նույն տեղում, էջ 94:

94 La-qalimatun ţayyibatun xayrun min şadīkin: Տե՛ս Հաթեմ Սալեհ Ալ-Դամեն և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 92:

95 Lasta a'layhim bi-muşaytirin: Տե՛ս Ալ-Կուրան, Սուրա Ալ-Ղաշիյյա/22:

96 Ukbilu a'layhima ikbālan li-uzīla a'nhuma' l-wuaĥšata: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 96:

97 Fa-iža nufixa fi- şūari nafxatun wuāĥidatun: Ալ-Կուրան, Սուրա' Ալ-Հակա/13):

98 Դրա հաճախ գործածվող միջոցներն են. ա) ժխտումն ու բացառումը, օրինակ՝ Ma šawukiyyun illa šā'irun; Ma šā'irun illa Šawukiyyun: Տե՛ս Մասնագետների խումբ (Նիմա Ռահիմ Ալ'Ազավի և ուրիշներ), նշվ. աշխ., էջ 96), բ) innama-ի միջոցով իրացվող սահմանափակում (ĥaşr), օրինակ՝ Innama' l-ĥayātu qifāĥun (տե՛ս նույն տեղում), գ) ետադաս բառի՝ նախադաս գործածվելու միջոցով իրացվող tawuqīd, օրինակ՝ Ila' -l-Allah ašqū la ila' n-nās (տե՛ս նույն տեղում, էջ 97), դ) անդրադարձ դերանվան հետ միասին xabar-ի հետ դրված որոշիչ հոդի միջոցով իրացվող tawuqīd, օրինակ՝ Zaydun hwua aš-šuğā' (տե՛ս նույն տեղում, էջ 97):

99 La šaqqa (էջ 97); Fi-žimmati ': Տե՛ս նույն տեղում, էջ 97:

են որոշակի կառուցվածքային առանձնահատկություններ: Ակնհայտ է, որ դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթը, մնալով հավատարիմ իր «անաչառությանը» և «անկողմնակալությանը», նշված միջոցներին պարտադրում է որոշակի պահանջներ՝ հատուկ եղանակավորող իմաստներով օժտելու համար: Ներկայացված քերականական միջոցներն միմյանցից լիովին անջրպետված չեն. մի միջոցի տարրերը կարող են հանդես գալ մյուսի մեջ՝ երբեմն ակամա, երբեմն հատուկ դիտավորությամբ, երբեմն էլ փոխադարձաբար կարող են ազդել միմյանց վրա:

KHACHATRYAN EMMA
(RA(S)U)

THE FORMATION AND USAGE OF MODAL MEANS WITH SPECIAL MEANING IN ARABIC (GENERAL REVIEW)

In Arabic besides basic sentence patterns there are also sentences with special modal meanings the key patterns of which have special structural features.

The aim is to make the speech more convincing, to reflect the mood and feeling in an exact and complete way, to fulfill the goal of the speech.

The main grammatical means used in the sentences with modal meaning in Arabic are the following: *uslūb 'alistiġāŝa, uslūb 'an-nudba, uslūb 'al'ixtiŝāŝ, uslūb al-iġra', uslūb at-taĥžīr, uslūb at-ta'ağğub, uslūb an-nidā' t-ta'ağğubiy, uslūb aš-šarţ, uslūb at-tafdīl, uslūb an-nafy, uslūb at-takdīm wua't-ta'xīr, uslūb an-nidā', uslụb at-tawuqīd.*

KALDER FELIX
(MLU, DEUTSCHLAND)

NIKOLAUS VON REUSNER: EIN BIOGRAPHISCHES

Im zweiten Stück des fünften Bandes von Johann Friedrich Juglers "Beyträgen zur juristischen Biographie" von 1779 findet sich auch ein Artikel über den Juristen Nikolaus Reusner, in dem es heißt: "Beynahe vor zwey Jahren habe ich, erfüllt mit wahrer Ehrerbietigkeit, in der Universitätsbibliothek zu Jena das Bild eines Mannes betrachtet, welcher unstreitig verdient, unter die ziemlich kleine Zahl der Polyhistors gestellt zu werden". Als weitere Betätigungsfelder des Universalgelehrten Reusner neben seiner eigentlichen Profession, der Juristerei, zählt Jugler sodann die griechische und lateinische Sprache, die Philosophie, die Geschichte, sowie die Dicht und Redekunst auf und schreibt: „Der Beweis meines Urtheils ist nicht mühsam zu suchen. Ich kann mich dreist auf seine Schriften berufen, womit er der gelehrten Republik ein Geschenk gemacht hat. "Eine nach Jugler selbst nahezu vollständige Auflistung am Ende seines Artikels führt 105 Werke Reusners auf", die "in großer Menge ans Licht getreten" "aber auch im 18. Jahrhundert schon seit geraumer Zeit selten geworden" sind.

Geboren wurde Nikolaus Reusner am 2. Februar 1545 in Lemberg in Schlesien als Sohn von Barbara, einer geborenen Fritschner, und dem Ratsherren Franz Reusner. Die in und um Lemberg ansässige Familie Reusner stammte ursprünglich aus dem östlichen Ungarn und aus Siebenbürgen. Ihre Bedeutung lässt sich ermessen, wenn man einen Blick in Johann Friedrich Zedlers "Grosses vollständiges Universal-Lexicon aller Wissenschaften und Künste" wirft. Hier werden vierzehn Nachfahren von Simon Reusner, dem Großvater des Nikolaus, der im 15. Jahrhundert als einziger von fünf Brüdern nicht in ein Kloster in Breslau eingetreten war, aufgeführt. Unter ihnen finden sich neben einem weiteren Franz Reusner (gestorben 1530), der für den ersten lutherischen Lehrer in Schweidnitz gehalten wird, auch zwei Brüder von Nikolaus: Elias (1555-1612) war Professor für Historie und Poesie in Jena, Jeremias Doktor der Rechte und fürstlicher Rat von Liegnitz und Brieg.

